ԵՐԵՄԻԱ ՏԵՎԿԱՆՑ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐ ՀԱՅՔ ԵՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

(1872–1873 ԹԹ.)

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ЕРЕМИА ТЕВКАНЦ

ПУТЕШЕСТВИЕ В БАРЦР АЙК И ВАСПУРАКАН 1872—1873 гг.

Рукопись комментирована и подготовлена

А. М. Погосяном

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ
ЕРЕВАН 1991

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)
Հ Ո-35

ԵՐԵՄԻԱ ՏԵՎԿԱՆՑ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐ ՀԱՅՔ ԵՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ 1872—1873 թթ.

2900

Ձեռագիրը պատրաստել և ծանոթագրել է

Հ. Մ. Պողոսյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1991

ԳՄԴ 63. 3 (2 Հ) 43
Տ 354

Տպագրվում է ՀԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Ա. Ս. Համբարյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. Խառատյանը
և պատմ. գիտ. թեկնածու Է. Ա. Կոստանդյանը

Տեկանց Ե.

Տ 354 Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872—1873 թթ.։ Ձեռագիրը պատրաստել է և ծանոթագր. Հ. Մ. Պողոսյանը։ [Պատ. խմբ.՝ Ա. Ս. Համբարյան]; Հայաստանի ԳԱ Պատմ. ին-տ.—Եր.։ Հայաստանի ԳԱ հրատ., 1991— 343 էջ.

Կոստանդնուպոլսի պատրիարք Մ. Խրիմյանի հանձնարարությամբ 1872—1873 թթ. Ե. Տեկանցը ճանապարհորդել է էրզրում, Կարս, Վասպուրական և գրել իր տպավորությունները, որոնց մեջ մանրամասն նկարագրել է այն սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը, որի մեջ գտնվում էին այդ տարածքի վրա ապրող հայերը։ Ձեռագրում հետաքրքրական տվյալներ կան այդ վիլայեթների քաղաքների, շրջանների, գյուղերի վանքերում ու եկեղեցիներում պահվող ձեռագրերի ու հուշարձանների վիմագիր արձանագրությունների մասին։

Գիրքը հասցեագրվում է պատմաբաններին և ընթերցող լայն շրջաններին։

Ե $\frac{0503020913}{703(02)-91}$ 18—91 ԳՄԴ 63. 3 (2 Հ) 43

ISBN 5—8080—0226—5

© ՀԳԱ հրատարակչություն, 1991

ԵՐԵՄԻԱ ՏԵՐ ՍԱՐԳՍՅԱՆՑ (ՏԵՐ ՍԱՐԳՍԵՆՑ-ՏԵՎԿԱՆՑ)

1829—1885 թթ.[1]

Վան քաղաքի Տեկանց կամ Տեր Սարգսյանց-Սարգսենց հնագույն գերդաստանը ունեցել է այնպիսի մտավորականներ, ինչպիսիք են՝ Երեմիան, Սեդրակը, Արիստակեսը, Վրթանեսը, ապա Միսակ Տեր Սարգսյանը, Միհրան Տեր Սարգսյանը, Հայկ Տեր Սարգսյանը, Հարություն Տեր Սարգսյանը և ուրիշներ։ Երեմիան հոգևոր պաշտոններ է վարել Վարագում, ապա եղել է Վանի, Բաղեշի, Մուշի, Ջմշկածագի, Արաբկիրի և Խարբերդի հոգևոր առաջնորդը։

Երեմիա Տեկանցը հրատարակեց երկու գիրք՝ «Հայրենյաց երգեր» (Վարագ, 1865) և «Հայրենասիրություն հայոց» (Կոստանդնուպոլիս, 1872). վերջինիս հրապարակ գալուց հետո «Մասիս» լրագիրը գրեց, որ այն «Հայաստանի թշվառության վրա մորմոքող և նորա բարօրություն և առաջադիմություն ցանկացող սրտի մը բղխած գեղեցիկ խորհրդածություններ, տեղեկություններ, նկարագիրներ և հորդորանք պարունակող»[2] գործ է։

«Հայրենասիրություն հայոց»-ը 548 էջից բաղկացած մի ստվար հատոր է։ Երեմիան գտնում է, որ հայրենասիրությունը իջել է երկրնքից և բնակվել է մարդկանց սրտերում. «...աշխարհ յուր բոլոր զորությամբ և բռնությամբ զայն հայրենասերի սրտեն չեն կարող ջնջել երբեք»[3]։ Գրքում հեղինակը բազմաթիվ էջեր է նվիրել հայոց պատմության հարցերին, մանրամասն վերլուծության է ենթարկել իր ժողովրդի անցյալը, ապա անդրադարձել նրա ներկային։ Խորհելով իր հայրենիքի և ազգի մասին, նա գրում է. «Արդյոք ո՞վ կարող է առանց հայրե-

1 Ե. Տեր Մկրտչյանը «Գանձեր Վասպուրականի» իր գրքում Տեկանցի ծննդյան թիվը համարում է 1831 թ.-ը, սակայն Երեմիան իր «Տեհճային հիշատակարան»-ում նշում է, որ ծնվել է 1829 թ.։

2 «Մասիս», 1872, թիվ 1197, 3 փետրվար։

3 Ե. Տեկանց, Հայրենասիրություն հայոց, Կոստանդնուպոլիս, 1872, էջ 2։

նասիրության զմարդկություն սիրել, արդյո՞ք նա, որ յուր հայր, մայր, զեղբայր և զազգականս չսիրե, կարող է համարձակ ասել թե՝ ես օտարներ սիրեմ...»[4]։ Յուրաքանչյուր անձ հայրենասեր կարող է կոչվել միայն այն դեպքում, երբ օգուտ է բերում ոչ միայն իր ազգին, այլև ամբողջ մարդկությանը և խրոխտ հայտարարում է. «Հայոց հայրենիք Հայաստան է, հայոց մեծություն, հարստություն և պարծանք Հայաստան է, հայու կյանք, ցնծություն և ուրախություն Հայաստան է. հայու ամենայն ինչ Հայաստան է....»[5]։ Իսկական հայրենասերը, ըստ նրա, պետք է լավ իմանա իր ազգի պատմությունը, որը «մեր հոգին նորոգե, մեր սիրտ արիացնե, մեր զգացումն ազնվացնե»[6]։ Այնուհետև հեղինակը գտնում է, որ այն հայը, որը չգիտե իր ազգի պատմությունը «Ո՛չ կատարյալ հայ է, ո՛չ կատարյալ մարդ և ո՛չ կատարյալ առաքինի...»[7]։ Գրքում հեղինակը նշում է, որ Օսմանյան Թուրքիայում իր ժողովուրդը ապրում է շատ ծանր վիճակում և անլուր տառապանքներ է կրում. «Օ՜հ, հորիզոնդ լույս է, բայց երկիրդ խավար. աստղդ պայծառ է՝ աշխարհդ միգամած, ուր դիմեցի՝ ավերակներ տեսա. ուր վազեցի՝ լաց, կոծ և աղաղակ տեսա»[8]։ Հայաստանում ապրում է նաև հայ վերնախավը, որի մեջ կան այնպիսիները, որոնք «...ազգի պատիվ, հայրենյաց շահ, եկեղեցվո օգուտ արծաթո մատնեն»[9]։ Հեղինակը հանդես է գալիս պանդխտության դեմ։ Հայաստանի չվող թռչունները վերադառնում են, սակայն հայը թողնելով հայրենիքը, այլևս չի վերադառնում։ Հայրենասեր Ե. Տեկանցը դիմելով թռչուններին, ասում է. «Երանի ձեզ, հազար երանի, թռչունք Հայաստանի, որ աշուն երթայք և գարուն դառնաք, վա՜յ մեզ, հազար վայ, որ մեկ անգամ հեռանալով՝ այլևս չեմք ուղեր վերադառնալ»[10]։ Հայրենիքից հեռացածներին դիմելով, նա ասում է. «Հայրենյաց փուշ քան զօտարի վարդն լավ է» և հայրենիքից դուրս նեղածների համար «Բաղդ չկա, հեշտին և խաղաղ կյանք չկա, իշխանություն, փառք և պատիվ չկա. օտար աշխարհի մեջ ճայու համար ուրախություն, հարստություն չկա. ճայու համար հայրենասիրություն և ազգություն չկա»[11]։ Նա բերում է հայ գեղջկուհու օրորներից մեկը.

4 «Հայրենասիրություն հայոց», էջ 5։
5 Նույն տեղում, էջ 8։
6 Նույն տեղում, էջ 19։
7 Նույն տեղում։
8 Նույն տեղում, էջ 29։
9 Նույն տեղում, էջ 30։
10 «Հայրենասիրություն հայոց», էջ 44։
11 Նույն տեղում, էջ 46։

«Օրոր մանուկ հայկազուն,
Օրոր մանուկ զվարթուն,
Մոր կաթի պես քո սիրուն,
Սիրյա զորդիս հայկազուն։
Օրոր ճրագ ծնողացդ,
Օրոր արև հայրենյացդ»[12]։

Գրքում Ե. Տեկանցը գրում է նաև անմահ Խ. Աբովյանի վեպի և նրա հերոս Աղասու մասին, նշելով, որ նա «...առանց զինվորա՛ն կրթության եղև վերջին դյուցազն Հայաստանի»[13]։ Ե. Տեկանցը խարազանում է վաշխառուներին, որոնք անգթաբար կողոպտում են ժողովրդին և չեն վախենում ոչ մեկից «...զի անչափ վաշխս ի վերա վաշխի բարդեն, մինչ զի որդիք ծերանան կամ մեռանին և ոչ կարեն զպարտքս հարց յուրյանց վճարել»[14]։ Հայաստանում կա կաշառակերություն, և կաշառակեր մարդիկ դավում են իրենց հայրենիքը. «Հայրենատյաց է իշխան հորժամ սիրե զկաշառ»[15]։

Գրքում շատ ու շատ են այն էջերը, որտեղ հիանալի նկարագրություններ կան Վասպուրականի, Վանա լճի, Նեմրութ ու Սիփան լեռների գեղեցկությունների մասին։

Մինչև այժմ մեզ հայտնի են Երևանի Մատենադարանում և այլ արխիվներում գտնվող Ե. Տեկանցի ներքոհիշյալ ձեռագրերը.

Մատենադարան.

1 Ձեռագիր № 5447։ Փոքրիկ քարոզների հավաքածու տետրակ է, որը հեղինակը գրել է 22 տարեկան հասակում։

2 Ձեռագիր № 4172, բաղկացած է 47 էջից, վերաբերում է Լիմ անապատին, գրել է այն ժամանակ, երբ ինքը այնտեղ աբեղա էր։ Ձեռագրի սկզբում դրված է «Երգ երգոցից» մի բնաբան. «Արի՛ եկ, մերձավոր իմ, գեղեցիկ իմ, աղավնի իմ» (1)։ Աշխատության մեջ գովերգում է Լիմ անապատը՝ անվանելով «Լիմ աստվածաբնակ կղզի ցանկալի» (14)։ Գովասանական խոսքեր ասելով Լիմ անապատի մասին, հեղինակը բոլորովին չի անդրադառնում այն անիմաստ կյանքին, որով ապրում էին այնտեղ ճգնող խստակյաց, խոտաճարակ աբեղաները։

3 Ձեռագիր № 4184, բաղկացած է 218 թերթից (=436 էջ), որով

12 Նույն տեղում, էջ 53։
13 Նույն տեղում, էջ 254։
14 «Հայրենասիրություն հայոց», էջ 267։
15 Նույն տեղում, էջ 268։

էլ սկսվում է նրա «Տոհմային հիշատակարան»-ը։ Գիրքը կազմված է երկու մասից։ Առաջինը կոչվում է «Գիրք առաջին։ Տոհմային հիշատակարան», որի մեջ բազմաթիվ էջեր է նվիրում Տեկանց տոհմի ծագման պատմությանը։

Ձեռագրի երկրորդ մասը կոչվում է «Գիրք երկրորդ։ Պատմություն անձին և կենաց իմոց», որի մի գլուխը կոչվում է «Վեցամենի իրսն իմ 'ի վարժարան. և վիճակ վարժարանաց ժամանակին», որի մեջ շատ հետաքրքրական էջեր կան Վանի այն ժամանակվա տերթոդիկյան տիպի դպրոցների մասին։ Ծնողները ուսուցիչ Բաղդոյի Օհանեսին իրենց երեխաներին հանձնելուց հետո խնդրում էին «շատ սաստիկ չծեծի» (67), սակայն եթե երեխաներից մեկը հանկարծ խոսեր, վարժապետը «ձող վերցնել և տղայի գլխուն իջեցնել մեկ կըներ, օր մեկ-երկու աշակերտի գլուխ կոտրելով արյուն երեսեն ի վար գուկար» (67)։

Ձեռագրի մեջ շատ տեղեկություններ կան Վանի այն ժամանակվա աշուղների մասին։ Հեղինակը նշում է, որ «մեր թաղի մարգկանց մեծ մասն բանաստեղծ և աշուղ էին» (87), իսկ Պողոս անունով մեկը «անուանի բանաստեղծ լինելով հանպատրաստից խաղեր հնարելով վարպետ աշըղներ շփոթեր» (88)։

Բազմաթիվ էջեր են նվիրված եկեղեցական տոների նկարագրություններին, ապա այն խաղերին, որ խաղում էին տղաները՝ սկսած մանուկ հասակից մինչև չափահաս դառնալը։ Ձեռագրի այս մասում նա քննադատում է 1870—80-ական թվականների այն երիտասարդներին, որոնք «խաղան թուղթ ու գումար», «ծխախոտ գործածեն» և որոնք վատ բարքեր ունեին։ Այդ կարգի երիտասարդներին նկատի ունենալով, հեղինակը գրում է. «Վա՜յ ծնողաց նոցա. մանավանդ վա՜յ աղգին, որ այսպիսի ցոպ և մոլի տղայոց վրա դրած է իր հույս» (143)։

Մանրամասն նկարագրություններ կան Վանի թաղերի, փողոցների, մարդկանց զբաղմունքի և այլ հարցերի մասին։ Շատ հետաքրքրական է հարսանիքներից մեկի նկարագրությունը, որտեղ ներկայացվում են պարեր ու երգեր։

4 Ձեռագիր № 4180, բաղկացած է 247 էջից (=494 էջ)։ Հիշատակարանի երրորդ և չորրորդ գրքերն են։ Երրորդ գիրքը կոչվում է «Պատմութիւն տպավորութիւն. աւագ սարկավագութեան, վարդապետութեան և քարոզչութեան իմոյ», որի մեջ մանրամասն շարադրում է իր՝ կրոնավոր դառնալու պատմությունը և հոգևորականների բարքերը։ Ձեռագիրը հետաքրքրական տեղեկություններ է պարունակում Վարագա վանքի մասին, որին շատ հին ժամանակներից կոչել են «մայրաքաղաք ամենայն մենաստանաց Վասպուրականի» (թ. 28), ապա շարադրում է 1840-ական թվականների վերջերին Վանում Հակոբ Թոփուզյանի և այլոց ջանքերով բացված 4 դպրոցների մասին։ Մանրամասն շարադրված է Հ. Թոփուզյանի կենսագրությունը, այն, որ նա եղել էր Լիմ անապատում, Էջմիածնում, Կիլիկիայում, Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում, Երուսաղեմում, որտեղ սովորել էր «բազում շարականս և երգս զարմանալիս» (47)։

Ձեռագիրը հետաքրքրական տեղեկություններ է պարունակում 1853—56 թթ. Արևելյան պատերազմի ժամանակ Վասպուրականի ժողովրդի կրած տառապանքների մասին։ Վան բերված թուրքական զորքերը ապրելու տեղ չունեին, կառավարությունը դատարկում էր ժողովրդի աղքատ խավի բնակարանները և տրամադրում զորքին։ Այս վիճակից դուրս գալու նպատակով որոշվեց ժողովրդի հաշվին մի զորանոց շինել, որի կապակցությամբ էլ սկսվեց ժողովրդի հուզումը ընդդեմ թուրքական իշխանությունների և հայ վերնախավի։ Վանի առաջնորդարանի և կառավարական պաշտոնյաների վճռով աքսորվեցին հուզումը կազմակերպող 4 կազմակերպիչները։ Կոստանդնուպոլսի պատրիարքը վիճակը «կարգավորելու» նպատակով այնտեղ է գործուղում Մ. Խրիմյանին, որին Վանի վերնախավի ներկայացուցիչները անվանում են «խռովարար ազգի և ժողովրդյան» (93) և նրան չի հաջողվում «զհրաման պատրիարքին 'ի գլուխ հանել» (94)։ Ձեռագրի այս մասի 102—134 թերթերը նվիրված են Կոստանդնուպոլսի հայ համայնքի վիճակին, քանի որ այդ ժամանակ Ե. Տեկանցը (1858 թ.) գտնվում էր Կոստանդնուպոլսում։ Ապա նկարագրված է նրա ճանապարհորդությունը դեպի Բաղեշ, որով էլ վերջանում է երրորդ գիրքը։

Ձեռագրի 241 էջից մինչև վերջը կոչվում է «Չորրորդ գիրք պատմութեան վասն անդրանիկ առաջնորդութեան իմոյ. և ամենայն անցից անցելոց որ 'ի Բաղեշ»։ Ե. Տեկանցը Բաղեշի հոգևոր առաջնորդն էր և հնարավորություն է ունեցել հավաքել ու շարադրել հավաստի տեղեկություններ Բաղեշի և նրա վարչական միավորի մեջ գտնվող գյուղերի վանքերի, եկեղեցիների և ժողովրդի կյանքի ու կենցաղի վերաբերյալ։ Սրտաճմլիկ նկարագրություններ կան ժողովրդի հարստահարությունների մասին։

5 Ձեռագիր № 4177, բաղկացած է 331 թերթից (=662 էջ), որը հեղինակը վերնագրել է «Գիրք հինգերորդ պատմութեան վասն պատրիարքական փոխանորդութեան, վասն քարոզչութեան սուրբ Երրորդութեան եկեղեցւոյ Բերայի և վասն վերադառնալոյ 'ի Բաղեշ 'ի պաշտոն

առաջնորդութեան»։ 5-րդ գրքի Բ, Գ, Դ, Ե գլուխները վերաբերում են Զեյթունի 1862 թ. ապստամբությանը և նրանից հետո Կոստանդնուպոլսում տեղի ունեցած իրադարձություններին[16]։ Ձեռագրի այս մասը շատ կարևոր է այնքանով, որ հեղինակը 1862 թ. պաշտոնավարել է Կոստանդնուպոլսի պատրիարքարանում, հանդիպումներ է ունեցել զեյթունցի տեր Հակոբի, Մ. Սեմերճյանի (Զեյթունցի), վարդապետ Գրիգոր Աբարդյանի, իշխաններ Աստվածատուրի, Ղազարի, Մովսես քահանայի, Կոստանդնուպոլսի ֆրանսիական դեսպանության աշխատակից Ժյուլ Ռոբերի և այլոց հետ։ Նրա տվյալները հավաստի են։ Նա քաղել է դրանք կամ ապստամբության մասնակիցներից, կամ նրանցից, ովքեր քաջածանոթ էին 1862 թ. հերոսամարտի պատմությանը։

1862 թ. Մ. Խրիմյանը նշանակվեց Մշո ս. Կարապետ վանքի վանահայր և Տարոն աշխարհի հոգևոր առաջնորդ։ Գրքի այս մասում Ե. Տեկանցը անդրադարձել է Մ. Խրիմյանի՝ Մուշ ժամանելու և տեղի հոգևորականների ու թուրք պաշտոնյաների՝ նրա դեմ ուղղած բանսարկությունների պատմությանը։ 1863 թ. Ե. Տեկանցը, որպես Բաղեշի հոգևոր առաջնորդ, էրզրումի վրայով նորից գալիս է Գլակա վանքը և ապա անցնում Բաղեշ, շմոռանալով մանրամասն նկարագրություններ թողնել այդ ճանապարհորդության, Գլակա վանքի և նրա հոգևորականների բարքերի մասին։

Ձեռագրի մի մասը կոչվում է «Գիրք վեցերորդ պատմության մերոյ վասն միացեալ առաջնորդութիւն Մշոյ և Բաղեշոյ. սկսեալ 'ի 1864 յամէն մինչև ցամն 1866» (85)։ Այս գրքում կան մի շարք վավերագրերի պատճեններ, տվյալներ Տարոնում և Բաղեշում ազգային սահմանադրության գործադրության մասին։ Շատ հետաքրքրական են հատկապես այն էջերը, որոնք նվիրված են Տարոն աշխարհին։ Այնուհետև նկարագրված է իր՝ 1865 թ. աշնանը կատարած ճանապարհորդությունը Կարինի վրայով դեպի Կոստանդնուպոլիս։

6 Ձեռագիր № 3721, բաղկացած է 181 թերթից (= 362 էջ) և վերնագրված է «Գիրք եոթներորդ պատմութեան մերոյ սկսեալ ի յամե փրկչութեան մերոյ 'ի 1866, և 'ի փետրվար ամսոյ 14 է մինչև 'ի 1866 ամն 'ի հոկտեմբեր ամսոյ 20»։ Ձեռագրի մեջ կան տվյալներ Ե. Տեկանցի՝ 1866 թ. դեպի Զմյուռնիա, Ալեքսանդրիա, Երուսաղեմ, Բեյրութ և Կոստանդնուպոլիս կատարած ճանապարհորդության մասին։ Այս հատորում տեղեկություններ կան նաև զանազան մարդկանց հետ իր հանդիպումների, Երուսաղեմի հնությունների և ս. Հակոբի վանքի վերաբերյալ։ Գլուխներից մեկը կոչվում է «Այցելել 'ի վանս ասորոց, ղպտաց 'ի հապեշաց» (41)։

Կոստանդնուպոլիս վերադառնալուց հետո, նշանակվելով Խարբերդի հոգևոր առաջնորդ, Ե. Տեկանցը մեկնում է Խարբերդ։ Ձեռագրի այս մասում կան մանրամասն տվյալներ Խարբերդի, նրա գյուղերի, հուշարձանների և ժողովրդի սոցիալական ու քաղաքական վիճակի մասին։ Ձեռագրի վերջին հատվածը նվիրված է նրա ճանապարհորդությանը դեպի Վան։

7 Ձեռագիր № 4179, բաղկացած է 378 թերթից (= 756 էջ)։ Ձեռագրի սկզբում Ե. Տեկանցը գրել է «Գիրք ութներորդ պատմութեան մերոյ սկսեալ ի յամի փրկչութեան մերոյ յամ տեառն ի 1872 'ի յունիս ամսոյ սկզբին»։

1866 թ., Խարբերդի առաջնորդ եղած ժամանակ, Ե. Տեկանցը էջմիածին է մեկնում՝ եպիսկոպոսական աստիճան ստանալու։ Այս հանգամանքը հնարավորություն է տալիս նրան ավելի մոտիկից ծանոթանալու Արարատյան դաշտի, Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքների, ինչպես նաև Աշտարակի և Ապարանի շրջանների ժողովրդի հետ։ Աստիճանը ստանալուց հետո նա անցնում է Անի, Կարս, Հասան-Ղալե և ապա Կարին, Մուշ, Բալու, Խարբերդ, Սեբաստիա, Ամասիա և Սամսոնի վրայով Կոստանդնուպոլիս։ Ձեռագրում շատ արժեքավոր և հավաստի տեղեկություններ կան նշված վայրերի վանքերի, եկեղեցիների, ավերակ բերդերի, գյուղերի, այնտեղ ապրող ժողովրդի նիստ ու կացի, դպրոցների և վերջապես թուրքական ու քրդական վերնախավի կողմից ժողովրդին հարստահարելու մասին։ Ձեռագրում տրվում է գավառներում տեղի ունեցող հարստահարությունների քննության հանձնաժողովների տեղեկագրի լրիվ տեքստը, որը հրատարակվեց, սակայն համառոտ։

8 Ձեռագիր № 4182։ Հեղինակի ամենաստվար ձեռագիրն է, բաղկացած 713 թերթից (= 1424 էջ) և կոչվում է «Մեհտասաներորդ հատոր պատմագրութեան մերոյ սկսեալ 'ի 1876 յուլիս ամսոյ քսանեն մինչև 'ի 1880 'ի յուլիս ամսոյ սկիզբն»։ Մի ժամանակաշրջան, երբ նա պաշտոնավարել է Վանի առաջնորդարանում, որպես առաջնորդական փոխանորդ։

---

16 Ձեռագրի այդ մասը հրատարակել ենք «Բանբեր Հայաստանի արխիվների», 1964, № 3-ում։

Ձեռագրի սկզբում հեղինակը գրում է, որ ինքը ամեն ջանք պետք է դնի՝ հորինելու «զայս պատմութիւն վասն ապագա սերնդոց Վասպուրականի և համորեն ազգին» (2)։ Իր աշխատության աղբյուրները հեղինակը համարել է «ա. Բուն և վավերական աղբյուր պատմագրությանս իմ ես ինքս իբրև ականատես ամենայն անցից և դիպաց։ Բ. Ժամանակակից արձանագրություն առաջնորդարանին Վանա։ Գ. Նամականիք մեր առ կենտրոնական ազգային վարչության և անտի առ մեզ։ Դ. Գավառներեն մի զկնի մերս հասած մասնավոր բողոքներ։ Ե. Մեր հրամանավ շրջագս գավառներեն հավաքյալ ընդարձակ հարստահարության տեղեկագիրներ վավերագրյալք բնակչաց ստորագրությամբ։ Զ. Վկայությունք ականջատես և ականջալուր արանց աշխարհիս, որք տակավին մեծամասնության կենդանի են» (2)։

Ստվար այս հատորում կան 1853—56 թթ. Արևելյան պատերազմի ժամանակ սկսված սովի և հարստահարությունների մասին վավերագրեր և տեղեկագրեր, որոնց մեջ նկարագրված է ժողովրդի ծանր վիճակը, նրա ունեցվածքի թալանը։ Փաստերի մի զգալի մասը վերաբերում է դեպի ռազմաճակատ տեղափոխվող թուրքական զինված ուժերի՝ գյուղացիներին հասցրած վնասներին, որի կապակցությամբ հեղինակը գրում է. «...տեղվույս կանոնավոր զորք Կարին երթալու ճանապարհին թե՝ ի՞նչ չարաչար հարված և նեղություն տվին գյուղացի ազգայնվոց անթվելի է» (24)։ Ձեռագրում կան մանրամասն տեղեկություններ 1876 թ. Վանի շուկայի հրդեհի և թալանի մասին։ Ժամանակակից Ե. Տեկանցը առանց երկմտելու գտնում է, որ հրդեհը առաջացրին, թուրքական իշխանությունների թելադրանքով, տեղական զորքը, ոստիկանությունը և մոլեռանդ ամբոխը։ Ձեռագրի մեծաթիվ վավերագրերը վերաբերում են ժողովրդի հարստահարություններին, քրդական աղաների սանձարձակություններին, որոնք, օգտվելով երկրի խառնաշփոթ վիճակից, թուրքական պաշտոնյաների թողտվությունից այդ ժամանակ շատ եկեղեցիներ, վանքեր հրդեհեցին, թալանեցին։ Այդ փաստերը վերլուծելուց հետո հեղինակը գալիս է այն եզրակացության, որ քրդական ուժերը «Օսմանյան երկիր կողոպտեցին իբրև թշնամվո երկիր՝ տակավին պատերազմ և քաջություն չարած» (48)։

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ժողովրդի ծանր վիճակի մասին 1879 թ. հուլիսի 26-ին գրությամբ տեղեկացվեց Վանի ռուսական առաջին փոխհյուպատոս Կոստանդին Կամսարականին։ Գրության մեկ օրինակը գտնվում է ձեռագրում (492)։ Հետաքրքրական է նաև այն գլուխը, որը կոչվում է «Բարենորոգումն Վասպուրականի»* (595—615)։ Այդտեղ կան մի շարք վավերագրեր՝ պատրաստված Վանի երեսփոխանական ժողովի, հարստահարությունների և բարենորոգումների հանձնաժողովի կողմից, որը տրվեց «առ արքունի լիազոր հանձնաժողով և պահանջել զբարենորոգումն» (595)։ Այս վավերագրից երևում է, որ Վասպուրականում «Հայոց ազգություն մեծամասնություն կկազմե» (597)։ Քննադատվում է սուլթանական բռնապետական կարգը՝ «Վասնզի մինչև ցայսօր ժամանակի գավառաց կուսակալք յուրյանց կամք, շրթունք և լեզուն օրինաց և կանոնաց գործադրություններն միշտ նախապատիվ և գերազանց տարած են և յետ այսօրիկ այսպես պիտի տանեն քանի որ կառավարություն բռնապետական և միապետական է» (597) (ընդգծումը մերն է—Հ. Գ.)։

9 Ձեռագիր № 4442, Ղևոնդ Փիրղալեմյանինն է, որի մեջ կան Ե. Տեկանցի ձեռքով գրված մի աշխատության Ա, Բ, Գ գլուխները՝ բաղկացած 22 թերթից (= 44 էջ, տե՛ս ձեռագրի 741—762 թերթերը)։ Աշխատությունը Տեկանցը կոչել է «'ի 1882 յունիս 21 երկուշաբթի աւուր ուխտավորութիւն իմ 'ի Մշո ս. Կարապետի վանս։ Պատճառ ուխտավորութեան իմոյ այս է զոր ահա պատմագրեմ ձեռոք իմովք» (741)։

Ձեռագրում հեղինակը անդրադարձել է 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրադարձություններին։ Պատերազմի նախօրյակին Վանում սկսեցին հավաքվել քրդական անկանոն զինված ուժերը, որոնք հայկական գյուղերից անցնելով «...կողոպտեին և տանեին շարժական և անշարժ կահկարասիք հայոց. կուտեին նոցա կերակուրք և որպես մարախ կսպառեին զամենայն ինչ» (741)։

Ե. Տեկանցը գովեստի խոսքեր է ասում վիլայեթի կառավարիչ Հասան փաշայի մասին։ Քրդական հրոսակները, շեյխ Ջալալեդդինի գլխավորությամբ դեպի Վան գնալիս, կողոպտեցին Կարճկանի և Կապուտկող լեռան մոտ գտնվող Ռշտունյաց գավառի գյուղերը։ Հասան փաշան գնաց նրան դիմավորելու «...ձիեն վար իջավ, գնաց շեխու ձեռք համբուրեց ակամա, բայց շեխ ոչ նորա երես նայեցավ, ոչ ողջույն տվավ նմա, զի թուրք հառաջագույն շեխի ականջին խոսած էին, թէ՝ կուսակալն հայասեր է և կյավուր» (742)։ Կուսակալը, ըստ Ե. Տե-

* Մանրամասն տեղեկություններ կան թուրքական պաշտոնյաների կատարած զեղծարարությունների և կաշառակերության մասին։ Տրվում են առաջարկություններ ժողովրդի այդ ծանր վիճակը կարգավորելու վերաբերյալ, որոնք բոլորն էլ մնացին թղթի վրա։

աշխարհի բարիքը ասված ավել է մուսուլմաններին, և այդ պատճառով էլ հայերի ձեռքը եթե կա «...մեծաշեն տուն, զվարճալի այգի, պտղաբեր ագարակ, նժույգ ձի, լավ զենք և ամենայն գեղեցիկ բան տեսնելուն պես կցանկանան հափշտակել, կուզեն և, եթե չհաջողին առնուլ, կաշխատին գողանալ...: Եթե գեղեցիկ կին կամ պատանի տեսնան հափշտակել և առևանգել կմտաբերեն և ասեն գեղեցիկն կյավուրին չի վայելեր, այլ իսլամին»։

Ե. Տեկանցը Կարսում, Բասենում, Թայազետում, Ալաշկերտում եղած ժամանակ սրտի ցավով է նկատում, որ հայերի մեջ քրդական ցեղերից թափանցել է բաշլղի սովորությունը, ըստ որի տղան պետք է մեծ գումարով աղջկա ծնողներից գներ իր հարսնացուին։ Այս մարդավաճառությունը Ե. Տեկանցը համարում է ներքին հարստահարություն, «չար սովորություն», «որդեվաճառություն», որը «...ավելի վնասակար է քրտաց հարստահարութենեն»։ Կարսի գյուղերում բաշլղը հասնում էր 10—50 և նույնիսկ 100 ոսկու։ Հավաքելով տեղերում հոգևորականներին և աշխարհիկ վերնախավի ներկայացուցիչներին, այցելու քննիչը պահանջում է բաշլղ առնողների նշանը չօրհնել և պսակի հրաման չտալ և մի քանի ամսում նշանվածների պսակները շուտափույթ կատարել գոյություն ունեցող եկեղեցական օրենքներով։ Այդ մասին նա գրում է նաև պատրիարքարանին, գտնելով, որ այդ սովորության պատճառով դժվարանում է ամուսնության գործը, և ազգի աճը պակասում է։

Ապա Ե. Տեկանցը այցելում է Թայազետ, Մուշ, Վասպուրական և լինում բազմաթիվ գյուղերում։ Նա բարեխղճորեն արտագրել է իր այցելած վայրերի վանքերի վիմագիր արձանագրությունները, ձեռագրերի հիշատակարանները։ Այս ձեռագրում կան մանրամասն տեղեկություններ բնակիչների թվի, նրանց զբաղմունքի, նիստ ու կացի, դպրոցների, սովորությունների և այլ հարցերի մասին։

Ըստ ձեռագրի, այցելած վայրերում, բացի քաղաքներից, դրպրոցներ համարյա չեն եղել։ Քահանաներից ոմանք միայն առանձին գյուղերում սակավաթիվ երեխաներ հավաքելով սովորեցնում էին «հասարակ կարդալ», «հասարակ ընթերցմունք»։

Քրդական և թուրքական վերնախավի մեծ մասը, ինչպես նաև Ռուսաստանից գաղթած չերքեզները գրավել էին հայկական վանքերի և եկեղեցիների հողերը։ Չնայած թուրքական կառավարությունը չերքեզների գաղթը կազմակերպելու ժամանակ ռուսական կառավարությանը խոստացել էր նրանց տեղավորել սահմանից 150 ժամ հեռավորության վրա, սակայն բնակեցրել էր Սողանլուղի անտառներում և նրան կից

դաշտերում, որը սահմանից 10 ժամվա հեռավորության վրա էր գտնվում։ Գաղթածների վերնախավը բնակվում էր հայկական վանքերում և սեփականացրել էր վանքապատկան հողերը։

Ձեռագրից երևում է, որ չնայած արդեն ավելի քան 10 տարի էր, որ ընդունվել էր արևմտահայերի ազգային սահմանադրությունը, սակայն նրա այցելած վայրերում այն չէր գործադրվել, և սահմանադրությամբ նախատեսված մարմիններն ընտրված չէին։ Բասենի գյուղերից մեկում այն գործադրելու ժամանակ ժողովում գյուղացիները աղաղակելով ասել են. «...սահմանադրություն զմեզ քրտաց ձեռքեն կազատե՞, թե՞ ոչ»։ Հայրենասեր Երեմիան գտնում է, որ այդ աղաղակը միշտ պետք է լսվի գյուղացիներից, քանի որ նրանք բոլորն էլ «քրտաց ձեռք գերի են և ազատություն կխնդրեն»։ Ազգային սահմանադրությունը գործադրելուն դիմադրում էին հոգևոր առաջնորդներից շատերը, քանի որ նրանց գործունեությունը այս կամ այն չափով դրվում էր հսկողության տակ։

Ե. Տեկանցը այն համոզումն ունի, որ հայերը պետք է զենք ունենան, որպեսզի փակեն հարստահարողների ախորժակը։ Բասենի մի գյուղի զինված 4 երիտասարդների մասին գրելով, նա գտնում է, որ նրանք քաջ էին և կարող էին դիմադրել իրենցից ավելի շատ քրդերի և չերքեզների և եթե «ամենայն գյուղացի ժողովուրդ սոցա նման զինավարժ լինեին, հարստահարությունք իսպառ հեռանային 'ի Հայաստանե»։ Սակայն ցավով է նշում, որ մնացած վայրերում հայերը զուրկ էին զենքից, նրանց չէր թույլատրվում զենք կրել։

բ) Այս տետրակը կոչվում է «Ընդօրինակութեան տետրակ 'ի մեջ առ վարչութեան ուղղեալ նամակաց և տեղեկագրութեանց 'ի յամի տեառն 1872 օգոստոս 10 'ի Բարձր Հայք 'ի Կարին» (զան. հեղ. արխիվ, թղթ. 54, վավ. 13-2)։ Տետրակը բաղկացած է 99 թերթից (=198 էջ). այն ամփոփում է իր այցելած վայրերից պատրիարք Մ. Խրիմյանին և ազգային վարչությանն ուղարկված զեկուցագրերը։ Զեկուցագրերը արևմտահայերի կրած տառապանքների դառն նկարագրություններն են։

Շիրակավանի, Նախիջևանի (Կարսի շրջանի մեջ մտնող) գյուղերում եղած ժամանակ Ե. Տեկանցը տեսնում է, որ ժողովուրդը շատ աշխատասեր է, չի պանդխտում, նրանց զգեստները շատ պարզ են ու հասարակ, սակայն հարսանիքները տևում են 4—5 օր, և կատարվում են շատ շռայլ ծախսեր, ամուսնությունները հոգևորականները կատարում են կաշառքով։ Վանահայրերը վանքի հասույթները տնօրինում են

այնպես, ինչպես իրենք են ցանկանում։ Վանքերը հաշվետումարներ չունեն, որից երևային ծախսերը և եկամուտները։ Նա պահանջում է կազմել վանքերին կից վանական խորհուրդներ, որոնք հնարավորություն ունենան հաշիվ պահանջելու վանահայրերից։ Հարկերը բաշխվում են անարդար, այսպես, արքունի տուրքերի մեծ մասը «հայք կվճարեն, իսկ ամենափոքր մասը թուրք և քուրտք»։

Պետությունը պահանջել է Բասենի հայ բնակիչներից 1000 սայլ տախտակ ու գերան տալ և բնակիչներին թղթեր է տվել հետագայում գումարը վճարելու համար, սակայն չի վճարել։ Թուրք և քուրդ վերնախավի ներկայացուցիչները հայկական գյուղերին պատկանող հողերը գրել են իրենց վրա (թափու), որի պատճառով աղքատ հայ գյուղացիները ստիպված են «...տերության տուրքին չափ հողատիրոջ տալ և ապա ցանել նրա հողը»։ Գյուղացիները գրագետ չեն, չգիտեն օսմանյան պետական օրենքները և չեն կարողանում պաշտպանել իրենց դատը։ Ե. Տեկանցը խնդրում է պատրիարքարանից գավառները գործուղել օրենքներին գիտակ մարդիկ, որոնք ծանոթացնեն ժողովրդին իր իրավունքներին։ Կան հայ հարուստներ, որոնցից մեկը Վաղարշակերտի (Ալաշկերտ) Պետրոս աղան է, որը «կաշառակեր մատնիչ գողակից գողոց անձ» է և «աղքատ գյուղացվոց արյուն կծծե» և շրջակա 10 գյուղերի պսակի հրամանները ինքն է տալիս, իսկ վիճակի հոգևոր առաջնորդը և քահանաները երկնչելով նրանից, վիճակի «թե հոգևոր և թե մարմնավոր իշխանություն նմա հանձներ» են։ Եկեղեցականները ժողովրդին թողել են անկարեկից, միայն նրանցից ճիշտ ժամանակին հոգևոր տուրքեր են հավաքում, այդ պատճառով էլ կաթոլիկները և բողոքականները աշխույժ աշխատանք են ծավալում խեղճ ժողովրդի մեջ, գրքեր են տարածում, որոնց հետ նաև իրենց ուսմունքը։ Հատկապես երկրի այս մասում սկսել են աշխույժ գործել ամերիկյան կրոնական գործիչները։

Տետրակի ամենամեծ հատվածը (49—99) Կոստանդնուպոլսի պատրիարք Մ. Խրիմյանին և ազգային վարչությանն ուղղված ստվարածավալ տեղեկագրերն են, որոնց մեջ հատկապես շատ են Աղթամարի կաթողիկոսության, նրա հոգևոր ոլորտի մեջ գտնվող բոլոր գյուղերի, նրանց բնակիչների թվի, զբաղմունքի, եկեղեցիների և վանքերի մասին եղած տվյալները. «...ուշի-ուշով նկատեցի և տեղեկացա,—գրում է նա,—թե Աղթամարա վիճակի բոլոր վանորեից մեջ ոչ շարժական և ոչ անշարժ, ոչ եկամտից և ոչ ծախսուց տումար կա»։ Պետությունը վանքերն ազատել է տասանորդ տուրքից, սակայն տեղական թուրք կառավարիչները շարունակում են հավաքել, լցնել իրենց գրպանը։ Այնուհետև, շատ փաստեր են բերվում այն մասին, թե ինչպես են հավաքագրում թուրք և քուրդ վերնախավի ներկայացուցիչները հայկական վանքերին պատկանող հողերը։ Այսպես. Խիզանի ս. Կարապետ վանքի հողերը քրդերը «թափու են արած յուրյանց վրա», Ապարանի ս. Խաչ վանքի հողերի վրա բնակություն է հաստատել Դերիշ բեյը և վանքի «հողեր և կալվածներ» նրա ձեռքն են։

Հատկապես դժվար է եղել Ե. Տեկանցի համար ազգային սահմանադրությունը գործադրելու հարցը։ Աղթամարի կաթողիկոսի տեղապահ Հակոբ Խիզանցին ժողովրդի մեջ լուրեր է տարածում այն մասին, որ եթե սահմանադրությունը ընդունվի, ապա յուրաքանչյուր ընտանիք պետք է տարեկան 75 ղուրուշ հարկ վճարի Կոստանդնուպոլսի ազգային հիվանդանոցին։ Նրան հարկ է լինում մեծ ջանքեր գործադրել տեղապահի այդ սուտը հերքելու համար։ Ե. Տեկանցը Վասպուրականի վանքերի մասին վիճակագրական տվյալներ հավաքելու ժամանակ նկատում է, որ վանքերի մի մասի վանահայրության պաշտոնը գրավել են աշխարհական մարդիկ, հատկապես տանուտերերը, որոնք այնտեղից ստացած եկամուտը կիսում են Աղթամարի տեղապահի և Վանի հոգևոր առաջնորդի հետ։ Այդ աշխարհական և հոգևոր կոչում ունեցող վանահայրերը և նրանց հարազատները իրենց վրա էին գրում վանքի հողերը և եկամուտը սեփականացնում։

գ) Այս տետրակը վերնագիր չունի (թղթ. 54, վավ. 13—3) և բաղկացած է 67 թերթից (= 134 էջ)։ Ձեռագիրը շատ էջեր է պարունակում Բագրևանդի գաշտերի գեղեցկության և այնտեղ գտնվող հայկական գյուղերի մասին։ Նկարագրված են Վան քաղաքը և նրա շրջակա գյուղերը, Աղթամար, Կտուց, Լիմ անապատների, Վերին և Ներքին Վարագի գեղեցիկ դիրքը և հուշարձանները։ Տեղեկություններ կան Կապուտկողի ս. Հակոբի, Նոր Գյուղի վանքի և այլնի մասին։

դ) Տետրակի ձեռագրի սկիզբը պակասում է, այն բաղկացած է 50 թերթից (= 100 էջ, տե՛ս թղթ. 54, վավ. 13—4)։ Ձեռագրի 3-րդ թերթի վրա գրված է «Գլուխ Դ. 'ի տանն ս. Կարապետին»։ Նրա 3 գլուխները, ինչպես ասվեց, գտնվում են Ղ. Փիրղալեմյանի ձեռագրերից մեկում (ձեռ. № 4442)։ Համեմատելուց հետո պարզվեց, որ այդ ձեռագրում գտնվող 22 թերթերը (= 44 էջ) վերը նշված ձեռագրի սկիզբն են։ Ձեռագրի սկզբում Տեկանցը նկարագրում է իր ճանապարհորդությունը Վանից Բիթլիսի վրայով դեպի Մուշ և ապա Մշո ս. Կարապետ

վանք։ Նրան ընկերակցում էին Կոստանդնուպոլսից եկած երկու երիտասարդներ։ Ծաղրելով քաղաքում ապրողներին, որոնք մեծ դժվարությամբ կարողացան անցնել լեռնային գետակի վրայով, Ե. Տեկանցը գովեստի խոսքեր է ասում Սասունից, Խութից և Բռնաշենից եկած կանանց և տղամարդկանց մասին, որոնք առանց երկնչելու անցան գետը։ Այդ մասին նրա մոտ կարդում ենք. «Տեսա Խութա, Սասնո և Բռնաշեն լեռնական հայ ժողովրդոց խումբ, որ հուն հասած միջոցին անմիջապես արիությամբ գետ անցանեին. տեսա սոցա կանայք և օրիորդք առանց գրաստու հետե գետն անցած հայսկոյս ուստի գոչեցի ետեուս երիտասարդաց մայրաքաղաքին. ահա տեսաք, լեռնական կանայք և օրիորդք բյուր անգամ ձեզմե քաջասիրտ են, դուք ծովուց եղերք ծնած կսարսափիք այս ծանծաղ հունեն, իսկ սոքա լերանց մեջ ծնանելով ոչ ծով տեսած և ոչ գուցե այսպես մեծ գետ, բայց ահա ձերով իսկ աչոք տեսաք, որ անվեհեր արիությամբ անցան հուն, գնացեք սոցա ոտի փոշին լիզեցեք, որ հայու սիրտ ունենաք»։

Ս. Կարապետ վանքից հետո Ե. Տեկանցը և նրա ուղեկիցները գնում են Մեղտի գյուղը, ապա Աշտիշատի ավերակները և Կոփ ու Տալարիս գյուղերը։ Տալարիսում նրան պատմում են, որ քուրդ շեյխերից մեկը 20 տարվա ընթացքում «15 հոգի հայերեն սպանած է, 6 հոգի բռնի հավատքե հանած է», ապա հափշտակել է 80 տուն հայերի հողերը։ Գյուղացիները իրենց ծանր վիճակից ելնելով, ստիպված դիմեցին թուրքական դատարանին, որը շեյխի նկատմամբ ոչ մի միջոցի չդիմեց։ Այսքանից հետո վայրագ շեյխը սպանեց նրանց գլխավորին և մնաց անպատիժ։

Ձեռագրի վերջին գլուխները Վասպուրականի նահանգի Արճեշի (Քաջբերունիք) գավառի գյուղերի և նրա վանքերի ու ժողովրդի կյանքի նկարագրությունն է։ Հատկապես թախծոտ էջեր կան Մեծոփա վանքի և նրա մոտ գտնվող հայ բնակչություն ունեցող գյուղերից մեկի շինականների անմխիթար վիճակի մասին։

11. ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում է գտնվում (Թ. Ազատյանի ֆոնդ, վավ. 57-3) Ե. Տեկանցի կազմած Վասպուրականի վիճակագրությունը, բաղկացած 83 թերթից (= 166 էջ), որն ուղարկված է Կոստանդնուպոլսի պատրիարքարան։ Հեղինակը նշում է, որ գործադրել է ամեն ջանք՝ իրեն տված հանձնարարությունը ամենայն ճշտությամբ կատարելու համար։ Այդ կապակցությամբ նա գրում է. «...ամեն գավառ՝ քաջահմուտ գրագիրներ ուղարկելով, յուրաքանչյուր ժողովրդոց թվահամարն ի գեր առնին» (թ. 1)։ Ե. Տեկանցի կազմած վիճակագրության համաձայն 1878 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո Վասպուրականում կար 785 գյուղ, 57 վանք և 399 եկեղեցի։ Հայերի թիվը հասնում էր 170 հազարի, ասորիներինը՝ 86.768, քրդերինը՝ 42.279, թուրքերինը՝ 19.835, հրեաներինը՝ 363։ Վիլայեթի վարչական կենտրոն Վան քաղաքը ուներ 22.960 հայ և 8450 թուրք բնակիչ (թ. 5)։ Այսպիսով, ըստ այդ վիճակագրության, հայերը Վասպուրականում մեծամասնություն էին կազմում։

Մենք համառոտակի նշեցինք Ե. Տեկանցի թողած ձեռագիր հարուստ ժառանգության մասին։ Սակայն գիտենք նաև, որ պակասում է նրա «Տոհմային հիշատակարանի» 10-րդ հատորը։ Վերջապես հնարավոր է, որ Ե. Տեկանցը ուրիշ աշխատություններ ևս ունենա, որոնք մինչ այժմ մեզ անհայտ են։

Ձեռնարկելով Ե. Տեկանցի՝ 1872—73 թթ. Բարձր Հայք և Վասպուրական կատարած ճանապարհորդական նոթերի և նրա՝ Կոստանդնուպոլսի պատրիարքարան՝ Մ. Խրիմյանին և ազգային վարչությանն ուղարկած զեկուցագրերի հրատարակությունը, հարկ ենք համարում նշել, որ կատարել ենք շատ քիչ քանակի կրճատումներ հատկապես այն մասերից, որտեղ կային կրկնություններ։

ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՇՏՕՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ՄԵՐՈ ՍԿՍՅԱԼ 1872 ՀՈՒԼԻՍ ԱՄՍՈ 21-Է ՄԻՆՉԵՎ 1872 (ՕԳՈՍՏՈՍ) ԱՄՍՈ*։

1872 Հուլիս 21։ Օրն ուրբաթ։

Սրբազան պատրիարքի, այն է՝ Հայրիկի և վարչության կողմանե իբրև այցելու և քննիչ Բարձր Հայոց գավառին Բլար անուն շրջենավով Պոլիսեն դեպ ի Պոնտոս[1] նավեցինք։ Ինձ ընկերակից էին Կարինեն երկու ազնիվ երիտասարդք՝ Պալարյան Համազասպ[2] էֆենդին, Կինեվիզյան Հարությունն[3]։

Նավի մեջ եվտոկիացիք հանձնեցին մեզ Հարություն անունով եվտոկիացի տարեւոր պատանի մի, որ Պոլսո մեջ անգործ մնալոյն աղքատ, հայլազգության դառնալո մտաբերած էր. տղային զգուշացանք մինչև ի Սամսոն[4]. 45 ղուրուշ դրամ հանձնեցինք տղային. իրեն ապահովության և գործ գտնելո մասին հանձնարարական նամակ գրեցինք Եվդոկիո առաջնորդ Հակոբ վարդապետին[5], Փորթուգալյան Մկրտիչ վարժապետին[6] և սեբաստացի Մյուսի միասգալին[7] ի Ամասիա[8] և շաբաթ օր Սամսոնի նավահանգստեն երկու հավատարիմ արանց հանձնեցինք տանել մինչև Ամասիա և մինչև Եվդոկիա[9]։

Ուրբաթ երեկո ժամ մեկին նավ սկսավ նեղուցեն նավել ի ծովն Սեավ. երեկո, մինչև ժամ երեքին, զվարթ և ուրախ էինք. գիշեր քնո մեջ նավ ծովու այլայց վրա տատանելով ամեն ճանապարհորդեն նավի տախտակամածին վրա հորսասյալ էր։ Շաբաթ առավոտ, երբ անկողնեն ելա, մաղձս սկսավ հուզել, ուզեցի ինքզինքս ամուր պահել, բայց չկարողացա, որով խիստ անհանգիստ եղա, մինչև կիրակի առավոտ անսուաղ մնացի, և ինձ հետ գրեթե նավելոց մեծ մասն տառապեցան։

Կիրակի առավոտ օր էր վարդավառի կիրակին ծովու հանդարտութենեն գլուխս և սիրտս հանդարտած էր, թեյ խմեցինք, նախաճաշ արինք, մինչ նավ տասնեմեկին Սամսոնի առաջ ճամբորդներ ցամաք հանելոց ատեն ուրախ զվարթ ժամանակ անցուցինք։ Երբ Սամսոնի սինլբոր նավավարք նավորդաց կահկարասիք նավեր կիջեցնեին, մեր Ավետիսի երկու արկղ գրքեր ավազակաբար նավակն իջուցին, զոր Երեմիայի սուր աչք ի հեռուստ դիտելով հասավ բողոքեց և նավակեն դուրս հանել տվավ և պատվիրեց Ավետիսին, որ ծովեզերյա մարդկանց ավազակութենեն զգուշանա։

Մեկ ժամ ու կես հազիվ կեցավ նավ Սամսոնի նավահանգիստ, ուստի չկարողացանք ելնել ի Սամսոն և մեր բարեկամ Պեյլարյան Խոսրով պեյի շենքեր և կալվածքներ տեսնալ։ Սիրտս բավական տագնապեցավ սույն նավահանգիստին մեջ, վասնզի երկու եղբայրներս՝ Վրդանես[10] և Արիստակես[11] վարդապետք, վեց ժամ հեռու Զարշամպայի[12] մեջ էին, և ես կը ցանկայի, որ Ամբակումա հրեշտակ[13] զիս եղբորցս բնակատեղին տաներ և բերեր, սույն սրտաբեկ վշտակրության մեջ տատանելով, նամակ մի գրեցի եղբայրներս և իմ՝ դեպ Բարձր Հայք ճանապարհորդությունս իմացուցի իրենց, տարակույս չկա, թե նոքա ևս ըստ բավականին տի վշտանան զիս չտեսնելոյն համար։

Կիրակի երեկո և գիշեր շատ հաջող և զվարթ անցուցինք, երկուշաբթի առավոտ ուրախությամբ անկողնենեն ելանք, նավ հաջողությամբ կնավեր դեպ ի Քիշառոնի[14] նավահանգիստ, և ես նստյալ ի մեջ նավին գրեցի զայսսիկ։

Ժամ տասն նավն հասանելով ի նավահանգիստն Պոնտոսի խարիս[խ] ձգեց, թե մեք և թե մեզ հետ գտնված պանդուխտ Հայաստանի եղբայրք անբավ ուրախությամբ զվարթացած ողջունեցինք Պոնտոս քաղաք, իբրև նախագուռն մտանելո ի Հայրենի աշխարհն մեր։

Զաքարյան պարոն Մարտիրոս և Դավիթ մշեցի, պարոն Գրիգոր նավակավ եկան ի շրջենավ դիմավորեցին զմեզ, ուրախությամբ ողջունեցինք զիրենք և նավակ մտնալով ելանք և իջևանեցանք ոչ ի բուն առաջնորդարան, զոր պոնտացիք վարձու տված էին, այլ ի վարձյալ առաջնորդարան։ Պոնտոսի տաքություն խիստ սաստիկ էր։ Երկուշաբթի գիշեր սաստիկ նեղություն կրեցինք, ուստի երեքշաբթի օր ի Պոնտոսեն հեռանալ որոշեցինք։

Պատրիարքական փոխանորդ Մատթեոս վարդապետ չէր ի Պոնտոս, այլ գնացած էր 'ի Կյումուշխանա[15] եկեղեցվո հիմունք օրհնելու։ Պոնտոսի երկու քահանայք քանի պատվավոր անձինք ի տեսության եկին առ մեզ։ 'Ի Պոնտոսե առ սրբազան Հայրիկն հարկ եղած տեղեկագիր պատրաստեցինք և պատրաստեցանք 'ի չու։

Երեքշաբթի ժամ ութուկեսին մեկնեցանք ի Պոնտոսեն, սակայն ի Պոնտոս մեր ուղեկից երիտասարդաց մեջ կառքով կամ ձիով երթալո

* Այս վերնագրից ներքև գրված է և ջնջված մեկ ուրիշ վերնագիր. «Ցեարակ ճանապարհորդության ի Պոլիսեն մինչև ի Կարին» (Հ. Պ.)։

կարծիք տեղի ունեցավ։ Մինասյան Հովհաննես, որ ճամբայի կառանց գործակատարն էր, առաջարկեց մեզ և ուղեկից երիտասարդաց կառքով ուղևորիլ։ Սույն առաջարկ բարի թվեցավ մեզ, սակայն 15 օսմանյան ոսկի կուզեր վեց մարդու։ Եթե կառքով ուղևորվեինք և կահկարասիք ջորեպանաց հետ խրկեինք, ծախք 450 ղրշի կհասներ և գուցե այսչափ ծախք վարչութենեն ընդունելի չլիներ, ուստի որոշեցինք ձիով ճանապարհորդել։

Համազասպ էֆենտին հավետ հոժարությամբ կպնդեր կառքով ուղևորվել, իսկ Կինեվիզյան Հարությունն աղայն հին սովորություն հարգի համարելով և մանավանդ տնտեսության խնայողության զհետ գնալով կպնդեր ջորեպանաց միջոցով երթալ, և նորա տնտեսագիտությունն գրեթե հարգվեցավ։

Զմոռանանք մեր հավատարիմ գործակատար Զաքարյան Մարտիրոս եղբոր ջանք, որ գրեթե երեք ամիս առաջ կպատրաստեր այնպես ճանապարհ հանել, որ հավիտյան յուր բարեկամություն չմոռանային։ Մենակ մեզ համար երեք անգամ նավակ խրկած էր ի նավ, բայց ըստ որում զմեզ նավ չգտնալով պարապ ետ դարձած էին, նավակներու ծախք, որոց մեջ երբեք նստած չէի, մեզմե կպահանջեր։

Մինչդեռ ուրիշ ճամբորդներ 100—130 ղուրուշի ձի բռնած էին, իսկ մեր Մարտիրոս եղբայր յուր բոլոր աշքաբացությամբ... ղուրուշի* ձի պատրաստեց մեզ համար, երբ կառքի վրա խոսք կլիներ, պարոն Մարտիրոս միշտ զմեզ կհամոզեր ձիով ճամբորդել, երբ մեր խելոք եղբոր խելքով ձիով հուզի անկանք, նորեն իմացանք, թե որչափ խաշած եմք, վասնզի երբ Կաշբեխլիի ամենադժվարին լերանոտ ուղին կձիավորվեինք, միշտ կառք կառք ասելով, կառքով չուղևորվելուն համար կատրջանային։

Իբրև միջանկյալ, սակայն կարևորագույն միսրիկ պատմության արժանի անցք մի դեպք ունեցավ ճանապարհին, զոր ընթերցողաց միտք կրնա ըստ կարի լուսաբանել, թե տաճիկ ժողովուրդք այս դարուս մեջ ինչ ճարպիկ քաղաքականությամբ կվերաբերվին քրիստոնյա ազգաց հետ, մանավանդ հայոց, որք մեծամասամբ օսմանյան պետության հպատակ ժողովուրդ կհամարվին այժմ։

Մշեցի Սելիմ անունով տաճիկ մի, որ դատ վաստակելու համար Պոլիս գալով սրբազան Հայրիկի միջոցով դատ վաստակելով կվերադառնար ի Տարոն, սա ի Պոլսո սկսյալ թե 'ի նավին, թե 'ի ճանապարհին, թե Պոնտոս և թե 'ի ճանապարհին մինչև 'ի Կարին մեզ ուղեկից

* Նշված չէ, թե քանի ղուրուշով վարձվեց ձին (Հ. Պ.)։

գտավ։ Սա 'ի Պոլիս, երբ հայոց ազգի հետ կկենակցեր և կխոսեր, միշտ հարգական անունով կպատվեր զհայեր, խրիստյան միպաթի էրմանի միլաթի[16] ասելով։ Իսկ նավի մեջ և 'ի Պոնտոս սկսավ զհայեր բռայա[17] անվանել, երբ Պոնտոսի լեռներեն անցնելով Բաբերդու մոտեցանք, մանավանդ երբ Բաբերդ մտանք[18], սկսավ զհայեր կյավուր անվանել և երբ 'ի Կարին հասանք ևս առավել սկսավ նախատել զհայն, «օղում ի պունա կեավուր լար»[19] ասել։

Պոնտացի Մինասյան Հովհաննես աղայն 'ի պատիվ մեզ և մեզ ուղեկից երկու ազնիվ երիտասարդաց յուր կառքով և ընկերներով կես ժամու ճանապարհ ուղեկցելով զմեզ մեծարեց և շնորհակալություն և օրհնություն առնելով ուրախությամբ դարձավ 'ի Պոնտոս, իսկ մեք դեպ 'ի առաջին իշևան։

Երեկո իշևանեցանք ի Խոսողլան խան, ավազակներ երկու օր առաջ նույն տեղաց մերձակա խաներու մեկ հարուստ խանութ կողոպտած էին, նույն սահմանի մյուտիր լազաց գլխավորներ ժողովելով գողն գտնելու հարցաքննություն կառներ, մեր խանճին իսլամ լինելով հույժ տրտմած էր, չգիտեմ յուր ազգականներ քննության ենթարկվելու մասին էր, թե խանութ կողոպտելուն համար էր, ուստի բնավ չէր ախորժիր մեզ հետ խոսակցիլ, ջուր չէր ուզեր տալ մեզ և դրամով կերակուր տալ մեծ ձանձրություն էր յուրյան։ Մեր հնարագետ ճարպիկ Համազասպ էֆենտին զխանճին մարդավայել դեմից մեջ հավաքելու հնարք գտավ, սկսավ իբրև այլազգաբար աղոթել, այլազգաբար իշխել և հրամայել և ահա ջուր կերակուր և ամենայն ըստ հրամանի էֆենտիին բերվել սկսավ ձեռամբ խանճիին։ Բնական և ընդհանուր օրենք է այս, երբ մեկ ճանապարհի մեջ կամ օտարության յուր ազգակից և կրոնակից տեսնա, թե կուրախանա և թե ուրախությամբ նորա պիտույք կհոգա։

Ջորեքշաբթի առավոտ ջորեպաններ ուշացան ամենքս 'ի միասին զանազան-զանազան տրտունջներ բառնալ, թե ձորակի խոնավ և գեշ օդին դեմ և ճորապանաց դեմ. արդեն հարբուխ իմ և մեր եղբայր Ավետիսի գլխին մոտեցած էր. ժամ վեցուկեսին սկսանք Զայիրներու գահավեժ զառիվերն 'ի վեր ելանել, նախ մշուշ պատեց պաշարեց զմեզ, ապա հորդ անձրև տեղաց ի վերա մեր, ա[մ]պրոպք և որոտմունք օդե մեջեն զմեզ կահացուցանեին, ութ քառորդ անցած հասանք ի Զայիրներու խան, հարբուխի սաստկությենեն մեր և Ավետիսի գուդեն երկու փոքրիկ աղբյուր բացվելով քիթն 'ի վայր ի հոսեին երբեմն սաստկանալով և երբեմն նվազելով ծանրացավ մեզ վրա, մինչև ազատելով լեռնային ճանապարհեն հասանք մինչև 'ի Բաբերդ և անդ գտանելով զոր,

զջուր և զհող և զհաց Հայաստանի, ուրախացանք հոգով և ազատեցաք ի թանչե։

Հինգշաբթի առավոտ ժամ իններին, ելնելով Զայիրներու խանեն, այն սարսափնահար գահավեժ լերանց բարձունքներեն անցանք անխռով, սաստկաշունչ հով խորանդունդ ձորերեն և ամպամած լեռներեն երբեմն 'ի դիմաց և երբեմն 'ի թիկանց կհարկաներ զմեզ, մեք ամառ կարծելով ավելի զգեստ հագյալ չէինք, ուստի սաստիկ ցուրտ զգալով գրեթե կը դողայինք, մեր ուղեկիցք բեռնավորյալ ձի հեծանո համար ետ մնացած էին, մեր ավելի զգեստ նոցա հետ էր, չէինք ուզեր մեր ձիանք կեցնել և ավելի զգեստ առնել, վասնզի լեռնային ամենազվարճալի տեսարան և օդո թեթև մաքրություն միշտ զմեզ հառաջ վարել կուտար, մանավանդ թե մեր ձիանք մեզմե առավել կախորժեին այդ զովաշունչ ուղին արագ-արագ ընթանալ. ես, Համազասպ էֆենտին և Հարություն աղայն բանաստեղծական զվարճախոսությամբ կզվարճանայինք, լերանց գագաթան մերձենալով մեր կողմանե Համազասպ էֆենտի պատգամավոր ընտրեցինք, որ Հայաստանի հարստահարության բողոք ձեռոք աստծո մատուցանե, վասնզի աստված մերձեցած կհամարեինք զմեզ։

Ժամ մեկու կեսին հասանք 'ի Կյումուշչի խան, որ բարձրաբերձ լերանց մեջ է հաստատված, հուլիս 27-ն էր, սակայն գիտես թե նոր 'ի նորո մայիս մտած էինք, վասնզի դեռ գարին մածնած չէր։ Վերոհիշյալ Սելիմ աղայն, որ շատ անգամ մեր երթեն ետ կմնայր, սակայն երբ կնկատեր, թե խաներ կերակուր ուտելո կպատրաստվինք, ձին մտրակելով անպատճառ մեզ առաջ խան կհասաներ. Սելիմ աղայն խանի սենյակ բազմեցավ, ես ինքս կրակի վրա Հայաստանի ոճով թերխաշ ձվածեղ եփեցի և երբ սեղանի վրա դրի, Սելիմ աղայն 'ի սաստիկ սովածութենե ստիպյալ սկսավ արտաքո կարգի արագությամբ հաց փըշրել և բրդել կերակուրի մեջ, մեծ դկպ մի առավ լափ լիզեց, մեք ուզեցինք ընկերանալ Սելիմ աղային, սակայն շիտակն ասելով «կեցո տեր» ասելով կեցանք, մանավանդ Համազասպ էֆենտին գրեթե զզվելով ամենեն առաջ ետ քաշվեցավ, իսկ Սելիմ այնչափ ագահությամբ կերավ, որ մինչև անգամ երկու օր չկրնալով մարսել, թե ձվածեղ շատ ուտելով և վրա ես լեռան սաստիկ պաղ ջուր խմելով պեհիվզիր[20] եղած էր, եթե Սելիմ աղան լիներ այս բնության տեր խիստ զվարճալի էր մեզ համար, սակայն այս բնավորությունն 'ի Հայաստան բնակյալ տաճկաց շատերու վրա կտեսնվի, այն է, թե այսպիսիք միշտ յուրյանց տան մեջ խիստ սակավապետ են և սակավակեր, իսկ եթե հայոց գյուղեր տուներ

մտնան չափեն ավելի կերակուր կխնդրեն, իբրև 'ի սովո ընդանեալ չափազանց կուտեն և այնչափ ուտել կփափագին, մինչ զի եթե յուրյանց տուն դառնան, երեք օր չանոթնան։

Յորեկ ժամ չորսին Կազբիլի խանի քով բեռներ վար առնելով և մեք ձիերեն իջանալով դադար առինք զառիկող լերին բլրակի մը վրա և ժամ ու կես միջոց ցուրտեն տաքեն և ցանցառ անձրևներեն տրտնջալով, բլուրին անուն տրտնջանաց բլուր անվանեցինք։

Հինգշաբթի երեկո իջևանեցանք 'ի Մաղարա խան, ուր ոչ հաց կար, ոչ կերակուր, սակայն մեր ընկերակիցք ճանապարհի երկարութենեն շատ քաղցած լինելով իջևանապետեն եփած ապուխտ գտանելով ուրախացան և սկսան փիլավ եփել, արդեն խոստացած էինք մեր ուղեկից Սելիմ աղայն փիլավի հրավիրել, փիլավ սեղանի վրա դնելով եկավ բազմեցավ մեր տաճիկ բարեկամ և սկսավ ամենայն ախորժանոք ուտել և յուր սովորական առասպելաբանությամբ ուզեց զվարճացնել յուր ուղեկից ընկերներ և այնպիսի անհիշելի տզեղ և միանգամայն զզվելի բան պատմեց փիլավի վրա, որով ամենուն զզվանք գալով հեռացան փիլավեն և հացեն։ Զայս ասելով ինքն միայն մնաց, յուր խոսքով համեմած փիլավ կերավ և շնորհակալ եղավ։ Այս խանի սենեկի մեջ լու շատ կար, ուստի մեր ընկերակիցք սկսան նախ տրտնջալ և բամբասանոք ժամանակ անցկացնել, ուստի խանի անուն մնաց Բամբասանաց խան։

Ուրբաթ առավոտյան ժամ ութին հիշյալ Բամբասանաց պանդոկեն ելնելով բարձրացանք դեպի զառնի վեր լերին և լերինքն էին լերինք Բաբերտու, անդ պոնտացվոց աշխարհի լերանց տխուր երևույթներ մեր աչքերեն անհետացան, իսկ Բաբերտի ծիծաղաժպիտ լերինք բլուրք և հովիտք և նոցա քաղցր և միանգամայն զմայլելի տեսարաններ մեր աչաց առաջ նկարագրեցան։ Մեր բնիկ հայրենյաց, այն է՝ ցանկալի Հայաստանի քարն ու հողն, մարգագետին, խոտն, ծաղիկ և ծառն ու անտառն և թռչուն, արտն ու արոտն, մշակն և հոտաղն, արորն և կալն և ի մեջ այսոցիկ ամենեցուն ողջունեցինք հովվական և նահապետական կենաց պարզություն, մոռացանք իսպառ Բյուզանդիոնի ստապատիր փափկություն։ Այս ավուր ուղևորության միջոցին մեր բովանդակ ուշադրություն դարձած էր Հայաստանի նյութական և բարոյական կենաց վրա, Համազասպ էֆենտիեն Կարնո քաղաքի և գյուղերեից հարսանյաց արարողության և ավանդության վրա տեղեկություն խնդրեցի, իմ ամեն մանրազնին հարցմանցս խիստ հաճելի և նկարագրության արժանի տե-

ղեկությունք հաղորդեց ինձ մեր զվարճախոս բարեկամ, զորս հատուկ 'ի հանդես հարսանեաց Հայաստանի արձանագրելո եմք։

Երբ ձորամեջեն ելնելով Բաբերդու բարեբեր դաշտ հասանք, որո մասին մեր ընկերակից Կինեվիզյան Հարություն կկասկածեր թե 'ի ջերմութենեն արեգական տի թարշամեր իբրև զծաղիկ, սակայն 'ի զեղեցկահովտեն այնպիսի մղիչ և զովացնող հողմ սկսավ մեր ետևեն միղել, որով ոչ միայն զովացանք և զվարթացանք, այլև ջորեպանաց ծույլ ձիանքն 'ի մղմանե հողմոյն սկսան արագընթաց արշավել և մեք ճանապարհի հայսկոյս և հայնկոյս ատոքաբեր արտորեից վերա հայեցյալ երթայաք. ուրբաթ երեկո ժամ մեկին մտաք 'ի քաղաքն Բաբերդ։ Սելիմ աղայն և Կինեվիզյան ըստ սովորության գնացին 'ի պանդոկ պանդխտաց, իսկ մեք առաջնորդությամբ Համազասպ էֆենտիին հասանք 'ի դրունս առաջնորդարանին Բաբերդի, Համազասպ բարձր ձայնիվ սկսավ կոչել զվարդապետ Գրիգորի, փութա՛ էջ ահա այցելուն Հայաստանի Երեմիա և ես 'ի տուն քում իջանելո եմք այսօր։ Սույն վարդապետ, որ Զաքեոսի[21] նման հյուրասեր է, սակայն հասակավ մեկ ու կես անկե երկար, անմիջապես փութաց իջավ համբուրեց զսիրելին Համազասպն և ապա խոնարհելով մեր աջույն, ընկալավ սիրալիր համբույր 'ի մենջ։

Տակավին նոր մտեր էինք հառաջնորդարան և մինչդեռ նոր նստանել ճանապարհի խոնջութենեն հանգիստ առնել կփափագեինք, վարժապետ մականվանյալ ընդ նմին քան մի նշանավոր ազգայինք եկան կալուստ շնորհավորեցին և սկսան յուրյանց Բաբերտ քաղաքի հայ ազգիս գլուխ պատահյալ աղետից պատմություն նկարագրել և դարման խնդրել, որչափ աղաչեցինք, որ յուրյանց մանրամասն տեղեկությունք պահեն առավոտյան, սակայն նոցա սիրտ այրած լինելով, զմեզ յուրյանց աղետից իբրև դարման նկատելով, ոչ կարեին լռել, ոչ կարեին հանդարտիլ, այլ հեծեծանոք և արտասվոք կպատմեին թե ինչպես այլ կրոնամոլ բարբարոսական խուժան խուռն բազմությամբ գրոհ տված էր զհայեր առհասարակ դատափետել, գանակոծել զտունս և զկրպակս նոցա ավար հարկանել, թե ինչպես հիշյալ վարժապետն իբրև զոշխար 'ի սպանդ վարեր ինքն սպանելո և արյան խմելո, սակայն ասված զնա պահպանելով ազատած[էր] անոնց ձեռքեն. կկրկնեին և թե այս ամենայն չարիք եկն 'ի վերա մեր և մեք մեր աղետից նկարագիր քանիցս ազգային վարչություն հաղորդեցինք, սակայն թե սրբազան պատրիարք և թե ազգային վարչություն մինչև ցայսօր ո՛չ մեր ցավոց դարման մատուցին և ոչ մի մխիթարական նամակ առ մեզ ուղղեցին, ուստի որչափ յուրյանց տխուր դիպվածոց վրա կցավեին, այնչափ ևս պատրիարքարանե անպատասխանի մնալույն համար ցավ և տրտունջ կհայտնեին և կը հավելուեին, թե մինչև մեր բարեկամ տաճիկք մեզ մխիթարական նամականիք գրեցին, սակայն ազգային վարչություն մխիթարական նամակն անգամ զլացավ մենե։ Այդ ազգային վարչության նկատելո է, թե գավառացի հայք որչափ ծարավի են ազգային վարչութենեն քաջալերական և մխիթարական գրություն ընդունելո, զի թեպետ մեք զօգնությամբ վարյալ իբրև 'ի կողմանե պատրիարքին և վարչության մխիթարիչ առաքյալ հրատարակեցինք զմեզ և ջանահնար եղանք զնոսա համոզակիր բանյուք մխիթարել, սակայն նոքա գրեթե առ երեսս մեզմե շնորհակալ լինելով պատրիարքեն նամակ կպահանջեին, հազիվ ժամ հինգին մեկնեցան մենե, իսկ մեք անկողին մտնալով, շաբաթ առավոտ մինչդեռ նոր անկողինեն ելած էինք, 12—14 նշանավոր ազգայինք մեր տեսությանն գալով, որոց հետ էին նաև երեկոյին գալողներ։ Անդ նորեն ամենք 'ի մի բերան սկսան յուրյանց գլուխ եկած շարյաց նկարագիր առ մեզ ներկայացնել. այս անգամ որովհետև խոնջութենեն հանգիստ առած էի, սկսա առավել ազդությամբ մխիթարել և քաջալերել զիրենք և յուրյանց հուսադրության ուղղել առ ազգային վարչություն, հորմե իսպառ ձեռնաթափ լինել մտած էին։

Կիրակի առավոտ եկեղեցի իջնալով՝ քարոզությամբ քաջալերեցինք զժողովուրդն և մխիթարեցինք՝ հիշեցնելով և բացատրելով, որ ավետարանի երեք պատվիրանաց սքանչելի զորություն և ուժգնություն քրիստոնեից սրտի մտած և կյանքի վրա. այն է՝ ա. սիրել զընկեր. բ. միանալ ընկերին և չերկնչիլ 'ի մարդկանե. եթե հայք սույն երեք պատվիրանաց միշտ ունկնդիր լինեն և վարքով կատարեն, երկրիս վրա երջանիկ կապրեն, երկնից մեջ հավիտենական փրկություն կը ժառանգեն, ազգաց մեջ փառավոր ապրելով միշտ թշնամյաց դեմ զօրավոր ելնելով հարստահարություններե ազատ կլինին և շատ անգամ կհաղթեն, իսկ եթե սույն փրկարար պատվիրաններ չպահեն, երկրիս վրա թշվառ, երկնից փրկութենեն հեռի, ազգաց մեջ անպատիվ և թշնամվո առաջ միշտ տկար երևնալով կհարստահարվին։

Սույն ազգու խրատներեն լքյալ ժողովուրդ սիրտ առավ և զվարթացավ, հուսաբեկյալք հույս առնելով զօրացան։ Եռ ավարտման պատարագին առաջնորդարան ելանք, ոմանք ի ժողովրդոց եկան յուրյանց շնորհակալություն հայտնելո, իսկ վարժապետ մականվանյալ սրտի ուրախութենեն և հավետ մխիթարութենեն մերձեցավ առ իս և համբուր-

յաց զշրթունս իմ՝ ասելով օրհնյալ է շրթունք քո, որ ավետարանյաց այսօր զմխիթարութիւն ժողովրդեան և այլն։

Արդեն երեկոյան ընթրիք տված էր մեզ հյուրասեր Աղապապյան Խաչատուր աղայն. մեր ընկերակից ուղեկցաց հետ փառավոր և զարդարյալ վերնատան մի մեջ փառավոր սեղանի վերա բազմելով կերանք զխորովյալ գառն և վայելեցինք զհամեղ կերակուրս և օրհնեցինք զտուն և տանուտերն։

Իսկ առավոտյան ժամ երեքին հրավիրյալ 'ի վերոհիշյալ վարժապետեն ուրախությամբ ճաշեցինք 'ի տան նորա և մխիթարեցինք զինքն, վասնզի այլազգյաց խուժան զսա իբրև պահող հավատարիմ ազգն, կալյալ շարշարեր, սաստիկ գանակոծելով վիրավորեին և քանիցս ուզեր էին իբրև զոչխար զենուլ, սակայն տեր զայն յուր նեղչաց և սպանողաց ձեռքեն ազատած էր։

Կիրակի ժամ չորսին առաջնորդարանի դռնեն 'ի ձի նստյալ մեկնեցաք 'ի Բաբերտ քաղաքեն. առաջնորդ Գրիգորիս վարդապետ, ավագ քահանա տէր Մխիթարյան, վարժապետ, Խաչատուր աղայն և այլ երեք նշանավոր անձինք ուղեկից եղան մեզ մինչև մի ժամու ճանապարհ։ Առվակի մը վրա իջանք, բաժակ սիրո և ուրախության խմեցինք և համբուրելով մեկնեցանք 'ի միմյանց, մեք դեպ 'ի Կարին, իսկ նոքա 'ի Բաբերտ 'ի տուն յուրյանց։

Մեր մյուս ընկերակիցք արդեն առավոտյան կանուխ հուղի անկած գնացեր էին, ուստի ես, Համազասպ էֆենտին և Կինեվիզյան, երեքյանս 'ի միասին ուրախությամբ ընդ ափով գետույն ընթանայինք և խոսեինք ընդ միմյանս վասն շինության ազգին և հայրենյաց։ Երեկոյան ժամ ու կես էր հասանք 'ի գագաթ լեռան Կոբա և իջևանեցաք 'ի պանդոկ լերան Կոբա։ Սառնորակ աղբյուր մի կըղխե պանդոկի արևմտյան պատին կից կամարիմ ներքևեն, ջուր Բուրակյան լերանց[22] ջրոց նման սառն, թեթև, պարզ, զովացուցիչ և միանգամայն մարսեցուցիչ է։ Այս ջուր ոչ միայն շրջակա վայրաց մեջ հռչակված է, այլև բոլոր անցուդարձ կարավաններուն պասք զովացուցանելով կենաց ջուր անվանյալ է։

Խանի մեջ ճանապարհորդք խռնված լինելով, խանի երկու անկանոն և նսեմ սենյակներ լեցված էին մարդկամբ, խանապետ 'ի պատիվ մեծարանց յուր սենյակ մեզ հատկացույց, սենյակ նեղ էր և մութ, ճամբորդաց համար ծախվելիք թե կերակուր, թե մրգեղեն զանազան հին ամաններով դրված էին սենեկին մեջ, խանապետ առատուր կրներ ճամբորդաց հետ և չի հայհոյությամբ ջորապանաց հետ կկռվեր։ Մեք սեղանի վրա նստած խորոված միս կուտեինք և այդ դրախտաբուխ

ջրերեն կխմեինք, իսկ մեր զվարճության հատկացած երաժիշտներ էին խանապետի անլսելի հայհոյանք[ք], անասնոց ձայներ և զանկակներ, մեզ խամար անչափ անձուկ էր, որ մինչև անգամ չկրցինք մեր ուղեկից Սելիմ աղայն հացի հրավիրել, հացեն ետք անմիջապես քուն մտնալու պատրաստվեցանք։ Խանապետի մահճակալ, որ մարդաչափ մի բարձր էր գետնեն, ինձ հատկացյալ լինելով, հավու պես ելանք և թառեցանք։ Համազասպ և Կինեվիզյան դիմացի մահճի ներքին գետնախշտի պառկեցան, և նոցա գլխի վրա բարձր մահճի վրա պահակ մի քնացավ։

Երկուշաբթի առավոտ արշալույսին ելնելով տերն հաց չկերած երեք անգամ այն կենսատու ջուրեն խմեցինք և զվարթացած, ինչպես դալարի բույսեր և լերանց բարձանց վերա ձիավորելով, ժամ երկուքին իջանք ձորակի մեջ շինված պանդոկ, ուր կերանք մածուն և խաշած հավկիթ և քիչ մի հանգիստ տալով անասնոց, ժամ երեքին ելանք և հնգին հասանք ի գյուղն Կոբ[23], որ 50 տունե բաղկացյալ է, որո 27 տուն հայոց է, իսկ 23՝ տաճկաց։ Գյուղի քահանայն հյուրասիրեց զմեզ յուր տուն և ժամե մը զկնի նահապետական սեղան մի պատրաստեց մեզ, երեք տարի կլիներ անցած միջոց, որ Հայաստանի ապուր կերած չէինք, երբ ապուր տեսանք, դկալ ձեռքե չթողնելով մեկ մեծ ման ապուր կերանք, Սելիմ աղայն, որ գրեթե մեզմե ավելի արագ և ախորժանոք կուտեր, սկսավ իբրև կատակ մեր թևեն բռնել և ասել, ներեցեք շուտափույթ ուտելով ինձ ուտելո բաժին չթողացիք, հետո կորտլով փիլավ կերանք, հետո մածուն։ Շիտակ խոստովանելով՝ ամեն մեկս երկու մարդոց չափ կերակուր կերանք և հազիվ թե կշտացանք։ Գյուղին գեղեցիկ դիրք, օդին պարզություն և հացի և կերակուրի առատություն այս շատակերության հանցանաց մեջ ձգեցին զմեզ, հիշեցի թե քանի ամիս առաջ Պոլիս, թե ես, թե շատեր ստամոքս չորացնելո համար զանազան չորացուցիչ դեղն առնելով մարդո մի ուտելո սովորական կերակուրն անգամ չէինք կարող ուտել, բայց աստ առանց դեղի երկու մարդո կերակուր կերանք առանց ամաչելու։ Բայց կարևոր համենայնի, երբ քահանային և տանուտեր գեղապետեն լսեցինք, թե այլազգիք յուրյանց դեմ միշտ ատելությամբ վարվելով կհայհոյեն, կհալածեն և շատ անգամ կվնասեն զհայեր։ Սույն գյուղի վրա մանրամասն տեղեկություն առնելով ընդհանուր գյուղորեից քննության տետրակի մեջ արձանագրեցի, ուստի հարկ չէ տեղս կրկնել վերստին, սույն գյուղի հայ բնակիչք յուրյանց սեփական կալվածներ կսերմանեն և այս մասին առավելություն ունին մյուս գյուղացվոց վերա, օտար կալվածապետաց հողեր կմշակեն։

Երեկոյան ժամ ութ և կեսին մեկնեցանք 'ի Կոբա և երկու ժամ ու կես ճանապարհ առնելով ժամ տասն և մեկին հասաք 'ի Մազարա գյուղ։ Այս գյուղի մեջ տասն տուն հայ բնակիչք կա, սակայն եկեղեցի չունին, Կոբ գյուղեն տիրացու մի քահանայացնելով խեղճ ու կրակ երեսի վրա թողած են։ Գյուղ մտնելով խեղճ քահանայի տուն որոնեցինք, սակայն տուն չկար, որ գտնայինք և ուրիշ տուներու չհասնելով, գնացինք գյուղի արևելյան ճանապարհի աջ կողմ պորտի վերի կողմ առվակի մը վերա իջանք, տեղերնիս պատրաստեցինք, թեյ խմեցինք։

Խեղճ քահանայն երեկոյան ժամ մեկին գալով երեք եփած հավու ճուտ, մածուն և հաց բերավ, կերանք առանց ճրագի լույսի, բայց լուսին, յուր արծաթափայլ սկավառակ բացած, մեզ առատաբուխ լուսով կլուսավորեր, իբրև բացիոթյո հովիվ քնացանք առվակին եզերք, արշալույսին արթննալով ուղևորեցանք դեպ 'ի Ջերմուկ Կարնո, չորս ժամ, առանց ձիեն իջնալու և հանգստանալո, զձիան մտրակելով ժամ երկուքին հասանք 'ի Ջերմուկ և իջևանեցանք 'ի տուն գյուղապետին, հոն հետզհետե Համազասպ էֆենտիի ազգականք և բարեկամք դիմավորելո կուգային և մեզ ուրախություն կպատճառեին։ Երեքշաբթի մինչև երեկո ուրախություն և զբոսանք կար, սակայն այնօր գլխիս ցավ, գլուխ տակն ու վրա ընելով, զիս անհանգիստ կրներ։

Մեր հայրենակից մեծարգո Մահտեսի[24] Սարգիս աղայն եկած էր զմեզ դեմավորելո, զոր տեսյալ ոչ սակավ ուրախացանք։ Չորեքշաբթի առավոտ ժամ տասին Ջերմուկ գյուղեն դեպ 'ի քաղաքն Կարին դիմեցինք։ Համազասպ էֆենտին[25] ածյալ էր զսուրն ընդ մեջ յուր, նոր ամրությանց ներս մտանք։ Տեր Գրիգոր և տեր Համազասպ քահանայք առաջի մեր երթային, Գրիգորիս վարդապետ ընդ ահեկ իմմե գնայր, Համազասպ էֆենտին զկնի մեր փառաշուք երիվայր ընթանայր և քսանի չափ ազգականք և բարեկամք նորա զկնի նորա ձիավարեին մինչ եկյալ հասանեաք 'ի դրունս տուն Պալարյանց, իջանք երիվարաց։ Մեծ էր ուրախություն համայն տան Աղաջան էֆենտիի, որ էր հորեղբայր Համազասպի, որո համար Մահտեսի Մանուկ աղայն կալյալ ի ձեռանե որդվոյն տարավ 'ի ներքս տան, իսկ մեք հանդերձ ուղեկցոք բազմեցաք 'ի ջրվիժազարդ սենյակ ամարոցնի, ուր մատուցին մեզ օշարակ քաղցր և զովացուցիչ։ Հետ սովորական ողջունի և ուրախակցության ելյալ անտի առաջնորդությամբ և հրավիրանոք տեր Գրիգոր եկյալ 'ի առաջնորդարան Կարնո քաղաքին, բայց Հարություն սրբազան, որ է եպիսկոպոս, գնացյալ էր առ կուսակալն խնդրել 'ի նմանե, որ բանտարկյալ քղեցիք արձակե 'ի բանտե։ Ժամ հինգ էր, որ տեսակցեցաք ընդ հայր և ուրախացաք ո՛չ սակավ 'ի վերա միմյանց հարցանելով զողջունե միմյանց։

Հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրեր Կարնո քաղաքի երևելիք և մեզ ծանոթներ այցելության գալով մեր գալուստ շնորհավորեցին զորս սիրով և հայրաբար ընդունելով հորդորեցինք զամենք 'ի միություն և ազգասիրություն։ 'Ի նոյն ուրբաթ այցելություն առնելով Հռիփսիմյանց վարժարանին առաջադեմ օրիորդաց հայկաբանության դասեր քննեցինք և տեսնելով, թե աշակերտք հոն ամոց մեջ բավական հաջողակ առաջադիմության քայլ առած են, մեր խնդագին շնորհակալություն մատուցինք դպրոցի տնօրեն պատվարժան տեր Գրիգոր քահանային, որ անձանձիր ջանասիրությամբ Կարնո օրիորդաց բարվոք դաստիարակության նվիրած է յուր նվիրական և թանկագին ժամեր, եթե ամեն քաղաքի մեջ երկու և յուրաքանչյուր գյուղի մեջ գոնե մի այսպիսի եռանդուն հայրենասեր քահանա մի գտնվեր, Հայաստանյաց եկեղեցին պանծացյալ և պայծառանայր և մանկունք հայկազյան ուսմամբ և կրթությամբ կփառավորվեին։

'Ի շաբթի ավուր արու մանկանց դպրոցին այցելության և քննության երթալով, հին ավուր Զաքարյան Կարապետ պատվելին, որ հայկաբանության դասատուն է և միանգամայն իբրև տնօրեն դպրոցին, հրավիրեց զմեզ նախ 'ի սենյակ այցելուաց, անդ դպրոցի ընդհանուր կառավարության և վարժապետաց դաստատուկյան եղանակի վրա պատասխան խնդրեցինք և զոհացուցիչ պատասխան չընդունելով պետք եղած պատվերներ և հրահանգներ տվի, նույնպես ուսմանց գրավոր ընդհանուր ծրագիր խնդրեցի, բայց չգտնալով ցավեցա, որ դեռ Կարնո դպրոց հին վարժապետի ձեռոք հին ոճերով կընթանա և օր ըստ օրե հառաջադիմելո չի բաղձար։ Ցավս հայտնելով թե գերապատիվ սրբազանին, որ ընդ ներկա էր և թե վարժապետ տնօրենին ամենակարևոր բաներու ուշադրություն չընելով դպրոց առավել ևս անբարեկարգության մեջ դնելո պատճառ կլինին և այլն։

Յետ այսորիկ աշակերտաց ուսման սրահներ աչքե անցունելով և քանի մի տղայոց համառոտ հարցումն ընելով և յուրյանց առաջի գրքեր կարդալ տալով եկա 'ի դասարան, ուր Կարապետ պատվելին ներկայացույց մեզ յուր հառաջադեմ աշակերտներեն քանիս և սկսավ խրդրել 'ի մենջ, որ թույլ տանք իրեն, որ ինքն հարցանե աշակերտաց և

մեք միայն ունկնդիր լինինք, քանզի արդեն գիտեր աշակերտաց թերություն և չէր վստահեր մեր հարցման վրա։ Ինչևիցե, քանի աշակերտաց տախտակի վրա գրել և վերլուծել տվավ, կեսն ինքն կվերլուծեր և կեսն ևս վերլուծություն ինքն աշակերտին նորեն կուսուցաներ։ Մեկերկու աշակերտի ավետարանեն և Եղիշեեն բան գրել տվինք տախտակի վրա և երբ պահանջեցինք, որ թարգմանեն և վերլուծեն, ճշմարիտն ասելով տեսանք, որ վարժապետն ավելի ժիր, ավելի արագ և ավելի կանոնավոր կթարգմաներ և կվերլուծեր, ուստի աշակերտք չէին կրնար միջոց ունենար յուրյանց բուն գիտելիքն մեզ իմացունել, քաղաքավարությամբ խնդրեցի պատվելիեն, որ սակավ ինչ լռությամբ համբերե, որպեսզի աշակերտք յուրյանց գիտցածով վերլուծեն, սակայն անդուլ աշխատությամբ կջանար նոր դաս ավանդել աշակերտաց, քան թե թույլ տալ, որ մեր հարցման պատասխանեին։ Ուստի թող տալով հարցումն, զեկուցինք աշակերտաց, թե խիստ կարի խստապահանջ քննություն տի խնդրեմ իրենցմե, սկսյալ այբուբենեն մինչև ամեն ուսանելոց վերջին կետ, և մեկնեցանք 'ի դպրոցեն։

Ուրբաթ երեկո մեր պաշտոնական կոնդակ Հարություն եպիսկոպոսին 'ի տես մատուցինք, Գրիգորիս վարդապետ կարդաց և նա ուշադրությամբ ունկնդիր եղավ, իբրև ծով հուզեցավ նորա սիրտ և երիկամունք 'ի ներքուստ այլագունեցան, սկսավ պատ 'ի պատ բանյուք դիտողություն ընել և ասել այս կոնդակի մասին՝ պետք է քաղաքական ժողով հրավիրեմք և տեսնամք, թե ինչ կպատասխանեն, իսկ մեք ծանուցինք սրբազանին, թե Կարնո քաղաքական և կրոնական ժողովն ութն տարի առաջ ընտրյալ լինելով այժմ լուծյալ կհամարվի և երեսփոխանական ժողով ըստ որում յուր ամբողջություն չունի, պետք է անմիջապես ամբողջանա, որպեսզի նորով վարչության ընտրություն լինի։ Որչափ այս ազդարարություն ծանր երևեցավ եպիսկոպոսին, բայց հաջողեցանք զինքն համոզելո, թե սոյն նորոգ ընտրություն իրեն նպաստավոր է։ Ուստի շաբաթ առավոտ հին քաղաքական ժողովին երկու երեք անձինք, թաղականներեն երեք հոգի, քաղաքի ուսումնականներ[են] երեք հրավիրեց առաջնորդարան, մեր ներկայության ընտրողական ժողով դումարեցավ, կիրակի ընտրողաց և ընտրելյաց ցանկ պատրաստեցավ, երկուշաբթի ցանկ կախվեցավ եկեղեցվո դուռ։ Կիրակի օր էր, աստվածածնի, բարեկենդան, սրբազան պատրիարքի կոնդակ հրաշափառիվ կարդալ տվինք եկեղեցին և զկնի մեք սկսանք ատենաբանել և էր բնութեն քարոզին բանն ավետարանին թե որ կամիցի 'ի ձենջ մեծ լինել

եղիցի ամենեցուն կրտսեր և այլն և նյութ էր Հիսուս, որ որդի էր աստծո և Մովսես, որ մեծն էր 'ի մարգարես, ծառայելով ազգին և ժողովրդյան բարձրացան առաջի աստծո հրեշտակաց և մարդկան, նույնպես կաթողիկոսք, պատրիարք, եպիսկոպոսք, որք մեծ կանվանին, մեծություն յուրյանց մեծ սպասավորութենեն է և ամենայն ոք, թե եկեղեցական, թե աշխարհական, թե հայր, թե իշխան, ով որ մեծ ծառայություն կմատուցանե ազգին հայրենյաց և եկեղեցվույն, պետք է որ բարձրանա առաջի աստծո և մարդկան...։ Հայտնեցինք ժողովրդյան, թե սրբազան Հայրիկ փափագելով որ ինքն անձամբ այցելություն առնե Հայաստանի, սակայն վասն անտանելի զբաղմանց չկարենալով, զմեզ 'ի զիմաց յուր իբրև փոխանորդ խրկած է քաջալերել, մխիթարել զժողովուրդն, դպրոցներ բարեկարգել և սահմանադրություն գործադրել և օրհնելով զժողովուրդն վերջացուցինք զբան պատվիրանին։

Բաբերդ քաղաք ընդարձակ հովտի մը մեջ Ճորոխ գետի ափանց վերա ունի յուր գեղատեսիլ դիրք, հարավային կողմ քաղաքին կան ծառատունկներ և այգիք, հյուսիսային կողմանե բարձրացած է Բաբերդի ավերակ բերդ, մեջ եկեղեցիմ կա սուրբ Սարգսի անվամբ դեռ ողջ, այս բերդ հայոց Բագրատունի Սմբատ նախարարի ձեռամբ շինված է, որովհետև այս աշխարհ Բագրատունի նախարարությանց սեփականություն էր և Բաբերդ ըսելով կիմացվի Բագրատունյաց բերդ։

Բաբերդն ունի հազար տուն բնակիչ, 230 տուն հայոց, իսկ մնացյալն տաճիկք, որք թե տգետ, թե կրոնամոլ և թե բարբարոսաբար կվարվին հայոց դեմ։ Հայք ունին հինգ եկեղեցի։ Երեք սուրբ Աստվածածնի անվամբ, մին սուրբ Հովհաննեսի և մյուսն սուրբ Հրեշտակապետի անվամբ։ Դպրոց նորոգելո ձեռնարկած էին, բայց դեռ չէին ավարտած, աղջկանց դպրոց չկա Բաբերդի մեջ։

Հայք բնական պարկեշտ, բարոյական, գործունյա և սակավ ինչ երկչոտ են, քաղաք ճանապարհի վրա լինելով յուրաքանչյուր ոք յուր ապրուստ կրնա հայթայթել, դիտեցի, թե մանր տղայք խիստ երկչոտության մեջ կմեծցունեն, քաղաքացիք բարեպաշտ և կրոնասեր են, նույնպես գեղացիք, սակայն գյուղերու մեջ ո՛չ դպրոց կա, ո՛չ կրոնի ուսումն ու կրթություն։ Հայեր ավանդությամբ հայ են և տղայք երբեք կրոնքի վրա հմտություն չունին, ուստի աղջիկներ երբեմն հրապուրվելո} այլ ազգության կդառնան։

Զկնի ավարտման պատարագին ժամ երեքին Պալլարյան Աղաջան էֆենտիեն ճաշի հրավիրվեցանք, ուր հրավիրյալ էին Կարնո արքեպիս-

կոպոս, տեր Գրիգոր և տեր Համազասպ քահանայք, Փաստրմաճյան խաչատուր էֆենտին, Մակարյան Կարապետ էֆենտի, արապկիրցի Փիլիպոս աղայն, վանեցի Մահտեսի Սարգիս և որդի Շաքար աղայք և քանի չափ պատվավոր անձինք, երեք ժամեն մինչև վեցին ջրվիժասենյակ խնդագին զվարթությամբ ժամանակ անցուցինք և ժամ վեց անցած ելյալ 'ի վերնատուն մի զարդարյալ բազմեցանք 'ի վերա սեղանացն, կերանք զգառն խորովյալ, կենաց բաժակներ խմեցինք վեհափառ կաթողիկոսին, սրբազան Հայրիկին, նաև մեր սրբազնության համար։ Շնորհավորեցինք Համազասպի մահտեսություն և էֆենտիություն և հայրապետական օրհնություն մատուցինք նահապետանման Աղաջան էֆենտիին և յուր օրհնյալ դերդաստանին և դարձանք առաջնորդարան։

Երկուշաբթի ընդ արևոյն Հարություն կուսակալին երթալով արքունի հրամանագիր մատուցինք, հրամայեց որ պույրուրթու[26] գրվի ընդհանուր գավառի մասնավոր կառավարչաց և մի ժամու չափ քաղաքի մաքրության և բարեկարգության վրա խոսելով մեկնեցանք կուսակալեն։

Կարնո քաղաք

Բարձր Հայոց աշխարհին Կարնո ընդարձակ լեռնադաշտակին արևվելյան լեռանց ստորոտին փոքր-ինչ զառիկող և ըստ երևույթին հարթահավասար դրից վրա տարածված է. տուներ ընդհանրապես անտաշ և երբեմն տաշյալ քարերով շինել են։ Հայք ունին ընդարձակ և խոյակապ եկեղեցի Աստվածածին անվամբ, որ չորս կարգ բաժանյալ 20 քարյա կլորաձև միմյանց վրա բարձրացած է։ Տաճարի ներքին կազմի երկարություն է 130 ոտք, լայնություն՝ 100, իսկ բարձրություն...*։ Եկեղեցվո հարավային պատին կից Աստվածածին անվամբ քարաշեն տաճար կա, որո Կարնեցի բարեպաշտք մեծավոր հարգություն կընծային։

Եկեղեցվո հարավային կողմն է Կարնո արքեպիսկոպոսարան, որո վերնահարկն ունի յոթն փառավոր սենյակ, իսկ ներքին կողմ դեպ եկեղեցվո բակ երեք սենյակ, որո մին հատակացյալ թաղական ժողովո խորհրդարան, իսկ երկուք զեռաբույս աղայոց ծաղկոցի որոշած են, սակայն սենյակք գետնահարկ լինելով օդն փոփոխության տեղիք չունենալով կապականի, որով մանր աղայոց թե բարոյական և թե ֆիզիկական կարողություն կխանգարե, այս մասին խոսեցավ թե արհոյն, թե նշանավոր արանց քաղաքին և թե ներկա դպրոցի տնօրեն Կարապետ պատվելույն։

Առաջնորդի նստած սենեկա ներքև դրսի կողմ երեք սենյակ։ ա) Եկեղեցվո արևմտյան կողմ հիմնված է արու մանկանց դպրոցք, զոր 'ի հիմանե նորոգեց Մակարյան Հակոբ էֆենդին 'ի թիվ 1863։ Դպրոցն ունի երեք մեծ սրահներ, երկու դասարան և մի հյուրանոց։ Այժմ դպրոցի մեջ 600 ավելի աշակերտք կվարժվին. գլխավոր ուսանելիք են՝ քերականություն, ճարտասանություն, աշխարհագրություն, թվագիտություն և տաճկերեն լեզու։ Սույն դպրոց հիմնելու միջոցին ես 'ի Բաղեշեն Կարին եկած էի զօրք տանելու, Բաբերդ աշի ըրիզատ քննիչեն հրաման բերի առնավուտ Իսմայիլ փաշային և չորս պելուկ* զորք առնելով գնացի 'ի Բաղեշ, որք դեռ կկենան անդ։

Դպրոց այժմ լավ տեսողության ներքև չէ, ժողովրդոց հառաջադիմասեր մասն տրտունջ ունին անբարեկարգության և տղայոց թե հետադիմութենե, թե այն վայելուչ կացության մասին, բայց բողոք և տրտունջ բառնալեն 'ի զատ բարեկարգելը չէին համարձակիր, քանզի դեռ հին երկուղալից ահերով պաշարված են։

Բ) Եկեղեցվո հարավային կողմ մեկ քարընկեց հեռի ի փողոցով բաժանված գեղեցկաշեն օրիորդաց դպրոց մի ունին, զոր հիմնվեցավ 1862 թվականին և ուսումնատենչ ազգայնոց ծախքով և եկեղեցվո արդյամբք, խավարեցավ երկու տարի, դպրոց ամայի մնաց, իսկ 1871-ին աշակերտք ժողովեցան, տեսչություն տեր Գրիգորին հանձնվեցավ, այժմ 400 օրիորդք կդաստիարակվին դպրոցի մեջ։ Երաժշտության դասատու է տեր Համազասպ քահանայն. գլխավոր ուսանելիք են՝ քերականություն, թվաբանություն, ասեղնագործություն, ձև, կար և այլն։

Օրիորդք մեկ տարվո մեջ շատ հաջողակ հառաջադիմություն ունեցած են աշալուրջ խնամոք տեր Գրիգոր պատվելույն, բարեկարգությունն խիստ բարվոք վիճակի մեջ կը տեսնվի և պատիվ կբերե Կարնո քաղաքին, չորս վարժուհիք կկառավարեն դպրոց, կխնամեն և դասախոսեն, գիտությանց դասեր կավանդե տեր Գրիգոր, սակայն դաստիարակաց ամբողջ ամսականներ յոթն հարյուր հիսուն ղուրուշ հատկացուցած է, որ խնայողության չափն անցուցած կերևի։

Սույն դպրոցի տեղ նախ Մշո սուրբ Կարապետի հոգետուն անու-

---

* Տեղը բաց է թողնված և բարձրության մասին թիվը գրված չէ (Հ. Պ.)։

* Պելուք, գումարտակ (Հ. Պ.)։

նով տուն մի կար, երբ 1868-ին սուրբ էջմիածնեն Հայրիկի հետ հասանք ի Կարին և վեց ամիս իբրև հյուր մնացինք առաջնորդարան, նույն ժամանակի թաղական խորհուրդ և Կարնո նշանավոր անձինք խնդրեցին արքազան Հայրիկին, որ թեթև վարձով հոգետուն տա իրենց, որ քակեն օրիորդաց դպրոց շինեն, հաճեցավ վանահայր տարին 1000 ղուրուշ վարձու պայմանով հոգետան տեղ հանձնել, որո վերա բարձրացավ այժմյան փառավոր շենք, որո երկու հարկի սենյակք և դասարանք ութի կը բաժանվի և չափավոր պարտեզ մի ունի կից։

գ) Զայգարայի դպրոց հիմնած է Ղուկաս աղայն յուր հանգուցյալ հոր՝ տեր Ազարյան Սողոմոն աղայի կտակով, 1871-ին, որ 50.000 ղուրուշ յուր ողջության կտակած էր երկսեռ դպրոցի շինման, 150 արու աշակերտք և 80 օրիորդք կան այժմ դպրոցի մեջ, տեր Համազասպ քահանայի տեսչության ներքև։ Դպրոց այս գարնան միջոցին բացված լինելով, ուստի աշակերտք միայն հասարակ ընթերցանություն կպարապին և արու աշակերտներին դասն նոր սկսված քերականության առաջին մասն։

Դպրոց միահարկ է, պարտեզի մեջտեղ է իր դիրք մեկ կողմ գատ դրունով, մեկ մեծ սրահ և մեկ դասարան աղայոց և մեկ սրահ մի դասարան օրիորդաց հատկացյալ է։ Տղայք ունին մեկ վարժիչք, որ դասատուի և կառավարչի պաշտոն կվարե, օրիորդաց դպրոցի մեջ կա 66 տարեկան կին մի, որ դարձյալ քանի մի պաշտոն մեկեն կկատարե։ Այս դպրոց մեկ-մեկ կառավարիչք և մեկ ևս վարժուհի պետք ունի։

դ) Կարին Բաշագլուխ կոչված կողմ դպրոց մի ունի, զոր բոլորովին բարձիթողի վիճակի մեջ տեսա, դպրոց ազգային շենք մի չէ, այլ յեղճ բարեսեր երիտասարդ մի յուր տան մարագ կամ փարախանման երեք աստիճան խոր, հարյուր մանր տղայք բովանդակելո չափ հին և սևացած տուն մի դպրոց ձևացուցեր և հարյուր տղայք Բաշագլխեն հավաքելով հասարակ ընթերցմունք կսովորեցնե։ Տան բարձրություն հինգ կանգուն հաղիվ կա, երկու պատուհան ունի, որ հարավային կողմ քակի մեջ կը բացվի, օդ երբեք փոփոխություն չի կրնար ընել դպրոցի մեջ, բաց հայսմանե, հարկավորի հոտ գալով ի ներքո դպրոցին, վերջի աստիճան օդ կապականե, ո՛չ տղայոց հայրեր և ո՛չ թաղական խորհուրդ փույթ ունի տղայոց առողջության մասին հոգ տանելո և ոչ նոր շենք մի շինելո ձեռնարկություն կա, այս մասին դպրոցի դասատուին բավական բան խոսեցա, սակայն խեղճի կարողութենեն վեր է, քանզի աղքատ է. կարծյոք թաղականք միայն այս երիտասարդին 100 ամսական կվճարեն և ուրիշ պետքեր հոգալո բնավին անփույթ կմինին։

Քաղաքի բնակիչք բարեսեր, բարեպաշտ և եկեղեցասեր են։ Եկեղեցին կը հաճախեն և եկեղեցական կը պատվին, հին սովորությունք և ավանդությունք միջակաբար կը հարգեն, ազգային խնդրոց մեջ խաղաղություն կսիրեն և խռովութենե կխորշեն, ազգասիրության և հայրենասիրության գաղափար խիստ սակավուց մեջ տեղի զտյալ է, ըստ բավականին ընտանեսեր և որդեսեր են, օտար երկիր գաղթելո և պանդրխտության մեջ կյանք մաշեցնելո երբեք հակամիտ չեն. յուրյանց հայրենյաց մեջ մնալ և ընտանիքե չհեռանալ միշտ հարգի է յուրյանց զգացմանց մեջ, հասարակ ժողովուրդ աշխատասեր և բավականասեր է միշտ, հարուստաց մեջ նոր մուտ գործեր է շռայլության ախտ, որո նեղն առաջ չառնվի՝ հետզհետե կճարակի ժողովրդոց մեջ և բազմաց թշվառության պատճառ լինի։

Այր մարդիկ մյուս քաղաքաց հետ բաղդատելով բավական արիասիրտ և աներկյուղ են, որք ստիպյալ հարկին կզորեն յուրյանց անձն պաշտպանել, ժողովրդոց քառորդ մասն գոնե զենքի գործածության ունի վարժություն, երիտասարդ[ք] արիանոտ և եռանդուն լինելով իրարու հետ կռվել կսիրեն և ոմանք երիտասարդաց 'ի մոլութենե և հարբեցութենե չեն կարող յուրյանց անձն պաշտպանել։

Տղայք ուշիմ են և ուսման ընդունակ, մտավորական ուսմանց մեջ կրնան հառաջադիմել, բանաստեղծության ճաշակ և գորով չունին, ծնողաց հնազանդ են և խրատ լսելո պատրաստ և հլու աշխատություն և արհեստ կսիրեն և տղայական խաղերու մեջ շատ խաղամոլ չեն։

Կանայք անդաստիարակ մնալով խեղճ երևույթ մի ունին, խիստ գորովագութ որդվոց վրա ջերմ սիրով կսիրեն զավակներ և ընտանիք և զանոնք խնամելու մեջ մեծ հաճույք կզգան, մեծավ մասամբ պարկեշտություն կհարգեն, և կատեն անպարկեշտություն, կրոնքի մեջ հաստատամիտ են, եկեղեցին կհաճախեն, բայց աղոթելո կերպ չգիտեն։ Զգեստի կողմանե չունին այնչափ պճնասիրություն և ոչ այնչափ զարդասիրություն. եվրոպական զգեստուց ձև նոր սկսված է ներմուծվիլ մեջ-ներնին։ Ձեռագործ աշխատություն խիստ սակավ կտեսնվի։

Արհեստավորաց մեծ մասն հայոց ազգեն են, որք խիստ քրտնաջանությամբ կաշխատին. մեծ մասամբ հին դրությամբ մնալով արհեստից մեջ հառաջադիմած չեն, սակայն կան ոմանք, որք սակավ ինչ հառաջ տանելո կաշխատին, ասիական ամեն տեսակ արհեստավորք կան քաղաքի մեջ և ըստ բավականին կշահվին։ Գլխավոր վաճառականներ կան քաղաքի մեջ, որոց մեծագույն մասն հայեր են, ունին չափա-

վոր հարստություն, զի Կարնո քաղաք Հայաստանի այժմյան քաղաքաց մեջ ամենեն վաճառաշահ քաղաքն է։

Կարնո այժմյան երևելի գերդաստաններ սոքա են։ ա) Պալլարյան գերդաստան, որք վաճառականությամբ և երկրագործությամբ պարապելով բավական հարստություն ձեռք բերած են, ունին գյուղերու մեջ ագարակներ և ընդարձակ հողեր։ Սույն գերդաստանի գլուխ և նահապետն է Աղաջան էֆենտի յոթանասունամյա- փորձ ծերունին, որ գեղով բնությամբ հանճարեղ և կորովությամբ ակնածելի և պատկառելի է ամենայն, սույն գերդաստանեն է Աղաջան էֆենտիի եղբորորդին՝ Համազասպ էֆենտին, որդի մահտեսի Մանուկ աղայի, քսանեհինգամյա բանիբուն և հայրենասեր երիտասարդ, որ Կարնո քաղաքի հանուր երիտասարդաց ազնվագույն և պատվավոր է, սույն գերդաստան ունի յուր մեջ կարգապահություն և հլություն յուրյանց ծեր նահապետին, որո հանճարով կկառավարվի բոլոր գերդաստան, իբրև մի փոքրիկ քաղաք, ամենքն 'ի միասին կրոնասեր բարեպաշտ, պարկեշտ են և կպատվեն զեկեղեցականս։ Սույն ծաղկյալ գերդաստան կրնա տիպար և նախանձելի օրինակ լինել Կարնո հայոց բոլոր գերդաստանաց։

բ) Փաստրմաճյան գերդաստան, որո գլուխ է Խաչատուր էֆենտին, այր աշխարհաշեն շինարար և մեծագործ, որ յուր բնական կորովամրտությամբ, անդուլ և աներկյուղ գործունեությամբ սակավ միջոցի մեջ մսագործության անձուկ արհեստեն բարձրացած է ապուխտագործության արհեստին, որուն համար շինած է մեծ գործարան և շահած բազում գումարս դրամոց։ Այժմ բաց 'ի ապուխտագործության գործարանին սկսած է ոչխարի վաճառականություն, տերության զոյաց բոլոր ուտելիք և պիտույք կհոգա, վարձակալության մեջ մտած է և սկսած է այժմ խաներ, շուկաներ և բազնիք շինել։

գ) Մակարյան գերդաստան, որո կնախագահե Մակարյան Հակոբ էֆենտին, սա դեռ 'ի Պոլիս չփոխադրված մեծ հռչակ և ազդեցություն ուներ Կարնո կուսակալության մեջ, զի վարձակալության պարապելով բազում հարստության տիրացած էր, սակայն աղքատաց և երկրագործաց վրա բնավ գութ և խնամ չունենալով՝ անգթաբար կը նեղեր երկրագործներ, նամանավանդ Տարոնո աշխարհի գյուղացիք։ Հակոբ էֆենտին ըստ երևույթին է հեզաբարո, կխոսի առանց կրից, կգործե առանց ձանձրանալու և, եթե գրություն և պարկեշտություն սիրեր, տարակույս չկար, որ Հայաստանի մեջ առաջին նշանավոր անձն կհանդիսանար յուր լայն հանճարով, սակայն հիշյալ երկու գլխավոր

մոլությունք և յուր որդվո ոչ բարի գնացք, մութ ստվեր մի ձգեցին նորա փառաց և պատվո վրա։

դ) Խարաճյան գերդաստան, որք Զմշկածագեն գաղթյալ են Կարին, վաճառականության պարապելով մեծագումար հարստությանց տիրացած են, ունին Խարբերդու դաշտի մեջ բավական հողեր, գլուխ գերդաստանին է Պողոս աղայն, այր երկչոտ, զգաստ և ազգային գործոց մասամբ իվիք անտարբեր, իսկ յուր գործոց մեջ միշտ զգույշ և արթուն, բարեպաշտ են և երկյուղած, կպատվեն զեկեղեցականս, մանավանդ զՀարություն եպիսկոպոսն։ Պողոս աղայի որդին է Դանիել էֆենտին Խարաճյան, այր բարեբարո և հանդարտ բնությամբ, սակավ ինչ ազգասիրության նշաններ կը տեսնվի սորա վերա, սակայն երկյուղի մեջ մեծնալով չհամարձակիր ազգի իրավունք զորավոր բանյուք և գործով պաշտպանել, հայոց զրկյալներ սորա համար աներկյուղություն կմաղթեն, աստված լսե նոցա մաղթանաց և կատարե նոցա խնդրված։

ե) Խաչատուր խան էֆենտի Տեր Ներսիսյան, որ ունի բարեկիրթ գերդաստան և զավակներ, սա երբեմն խան էր պարսից հպատակ, երբեմն ռուսաց թարգման ռուսաց հպատակ, այժմ Կարնո վիլայեթի ժողովին անդամ է տաճկաց հպատակ։ Խան էֆենտին հաջողաբան գործունյա գործակատար է յուր բարեկամության հավատարիմ և նոցա օգտին անձնանվեր աշխատող երբեմն մաքսապետություն, երկրակալություն և այլ զանազան վաճառականության պարապելով այժմ չափավոր հարստություն ունի, եթե այս անձն Մակարյանի հարստության չափ դրամ ունենար, ազգին մեծամեծ բարիք կհասուցվեր անկե, քան թե Մակարյանեն, զի գրեթե Կարնո ազգայնոց մեջ սա հավետ հայրենասեր կերևի, քան թե մյուսներ և եթե այլևայլ նկատմունք չունենար, զօրավոր բանյուք և գործովք տի պաշտպաներ զազգ և զհայրենիս, սակայն ինչպես ուրիշներ, նույնպես սա անձնական շահու չկարե առնել, զոր կամի։ Սա Վանա Պողոս վարդապետին և Աղթամարու Խաչատուրին բանիվ և գործով պաշտպան է, վասն սիրո Շարան պեյին և այլոց։ Ալեքսան և Տիգրան ուսումնական երիտասարդք՝ խան էֆենտիի որդիք, ազգային գործոց մեջ աշխատող և հավատարիմ։

զ) Ազարյան հարուստ գերդաստան, որո նահապետ Սողոմոն աղայն անցյալում ամի փոխեցավ առ տեր և որդին Ղուկաս աղայն նորին կտակավ շինեց Զայդարայի դպրոց, հանգուցյալ Սողոմոն աղան էր այր վեհանձն հանճարեղ և հայրենասեր, ուսումնասեր լինելով Կարնո մեջ առաջին էր, որ յուր որդին Ազարիկ խրկեց Վենետիկ Մուրատ-

յան վարժարան ուսմունք սովորելու, այժմ Ղուկաս և Ազարիկ աղայք վաճառականության կպարապին և գրեթե առաջին վաճառական կհամարվին Կարնո մեջ։ Ղուկաս աղայն է հեզաբարո մարդասեր, յուր գործոց մեջ արթուն և գործունյա ազգային գործոց մեջ, միջակ միջամուխ, գերդաստանով բարեպաշտ են և ազատասեր։

Կան նաև քանի մի նշանավոր գերդաստանք, որոց մին է Կինեվիզյան գերդաստան, որո նահապետ մահտեսի Աղապապ քանի տարի առաջ առ աստված փոխեցավ, սորա որդին Հովհաննես աղայն է այժմ անդամ թաղական խորհրդվո, որ է հույժ պարկեշտ բարեպաշտ և երկյուղած, կսիրե եկեղեցին և եկեղեցականներ, կծառայե եկեղեցվո և ազգին հույժ միամտաբար։ Սորա եղբայր Կինեվիզյան Հարություն աղայն ազնիվ ուսումնասեր երիտասարդ, որ Կարնո երիտասարդաց մեջ մեծ պատիվ և համարում ունի և հայրենասիրության ճաշակեն զուրկ չէ։

Նույնպես նշանավոր են Էնֆիաճյան, Սառաֆյան, Մկրտիչյան, որո նահապետն է Նազարեթ աղայն, այր առաքինի և պատվավոր, ունի արեկիրթ զավակներ, սորա եղբայր է Գեորգ աղա Մկրտիչյան, այր յոհական հանճարեղ և ուսումնասեր, որ 'ի Պոլիս երկու տարի քաղաքական ժողովո մեջ պաշտոն վարեց Հայրիկի պատրիարքության օրով և մեծ համարում ունեցավ ժողովոդոց մեջ։ Գեորգ աղայն գրեթե Կարնո մեջ առաջին ազգասեր և հայրենասեր կրնա համարվիլ և բարեբարո խոհականությամբ կրնա կարնեցվոց բարի օրինակ լինել։

'Ի Կարին նշանավոր է մեր հայրենակից վանեցի մահտեսի Սարգիս աղայն Զաքարյան, որ Գրիգորիս եպիսկոպոսի առաջնորդության օրով աթոռակալության պաշտոն վարելով՝ յուր բնածին հավատարմությամբ մեծ համարում ստացեր է Բարձր Հայոց մեջ, սա յուր յոթանասունամյա ալյաց մեջ արդարև ճշմարիտ նահապետի կերպարանք ունի, հյուրասիրության մեջ առաջին է, խոհական, հանճարեղ, գործունյա, հայրենասեր և ազգասեր է, ունի բարեկիրթ որդիք՝ Շաքար, Մարտիրոս, Հովհաննես և Դավիթ աղայք, որք առաքինությամբ հարազատ որդի են յուրյանց բարեսիրտ հոր և հնազանդ նորա հրամանց։

1872 օգս. 14, Աստվածածնի վերափոխման երկուշաբթի օր, սուրբ Լուսավորչի վանք երթալով՝ վանքի ներքին և արտաքին կացություն քննեցինք և ստորագրեցինք։

Սուրբ Լուսավորչի վանուց նախկին հիմնարկության գրավոր պատմություն և թվական անհետացած է, իսկ ավանդական պատմություն կա և մնա, զի ավանդեն, թե երբ Երզնկայի[27] Երիզ ավանին մերձ սբ. Լուսավորիչ երկոտասան շարշարանոք շարշարելեն հետո, Տրդատ

արքայն հրամայեց, որ զսուրբն տանին Արտաշատ Վիրապ՝ արկանեն, զինվորք զսուրբ 'ի Կարին հասուցած միջոցին սբ. Լուսավորչի վանուց տեղ երեկույս առնելով զսոմբն գետնախոր սենեկի մը մեջ բանտած են, ուստի սբ. Գրիգորի փառավորության ժամանակ հավատացյալ հայք հիշելով սուրբն, աստի բանտարկության աղօթատեղի մատուռ մի շինած են և ապա ետ ժամանակի լուսավորության հայոց սբ. Լուսավորչի անվամբ վանք մի կառուցած են, որ կա մինչև ցայսօր ժամանակի։

Վանք քանի անգամ ավերակ դարձած և քանի անգամ նորոգված է, վանքի թե ձեռագիր գրյանք, թե կոնդակներ, թե եկեղեցական սպասներ և թե տավարեղենք Կարնո Կարապետ եպիսկոպոս[28] ժողվեր և ասկե 45 տարի առաջ յուր բազմաթիվ ժողովրդոց հետ 'ի միասին դեպ 'ի Ռուսաստան տարեր է, որով վանք ամայության մեջ մնալով ավերակ դարձեր է։

Սուրբ Լուսավորչի վանք ճիշտ մեկ ժամու չափ հեռի է Կարնո քաղաքեն, որո արևելյան հյուսիսակողմ ընդարձակ դարավանդներու վրա կբարձրանա վանքին դիրք ու շենք, վանքի հարավային մերձ ձորակ մի կա, որո միջեն առվակ մի անցանելով դեպ 'ի դաշտ կերթա, վանքի արևելյան հանդեպ քառորդ մի լեռներ կան, իսկ հյուսիսի և արևմտյան կողմեն գեղեցիկ հայեցվածքով կհայի Կարնո ընդարձակ դաշտի վրա, վանքի արտաքին պարսպի շրջապատին չափ հասարակ քայլով 360 քայլ է, պարիսպ սև քարերով և բավական բարձրությամբ շինված է, պարսպի ներս և թե դուրս չորս աղբյուրներ կան, որոց ջուր քառորդ մի հեռավորությամբ վանքի արևելյան լեռնեն քունքով կբերվի վանքին մեջ, 'ի ներքո պարսպին այժմ կան 16 սենյակ, 3 ավերակ, իսկ 13 շենք։ Հին առաջնորդարան Մակար Ճգնավորի խրճիթին կնմանի և գետնախոր, և սևացած, մյուս սենյակներ՝ կես նոր և կես հին, որո ուխտավորաց համար հատկացած են։ Վանք ունի մեկ ընդարձակ փարախ իշոց և ձիոնց և 1 մարագ։

Հանգուցյալ Գրիգորիս եպիսկոպոսի օրով ժառանգավորաց դպրոց կա եղեր վանքին մեջ, սակայն այժմ ո՛չ դպիր, ո՛չ աշակերտ, ո՛չ ժառանգավոր և ո՛չ վարժապետ կա վանքի մեջ, այլ է սա այլ վանուց նման եղանց, ձիոնց, ոչխարաց և իշոց մակաղատեղի։

Եկեղեցին 'ի ներս պարսպին 1861 ամին 'ի թիվ փրկչին նորոգյալ է ի ժամանակս առաջնորդության Հարություն եպիսկոպոսին։ Չափ ներքին կողման տաճարին, ընդ երկարություն է 49 ոտեն, ընդ լայն 38

չափ ոտեն, բարձրություն է 13 կանգուն ձողեն, զոր ճարտարապետք չափին զշինված կերտեն։ Կա զանգակատուն մի 'ի վերա դրան տաճարին 'ի փայտից շինյալ 'ի ձև գմբեթի։

Սույն սուրբ Լուսավորիչ եկեղեցիեն քարընկեց մի հեռի 'ի կողմ հարավային պարսպին, կա սուրբ Սարգիս անվամբ տաճար մի, որ Հայաստանի հին տաճարաց նման շինված է 'ի թիվ (1161) որս հյուսիսային որմի վրա սույն արձանագրություն կա՝ «Նորոգեցաւ տաճարս վերստին սուրբ Սարգիս զօրաւարին ձեռամբ Խաչատուր վարդապետէն Կոստանդնուպօլսեցւոյ և առաջնորդ այսմ ուխտին... որ տէր ողորմեսցի թվին ՌՃԿԹ (=1720) և նորին փոխանորդ Մակար վարդապետ»։

Անշարժ և շարժական կալվածք սբ. Լուսավորչաց վանուց։ Հողային կալվածք, 40 կտոր արտեր վանքին բոլորտիք, որք 20 սոմար սերմ կընդունեն, սակայն այժմ միայն չորս սոմարի[29] տեղ հաղիվ կցանվի։ Գեղ գյուղի սահմանի մեջ, որ 3 ժամ հեռի է վանքեն, ունի 30 սոմարի արգավանդ հողեր, որ այժմ 2000 ղուրուշի վարձու տրված է Փաստրմաճի Խաչատուր էֆենտիին, ունի Կարատս գյուղի սահման արտ մի, որ 12 կոտ սերմ կառնե, մի ևս իլիճա ունի, որ 10 կոտ[30] սերմ կառնե։ Առ եղերբ լճին Կարնո ունի 10 կտոր մարգագետին, տարին 60—70—80 և մինչև 100 բարդ խոտ և ճիլ կբերե։ Ունի Արշունի ագարակին մեջ կիսավեր տուն մի, իսկ քաղաքի մեջ մի սափրիչի խանութ, զոր կաղ մահտեսի Ավետիս կտակել է վանքին պայմանով, այն է՝ քանի ինքն ողջ է վարձքն առնե և ետ մահվան վարձով հանդերձ խանութ վանքին մնա, այժմ սույն խանութին վարձք 200 ղուրուշ։ Խանութ մի ևս վաճառականի ունի, որ 300 ղուրուշ վարձք կբերե։

Վանքի թեմեր 14 գյուղ են, 14 սոմար պտղի կհավաքվի գյուղերեն, 10—12 լիտր ձեթ կընծայեն գեղացիք վանքին, մատաղ հավաքելո սովորություն ունին, տարին 30—40 գառն և ուլ կժողովեն գեղերեն։

Քաղաքացի և գյուղացի ուխտավորաց արդյունք 4000 ղուրուշի կհասնի։

Նախ

Ըստ վկայության հողերարձվաց տարին 3000 ղուրուշ մշակաց տնտեսաց և հովվաց վարձք։ 2000 իբրև թե խոտ հարդ կգնվի տավար եղինաց։ 1000 ղուրուշ ցորյան կգնվի վանքին այնչափ բերքին 'ի կոտ 500, մշակաց և ծառայից հանդերձ եղեն։

6500

Օգոստոս 18-ին նշանակության արժանի դեպք մի տեղի ունեցավ Կարնո մեջ, բաղիշեցի աղքատ 14 տարվա աղջիկ մի 'ի Բաղեշ տարիք առած մարդում հետ կամուսնացնեն, աղջիկ իրկան քով առնական զորություն չտիսնալուն պատճառավ կփախչի Մշո խաս գյուղ և երիտասարդի մը հետ կամուսնանա, երիտասարդ 'ի Պոլիս պանդխտելով կին երեսի վրա յոթ տարի անխնամ թող կուտա, կին ոչ միայն անխնամ մնալեն, այլ ինչպես կերևի յուր գեղեցկության պատճառով այլոց բռնաբարությանց առարկա լինելով, կուզե ուրիշ այր մի գտնալ, սակայն գիտենալով, թե քրիստոնեություն այլևս չէ հնար երկրորդ անգամ ամուսնանալ, կդիմե այլազգության։ Մշո առաջնորդ Գրիգորիս վարդապետ երեք ժամու չափ կհամոզե, որ կին հետս դառնա յուր ձախողակի մտածմունքեն, սակայն չհամոզվիր կին, ուստի այս մասին Գրիգորիս վարդապետ իրաց եղելության համամակ ազդ կառնե Կարնո դերապատիվ Հարություն արքեպիսկոպոսին, իսկ տեղվոյն բդեշխ նույնպես կազդարարե Կարնո կուսակալին և կին կխրկվի ի Կարին։ Կուսակալ կին կխրկե տաճկի մը տուն, նա երեք օրեն զկնի կփախչի կապաստանի ռուսաց քոնսուլի տուն և կիմացնե քոնսուլին, որ ինքն քրիստոնյա է և խնդրե, որ զինքն պաշտպանեն և ազատեն տաճկաց ձեռքեն։ Քոնսուլ առանց հայոց առաջնորդարան իմաց տալու ռուսիաց մահտեսի Հովհաննես կխրկե առ կուսակալն իմացնելով, թե փախուցյալ կին իրեն տուն է։ Կուսակալ կհորդորե զՀովհաննես աղայն, որ կին իրեն հանձնեն, որ խրկե 'ի Մուշ առ Գրիգորիս վարդապետն։ Հովհաննես աղայն կարճամիտ պարզամտությամբ կհամոզե զքոնսուլ, որ առ կուսակալն խրկե զկին, ուստի նա ի' ձեռն յուրո պահակին զրեթե բռնի զկին կհղե առ կուսակալն, բռնի ասացի, վասնզի կին խիստ կդժվարի երթալ, ուստի պահակն ստիպվելով կին կբերե 'ի գավիթ եկեղեցվոյն, խեղճ կին լալով կիմացնե փոխանորդ տեր Կարապետին և առաջնորդի փոքրավորին, որ զինքն պաշտպանեն, սակայն երկուք ևս յուրյանց անպիտանությունն խոստովանելով կազդարարեն, թե չեմք կարող զքեզ պաշտպանել, վասնզի առաջնորդ 'ի գյուղորայսն է, վասն այնորիկ կին լալով հակամայից կերթա առ կուսակալն, որ հարցնելով կիմանա կնոջ կամք, որ քրիստոնյա է. «Ընդե՞ր առաջն ասացիր՝ այլազգի եմ»։ Այո՛,—ասե կին,—առաջն ասացի, բայց այժմ կատարյալ զղջացյալ եմ, ուստի հինգշաբթի երեկոյան ժամ երկուքին կին մեկ պահակի հանձնելով կաքսորե դեպ 'ի Պոլիս՝ առանց հայոց առաջնորդարանին լուր տալու։ 'Ի քահանայից և 'ի ժողովրդոց ոմանք դիմեցին առ

մեզ և մեղադրեցին զարարս քոնսուլին, ուստի երկու անգամ տեր Մելքիսեթ քահանայն խրկելով խնդրեցինք զկին, քոնսուլ կնոջ կուսակալին տանելու պատճառն Հովհաննես աղայի վրա ձգեց, ուստի հարկ եղավ Հովհաննես աղայեն խնդրել զկինն, նա պատիպատ պատասխան հաղորդեց մեզ քահանայի ձեռոք, հարկադրեցանք մեք անձամբ երթալ և տեղեկանալ։ Մահտեսի Հովհաննես մեզ ևս պատիպատ պատասխանել ուզեց, սակայն երբ տեսավ, թե բաց 'ի բաց կհերքենք յուր սնոտի պատճառաբանությունք, որովհետև կհավելայր, թե կուսակալն ասաց ինձ, եթե կին մեզ չհանձնեք՝ Բաբերտու անցք[31] գուցե տեղի ունենա Կարնո մեջ, և մանավանդ, թե կուսակալ խոսք տվավ, թե ես զայն քրիստոնյա յուր տեղ կխրկեմ, ուստի ես ալ քոնսուլին ասացի, որ խրկե։ Պատասխանեցինք, թե քոնսուլ յուր պաշտոնական պատվոյն յուր տերության և քրիստոնեության մեղանչած է, երբ չէ փութացեր նեղյալ քրիստոնյա մի ըստ արժանվույն պաշտպանել, ուստի մահտեսի Հովհաննես յուր բոլոր խեղճությամբ պատասխանեց, թե պիտի որ այսպիսի գեշեր մեզմե հեռանան։ Ներեցեք, աղա՛, ասացի, եթե գեշեր մեզմե հեռանան, մեզ բան մի չմնար։

Ուրբաթ առավոտ տակավին եպիսկոպոսն գեղերեն եկած չէր, ուստի տեր Համազասպ քահանայն խրկեցի առ քոնսուլ և պատվիրեցի, որ կորովի բանյուք խոսե անոր, թե Երեմիա եպիսկոպոսն և ազգն անպատճառ կին քեզմե քրիստոնյա կխնդրե, մեր քահանայով մեզ պատասխան խրկեց, թե ես անձամբ կուսակալին երթալով կին կառնեմ և իրենց կհանձնեմ։

Գնաց առ կուսակալն խնդրեց, սակայն նա պատասխանեց՝ երեկ երեկո ժամ երկուքին աքսորեցի 'ի Պոլիս, որովհետև լսեցի, թե նորա այրն հոն է եղեր։ Քոնսուլ այս պատասխան առնելով և այլ ոչ ինչ պատասխան չտալով և միայն կուսակալի խոսքեն, գրված գրոյն պատճեռնին հավանություն տալով դարձավ և պատասխանեց մեզ, թե կուսակալ կին 'ի Պոլիս խրկած է, այս միջոցին ուրբաթ ժամ վեցն էր Հարությունն եպիսկոպոս գյուղերեն յուր առաջնորդարան դարձավ, ուստի մեք կնոջ վերջին եղերական դիպաց պատմությունն իրեն պատմելով խընդրեցինք, որ ինքն ևս քոնսուլեն խնդրե զկին, սակայն նա սկսավ միայն տրտնջալ քոնսուլի թուլամորթությունեն և կուսակալի նոր բռնած ընթացքի վրա, որովհետև դեռ այս առաջին անգամն էր, որ կուսակալաց միջեն միայն Սամի փաշան առանց առաջնորդին լուր տալու և առանց ներկայության հայոց կղերաց կնոջմե հարցում ընելու, զայն

կաքսորեր հեռավոր աշխարհ, ուստի նստավ եղելության համառոտություն գրեց սրբազան պատրիարքին և գործին վախճան տվավ։ Շաբաթ օրվան հեռագիր քաշելու մասին Հարություն եպիսկոպոս կուսակալին գնաց և կնոջ մասին կուսակալեն տեղեկություն խնդրեց և ծանույց, թե պետք էր, որ մեզ իմացնեիք և մեք ևս մարդ մի ուղեկից ընեինք կնոջ, վասնզի մանկամարդ էր կին, սակայն կուսակալ պատասխաներ էր, թե բնավ հարկ չկա։ Ինչ ողբալի և լալի վիճակ խղճալի կնոջ վիճակ, որ երբեք հայրենիքեն հեռու գնալու կամք չունենալով սամետով ձի կհեծցունեն և մի այլազգի պահակով բռնի 'ի օտարություն կվարեն, իբրև եղեռնագործ, ուր մնաց կրոնից ազատության սկզբունք, զի հայսմհետև ով ոք սխալի և ասե, թե այլազգի եմ և հետո զղջա, տանջանաց և տարագրության պիտի մատնվի, ուստի պարտին զգուշանալ ամենեքյան ամենայն զգուշությամբ։

'Ի կայսերական գնդեն ակնեցի հարյուրապետ մի անուն հաճի Սուլեյման աղա, հրամանավ Սամի փաշային 'ի կողմանս Խնուսա խրկած էր Իսլահաթ Մամուրի[32] անունով, այս անձն հավասարության սկզբունք հարգելով, մանավանդ աղքատաց վրա արտաքո կարգի գութ և խնամ ունենալու, բռնավոր հարստահարիչներ կահացուցաներ և ոճրագործ ավազակներ բռնելով կբերեր 'ի բանդ Կարնո, սակայն Կարնո մեջ բռնված կաշառակուրծ գաղտնի բռնավորներ, որք գաղտնաբար հարստահարչաց գործոց շարունակության հաստատություն են և նոցա գործք և արարք մեղայնելու և կամ արդարացնելու զրեթե վարձյալ փաստաբաններ են, որոց մեծագույն մասն կառավարության ատյաններու մեջ անդամակցության պաշտոն կը վարեն և խիստ ցավալի է աստանօր ասել, թե 'ի շարս սոցա գտանին երեքին արք 'ի զարմեն հայոց։ Այսպիսիք տեսանելով, թե Սուլեյման աղան այնպիսի մարդիկ կբերե կբանտե, որ իրենց ծածուկ մտերիմներ են, ուստի իրենց մոլեգին հարստահարությամբ շահս բազումս կհասուցանեին իրենց պաշտպան պետերուն գաղտնի դարաններ և այլ և այլ կողմանե և բերանե ամբաստանություն կուզեն հարուցանել Սուլեյման աղայի վրա, թե բարբարոսաբար զմարդիկ կդանակոծե և անմեղներ կկալանավորե։

Ասկե քանի օր առաջ հիշյալ Սուլեյման աղան կեսարացի տեր Եսայի քահանայի հետ 'ի Կարին գալով մեկ մարդասպան քուրտ, որ հարյուր մարդոց մեջ հայ մի սպանելով կուրանա եղեր յուր գործած եղեռնն, սակայն հրաշյուք գավազանին կխոստովանի և վկայուք կհաստատվի, նույնպես մեկ աքսորյալ քուրտ մի և այլ ավազակ մի ևս քուրտ և ընդ

սոսա նշանավոր ավազակ մի ևս 'ի հայոց կբերե կբանտե։

Սուլեյման աղայի թշնամիք զհայն պատճառ բռնելով ուղեցին զՀարություն եպիսկոպոսն ամբաստանող հարուցանել ընդդեմ հարյուրապետին, որք էին Թոմրուզ Աղասին և Էնֆիաճյան Սարգիս էֆենտին, սակայն եպիսկոպոս գիտակ լինելով գաղտնյաց ամբաստանողաց, ոչ հաճեցավ 'ի կամս նոցա, որովհետև ստուգեց տեր Եսայիեն, թե հայն ո՛չ միայն ավազակությամբ հանցավոր է, այլ երկու անգամ առանց պսակի երիկնով կին առնելով կանոնի և բարոյականի դեմ հանցավոր է, ուստի 'ի շաբաթ օրն կուսակալին ներկայանալով բարի խոսեցավ հարյուրապետի մասին։

Եվ ըստ որում խնուսցիք և պուլանըխցիք 'ի ձեռսն տեր Եսայի քահանային շնորհակալության նամակ գրած էին առ մեզ՝ հայտնելով, թե ինչ բարեկարգություն և ապահովություն կվայելեն Սուլեյման աղայի քաղաքական զորեղ և աչալուրջ հսկողության ներքև և թե ինչպես կթախանձեն մեզմե, որ նորա վերագարձին համար կուսակալին աղերսամատույց պետք է լինինք յուրյանց կողմանե։

Ուստի սույն հարյուրապետի մասին տեղվույս արժանահավատ ազգայիններեն մանավանդ տեր Գրիգոր և տեր Համազասպ քահանայից ստույգ վկայություն ընդունելով, երկուշաբթի օր տեր Եսային հետ առնելով ներկայացանք կուսակալին և խնդրեցինք ի դիմաց տարոնացվոց աղքատաց, որ զհաճի Սուլեյման աղայն վերստին իբրև բարեկարգիչք խրկե 'ի Խնուս, 'ի Պուլանըխ, 'ի Մա[նա]զկերտ և Ախլաթ։ Կուսակալ մեր խնդիր ընդունելով անմիջապես հրամայեց զորաց հրամանատար փաշային, որ անմիջապես նոր վաշտ մի զորք տա Սուլեյման աղային ձեռք, որ նորեն յուր պաշտոնով երթա հսկե քրիստոնեից վրա և հարբստահարիչներ զսպե... ահա այսօր կմեկնի սույն հարյուրապետ 'ի Տարոն։

Կուսակալ քանի օր առաջ մեզ Պուրութու (Պուրուլթու—Հ. Պ.) մի խրկած էր ձեռամբ Համազասպ էֆենտիին և պատվիրած էր, որ 'ի Կարինեն ուրիշ գավառներ մեկնած միջոցին իրեն ներկայանամք, զի հարկավոր խոսելիք ունի եղեր մեզ, արդ, երբ հիշյալ հարյուրապետի խնդրոյն ներկայացանք, կուսակալ կարծելով, թե գավառներ գնալո մասին իրեն ներկայացած եմ, ուստի սկսավ յուր հարկավոր խոսելիքն՝ որք են. «Ամեն գավառներ, ուր կերթաք, քարոզեցեք ժողովրդյան, որ տերության հնազանդին և չապստամբին, մի՞թե լսեցիք, թե մեկ-երկու ճահիլ վարդապետք ինչպես գրգռեցին և ոտքի հանեցին զքրդեցիս[33], չեմ հուսար թե դուք նոցա ճամբան բռնեք և այլն, և այլն», իսկ մեք պատասխանեցինք, թե վարդապետաց մասին այդպիսի լուր մի լսեցինք և մեր եկեղեցականք՝ թե եպիսկոպոս, թե առաջնորդ, թե վարդապետ, թե քահանա, երբեք և երբեք ոչ այդպիսի խորհուրդ մի կխորհին և ոչ ժողովուրդ ապստամբության կդրդռեն, հայոց կղեր և ժողովուրդ միշտ հավատարիմ հպատակ եղած է տերության և յուր հավատարմության մեջ միշտ հաստատ է։ Ուստի մեք վստահությամբ կպահանջեմք, որ բնավ այդպիսի կասկած մի չունենաք մեր կղերաց վրա, վասնզի այդպիսի կասկածանք մի հայտնի թշնամանք է մեր վաղեմի հավատարմության դեմ և այլն, և այլն։ Հոն ներկա էր զորաց տոմարակալ[34], որ կուսակալի ներքին խորհրդական և սիրելին էր, ուստի երկրորդ օր սույն տոմարակալին երթալով նորեն կուսակալի ասածին դեմ բողոքեցինք և ծանուցինք, թե առաջնորդք ստիպված են ժողովրդոց ցավեր կառավարության ներկայացնել, որովհետև երկրագործ ժողովուրդ ոչ տերության օրենք գիտե և ոչ բերան ունի խոսելո, ոչ համարձակություն ունի կառավարչաց կամ դատավորաց ատյան մտնելո և բողոքելո իրեն հասած զրկանաց դեմ, ուստի կդիմե առաջնորդին կամ վարդապետին, որ թեև միշտ կստիպեն, որ իրենք անձամբ դիմեն կառավարության դուռն ու խնդրագիր մատուցանեն, սակայն առանց առաջնորդի և միջնորդի չեն բնավ կարող դալ անձամբ բողոքել, ուստի երբ առաջնորդ կամ դրով, կամ անձամբ խնդիր կմատուցանե և կամ քանի հոգի հետն առնելով կառավարության դուռն կդիմե, որպեսզի ժողովուրդ վստահ լինի, թե արդարև առաջնորդ յուրյանց բողոք ճիշտ կմատուցանե կառավարության, այսպիսի դեպքեր թերևս, երբեմն ոմանց թելադրությամբ, կասկած կհարուցանե կուսակալաց մտաց մեջ, իբրև թե առաջնորդք զժողովուրդն գրգռած լինին. սակայն այդպիսի ենթադրություն բոլորովին անտեղի և բոլորովին զրպարտություն է և ոչ այլ ինչ, մի՞թե առաջնորդք ժողովրդոց ցավեր կառավարության ատենին ներկայացնեն գրգռիչ պիտի համարվին, ոչ ապաքեն առաջնորդք թե կամա, թե ակամա միշտ ստիպված են ժողովրդոց կողմանե բողոք բառնալ, վասնզի յուրյանց պաշտոն այնպես կպահանջե։ Եվ ծանուցինք իրեն, թե երկրագործաց և աղքատաց ապահովություն որչափ երկրին բարեկեցություն և տերության գանձուն նպաստավոր է և թե առաջնորդաց խնդիր միշտ երկրին և աղքատաց ապահովությունն խնդրելո խնդիր է, իսկ այլ ինչ, որ և տերության իսկ հրաման է և փափագ, զայնոսիկ խոսելով խնդրեցինք, որ մեր կողմանե միրստմիոջե թարգմանե կուսակալին և նորա մտքի

մեջ տեղի ունեցած կասկած փարատե։ Խոստացավ պատմել կուսակալին և համոզել, որ այդպիսի կասկածի տեղիք չտա երբեք։

Օգոստոս 26 ուրբաթ երեկո ժամ տասնմեկկեսին Կիրճաւ գուռ Փաստրմաճի Խաչատուր էֆենտիի շինած նոր խան այրեցավ, կայծ մեկ այլազգի խանութեն ելնելով սուղ միջոցի մեջ ճարակեցավ։ Կուսակալ, զորաց հրամանատար հասած էին հրդեհի առաջքն առնելու, զորքեր եկած էին, կես կաշխատեին կրակ մարելու, կեսն ալ ապրանքներ հափշտակելու, երկու հին թուլումպա[35] կար, որ զորք կգործածեր, ջուր բերողներ քիչ էին, բազմության ժողովրդոց էին միայն կրակի ճարակումն տեսնելու, ավար հափշտակելու մասին մարդիկ կային, ավելի պարսիկներեն, հետո տաճիկներեն։ Բավական վնաս եղավ վաճառականաց, շատ հայոց, քիչ այլազգաց։

Խան և խանութներ ազատելու ճար չեղավ, հով բավական սաստիկ էր, քսան երեսունեն ավելի խանութ և քանի մի փոքր տուն յոթ ժամու միջոց այրեցան։

Շատերու կարծիքն այս է, թե ըստ որում Փաստրմաճի Խաչատուր էֆենտին քիչ ատեն հարստությամբ փայլելով մեծամեծ շենքեր շինելու ձեռնարկեց և հաջողեցավ, որով ոչ միայն Կարին գտնված ազգաց զարմանք զարթեցուցց, այլև այլազգաց նախանձ և ատելություն սաստիկ գրգռեց, արդեն քանիցս կրակի կույտք ձգելով հրդեհելու փորձ փորձած էին, սակայն չէին հաջողած, այս անգամին հաջողեցան և հրդեհ տեսնալով ուրախացան, որովհետև անձամբ փութացեր էին կրակի տեղ. ականջոքս լսեցի այլազգաց բերանեն, որք ասեին՝ կավուր ազմիշ իտի, խանսրն կյավուրուն մալի[36], կային այլազգի կանայք, որք հայհոյությամբ ասեին. «օ՜հ քանտրին քյաֆիրին մալի»[37], կային քրիստոնեից մեջ ոմանք, որք անգիտությամբ ուրախ կլինեին, իսկ բազումք խիստ կերպիվ կցավակցեին։

Խաչատուր էֆենտիի սրտի և յուր որդվոց սրտի կսկիծ սաստիկ էր, բավական մխիթարեցի զինքն, և քաջալերեցինք։

Տաճկաց ընդհանուր բնություն է միշտ մախալ ընդդեմ այլակրոնից և զչարել նոցա հաջողության և հառաջադիմության, թող տալով սոցա վարմունք այլ և ազգաց դեմ, մասնավորապես հայոց նկատմամբ գրիմք, ըստ որում սոքա իրենց ներքին և կրոնական նախապաշարմամբ, հոռի դաստիարակությամբ և թյուր ըմբռնմամբ իրենք-զիրենք աստծո ընտրյալ և սեփական ժողովուրդ կկարծեն և կընդունեն, համոզված են, թե աշխարհիս բոլոր բարություն աստված յուրյանց մարգարեի շնորհիվ

իրենց տված է։ Օտարազգիք մարգարեն չհավատալով անարժան են աշխարհի որևիցե բարություն վայելել, ուստի օտարազգի և մանավանդ հայոց ձեռք մեծաշեն տուն, զվարճալի այգի, պտղաբեր ագարակ, նժույգ ձի, լավ զենք և ամենայն դեղեցիկ բան տեսնալուն պես, կցանկան հափշտակել, կուզեն և, եթե չհաջողին առնուլ, կաշխատին զոդանալ. նույնպես եթե բարեկիրթ և իմաստուն մարդ մի տեսնան, տաճկության կհրավիրեն և ասեն՝ աղեկ մարդ պետք է տաճիկ լինի, եթե դեղեցիկ կին և կամ պատանի տեսնան, հափշտակել և առևանգել կմտադրեն և ասեն՝ դեղեցիկն կյավուրին չի վայելեր, այլ՝ իսլամին։ Եթե ազգապաշտպան և հայրենասեր մեկ տեսնան, սպանանել կխորհին, զի ազգ անպաշտպան թողուցուն։ Ահա ամեն անոտի պատճառանաց ստիպյալ Կարնո այլազգիք այրեցին զխան Խաչատուր Փաստրմաճյանին, զի ծանր է նոցա տեսանել զհայազգի, որ շինե զխան, զխանութ և շուկա։

1872 սեպտեմբեր 1 Կարնո քաղաքի երեսփոխան 'ի ժողով գումարյալ ընտրեցին զմնացյալ երկու անդամ կրոնական ժողովո, ընտրեցին՝ քուելով զտասն անձինս քաղաքական ժողովո անդամս, նույն ավուր մեջ կրոնական և քաղաքական ժողովներ յուրյանց դիվաններ կազմեցին։ Նույն ավուր մեջ երկու ժողովո ընտրություն երեսփոխանական ժողովին վավերացան, նույն ավուր մեջ քաղաքական ժողովն նիստ կազմելով ընտրեց 6 հոգի անդամ ուսումնական խորհրդոց, յոթն անդամ քաղաքական ժողովո։

Կիրակի ատենին խորհրդոց կազմություն նոցա պաշտոնին, ժողովրդոց հետ ինչ կերպ հարաբերություն ունենալ և ժողովրդոց ինչ կերպ ժողովոց հարգ ճանաչելով պատվելու են զանոնք և ժողովո անդամներ ինչպես ազգին և հայրենյաց շահ միշտ յուրյանց անձնական շահերեն վեր դասելու են և անոնցմե, ով որ յուր անձնական շահ ազգային ընդհանուր շահեն վերադասե, անարժան է ժողովրդականության և թե ինչպես ժողովոց անդամք և ժողովուրդ մի անդամ են և եղբարք միմյանց և մի գերդաստանի որդիք են, Հիսուս յուրյանց հոգևոր հայրն է, իսկ Հայկ՝ յուրյանց մարմնավոր հայր, ուստի հոգեպես և մարմնապես եղբարք են միմյանց, ուստի պետք է, որ անբաժան սիրով սիրեն զմիմյանս և պատվեն, որպեսզի օտարներ ևս զիրենք պատվեն։

39 օր մնալով Կարին քաղաքի մեջ իբրև այցելու, սեպտեմբեր 9 շաբաթ օր մեկնեցանք 'ի Կարին քաղաքեն դեպ 'ի Վերին Բասեն (Բասյան)։ Երեք քահանայք՝ տեր Կարապետ, տեր Համազասպ և տեր Գրի-

գոր, մեզ ուղեկից ելան, մինչև քաղաքին շինութենեն դուրս ելնելով հետս դարձան՝ ընդունելով մեր սիրալիր հետին օրհնություն։

Վերին Բասեն Հայաստանի արգավանդ գավառներեն մին է, ամենագեղեցիկ տեսարան ունի, դաշտի երկարություն է 14 ժամ և լայնություն 3 ժամ, երկարություն արևմուտքեն դեպ 'ի արևելքն է, իսկ լայնություն հյուսիսեն հարավ, քաղցր, ժպտահայաց, խոտավետ և ծաղկավետ լեռներով շրջապատված է դաշտ։ Փոքր գետ մի Համամ Պատասի ըսված հովտեն կանցանե դաշտի միջեն և կօժանդակե Երասխն։ Հողի գույն մեծագույն մասն կարմրագույն և սեագույն և տեղ-տեղ սպիտակագույն, բոլոր հողն ջրարբի և արգավանդ է, մեկ կոտ սերման 8—10 կբերե։ Բասենի գյուղորայք բազմահայ ժողովրդով լի էին, սակայն Կարնո գաղթականության միջոցին գյուղերու մեծ մասն գաղթած են 'ի Ռուսաստան և Արագած լեռան արևելյան կողմ Ապարանք կոչված տեղեր բնակած են։ Հայոց գաղթած գյուղորեից եկեղեցիք խոնարհած ընկած են, գերեզմանատունք և խաչվեմք տեղ-տեղ կկենան և հայրենասերին կսկիծ և մորմոք կշարժեն։

Վերին Բասեն 20-ի չափ գյուղ կպարունակե յուր մեջ։ Բնակչաց կես մասն հայք են, իսկ կես՝ տաճիկ և քուրտ։ Վերին Բասենի մեջ 40 գյուղ հայ բնակիչք կան, որ ամբողջ երկրագործությամբ կպարապին, նույնպես տաճիկք և քուրտք երկրագործք են։

Վերին Բասենի գյուղաքաղաքին հին անուն է Դարունք կամ Ծաղկիտ, որ այժմ կոչի Հասան-գալա, բնակիչք մեծ մասն են տաճիկք, ամբողջ տունք են 130 տուն, 120 տաճիկք, իսկ տասն տուն հայք, 30 խանութ ունին։ Հայք ունին մի եկեղեցի, որ երեք տարի առաջ շինված է, երեք ավերակ եկեղեցվո տեղ ունի, կես ժամ դեպ 'ի արևմուտք ունի հանքային ջուրեր, երկուք՝ ջերմ, իսկ մին՝ սառն, մի Ասպուղա ավերակ գյուղի սահմանի մեջ երկաթի ջերմուկ մի կա։ Մագիստրոսի վանքեն կես ժամ հեռի սբ. Հոհան ըսված տեղ կամուրջի տակին աղբյուր մի կբղխե, որո ջրի համ քաղցր լիմոնաջրի համ ունի, որ խմելով լուծում կուտա և կմաքրե, բժիշկք իմանալով այժմ կգործածեն։

Շաբաթ երեկո իջևանեցինք 'ի Միջալպին գյուղ, հոն մեր հայրենակից Զաքարյան Սարգիս աղայն և կարնեցի Սաֆարյան Մինաս աղայն զմեզ հյուրընկալեցին մինչև առավոտ։ Գյուղի մեջ եկեղեցի չկա, եկեղեցվո տեղ ավերակ, երկու գերեզմանատուն ունի։ Գյուղի բնակիչք ամբողջ 15 տուն են, 8 տուն հայք են, իսկ 7՝ տաճիկ։ Մինաս աղայն ունի այս գյուղի մեջ 150 սոմարի հող և մշակել կուտա մարապայից,

որք են վեց տուն, երեք աչքե ջրաղաց մի ունին և մեկ տրնկ մեր վանեցի Սարգիս աղայն։

Օղուպ անունով շարագործ և բռնավոր, և հարստահարիչ տաճիկ մի կա սույն գյուղի մեջ, որ շարունակ կգողանա, կծեծե զհայեր և յուր բոլոր զորությամբ կաշխատի զհայեր վանել և ինքն տիրապետել գյուղին։

Կիրակի ժամ իններին հասանք 'ի Հասան-գալա, որ է հին Դարուն կոչեցյալ Հայաստանի մի անունի գավառ, սույն ավանին մեջ 350 տուն տաճիկ կա, երեսունի չափ հայ ընտանիք, եկեղեցի ունին, բայց քահանա չկա, վասնզի կարնեցի Ղևոնդ անունով քահանա մի ձեռնադրել տված են, սակայն հիշյալ քահանայն ժողովրդյան իրավունքեն գոհ չլինելով, նամանավանդ յուր կարնեցի կնոջ չկընալով խոսք հասկացնել գնացած է 'ի Կարին և կաշխատի հոն եկեղեցվո մեջ քահանայի պաշտոն վարել, սակայն Կարնո ընդհանուր ժողով և կրոնական ժողով մերժեց զայն և պնդելով պնդեց, թե պետք էր յուր ձեռնադրված եկեղեցվո մեջ քահանայի պաշտոն վարել, բայց նա տակավին համառել մնա։

Հասան-գալա ունի մի եկեղեցի, սակայն ոչ դպրոց ունի և դպրոցասեր ժողովուրդ, և առաջնորդ հայեր հոն վաճառականությամբ կապրին։ Տաճիկներ բռնավոր և կրոնամոլ լինելը աղագավ, հայեր չեն կրցեր հոն բազմանալ։ Բասենու կառավարիչ Խուրշիտ պեյ այս ավանի մեջ կնստի և կառավարե երկու Բասեններ։

Կիրակի ժամ 12-քին մտանք Մագիստրոսի վանք, զոր այժմ այլազգի բարբառով ասի Հասան-գալայի վանք։ Հիշյալ Մագիստրոսե յոթ վերստ սբ. Աստվածածնի վանք, Կարնո քաղաքեն 7 ժամ, իսկ Դարուն ըսված ավանեն 1,1/2 [ժամ] հեռավորությամբ դեպ 'ի արևելք մի լերան կողի վրա ունի յուր գեղեցկահայաց դիրք, սույն լեռ, վանքին արևմտյան կողմ լինելով Վերին Բասենու դաշտի կես մաս կծածկի վանքի տեսարանեն։ Վանք հյուսիսեն, հարավեն և մանավանդ արևելքեն կհատի Վերին Բասենու կես ընդարձակ դաշտի վրա, հանդեպ արևելյան տեսարանեն 8 ժամ հեռավորությամբ կտեսնվին Վաղարշակերտու Սուգավետ լեռներ։

Սույն վանք իբրև բարձրահայաց դիտարան մի կհայի մի մեծ ընդարձակության վերա, Բասենի հացաշատ դաշտ իբրև գոգավոր մակերևույթ մի, իսկ ծաղկավետ լեռներ իբրև սահման հորիզոնի կներկայանան աչաց հայեցողաց։ Սույն դաշտային և լեռնային հայացք

այնչափ քաղցր և հաճելի կթվին աչաց հայրենասերին, որ վրա հայելով ոչ միայն ամեն հաճույք և բերկրանք կդգա յուր սրտի մեջ, այլև հայելեն երբեք հագուրտ չունենար։ Ես արդեն ամենայն հաճութիւնամբ սույն տեսարանի վրա հայելով և զմայլելով հանդերձ ստորագրեցի վանքիս դիրք և տեսարան։

Վանքի կենսավետ օդ Հայաստանի առաջի կարգի մաքուր և առողջարար օդեն է, մեկ ինքնաբուխ աղբյուր ունի, որ երկու տեղե կվազե վանքին մեջ։ Վանքի հեռի լերանց մեջ տեղ մի կա, որ այժմ Հասանդալա կրսվի, որուն համար կավանդեն թե համասփյուռ ծաղիկ, պալասան ծաղիկ ևս կգտնվի եղեր։

Վանքի դրսի կողմի պարսպի շրջապատն է 260 քայլ, 14 սյուն իսկ կա վանքին մեջ, ամենք ևս հինցած խարխալած և նորոգության կարոտ, ունի մի հին տնտեստուն, չորս հին մարագ ձիանց և տավարեղենաց և չորս գոմ ոչխարաց։ Վանքի վանահայր 7 տարվան միջոցին երբեք շինություն կամ նորոգություն բրած չէ վանքին մեջ, ուստի վանք ամբողջ քանդվելու վիճակին հասած է ! եթե չնորոգվի, քանի տարիեն ղկնի ամբողջ հողաբլուր մի կձևանա։

Գրիգոր Մագիստրոսի Յոթ վիրաց սուրբ Աստվածածնի կառուցած տաճար, գոթացի ամենագեղեցիկ ճարտարապետությամբ շինված է։ Տաճարի երկարություն սեղանի վարի կողմեն չափելով 18 ոտք[38] է, լայնություն 21 ոտք, իսկ տաճարի հատակեն մինչև կոթողիկեի բարձրություն երեսուն կանգունեն ավելի կկարծվի։ Կաթողիկեն տաճարի ներքին կողմի չորս խաչաձև կամարներու վրա բարձրացած է, որ կամարներով հանդերձ խիստ գեղեցիկ հայեցվածք մի կընծայե տեսողաց։ Ի վերա սեղանոյն առանց տեղի քանդակագործ խաչկալ մի ունի, թեմի վրա դրված է տերունական պատկեր Հիսուսի, երկու մեծ հրեշտակներ Հիսուսի աթոռս պատուանդք բռնած են սավառնաթևյալք։

Սեղանի աջ կողմի որմի վերա փորագրված է՝ «Ես, մահտեսի Մարտիրոս նորոգել տուի այս խաչկալս որ զիս յիշեն սուրբ պատարագի մեջ», իսկ տաճարի հին շինության արձանագիրն է այսպես՝ «Ես Մագիստրոս այս տաճար հիմնարկեցի. յանուն եոթ վիրաց սրբուհւոյ Աստուածածնի 'ի թուականութեան Հայոց ԷՃԻ (=1271)»։

Սույն գեղեցիկ տաճարի դրան առաջ շինված է քարաշեն դարպաս մի, որ երկայնք է 26, նույնպես լայնք 26 ոտք, դարպաս ճիշտ քառակուսի է, սակայն դրան կողմ երկու քարյա սյուներ ունի, որ վրա բոլորաձև գմբեթ մի ունի, որ դարպասին վայելուչ տեսարան մի կընծայե։ Տաճարի դրսի կողմեն գմբեթի վեղարի կես կողմի վրայի քարեր խախտած և ընկած են, նույնպես տաճարի տանիքի սալեր տեղիս-տեղիս խախտած և ընկած են, այս մասին վանահայր երբեք հոգ և խնամ տարած չէ։ Երկար հորդորներ և խրատներ տվինք վանահոր, սակայն նա ամենուն պատասխանն կուտար, թե ինձմե առաջ այդ քարեր քանդված էին և այլն։

Տաճարիս դրսի աջ կողմի արևելյան անկյան կից է տապան Գրիգորի Մագիստրոսի, որ գերեզման խաչվեմ յոթն աստիճան շարված քարանց վրա կառուցյալ է, խաչվեմի վրա արձանագրված է այսպես՝ «Այս սուրբ խաչս է օգնական ամենայն Հայոց նամանաւանդ հանգուցեալ Մագիստրոսի», կավանդեն, թե Մագիստրոս յուր կենդանության ժամանակ յուր սույն արձան և խաչվեմ կանգնած և արձանագիր յուր ձեռոք գրած է։

Հայոց թագավորաց և իշխանաց սովորություն էր, որ վանք և տաճար շինելով գյուղեր կընծայեին և կկտակեին, որ շարունակ պատարագեն յուրյանց հոգվոյն համար։ Նույն սովորություն էր, որ իշխանք յուրյանց գերեզմանին մերձ մատուռ և տաճար կկանգնեին, իբրև յուրյանց գերեզմանին արձան և կոթող, այսպես կերևի և Մագիստրոսի տաճար և գերեզման կերևի, թե Բասեն Մագիստրոսի կալված է եղեր, որ թեմ հատկացուցած է սոյն վանից։

Կավանդեն, թե Մագիստրոս Յոթ վիրաց Աստվածածնի պատկեր յՈւրհայեն բերելով վանք հանուն նորա շինած և պատկեր սեղանի վրա դրած է եղեր, իսկ Կարապետ եպիսկոպոս Բասենի ժողովրդոց գաղթած ժամանակ հիշյալ հրաշագործ պատկեր տարեր Աղե[ք]սանդրապոլ դրած է, ուստի այժմ վանահայր վանքիս մատաղիր է երթալ պատկեր բերել կամ պատկերի արդյունք կաթողիկոսին խնդրել վանքի շինության համար, վասնզի պատկերի հրաշագործություն հռչակված լինելոյն աղագավ բավական արդյունք կբերե եղեր, իսկ այժմ տարին 10.000 ղուրուշի չափ եկամուտ Աղեքսանդրապոլո եկեղեցվույն կմնա։

Մագիստրոսի գերեզմանին քով շարված կտեսնվի վեց այլ գերեզմանք, որոց խաչվեմք բավական արվեստիվ քանդակված են, միայն միոյն վրա արձանագիր կա այսպես՝ «Սուրբ խաչս բարեխոսեր Սահակին», մյուսներ կթվի, թե Մագիստրոսի կին և ազգականք լինին։ Դարպասի դրսի կողմ պատեն 6 ոտք հեռի գերեզման մի կա, որ, որ խաչքարի արձանագիրն է՝ «Այս է գերեզման Ավետիս վարդապետին, որ էր առաջնորդ երկրին Բասենու»։ Կպատմեին, թե սույն Ավետիս վարդապետ քաջ ձիավոր լինելով նիզակով մի քուրտ սպանած է,

նորա հետ պատերազմելով, եթե իրավ է՝ ամեն վարդապետաց մեջ այս վարդապետ առաջին անգամ յուր մեղաց թողություն դտած է։ Վասնզի ասեն հին վարդապետաց մինն, թե աստված քաջ մարդկանց քաջության համար թողություն կուտա։

Վանքի անշարժ և շարժական կալվածք

Վանք ունի 60 սոմարի հող՝ մեծ մասն ջրարբի և փոքր մասն անջրարբի, 6 բարդ խոտ բերող խոտնոց, վանքի հողերեն տարին 15 սոմար բերք գուկա։ 6—7—8 և մինչև 10 սոմար* պտղի տեղերեն կհավաքվի։ Իսկ դրամական եկամուտ 800 ղուրուշ կգոյանա, տարին 13—15—20—30 պսակ հաղիվ կլինի թեմից մեջ, տասն ղուրուշ է սովորական պսակադրամ, որով տարին 500 ղուրուշ կգոյանա։ Այս Բասենու գավառաց մեջ պաշլխի[39] չար սովորություն կա, ռամիկ և անկիրթ հայեր գրեթե յուրյանց օրիորդներ դրամի կվաճառեն, աղջիկներ կմեծնան, տան մեջ կմնան, կան որ մինչև 30 և 40 տարեկան կլինին, վասնզի հայրեր շատ դրամի աչք դնելով զավակին անխղճորեն և անգթաբար սպասել կուտան, որով պատճառ կլինին զավակաց առևանդության և անառակ վարմանց։

Վանքի մեջ կա 48 գլուխ ոչխար, 2 գոմեշ, 6 եզ և 7 կով։ Կա 70 հոխա[40] պղնձեղեն՝ մեծ և փոքր։ 7 ձեռք անկողին՝ նոր շինված, 9 հատ կարպետ, 17 բարձ, 4 մանր ու մեծ թաղիքներ, մեկ գութան յուր գործիքներովն։

Սոյն վանքի վանահայրն է Տիմոթեոս Ծ վարդապետ, ձեռնադրված Կարնո հանգուցյալ Գրիգորիս արքեպիսկոպոսեն, յուր վանահայրության պաշտոն 4 տարի է։ Վանքի մեջ ոչ դպրոց կա, ոչ վարժապետ և ոչ աշակերտ։ Վանքի վանահայր երկու Բասենի առաջնորդության պաշտոն կվարե հին ոճով և հին սովորությամբ։

Վանք վերանորոգության պետք ունի, վասնզի ամբողջ շենքեր հինցած և խարխլած են, բասենցիք խորին տգիտությամբ վարակյալ, ոչ վանքի շինության և ոչ յուրյանց գյուղորեից մեջ դպրոց բանալու կաշխատին, մեկ քաջ հայրենասեր և վերանորոգիչ առաջնորդ պետք է, որ ո՛չ միայն վանքի և գյուղորեից մեջ դպրոցներ հաստատե, այլ ժողովրդոց սրտի մեջ նոր ազգության հոգի մտցունե և քրիստոնեություն վերանորոգե, վասնզի բասենցիք ազգություն մոռացած և քրիստոնեութենե հեռացած են, իրենց տգետ քահանայից ձեռոք, ամենայն կարեկցության արժանի է այս ժողովուրդ, վասնզի ուսումն և կրթություն սիրող ժողովուրդ են, սակայն անայցելու մնալով անվամբ և թե հայ և քրիստոնյա մնացած են, բնավորությամբ հեզ, հանդարտ և պարզամիտ են, բայց առ ուրիշ տեղերաց հայերեն քիչ մի ավելի պարզոտ են։

* Ծակայն գյուղացիք ասեն, թե 30 սոմար պտղի կգոյանա։

Վանուց տարեկան ծախք

2000 ղուրուշ 4 մշակաց տարեկան ծախք, 1700 ղուրուշ հովուաց, տնտեսաց, լուսարարի և այլ ծառայից տարեկան ծախք, 500 ղուրուշ մուխարայի[41], 500 մուխթու[42] Հասան-գալայի կառավարչին կտրվի, 3000 ղուրուշ՝ եկող-գնացողի, երկաթի գործից և երկաթագործաց և այս ծախուց ամբողջ գումար 7700 ղուրուշ։

Վանք քանի անգամ կողոպտված է, 1.1834, 2.1841, 3.1857, 4.1862։ Եկեղեցական սպասներ ամբողջ տարած են, այժմ մեկ սկիհ, մեկ խաչ, մեկ ժամարարի հին զգեստ, զույգ մի քշոց, մեկ բուրվառ, 9 մոմի աշտանակ, 6 սիճայե, 4 սեղանի ծածկոց։

Զորեքշաբթի ժամ երեքին վանքեն ելնելով Եկումի գեղն եկանք, 39 տուն բնակիչ կա գեղի մեջ՝ տասն տուն հայք, իսկ 29 տուն այլազգի, եկեղեցի և քահանա չկա, հին եկեղեցվո ավերակներ և ընդարձակ գերեզմանատուն կա, սույն գեղի ժողովուրդ գաղթած են։

Պատժվան գյուղ 1 ժամ հեռի է, 70 տուն բնակիչ ունի, 10 տուն հայք, իսկ 60 տունք կարմիր գլուխ[43], երեք խորան սուրբ Աստվածածնի եկեղեցվո ավերակ տեսանք, որ մեծաշեն եկեղեցի մի է, կերևի Բագրատունյաց ժամանակին է շինված։ Գերեզմանատան մեջ կա մատուռ մի, որ կանվանի Կարմիր վանք։

Երկու Բասեն 30 հայոց գյուղ կա, որոց ամբողջ տուներ 820 տուն կհաշվին։

Քեոփի ըսված գյուղ հասնելով մեկ ժամ հանգիստ առանք, բնակիչք 25 տուն ամբողջ հայ են, ունին մեկ եկեղեցի, երկու քահանա՝ տեր Իսրայել և տեր Հովհաննես, որ կոշտ, անկիրթ, անհնազանդ մին է, ոչ միայն հայք գանգատ անեն վրան, այլ տաճիկներն անգամ կգանգատին վրան։

Քեոփի գյուղեն մեկնելով հասանք 'ի կամուրջ Երասխի, տեսանք զխոյակապ շինված կամրջին յոթն աչքով շինված, մեկ աչք ջուր տարած լինելով կնորոգեին։ Տարած աչք ոչ թե կշինեին, այլ լեցնելով կարկատան կընեին, այս կամրջի շենք տեսնող հայոց մեծություն և

հարստություն իսկույն միտք կբերե։ Մեծաշեն հայեր դրախտաբուխ Երասխի վրա յոթնակամար կամուրջ մի շինած են, որ հեռավոր Հայաստանի պարծանքն է, հազար տարվան հնություն կկարծվի, շինողի անուն չգտանք կամուրջի վրա, սակայն նորոգողի անուն գտանք։ Տիմոթեոս վարդապետ յոթն տարի առաջ քարի վրա սույն արձանագրություն տեսնալով օրինակած էր՝ «Ի Հայոց հաստատեալ կամուրջս նորոգեաց Մագիստրոս ընդ վանուց սուրբ Աստուածածնի և ընդ դղեկին դարունայ թիւ ՉՃԹ (=1160)»։

Այս Բասենք Մագիստրոսի կալված է եղեր, ուստի թե բերդեր, թե կամուրջներ, թե վանքեր և թե եկեղեցիք ինքն շինած և նորոգած է։ Կամրջի հիանալի տեսք դիտելեն զկնի անցանք Երասխա միջեն, մեր ձիանք, ըստ որում ամենք Հայաստանի ձիանք էին, մեզ դոգ թե ավելի ուրախացան Երասխի ջրի մեջ մտնալով, կշտապինդ խմեցին ջուր և զովացան, ես ձիու ջուր խմած միջոցին կցանկայի ջուր առնուլ և խմել, բայց ձեռքս ջրին չհասավ, սկսեցի մայր Արաքսի երգել այնպիսի օրրտիվանդ և հայրենասեր սրտիվ և աշխուժիվ, որ գոգ է դրախտի մեջ հափշտակված է, ուրախութենեն չէի գիտեր ինչ ընել, կուզեի ձիով երկար կենալ գետի մեջ, ակամա ձին հանդարտ քշելով ելա Երասխի արևելյան ափունք, ձիեն իջա, ձեռքս երեսս լվացի մաքուր Երասխի մեջ, համբուրեցի դրախտի ջուրն և յոթն անգամ ափովս խմեցի այն դրախտեն եկած սառնորակ ջուր։

Երասխին եղերք Աղան գյուղ գնացինք, որ տաս րոպե հեռու Արաքսի արևելյան ափանց վրա ունի յուր սքանչելի դիրք։ Այս գյուղ տեսնող կնկատե, հայոց ժամանակ որչափ մեծ և երևելի քաղաք եղած է, ընդարձակ գերեզմանատուն ունի, որս մեջ քարաշեն մատուռ մի կա մյուս գյուղից գերեզմանատանց պես։

Եաղան գյուղ ունի 70 տուն բնակիչ՝ 10 տուն այլազգի, իսկ 60՝ հայք, ունին մի եկեղեցի և մի քահանա՝ տեր Մկրտիչ, որ երբեք գիր գրել չգիտեր, քահանայության անուն, կերպարանք միայն ունի, իսկ քահանայական կոչումեն և գիտութենեն բավական հեռի է։

Սույն գյուղի մեջ կանոնավոր թաղական խորհուրդ կազմեցինք՝ յոթն հոգիե բաղկացյալ, Վերին Բասենի քեհյայք և քահանայք և համբայք[44] ժողովելով երեսփոխան ընտրելու ցանկ պատրաստեցինք, ընդհանուր վիճակին վերաբերյալ խրատներ և հրահանգներ տվինք, պատվիրեցինք, որ բոլոր գյուղորեից մեջ դպրոց բանան և արգելեցինք պաշլիխի չար սովորություն։ Այս գյուղ կոչեցինք Գոմաձորի տեր Հարությունի[ն], որ բողոքականության հակամետելով բավական գայթակղության պատճառ եղած էր թե Գոմաձորու և թե Բասենու ժողովրդոց։ Հույժ երկար և ազդու խոսքերով համոզեցինք զինքն, որ հայոց եկեղեցվո քաղցր զրկեն չհեռանա և օտարին հարելով եկեղեցվոյն և ազգին վնաս և արատ չբերե, սակավ ինչ համոզեցավ, ուստի հետերնիս առնելով Գոմաձոր՝ յուրյանց գյուղ բերինք, ուրբաթ երեկո նորեն կոչելով երկար հորդորներ տվինք իրեն։ Այս քահանան բոլոր Բասենու քահանայից մեջ գիտնականի հռչակ ունենալով, ճարտար և լեզվանի գոլով կրնա շատ մարդոց գաղափար պղտորել, ուստի բոլոր ջանք 'ի գործ դրինք այս գայթակղեցուցիչն քահանայն համոզել, կերևի թե այս մարդ յուր սաստիկ նախանձեն և մելամաղձոտ բնությունեն և իր սաստիկ ծուլությունեն այս դիրք բռնած է, 100 զուրուշ ամսական կստանա ամերիկացի միսիոնարներեն և տասնի չափ տղայք կկարդացնե։

Զորագյուղ 60 տուն բնակիչ ունի, ամենք հայ են, որոցմե երեք տուն իբրև թե բողոքական կհաշվին, այս գյուղի մեջ կա մի փայտաշեն եկեղեցի, մի ծերունի քահանա՝ տեր Պետրոս, պարզ և միամիտ մարդ մի, որ խիստ կցավի զտեր Հարությունի գործոց վրա։

Շաբաթ օր հանդիպեցանք Թոտավիրան գյուղ, սահմանադրություն գործադրելով 5 մարդ թաղական խորհրդոց անդամ ընտրեցինք, այս գյուղ 6 ժամ հեռի է 'ի Դարունա, ամբողջ 24 տուն բնակիչ ունի, 12 տուն՝ հայք և 12 տուն՝ տաճիկք, 3 տուն բողոքական կա, սոցա խարդախիչն է Զորագյուղի տեր Հարություն, որ փարախի մը մեջ նստելով ավետարան միայն դաս կուտա, իսկ Հայոց պատմություն՝ երբեք։ Զորագյուղի քահանայն և թաղականք 'ի միասին և Թարբանդի տեր Մարտիրոս ընդ նոսին Թոտավիրան գյուղի տգետ բողոքականներ սիրով հորդորեցինք, որ երբեք յուրյանց հայրենի եկեղեցիեն և ազգային միութենեն չբաժանվին, կհուսամք, որ մեր հորդորներ մեծ տպավորություն ըրավ նոցա սրտի վրա և քիչ օրեն պիտի տեսնամք զանոնք մեր մայրենի եկեղեցվո գիրկ, զի տեր Հարություն երաշխավորեց այսպես անել։

Թոտավիրան կա մի եկեղեցի, փայտաշեն և մի քահանա՝ անուն Ամբակում, որ անբան կոչելը ավելի արժանի է, քան Ամբակում, զի վերացման խաչի նավակատյաց շաբաթ և կիրակի օր եկեղեցին և ժողովուրդ թող տալով գնացած էր 'ի Սողանլու՝ փայտ բերելը, 3 տուն ժողովուրդ այս անբան Ամբակումի տգիտութենեն և անշահացողութենեն բողոքական եղած են։ Ցավալի է տեսնալ տգետ ժողովուրդ մատնված այսպիսի տգետ քահանայի ձեռք, այս է կուր կարի առաջնորդատեղն, հայեր դպրոց չունին։

Յուզվիրան գյուղ 6 ժամ հեռ 'ի Դարունա, 35 տուն ժողովուրդ

կա, 1 տուն տաճիկ կա, փայտաշեն եկեղեցի մի կա, որ շինած է Համտար Գրիգորյան։ Այս մարդ եկեղեցասեր և ազգասեր, բավական հարբստությամբ փայլած լինելով՝ նենգամիտ տաճկաց նախանձ շարժած է յուր վրա. Արևելյան պատերազմի ժամանակ Ալաշկերտու Մահմադ պեյեն սպանված է, այն Մահմադ պեյն, որն որ Ուչքիլիսայի առաջնորդ Սիմեոն վարդապետ սպանել տվավ։ Սույն գյուղի մեջ ձմռան միջոցին Գալուստյան տիրացու Հովհաննես տասն տղա կկարդացնե։ Մի քահանա կա գյուղ՝ անուն տեր Ղազար, 30 տարի ձեռնադրված է, սակայն 15 օրվա նորընծայի չափ անվարժություն ունի եկեղեցական երգեցողության և պաշտոնակատարության։

Վերացման խաչի կիրակին սույն գյուղի սուրբ Հակոբ եկեղեցվոյն մեջ Թարբանդի տեր Մարտիրոսյանին պատարագել տվինք, վասնզի կասկածեցի, թե գյուղի տեր Ղազար պատարագել մոռացած լինի, խաչի տոն մի կատարեցինք, որ հավիտյան մտքես չի պետոր ելնե, երեք տիրացու ունեինք, երկու պատանի ընթերցող, ես, տեր Մարտիրոս, տեր Եսայի և տեր Ղազար, 9 ժողովուրդ, որոնցմենե երեք պառավ կին, շարականներ՝ ամեն մեկ յուր ձայնի չափով և յուր ուզած եղանակով կերգեր և տեսնալով, թե ինձմե գերազանց երաժիշտ չկա, օրհնություն և հարց հափշտակեցի և երգեցի իմ ուզած եղանակովս։ Ամեն երգեր և շարականներ ջարդ ու կտոր անելով հասանք 'ի մինչև անդաստան, անդաստանի նկարագրություն մնասցե վաղվան ավուր ընթերցման։

Վարագույր քաշվեցավ, պատարագիչ սեղանի վրա զգեստավորեցավ, տիրացուք պարսից եղանակավ երկար խորհուրդ խորին սկսեցին, վարագույր բացվեցավ, պատարագիչն երևեցավ, շապիկ կարճ ծնկներեն վեր, փորստար կարճ մինչև ծունկեր, ժամարարի ոտք հողաթափ չկար, ձեռք երկաթի սև և ավելի սև բուրվառ, քշոցին նմանություն չեմ կարող գտնալ, վերաբերումի[45] ժամանակ բուրվառի մեջ ոչ կրակ կար և ոչ խունկ, ուստի տեր Եսայիի խղճմտանքին դպչելով վար իջավ, վերաբերում չբրավ, Ղազար տերտերն ելավ շտապելով ընծան պատարագչին տարավ, սույն զգալի թերությունք տեսնալով փոխանակ զայրանալու և բարկանալու, սիրտս կարեկցությամբ լեցված մտածեցի, թե որչափ մեզ այսպես անկանոն կթվի այսավուր ժամերգություն, սակայն խեղճ գյուղացիք յուրյանց կենաց մեջ մի անգամ է, որ փառավոր ժամերգություն և պատարագ կը տեսնան, քանզի հարյուր տարին անգամ հազիվ թե եպիսկոպոս մի, երկու քահանայով մեկ այսպես աննշան գյուղ գտնվի, մեղք և մեղադրանք ազգի եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից, նամանավանդ կաթողիկոսին և պատրիարքին և նշանավոր աշխարհականաց, որք յուրյանց անձնական և քաղաքական փառքեր նայելով, հազարավոր եկեղեցիք և գյուղացի ժողովուրդ մխիթարութենե և փառավորութենե զրկած են, ամեն մարդ կվկայե, թե երբեք զմեզ հարցանող չէ եղեր, վարդապետք, քահանայք կշրջին միայն ողորմություն խնդրելու, ուրիշ կարգադրության չեն նայեր, ուստի որ գյուղ և որ եկեղեցին որ կմտնայինք, խեղճ ժողովուրդ գիտնալով, թե ժողովք ընելու կամ դրամ հավաքելո գնացած եմք, ուստի ոչ ՝եր կանչած ժամանակ առ մեզ կուգային և ոչ եկեղեցի գնացած միջոցին եկեղեցի կուզեին մտնալ, վասնզի բնավ չէին կրնար հավատալ, թե առանց բան պահանջելո կհեռանամք գյուղեն, վասնորո, երբ կտեսնային, թե առանց դրամ պահանջելո գյուղեն կմեկնինք, շատեր անհավատալի կերպիվ շնորհակալ կլինեին և շատեր կասեին, թե կրկին անգամ կվերադառնա և կպահանջե, չէ անհնար է, որ կարգավոր մարդ գա գյուղ և առանց աջհամբույր առնելու երթա։

Սույն գյուղի մեջ սահմանադրություն գործադրելով, հինգ հոգի թաղական խորհուրդ ընտրեցինք։ Գյուղի դիրք Բասենի մյուս գյուղերեից գրից նման գեղեցկադիր է, կես ժամ հեռի է Երասխի ափունքեն, ուստի Մանուկ քահանան ետ առավոտյան մեզի Երասխի խոշոր ձուկեն կերցուց, որ համեղությամբ և փափկությամբ բոլոր գետերու ձրկներեն կգերազանցի, երբեք ձկան հոտ չունի այս չնար ձուկ, որ մինչև երկու-երեք կանգուն կմեծնա։

Երկուշաբթի, սուրբ խաչի մեռելոց օր, հասանք Ալիճահրակ, 10 ժամ հեռի 'ի Դարոնա, կես ժամ հեռի Արաքսի արևելյան ափունքեն, ձորակի մի մեջ, բլուրի մի վրա, շուրջ բոլորիս շինված է գյուղի տուներ, երեք չորս ջրաղաց դարձնելո ջուր արևելից ձորեն գյուղ կիջնա, ջրաղացներ կգարձունե, գյուղացիք սույն առողջարար և թեթև ջրեն կխմեն։ Հայոց գերեզմանատուն բլրի գագաթին վրա գեղեցիկ դիրք մի ունի, տապանաքարերու շատերուն վրա գիր չկա, քիչերու վրա անկանոն գրված ք կա, բայց խաչվեմներ և տապանաքարեր կան, որ բավական արվեստիվ կերտված են, մի եղերական գրված կար մի տապանաքարի վրա, մի քահանայի որդի հարսանյաց հանդես և ուրախություն կկատարե, թագավոր կկոչվի և յուր թագավորության ժամանակ, առաքաստի երեկո առաքաստ չմտած կմեռանի։ Այս գերեզմանատան պես Բասենու գյուղեր մեծամեծ գերեզմանատունք կա, բայց արձանագիրք սակավք են և անվերծանելիք։

Ալիճահրակ 100 տուն բնակիչ ունի։ Հայք ունին մի հնաշեն եկեղեցի՝ Աստվածածին անվամբ, չորս քահանայք՝ տեր Հարություն, տեր Հակոբ, տեր Սուքիաս, տեր Մկրտիչ։ Եկեղեցվո կարգապաշտություն կատարյալ գյուղացի և ռամկական է, երգեցողություն և երաժշտություն անարվեստ, խիստ պարզ և նահապետական է, ավագ քահանա տեր Հարություն պատարագիչ էր, զգեստ հագնելո միջոցին երեք խորանի վարագույր մեկեն քաշելով սեղաններ ծածկեց, մեր պաշի քեշիշ[46] բարկանալով երկու սեղանի վարագույր բաց արավ, մեկ գոց թողուց, որո ետև զգեստավորեցավ տեր Հարություն, սույն ժամարարին ոտք դարձյալ հողաթափ չկար, թափուր իջած միջոցին քահանայն սև և մրոտ բուրվառ աջ ձեռք, նույնպես մրոտ սև գանձանակ ձախ ձեռք ժողովրդյան մեջ իջավ, վարի դպրաց և վերի սարկավագաց ձայներ երբեք ոչ իրարու աստիճանին և ոչ եղանակին կհարմոնեին։

Այս գլխավոր գյուղի մեջ դարձյալ դպրոց չկա, քան մի տիրացու փարախներու մեջ սորված են հասարակ կարդալ, մի մշեցի տիրացուն շարականի քանի ձայներ և ժամագրքի քանի երգեր գիտեն։ Ամենայն կարեկցության արժանի է այս և բոլոր Բասենի դպրաց վիճակ, վասնզի ուսուցիչ և վարժապետ չունին, քահանայից մեծ մասն ծույլ, պղիրկ և անընթերցասեր։ Երեք քառորդ քարոզ խոսեցա դպրոց բանալու վրա աստվածապաշտության և հայրենասիրության վրա, խիստ պատվերներ և հորդորներ տվի դպրոց բանալու և հարատևելու։ Սույն գյուղի բնակիչք Շահ Աբասի ժամանակի երկյուղով պաշարված ժողովուրդ մի էր, ի ցավ ինչպես Բասենու ժողովրդոց գլխավոր հատկություն է պարզամտություն, սույն այս պարզություն քանի աստիճան ավելի է այս գյուղացոց վրա։ Ամենք առհասարակ երկրագործ են, բավական ընդարձակ սահման ունին, հող սեփական կալված է հայոց և գյուղացոց, հողի մեծ մասն անջրդի է։

Հոռոմներ քարաշեն նորակերտ եկեղեցի մի ունին, սակայն քահանա չունին, կաթոլիկք ամուսնացյալ երիտասարդ քահանա մի ունին, եկեղեցի չունին։ Ցորեկ ժամ վեցին մեր օթևանած տան մերձ ջրաղացի նավերու գլուխ ջրի վրա ուռենյաց ներքև նստելով տխրագին սրտիվ մայր Արաքսի կերգեի, մշեցի երիտասարդ մի, ծոց մի ձմերուկ դրած, եկավ, աջն առավ, հայր սուրբ, քեզ զուրպան, ես մշեցի եմ, Ագրակ գյուղացի, հայրս թանկանության ժամանակ եկավ այս գյուղ, մեզ հետ բերավ, հայրս ամեն օր զմեզի 'ի Մուշ մեր Պուլանխ տանել կուզեր, յոթ օր առաջ այս գյուղի մեջ մեռավ, յուր սրտի հասրաթին չհասավ։ Ա՜հ, աստված լուսավորե հորդ հոգին ...եուս միջոցին, նա չա-

խուով ձմերուկ կեղվելով կասեր, հայր սուրբ քեզ մատաղ, կե՛ր.—դու կեր որդի, մասն-մասն տվավ աղաչելով, և ես կերա, մեր մշեցի եղբոր ձմերուկ, կատարյալ սրտիվ մեռելոցի օրով հոգվոց ասի, նորա մանուկ հանգուցյալ հոր, ախ քաշելով աջս առավ և գնաց։

Երկուշաբթի ժամ իններին Ալիճահրակեն ուղի անկանք դեպ 'ի Դալի Պապա գյուղ, որ մի ժամ հեռի է Ալիճահրակեն և 'ի Դարունա 10 ժամ, ճանապարհին տեր Հարություն ալիճահրակցի և տեր Մարտիրոս Թարթոնի գոլով քաջ ձիավոր, ձի խաղցնելով զմիմյանս բրածեծ առնեին, աստ էր տեսանել երկու քահանայից խեղկատակաբար ձիարշավ պնդել զհետ միմյանց դարձ-ընդդարձ դառնիլ 'ի վերա միմյանց, հարկանել զմիմյանս, մենամարտություն, որ նման էր մենամարտության Տրդատի և Գետռեհոնի։ Բայց ի տեղի զհնուց բիր էր 'ի ձեռին երկոցունց, տեր Հարություն 70-ամյա ծերունին քաջաբար խիզախեր, բայց հետո տեսնելով զքաջագործություն տեր Մարտիրոսին, որ մականվամբ Մզրախ կոչվեր, փախստական գնաց առաջի նորա և մինչև ի մուտ 'ի գյուղն Դալի Պապա և զերծավ 'ի ձեռաց նորա, ընդ սոսա էր Կեստրացի տեր Եսայի, սակայն բիր չունենալուն 'ի ձեռին, չկարեր փոխանակ բրածեծից երկու մենամարտ քահանայից փոխարինել, իսկ մեր հայեցյալ 'ի կատակս խիզախողացն և որք ընդ մեզ էին ուղեկիցք այնչափ բարձրաձայն ծիծաղեցին, մինչև հասնել ծիծաղ նոցա 'ի հուշաթափումն։

Այսպես մոտենալով 'ի Դալի Պապա, մտաք ի գյուղն ժամ 10-ին, եկեղեցի գնացինք, քարոզ խոսեցանք, հորդորեցինք զժողովուրդն դեպ 'ի աստվածասիրություն և եղբայրասիրություն, ընաբան ունեցանք մեզ այն ավուր առավոտյան ճաշու ավետարանեն՝ «Այնպես սիրեայ աստուած զաշխարհ մինչև զորդին իւր միածին, ետ զի մերկիսցի աշխարհ հուաւ»։ Խիստ պատվեր տվի դպրոց բանալու և պաշխ իսպառ վերացանելու և վերջացուցի քարոզ։

Երեկո, ժամ երկոքին, սահմանադրություն գործադրեցինք։ 7 անձինք բացարձակ առավելությամբ թաղական ընտրվեցան։

Դալի Պապա 50 տուն բնակիչ ունի, բաց 'ի մի տուն տաճկի՝ ամենք հայ են, մի փայտաշեն եկեղեցի ունին՝ Աստվածածին անվամբ, երեք քահանա կա՝ տեր Սամուել, տեր Մկրտիչ և տեր մահտեսի Պողոս։ Դպրոց չունին և քահանայք ծույլ գոլով տղայոց հասարակ կարդալ սորվեցուցած չեն։ Ժողովուրդ բոլորովին անհոգ յուրյանց տղայոց կրթության և դաստիարակության մասին։

Գյուղի հողեր հայոց ձեռքն են, դեռ թափու եղած չէ, ամենք երկ-

գործ են։ Հայոց սրբոց գերեզման մի կա սոյն գյուղի մեջ, որ ասկն 80 տարի առաջ տաճիկներ գրավելով անուն դրած են Դալի Պապա Մեզերի[47], մատուռ մի տաճկական ձևով շինած են վրա, Ալի էֆենտին կը պահե սույն թաքսն[48], 12 հազար ղուրուշ վախըֆ[49] եկամուտ ունի Ալի էֆենտին։

Դալի Պապա ընդարձակ ձորակիմ տափարակի վրա շինված է, տեսք բավական հաճելի և սրտաբաց է, պարսից կարավան սոյն գեղ կհանդիպե, գյուղի հարուստներ կարավանի անցորդաց համար խաներ շինած են, ինչպես մյուս ճանապարհի վրա եղած հայոց և տաճկաց գյուղացիք, տասն խան կա Դալի Պապայի մեջ, հայք բավական կշահվին թե անցորդներեն և թե երկրագործութենե, թե սույն գյուղացիք և թե ընդհանուր բասենցիք հնե բարի և խիստ բարի սովորություն մի ունին, այս է, որ երբեք օտար երկիր չեն պանդխտեր, այլ թե հարուստ և աղքատ յուրյանց վաստակով կրավականանան և յուրյանց բնիկ երկրի մեջ կմնան։ Բասենու մեջ երբեք բժիշկ չկա, որեւիցե տեսակ հիվանդություն առանց դարմանի և բժշկի կմնա, հիվանդ եթե ինքնիրեն բժշկություն գտնա, կազատի յուր ցավեն, եթե ոչ կերթա 'ի գերեզման և ամեն տեսակ հիվանդություններե կազատի։ Գյուղերու մեջ պայտար և անասնո բժիշկ կա, բայց մարդոց չկա, մարդիկ ընդհանրապես առողջ են, 70 և 80 և տեղիս-տեղիս 100 տարո, 120 մարդիկ կգտնվին։ Բասենցիք հանդերձի կողմանե և կերակուրի կողմանե բավականասեր են, հպարտությենե և փառասիրությենե հեռի լինելով շատ զարդարվել չեն սիրեր, կանայք և օրիորդք Բաղիշո կարմիր կտավով կզարդարվին, խղճուկ բնավորություն ունին և երկչոտ են։ Մարդիկ կապույտ կտավ կհագնին և քահյաք կապուտ չուխայե մի սալթա, կապուտ կտավե կամ կապուտ շալե շալվար։

Սեպտեմբեր 19 հասաք 'ի Տոսի. 10 ժամ հեռի 'ի Դարունո, 20 տուն բնակիչ կա, մի փայտաշեն եկեղեցի՝ սուրբ Հակոբ անվամբ, երկու քահանա, տեր Սահակ, տեր Ղազար, սոյն գյուղի մեջ դպրոց չկա։ Անվանի տանուտեր մի կա սույն գյուղի մեջ՝ անուն տիրացու Եղո քահիյա, որ բավական հարուստ կենցաղագետ և ազդեցության տեր մարդ է։

Ջրաշեն գյուղ 11 ժամ հեռի է 'ի Դարունո, 50 տուն բնակիչ ունի, 15 տուն տաճիկ, 14 հայ, 21 տուն կաթոլիկ, մի փայտաշեն եկեղեցի, մի քահանա՝ տեր Սիմոն։ Այս գյուղ ևս դպրոց չկա։ Կաթոլիկաց մեջ Պետրո անվան անդրալեռնական մի կա, որ զհայեր նեղելով և հարբստահարելով 15—16 տուն գյուղեն փախուցեր և նոցա արտորայք գրավեր է։

Փորիկ գյուղ տասն տուն հայք կան ամենքն 'ի միասին Հաճի Նուրի պեկին ծառայություն կընեն, վերջին աղքատության և խեղճության մեջ են, սույն գյուղ ճամբայի վրա լինելով տեսանք հայոց կանանց, աղջկանց և մարդկանց հետին ծառայություն և ցավալի կացություն։

Կարաքլիսա 13 ժամ հեռի է ի Դարունա, 30 տուն բնակիչ կա, 15 տուն տաճիկ, 15 տուն հայ, մի եկեղեցի փայտաշեն և մի քահանա՝ տեր Մարտիրոս։ Այս գեղի մեջ ևս դպրոց չկա։

Բասենցիք ընդհանրապես ոչ զինի և ոչ օղի գործածություն չունին, արբեցողություն չեն սիրեր, սուրճ կգործածեն և հյուրեր սուրճով կպատվեն։ Բասենցիք մեծ մասամբ զենք ունին և զենքի գործածություն, լավ գիտեն, ձի կպահեն և լավ ձիավորներ ունին, մանավանդ ներքին բասենցիք քաջ մարդիկ և քաջ զենք գործածող են։

Բասենու սահմանակից են Զիլանցի քուրտեր, որք երեք հազար տուն կհաշվին, սոքա քանի խմբակներու անուն ունին՝ Քյուրտկանցիք, Զաքամցիք, Մոտոնցիք, Տլխերանցիք, Խլանցիք, Ալիանցիք, Մտորեցիք, Ճամալտանցիք, Սվետանցիք, Կասկանցիք, Հախապանցիք, Կուճմանցիք։ Բոլոր զիլանցոց աղան Ահմադ աղան է, որ պետությենեն գափճիպաշության[50] աստիճան ունի, Ճամալտացվոց աղան[է] Մախսուտ աղան, որ Գափճիպաշության աստիճան ունի, կասկանցվոց աղան Ռաշիդ պեյն է։ Երեքին աղայքս գայմակամության պաշտոն կվարեն։ Զիլանցիք ամեն ալ վրանաբնակ և լեռնաբնակ են, ոչխար շատ ունին, մինչև 20—30 հազարի կհաշվին, լավ ձիաներ կպահեն, կով, եզ, ուղտ և ոչխար կդարմանեն։ Տերության զորք չեն տար, ամենք ալ զենք ունին և զենք կգործածեն, երբեք երկրագործություն չունին, միայն գլխավոր աղաներ ագարակներ ունին, թուրք մշակաց վարել, ցանել կուտան։ Թեև քուրտեր ընդհանրապես ավազակ են, սակայն գլխավոր ավազակներ ունին, որք միտք դրած տեղերեն անվրեպ կարող են ավազակություն ընել։

Զիլանցիք կբնակին Սողանլու լեռներեն մինչև Ախուրյան գետի եզերք, այն է՝ Արփաչայի քովեր։ Երկու գլխավոր շեխեր և կարդացող ֆախիներ[51] ունին։ Զիլանցիք հայոց հետ լավ կվարվին, հայոց հետ բարեկամությամբ առևտուր կընեն, շաֆի[52] են և հայոց մորթած միս չեն ուտեր, բայց հայերեն դողցածներ հալալ համարելով իրենց մեջոց հոգույն կուտան։ Շատեր կան, որ աղոթել և մահմեդականություն չգիտեն, բայց 30 օր ծոմ կպահեն։

Սողանլուի միջի ամայի և ավերակ վանքեր կան 1. սբ. Խաչի վանք, եկեղեցին խոնարհած է, Վասիլ կայսր խաչափայտ պարսից կողմ դար-

ձուցած միջոցին այս վանք քանի օր պահած լինելով վանքի անուն սուրբ Խաչ կոչած է։ 2. Կարմիր վանք եկեղեցին ողջ է, միայն կաթողիկեն խոնարհած է, որո մեջ այժմ գիլանցի քուրտեր կբնակին։ 3. Կափի քիլիսա[53], վանքի ավերակի մեջ չերքեզ գաղթականք կբնակին։ 4. Կոշա քիլիսա ավերակի մեջ չերքեզք կբնակին, վանք կիսավեր[է]։ 5. Կարակուռութ կիսավեր վանք, որո մեջ դարձյալ գաղթականք բնակին։ 6. Սովասուղի վանք գաղթականաց բնակարան է եղեր։ 7. Յուղնոցի վանք, Սողանլուի անտառի մեջ, որո բոլոր շինուվածքք մինչև ցայսօր կանգուն կա։ Չերքեզաց գլխավոր Մովսես պեյ սույնս կանգուն վանք յուր բնակարան դարձուցած է և ընտանյոք և ծառայուք կբնակի վանքին մեջ. ավաղ փառաց հայոց։ 8. Քիփ քիլիսա կիսավեր վանք, ամայության մեջ։ 9. Եգի քիլիսա, յոթ կաթողիկե ունենալուն համար կոչված է, անտառի մեջ ավերակ, դարձյալ գաղթական չերքեզք կբնակին մեջ։ 10. Ալաքիլիսա, շինվածք մեկ քար սև և մեկ սպիտակ շինելուն համար կոչված է։ Պատեր կանգուն է վանքին և եկեղեցվոյն, քարտեր մարագ դարձուցնելով մեջ խառ և հարդ դրած են։ 11. Հոփերանու վանք կիսավեր, 30 տուն քուրտ կբնակի, եկեղեցին և վանք մարագ և անասնոց փարախ դարձուցած են։ Բազրատունյաց թագավորաց ժամանակ շինված ամենք, սրբատաշ քարերով և խիստ գեղեցիկ և խոյակապ շինվածներ են։ Բասենցիք հորժամ անտառի մեջ փայտ բերելու երթալով կտեսնան այս վանքերու ամայի և կիսավեր շենքեր սրբավայրեր, տեղեր, որք ոչ թե բուսց բնակավայր եղած են, այլ չերքեզաց և քրտաց բնակարան դարձած են, կուլան, կողբան, կկոծին և սրտերեն արյան գետեր կվազեն, ամեն անցողաց և դարձողած կսկծունքին սրտիվ պատմելով, մարդու սիրտ անհնարին տրտմությամբ կլեցունեն։

Սեպտեմբեր 20 ժամ 7-ին Հասանք 'ի Պաշ գյուղ. 80 տուն բնակիչ ունի, 15 տուն կաթոլիկ են, իսկ մնացյալ բոլոր հայք են, մի փայտաշեն եկեղեցի ունին, անուն՝ Աստվածածին, 3 քահանայք՝ տեր Առաքել, տեր Սարգիս Մովսեսյան, տեր Սարգիս տեր Սարգսյան։ Դպրոց չունին, գյուղացիք քաջ մարդիկ են և լավ գենք գործածել գիտեն. տղայք 5—6—7 տարի առանց վարտիքի և առանց ոտնամանի են։

Պաշ գյուղ սահմանադրություն գործադրելով 8 հոգի թաղական խորհուրդ ընտրվեցան։ Սույն գյուղ ընդարձակ, գեղեցիկ հովտի մեջ ճանապարհի վրա շինված է, ընդարձակ հողի սահմաններ ունին, հողն մեծավ մասամբ անջրդի է և թափու չլինելով հող հայոց ձեռքն է։

Ներքին Բասեն 6 գյուղ. 1. Արմտլու 2. Պաշ գյուղ 3. Կարաքիլսա 4. Ճռասոն 5. Կարք 6. Տանամեր. սույն 6 գյուղի մեջ 180 տուն հայ

բնակիչ կա, 60 գյուղ տաճկաց և քրտաց կա ներքին Բասենու մեջ։ Տարեկան վերկին 66000 ղուրուշ թե հայոց և թե տաճկաց։ 20.000 ղուրուշ հայք կվճարեն, իսկ 46.000 ղուրուշ տաճիկք և քուրտք կվճարեն։

Արմտլու գյուղ ընդարձակ հովտի մեջ ունի յուր վայելուչ դիրք, 15 ժամ հեռի է 'ի Տարոնո, 40 տուն բնակիչ ունի, 2 տուն կաթոլիկ կա, իսկ մնացյալք հայ են։ Մի փայտաշեն եկեղեցի ունին՝ սուրբ Աստվածածին անունով, քահանա չունին։ Պաշ գյուղի տեր Սարգիս կհովվե ղժողովուրդն, դպրոց չունին։ Սույն Արմտլու գյուղեն 10 ժամ հեռի և Կաղզվանա 3 ժամ մերձ Վարդիհեր անուն վանք մի կա Վիշապաձոր կոչյալ տեղին։ Թաթուլո և Թումասի գերեզման սույն Վարդիհեր կոչեցյալ վանքի մեջ է, վերացման սուրբ խաչին, Վարագա սուրբ խաչին, Կարնո երկու Բասենու, Կարսա, Ալեքսանդրապոլու, Պայազտու, Ալաշկերտու հայ բնակիչներեն հազարավոր ուխտավորք ուխտի գուկան հիշյալ Վարդիհեր վանք և ջերմեռանդությամբ կհամբուրեն Թաթլո և Թումասի գերեզման և օրհնել կուտան, տարին սույն ուխտավորներ[են] 40—50 հազար ղուրուշի արդյունք կգոյանա։ Արդյունքներ Կաղզվանու և Կարավանքի գյուղի քահանայից ձեռք կմնա և կոչնչանա։

Վանք ամայության մեջ մնալով մեջ բնակիչ չունի, սակայն վանքի արտաքին պարիսպներ և եկեղեցին ողջ է, հին շենքեր ընկած է, սակայն առաջին ռուսաց պատերազմի ժամանակ նորոգված է։ Վանքի հողեր քրտեր յուրացնելով հողերու մեջ տուն շինած են, քուրտք կպատվեն սույն վանք և հրաշքներեն կվախնան։

Հասան-գալայի վանքի հետևի լեռներ, Քեռոփիքյոյի արևմտյան կողմեն Երաս[խ]ի արևմտյան լեռներ, որք արևմտյան հարավեն Արաքսի եզերքին հետ կերկարին դեպ 'ի հյուսիսային արևելք, տաճկերեն կգոչվին Կյավուր տաղի, Քեռոփիքյոյեն սկսած լեռներ, մինչև Հասանի Չախրպապա, կկոչի Կառկա Բաղսի, Չախրպապայեն սկսած լեռներ, մինչև Սողանլու, կկոչի Չախրպապա լեռներ։ Այս լեռներ Արաքսի եզերքի հետ դեպ արևելք կերկարի, մինչև կհասանի 'ի Կաղզվան։ Բասենու Եղան գյուղի արևելյան լեռանց քանի անուն կտրվի, երկճղի լեռ մի կա Եազանի արևելյան կողմ, բնակիչք կավանդեն, թե Նոյյան տապան անցած միջոցին այս լեռանց երկու ծայրից մեջ քիչ մի զգաց առնելով անցած 'ի գլուխ Այրարատ լեռան։ Բասենու բնակիչք թե գյուղորեից և թե լերանց և տեղիս հայերեն անուն և ավանդություն իսպառ մոռացած են և տաճկերեն անուններեն 'ի զատ ուրիշ ազգային անուն չգիտեն, սորա գլխավոր պատճառ ո՛չ ընդ ձեռամբ բռնավորաց նվաճվելն և ստրկանալն է, այլ գիր և դպրություն և ազգային պատմու-

թյուն խսպառ սոցա մեջեն անհետանալն է, զի երկու Բասենու մեջ, ոչ քահանայից մեջեն, ոչ տիրացուներեն և կարդացողներեն չգտա մեկ, որ հայոց պատմության և դպրության վրա փոքր-ինչ հմտություն կամ գոնե հարևանցի տեղեկություն ունենա, շատ ջանացի, շատ անգամ հարցրի, որ գեղերու, ձորերու, լեռներու և զանազան տեղաց անուններ հայերեն գտնալ, սակայն 'ի զուր աշխատեցա, ուստի լրջմտությամբ խելամուտ եղա, թե որչափ վնասակար է եղեր ազգին հայոց պատմություն և ազգային դպրություն չծավալել ընդհանուր գյուղացվոց մեջ։ Տեղյաց անուններ տաճկերեն գործածելով, քաղաքականության վերաբերյալ բառեր տաճկերեն գործածելով, հաշվի, առևտրական անուններ այլազգիներեն գործածելով լեզուն կխանգարի, սակայն Բասենու գյուղացիք հրաշյուք բավական մաքուր հայերեն կխոսին և գրեթե 10—20—30 բառի մեջ հազիվ թե մեկ այլազգի բառ կխառնեն, քրտերեն և պարսկերեն բառերեն խիստ քիչ կգործածեն, իսկ տաճկերեն հակամայիցս։ Լեզվի ընդհանուր գործածություն ճիշտ Կարնո քաղաքի և նորին գյուղորեից բնակչաց լեզուն է, բայի անցյալ ժամանակ միշտ է կվերջավորի, այն է՝ գնացել է, եկել է, տարել է։

Այս տարի հունիս ամսո մեջ թուրքի և հայոց գեղերեն 1000 սայլ տախտակցու կերան և շինվածքի փայտ տանել կուտան 'ի Կարին՝ մաքտապի հարպիա[54] շինելու, մեն մի սայլ փայտին և գերանին 60 ղուրուշ կորոշեն Կարնո կուսակալ և ժողովո անդամք, որ կընե 60.000 ղուրուշ։ Դրամ վճարելու մասին տոմսակ և ձեռագիր տված են գեղացվոց, սակայն մինչև ցայսօր դեռ և ոչ մի դրամ տված են և գուցե տալիք ևս չունին, ինչպես շատ անգամ դրամ արքունի գանձեն կելլե, բայց Կարնո ժողովականաց կոկորդ մնալով աղքատաց ձեռք չը հասնիր։ Կամուրջ շինելու համար թուրքերը[են] և հայերեն հազարավոր սայլ և բանվորներ տանելով, բանեցնելով և խոստանալով, թե 5 ղուրուշ պիտի վճարեն, սակայն մինչև ցայսօր շատերուն դրամ տրված չէ, դարձյալ սույն աշխատողաց վարձք արքունյաց գանձեն կտրվի, սակայն աղքատաց ձեռք չի հասներ։ Շինվածքի համար քիրեմ վառելու, սայլ և փայտ խիստ շատ տանելով գեղացվոց ոմանց դրամ տալու իլմիխապար[55] տված են և ոմանց չեն տված։

Կարինեն անցյալ տարի 500 լուծք տավարով զորք և թնդանոթ տանելով 'ի Կարս, ոչ իլմիխապար տված են և ոչ դրամ։ Անցյալ տարի բասենցիք 30.000 ղուրուշի փայտ գնելով տված են Քիուլուի կամուրջ շինելուն, իլմիխապար տված են կառավարության կողմանե դրամներ տալու, սակայն ցայսօր տված չեն։

Պասքևիչի ժամանակ Բասենու հայոց բնակչաց մեծ մասն թող տալով յուրյանց ձեռքի հողեր կգաղթեն 'ի Ռուսաստան, ռուսաց կառավարություն գնաց գաղթական հայոց տանց սեփական կալվածոց և հողերու գին օսմանյան կառավարութենեն առնելով գաղթականաց կվճարե, այժմ գաղթականաց տուրքի մեծ մասն հայ գյուղացիք և փոքր մասն թուրք և քուրտ գյուղացիք կվճարեն կառավարության։

Հասրաթ փաշայի օրով, երբ սուլթան մեճիտ խսպահեներ վերցնելով հողեր տերության տուրք վճարող և հողագործություն ընող գյուղացվոց վրա բաշխել ուզելով ծախու հանավ, սակայն Կարնո հ'ին սպահիք[56] Օսման պեյ, Սհիտ պեյ, Հաճի Նուրի պեյ 6—7 ամայի մնացած գյուղերու հողեր ծածուկ իրենց կանանց և որդվոց վրա դարձնելով, այժմ տիրած են գյուղերուն և հողերուն։ Հաճի Նուրի պեյի ձեռ ծածուկ թափի ըրած գեղեր են՝ Զարսակ, Փորիկ, Թանիշման, Փոսի դարա գյուղեր։ Եվ մյուս պեյեր ևս այսպես զեղեր և հողեր հափշտակելով երկրագործ գյուղացվոց ձեռք ըստ բավականին հող մնացած չէ։ Տերություն ապահովության վերդիլով բռնավորաց ձեռքեն հողն առավ, սակայն Մալուլի և Թափուի[57] օրենքով դարձյալ գեղի և հողի տեր եղած են սույն հին բռնավորներ և հինեն ավելի կնեղեն և կչարչարեն յուրյանց թափու ըրած գեղերու մեջ և դուրսի հայեր, վասնզի գյուղացիք որչափ տերության տուրք կվճարեն, այնչափ ևս դրամ վճարելու են այն հին բռնավորացն, որ նոցա ձեռք եղած հողեր կարողանամք ցանել և վարել։

Այս հողային հափշտակության մասին բասենցիք շատ անգամ կխորհին ընտանյոք հանդերձ գաղթական երթալ օտար աշխարհ և աղատիլ հարստահարողաց ձեռքեն։ Եթե հնար լինի պետության հին արձանագրությունք նայելով դայիտ հանել[58] գողցած հողերուն և նորեն ծախել, գյուղացիք չորս անգամ ավելի գնով ավելի կառնին և պետության գանձին մեծ շահ լինի[ի], զի նոքա առանց աճուրդի ծածուկ գրաված և առած են, առանց միջի գյուղացվոց և դրացի գյուղացվոց իմացնելու և հարցնելու, ինչպես որ պետության օրենքն կհրամայե, նախ միջի գյուղացվոց հրավիրել առնել, երկրորդ դրացի գյուղացիք հրավիրել, եթե սոքա գիր տան, թե մեզ չէ պիտո, ապա օտարաց և հեռավորաց ծախվի։ Վերոհիշյալ պեյեր Կարնո վիլայեթին անդամ լինելով ծածուկ առած և գիր շինած են, սակայն կերևի որ հետո իրենց ուզած պես տերության կանոնին համեմատ բերելով հաստատ գիր առած են կառավարութենեն, որովհետև թե պետության օրենք գիտեն և թե օրենք իրենց ձեռքն է։ Իսկ հայեր ո՛չ աղդեցություն ունին, ո՛չ օրինաց տեղյակ են և

ո՛չ բավական խելք ունին ապագայի վրա մտածելու, երբ խեղճության և անհոգության քնո մեջ կմնան, գողեր կգողանան 'ի գիշերի, երբ քանի տարիեն կարթնան, կտեսնան, որ բան բանին գնացած է։

Արևելյան պատերազմին հայ և թուրք գյուղացիք 44.000 զուրուշի ցորյան գարի և այլ ուտելիք տված են բանակին և ամբողջ դրամներ կառավարութենեն ստանալու հաստատ գիր ընդունած են։ Հայք և թուրքք շատ անգամ յուրյանց ստացական գրով Կարնո կուսակալաց ներկայացած և խնդրած են, բայց մինչև ցայսօր մեկ դրամ ընդունած չեն, կթվի Ռ. մշեցոց 3.700000 բեռ պահանջի պես բասենցվոց պահանջ արքունի գանձեն ելած է, բայց դարձյալ հափշտակողաց ձեռք մնալով գյուղացվոց ձեռք հասած չէ։ Մշեցվոց ձեռքեն խարդախներ իլմիխապսիներ (իլմիխապար—Հ. Պ.) խաբեությամբ հափշտակած են, սակայն բասենցվոց իլմիխապսի ձեռքներնին ըլլալով, եթե աշխատին, կարող են հիշյալ 44.000 զուրուշ առնուլ անպատճառ։

Բասենցիք մեծ անհոգություն ընելով բողոքած չեն չերքեզ գաղթականաց մասին, որք գալով բնակած են Սողանլուի անտառաց մեջ և մեծ նեղություն կուտան փայտ բերողաց և բնակած են հայոց ամայի վանքերու մեջ։ Ռուսաց կառավարություն դաշինք կռած էր ընդ օսմանցիս, որ գաղթականք սահմանազլխեն 150 ժամ հեռի բնակեին, Սողանլու 10 ժամ հազիվ թե հեռի է սահմանազլխեն, որուն համար հայք շբողոքելով պատճառ տված են յուրյանց այժմյան և ապագա նեղությանց։

Կառավարություն օրենդրած է արքունի պահակաց և հարկահանաց համար, երբ գյուղեր հանդիպեն տերության որևիցե գործով, յուրյանց ոչնչին և ձիաց ծախք պետք է վճարեն, ոտանավորին 1 գիշերսն 60 փարա, իսկ ձիավոր՝ 3 զուրուշ, սակայն այս օրենք պահակներ չեն պահեր, զի դարձյալ ըստ հին սովորության, կուտեն, կկերցունեն և առանց ինչ ծախք վճարելու կերթան, նույնպես վարձակալաց ծառաք, կամ ինքյանք գիշեր երթալով կամ մնալով գյուղացվոց տունեն կուտեն և դրամ չեն վճարեր։ Նույնպես տաճիկ և քուրտ անցորդներ առանց դրամ վճարելու կանցնին կերթան։ Սովորող այլազգիք և վարձակալք արդեն չեն ուզեր դրամ վճարել, գյուղացիք ևս կամ երկնչելով և հին սովորություն չմոռանալով դրամ չեն պահանջեր և կամ տեղիս-տեղիս երբեմն պահանջելով կամ ստացած չեն և կամ պահանջելու համար վնասի հանդիպած են, ուստի այլևս թող տված են հին սովորությամբ երթալ, քանզի փորձով իսկ կտեսնան, թե կառավարիչք ևս այսպիսի օրենքներ պահել տալո ոչ հոգ ունին և ոչ խստություն, այլ այսպիսի օրենք միայն օրենսդրքի մեջ կենալուն համար է։ Եթե գյուղացիք բողոքեն, հրամանագիր մի կուտան գյուղացվոց, առանց դրամի բան չտալ, բայց հետո ոչ կհարցանեն և ոչ վրեժխնդիր կլինին։

Սեպտեմբեր 25 Բասենու Արմտլու գյուղեն առավոտյան ժամ մեկին մեկնելով դեպ 'ի Վանանդա դաշտ դարձուցինք մեր ձիանց սանձ, երեք հոգի Արմտլուի քաջերեն և մի ևս ալիճահրակցի մեզ ճանապարհի առաջնորդ եղան. Աբրահամ քահանա, Մարկոս քահանայի եղբայր, Հոտիշ Վարդան և Գրիգոր։ Ժամ ու կես քարավեժ լեռներեն իջանք Արաքսի եզերք, գետն անցնելով, մոկացի Ատոմ նախարարի պես տիվանաց լինելով, խորանդունդ քարավեժ ձորերեն և լեռներեն, թողալով անցորդաց սովորական ճանապարհ, ավազակաց անծանոթ նեղ ճանապարհներեն Շեյիտ ըսված տեղ քրտաց վրանտեղյաց քերելով ժամ յոթին Սողանլուի լերանց ստորոտներեն անցանելով մուտ գործեցինք Վանանդա դաշտ, մինչև ժամ տասնեմեկ արագաղնաց լինելով հազիվ հասանք 'ի Պերնա։ Ինն ժամ ճանապարհի մեջ վեց եղնավոր և երեք ձիավոր քուրտ տեսանք, երկու երկյուղալի ձորակի մեջ իջանք, ձիանց խոտ տվինք և մեք հաց կերանք։ Մեկ մղոն հեռավորությամբ հայոց ավերակ վանքեր նշմարեցինք Հոփիրսն, Ալաքիլիսա 5—6 քրտաց գյուղեր տեսանք։ Մեր անցած լեռներ՝ Ալագազի կողեր, Արաքսի եզերքեն մինչև Հոփիրսն, մանավանդ լեռներ աշնան վերջ այնչափ զվարճալի, այնչափ խոտավետ, որ կարծես թե առանց քաղելու մարգագետին է։ Քրտաց բյուրավոր ոչխարք մինչև աշուն սույն լերանց մեջ արածացեր էին, սակայն այնպես կկարծվեր, թե երբեք անասնոց ոտք հոն տեղվանք հասած չէ։ Եթե աշունն այսպես, ապա գարուն որչափ սքանչելի է և դրախտի նման ամենագեղեցիկ, բայց, ավա՜ղ, զի սույն եղեմանման լերինք և հովիտք այժմ կբնակին քուրտեր և չերքեզներ, զի ամեն տեղ վասն ահի բռնավորաց և ավազակաց միշտ դաշտավայրեր կբնակին, ուր հողն լերինք և հովիտք այնչափ արգավանդ և խոտավետ չեն, իսկ բռնավորք և ավազակք և քուրտ ամենագեղեցիկ տեղեր, տիրքեր, լեռներ և հովիտներ բռնած են, որոց տեղեր բոլոր բովանդակ հայոց ավերակներ են, հայոց գերեզմանք, խոնարհած եկեղեցիք, կիսավեր վանքեր դեռ կան և կվկայեն։ Պասքևիչի ժամանակ դարձյալ այս ձորաբնակ և լեռնաբնակ հայք թող տալով յուրյանց եկեղեցիք և վանորայք, շինությունք և ընդարձակ երկիրներ գաղթած են 'ի Ռուսաստան, որոց բոլոր բովանդակ տեղեր քրտաց և չերքեզաց ձեռքն անցած է այժմ։ Կարսա Տերնա գյուղ, Կարսա հարավային կողմ 4 ժամ հեռի լեռնաձև դարևանդի արևմտյան կողմ ունի յուր դիրք, արևմտյան և հյու-

ախսային կողմեն կհայի Վանանդա ընդարձակ դաշտի վրա, ունի 35 տուն բնակիչ, 5 տաճիկ, իսկ 30 տուն հայք, մի փայտաշեն եկեղեցի՝ Գրիգոր սուրբ Լուսավորիչ անվամբ, 14 տարի առաջ շինված։ Մի երիտասարդ քահանա կա՝ անուն տեր Ավետիս, դպրոց չկա։

Սահմանադրություն գործադրելով 5 հոգի թաղական խորհրդո անդամ ընտրվեցան, առաջնորդք միշտ հորդորած են զգյուղացիս դպրոց բանալու, գյուղացիք միշտ յուրյանց երկրագործության ղբաղմունք պատճառաբանելով անտարբեր մնացած են այս մասին, մեք ևս շատին ավելի հորդոր կարդացինք և համոզեցինք. խոսք տվին բանալու։ Դպրոց բանալու դյուրին ոճն է Հայաստանի գյուղացվոց, ուսյալ քահանայք հասցնել իբրև հարկեցուցիչ պաշտոն վարժապետություն գյուղական քահանայից հանձնել, թե կրոնական և թե քաղաքական մասին այս ոճեն ավելի դյուրին և աղդօգուտ չկա, պետք է որ ամեն հայք իմ այս համոզման համաձայնին, քանզի խիստ երկար փորձով այս կետիս վրա կայացավ իմ վերջին համոզումս, եթե ազգ այս ընթացք չբռնե, մեծապես պիտի տուժվի և հետո պիտի զղջա։

Տերնա շրջագայք 12 գյուղ թյուրքման բնակիչներ կան, սոքա կարմիր գլուխ կկոչվին, կրոնքով Հաճի պեկթաշի[59] են, թլպատություն ունին, բայց լվացումն, աղոթք և ծոմ 7—3 օր, նամանավանդ մեր առաջավորաց պահք կպահեն հանուն սուրբ Սարգսի, հայոց վանքեր, եկեղեցիք չերմեռանդությամբ ուխտի կերթան, հայոց հետ սիրով և բարեկամությամբ կվարվին։ Սոքա յուրյանց կարդացողաց չալապի[60] կկոչեն, և ժողովուրդ մեծ հարգ և պատիվ կընծայեն չալապիներուն։

Պանկաղրում Կարսա Թաղթալու շորս գյուղեն, որք են՝ Պահրի Ահմատ, Պերնա, Չերմալի, Գոնի գեղի, 50 ղուրուշ է, Շիրակա գյուղերուն՝ 25 ղուրուշ, Կարսա Մուխաթան գյուղորեից վրա է։ Առաջնորդի պտղի կուտան գեղ գլուխ մեկ-երկու սոմար։ Կովու գլուխ մեկ թուլոտ յուղ (կարագ—Հ. Պ.), գեղ գլուխ 1—2—3 գլուխ պանիր, անտառի մերձ գյուղեր գեղ գլուխ 1—2—3 սայլ փայտ կուտան առաջնորդին՝ վառելու։ Հոգեբաժին կվճարեն 10—20, 30—40—50—60—70։ Բոլոր գյուղեր 45—50 գեղ կը հաշվին։

Պահրի Ահմատ գյուղ, որ Կարսա, հարավային արևմտյան կողմ, 3 ժամ հեռի 'ի Կարսա, 'ի Կարին երթալու ճանապարհի վրա, վայելուչ տեսք մի ունի, Կարսեն 'ի Կարին և Կարինեն 'ի Կարս երթևեկողք այս գյուղ կհանդիպին։ Գյուղացիք այլազգի ճամբորդներեն կնեղվին, որք ըստ հին սովորության յուրյանց, ո՛չ ուտելյաց և ո՛չ ձիանց դարմանաց ծախք շատ անգամ չեն վճարեր։ Սեպ. 23-ին Կարնո կուսակալ Սամի

փաշան գեպ 'ի Կարս երթալով սույն գյուղ հանդիպած էր, ուտելյաց մասին գյուղի պատվավոր Հովհաննես էֆենտին տված էր, մի գեր գառն, չորս հոխա յուղ, 12 կոտ գարի, որ 100 կընե, 60 ղուրուշ և յուղ և գառն կընե, սոցա փոխարեն մեծ կուսակալն, որ տերության օրինաց գործադրողն է, 100 զեղչելով 60 ղուրուշ կվճարե։ Սեպ. 26-ին մեր գյուղ իջնալեն երկու ժամ հետո կուսակալ Կարսեն վերադառնալով իջևանեցավ դարձյալ Հովհաննես էֆենտիին։ Ներկայացանք իրեն, բասեցոց վիճակ և հարստահարությունք պատմեցինք իրեն, թե ինչպես զիլանցի քրտերեն և մանավանդ գաղթական չերքեզներեն կնեղին խեղճ երկրագործներ, պատիպատ և անդոհացուցիչ պատասխաններ ընդունեցինք։ Անտառի վրա երկար և տաղտկացուցիչ պատմություն մի սկսեց, որ արտեն և Սողանլուի անտառեն երկար էր։ Տերություն այս մարդ ընդհանուր անտառաց տեսուչ ըներ ավելի լավ էր, քան թե մարդիկներ կառավարելու կողմնակալ։ Չմոռանաք հիշել, թե այժմյան կառավարչաց քաղաքականություն է, որ երբ առաջարկություն և խնդիր մի իրենց կամաց և ախորժակին հակառակ երևի, իսկույն բուն խնդրեն հեռու նյութի մը վրա կսկսին խոսել և կամ յուրյանց չունեցած մեծագործությունք իբրև ունեցած ներկայացողին կպատմեն, որ խոսքի թել անընդհատ կշարունակեն, որպեսզի ներկայացողն միջոց չունենա յուր առաջարկությունք ազդու կերպիվ խոսել և դարման պահանջել, մինչև որ դիմող ձանձրանա և կամ հասկանա, թե յուր մեծ չախորժիր յուր խոսքեր լսել և տրտմությամբ հեռանա երեսաց նորա։ Այսպես էր Սամի փաշայի անտառի պատմություն, սակայն մեք սուր տապորով մի անտառաբանություն նորա բերանեն կտրելով սկսեցինք ասել իրեն, թե մեր հայոց ամբողջ ժողովուրդ Փաստրմաճի խաշատուր էֆենտիի մասին վերջին ծայր տրտմությամբ վարակած և երկյուղիվ պաշարված, վանականոք, եկեղեցականոք և ժողովրդոք գաղթել կխորհին, եթե ոճրագործ չգտնվի և արժանավոր հատուցումն չլինի։ Պատասխանեց, թե Եվրոպայի մեջ, ինչպես գիտեք, կայսերաց վրա հրազեն կարձակեն, այս ևս պատահմունք է։ Ես թե առա, թե ոճրագործ ձեռք բերած են և տես այն պատճառավ թելիվ' ի Կարին սուզած են։ Եվրոպայի մեջ պատահածներ լսած եք, սակայն Տաճկաստանի մեջ այս դեպք նոր է, մեծ հռչակավոր, նշան կրող և տերության մեծ օգուտ և ծառայություն մատուցանող մեկ ժամ 12-քին հրապարակի մեջ բազմության մեջ սպանվել չէինք տեսեր։ Այս գործ գաղտնի ընկերության մի գործ է, քաղաքին երևելյաց դրդում կա սորա մեջ, խան հրդեհ տալու միջոցին խորհած էին սպանել և մեք հրդեհի գիշեր սույն փաշայի հետ ներկա էինք, բայց չէին հաջողեր.

պատճառ չգիտեմ ես, այդ թե խորհած են, կամ գաղտնի ընկերություն կա, սակայն կեցիր քեզ պատմեմ, թե ինչպես զարնված է և սկսեց երկար պատմություն, թե որ կերպիվ ոճրագործ յուր գործ առաջ տարած էր, հիշեց թե լսելուն պես թե որչափ ջանք ի գործ դրած էր ոճրագործ գտնալ, սակայն չէր կրցեր, այժմ ահա Կումանտո փաշան գտած է, երթալուն պես պիտի կախեմ, պատճառ մի կարծեք, թե մեք այն ոճրագործաց պես արյան ծարավի լինելով փոխան արյան արյուն կխնդրենք, այլ կպահանջեմ, որ ոճրագործ և նորա կամակիցք արժանավոր պատիժ կրեն արքունի արդարության ատենեն, որպեսզի ուրիշներ այլևս չհանդգնին և թե հայոց ժողովուրդ հանդարտի, զի թե արժանավոր հատուցումն չլինի, մեկ չի կարող համոզել հայեր, որ այս երկիր մնան ու չգաղթեն։ Ես Դամասկոսի մեջն էի, որ այն անցքն անցավ, շատ քրիստոնյայք կկասկածեն, թե զիրենք կմահացունեն, բայց ես էի, որ ապահովություն կուտայի, թե ձեզ վնաս մի չի պիտոր պատահի և չպատահեցավ, այսպես թե Կարնո և թե այս կողմի հայեր թող ապահով լինին, մինչև ես չմեռանիմ, իմ արյունս չվազե, մեկ քրիստոնեի մը վնաս չի հանդիպիր։ Դամասկոսի օրինակ հենց ցույց տալն խիստ տղայական էր, զի ասեր վնաս չպատահեցավ, մինչդեռ իրոք պատահած էր։ Ինքն յուր անձն և արյան նախ վազցնել կխոստանայր, որ եթե մեկ թև դնելու միտք ունենար, մարդ չէր սպանվիր։ Մեր պարոն, մեք լսեցինք, որ ոճրագործ հայտներ է, թե 15.000 հոգվո ստորագրություն կա յուր քով և թե սույն ընկերության հրամանով սպանված է և թե նույն ընկերություն խորհած է շատեր սպանել և քաղաքն ավարի առնել, հավատարիմ մարդիկ պատմեցին մեզ։ Պաստրմաճիի սպանվելեն զկնի ուրիշ հայու մ' և տղայի մ' վիրավորելն այս գաղտնիք հայտնելու ապացույց եղավ և իրողություն կրկին ուժգնությամբ շրջակա գավառաց մեջ տարածվելով ահ և սարսափ ձգեց շատերու վրա։ Պարոն, գաղտնի ընկերություն, չգիտեմ, սակայն տղան ես աչոք տեսա, յուր հասակակից տաճիկ տղայիմ հետ խաղալու միջոցին, թեթև ինչ վերք առած էր և վնաս մի չուներ, ամեն ժամանակ ամեն երկիր այսպիսի դիպվածներ պակաս չեն, եթե գիտնայի, թե գաղտնի ընկերութենե մը դավաճանություն կա հայոց դեմ, զորք քաշելով հրացանի բռնել կուտայի, սակայն երբեք այդպիսի դավաճանական խորհուրդ մի լսված չէ Կարնո մեջ։ Մեր պարոն, եթե ամենք ձեզ պես կրթյալ քաղաքագետ և ապագայի վրա լավ խորհրդածող մարդիկ լինեին, արդարև ես ընդ քեզ ապահով կլինեի, թե երբեք այդպիսի խորհուրդ և գաղտնիք մի չէ կարելի լինի, սակայն շատ անկիրթ, մոլեռանդ, ապագայն չնախատեսող

մարդիկ լինելով խիստ հավանական է, որ ռեսլիսիոնի մը[61] հանելու հաստատ ընկերություն մի կա եղեր, ապա թե ոչ երկու-երեք անձանց սուր և խորհուրդ չէր կարող բավել տերութենեն պատվանշանավ պատվյալ մեկ մի հրապարակավ զարնել և սպանել և ես կզարմանամ, թե ինչպես չորս հարյուր տարվան հավատարիմ ազգին դեմ այս կերպ դավաճանություն կխորհին տաճիկներ, որոց վաստակավ, ինչպես կտեսնաք, տերության գանձ կլեցվի և երկիր երկրագործությամբ և վաճառականությամբ զարդարողն այս ազգ է։ Երեք Բասենեն 'ի Կարսա դաշտանցած միջոցիս 10 գյուղեն ավելի տեսա քրտաց ձեռք, հորոց հայք գաղթելով ավերակներ թողուցած են քրտաց, տեսած երկիրներս ամենապարարտ հողեր էին և խոտավետ, սակայն երբեք քրտաց ձեռք մշակված չէին, որովհետև ավազակությամբ ապրել կուզեն, քան թե երկրագործությամբ, պետության գանձուն շահ մի չունին և հայոց երկրագործության խափանիչ կը լինին։ Պարոն, ես իսկ տեսա այդ գեղեցիկ դաշտեր և հողեր առանց մշակության։ Պարոն, երկրի կուսակալն եք, ձեր պարտքն է երկրագործության տեսուչներ խրկել ամեն գավառներ, անմշակ հողեր մշակել տալ և նոր երկրագործության սկզբունք մտցունել և այլն։ Վերջապես, ժամ ու կես տևեց մեր այս նյութոց վրա խոսակցություն, սակայն ափսոս, որ խիստ ապիկար մարդու մի կխոսեի խոսքերս, սովորական ազգամոլ բնավորությունս է, որ ամեն ժամանակ այսպիսի կառավարիչների տեսած միջոցին կսկսի ազգապաշտպան առարկայից վերա խորհիլ՝ հայտնի, համարձակ և աներկյուղ։

Այս առավոտ սեպ. 27 կուսակալի գեղեն մեկնելու միջոցին ներկայացա իրեն, վերջի ծայր սիրալիր ընդունելություն մի ցույց տվավ ինձ, զգեստ կհագներ, խնդրեց, որ նստեմ։ Ասացի, թե խնդիր մի ունեի, երեկ երեկո մոռացա հիշելու։ Կարնո կուսակալության ներքո հայոց մեջ քրտերեն շար սովորություն մի մտած է, որով աղջիկներ դրամով կուտան ուրիշին, այս եկամուտ սովորություն իսպառ հակառակ է մեր կանոնաց և օրինաց, Բասեն և Կարսա գեղեր թեև արգելեցի ես, բայց առանց կառավարության չէ կարելի իսպառ վերջ տալ, ուստի հրամանագիր մի խնդրեցի՝ հիշեցնելով իրեն, թե արդեն կայսերական կառավարություն ևս արգելած է այս որդեվաճառություն և թե քանի տեղեր գործադրված է, հիշեցի, թե որքան վնասակար հետևություն և որքան առևանգություն կպատահի այսմիկ շար սովորութենեն։ Սակայն իբրև ուշաբերյալ հիշեց և հրամայեց, որ Կարին հասած ժամանակ յուր մեծ քարտուղար այս կետ հիշե իրեն, որպեսզի թե ամեն կողմ հրամանագիր հանե և թե գվայի շարգիայի[62] մեջ հրատարակել տա հանուր

կուսակալության։ Մեզ մնաս բարի ասելով, կառք նստեցավ և մեկնեցավ դեպ 'ի Կարին։

Կուսակալի երկու անգամ գեղ հանդիպելն երկու հարյուր մարդկամբ և ձիամբ, վեց սոմար ու կես դարի, քանի գառն, զորաց համար շատ հավեր, կերակուր և այլն ուտելով, որք գրեթե 2000 կհաշվի, բայց միայն 700 զուրուշ վճարեցին խեղճ գյուղացվոց, նկատելով, եթե կուսակալ մի այսպես կը պահե տերության դրած օրենքներ, ուրիշ մարդիկ ինչպես պիտի պահեն։

Պեհրի Ահմետ 100 տուն բնակիչ ունի, բայց 'ի երկու տուն տաճկաց, ամենք հայոց ազգեն են. մի փայտաշեն եկեղեցի ունին, ոչ քահանա կա, ոչ դպրոց և ոչ վարժարան, գյուղի արտեր հայոց սեփական կալված են։ Սահմանադրություն գործադրելով սույն գյուղի մեջ ութ հոգի թաղական ընտրվեցան բացարձակ առավելությամբ։

Շիրմալի գյուղ 4 ժամ հեռի է 'ի Կարսա. 25 տուն հայ բնակիչ ունի, մի փայտաշեն եկեղեցի ունի, մի ծերունի քահանա կա՝ անուն տեր Մինաս, նոր դպրոց բացած է սույն քահանայն։ Աղեքսանդրապոլեն տիրացու Հովհաննես անունով վարժապետ մի բերած են, հոգեր հայոց ձեռքն է։ Սույն գյուղի մեջ սահմանադրություն գործադրվելով՝ 5 հոգի թաղական խորհուրդ ընտրվեցան։

Սեպտեմբեր 28 ժամ 3 1/2-ին Պեհրի Ահմետեն մեկնելով ժամ 7-ին հասանք 'ի Կարս քաղաք և իջևանեցանք 'ի առաջնորդարան, Կարսեն մեկ ժամ հեռի ավերակ եկեղեցի մի տեսանք ավերակ գյուղի մը մեջ, որո անուն է եղել Դմբեթ. Նրթևեկողաց ձեռքեն գեղն ավերակ է։ Անվո եկեղեցաց պես խաչաձև շինված է. կաթողիկեն խոնարհած, դրսի որմերու քարեր ընկած, ներքին կողմի որմերու քարեր և խոյակներ մնացած։ Դուռ քարով խցվել է, սրահի մի կողմ դռան մի չափ ծակելով անասուններ մեջ լեցուցած են այլազգիք, մարդաչափ մի քար և անասնոց աղբ լեցած է եկեղեցվո հատակ։ Արձանագրություն և եկեղեցվո անուն չկա, տաճկական հորջորջմամբ գյուղի անուն եկեղեցվո անունով Դմբեթ կկոչվի, գյուղ 70 տարի առաջ ավերակ դարձած է, Ճանապարհի վրա լինելով բնակիչք չեն կրցեր դիմացեր բռնավորաց Երթևեկության միջոցին տված անտանելի նեղության։ Հայաստանի շատ գեղեր այս պատճառով ավերակ դարձած են։

Կարս քաղաք Ախուրյան գետի մեկ վտակի վրա շինված է, այս վտակ Սողանլու լեռներեն արևմտյան հարավեն, Վանանդա դաշտեն խաղալով, Կարս քաղաքի մեջեն անցանելով կմիանա Ախուրյան գետին, սոքա կիջնան Երասխի մեջ և կօժանդակեն։ Տանց շինությունք

գետի ափունքեն տկսելով դեպ 'ի զառի վեր երկու հանդիպակաց լերանց յայն բացվածքի մեջ հաստատված են։

Շենքեր առհասարակ անտաշու քարերով կերտված են, հարուստք տաշած քարերով, կանոնավոր տուներ ունին։ Քաղաք հյուսիսեն դեպ 'ի հարավ կհայի Վանանդա դաշտի ընդարձակության վրա, արդեն գետին խաղացք և այս հատեցվածք միայն վայելչություն տված են։ Կարսա բերդ քաղաքին և գետին արևելյան լեռան վրա ունի յուր ամրություն։ Հայոց ժամանակեն հռչակված է Կարուց բերդի ամրություն, օսմանցոց ձեռքն անցնելեն զկնի քանի անգամ բերդ նորոգված է, մանավանդ Արևելյան պատերազմեն մինչև ցայսօր մեծամեծ նորոգությամբ կրկին ամրացած է, հանդիպակաց լերանց վրա նոր ամրություններ (բապեիյնիի) կը շինվին դեռ ցայսօր։

Տեղույս հին հայ բնակիչք Պասքևիչի ժամանակ ռուսաց սահման Աղեքսանդրապոլ և նորա շրջակա վայրեր գաղթած են, 10 տուն հազիվ հին բնակիչներ կան այժմ, իսկ այժմուս բնակիչք մեծագույն մասամբ բաղիշեցիք են, իսկ փոքրագույն մասն կարնեցի, մշեցի և այլ տեղերեն են։ Մի փայտաշեն եկեղեցի ունին անուն Աստվածածնի նվիրյալ, երեք քահանա ունին՝ տեր Սաղաթել, որ առաջնորդի փոխանորդ է, տեր Հովհաննես և տեր Ղուկաս։

Վիճակիս առաջնորդն է Ռշտունի Հովհաննես արքեպիսկոպոս, որ առաջին անգամ առաջնորդության աղոտ կերպիվ քաղաքական գործեր տեսնալով ժողովրդյան հարգանք և ակնածություն գրաված էր, իսկ այժմ ծերության և տկարության աղագավ ժողովրդյան ընդհանուր դժգոհության առարկա եղած է, 17 քահանա ձեռնադրած է՝ յուրաքանչյուրեն 10—11, 12 և մինչև 13 ոսկի առնելով, ինչպես որ Կարնո եպիսկոպոս կառնե և կձեռնադրե։ Եթե Ռշտունին այս տկարությենեն չապաքինի, լավ է, որ ինքնին հրաժարի և ուրիշ արժանավոր մեկ մի հաջորդե և վիճակ կառավարե։

Եկեղեցին առաջնորդարան և վարժարանք գետին արևելյան ափունք, բերդին ճիշտ ստորոտ շինված է։ Առաջնորդարան վերի հարկ երկու սենյակ ունի և մի խոհանոց, վարի հարկ երկու սենյակ և մի փարախ ձիանց։ Դպրոց կից առաջնորդարանին վերնահարկ երկու սենյակ մանչ տղայոց, որուն մեջ 100 մանր մանուկներ կկարդան, 20 տղա միայն շոր ու ցամաք քերականության դաս կառնին, յուրաքանչյուր տղայր ձեռք շատ տեսակ քերականություն կա, ումեմն Զամիշ, ումեմն Արսեն, ումեմն Գարագաշ, ումեմն Փափազյան[63], Բաղիշեցի Մամբրե վարժապետ դատապարտված է մին մի աշակերտեն շատ-շատ դաս ասել,

այս մասին ո՛չ առաջնորդ, ո՛չ իշխանք և ո՛չ տղայոց հարք խնամ տարած չեն։ Նույն անկանոն վիճակի մեջ է աշակերտաց դասագրքեր, տղայոց հարք, ինչ գիրք որ տուն ունեցած են, զայն տղայի ձեռք տալով դպրոց խրկած են։ Կարնո քաղաքի դպրոցի մեջ ևս այս տեսակ դասագրքեր տեսանք, ուր մնաց Կարս, Հորում սաղմոս, քերական 2, սաղմոս 18, նարեկ 3, ժամագիրք 50 ղուրուշ կծախվի։

Օրիորդաց դպրոց վարի հարկի մեջ մի սենյակ է՝ 50 աղջիկ-տղայք, մի ծերունի վարժապետ հասարակ ընթերցմունք դաս կառնին, ոչ վարժուհի ունին և ոչ կանանց սեռին վերաբերյալ ձև, կար և ասեղնագործություն։

Հայոց ժողովրդյան մեծագույն մասի զբաղմունք է վաճառականություն, բավական դրամատեր հայեր կան, աղքատներ քիչ են։ Հայոց բնակությունք եկեղեցվո շրջապատ վայրեր հաստատված է և քաղաքին ամենեն պատվավոր գիրքն ունին։

Կարսա վիճակ 42 հայոց գեղեր ունի, նախկին բնակչաց մեծ մասն Ռուսիո սահմաններ գաղթած են, այժմու բնակիչք գլխավորապես Մշու, Ալաշկերտու, Բասենու, Կարնո գյուղերու գաղթականներ են։ 42 գյուղի մեջ միջին հաշվով 2200 տուն կհաշվին, 250 տուն քաղաքի մեջ, որք՝ի միասին 2450 տուն։

Լեզվի գործածության մասին թեև ամեն երկրի գաղթական եկողներ իրենց երկրի ոճ և բառեր կգործածեն, սակայն լեզվի ընդհանուր գործածության եղանակ Կարնո և Բասենու գյուղացվոց խոսակցության կնմանի, Շորակալու, Շարավանի գեղացիք զգեստի կողմանե պարսկահայոց ձև սև փափախ ունին և մյուս զգեստներ անոնց նման են, իսկ մյուս գյուղացիք խառն կհագնին։ Առհասարակ կերակուրի և զգեստի մասին չափավորություն կպահեն, սակայն աղջիկ նշանելու, նշանած տեսնալու, նշանած աղջկան ընծա տալու, հարսնիք ընելու չափեն ավելի շռայլ են թե Կարս քաղաքի բնակիչք և թե գյուղացիք։

Կարսա երկրի մարդիկ առհասարակ զենք ունին և զենքի գործածություն լավ գիտեն, սահմանագլուխ լինելուն պատճառավ, զենքի գործածություն ազատ թողված է ասոնց։ Գյուղացիք ամբողջ երկրագործ են և կեցության կողմանե բավական կշահվին։ Կարսա մեջ դեռ Բագրատունի հայ թագավորաց շենքեր կան, երկոտասան առաքելոց եկեղեցին, որ Աբաս թագավոր Ա Գագիկ թագավորի եղբայր շինած է, դեռ շեն և կանգուն կա քաղաքի մեջ, սևագույն քարերով շինված է։ Կաթողիկեն դեռ կանգուն է և եկեղեցին ողջ, տաճիկներ մզկիթ դարձուցած էին,

բայց Արևելյան պատերազմեն զկնի պատերազմի ամբարսն դարձուցած են։

Ռուսք, երբ Կարսա տիրեցին, սույն գեղեցկաշեն եկեղեցին հայոց ձեռք հանձնված է եղեր, տփխիսեցի վաճառականք փող հավաքած են վերի տեղուներ նորոգելու, բայց հաշտությենեն զկնի դարձյալ տաճկաց ձեռք մատնված է։ Աբխազաց Վախթանկ թագավոր սույն եկեղեցվո նավակատյաց հանդեսին հրավիրած է Աբաս թագավոր նենգությամբ, զի Վախթանկ բարեկամ էր Գագկա, երբ Վախթանկ եկեղեցի կմտնա, Աբաս կհրամայե՝ ասելով, սույն եկեղեցվո գեղեցիկ շինված աղեկ նկատելով նայե, զի ասկե դուրս ելնելեն զկնի, աչքերտ քոյտ չէ։ Ափսոս, որ մեր աչքի առաջ է և մեք կտեսնամք սույն եկեղեցին այլոց մատնված երանի արխաղին, որ կուրանալով այլևս չտեսավ սույն վայելուչ տեսք։

Կա թագավորաց ժամանակեն մնացած երեք աչքե քարաշեն խոյակապ կամար, մի, մինչև ցայսօր բերդի վերին և ներքին պարիսպներ հայոց ձեռոք ամրացած է, բերդի քարանց վրա հայոց գրով արձանագրություն կա, ներքին պարիսպներ քակել սկսած են, վանքեր, եկեղեցիներ, բերդք և պարիսպք և սոցա ամուր և ճարտար արվեստ շինությունք հայոց հարստության և մեծության հայտնի ապացույցք են, զի այժմյան կառավարություն հետ այնչափ աշխատությանց դեռ չեն կարող հավասարել ամրությունից հնոց մերոց։

Հայոց ժամանակեն երկու եկեղեցիք կան քարաշեն, մին ներքին պարսպի մեջ է և մյուս Բարեշխ ապարանքի մեջ, խեղճ եկեղեցիք մզկիթ դարձած են, ինձ կթվի հայեր շինած և մեջն այնչափ աղոթած չէին, բայց այժմ տաճիկք ստեպ կաղոթեն։ Վերի բերդի դրան քով [կա] մատուռ մի։ Ինչպես վերի եկեղեցվոց և նույնպես մատուռի անուն անհայտ է։ Հայոց ջերմեռանդք մատուռին ուխտի կերթան։

Կա նաև հունաց եկեղեցի մի, զոր տաճիկք հարդանոց արարյալ են։ Գագիկ Աբասյան թագավոր Կարուց պարսից արշավանքեն տաղտկացյալ գա զՎանանդ դավառ՝ի հույնս և փոխարեն առնու զդղեակն Ծամնդավ և զԱմասիա 1065 թվականին, կերևի, որ հույնք տիրելով Կարուց վիճակին շինած են զայս եկեղեցին։

Երկու եկեղեցի ևս կա պարսպի մեջ դեռ կանգուն, զորս տաճիկք զորաց զդիմարսն դարձուցած են։ Չորս եկեղեցի ևս բերդի մեջ կան մինչև ցայսօր ժամանակի։

Կարսա մեջ վեց օր կենալով, սահմանադրություն գործադրելով 6 հոգի քաղաքական ժողով, 3 հոգի ուսումնական խորհուրդ, մի երեսփոխան Պոլսո համար ընտրել տվինք։ Գավառական երեսփոխանական

ժողով կազմելու հրահանգ հանձնեցինք առաջնորդին և քաղաքական ժողովքին։

Վարագա սուրբ Խաչի կիրակին ազգու կերպիվ ատենաբանեցինք եկեղեցին, բովանդակություն քարոզին էր՝ սիրել, միանալ և չերկնչիլ։ Մանրամասն կերպիվ նկարագրեցինք ժողովրդյան աստվածապաշտությենն և ազգասիրությենն սառել, սաստիկ կշտամբեցինք կարգեցվոց անուսումնասեր բարք և վարք, որք միայն սաստիկ հետամուտ են անիրավ մամոնա գանձել և անձնական շահեն 'ի զատ ուրիշ շահ չճանաչելով ազգային առաջադիմության ոչ հոգ ունին, ոչ եռանդ։ Սույն գլխավոր և ազգավնաս թերությունք ոչ միայն հատ և մի, այլ ժողովներու մեջ նշավակեցինք և հորդորեցինք, որ ասկե հրաժարելով փութեռանդ լինին ազգային հառաջադիմության։

Եկեղեցվո երկու ու կես տարվան հաշիվ մնացած էր Պողոս անուն երեսփոխանի քով, որ խիստ կերպիվ կդժկամակեր հանձնել նորընտիր թաղական խորհրդոց, սաստելով առինք հաշիվ, հանձնեցինք թաղական խորհրդույն, որք այսու հազիվ թե համարձակեցան յուրյանց պաշտոնին ձեռնարկել, զի միապետաց ձեռքեն չէին համարձակեր հաշիվ առնել և եկեղեցվո գործին միջամուխ լինիլ։

Հոկտեմբեր 4 չորեքշաբթի օր ժամ հինգ Կարսեն մեկնելով, արևելյան ճանապարհ բռնելով Վանանդա և Շիրակա ընդարձակ և բերրի դաշտեն անցանելով, հասանք 'ի Հաշք գյուղ, որ այժմ ասի Պաշքատիկլար, վեց ժամ հազիվ թե հասանք։ Ճանապարհին մեզ ուղեկից արապկիրցի Ղուկաս աղայեն Վանանդա և Շիրակա դաշտաց վրա տեղեկություն ուզեցի, սակայն մեծապես վշտացա, երբ լսեցի, թե դաշտաց մեծագույն մասն քրտեր և տաճիկներ թափու ըրած են, իսկ փոքրագույն մասն հազիվ թե հայոց ձեռքն է մնացեր։ Սուպաթան, Քյուլվերան պարսկաբնակ գյուղեր ճանապարհին հանդիպելով ժամ 11-ին հասանք Հաշք գյուղ։ Հաշք գյուղ վայելուչ դիրք մի ունի։ Գյուղի արևելյան կողմեն քանի տեղե սև քարանց միջեն աղբյուրներ կբղխե և փոքրիկ ձորակի մը ջուր 'ի հարավային կողմ ուղղելով յուր ընթացք՝ 5 գյուղեր հանդիպելով՝ Օրթաքատիկ, Այաղքատիկ, Պայրախտար, ավերակ Խախլար և Կարմիր գյուղերու առաջեն անցնելով կերթա կթափի Ախուրյան գետ, բայց 'ի հնումն այս ջուրեր կերթա եղեր Անվո արվարձանաց և քաղաքի մեջ։

Հաշք գյուղ, որ է՝ Պաշքատիկլար, 40 տուն բնակիչ ունին, ամբողջ հայ են, 8 տուն Արտկոնա, 4 տուն Բասենա, 4 տուն Վարդովա, մյուսք ևս Մշո այլևայլ գեղերեն գաղթական եկած են։ Սուրբ Հովհաննես անուն

նորաշեն փայտակերտ եկեղեցի մը ունին, մի քահանա՝ անուն Մարտիրոս, որ Մշո Կոփա գյուղեն եկած է, դպրոց չունին, քանի տղայք ձմեռրոս, որ Մշո Կոփա գյուղեն եկած է, դպրոց չունին, քանի տղայք ձմեռ տեր Մարտիրոսի և տիրացու Պողոսի քով հատեր։ Մարտիրոսի և տիրացու Պողոսի քով հասարակ ընթերցմունք կկարդան։ Գեղի հողեր խոշնաշեն[64] է, այն է՝ թասարակ ընթերցմունք կկարդան։ Գեղի հողեր խոշնաշեն[64] է, այն է՝ թասարակ զավորի հողն է, դեռ թափու եղած չէ, վասնզի Թափու մամուրին[65] խիստ ընթացք մի բռնելով ժողովուրդ հուսահատեցուցած է, որք կխորհին գետեն այն կողմ անցանել։

Սույն գյուղի մեջ սահմանադրություն գործադրեցինք. 5 հոգի թաղական խորհրդո անդամ ընտրվեցան, պաշտպան արգելելու մասին սույն գեղի մարդոց սաստիկ պատվեր և սպառնալիք տալով հոկտեմբեր 5 ժամ ութին դեպ 'ի Պայրախտար թեկոխեցինք։

Ճանապարհի վրա հանդիպեցանք Օրթա և Պաշքատիկլար կոչված գյուղերուն, որք Պաշքատիկլարի ջրի եղերք շինված են, գեղեցկահայաց դիրքերու վրա։ Օրթաքատիկ գյուղ ջրի արևմտյան կողմն է, քսան տուն հայ բնակիչ կա մեջ, մի փայտաշեն եկեղեցի, մի քահանա՝ տեր Սաֆեփան, դպրոց չկա, քահանայն 6—7 տղայի հասարակ ընթերցմունք դաս կուտա։ Գյուղի հողեր թագավորական լինելով՝ հայոց ձեռքն է, ամենք երկրագործ են։

Ներքին Քատիկք ջրի արևելյան կողմն է, 25 տուն հայ բնակիչ ունի, մի փայտաշեն եկեղեցի կա։ Մի քահանա՝ տեր Մկրտիչ, դպրոց չկա, քահանայն յուր երկու որդիք և ուրիշ 4—5 տղա կկարդացնե, գյուղի հողեր հայոց ձեռքն է։

Պայրախտար գյուղ, որ վերոհիշյալ գյուղերու նման Պաշքատիկի ջրի եղերքն է, նույն գյուղերու չափ 6 ժամ հեռի է Կարսա քաղաքեն և 6—5 ժամ հեռի Աղեքսանդրապոլեն, վերոգրյալ 4 գյուղեր բուն Շիրակա դաշտի մեջն է, սակայն հայերեն անուններ կորսված են, շատ հարցուցի հայերեն անուն գտնալ գեղացիներեն, սակայն չկրցի գտնել։

Պայրախտար 18 տուն հայ բնակիչ ունի, մի փայտաշեն եկեղեցի, մի քահանա՝ անուն տեր Մաթեոս, դպրոց չունին, քահանայն 6—7 տղայի դաս հասարակ ընթերցմունք դաս կուտա։ Սույն գյուղի մեջ սահմանադրություն գործադրելով՝ 4 հոգի թաղական խորհուրդ ընտրվեցան։

Համզաքալակ գյուղ 8 ժամ Կարսեն հեռի և 5 ժամ Աղեքսանդրապոլեն, Սուլուչի ջրին եղերք վայելուչ դիրք մի ունի, աղքատ հարուստ 45 հայ բնակիչ ունի, ամենք երկրագործ են, հող թագավորական է, դեռ թափու եղած չէ։ Բնակչաց մեծ մասն Մշո գյուղից գաղթականք են, իսկ փոքրագույն մասն տեղացի, Կարսի, Նախչվանի գյուղերեն են։ Մի հնաշեն Աստվածածին անունով եկեղեցի ունին, մի քահանա՝ անուն

տեր Միքայել, դպրոց չունին, քահանայն 4—5 տղա կկարդացնե։ Գեղացիք խոստացան անպատճառ դպրոց բանալ և վարժապետ բերել։ Սույն գյուղի մեջ սահմանադրություն գործադրելով՝ 6 անձինք թաղական խորհուրդ ընտրվեցան։

Պայրախտար և Համզաքալակ գեղեր, երկու գեղեր շատ անհանգիստ եղան, լվերու թագավորություն այս երկու գեղի մեջ յուրյանց բոլոր զորքեր ժողոված էին, մեկեն հրամայեցին, որ բոլոր զորությամբ մեր վրա հարձակին, սուր խայթոցով գունդագունդ ժողովեցան մեր վրա, փախչելու հնարք չկար, որչափ պառկեցանք, կրկին ուժգնությամբ խայթոցներ արեցին և բաղում արյուն մեզմե ծծեցին, այնպես էր, որպես թե մեկ սափրիչ ոտքեն մինչև գլուխ տղրուկ փակուցած է։ Մինչև առավոտ հավանական է, որ երկու կոտոց արյուն[66] հանեցին, երդված էին, որ մինչև առավոտ չթողուն, որ մեր աչերանաց վրա քուն գա և յուրյանց տեսական երթ ու հառաջ տարին։ Եթե դժոխքի մեջ երկու օր դեռ մեղավորաց այսչափ տանջեն, խիստ դժվարին է մեղավոր լինել։

Սույն երկու գիշերվան անպատմելի տքնություններն ստիպեցանք ձիանց սանձ դեպ 'ի Ալաշկերտ դարձունել, վասնզի եթե մեկ-երկու գիշեր ևս շարունակեին լվեր յուրյանց չարագործությունք, մինչև 40 ավուր ճանապարհ կփախուցանեին զմեզ. այս երկու գիշեր միտքս եկավ Պոլսո փափկակյաց վարդապետաց վիճակ, տեր մի արասցե, եթե նոքա լիներին այս լվերու թագավորության սենյակ, որ է՝ ախոռներու աղտոտ սենյակներ, հազար անգամ ախ մարիկ պիտոր աղաղակեին, շատ լավ, որ իմ մայրս մեռած էր, եթե իմ մայրս ողջ լիներ, ես ալ այս լվերու ձեռք գերի չէի իյնար։ Քրիստոս գրած է, թե մարդիկներեն հալածվիք, ձեր վարձք բաղում է երկինս, երանի թե այս լվերու հալածանաց համար ևս մեկ վարձք կամ երանություն գրեր, որով քիչ մի մխիթարվինք չգրելուն համար, մեր լվերեն հալածանք ափսոս որ 'ի զուր կերթա։ Ախոռներու և նորա մեջ շինված սենյակներու ստորագրություն օր մի պիտի գրեմ, մեք հիմա դառնանք Սոյուղլու գեղի ստորագրության։

Սոյուղլու 8 ժամ հեռի է 'ի Կարսա, վայելուչ դիրք մի ունի, 40 տուն բնակիչ ունի։ Մի վանք՝ անունով Հնաշեն, քարաշեն և խիստ խոյակապ եկեղեցի ունին, ներսի կողմի կամարներ և գմբեթի բարձրություն Անվո մայր եկեղեցվո բարձրության չափ կա, կաթողիկեն սքանչելի երևույթ մի ունի. Նատր շահ Շիրակավանի վրա գալով, լսեցի ծերունյաց պատմություն, թնդանոթով գմբեթի գլուխ վար բերած է. դրսի կողմ որմեր արևմտյան կողմեն քանի տեղիսն բլած լինելով նորոգած են, ներսի կողմեն գմբեթի մեջ երկու կողմ սենյակներ կա, փայտե երկար աստիճանով մեջ կելնին, քարե դուռ մի ունի, դրսի հարավային և արևելյան որմի վրա եկեղեցվո շինման արձանագրություն կա, զոր ուրեք-ուրեք կկարդացվի. 807 տարի առաջ շինված է՝ «ես Հասանի որդի... շինեցի»։ Արևելյան որմի, դայս եկեղեցիս նախօրինակ է վերին Երուսաղեմի ողորմության։ Եկեղեցվո անուն Աստվածածին է, երկու քահանա կա՝ տեր Մանուել և տեր Գրիգոր նորընծա, դպրոց չկա գեղի մեջ, հիշյալ նորընծա 10 տղայոց միայն հասարակ ընթերցմունք դաս կուտա։

Սույն գեղի մեջ սահմանադրություն գործադրելով՝ վեց անձին[ք] թաղական խորհրդոն անդամ ընտրվեցան։ Այս գեղեն ժամ 1-ին ուղի անցանք դեպի Ճաշոց, ժամ ութին հասանք, տեր Եսային, մեր փոքրավոր Գրիգոր գնացին Անվո ավերակներ տեսնալու, ափսոս որ հոգնության և անձրևի պատճառավ մեք չհամաձայնեցինք երթալ։ Այլ միայն մեկ ժամու հեռավորությենեն հայելով կրկին լացինք և ողբացինք 'ի վերա հայրենի ավերակաց։

Ճաշա ութ ժամ հեռի է 'ի Կարսա, մեկ ժամ հեռի Անվո ավերակեն, ընդարձակ դաշտավայրի մեջ ունի յուր դիրք, 50 տուն բնակիչ ունի, որմեր՝ քարով և առաստաղ՝ փայտով եկեղեցի մի ունին, մի քահանա ունին, անուն տեր Սարգիս, դպրոց չունին, Գրիգոր անունով տիրացու մի հասարակ ընթերցմունք կուտա տղայոց։ Սույն գյուղի սահմաններ բոլոր Յուսուֆ, Իսա, Շաքիր պեյեր հափշտակությամբ թափուրած են, գյուղացիք զրկված են հողային կալվածքներե, մանավանդ Անվո մերձակա սքանչելի հողերեն, ափսոս և հազար անգամ ափսոս։

Ճաշա գյուղի մեջ սահմանադրություն գործադրելով՝ 6 անձեն թաղական խորհուրդ ընտրվեցան, 7 տիրացուի աստիճան տվինք, մեյմեկ թուղթ մանեթ ընծա և աջհամբույր նվիրեցին։

Հոկտեմբեր 9-ին Ճաշա գյուղեն ելնելով դեպ 'ի Նախիճևանի նահանգ ճանապարհորդեցինք, Ճաշայեն մինչև 2 1/2 ժամու ճանապարհ Անվո ավերակներ մեր տխուր հայեցվածոց առարկա եղան, քաղաքի պարիսպ, աշտարակներ, մայր եկեղեցին, թագավորական պալատ, Ծաղկոցաձոր անուն մերձակա սքանչելի վայրեր, Ախուրյան գետի ընթացք, որոց վրա մեր աչք անհատ տենչանոք հառելով, հեռանալ չէր ուզեր, այս հայեցվածք մեր սրտի խորերու մեջ, մեր հայրենյաց վաղեմի շիջյալ փառաց վրա ստեպ-ստեպ մտածել կուտար, երբեմն մտածելով կուզեի բնական պատճառներ իմանալ, թե զիարդ մենացավ քաղաքն բազմաժողով, երբեմն ազգ ազգի տգիտություն կմեղադրեի, մերթ կուզեի դատաստանի վրա նորանոր դատաստան ընել և հարցունել յուրմե,

թե ինչու այս սքանչելի վայրեր մեր հարց և մեր ձեռքեն առնելով հափշտակելով անօրինաց խստաց ապստամբողաց, թե քան զամենայն երկիր մատնեցին զմեզ։

Մերթ կմտածեի մահ, որ դառն է ինձ համար, շատ կքաղցրանար, կասեի լավ է, որ ես բնավ աշխարհք չտեսնայի, մերթ է կայծակնահար մեռնել բուն այս հողերու մեջ, քան թե այսպիսի երկիր, հող, ջուր, նախնյաց հիշատակ՝ օտարաց ձեռք, ահա օտարներ մեր աչաց առաջ հափշտակած են մեր ամենայն բան, էլ մնալ տեսնալ—ամեն օր մահ է, միտքս հիմարության խորհուրդներ գուկային, կասեի, թե գլուխ քարին խփեմ մեռանիմ, էլ կարելի թե այս մի տեսակ երջանկություն է, զի քան որ կհարցունեի, թե այս սքանչելի քաղաքի շրջակայք ով բնակի, կպատասխանեին՝ թե բռնավոր և բարբարոս քրտեր։

Դեպ 'ի հարավային լեռան կողից վրա ժամ մի հեռի Ճաշայեն և Անիեն Ուչքիլիսա անունով վանք մի երևեցավ, որ արևմտյան կողման ճիշտ Անի քաղաքի վրա կհայեր, մեծ խոյակապ գմբեթավոր եկեղեցի, որ երկու ձիարշավ մեր ճանապարհեն կերևար մեզ, հարցի՝ ով կբնակի մեջ, ասացին, թե Հասան պեյի որդի Շաքիր պեյ, ողջ եկեղեցին մարագ դարձուցած է և ինքն բնակած է վանքին մեջ։ Ալաճա բսված գյուղ, որուն մեջ վանք կա, կբնակի մեջ Հաճի Ահմատ աղայն։

Ալաճա գյուղ, որ երկու ժամ հեռի է Անի քաղաքեն, մեջ եկեղեցի կա կանգուն, սակայն քրտեր գյուղ բնակելով եկեղեցվո մեջ խոտ լեցուցած են։ Ագրակ գյուղի եկեղեցի 'ի հեռուստ երևեցավ, այս գյուղի դիրի մեջ 5 գեղեցիկ եկեղեցի կա, որ մինչև ցայսօր ողջ և կանգուն կա, զորոնք տաճիկներ Պեշ քիլիսա կկոչեն, Պիկար գյուղի մեջ խոյակապ եկեղեցի մի կա՝ Երրորդություն անունով։ Այս ճանապարհ, որ Ճաշայեն մինչև Մավրակ 4 ժամու ճամբա, շատ ավերակ գյուղեր, վանքեր և եկեղեցիք կան, որք ամենք Բագրատունյաց հարստության ժամանակ շինված են։ Ավերակներ, ամբողջ գեղեր, դաշտեր և գեղեցիկ լեռներ՝ բոլոր քրտեր և բռնավորներ թափու արած են։

Մավրակ 15 տուն բնակիչ ունի, այս գեղ փոքրիկ ձորակի մեջ քրտաց ճանապարհի վրա լինելով շատ նեղություն կքաշեն, 17 տուն տասն տարվան միջոցին ցիրուցան եղած են, մի փայտաշեն եկեղեցի ունին, անուն մայր եկեղեցի է, մի քահանա, անուն տեր Սարգիս, դրպրոց չկա, ոչ տիրացուք և ոչ տերտեր տղա չեն կարդացներ։

Ճամաշտանցի քրտաց ցեղ մի կա այս Նախչվան գավառի մեջ, որք Արևելյան պատերազմեն ետք եկած Ախուրյան գետին եղերք կբնակին, 350 տուն վրանաբնակ են, Անի քաղաքի մերձ Մաղաշ բերդի քո-

վերեն, սկսյալ Ախուրյան գետի եղերքներ մինչև երթա հասնի Կողբա գավառ, ուր Ախուրյան միանա Երասխի ջրին եղերք, վրաններով ամառան կբնակին, իսկ ձմեռ յուրյանց շինած կշլաներու մեջ կբնակին։

Մախսուտ աղան է այս ճամաշտանցի քրտաց գլխավոր, որ այժմ դայմակամության պաշտոն կվարե, հիսուն տարու է հիշյալ աղան, այս ավազակաբարո, ըստ պատմության խեղճ նախչվանցոց, սա ունի ավազակաց խումբեր. ուղած ժամանակ ուղած կողմեր կխրկե, սորա մարդիկ 68 ոչխար Պայրախտար գեղեն, 70 հատ Համզաքալակեն գողությամբ հափշտակած էին, պայրախտարցիք յուրյանց գողն ոչխարք հետս դարձուցին, իսկ համզաքալակցիք անհոգությամբ յուրյանց գողն չպահանջեցին, այս աղայի մարդիկ ջրաղացներ կկողոպտեն և ամեն տեսակ բռնություն և հափշտակություն կառնեն։ Հոկտեմբեր 5 Մավրակ գյուղ գալով, պատ ծակելով՝ աղքատ Ղազարի 4 եզ տարած էին։

Բուիկ գյուղս վերի Բուիկ կհիշվի, լեռնական ունի յուր դիրք, 7 տուն քուրտ բնակիչ ունին և քսան և հինգ տուն հայ բնակիչ, մի փայտաշեն եկեղեցի՝ Աստվածածին անունով, մի քահանա՝ տեր Դանիել, դպրոց չունին, ոչ քահանայն, ոչ տիրացուք տղա չեն կարդացներ։

Հիշյալ յոթն տուն քուրտեր հայոց միշտ հակառակ են, եկեղեցվո երդիքեն կմիզեն 'ի ներքս տաճարին, շան լակոտ երդիքեն ձգեն 'ի ներքս։ 7—8 տարի առաջ Շամոյի տղա Ահմատ Հայրապետի աղջիկ առևանգելով՝ օրենքեն կհանե և հետ կամուսնանա։ Հայոց արտեր, մարգեր կկերցունեն, միշտ հայհոյանք և ծեծ պակաս չեն ըներ հայոց գլխեն, հայք այս 7 տան ձեռք գերի ընկած են։ 3 հոգի թաղական խորհուրդ ընտրվեցան։

Նախիջևան գյուղ 4 ժամ հեռի է 'ի Կարսա. ընդարձակ դաշտահովտի մը մեջ ունի յուր վայելուչ տեսք, 70 տուն հայ բնակիչ ունի, մի հնաշեն եկեղեցի կա սույն գեղի մեջ, որո հյուսիսային որմի վրա սուրբ Ստեփանոս Նախավկայի եկեղեցի արձանագրած կտեսնվի։ Եկեղեցվո գմբեթ և կամարներ ընկած խոնարհած են, սեղանի կամար և հյուսիսային որմ յուր հնությամբ մնացած է, իսկ մյուս կողմի որմեր և քարեր տեղիս-տեղիս ընկած լինելով անկերպարան և անարվեստ քարերով շարած են, առաստաղ փայտով ծածկված է, այն ևս խարխլած է, նորեն նոր փայտով նորոգել կուզեն գեղացիք, զառաստաղու փայտ պատրաստել են, սակայն անվանյալ իշխանաց մեջ երկպառակություն պատահելով կեցել է։

Սույն եկեղեցին Կամսարական իշխանք, որ Շիրակա և Արշարունի-

յաց տերն էին, նոքա շինել են, բայց թվական և արձանագրություն մնացած չեն։

Եկեղեցվո հարավային արևելյան անկյանեն 8 քայլ հեռի 7 աստիճան վայր երկու մատուռ բացվել է 8 տարի առաջ, մատուռներ հատուկ գերեզմանոց են։ Անձամբ այսօր մատուռներ գնացի, մի ահագին հրսկայի գերեզման տեսի, լայն և երկար տապանաքարի վրա հետևյալ կից կտուր արձանագրություն կար, որո մասին գեղացիք կարծեր էին թե Շուշանա՝ Վարդանա դստեր գերեզմանն է, Շուշանա Մամիկոնեի անուն վրա լինելուն, սակայն կարդալեն զկնի հայտնի եղավ, որ Կամսարական Հրահատ իշխանի որդվո գերեզման է, որ Մամիկոնյան Շուշանի այր է։

«— Աստուահրաման (իւք եւ իմսակ, կոչ հրաժարման (Մամբրեիս) մահ հանգուցեալ ընդ հարս իւր երանելի տէր (Ատոմ) որդի Կամսարական Հրահատ (Ապահի ի պատ), 'ի պատրիկ եւ իշխան Հայոց որդի Հրահատաց պատրիկի Շիրակա եւ Արշարունեաց տեառն, և ամուսին Շուշանայ Մամիկոնեանի»։

Այս գերեզմանին վրա կանթեղ կվառեն գյուղացիք և շատեր ուխտի կերթան՝ կարծելով, թե սուրբ քահանայի գերեզման է, զի տեր անուն տեսնալով՝ տապանի վրա կկարծեն, թե քահանայի տապան է։ Այս իշխանի գերեզմանի մատուռին մեջեն մյուս նմայնաչափ մատուռ կերթացվի, որո մեջ փոքր տապանաքար կա՝ առանց արձանագրի, կերևի, որ այս մատուռ յուր ամուսին Շուշանա և յուր մանր որդվոց գերեզմանատեղերն է, ահա Շիրակա և Արշարունյաց տեր կենչե այս մութ մատուռներուն մեջ և կողբա Հայաստանի բախտ և յուր աշխարհի կորուստ, որո տիրած են անթլպատք և մարանման մարք, արք չարք և հափշտակողք, ապականիչք աշխարհի և երկրի մերում։

Երկու քահանա կա գյուղի մեջ՝ տեր Վարդան, այր ութսունամյա ծերունի և վեհաղնաբարո տեր Հովհաննես, դպրոց չկա. տեր Հովհաննես քանի տղոց և քանի տղա ևս երկու տիրացուք կկարդացնեն։

Սոյն գնդի մեջ քվեարկության միջոցին գեղացիք կաղաղակեին, սահմանադրություն զմեզ քրտաց ձեռքեն կաղատե՞, թե՞ ոչ և գրեթե այս կողմի բոլոր գեղացիներեն սույն աղաղակ պիտի լսենք, զի ամենք քրտաց ձեռք գերի են և աղատություն կխնդրեն։

Ղուշի գյուղ Կարսեն 8 ժամ հեռի արևելյան հարավային կողմ բարձր լեռան ստորոտ գեղեցկավայելուչ դիրք մի ունի, օդ մաքուր, ջուրն առողջարար և բարեհամ, 50 տուն հայ բնակիչ կա, երկրագործ են և հող թափու եղած է։ Մի փայտաշեն եկեղեցի կա՝ սուրբ Ստեփանոսի

անուանն նվիրյալ, երկու քահանա կա՝ տեր Սամուել և տեր Խաչատուր, դպրոց չկա, Սաքո անունով տիրացու մի 6—7 տղա կկարդացնե։ Սահմանադրություն գործադրելով՝ 6 հոգի թաղական ընտրվեցան։

Ղուշի և Բուիկ գյուղացիք հողեր թափու արած են, սակայն զիլանցի քրտեր ամառն 'ի բուն սույն երկու գյուղերու սահմաններու մեջ վրաններ զարնելով՝ կանաչ արտեր, մարգեր և տեղեր կկերցունեն, շատ անգամ կառավարություն Կարսա մյութասարիֆ հրամանագիր կուտա Շորակալու գայմագամների վրա, որ քրտեր հայոց սահմաններեն հեռացնե, սակայն Շորակալի գայմակամներ երբեք մյութասարիֆներու հրաման չեն կրցեր, կամ չեն կամեցեր 'ի գործ դնել։ Կարսա առաջնորդ և իշխանք երբեք հոգ տարած չեն խեղճերու բողոքներ իրապես 'ի գործ դնելու։

Քերս գյուղ 'ի Կարսեն 2 ժամ հեռի, Երասխա եղերքեն մի ժամ հեռի ընդարձակ հովտի մը մեջ, ունի յուր զվարճալի դիրք։ Բոլոր Կարսա, Շիրակա և Նախճվանա գյուղերու մեջ այս գյուղն է, որ ծառերով և խաղողի այգիներով զարդարված տեսանք։

11 հոկտեմբեր այս գեղ հասանք, մարդիկ դեռ դուրս երեսբացներու մեջ կքնանային, մինչդեռ Շիրակ բավական ցուրտ կար և մերձակա լեռներու գլուխներ ձյուն պատած էր։

Մի խարխլած փայտաշեն եկեղեցի ունին՝ անուն Աստվածածին, երկու քահանա՝ տեր Գևորգ, որ հարյուրամյա ծերունի մը է, այր հսկա և երկայնահասակ, տեր Հովհաննես, դպրոց չունին, գյուղի մեկ-երկու տղա տեր Հովհաննեսին քով կկարդան։

Այս գեղի մեջ ժողովրդյան հանդես մի առնելով ժողովեցինք 'ի մի վայր և հարցուցինք, թե արդյոք ռամիկ ժողովրդեն մեկ կա ուղիղ խաչ հանե երես կամ անսխալ հայրմեր ասե։ Տեր Հովհաննեսի որդին առաջ եկավ, հայրմեր մի ասավ, կես սխալ և կես ևս իրմեն շարադրած է, իսկ մյուս մարդիկ ոչ խաչ գիտեին հանել երես և ոչ հայրմեր գիտեին։

Կարսա և Շիրակավանի, Նախճվանի և Կաղզվանա գյուղերու մեծագույն մասն այս խեղճ դրության մեջ են, ոչ դպրոց ունին, ոչ վարժապետ, և քահանայից մեծ մասն ավետարան կարդալու միջոցին Քրիստոսի բերանեն չելած բառեր սոքա յուրյանց բերանեն կհանին և նորեն սուրբ ավետարան կսրբագրեն։

Կաղզվան գյուղաքաղաք 10 ժամ հեռի 'ի Կարս քաղաքեն, Երասխ գետի հարավային կողմունք, յուր զվարճալի դիրք լեռնամեջ ընդարձակ հովտի մը մեջ տարածվել է, յուր պտղավետ այգիք, որոց բերքն է

խաղող, բետիր ծիրան, տանձ, խնձոր և այլն։ Այգյաց թիվ 800-ի կհասնի։ 1000 տան չափ բնակիչ ունի, 150 հայք են, իսկ մնացյալք ամեն տաճիկ, մի եկեղեցի ունին փայտաշեն, չորս քահանա, մին նորընծա, երեքն մնացյալն անպիտան, որոց անվանք չէին արժանի հիշատակության։ Դպրոց չունին գյուղացիք և աղքատագույն կյանք կվարեն, ամառ այգյաց մեջ կբնակին, իսկ ձմեռն գյուղի մեջ կմակաղին, տուն դեղջկական և անզարդ հանդերձ, կերակուրք պարզ և նահապետական։ Տաճկաց ձեռք ճնշված են։ 150 տուն հայք տաճկաց 850[ի] չափ տուրք կվճարեն։ Սույն գյուղի մեջ սահմանադրություն գործադրելով՝ 7 հոգի թաղական խորհրդո անդամ ընտրվեցան։

Վարդի Հեր ավերակ վանքի մասին նոր տնօրինություն ընելով՝ եկամուտ հանձնեցինք Կաղզվանու թաղական խորհրդոց, որ երկու-երեք տարի եկամուտներ ժողովելով՝ վանքի շինություն ձեռնարկվի։ Եթե վանքի շինություն անկարելի լինի, եկամուտ աղքատ գյուղերու դպրոցաց շինության և վարժապետաց պիտի հատկանա, այս մասին պայմանագիր մի գրելով գյուղի քահանայից և թաղական խորհրդոց ստորագրությամբ վավերացնել տվի։

Խաչավանք կոչեցյալ գյուղ Կաղզվանեն ժամուկես հեռի և ժամ մի ևս Երասխեն, որո հարավային կողմի լերան կուրծքի վրա բարձրահայաց և վայելչադի[ր]ք տեսարանով չորս խաչաձև բլուրոց մեջ գեղեցկացյալ է։ Երասխի արծաթափայլ պտույտ այս գեղին բարձունքեն գեղեցիկ երևի, որ հովտի մեջեն արծաթափայլ սողոսկելով կերթա։ 20 տուն հայ բնակիչ ունի, որք արիությամբ կբնակին լերանց մեջ, երեք հնաշեն եկեղեցի ունին, երկուքն մերձ են միմյանց, որք արևմտյան զիղկանման բլրակի վրա շինված են, մյուսն երկու քարընկեց հեռի՝ հանդիպական զայն խոնարհագույն արևելյան բլուրի վրա գեղի գերեզմանատան կեղ[ր]ոն է։ Երեք եկեղեցվոց շինությանց ձև միևնույն ճարտարապետությամբ է։ Տաճարներ խաչաձև են. խաչաձև կամարաց վրա բարձրագույն գմբեթներ ունին, որոց վեղարներ խոնարհած։ Բնակիչք ավանդությամբ ասեն, թե նույնից սուրբ խաչ 400 տարի սույն վանաց մեջ կեցած է։ Կործանիչ Հայաստանի Շահ Աբաս ամեն քանդել է տաճարաց գմբեթներ և եղծել է արձանագրությունք, զորս խաչաձև բլորց ունենալով խաչավանք ըսված է։ Բնակիչք ասեն, նախ՝ վարդապետաց և միաբանաց բնակարան էր և զկնի ավերմանց գյուղացոց բնակարան եղել է։ Երկու տաճարաց մին, որ ի վերա զիղկանման բլուրի արևմտյան, գյուղացիք յուրյանց կամատեղի հատկացուցած են, որ մյուս երկու տաճարներեն մեծագույն է, երեք աստիճանավ մեջ կմտնվի ժողովրդյան բա-

վական չէ, խնդրեցին կանանց համար վերնատուն մի շինել, մեր բարձու հրամանավ հրամայեցինք շինել։ Մի նորընծա քահանա ունին՝ տեր Առաքել, գեղի մեջ դպրոց չունին, ոչ տեր և ոչ տիրացուք տղա չեն կարդացներ։

Հոկտեմբեր 16 Խաչավանք գյուղեն մեկնելով դեպ 'ի Վաղարշակերտ ուղևորվեցանք։ Ճանապարհ խիստ զառ 'ի վեր և զառ 'ի վայր գնալով իջանք 'ի Վիշապաձոր, հորում կա Վարդեհեր կոչյալ մենաստան, Թաթոսի և Վարսի շիրիմներ և ճգնության վայրեր։ Վանքի ջուր ծորակեն 'ի վայր կխաղար և մեր ճանապարհ կտրելով դեպի Երասխ կիջնար։ Նախաճաշ մի կերանք սույն ջրի վրա՝ Շարայի ախորժակոք և քիչ մի հանգիստ առնելով դեպ 'ի խիստ զառիվեր բարձրացանք։ Երկու ժամեն ավելի տևեց ձորակեն մինչև 'ի կատար լերանց, մի ժամ Աղպուլախ լերան ձիանց վրա անցանելով, Շահ Յոլի քովեն իջանք 'ի Կոուա ձորն, հորում արծաթափայլ գետակ մի 'ի վայր մի խաղալով ուղևորաց մեծ զվարճություն կպատճառե։ Այս ձորակեն անցանք Պուրակ ձորի մեջ և ժամ տասն և մեկին հասանք 'ի գյուղն Ամպատ։ Տասն ժամ տևեց մեր ճամբորդություն, սակայն այս ճամբորդության նման դժվարին քիչ կպատահի Հայաստանի լերանց մեջ, վեց անգամ ձիեն վար իջանք, վասնզի այնպիսի ելևէջներ էին, հորում ձիով գնալ խիստ դժվարին է։ Երբ գյուղ հասանք, բոլոր անդամովք խոնջած և դաղրած էինք։ Այս ճամբայի դժվարությունք միտս բերավ Հայաստանի ուրիշ դժվարին ճամբաներ, առ որովք անցած էի այլևայլ ժամանակներ։ 1. Մշո սուրբ Կարապետեն մինչև 'ի Խարբերդ անցած ճանապարհ, որ երկու անգամ անցած էի 2. Մարճան Պողազի ճանապարհ, որ Երզնկայեն 'ի Խարբերդ և Զարսանճախ կերթա, մի անգամ 3. Խարբերդեն դեպ 'ի Սեբաստիա լեռնային ճանապարհով վարդավառի օրեր, մի անգամ։ 4. Խաչա Կատուկ Վանեն դեպ 'ի սուրբ Էջմիածին, երկու անգամ։ 5. Բասենեն մինչև 'ի Կարս, մի անգամ 6. Պոնտոսի Կաղխշուի ճանապարհ, չորս անգամ 7. Կորակապանի ճանապարհ, երկու անգամ 8. Սեբաստիայեն մինչև 'ի Սամսոն, մի անգամ 9. Կարսեն ձմերան միջոցին մինչև 'ի Կարին, մի անգամ 10. այս անգամի Խաչավանքեն մինչև 'ի Համամ գյուղ Վաղարշակերտի, մի անգամ։ Այս վերոթվյալ տասն ճանապարհներ և ճամբորդությունք ամենադժվարինք են, նամանավանդ այնպիսի դժվարությունք և նեղություն անցած եմք, որ եթե պատմելու լինիմք, ընթերցող[ք] ոչ միայն կարեկից պիտի լինին, այլ թե պիտի սոսկան, վասնզի այս ամայի լեռնային և առապար, ավազակային ճանապարհներ, երբեմն չորս հոգվով, երբեմն վեց հոգվով, երբեմն ութն

հոգով ճամբորդած եմք։ Աստվածային հովանիք միայն պահապան մի եղև մեզ և ոչ այլ ինչ օգնություն, իսկ այս վերջի դառնեվոր ճամբորդություն ամենեն սոսկալի էր, զի Թոփրախ-գալայի անցքին համար ճանապարհներ արյուն կհոտեր, զի չերքեզք և քուրտք զիրար հարկանել կխնդրեին։ Շիրակավանեն մեզ ուղեկից էին Սաղաթել՝ Կարմիր վանից, տեր Հովհաննես Նախճվանի, տեր Ստեփան Փատրունե, որ գոլով հայրենյոք վաղարշակերտցի ընկերացավ մեզ մինչև 'ի Համատ գյուղն։ Սույն երեքն քահանայք մեծամեծ զվարճություն պատճառեցին մեզ և առավել ևս մեծամեծ զվարճություն վայելեցին 'ի մենջ։ Խաչվանքեն 'ի Համատ մեզ ուղեկից էին չորեսին քաջք երիտասարդք՝ Ոսկան, Պապո, Սարգիս, Մկո, որք հրացան 'ի ուսս յուրյանց առաջի մեր ընթանային։ Մեն մի երիտասարդ կարեր զդեմ առնել տասն քըրտաց, որք եթե պատահեին։ Չորեքին սոքա արի առույգ և որսորդ էին, եթե ամենայն գյուղային ժողովուրդ սոցա նման զինավարժ լինեին, հարստահարություն խպառ հեռանային 'ի Հայաստանե, զի խաչվանքցիք գոլով բնակյալ 'ի լեռնամեջս և թվով 20 տուն բնավ երբեք չերկընչին ի քրտաց, այլ քուրտք միշտ երկնչին 'ի քաջութենե սոցա և գովեն ևս զարիություն սոցա։ Համայն շիրակացի գյուղացի ժողովուրդք են արի և զինակիր, սակայն գոլով բազում անգամ անմիաբան, չկարեն երկյուղ յուրյանց արկանել 'ի վերա շրջագայից, աստ նկարագրելով է նոցա ներքին և արտաքին ձիրք հանգամանք, բարոյական և նյութական ուժ*։ Ընդօրինակություն տետրակ 'ի մենջ առ վարչություն ուղղյալ նամակաց և տեղեկագրությունից, 'ի յամի տեառն 1872 օգոստոս 10, 'ի Բարձր Հայք 'ի Կարին

Թիվ 1 'ի Կարին

Ամենապատիվ սրբազան Հայրիկ

Անցյալ շաբթու չորեքշաբթի օր բանտարկյալ քղեցիք ժամ իններին ազատեցան ի բանտեն[67], մեր քննչության ձայն բավական եղավ ազատել և հանել զքղեցիս 'ի բանտե։ Ապա թե ոչ՝ դեռ բավական ժամանակ բանտի մեջ կմաշվեին։ Քղեցվոց գործի վրա շուղեցի մանրամասն տեղեկություն հաղորդել վարչությանդ, քանզի իրենք մինչև ցարդ 'ի հարկե հարուստ տեղեկությունք հաղորդած կլինին, ազատյալք շաբաթ օր վերադարձան յուրյանց հայրենիք։

Աստվածածնի բարեկենդանի կիրակին կոնդակ հատենի եկեղեցվո կարդալով, իմաստ ժողովրդյան բացատրեցինք և սկսանք աջակցությամբ տեղվոյս առաջնորդին սահմանադրություն գործադրել, ըստ որում ութ տարիե ի վեր է, որ թե երեսփոխանական, քաղաքական և կրոնական ժողովներ ընտրված էին և զրեթե այս ժողովներ ոչ կատարյալ թիվ ունին և ոչ կանոնավոր նիստեր, ուստի նախ երեսփոխանաց 18 անձանց թե մեռելոց և թե հրաժարելոց տեղ լրացնելո ընտրելաց ցանկ նույնպես ընտրողաց ցանկ պատրաստելով եկեղեցվոց դուռ կախել տվինք 'ի դիտողություն, այս ուրբաթ քվեարկության գործողություն պիտի կատարվի և հետևապես քաղաքական, կրոնական, ուսումնական և վանական խորհուրդներ պիտի ընտրվին։

Կարնո ժողովրդյան առաջադիմասեր մասն կխնդրե մեզմե, որ վարչության հրամաններ ամբողջապես 'ի գործ դնելով ապա մեկնեմք ասկե, սոքա դպրոցաց և վանորեից բարեկարգություն կխնդրեն և կարի իրավամբք, քանզի թե դպրոցներ և թե վանորեից բարեկարգության պետք ունին և եթե գյուղորեից այցելություն առնելով դպրոցներ բարեկարգենք և նոր դպրոցներ բանամք ևս և գյուղերն ստորագրեմք, ամենեն նվազ երկու ամսո չափ ավուր կկարոտեմք։ Արդ կրնաք մակաբերել, թե նախ սույն գավառագլխին մեջ գլխավոր և հիմնական բարեկարգություն հաստատելո ամենակարևոր պետքն զգալի եղած է 'ի վաղուց, քանզի սա շրջակա գավառաց թե հայելին պետք է լինի և թե գործադրիչ։

Մինչև ցայսօր օգնական և ոչ գրագիր կրցա գտնել, քանզի հույժ դժվարին է տեղս այսպիսի պաշտոնի համար մարդ գտնել, եթե քաղաքես ինձ օգնական հատկացնելու չլինիմ, մեր քննչության պաշտոն հրապարակավ և ապարդյուն կլինի, զի այն կետեր, որ խորհրդապահության կկարոտին, չէ պիտ որ պահվին։

Փոքրավոր մի դատ ճանապարհի մեջ, անցյալ տարի պատրիարքարանի մեջ սպասավորություն ընող Գրիգոր, որ երբեմն Գրիգորիս վարժապետին կծառայեր ամսականով, զսա Բաբերդի ճանապարհեն հետս դարձուցի և հարյուր ղուրուշ ամսական տալով պահեցի քովս, վասնզի հաստատ միտք դրած էր 'ի Պոլիս դիմել և մեք բազում համոզանոք հետս դարձուցինք։

Բաբերդի գործոց մասին իրենց առաջնորդ Գրիգորիս վարդապետ մեզմե օր մի ետք տեղս եկած է, սա թեև կփափագի մեզ ընկերանալ և բավական հարմարություն ունի այցելության պաշտոն վարելո, սակայն երկու վիճակի զբաղմունք և գործեր արգելք կլինին, եթե կհաճիք զսա հատկացուցեք։

* Այստեղ ձեռագիրն ընդհատվում է (Հ. Պ.)։

Հուսիկ վարդապետին նամակ գրեցի 'ի Վարագ և խնդրեցի, որ գա մեզ ընկերանա, սակայն չեմ հավատար նորա գալստյան։ Տեղվույս մյուֆթիշի հեքիամ[68], ըստ վկայության բազմաց, խիստ ոխերիմ դիրք բռնած է ընդդեմ քրիստոնեից. քեզեցի ապստամբյալ պեյեր և արդարացնելու միջոցներ խորհող և 'ի գործ դնողն այս մարդն է, նույնպես Բաբերդի հանցավորք տաճիկներ արդարացնելու աշխատող և մանավանդ հանցանք քրիստոնեից վրա ձգելու ճիգ թափողն այդ մարդն է։ Տեղվույս կուսակալ բարեսիրտ և պարզ մարդ մի կերևի, սակայն Տեքիումի խորհրդոց[69] անսալուն կթողու, որք հանցավորի օգնական գտանին և պաշտպանվին, եթե հնարավոր միջոց գտաք այս մարդ հեռացնելու, հույս կա, որ քրիստոնեից իրավունք ըստ մեծի մասին պաշտպանվի, իսկ եթե չհեռանա օրեց օրե մեր ազգի իրավանց մեծագույն մասն միշտ օտարաց կզոհվի...։

Երկուշաբթի տեղվույս գեր. առաջնորդին հետ կուսակալին երթալով Բարձր Դռան հրամանագիր առ նա մատուցեցինք. հրամայեց պույրուլթու տալ բոլոր գավառաց կուսակալներուն։ Զմշկածագու Ագրակ գյուղացվոց բողոքին համար բերանացի խոսեցանք կուսակալին, նա ուղեց գործի եղելություն գրով համառոտ իմանալ և խոստացավ ազդու հրամանագիր հանել, որ Միտուխան քուրտ 'ի Տիգրանակերտ կամ 'ի Խարբերտ խրկվի, այսօր տեղեկագիր կխրկենք կուսակալին և գալ շաբթու գործի եղելություն գրով վարչության կզեկուցանենք։

Այսօր իմացա, որ կուսակալ Քղվա առաջնորդ Եփրեմ վարդապետի վրա բողոքագիր մի կխրկե Բ. Դուռն, արդեն հիշեցի, թե Մյուֆթիշի հեքիամ, որչափ ոխերիմ է քրիստոնեից, այնչափ հարյուրապատիկ թշնամի է եկեղեցականաց, մանավանդ առաջնորդաց։ Սա երբ լսե, թե հայեր քուրտի, պեյի, բռնավորի կամ կառավարչաց անկանոն ընթացից դեմ կբողոքեն, իսկույն կհետևցնե, թե կղերաց և առաջնորդաց թելադրությամբ է։ Ահա այսպես զրպարտած է զՄամբրե վարդապետն և զԵփրեմն և ո՛ գիտե թե քանի-քանի անձինք 'ի կղերաց պիտի զրպարտե և մատնե կառավարության։

'Ի Քղի խրկված քննիչք այս անձին և սորա նման մարդիկներե հրահանգված և գնացած են 'ի Քղի, հանցանք քրիստոնեից վրա ձգելու և հանցավորներ արդարացնելու։ Քննիչք Քղի հասնելով իրենց նպատակ պակելու մասին գտած են յուրյանց ձեռնատու և մատնտու բազմաթիվ անմիտ, անխորհուրդ, անհեռատես և կիսահավատ մարդիկ, որք թե բերանացի և թե բազմաթիվ ստորագրությամբ բողոքած են այդ դատախազ և դատ վարող մարդկանց վրա, թե այս մարդիկ ոչ մեք կճանաչեմք, ոչ փոխանորդ կարգած եմք և ոչ բողոք ունիմք մեր պեյերուն դեմ, այլ ըստ ամենայնի գոհ և շնորհակալ եմք իրենցմե, որ զմեզ կխնամեն և կպահպանեն։ Եվ այս բողոքող մարդիկ զրպարտիչ խառվարար են, անոնց հետ կմատնեն նաև յուրյանց առաջնորդ, թե նա զմեզ եկեղեցին ժողովելով բռնի կնիք կորզեց մեր ձեռքեն՝ ասելով, թե տերության տուրք կթեթևացնեմ, ուստի կուսակալ զբողոքողն իբրև զրպարտիչ բերելով 'ի Կարին կբանտե և վարդապետի վրա կգանգատի, իբրև 'ի վերո խառվարարի ժողովրդյան։ Եվ այս ամենայն չարիք գանմտանին 'ի Քղի և 'ի հայս վասն անուսումնության, քանզի ըստ ամենայնի տգետ են յուրյանց եղբայրց ազգականաց և հայրենյաց իրավունք պաշտպանելու, ա՛յլ յուրյանց անձնական հանգստություն կմատնեն զյուրյանց զեղբարս, զհարս, զվարդապետս։ Այս չարիք երբեք չի պիտոր պակսի մեր և մեր զրկյալ ժողովրդոց գլխեն և այսպես միշտ տիտոր մատնվին և 'ի բանտ դատապարտվին։ Ընկերին և ազգին իրավունք պաշտպանողներ մինչև որ ուսումն, կրթություն և դաստիարակություն չծավալի գավառաց մեջ, միշտ այս կերպիվ թե օտարաց և թե մերայնոց ձեռք մեր ազգային բողոքներ և իրավունքներ ոտնակոխ պիտի լինին։

Ողջ լերուք։

1872 օգոստոս 10 — Երեմիա եպիսկոպոս այցելու

'Ի Կարին — Հայրենյաց

Թիվ 2։ 'Ի Կարին

Ամենապատիվ սրբազան Հայրիկ

Ինչպես Կարնո արքեպիսկոպոսի մասին շատ անգամ խորհված է, թե պետք է որ ունենա մի քաջ գրագետ հայերենի և մյուս տաճկերենի և ազգային իրավունք պաշտպանող բանիբուն գաբու-օղլանի[70], այս խորհուրդ իրապես գործադրելու յուր նշանավոր կարևորություն ունի այժմ։ Տեղույս գերապատիվ առաջնորդ Հարությունի[71] արքեպիսկոպոսին վարչության դիտավորություն հայտնեցի և ծանուցի, թե սույն պաշտոնեից ամսականներ գավառներ պարտ են վճարել, որուն համար վարչութենեն հատուկ հրամանագիր երթա յուրաքանչյուր վիճակ՝ ըստ կարողության այս դիվանական ծախուց վճարման մասին։

Սրբազան ևս այսպիսի տնօրինության մեծ կարևորություն ճանաչելով հաճություն տվավ, ուստի խնդրեցի իրմե, որ ինքն հատուկ նամակով կարևորության կետեր նշանակելով, տեղեկագիր խրկե վարչության, սակայն նա կասկածելով, թե այդպիսի նորոգ տնօրինության

ծախք գուցե վարչություն փոխանակ գավառաց վրա բաշխելո՝ յուր վրա ծանրացնե, վասն այսորիկ չհոժարեցավ հրահանգ խրկել։ Արդ ինչպես յուրաքանչյուր առաջնորդական վիճակային գործերեն հայտնի է, թե յուրաքանչյուր առաջնորդ յուր սեփական գործոց միջամտելո իրավունք ունի և պատասխանատու է, վասնզի այն վիճակի հոտին հովիվ կոչված է և նոցա արդյունքով կդատմանվի, իսկ այլոց վիճակաց գործոց ինքն պատասխանատու չէ, ուստի երբ ինքնին հոժարի անոնց գործոց օժանդակել, ազատ կամոք կօժանդակե, իսկ եթե չհոժարի, կարծեմ ոչ ոք իրավունք չունի բռնությամբ ստիպել, որ ուրիշ վիճակաց գործոց, մանավանդ քաղաքական ծանր գործոց միջամտել և պատասխանատու լինել, վասն որո, երբ վարչություն գավառական գործոց ևս պատասխանատու ճանաչել հոժարի, կեդրոնական առաջնորդներ սույն առաջարկություն անհապաղ 'ի գործ թող դնեն, զի երբ կեդրոնին մեջ ոչ շաբաթական քաղաքական ժողովո նիստ կա, ոչ գրագիրք, ոչ արձանագրություն և ոչ գաբուքահիայի[72], ինչ կպահանջվի այն կեդրոնական առաջնորդարանեն։

Արդեն կառավարություն ստիլամի օրենքով[73] ամեն գավառական գործոց մասին կուսակալեն տեղեկություն կխնդրե և յուր վճիռներ և հրամանագրեր նոցա տեղեկությանց հիման վրա կհաստատե, ինչ օգուտ կբերե գավառայնոց բողոքներ, որք ամենայն խեղճությամբ 'ի պատրիարքարան կբողոքեն, ոչ ապաքեն մեք ևս օրինավոր կառավարությանց քով պետք [է] որ ունենանք օրինավոր ժողովներ, դիվաններ, պաշտոնակալներ և արձանագրություն, երբ չունինք այսպիսի կարգավորյալ կառավարություն, արտաքին կառավարությանց քով մի բնավ տարակուսիք, թե քղեցիք, գուղուղճանցիք, մշեցիք, բաղեշցիք, կարսեցիք և ալաշկերտցիք միշտ յուրյանց արդար դատ և բողոք պիտի կորուսանին, քանզի այդ գավառացիք, երբ գրով կեդրոնին կբողոքեն, բողոքը չլսվիր, երբ անձամբ գան, օժանդակ և օգնական չեն գտնար, քանզի կեդրոնական առաջնորդություն ամեն կերպիվ կարգավորյալ չէ, որ վստահությամբ օգնություն և պաշտպանություն խնդրեին առաջնորդեն և ժողովներեն։

Արդեն տեղվույս ժողովրդոց մեծ մասն ազգայնության ընդհանուր և կարևոր գործոց մասին բնավ անգետ են, իսկ խիստ փոքրագույն մասն, որ փոքր 'ի շատե տեղյակ են, եռանդ չունին միջամտելո և այն մասնավոր մարդիկ, որք պաշտոնական և առևտրական գործ ունին կուսակալի և այլոց հետ, յուրյանց անձնական շահ մտածելով գավառայնոց իրավունք պաշտպանելո մասին անտարբեր կմնան, որով զրկյալ ազգայնոց իրավունք ոտնակոխ կլինի։

Բաբերդու դեպք պատահած միջոցին տեղվույս մյուֆթիշի հեքիամ մեր ազգայիններեն մեկ-երկուք կանչելով՝ կըսե. «Դուք պատրիարքին բարեկամ եք, նա ձեր խոսքին կհավատա, գրեցեք, որ Բաբերդու հայոց գրածոց ոչ հավատա և ոչ Բ. Դուռ բողոքագիր մատուցանե, քանզի տաճկաց ըրած խիստ թեթև և աննշան և կարևորություն տալ չարժեր»։ Այս կերպիվ խորիմաստ քաղաքականություն միշտ տեղի կունենա գավառագլխոց և մասնավոր գավառաց մեջ, զի եթե կառավարիչք տեսնան, թե հայք զորավոր միջոց և փաստ ունին յուրյանց իրավունք վաստակելո, ազգի միջի ազդեցության տեր մարդիկ իսկույն ձեռք առնելո կաշխատին և շատ անգամ կհաջողին նոցա ձեռք ազգին իրավունք ի դերև հանել, ինչպես այս անգամին հաջողած են քղեցվոց բողոքներ ջրել և զբողոքողսն 'ի ձեռն հայոց հանցավոր առնել և բանտարկել և մինչև անդամ հայոց ստորագրությամբ բոլոր հանցանք Մելքիսեթ և Եփրեմ վարդապետաց վրա ծանրացնել։ Ահա տեղվույս կեդրոնական առաջնորդություն յուր իսկական նշանակություն չունենալով, ոչ տեղական ազգայնոց իրավունք կրնա պաշտպանել և ոչ գավառայնոց, ուստի իբրև այցելու հայրենյաց կառաջարկեմ վարչությանդ, որ փութա օր հառաջ ոչ միայն սույն կեդրոնական առաջնորդություն, այլ մյուս կեդրոններ ևս զորացուցանել, որչափ կարելի և հնարավոր է։ Ես թե առաջնորդարանի մեջ պաշտոնապես և թե առանձին մարդոց սույն առաջարկություն բաղում անդամ կրկնեցի վերջին հրաման և դարձադրություն մնա վարչությանդ։

Եթե մեք շուտով հասած լինեինք 'ի Կարին և քղեցվոց դատ Կարնո մեջ տեսնվեր, բնավ չէ հուսար, թե փոխանակ Հանցավորներ պատժելո բողոքողք պատժվեին, ուստի կառաջարկեմ վարչությանդ, որ միշտ այցելուք և խրատատուք գավառներեն պակաս չառնե, քանզի իմ 'ի Բաբերդ և 'ի Կարին մտած օրես մինչև ցայսօր կնկատեմ, թե ինչ մեծ զգուշությամբ ազգայնոց գործեր և իրավունքներ կպաշտպանվին, թեև ես բնավ լռություն և հանդարտություն պահելով և ոչ մեկ գործի միջամուխ կլինիմ, սակայն նոքա այնպես կկարծեն, թե յուրյանց գործոց քննիչ եմ և կամ համարատու։ Արդ, ես քանի որ ձանձրացած չեմ պաշտոնես՝ տի շարունակեմ, ոչ վասն այլոց ուրուք և ոչ կամ վասն շահու, այլ միայն 'ի սեր հայրենյաց, ուստի, երբ ձանձրացա, կիմացնեմ Ձեզ, որ այլ ոք հզորագույն, քան զիս առաքեք 'ի գավառսն, բայց իրա-

վամբն կպահանջեմ, որ ինձ պաշտոնակից օգնական վարդապետ մի խրկեք, ապա թե ոչ մինակ բաղում շարշարանս և տառապանս պիտի կրեմ, մանավանդ ձմեռ ժամանակ։

Բաբերդու աղգայնոց մասին անցյալ շաբթու արդեն գրեցի և խընդրեցի, որ ազգու միջոցներ ձեռք առնելով նոցա կենաց ապահովություն և ընչից հափշտակությանց հատուցումն խնդրվի Բ. Դռնեն։ Այս շաբթու տեղույն ազգայինք 141 ստորագրությամբ բողոքագիր մի խրկած են առ իս բուռն և պարտավորյալ աղաչանոք յուրյանց ցավոց դարման կխնդրեն 'ի մենջ և յուրյանց սրտի սաստիկ կսկծանաց ստիպյալ վարչութենեդ հուսահատյալ կերևին, մեք փութացինք հորդորական և մխիթարական նամակ մի գրել և ծանուցանել իրենց, թե յուրյանց բողոք մեր գրությամբ ազգային վարչությանդ հղելով անմիջապես դարման կխնդրենք։

Ահա հանրագրության բուն պատճեն կուղենայի գրիս ծոցով և կտեղեկանայք նոցա սրտի անձկությանց, որոց վասն լիահույս եմ, թե անմիջապես դարման մատուցանելո կփութայք ազգովին։ Ողջ լերուք։

1872 օգոստոս 17

Երեմիա եպիսկոպոս այցելու

'Ի Կարին

Հայրենյաց

Թիվ 3 'Ի Կարին

Ամենապատիվ սրբազան Հայրիկ

Դարձյալ 'ի Կարին ընդունեցի օգոստոս 16 ամսաթիվ գրությունդ, որով կրկին կստիպեիք զիս երթալ աճապարանոք 'ի Կարս և կխոստանայք պետք եղած հրահանգն խրկել անդ առ մեզ։ Խիստ տարակուսության մեջ եմ և չեմ կարող որոշել 'ի Մուշ, 'ի Բաղեշ, 'ի Վան երթալ, երկյուղ զիս պաշարած է, գուցե այն կողմեր ուշանալով, ձմեռ գա հասնի և զիս պատե պաշարե և արդեն մի գործոց գիտեք, թե բնավ ձմեռան ճանապարհորդություն չեմ սիրեր, մանավանդ վտանգավոր կերևի ինձ։ Իմացա, թե վեհափառ մինչև սեպտեմբեր 20 կմնա 'ի Կպչախ և ահա կմերձենանք այս օրերուն, պետք էր, որ մենք այժմ 'ի Կարս լինեինք, եթե հրահանգներ խրկեիք, այժմ հասած կլինեինք մեր վախճանին, գուցե նամակիս լուրեր չառած երթամ կամ դեպ 'ի Մուշ կամ դեպ 'ի Կարս։ Այս ճամբորդության ընկեր ոչ ոք չգտնալուն համար կեսարացի տեր Եսային ընտրեցի, որ այսօր տեղես գնա 'ի Խնուս և ութ օրեն հա-

գիվ կվերադառնա 'ի Կարին։ Դեռ ձի չգնեցի, ձի պիտոր գնեմ և ճանապարհի ծախք պիտի ընեմ, բայց այս մասին ապահովություն չկա։

Թոչնիկ Գրիգորիս վարդապետեն[74] 420 ղուրուշ Բաբերդու մուխթարեն առի, եթե կամիք տեղվույս մուխթարեն հազար ևս ճանապարհի ծախուց համար հատկացուցեք, չգիտեմ, մի՞թե դատարկաձեռն երևնալու է, թե ոչ, եթե զմեզ արգելյա այն կողմ, ով զմեզ պիտի ազատե, ոչ ոք, եթե զմեզ սաստկությամբ հանդիմանե, ով զմեզ ազատ կացուցցե, եթե զձեր և զմեր վրեժ 'ի միասին 'ի մենջ լուծցե, ով է, որ մեզ նորա վրեժխնդրությենեն ազատեսցե, միթե այն չարամիտ մարդիկ, արդյոք չեք մակաբերեք, թե շատ բաներ կա, զորս իբրև թե մեր խորհրդով 'ի գործ դրած եք, ես կփափագեի, որ հայտնի և պաշտոնական կերպիվ երթայի, որ ըստ իս ավելի օգտակար կլիներ, բայց դեռ չգիտեմ, թե ինչ կերպիվ պիտի ներկայանամք, բայց սիրտս կվկայե, թե մեծ արդյունք մի չի պիտոր կարողանամք ձեռք բերել, վասնզի խոսելո ազատություն անգամ բռնաբարված է հոն, նորա խոսքեր չի պիտոր կարողանամք հերքել, այլ կամ լռել, կամ հավանություն տալ, եթե ձեր կողմանե իբրև աղաչավոր և միջնորդ խաղաղության կխրկեք, հան մեկնիմք և բացատրվիմք, իսպառ տեղի կուտան և միայն աղաչանք և պաղատանք կմնան։ Այս աղաչանաց և պաղատանաց ձև ձեր վեհանձնություն չի հաճիր դուցե, ահա Հայրիկ ես այսպիսի ձախողակի խորհրդոց մեջ հուզվելով ոտնկա կլինեմ և չեմ ուզեր աճապարել, բայց ո՛ գիտե, ինչ մեծ խորհուրդ և հեռատեսություն կնկատեք այս մասին, զորս մեք կանկարանամք նորս խոր թափանցել կամ դուցե ըստ հակառակն, մեր երթ այնպիսի արդյունք մի հառաջ բերե, որ բովանդակ ազգին և հայրենյաց նպաստավոր լինի, վասնզի կհավատամք, թե ասված երբեմն մտածության հակառակ այնպիսի հրաշագործություն հառաջ կբերե, որս վրա մարդիկներ կզարմանան։

Տեր Եսայի քահանայի որդին, տիրացու Հակոբ այս կողմերեն խույս տալով այժմ 'ի Պոլիս է։ Գատի գյուղ խնուսցի Հարությունն անունով մարդ մի կա, որ այդ տղայի տեղ և բնակություն գիտե։ Հակոբի հայր տեր Եսային սուրբ գարշապարանացդ համբուրելով աղերսանոք կխնդրե, որ յուր միակ որդին զտնաք, համոզեք և վերադարձնեք առ ինքն, զի խեղճ քահանայն, տղայի մայր խիստ սաստիկ կմորմոքին տղայի հեռանալուն վրա, ուստի ես ալ կխնդրեմ, որ նոցա որդին խրկելո խնամք ունենաք։

Տեղվույս կուսակալ Սամի փաշան Հաճի Սուլեյման աղա անունով խալահաթ մամուրի մի խրկած էր 'ի Խնուս, որն որ տեղյակոնճի օրտուի

հիմայունի սաղկոլակասի[75] Հաճի Սուլեյման աղա կը կոչվի, այս մարդ ավելի քան զքուրտ փաշան բարեկարգության հետեւելով հարստահարիչներ, բռնավորներ և օճրագործներ ձերբակալելով 'ի Կարին կխրկեր և պատժել կուտար։ Տեղվույս կաշառակեր տաճիկներ և հայերեն ոմանք տեսնալով, թե յուրյանց պաշտպանած և բարեկամ մարդիկներեն շատեր Սուլեյման աղայի ձեռոք քանտի մեջ կտառապին և իրենք յուրյանց շահերեն կզրկվին, ուստի զանազան եղանակավ ամբաստանություն հարուցին հիշյալ բարեկարգիչ մարդուն դեմ և ժողովո անդամներ հնարյուք հոս բերել տվին, որ Բասենու կողմեր և Սողանլուի անտառներ խրկելով յուրյանց հանցավոր բարեկամներ ազատին։ Կրսեն, թե Սոֆին 350 ոսկի կաշառք խրկած է եղեր տեղս, որ այս մարդ այլևս ետ չխրկեն։ Խուրշուտ պեյ արդեն բողոքելով սորա դեմ, եկավ դատվեցավ և հանցավոր եղավ։ Տեղվույս տաճիկներ այլևայլ եղանակավ ուզեցին զՀարություն եպիսկոպոս ամբաստանող հարուցանել սորա դեմ, բայց չհաջողեցան։

Այս բարեկարգիչ մարդու մասին Խնուսեն, Պուլանբխեն մեզ գրած էին՝ խնդրելով, որ սորա վերադարձին աշխատինք, ուստի ներկայացանք կուսակալին և խնդրեցինք, կուսակալ իսկույն հրամայեց, որ կըրկին Սուլեյման աղայն յուր հին պաշտոնին վերադառնա և ահա սույն ժամուս տեր Եսայիին հետ 'ի միասին դեպ 'ի Խնուս գնացին։ Անձամբ տեսություն ըրի հիշյալ մարդուն, փորձեցի և քննեցի, որ արդար և տերության խիստ հավատարիմ, աներկյուղ, բարեսեր, աղքատաց պաշտպան և հարստահարության իսպառ թշնամի։ Ցավեցա, որ կառավարություն դեռ այսպիսի անձի մի կոլաղասության մեջ պահած է, լսեցի որ կուսակալ նորա հազարապետության համար արզ[76] ըրած է Բ. Դուռ, բայց եթե ձեր սրբազանության կամ Օտյան էֆենտիի ձեռոք հաջողեր, առավել ևս գոհ կլինեի ես, վասնզի իբրև ոմիդարանի հարյուրապետն արդարև սիրե զազգն մեր։

Անցյալ շաբթու Մշու Խաս գյուղեն կին մի խրկված էր հոս, որ հատենի կուսակալին յուր ուրացություն հրապարակեր, որովհետև Մշո մեջ աբդեն ուրացության դիմելով Գրիգորիս վարդապետի հորդորներ առ ոչինչ համարած էր։ Մշո բդեշխ գրով կուսակալին կնոջ անցք նշանակած էր, նույնպես Գրիգորիս վարդապետ տեղվույս առաջնորդին իրաց եղելություն ծանուցած էր։ Պահակի մը միջոցով կին 'ի Կարին հասավ և լուր տվին մեզ, թե զղջացած կերևի կին։ Կուսակալ զկին հարցունելով՝ տաճկի մի տուն կխրկե, երկու օրեն զկնի կին կփախչի կապստանի ռուսաց քոնսուլի տուն։ Քոնսուլ ռուսիացի մը՝ Հովհաննես խրկելով կուսակալին լուր կուտա։ Կուսակալ կին կխնդրե։ Հովհաննես ազայն զքոնսուլ կհամոզե, որ յուր պահակի ձեռոք զկին կուսակալին կխրկե։ 'Ի քահանայից և 'ի ժողովրդոց ոմանք իրաց եղելություն մեզ պատմեցին, ըստ որում առաջնորդ գյուղեր գնացած էր։ Մեք երիցս և չորիցս քահանա խրկելով զկին քոնսուլեն պահանջեցինք։ Նա պատասխանեց, թե կուսակալին խրկեցի, կրկին քահանա խրկելով պահանջեցինք, որ զկին քրիստոնյա մեզ խրկե, խոստացավ երթալ կուսակալին առնուլ և խրկե մեզ։ Գնաց առ կուսակալն, բայց պատասխան ընդունեց, թե երեկո ժամ երկուքին խրկած է զկին։ Այս պատասխան մեզ հաղորդեց, սույն միջոցին առաջնորդ գեղերեն եկավ, և մեք գործ անոր հանձնեցինք, որ այլևս քոնսուլեն չպահանջեց և միայն երթալով ծանույց կուսակալին, թե խրկած միջոցին պետք էր մեք ևս մարդ դնեինք կնոջ հետ։ Կուսակալ պատասխանեց, թե հարկ չկար, ուստի առաջնորդ գործ յուր պարագայուք վարչությանդ հաղորդեց։ Այս կուսակալի բերանեն կիմացվի, զի ասկե զկնի, ով ոք ասե՝ նախ այլազգի եմ և հետո զղջա պիտի, աքսորվի։

1872 օգոստոս 24 Երեմիա եպիսկոպոս
'Ի Կարին

Թիվ 4, 'ի Կարին

Ամենապատիվ սրբազան Հայրիկ

Օգոստոս 23 Ձեր բարձր սրբազանության նամակ դարձյալ ընդունեցի 'ի Կարին։ Տեղվույս եռյակն ժողովն բաց 'ի 6 անդամե գրեթե յուր ամբողջությամբ ստացավ։ Անցյալ ուրբաթ առաջին նիստն ընելով՝ անմիջապես նորընտիր երեսփոխանական 15 անդամոց ընտրություն վավերացույց, զորս 'ի ժողով գումարելով մեծագույն մաս կազմեց։ Մեք ժողովեն հրաման առնելով ատենապետության պաշտոն վարեցինք, ժողովականաց ըստ օրինի ժողով կազմելու կերպ ցույց տալու նպատակավ, ըստ որում առանց կարգի և կանոնի և առանց խոսք ուղղելու յուրաքանչյուր ոք խոսելու կաճապարեր, նամանավանդ ազդեցության տեր մարդիկ չէին ներեր հասարակ մարդկանց խոսելու։ Ուստի ժողովո բուն նպատակին և նորա օրինավորության համար կարճ ատենաբանություն մի ընելով՝ ատյան բացինք։ Նախ ընդ ժողովո դիվան քվեով

ընտրել տվինք, Խաչատուր խան ատենապետ է, Խոսրովյան Հարություն մի ատենապետ, Կարապետ պատվելին ատենադպիր և մյուս ևս մի ատենադպիր։ Կրոնական ժողովո ցանկն արդեն համագումարելով պատրաստված լինելով, բացարձակ առավելությամբ ընտրվեցան տեր Գրիգոր, տեր Համազասպ, տեր Մեսրոպ և տեր Մկրտիչ քահանայք, երկու անդամ համեմատության մեջ մնալով վաղվան ժողովքի մեջ պիտոր ընտրվին։ Սույն ընտրութենեն զկնի մասնաժողով մի ընտրվեցավ քաղաքական ժողովո ցանկ պատրաստելո, անցյալ շաբաթ օր արդեն ցանկ պատրաստեցավ։

Մեք դիտողություն ընելով հայտարարեցինք, թե ընդհանուր ժողովո դիվանի անդամք, ոչ ցանկի մեջ կդրվին և ոչ քաղաքական ժողովո անդամ կրնան ընտրվիլ, սակայն առաջնորդի և մասնաժողովո դիվանի անդամոց անուն ևս ցանկի մեջ տեղավորեցին՝ առարկելով մեզ, թե սահմանադրություն այդ մասին որոշակի հոդված մի չունի, թեև քանիցս կրկնեցինք, թե Պոլսո ժողովն ընդունած է և տասն տարիե հետե կգործադրե, բայց իմ առաջարկությունս անգործադրելի թողուցին։

Անցյալ կիրակի կրկին ժողով հրավիրված էր, կրոնական ժողովո երկու անդամներ և քաղաքական ժողովն ընտրելո, բայց պաստրմաճիի խան և երեսունի չափ խանութ այրվելուն պատճառավ չգումարեցավ։ Ահա վաղ ժողով պիտի գումարվի և ընտրվելիք լրանա, արդեն որոշած ենք, որ քաղաքական ժողով անմիջապես ուսումնական և վանորեից ժողով մի կազմեն խառն ժողովով, շատ աճապարեցի և կաճապարեմ սույն ժողովոց կազմություն լրացնելու և ուրիշ կողմեր փութալու, սակայն այս չափս հազիվ կարացի միայնակ և կցանկայի, որ սույն ժողովոց օրինավոր նիստեր տեսնել և հրահանգներ տալ, սակայն այս կետեր կեդրոնիդ թող տալով առաջիկա շաբթու կմեկնիմ տեղես կամ 'ի Կարս և կամ 'ի Մուշ և այն կողմեն կտեղեկագրեմ ձեզ զամենայն մի ըստ միոջե։

Նաև կփափագեի Կարնո վիճակի բոլոր գյուղեր շրջել, դպրոցներ բանալ, սահմանադրություն գործադրել և գյուղացվոց վիճակ նկարագրել, զի գյուղացիք շատ անգամ եկան, թե բերանացի և թե գրավոր խնդիր մատուցին, որ գեղեր իրենց անայցելու վիճակեն այցելություն առնեմք, սակայն մինչև ցայսօր ձի չգտնալուս չհարմարեցինք երթալ, ահա այս մասին մի վարդապետի և մի ևս գրագրի կարոտություն ունիմ։

Վերջապես մի անգամ ընդմիշտ համոզվեցեք և արձանագրեցեք, թե առանց կեդրոնեն եկած կամ խրկված տեսուչներու ոչ անթերի սահմանադրություն կգործադրվի և ոչ պարունակություն մեջ կմնա, զի յուրաքանչյուր գավառ կամ հին դրությամբ կվարվի և կամ եթե գործադրե, բազմաթիվ սխալներով կգործադրե և կգործե։

1872 օգոստոս 31 Երեմիա եպիսկոպոս

'Ի Կարին

Ամենապատիվ սրբազան Հայրիկ և հայրենապաշտպան Ազգային Երկին ժողովո պատվարժան անդամք։

Հայրենյաց գավառներ, քաղաքներ և գյուղեր այցելության ելնելով քանիցս գուն գործեցի, որ յուրաքանչյուր գավառի մեջեն մանրամասն տեղեկություններ հաղորդեի Ազգային վարչությանդ, սակայն գավառաց մեջ մտած միջոցին այնպիսի բազմատեսակ դպրոցական, քաղաքական, կրոնական և սահմանադրության գործադրության զբաղմունքն զմեզ կպաշարեին և մանավանդ ազգայնոց խառն երթևեկությունք այնչափ զմեզ կտառապեցնեին, որ գրեթե բնավ միջոց չունեինք հավաքած տեղեկություններ փութով հաղորդել 'ի պատրիարքարան։

Ի շրջագայելն մեր աննկարագրելի բազում տառապանաց հանդեսով և քանիցս մահվան վտանգներ առ ոտն կոխելով տեառն հաջողությամբ, ապա հասի 'ի Վան 'ի Վարագ ճանապարհորդության դժընդակ աշխատության ներքև ճնշյալ գոլով 6 օր անկողնո ծառայեցինք, Հայաստանի բարերար աստվածն և հայրենյաց առողջարար օդն փութով ապաքինություն շնորհեցին մեզ։

Այժմ Կարնո և Բասենու ընդհանուր տեսություն թող տալով, Կարսա վիճակի ընդհանուր տեսություն համառոտակի կգրեմ վարչությանդ, որ ամենեն ստիպողական է և անմիջապես բարեկարգելու կարոտ։ Ինչպես 'ի Կարսա համառոտիվ գրեցի նույն վիճակի հովվի մասին, թե նա նախկին առաջնորդության միջոցին բազմաց շնորհակալություն գտած էր, սակայն այժմ ընդհանուր դժգոհության պատճառ եղած է և կլինի շարունակաբար։ Ոչտունին, ծերութենեն և տկարութենեն հաղթահարյալ, ընավին ժողովրդյան որևիցե մարդկանց հետ վարվելո կերպ և եղանակ կորսունցուցած է, թե առ ինքն եկած և թե իրեն հանդիպած մարդկանց առանց խտրության կանարգե, կանպատվե և կհայհոյի, որո դառն հայհոյության բազմիցս ականջալուր եղանք։

Ուսումն, կրթություն տարածելու և դպրոց բանալու, ոչ միայն

անկարող վիճակի մեջ է, այլև 'ի տկարամտութենեն ճնշյալ, կատ զդպրոցն և զուսումն և վարժապետն։ Կարս քաղաքի մեջ մի դպրոց ունի, զայն խափանել կջանա, այս մասին տեր Զորափաթիլ քահանայն և դպրոցի հայկաբան դասատու Մամբրե և ժողովուրդն բողոքեցին առ մեզ, բավական խրատ և հորդոր կարդացինք հիվանդ հովվի գլխին, բայց բնավ չառողջացավ նորա միտք և գլուխ։

Քաղաքի մեջ քաղաքական, կրոնական, թաղական և ուսումնական խորհուրդներ կազմեցինք և գրով սահմանադրական հրահանգներ տվինք իրեն և քաղաքական ժողովին, որ դավառական երեսփոխանական ժողովներ կազմեն և ժողովոց կանոնավոր նիստեր շարունակել տան, ինքն տկարություն պատճառելով հանձն չառավ, ուստի գործեր քաղաքական ժողովին հանձնեցինք, նկատելով, թե երկու կամ երեք ամիս հոն կենալով ամեն գործ վերջին ծայր կատարելության մեջ դնեմք, սակայն նախագահին անհոգութենեն մի ավուր մեջ մեր բոլոր աշխատությունն կանհետանային։ Արդեն վաղուց մեր գուշակությունն կատարված է, վասնզի մեր Կարսա նամակագիր կգրե առ մեզ, թե ձեր կարգադրած ժողովներ երբեք նիստ չշարունակեցին, զի Ռշտունին երբեք նիստ կազմելու հրավեր չկարդաց անդամոց և կասե եղեր, թե քանի որ ես Կարս առաջնորդ եմ, առանց ժողովի կգործեմ, երբ ուրիշ առաջնորդ խրկե վարչություն, թող գործե ժողովով։

Ինչպես ծանոթություն տված եմ, Կարսա վիճակ 42 գյուղ ունի, յուրաքանչյուր գյուղ կրնա ունենալ վարժարան և վարժապետ, սակայն Ի մեջ քառասնից երեք գյուղեր հազիվ դպրոց ունին, որք ինքնահորդոր լինելուն բացած են։

Կարսա 16 գլխավոր գյուղերու այցելություն ընելով անձամբ սահմանադրություն գործադրեցի և 4 գյուղեր ևս մարդ խրկելով գործադրել տվի։ Ամեն հանդիպած գյուղերուս աստվածասիրության և հայրենասիրության վրա քարոզեցի և դպրոց բանալու վրա խիստ ազդու հորդորներ կարդացի, ամեն գյուղացիք գրեթե պատրաստ էին դպրոց բանալու, զի ամենեքյան ուսման և դիտության ծարավ էին։ Եթե ներելի լիներ ինձ երկու ամիս նույն վիճակի մեջ մնալ, անտարակույս եմ, որ երեսունեն ավելի դպրոց հնարավոր էր բանալ, թեպետ վարժապետի սով կա այս երկրին մեջ, քահանայից վրա ամենասաստիկ սպառնալիք թափելով պատվեր տված եմք, որ յուրյանց ծխերու զավակաց անպատճառ գոնե հասարակ ընթերցմունք սորվեցնին, այս մասին 'ի քահանայից ստորագրություն առած եմք։

Ի Կաղզվան գյուղաքաղաք հասնելով տեր Սաղաթել քահանայն, որ Շիրակավանի բարեկարգն է, կոնդակ մի նորա ձեռք տալով զնա կարգեցի սահմանադրության գործադրիչ Շիրակա մնացյալ քանի գյուղերեից, իսկ տեր Հովհաննես բարեկարգն, նույնպես կոնդակով կարգեցի գործադրիչ սահմանադրության Նախշվանից մնացյալ գյուղերեից, սակայն անհեռատես և ցնորամիտ Ռշտունին, մեր կարգած գործադրիչներ յուրյանց հանձնած պաշտոնեն դադարեցնելով, պատճառ տված է նաև մեր ձեռոք ընտրված թաղական խորհրդոց դադարման։ Այս մասին վարչությունն ոչ միայն Ռշտունին պաշտոնե դադարեցնելու և այլ թեթևիկ մի ևս պատժելու է, որպեսզի զի թե ուրիշ վիճակաց առաջնորդներ զգուշանան և թե մեր աշխատությունն ի դերև չելանե։

Երկիցս 'ի Կարսա գրեցի պաշլխի մասին և արգելման հրամանագիր խնդրեցի 'ի վարչութենեդ, բայց տեսնալով, թե վարչություն հրամանագիր կհապաղի, խնդիր մատուցի Կարնո կուսակալին, որ այն օրեր 'ի Կարս հանդիպեցավ, պաշլխի արգելման և հետս պահանջելու հրաման ընդունեցի կուսակալեն և Կարսա մյութեսարիֆեն, սույն հրամանագիր Ռշտունին տեսավ և ընդունելով ընդունեց։ Կարսա քաղաքական և կրոնական ժողովներ ոչ միայն մեզ հաճություն տվին պաշլխ տալ և առնուլ արգելուլ, այլև բոլոր առածները հետս առնելու բուռն հավանություն տվին, ուստի գյուղեր շրջագայելով սաստիկ պատվեր տվինք գյուղացվոց, որ այլևս պաշլխ չտան և չառնուն, գյուղերու իշխաններեն և թաղական խորհուրդներեն ստորագրություն առինք և նղովյուք փակեցինք, 30 օր միջոց տվինք, որ բոլոր նշանված աղջկունք և երիտասարդունք անպատճառ պսակվին, ապա թե ոչ աղջիկներու կողմանե առած պաշլխներ հետս պիտի առնվին։ Այս կարգադրության վրա բոլոր գյուղացիք անհուն կերպիվ ուրախացան, շնորհակալ եղան Աղգային վարչութենեն և բյուր անգամ օրհնեցին մեր կյանք, վասնզի յուրյանց որդվոց և դստերաց կյանք կազատվեր մի տեսակ դերությենե և որդեվաճառությենե և շատ գերդաստանք յուրյանց կործանման վրեն կազատեին, միջակ ժողովուրդ սաստիկ պաշլխ տալեն զերծ կմնար, երեսուն-քառասուն տարու աղքատ երիտասարդ կարող կլինին առանց պաշլխի կին առնուլ և առնվազն հաշվելով միայն Կարսա 43 գյուղի մեջ հարյուր պսակ ավելի կլիներ տարին, սակայն ծանծաղամիտ և աղգատյաց Ռշտունին մեր 'ի Կարսա մեկնելեն զկնի, գեղեր կրկին կեղեքելու ելած միջոցին ոչ թե միայն պատվեր կուտա պաշլխ տալ և առնուլ, այլ անխորհուրդ հիմարությամբ կհրամայե, որ այսուհետև կրկնապատիկ տան և առնուն զպաշլխն, թերևս այս ծերունին, հուսա-

Հատելով յուր մարմնո և միանգամայն հոգվո հիվանդութենեն, խորհած է յուր կենաց հետ ջնջել նաև աշխարհեն ազգին զարմն և զավակ։

Ազգային կրոնական ժողովո կողմանե խոսեցա սույն ծերունի եպիսկոպոսն, թե Ազգային պատրիարքարան և վարչություն բավական նեղասրտաց է յուր վերա քահանայից ձեռնադրության մասին, զի 10—12 ոսկի առնելով ձեռնադրություն կընիք, պատասխանեց, թե Ռուսաստանի բաժնի եպիսկոպոսունք 50 ոսկիեն մինչև 100 ոսկի կառնին, վարչություն թող նախ զանոնք կարգի դնե, ապա գա ինծի խրատ տա։ Զեկուցի իրեն, որ թե շարունակե այսպես, գուցե արգելման հրամա-Նագիր գա վարչութենեն, նա այս զեկուցման պատասխանեց, մինչև ցարդ 10 ոսկի կառնեի, սակայն այսուհետև 20—30 ոսկի կառնիմ և կձեռնադրեմ, ո՞վ իմ վիճակիս կխառնվի։

Մեր 'ի Կարս մտնալեն 4 օր զկնի երևելի հանրայք և տիրացնե-րու հայեր եկան ներկայացան յուրյանց սրբազան առաջնորդին, մեք սկսանք միջնորդել, թե հարյուր տուն ժողովուրդ մնացած են առանց քահանայի, կաղաչեմ, որ մեկ դյուրին և հնարավոր միջացավ ձեռնա-դրեք, սակայն Հազկերտի նման զայրացած սկսավ բարկությամբ հայ-հոյել զիեղճ հայեր, շուն քոփակ, դուք հարուստ եք, դուք Երեմիա սրբազանին իմ վրա բողոքած եք, ձեզմե 20—30 ոսկի կառնիմ կձեռ-նադրեմ, կորե՞ք շներ և այլն։ Խեղճ հայեր կորազլուխ դուրս ելան, ուխտեցին, երդվան, որ քանի Ռշտունին Կարս վիճակի մեջ է, ոչ քա-հանա ձեռնադրել տան և ոչ քահանա ունենան։

Այս մասին ոչ սակավ հանդիմանություն տեղացինք զլխին, սա-կայն գլուխ չկար խեղճին վրա, խորհեցա անմիջապես հեռագրել վար-չության, որ 'ի պաշտոնե դադարեցնե, սակայն տեսնալով նո-րա հիվանդություն, գուցե վարչության հեռագիրն ընդունելով սրտի ցավեն չդիմանալով մեռնի, մինչև ցայսօր հապաղեցի, 'ի պաշտոնե զեկուցի իրեն, թե ժողովուրդ դժգոհ է իրմեն, ուստի պարտի անձամբ ձգել վիճակն և պատվավոր կերպիվ հեռանալ, խոստացա բերել զինքն Վասպուրական և դարմանել, սակայն նա համառելով համառեցավ և ասաց. ես Կարսա մեջ կմեռնիմ, այս մարդ գուցե միտք դրած է Կարսն ալ իր հետ մեռցանել, զի բոլոր մարմնո կենդանություն զլուխն է, երբ գլուխ նյութապես և բարոյապես հիվանդ և մերձ է 'ի մեռանիլ, ան-տարակույս ամեն անդամք կհիվանդանան և կմեռանին։

Կարսա վիճակային ժողովուրդք ամենք զգայյալ են յուրյանց գլ-խոյն անբժշկելի հիվանդության, սաստիկ բողոքներ մատուցին առ մեզ, խոստացյալ եմ գրել վարչության և դադարեցնել զայն 'ի պաշ-

տոնեն, եթե այսպիսի խոստմամբ չհանդարտեցնեի, թերևս մինչ ցարդ բազմաթիվ բողոքներ հասնեին 'ի պատրիարքարան։ Շատեր իմանա-լով, թե Ռշտունին մեր միջնորդությամբ հաջողած է 'ի Կարս մտնալ, սաստիկ կմեղադրեին զմեզ, թե ինչ խղճին մեկ մարդ շահելու հա-մար, այսչափ ժողովուրդ կորստյան վտանգի մատնած էինք, արդարև խեղճ ծերունին հիվանդ վիճակ տեսնալով և ես շատ անգամ կղջայի գրածս միջնորդությանս վրա և հանցանք վրա առնելով սրբազան պատրիարքին և Ազգային վարչության անմեղադիր կկացուցանեի, կաղաչեմ որ անմիջապես այդ հիվանդ ծերունին 'ի Կտուց անապատ և կամ 'ի Աղթամար վերադառնալու հրաման ընելով, նորա տեղ մի բանիբուն և հայասեր վարդապետ խրկեք առաջնորդ, որով թե դրպ-բոցներ բացվեր և բարեկարգվին և թե սահմանադրություն շարու-նակվի և հաստատ մնա Կարսա վիճակի մեջ։

Բաղիշեցի Մարգար անունով անձ մի, որ 700 ոսկի տոկոսով դրամ առած է Ռշտունիեն, սա եպիսկոպոսի դրամներ մարսելու նպատա-կավ հանուն վիճակային ժողովրդոց ստեպ հեռագիր կուղղե Ազգային վարչության և 'ի պատրիարքին և Ռշտունին առաջնորդ կխնդրե, խեղճ Ռշտունին ոչ միայն չէ կարողացեր այս խարդախ անձեն յուր դրամներ առնուլ, այլև հիշյալ կաշառակեր փալանճի[77] Մարգարի ձեռք գործիք եղած է, այն շահամոլ անձեն 'ի զատ Ռշտունին երբեք խոսակից չունի, ուստի եթե Ռշտունին պաշտպանելու մասին հանրա-գիր խրկվի 'ի Պոլիս՝ Մարգարի խարդախությամբ կհորինվի և կխբրկ-վի, ինչպես առաջներ կխրկվի եղեր, ուստի վարչություն բնավ կարե-վորություն տալու չէ խրկված խարդախ հանրագիրներուն։

Կարսա թե քաղաքցվոց և թե գյուղացվոց նյութական վիճակ բա-վականին բարվոքած է։ Բոլոր արհեստները և վաճառականություն հա-յոց ձեռքն է, աղքատություն խիստ սակավ է։ Կարսա բնակիչք բնավ սովորություն չունին Պոլիս, այլևայլ կողմեր պանդխտության երթալ։

1000 տուն տաճիկ բնակիչ կա Կարս քաղաքին մեջ, մեծագույն մասամբ լավ կվարվին քրիստոնեից հետ։

Կարսա գյուղացիք ամենք երկրագործության կպարապին, գյու-ղացվոց մեծագույն մասին նյութական վիճակն ապահովված է։ Ռու-սիո կողմի պարսիկ ավազակներ Շիրակավանի և Նախիջևանի գյուղե-րուն շատ անգամ վնաս կհասցունեն և ավազակության հետ երբեմն-երբեմն զմարդիկ ևս կսպաննեն։ Հիշյալ գյուղացիք քաջասիրտ գոլով զենքի վարժություն ունին, ժամանակ առ ժամանակ բավական կզինին ավազակաց դեմ՝ յուրյանց անձ և ինչք պաշտպանելու։

Նախիջևանի 16 կտոր գյուղացիք Անի քաղաքի հարավային լեռանց և ձորոց մեջ բնակելով՝ բուն մեր նախնի նահապետական պարզությամբ կվարվին։ Ճելալ և այլ քիչ քուրտեր հիշյալ գյուղերու շրջապատներ բնակելով, խեղճ գյուղացվոց ձեռքին շատ ընդարձակ երկիր և հողեր յուրացնելով թափու ըրած են։ Քուրտերու գյուղեր մինչև 100 կհաշվին այս կողմեր, սույն եղեմավայր երկրին հողերեն 40 մասեն մի մասն հազիվ մնացած է հայոց ձեռքն, ամռան ճելալցիք վրաններ հայոց հողերու և կալվածներու մեջ հաստատելով, խեղճ երկրագործաց շատ վնասներ կհասուցանեն և ցանած արտորայք կկերցունեն։ Ճելալցոց այլ քրտոց այս տեսակ և ուրիշ այլ և այլ տեսակ հարստահարությանց մասին մի ազգու բողոքագիր ուղղեցի Կարսա մյութեսարիֆին 'ի ձեռն Շիրակավանի բարեկարգ տեր Սաղաթել քահանային և հայոց զրկանաց հատուցումն պահանջեցինք Կարսա կառավարութենեն։

Շիրակավանի գյուղերու մեջ թափուճին մի ավուր գութանով վարելո հողեն 100 զուրուշ թափուի դրամ պահանջելուն համար, հայք, արսիկք և տաճիկք միաբանելով 'ի կողմն ռուսաց կուզեին գաղթել, այս մասին մանրամասն տեղեկություն հավաքելով գյուղացվոցմե ընդարձակ բողոքագիր մի պատրաստելով՝ ընդդեմ թափի մեմուրի և ընդդեմ տեղույն անկարող գայմագամին 'ի ձեռն երզնկացի մահտեսի Գևորգ աղային խրկեցի դարձյալ Կարսա մյութեսարիֆին և զեկուցի իրեն, որ եթե մի ավուր գութանի տեղ 30—40—50 թափիք գրելու չլինին և գայմագամ չփոխեն, արդարև թե հայերեն և ուրիշ ազգերեն դեպ 'ի ռուսաց սահման պիտի գաղթեն և այլն։ Թափու մեմուրին և գայմագամ պաշտոնե անկան և մեր բողոքագրոյն համաձայն խնդիրներ կարգադրվեցան։ Շիրակավանի դաշտոց մեջ 20 գյուղ հայ բնակիչ կա, 80-են ավելի տաճկաց, պարսկաց և քրտաց գյուղեր կան։ Երկրի ընդարձակ հողերեն 20 մասին 2 մասը հազիվ թե հայոց ձեռքն է մնացեր։ Թե հիշյալ Շիրակավանի և թե Նախիջևանի ամեն գյուղերու մեջ Բագրատունի թագավորաց ժամանակեն մնացած եկեղեցիք և վանքեր նկատեցինք, որոց շատեր ցայսօր տակավին կանգուն և շեն են, զորս 'ի ձեռս այլասեռից տեսանելով՝ կենացս կես մաշեցավ, սիրտ իմ խռովեցավ հիս և երիկամունք այլաբանեցան, Երեմիայի պես բյուր անգամ անիծեցի իմ ծննդյան օր։ Սրտիս սաստիկ կսկիծեն և մորմոքմանեն աճապարեցի փութով հեռանալ այն աշխարհեն, զի եթե կամեի 'ի գերեզման խաղաղությամբ 'ի ջանելով և չպիտի կարենայի այսօր սույն համառոտ տեղեկություն հաղորդել վարչության։ Ամեն

կես ժամու միջոց գյուղերու մեջ, բլրաց վրա, լերանց ստորոտ գեղեցիկ հովիտներու մեջ, հոյակապ եկեղեցիք և վանորայք կան, որք ճշմարիտ ապացույց են Անվո հազար և մեկ եկեղեցյաց։ Շատեր խոտերու և հարդերու ամպարանոց և շատեր խաշանց մակաղատեղի են 'ի ձեռս քրտաց։

Կտարակուսիմ այս երկրի բնակչաց բարոյական կյանք նկարագրելու, գուցե սորա բարոյական ավերմունք մյուս նյութական ավերմունքեն ավելի արտասվալի լինի, սակայն հայրենյացս և պաշտոնիս պարտք կատարելով՝ պիտի նկարագրիմ ստանոր, զոր ինչ տեսի աչոք և զոր շոշափեցի մտոք։

Շիրակավանի և Նախիջևանի գյուղացիք ժողովուրդ եկեղեցասեր և բարեպաշտ կերևին և նախնի քրիստոնեության հետևող, սակայն ոչ 'ի վարդապետաց քարոզիչ տեսած են և ոչ 'ի քահանայից ուսուցիչ։ Եկեղեցին քարոզ տալով, երբ երեկոյան գյուղացիք կհավաքեի մեր փարախի միջի վեհարան, քրիստոնեության վրա հարցումն կուղղեի ժողովրդյան և կառաջարկեի, որ խաչ հանեն երեսնին և հայր մեր ասոթք կարդան։ 'Ի քահանայից սկսյալ մինչև լերան մեջ մեծացած հովիվն, բնավ չէին կարող քրիստոնեության վրա երկու բառ բացատրություն տալ, ուղիղ խաչակնքող և հայր մեր ասել և երես խաչակնքող յուրաքանչյուր գյուղի մեջ մեկ կամ երկու մարդ հազիվ թե պատահեր, երբ կառաջարկեի, որ կարգավ դան խաչ հանեն երեսնին, հայր մեր կարդան, խուռն բազմությամբ արտաքս կվազեին, չլինի թե խայտառակվին, երբ Ջիելի և ուրիշ քանի գյուղից մեջ այս տեսակ քննության կառնեի, այր մի բարձրաձայն աղաղակելով ասեր, թե նախ պետք է սրբազան մեր քահանաց կանչեք և տեսնաք, թե խաչ հանել գիտե և ուղղությամբ հայր մեր մինչև 'ի գլուխ կրնա անսխալ ասել և այլն, ապա թե զմեզ ստիպիք խաչ հանել։

Արդարև, շատ գյուղերու քահանայք ոչ քրիստոնեության վրա հմտություն ունին և ոչ սակավաթիվ գիտցողներ ժողովրդական երկու բառ ուսուցանելով երես ուղիղ խաչակնքել տված են, և ոչ գոնե հայր մեր մի ուղիղ արտասանելու փույթ ունեցած են իրենք։ Երբ պապականք և բողոքականք այսպես պարզ, միամիտ, անուս, քրիստոնեությանց և յուրյանց եկեղեցվոց ավանդության անտեղյակ ժողովրդյան մեջ ոտք կոխելու լինին և սոցա փոքր-ինչ կարդալ գրել սովորեցնեն և յուրյանց գաղափարին համաձայն քրիստոնեության վրա սուղ ինչ հմտություն տան, արդյո՞ք լուսավորչական հայ կմնա, ամեն ատեմ ձեզ՝ բնավին ոչ, ուստի մինչև ամեն գյուղի մեջ դպրոցներ բաց-

վին, պարտի կրոնական ժողովն մի թիկնապահ քարոզիչ վարդապետ Կարսա առաջնորդեն և երկու քարոզիչ ևս մին Նախիջևան և մյուսն Շիրակավանի գյուղացիներուն հատկացնել։

Այս կողմի մարդիկ բնավորությամբ բարեսեր և ընդունակ մարդիկ են, սակայն ոչ հայության վրա և ոչ ընկերականության վրա երբեք գաղափար չունին։ Նախիջևանի գյուղերու ժողովուրդք բուն երկրին հին բնակիչք են, սակայն Շիրակավանի ժողովուրդք Հայաստանի զանազան կողմերե եկամուտ են, ուստի թե գաղափարաց և թե կենցաղավարության մեջ խիստ տարակարծիք են իրարմե։

Չորս-հինգ օր հարսանիք կանեն և մեծածախ շռայլությամբ կմաշին։ Չորս օր մի ավուր փոխարինեցինք և շռայլության չափ դնելով պատվիրեցինք, որ իբրև քրիստոնյա մարդ կենցաղավարեն աշխարհի վրա, վասնզի գյուղացվոց հարսանյաց մեջ շատ անբարոյական դեպքեր կպատահին, հորմե կռիվներ առաջ գալով վիրավորություն և մինչև սպանմունք ևս տեղի կունենան։ Այսպիսի անբարոյական անկարգության առաջքն առնուլ դարձյալ հանձարեղ և հայրենասեր առաջնորդ լինելու է, սակայն ոչ գոյ 'ի ժամանակի այսմիկ առաջնորդ և այլն։

Այս կողմեր տարին չորս-հինգ առ և անկարգություն կպատահին պաշլիխի սովորության պատճառավ, վասնզի, ինչպես նախապես գրած եմ, աղջկան հայր իր պաշլիխ շատ առնելու փափաքով մինչև 20—30 տարի օրիորդ տան մեջ կպահին և կամ դրամ շատ առնելով աղջկան ատելի մեկին նշանել կուտան, ուստի աղջիկներ այս երկու տեսակ անողորմ և անօրեն զրկանաց չկրնալով դիմանալ, քրտաց, տաճկաց և պարսից երիտասարդաց հետ փախչելով հայրենի եկեղեցվո ծոցեն և ազգային ազգահամարեն կզրկվին 'ի նախատինս հարց, մարց և ազգականաց յուրյանց և ի' ցավ լրության աղգիս։

Պաշլիխ Կարսա գյուղերու մեջ 10 ոսկիեն մինչև 50 և մինչև 100 ոսկիի հասուցած են, այսչափ գումար դրամոց հետ կա 1000 ղուրուշանոց ձի, ծանրագին զգեստք և ընծայք։ Սույն այս ներքին հարստահարություն, արտաքին քրտաց հարստահարութենեն կրկնապատիկ ավելի է, զի մեք նուրբ քննությամբ կշռեցինք և համեմատեցինք, որ այսոսիկ այսպես լինելն, մանավանդ գյուղացիք բյուր անգամ խոստովանեցան և վկայեցին, թե միայն այս պաշլիխի հարստահարություն ավելի վնասակար է քրտաց հարստահարութենեն, որով զմիմյանս կկործանեմք և կզրկեմք։

Ուստի սույն վնասակար սովորություն բնաջինջ ընելու համար հնարք և աշխատություն երբեք չի խնայեցինք, որ մեր օգնական խնուսցի տեր Եսայի և Շիրակավանի տեր Ստեփան թողուցի Բագրեվանդ՝ մնացյալ գյուղորեից մեջ սահմանադրություն գործադրել և պաշլիխի չար սովորություն անթերի լրացնելով՝ բոլոր նշանած աղջիկներ ամուսնացած են։

Հիշյալ գործունյա երկու քահանայք մեր տված հրահանգով և կոնդակով սուրբ Հակոբի պահոց գնացել են 'ի Կարս՝ սահմանադրություն գործադրելու և պաշլիխներ արգելելու և հետս պահանջելու, թեպետ Կարսա մյութասարիֆին հրամանագիրն ունին ձեռքերնին, սակայն զրով կիմացնեն մեզ, զի եթե պատրիարքարանեն պաշլիխի արգելման.... (Նամակի վերջին մասը չկա—Հ. Պ.)։

Մեր Հայաստանի այցելության անհրաժեշտ պիտույից համար 'ի Պոլիս գնված կայից հաշվեցուցակ 1872 մայիսի և հունիսի ամսուց սկսյալ մինչև ցհուլիսի 19 ցմեր 'ի Պոլսո մեկնիլն և հունիսեն մինչև ց1873 հունվարի 1 'ի միջոցի վեց ամբողջ ամսոց մեր ձեռոք տեղի ունեցած ընդհանուր ծախուց հաշվետոմարին պատճեն, զոր Ազգային տնտեսական խորհրդոց ուշադրություն կհանձնենք։

Ղուրուշ

800 մի կաշիե թենպելիթ[77] վանեցի Աճեմ Խաչոյան Գրիգոր աղայի ձեռոք։
280 երեք զույգ լավ ոտնաման (երկու զույգ ջիզմա և մին կոնդուրա)[78]։
100 մի բրդե վերմակ։
120 3 հատ տեղացի կարած ֆանիլա[79]։
120 մի մեծ կաշիե պայուսակ։
160 մի վրա առնելո մեծ ֆանիլա։
120 12 հատ երեսի մեծ անձեռնոց։
. . . . . .

1800 գումար

120 երկու հատ վեղարացու շալ։
140 մի թավիշե լավ գլխարկ Ղալաթիո տեր Հովհաննեսի ձեռոք։
450 մի չուխայե վերարկու վանեցի դերձակ Սերոբի ձեռոք։
360 երեք հատ կապայու շամակ[80] մեր Սեդրակի ձեռոք։
50 12 հատ կապույտ ձեռնոց։

250 մի թոփ խաս ամերիգա Կյումուշ Կարդանյանի խանութեն։

. . . . . .

3170 'ի Պոլսո մինչև 'ի Պոնտոս ծախք։

300 մի գամարայի պիլեթ[81]։

75 մի սպասավորի պիլեթ՝ փոխանակ 150 ղուրուշ։

47 բեռնակրաց մաքսի սպասավորաց և նավակեն մինչև 'ի նավ։

70 հաց կերակուր։

60 մի փորձանավոր երիտասարդի տվի նավի մեջ և ստիպելով խըրկեցի 'ի Լենտոթիս յուր հայրենիքն։

45 Պոնտոսի նավահանգիստ նավակին բեռնակրաց և մաքսատան սպասավորաց։

50 Չայ Պոնտոսի մեջ առնված՝ ճանապարհին գործածելու համար։

28 6 հատ չայի ստաքաններ։

. . . . . .

3845

112 Պոնտոսեն մինչև 'ի Բաբերդ կերակուրի և պանդոկաց ծախքեր։

24 Բաբերդի մեջ չայի համար շաքար։

85 Բաբերդեն մինչև 'ի Կարին կերակուրի և այլն։

600 չորս ձիու վարձք (երկու հեծնայու, երկուք բեռան մին մի 150 ղուրուշ)։

. . . . . .

4661 Կարնո քաղաքի մեջ անհրաժեշտ ծախքեր։

780 մի կարմիր ձի վանեցի Զաքարյան Զաքար աղայի ձեռոք։

400 Սույն ձիուն համետ առանց կոլան[82] թաղիք, դարձյալ Զաքար աղայի ձեռոք։

180 մի սիճատե՝ Կարնո տեր Գրիգորի ձեռոք։

660 մի բեռան ձի՝ խնուսցի տեր Եսայիի ձեռոք։

80 սույն ձիուն փալան սանձ և այլն, տեր Եսայիի ձեռոք։

38 ձիու շուլ թաղիք՝ քեռոց սպասավոր Գրիգորի ձեռոք։

100 15 չորս ձիանց հարդ՝ գարի, խոտ Գրիգորի ձեռոք։

30 մեր երկու և տեր Եսայիի երկու ձիանց նալվածք՝ տեր Գրիգորի ձեռոք։

60 մի հեռագիր Կարինեն Պոլիս 'ի պատրիարքարան՝ մեր ձեռոք։

64 մեր և սպասավորի շորեղենաց լվացման՝ Գրիգորի ձեռոք։

100 կուսակալի սպասավորաց՝ մեր ձեռոք։

. . . . . .

7153

20 Շաքար և խահվե՝ Գրիգորի ձեռամբ։

25 մի գիրք և մդրախ[84] անվանյալ տեր Հովհաննես՝ իր քաջության ուսումնասիրության համար։

25 մի գիրք բողոքականաց վարժապետ տեր Հարությունն բողոքականն ետ բերելու համար։

250 Բասենեն մինչև 'ի Կարս՝ մի գրաստու և զմեզ տանող մարդկանց վարձք։

. . . . . .

7473 Կարսա քաղաքի և գյուղորեից միջի ծախքեր։

60 Հեռագիր Կարսեն 'ի Պոլիս պատրիարքարան։

30 Չորս ձիու նալվածք՝ Գրիգորի ձեռամբ։

30 Մեր վերմակի երես նորոգելու՝ Գրիգորի ձեռամբ։

10 Այարի[85] տակի թաղիք՝ Գրիգորի ձեռամբ։

100 Բդեշխի սպասավորաց՝ մեր ձեռոք։

24 Երեք անգամ կերակուր՝ Գրիգորի ձեռամբ։

. . . . . .

7727 գումար

ղուրուշ

200 մի սև յափունճա[86] Գրիգորի համար՝ տեր Սաղաթելի ձեռամբ։

100 Կարսա մութեսարիֆեն հանված չավուշին 18 օր մեզ մինչև ի Կաղզվան շրջագայելու համար։

. . . . . .

8027 'Ի Կարսա մինչև 'ի Բագրեանդ գավառ

50 մի ձիու վարձք Կաղզվանու մինչև Համատ գյուղ Ալաշկերտու։

100 հետերնիս առած երեք հրացանավոր հայ քաջերուն։

30 դարձյալ ձիու նալվածք Բագրեանդա Կարաքիլիսա գյուղին մեջ։

150 Վաղարշակերտի տեր Հովհաննեսն, որ իբրև գրագիր մինչ ի Հարծեթ ընկերացավ մեզ։

200 մի կիսամաշ քյուրք՝ հիշյալ տեր Հովհաննեսին։

80 Բագրեանդեն մինչև 'ի Բաթնոց երկու ավուր ճանապարհին քուրտ պեյերու ծառայից։

. . . . . .

8627 Բաթնոցեն մինչ 'ի Հարնկե և Հարքեշ

80 Արծկա երկու զապթիեից տրվեցավ, որք ընդ մեզ շրջեցան։

15 երկու ձիու նալվածք (ճամբայց դժնդակն 15 օր հազիվ դիմանար)։

14 Մեծոփա վանից սպասավորաց։
24 Ականից մեջ գլխիս բարձերու երեսներ նորոգելու։
24 Խամեի Կարապետին՝ մի զույգ ոտնաման։
80 Ականցեն մինչև 'ի Լիմ անապատ 'ի ներս և անտի մինչև 'ի Վան։

. . . . . .

8884 Վանա քաղաքի մեջ եղած ծախքեր
60 քսան բառով մի հեռագիր 'ի Պոլիս 'ի պատրիարքարան։
18 ձիանց համետներ նորոգելու։
368 6 ամսո բոլոր փոշտային ծախքեր։
600 մեր սպասավոր Գրիգորի 6 ամսական մինչև 1873 հունվարի 1
1600 տեր Եսայի և տեր Ստեփան մեր օգնական քահանայից ամսական։

. . . . . .

11530 Տասնմեկ հազար հինգ հարյուր երեսուն։

։ Կեդրոնական սնտուկեն և գավառաց առաջնորդներեն ստացած մուխաթայից ցուցակն է, որոնք արդեն ստանալով և 'ի պատրիարքարանի կողմեն ընկալագիր տված եմք առաջնորդաց։

Ղուրուշ

1000 Կանխիկ կեդրոնական սնտուկեն հուլիս և օգոստոսի ամսականներ։
420 Բաբերդու 1872 ամի մուխաթայից Թաշնիկ Գրիգորիս վարդապետեն։
500 Հասան Գալայի վանքի 1872 ամի մուխաթայից Տիմոթեոս վարդապետեն։
1000 Ռէշքիլիսեի վանքի 1872 ամի մուխաթայից առաջնորդն Հովհաննես վարդապետեն։
1000 Կարսա վիճակ 1873 ամի մուխաթայից Ռշտունի եպիսկոպոսեն։
750 Կեդրոնական սնտուկեն դարձյալ նավի ծախսաց հատկացյալ։

4670 Չորս հազար վեց հարյուր յոթանասուն

Ղուրուշ

11530 ծախք
4670 եկամուտ
6860 պարտք

Երկու Բասենու մեջ մեծ և փոքր 30 հայոց գյուղեր կան՝ որոնց մեջ 820 տուն հայ ընտանիք կբնակին։ Պասքևիչ, երբ Հայաստան կուգա և կվերադառնա, բազմաթիվ հայ ընտանիք երկու Բասենեն գաղթական կերթան ռուսահայոց կողմեր, ըստ պատմության արդի բասենացվոց՝ 250 գյուղ հայ բնակիչ են եղեր երկու Բասենու գավառաց մեջը, 250 գյուղեն 10.000 ընտանիք գնալով գյուղերը թողուցած են քրտաց ձեռքը։ Այժմ 225 տաճկաբնակ և քուրտաբնակ գյուղերեից մեջեն 15—30 գյուղ հայոց բնակարան մնացեր է։ Բոլոր հայեր եյ՝կրաչործությամբ կպարապին, երկիր բարեբեր և արգավանդ է։ Երասխ երկու Բասենու գյուղեր հայս կոյս և հայն կույս բաժանելով՝ ինքն Բասենու հյուսիսեն դեպի հարավային արևելք դիմելով կերթա 'ի Կաղզվան և անտի դեպ 'ի արևելք ուղղելով յուր ընթացք կերթա 'ի դաշտն Արարատյան։ Բասենու գյուղերը առհասարակ լավ դիրքեր ունին, օդն առաջին կարգի առողջարար և ջուր քաղցրահամ, հողեր մեծ մասամբ ջրարբի, դաշտեր և լեռները խոտավետ և զվարթահայաց։ Մարդիկ հին նահապետական գաղափարով կկենցաղավարին։ Բասենցիք բնավորությամբ և լեզվի գործածությամբ շատ կնմանին Կարնո գյուղացվոց և արդեն Կարնո գավառակից կհամարվին։ Բնական հայրենասիրություն մի ունենալով երբեք օտարություն դիմելը փափաքը չունին և չեն դիմեր ալ, ոչ 'ի Պոլիս և ոչ 'ի ռուսահայս, աշխատասեր և բավականասեր են, արք և կանայք զգեստի կողմանե պարզասեր լինելով պճնասիրությենե խիստ հեռի են, ընդհակառակն աղջիկ նշանելով և երիտասարդ պսակելը մասին շռայլության գագաթը հասնելով՝ մեծապես ինքզինքին կվնասին, աղջկան տերը նախ՝ 500 ղուրուշ առնելով միայն խոսք կուտա և ապա 10-են մինչև 30 ոսկի պաշլիխ կպահանջե երիտասարդեն, որ զայս գումար վճարելեն զկնի կպատրաստվի սա տարվան հինգ տաղավարները մեծածախ խորտիկներով և ընծայուք, այն է՝ մեկ ձեռք զգեստով և մեկ քանի մը ոսկիով հանդերձ (տահոլով և զուռնայով) կերթան նշանված տեսնելու, նշանված աղջկան գյուղի կանայք և աղջկունք կժողվին, երկու-երեք ժամ կպարին և այլն։ Ագահ և անգութ մարդիկ են, 2 և մինչև 3 տարի աղջիկ նշանված կպահեն տան մեջը, որպեսզի շատ տաղավարներ անցունելով խորտիկ ուտեն և ընծաները հավաքեն։

Գաղթականություն մինչ ցայսօր ոչ խմբովին և ոչ անհատական գաղթական չունենալով այնչափ զգալի աճումն չեն ունեցեր։

Ուստի պաշլխի հինգ տաղավարի և հինգ օք հարսանիքի առնելո վնասակարք և նվաստացուցիչ կետերը՝ մեր խորին ուշադրություն գրավելով՝ արգելեցինք որդեվաճառ տուր և առ, 5 տաղավարի ընծայատուր սովորությունը և 5 օր հարսանյաց զեղխությունը։ Բասենու գլխավոր եղած գյուղի մեջ ժողով մի գումարելով երկրին երևելի մարդիկներուն և քահանաներուն առաջարկեցինք, որ փութան ազգի վնասակար սովորություն մեջտեղեն իսպառ բառնալու և ամենքն 'ի միասին մեծ փափագք ցույց տալով ստորագրություն տվին մեզ սույն ազգավնաս սովորությանց իսպառ հրաժարիլ։ Սակայն վստահ չլինելով անոնց ստորագրության և խոստման վրա՝ առաջնորդ Տիմոթեոս վարդապետն պատվիրեցի, որ այլևս պաշլխ ավողաց և առնողաց պսակին հրաման չտա, նույնպես ալ 'ի քահանայից ստորագրություն առնելով, որ պսակ չանեն պաշլխ առնողաց և տվողաց որդին վրա, սակայն ասկե քսան օր առաջ նամակ մի ընդունեցի Տիմոթեոս վարդապետեն, թե առանց պատրիարքարանի սաստիկ կոնդակի մը և առանց կառավարության հրամանագրի և բռնության անկարելի է սույն սովորություն մեջտեղեն վերցնելու, զի ասե թե Ձեր տեղես մեկնելեն երկու ամիս հետո շատեր յուրյանց խոստման և ստորագրության հակառակ սկսան տալ և առնուլ, ուստի մեր օգնական քահանայից նամակ մը ուղղեցի, որ Կարսեն վերադառնան 'ի Կարին և կուսակալեն հրամանագիր առնելով երթան 'ի Բասեն և բոլոր զորությամբ արգելք մը տալ չար սովորության։

Սույն այս կետերու վրա բազմիցս գրեցի և աղաչեցի զվարչություն, որ փութանակի կոնդակներ ուղղե առ ամենեցուն՝ առ առաջնորդս վիլայեթին արգելուլ վերոհիշյալ ազգավնաս սովորություն։ Կհուսամ, որ մեր այսչափ մեծ կարևորություն տված կետը՝ վարչությանդ ուշադրությունը գրավելով այս անգամ չի պիտոր հապազիք արգելիչ կոնդակներ և հարսանյաց չափավորության վերաբերյալ կանոններ անհապաղ խրկել։ Մեր քարոզչության և առտնին խոսակցության մեջ, թե որչափ ազդու կերպերով և զորավոր փաստերով ջանացեր եմք այսպիսի ազգավնաս սովորություն բառնալո հորդորել տալ քահանայից և ժողովրդոց, չուզեցի նշանակել աստանօր։ Այլ կաղաչեմ, որ մեր տրքնություն առ ոչինչ չհամարեք, զի այս ներքին հարստահարություն արտաքին հարստահարութենեն ավելի վնաս կհասցնե ազգության, վասնորո չդանդաղեցա մեր բոլոր գրությանց մեջ նշանակել սույն կարևոր կետեր և վարչությանդ ուշադրություն հրավիրելու առ այս։

Երկու Բասենո 30 գյուղորեից մեջ բնավ կանոնավոր դպրոցի հետքն անգամ չի տեսնվիր, քանի մը գյուղերու մեջ քանի մը խեղճ տղայք

գյուղի 'ի քահանայից հասարակ դաս կառնին, դասատու քահանայից և յուրյանց 3—4—5—6 և ամենեն շատը 8 աշակերտաց թիվը մեր ընդարձակ տեղեկագրության և ճանապարհորդության մեջ նշանակած եմք, զորոց ավելորդ կհամարիմ առանձին տեղեկություն տալ այժմ։ Բասենցվոց վրա ո՛չ ազգայնության ոգի, ո՛չ ազգասիրության զգացում, ո՛չ առաջադիմության փափագ և ո՛չ ուսումնասիրության եռանդ և կրոնագիտության ջերմություն կտեսնվի։ Ժողովուրդ մեծագույն մասամբ սառն անտարբեր, պարզաբարո բնությունը մեջ կնշմարվի, վասնզի վերոհիշյալ բարոյական ամենակարևոր կետերու վրա ո՛չ խոսիլ, ո՛չ քարոզել և ո՛չ հրահանգել մեկ մը գտնված է Բասենա երկրին մեջ։

Բացի մեկ-երկու բարիբարո և բարեկիրթ քահանայից մնացյալք անկիրթ և անուս, թե կրոնական անհետամուտ, թե ազգության մասին անհմուտ լինելով, պարապուրտ ժամանակ կանցունեն, կսիրեն երկիր մշակել, անասուն բառնանել երկրին վրա, քան թե եկեղեցի պայծառացնել և ժողովուրդ հրահանգել, եղբայրասիրության և 'ի ազգասիրության յուրյանց բիրտ և անհրահանգ ընթացյուք ժողովրդյան գլխավոր անկարգությանց շարժառիթ լինելով, զնոսա բռնությամբ հնազանդեցնել կսերին քան սերով և իմաստությամբ կառավարիլ։

Բասենու Մագիստրոսի սուրբ Աստվածածնի վանքին վանահայր Տիմոթեոս վարդապետ, որ երկու Բասենու առաջնորդ կանվանի առ այժմ ըստ մասին թե՛ չէ բավական, սակայն և թե ըստ մասին ևս չէ կարող 'ի կարգ և 'ի զգաստություն հրավիրել զքահանայս, զի Բասենու քահանայք Կարնո տեր Հարություն եպիսկոպոսեն ձեռնադրվելով և մանավանդ հրահանգ մը ընդունելով, չեն զգանիր յուրյանց սեփական հովվին անսալ և հնազանդիլ, զի ունին զորավոր պաշտպան Կարնո կեդրոնին մեջ, որ հարաժամ Բասենո վիճակ Կարնո վիճակին հետ միացնելու մտածելով յուր սիրտին մեջ, մի տեսակ ձախողակի քաղաքականությամբ քահանայք և ժողովուրդ կհուզե Տիմոթեոս վարդապետին դեմ. զի ինչ տեսակ անկանոն և մերձավոր պսակի հրաման զոր կարգելու Տիմոթեոս, բասենցվոց Հարություն եպիսկոպոս յուր ձեռնադրած քահանայից միջոցավ պսակելով առատապես կվարձատրվի, որով Տիմոթեոսին ազդեցությունը իսպառ կանհետանա յուր վիճակի ժողովրդոց և քահանայից վրայեն, զի ծանր հանցավորաց բավական է նամակ մի ուղղել կամ դիմել 'ի Կարին, իսկույն արդարացյալք մտանին 'ի Կարին, զորս ոչ ոք խնդիրն այնուհետև կոչել հանցավոր, զի երկնչին 'ի սպառնալյաց Վեհապետյանին, որ նստի 'ի բարձրությունս Բարձր Հայոց։

Տիմոթեոս ծայրագույն վարդապետն 8 տարի ամբողջ Մագիստրոսի վանքին վանահայրությունն և Բասենու առաջնորդության պաշտոն կվարե անընդմեջ, սակայն սա վանքն գրեթե մի տեսակ ամայության մեջ թող տալով բնավին անհոգ եղած է վանքին նյութական և բարոյական շինության և վերանորոգության։ Մագիստրոսի ձեռքով 600 ամոք առաջ շինված տաճարին գմբեթի վեղարի կես կողմի վրայի քարերը խախտված կամ ընկած են, նույնպես տաճարի տանիքի սալերը տեղեն տեղիս խարխլեր և ընկեր են, զոր վանահայր երբեք շինելո և վերանորոգելո խնամք չէ ունեցեր։ Վանքի շենքերը ամբողջ հինցեր և կործանելո վիճակի մերձեցեր են, ազգու խրատներ և հորդորներ տվինք վանահոր ոչ միայն նյութական շինվածոց հաստատության փույթ առնել, այլ ջանալ ամենայն զորությենե աշխատիլ ժառանգավորաց ուսումնարան բանալ վանքին մեջը, որո մեջ պատրաստվին վիճակի թե քահանայացուք և վարժապետացուք, սակայն պատասխան կընդունեի վարժապետեն, թե ես եկա վանք այս վիճակին մեջ գտա և միջոց չունեցա նյութական շենքեր հաստատել և վարժարան բանալ, վիճակայինք չօգնեցին ինձ ասեր, սակայն ինքն, ազգու հորդորներ չէր տված ժողովրդյան և եթե կամեր, կարող էր առնիլ, զոր ազգիվ մեք կպահանջեինք։

Ուստի Եղան գյուղին գումարած ժողովին մեջ և թեպետ այցելած գյուղորեից եկեղեցյաց մեջ, երբ յուրաքանչյուր գյուղորեից դպրոցի բացման վրա խոսեցանք և համոզիչ հորդորները կարդացինք, չմոռցանք վանքի վիճակ ժողովրդոց ներկայացնել և հրամայել, որ վանքին շինության և դպրոցի բացման բոլոր զորությենե ջանան, ժողովուրդ թե վանքին մեջ և թե գյուղորեից մեջ դպրոց բանալու մեծ եռանդ առաջ կբերեր և 'ի խորոց սրտի կբաղձար, եթե հորդորներ մեր հետեեն հետզհետե կշարունակվեր, անշուշտ մեր հերկած և սերմանած պիտի բուսներ և պտղաբերեր, սակայն զկնի մեր ո՞վ տի հորդորե և քաջալերե, ո՛չ ոք, եթե ոչ վարչության սաստիկ հրաման առ Տիմոթեոս վարդապետն, որով կամա-հակամա ստիպվի վանքին և գյուղորեից մեջը դպրոց բանալ։ Մեք ժողովրդոց սիրտ զարթուցինք, պատրաստեցինք և վարժապետ չգտնալով քահանայք պարտավոր կացուցինք, որ անպատճառ ժողովրդյան տղայոց գոնե յուրյանց գիտցածնին սովորեցնեն, մինչև որ դպրոցներ շինվին և վարժապետները պատրաստվին, և նոքա ուխտյուք խոստացան մեր տված պատվեր իբրև յուրյանց սեփհական պարտավորություն կատարել, այս էր իմ պատվեր առ քահանայս, թե մեն մի քահանա պարտի յուր մկրտած տղան անպատճառ կարդացնել, քրիստոնեություն և զհայություն ուսուցանիլ, սակայն ավա՜ղ, որ դեռ շատ քահանայք ո՛չ քրիստոնեության և ոչ հայության վրա հմտություն չունին, ուստի կաղաչեմ, որ վարչություն, կրոնական ժողով մեր առաջարկություն ընդունելով ազգու հրահանգներ խրկել գավառները, հրամայելով այն ամեն գյուղական քահանայից, որ գոնե հասարակ ընթերցմունք քրիստոնեություն և հայություն սովրեցնեն յուրյանց ժողովրդյան որդվոց, զի ամեն գյուղացիք տակավին կարող չեն և չունին միջոց դպրոց շինել և վարժապետ բերել։

Մագիստրոսի վանքի Տարոնո զառ 'ի կողի վրա շինված իբրև բարձրահայաց տեսարան մի կհատի Բասենու դաշտի արևելյան և հյուսիսային ընդարձակության վրա։ Վանքին կենսավետ օդը Հայաստանի առաջի կարգին առողջարար օդեն է և ջուրն բարեհամ։ 60 սոմարի սերմանելո հողը ունի, մեծագույն մասամբ ջրարբի, իսկ փոքրն մասն անջրդի, 6 բարդ խոտ բերող խոտախ և զի 10 սոմար պտղի կհավաքվի երկու Բասենեն։ Ըստ ասության, վանահոր տարին 15—20 և կամ 30 պսակ հազիվ կլինի, սակայն մեք ստուգեցինք, նշանակյալ թվեն ավելի կհանդիպի, երբ պաշլխի շար սովորություն բարձվի։ Առաջնորդ 500 եկամուտ կհաշվեր պսակադրումեն, սակայն 1000 զուրուշ հասկանալու է, 1000 ևս ուխտավորներեն կգոյանա, վերջապես վանահայր եկամուտ և ծախք իրարու դեմ կհավասարեր, սակայն ոչ հաշվետումար ուներ և ոչ հաշվի տալո կանոն։ Թեմական ժողովուրդ ևս հաշիվ չունենալով՝ չեն գիտեր վանքին եկամտից և ծախուց որքանություն, այսպիսի վանքին հաշվատումար վանահարց խիղճն է, ինչպես որ ուզեն, այնպես հաշիվ կներկայացնեն, նա ևս ուզեն պարտքերն ևս ցույց...* կերպ իմանալու է նաև մյուս վանորեից համար, սակայն մենք որչափ որ գրավոր ետ ջանացինք եկամտից և ծախուց հաշիվները առնուլ։

Այժմ սույն վանքին մեջ կա 48 ոչխար, երկու գոմեշ, 6 եզ և 7 կով, 7 հոխա պղնձեղեն՝ մեծ և փոքր, 7 ձեռք անկողին, նոր շինված 1 կարպետ, 17 բարձ, 4 մանր և մեծ թաղիքներ, մեկ կյութան յուր գործիքներով, տարեկան եկամուտ դրամի վերածելով 8000 զուրուշի կհասնի, որ կգոյանա պսակադրումեն, պտղիեն, ուխտավորներեն, ոչխար և ցորյան ծախելեն։

Իսկ վանուց տարեկան ծախքն է 2000 զուրուշ, մշակաց 1700 զուրուշ, հովվաց, տնտեսաց, լվացարարի և այլ ծառայից տարեկան ծախքն 500 զուրուշ, պատրիարքարանի մուխթային, 500 մուխթու Հասան-գա-

* Բացթողումը հեղինակինն է (Հ. Պ.)։

լայի կառավարչին կարվի հին սովորության հետևելով, մենք ստիպեցինք, որ աս մուխթուն չարվի, սակայն նա պնդեց, թե անկարելի է չտալն, 3000 ղուրուշ եկող գնացողին երկաթիգործյաց, որոց գումարն կընե 7700 ղուրուշ։

Վանորեից հաշիվն այս կերպով առնելով Ազգային վարչություն գիտիմ գոհ չկրնար առնիլ, այլ պետք է որ խիստ մանրամասն լինի և ամեն մեկ եկամուտներ և ծախքեր մանրամասն նշանակվի, սակայն ինչպես զեկուցինք վանքեր հաշվետումար չունին և տեղիս-տեղիս ևս հաշվետումարներն իրենց ուղածին պես կարգավորած են և կամ վեր 'ի վերս անկած են, ուստի մի վանքի հաշիվ ճշտիվ առնելո համար մի ամիս հաղիվ բավական կլինի, զի երբ կնշմարվի, թե կթագուցանեն ճիշտ հաշիվ տալ կամ լռությամբ հողին տակ կծածկեն, հարկ լինի մանր խուզարկություն թե վանքին մեջ և թե թեմական գյուղերեից մեջը, թե արդյոք վանքեր որչափ հաստատ սովորական և պատահական եկամուտներ ունին։ Վանորեից վրա, սույն ընդհանուր տեղեկությունները հաղորդելով կամիմ Ձեր ուշադրություն հրավիրել սույն կետին վրա, զոր մեք այժմ կառաջարկիմք յուրաքանչյուր վիճակի մեջ հաստատել վանական խորհուրդներ և պատվիրել անոնց, որ սա ըստ ամենանաչառ և մանրամասն հաշիվ պահանջեն վանահայրերեն և խրկել վարչության. այս կերպիվ վանականք և վանահայրք կստիպվին հաշվետումարներ ունենալ և վանական խորհուրդներ իբրև մեր ծախուց հսկող մը տեսնալով իրենց վրա՝ չեն կարող եկամուտներեն բան թագուցանել և ծախքեր ավելի գրել։ Այս պատճառավ մենք թեև վանորեից խորհուրդ կազմելո հրահանգ չունինք, սակայն փութացինք Կարնո մեջ վանորեից խորհուրդ կազմել, որ հսկեն վանորեից եկամտից և ծախուց և բարեկարգությանց վրա, ուստի Վանա և Բաղեշո և այլ գավառաց մեջ անպատճառ վանական խորհուրդներ կհարկավորի հաստատելու։

Մադիստրոսի վանքը քանիցս ավազակներեն կողոպտված է, ա. 1834, բ. 1841, գ. 1857, դ. 1869 թվականներին եկեղեցական սպասներ ամբողջ տարած են, այժմ միայն մի սկիհ, մի արծաթ խաչ, մի ժամարարի զգեստ, մի բուրվառ, 4 սեղանի ծածկոց։ Հայաստանի բոլոր վանքեր գրեթե այսպես շատ անգամ ավարառությանց բաժին լինելով աղքատության և ամայության ենթակա եղած են։

Բասենու անտառի միջի (այն...)* ամայի վանքերը՝ Ա. Սուրբ խաչ

* Հեղինակի բացթողումն է (Հ. Գ.)։

վանք, որ եկեղեցին խոնարհած է, Վասիլ կայսրը սուրբ խաչափայտն պարսից վերադարձուցած միջոցին սույն վանքին մեջ պահելուն համար վանքի անուն սուրբ Խաչ կնքված է։ Բ. Կարմիր վանք, որո եկեղեցին ողջ է, միայն կաթողիկեն խոնարհյալ է, այժմ զիլանցի քուրտեր կրնակին մեջ։ Գ. Կափի վանք, որ տաճկները կկոչեն Քաբու քիլիսե, վանքի ավերակի մեջ գաղթական չերքեզք կբնակին։ Դ. Կոչա վանք, որո ավերակի մեջ չերքեզք կբնակին։ Ե. Կոթագուտութա վանքը կիսավեր, որո մեջ դարձյալ գաղթականք կբնակին։ Զ. Աղջուր վանք, որ գաղթականաց բնակարան է դարձեր։ Ե. Եղնացի վանքը անտառին մեջ, որո խոյակապ շենք մինչև ցայսօր կանգուն կա, որո մեջ չերքեզաց գլխավոր Մովսես պեյ հանդերձ ընտանյոք և ծառայուք կբնակի։ Ը. Քյումիքիլի սա կիսավեր վանքը ամայության մեջ։ Թ. Յոթ կաթողիկե վանք՝ անտառին մեջ յոթը կաթողիկե ունենալուն համար, որո մեջ դարձյալ գաղթականք կբնակին։ Ժ. Ալաքիլիսե, շինվածք մի քար, սև քար սպիտակ շինելուն համար, պատեր կանգունս, եկեղեցին մարագ դարձուցած են։ ԺԱ. Հոփերունք վանքը կիսավեր, 30 տուն քուրտ կբնակին մեջ, եկեղեցի մարագ և փարախ են դարձուցեր։ Հիշյալ վանքեր Բագրատունյաց ժամանակեն սրբատաշ քարերով հոյակապ շինվածքներ են, Բասենու հայք անտառը փայտ բերելու երթալով հարաժամ վանորեից ամայություն և ավերմունք, կուլան և կողբան, կկոծին և սրտներեն արյան արտասունք կվազեցնեն, զի նախնյաց սրբավայրք ոչ թե բուաց բնակարան են եղեր, այլ քրտաց և չերքեզաց բնակության և անարգության տեղի են դարձեր։

Բասենու 8 ժամ հեռուն Երասխաձոր կամ Վիշապաձոր կոչեցյալ տեղեն Վարդեհեր անվանյալ վանքը[87], որ 'ի հնումն կոչե Վարդիկ հոր վանք, ուր էր երևելի ուսումնարան և կբնակեր բազմություն կրոնավորաց և միաբան վարդապետաց, որո մեջ հանգուցյալին պատվական նշխարք Վարդիկ հոր Թաթլո Թումայի և Վարոսի, սույն վանք այժմ ամայության մեջ մնալով, ոչ վանահայր, ոչ միաբան և ոչ խնամակալ ունի։ Վանքին արտաքին պարիսպներ և եկեղեցին սղղե, առաջին շենքերը ընկած են, ռուսաց առաջին պատերազմին միջոցին, հին շենքեր նորոգված է, վանքին հողերուն զիլանցի քուրտերը տիրելով մեջ տուներ շինած են, վերացման և Վարագա խաչի տոնին՝ Կարնո, երկու Բասենու, Կարսա, Աղեքսանդրապոլսո, Պայզուդու, Բագրևանդա վիճակներեն բազմաթիվ ուխտավորք կդիմեն 'ի Վարդիկ հոր վանքը հուխտ գերեզմանաց Թաթլո և Վարոսի։ Ըստ վկայության Բասենու ժողովրդոց տարին 20—30-են մինչև 40 հազար ղուրուշ արդյունք կգոյանա, որովհետև Կաղզվանու գյուղաքաղաք և Խաչավանք գյուղեր մերձակա են

վանքին, ուստի այս երկու գյուղի քահանայք և ժողովուրդք միմյանց ձեռքեն կհափշտակեն և կը յուրացնեն Կաղզվանից դպրոց շինու պատրվակավ, իսկ Խաչավանից վանքին շինության իբրև պահապան լինելու նպատակավ, Կաղզվանի և Խաչավանքի մեջ թաղական խորհուրդներ հաստատելով պատվիրեցի վանքին շինության հոգ ունենան, օրինավոր հաշիվ ունենան արդյանց։ Ուշտունին տարին 3000 ղուրուշի վանքի երես մուխաթայով կծախե Կաղզվանի քահանայից, սակայն Խաչվանքի ժողովուրդ խոստացան շինել զվանքն, այս մասին իրենց հանձնարարական նամակ մը տվինք՝ ուղղյալ առ սրբազան Հայրիկ, որպեսզի հրամանագիր բերելով բարձրագույն դռնեն և պատրիարքարանեն վանք շինեն և վանահայր հաստատեն։

Բասենու Եղան գյուղեն սկսյալ մինչև Արմտլու գեղ, տասը գլխավոր գյուղորեից մեջ Ջորագեղի, Թոտավերանի, Յուզվիրանի, Ալիճահրակի, Տալիպապայի, Թոտի, Կարաքիլիսայի, Պաշգյուղի, Արմտլուի մեջ օրինավոր սահմանադրություն գործադրելով դպրոցներ բանալու և այլ շատ հոգեշահ և ազգօգուտ խրատներ և հորդորներ տալով հանձնեցինք Տիմոթեոս վարդապետն, որ յուր մնացյալ գյուղերու մեջ թաղականներ հաստատելեն զկնի, երեսփոխանական՝ կրոնական և քաղաքական ժողովներ կազմե, սույն ժողովոց ընտրության և վավերացման մասին ընդարձակ և կանոնավոր հրահանգ մը առինք հիշյալ վարդապետեն, որ 1872 դեկտեմբեր 21 ամսաթիվ նամակավ զմեզ կծանուցանե, թե մնացյալ գյուղորեից մեջ թաղականներ հաստատելեն զկնի երեսփոխանական, կրոնական և քաղաքական ժողովներ, ընտրելով ընդարձակ տեղեկագիր՝ հանդերձ գյուղերու ստորագրությամբ (զոր մենք պահանջեր էինք նախ առ մեզ խրկել) ուղղեր է 'ի Պոլիս կեդրոնական վարչության։

Տիմոթեոս վարդապետ, ինչպես վեր նշանակեցինք, մեր այցելութենեն առաջ՝ ոչ վանուց մեջ մի շենք և ոչ մի բարեկարգություն ըրած էր, նույնպես թեմականաց մեջ և ոչ ազգօգուտ բարեկարգություն ձեռնարկեր էր, ոչ եկեղեցիք պայծառացնելու և ոչ դպրոցներ բանալու հետամուտ եղած էր։ Ջորագյուղի տեր Հարությունն քահանային միջոցավ բողոքականություն տեղի գտած էր Բասենու Ջորագյուղի և Թոտիկ գյուղերու մեջ։ Տեր Հարություն Բասենու քահանայից մեջ ամենեն ուսյալ և ճարտարախոսն է և կրնա շատ մարդիկ ազավորչական եկեղեցվո գրկեն հեռացնել։ Բողոքական քարոզիչներեն 100 ղուրուշ ամսական կառնե և սույն ամսականի համար կաշխատի բողոքականություն տարածել։

Թոտիկ գյուղի մեջ դպրոց ունի, տասնի չափ աշակերտ ունի, դայս քահանայն նախ կոչեցինք Եղան գյուղ, ուր ժողված էին երկրին գլխավոր քահանայք և տանուտեարք, երկար հորդորելով համոզեցինք զինքը յուր մայրենի եկեղեցվո գիրկը վերադառնալ և չար գայթակղություն չլինիլ յուր ժողովրդյան, հետո հետս առնելով Թոտի գյուղ տարի և նորա աշակերտներ և խմորյալներ համոզեցինք։ Ի վերջո տեր Հարություն խոստացավ երդմամբ, թե կաշխատի յուր գայթակղեցուցյալները վերադարձնել։ Պատվիրեցինք Տիմոթեոս վարդապետին քաղցրությամբ վարվիլ հիշյալ քահանայի հետ, մինչև որ վերադառնա։

Տեր Հարություն քանիցս դպրոց բանալով յուր տնիկ Ջորագյուղ գյուղին մեջ, որ 60 տուն է, բավական աշակերտք հավաքելով վարժապետության պատրաստեր է, սակայն երբեմն գյուղացիք արհամարհեին սորա գիտություն, երբեմն վարձք չեն հատուցեր, ուստի ինչպես հայտնի երևցավ, սույն մարդ սաստիկ մելամաղձոտ բնության, նախանձու կիրքերեն և հետևապես յուր վերջին աղքատությենե ստիպվելով այս պատահմանց դիրք բռնել է։ Թե քահանայք և թե համբայք Ջորագյուղին խոստացան 50 ղուրուշ ամսական տալ և յուր քահանային եկամուտ շատցնել, սակայն նա կպատասխաներ, թե շատ անգամ խոստացաք չվճարեցիք և շատ անգամ սուտ խոսելով զիս խաբեցիք։ Այս քահանային պատմությունն վարչությանդ ուշադրությանը կզարթուցանեմ բասենցվոց վրա, որոնց մեջ ուսումնական և ուսումնականություն բնավ արժեք չունի, որք թեև դառնապես կցավին նորա այս ձախորդ դիրք բռնելուն վրա, սակայն անոր արժանավոր ամսական մի տալ կամ շահիլ չունին։ Դպրոցի և ուսման կողմանե սույն վիճակ ամենայն կարեկցության արժանավոր է և հատուկ այցելության կարոտ։

Տիմոթեոս սկսած է զինք Վեհապետյանեն պաշտպանել, իսկ Վեհապետյանին կողմանեն ազգի հառաջադիմություն այցելություն կամ հորդոր մը անգամ եղած չէ բասենցվոց։

Բասենու վիճակի անբարեկարգության պատճառի մասին և հարստահարություն կրող ժողովրդոց մասին քանի մը կետերու համար Տիմոթեոս վարդապետեն առ մեզ մատուցած գրավոր խնդրագրոյն պատճեն առ վարչությանդ ուղղելով ուշադրություն կխնդրեմ։

«Հայտարարություն տառապյալ ժողովրդոցս Կրկին Բասենու, որ տամ 'ի ձեռս Երեմիա սրբազան արքեպիսկոպոսի սուրբ հոր Ա. տառապելություն ազգիս որչափ շատ է, այնչափ առավել աղքատություն շատցրած է պաշլիս կամ տեմի ըսված չար սովորություն, որ խղճալի դստեր 30 տարեկան ըլլալով կը մնան առանց այր և տեսակ-

տեսակ փորձության հանդիպելով, քանզի դուստրեր հայր մինչև 500 ղուրուշ դրամ կամ շալ չառնե և ուրիշ բաներ, այս՝ կուտամ չի բսեր 'ի սեր տան բարիկ ղ'այս շարն'ի միջոց։

«Բ. Կմնա կանոն սուրբ հայից և սրբոց հովվապետաց կարգ ճյուղահամարության, այս կարգ երեսաց եպիսկոպոսին Կարնա ավիրավ, Կարին եղած միջոցին մեր ակամբ տեսանք տեր Պողոս քահանայի դուստրերը, կույս 20 ոսկի առնելով, տվավ Ավետիս այրի ուստեր 1861 ևս Բասեն եկածը Կամուրջ գյուղացի Ադամյան Վարդան հինգ անգամ պսակված Կարինեն դուստր մի առնելով եկավ Բասեն։ Բասենեն Տիմոթեոս վարդապետ ըստ գրելո Հարություն եպիսկոպոսին խրկեց Կարին, դարձյալ դրամով, ոչխարով և յուղով աղատեցավ և պսակվեցավ 'ի Կարին 1863-ին, զոր ասեմ և կամ զորն գովեմ 'ի ձեռ ուղղախոսության։

Նաև Ա. սրբազան պատրիարքի ընտրություն ատեն հրամայեցավ ըստ սահմանադրական հոգվածոց, թաղական, խորհրդական, ուսումնական կազմել, կազմեցինք քվեարկությամբ, սակայն խաչվերանցի Գրիգոր անվանյալ հեթանոսական գործ գործող մարդ յուր հորեղբոր որդո կին հետ միանալուն յուր տան մեջ յուր որդվոյն առավ, վասնորո թաղական խորհուրդ և համայն ազգություն Բասենի ընդ վանահոր յուրյանց բողոք բարձին հատենին Հարություն եպիսկոպոսին, չլսավ, վասնորո գնաց առավ այն մարդը 1868-ին, չմնաց կարգ, չմնաց կանոն կաշառոք կփրկվին, կաղաչեմ այս շարը բարձեք 'ի միջոց։

Նաև Ալվար գյուղացի Սահակ յուր մոտ ազգական առավ դրամական և շնորհիվ Հարություն եպիսկոպոսին և անդր պսակեցավ 1870-ին։ Նաև ետ 4 ամսո դարձյալ Թուղլի գյուղացի Պողոսն առավ յուր մոր ազգական՝ հրամանավ Հարություն եպիսկոպոսի 'ի ձեռն կաշառի։

Նախ ունիմք ցավ մը մեծ ու անտանելի երեսաց անարժան քահանայից անվանելո, որք ընտրյալք են արծաթով, որ միշտ խարբալին զմեր ժողովուրդ իրենց անվայել ընթացքով և վարմունքով, ուստի, քանի որ կաշառ կա, մեր խղճալի ազգ գերի է։

Այս ազգակործան գործոց խաչվերանցի Գրիգոր և պաշլիսի ինս պատճառ համար է։ Պոտաճյան Ալպեկը, Պաշգյուղի Հովսեփ, Զորագեղ*... Յուղվերանցի Մանուկ, Պոյաճյան Էլպեկ ապավեն ունի Աֆիանճյան Սարգիս էֆենտին Կարնո մեջ և այլք ևս ունին յուրյանց պաշտպան վարդապետ, վասնորո կաղ կմնա ամեն գործը։

Յավակցելով հիշեմ աղքատացուցիչք պահանջմունք Օսմանյան պետության 'ի վեր, քան զխորն ազգիս, 625 գյուղորայք կան յուրյանց բազմությամբ 18.000 ղուրուշ դրամ տուրք, իսկ 25 գյուղորայք խղճալի հայազանցս տան տուրս 29.000 ղուրուշ դրամ, հողերուն պատվական հեթանոսք յուրյանց են հատկացուցեր հափշտակելով և է 'ի տաճիկս այր Կենճ աղա անուն, որ ի ձեռս 105 ավերակք գյուղի հողք և տա հարկ տերության 200 ղուրուշ տարեկան։ Վերջ բանիս ոչ 'ի տաճկաց և ոչ 'ի հայոց, այսինքն՝ թե տաճիկք և թե հայք դեռևս 'ի հնության, այն է ի հին սովորություն կա, զի գիտության արեգակն զճառագայթս լուսավորություն յուրո չի լուսավորեցին, ոչ թե այդ Կենճ աղան և եթ, այլև բազումք կան, որ 500 սոմարի տեղ հող ունին, թշվառ ազգը կուտա անոնց ամենուն, դարմանք և բժշկություն մը հայրենասեր և սրբազան տեղեր կը հայցեմք։

Տիմոթեոս վարդապետին բողոք, որ 'ի մասին ապօրինավորությունից և 'ի մասին անապա և անհնազանդ քահանայից 'ի մասին Հարություն եպիսկոպոսին և 'ի մասին բազմապատիկ տրոց հայոց, քան այլազգեաց և զայսոսիկ մեք աչոք տեսանք և քննությամբ ստուգեցինք։

Կրոնասիրություն տակավ առ տակավ կհեռանա երկրեն Բասենու քահանայից անհոգության և տգիտության պատճառավ, քարոզի ձայներ հեռի մնացեր են մարդկանց ականջեն, շատ տգետ ժողովուրդներ հանդերձ տեղացին, Բասենու գյուղորայք պատահմամբ զոց եղած են և մի կամ երկու քարոզ խոսած են ողորմության վերա, երբեմն առատ, երբեմն նվազ ողորմություն հավաքելով հեռացեր են երկրեն։ Ազգության, հայրենասիրության և ազգային միության գաղափար ամենևին անծանոթ է մնացեր Բասենու հայոց ուղեղներին։

Ժամակարգություն, երաժշտություն և երգեցողություն վերջի խանգարման ծայր կարշավե, յուրաքանչյուր քահանայն և յուր քմաց համաձայն ժամասացություն կառնե, յուրաքանչյուր տիրացուն յուր ախորժակին համաձայն ժամասացություն և եղանակ կդնե երգոց մեջ, շարականաց վրա, եկեղեցական սպասք խիստ հնոտի և անկանոն, քահանայք ոչ եկեղեցին կայնելո և ոչ պատարագելո միջոցին հոգաթափ չունին և այս ոչ թե աղքատության սակս, այլ անպիտանության սակս, մի քանի անգամ պատարագի հանդիպեցա, զգեստներ, բուրվառներ և սարարողություններ նկատեցի, կարեվեր վիրավորվեցա և ուզեցի այժմ նկարագրել ասա, զի մարդոց ծիծաղ և ցավակցություն 'ի միասին կշարժե։

Սողանլուի անտառին մոտակա լինելով, լերան փայտ բերելով՝

* Բացթողումը հեղինակինն է (Հ. Պ.)։

սայլեր կշինեն և փայտի վաճառականություն ընելով բավական դրամի կտիրանան, սակայն 300 տունի չափ շերքեզ հանտառս զբնակություն յուրյանց հաստատելով՝ հայոց անտառեն փայտ բերելու միջոցին, երբեմն եղներ կգողնան, երբեմն կտրած փայտեր յուրացնելով կվաճառեն և զանազան նեղություն տալով զհայեր կտառապեցունին գաղթականք, լավ տեղեր յուրացնելով հայոց կարգելուն փայտ կտրելու։

Պարզամիտ հայեր գաղթականաց մեջ բնակելո միջոցին փոխանակ միաբանությամբ թրքաց և քրտաց կառավարության բողոքելո, մեծամեծ ուրախացեր են հիշյալ անճանաչ գաղթականաց վրա, սակայն երբ այժմ 'ի նոցանե զանազան վնասներ կրելո ենթակա եղած են, նորեն իբրև 'ի քնո սթափյալ փրկության ճար կմտածին, զի բաց 'ի զանազան վնասներեն, այժմ գաղթականք վաճառականություն հետզհետե հայոց ձեռքեն կհափշտակին։

Այս հափշտակությանց մասին գյուղացիներեն ոմանք կմտածեն գաղթել 'ի Ռուսաստան, հիշյալ պեյեր վիլայեթի մեջ միշտ ժողովոց անդամ լինելով, միշտ ըստ յուրյանց քմաց կարգի դրած են, իսկ հայք ոչ տերության օրինաց հմտություն ունին և ոչ ժամանակին գիտեն բողոք բառնալ, երբ վերջի խղճություն կտիրե վրանին, նորեն իբրև քնոց զարթուցյալ կսկսին տրտնջալ բողոքել, բայց 'ի զուր։ Ահա այսպես գյուղացի հայեր ամեն տեղ յուրյանց իրավունք հափշտակել տված են, նախ՝ տգիտությամբ և երկրորդ՝ անհոգությամբ։

Ի Պոլիս գտնված միջոցիս թե գավառական և թե հարստահարության մասնաժողովի և թե քաղաքական ժողովոց մեջ շարունակ խորհելով խորհեցա, թե մեն մի առաջնորդարանի և կամ գավառական վարչությունից մեջ մեկ-մեկ լեղվագետ օրինուսույց, տերության ներքին և արտաքին քաղաքական և կանոնաց նիրհավն մարդիկ խրկվին և եթե կա գավառաց մեջ այնպիսի մարդիկ 'ի սոցանե վարժվին, մանավանդ հայերեն և տաճկերեն գրագետներով առաջնորդաց տիվաններ կարգադրվին։ Զի կրնա կեդրոնակ[ան] առաջնորդարանեն սկսյալ, մեր այցելած գավառաց առաջնորդարաններ ոչ գրագիր ունի և ոչ օրինավոր տիվան մը կամ արձանագրություն, գրեր կամ ինքյանք կամ քահանային և կամ վարժապետի գրել կուտան, ինչպես և Կարնո առաջնորդարան, զի եթե այս դալար փայտն այսպես է, շորեր և ցամաքներ ինչպես են։ Մենք առաջնորդաց և վանահարց այս մասին երկար-երկար հրահանգներ և խրատներ տված եմք, վարչություն ևս յուր կողմանե ազգու հրահանգներ խրկեց, սակայն տակավին և ոչ տեղ մի ըստ կանոնի

չկարգադրվեցավ, զի թե առաջնորդք և վանահայրք հին սովորության վրա համառելով կդժվարին նոր և ազգօգուտ բարեկարգության մեջ մտնալո, այսպիսի համառներուն հորդոր և հրահանգ օգուտ չունի, այլ կամ մեզ արտոնություն տալու եմք, անմիջապես յուրյանց պաշտոնեն դադարեցնել և կամ մեր տված տեղեկությանց կարևորություն տալով այնպեսյաց տեղը բարեկարգող և բարեկարգություն սիրող մարդիկ խրկեիք։

Խնդիր եղած էր տերության օրինագետ (տեղտուր) գյուղացվոց և քաղաքացվոց առհասարակ դաս տրվելն, զի սույն ամենակարևոր հմտության ոչ թե Հայաստանի գյուղացիք, այլ քաղաքացիք իսկ, զի յուրաքանչյուր հայաբնակ ընդարձակ գավառաց մեջը երկու-երեք անձե 'ի զատ տերության հին և արդի օրինաց կանոնաց քաղաքականության տեղյակ մարդիկ չկան, որո վասն չգիտեն և ոչ կարեն յուրյանց սեփհական իրավանց տեր լինել և հազարավոր անգամ յուրյանց արդար դատը պաշտպանելու անկարող լինելով կզրկվին յուրյանց սեպհական կալվածներեն և ձեռք գտնված հարստութենեն։

Ինձ հանձն եղած է երկնից թագավորի օրենք և քաղաքականություն ուսուցանել ժողովրդյան, զի այս է միայն իմ սեպհական պաշտոն և պարտականություն 'ի վասնորո այսօր ամենայնիվ դարձյալ բաղում անգամ ստիպված եմք երկրավոր թագավորի օրենք և քաղաքականություն ևս սովորեցնել տգետ մարդկանց, որչափ հասու եղած եմք, սակայն պարտ անձին կհամարիմք պահանջել Ազգային կեդրոնական վարչութենե և վստահությամբ ասել, գտեք և խրկեցեք նաև այնպիսի կենցաղագետ և օրենսգետ և մեր տերության կամ այլ և այլ տերությունից, քաղաքականությունից ներհուն մարդիկ, որ այս աշխարհի և երկնավոր թագավորաց փութապես ուսուցանեն հայ մարդկանցը, ապա թե ոչ ինչպես մինչև ցարդ, այնպես և մշտապես մեք՝ հայքս, որչափ իրավունք ունիմք երկրի վրա, անտարակույս հափշտակել կուտամք մեք մեր ձեռոք և անգիտությամբ, զի որչափ միջոց ժամանակի չգիտեմք երկրի վրա մեր իրավունք պաշտպանել, այնչափ ժամանակ չունիմք երկրի վրա, ոչ իրավունք մը, ոչ հողը, ոչ ինչք, ոչ ստացված, ոչ հարստություն և ոչ հանգստություն, որ ունեցի ականջս լսելով լուիցե և մտախոհ լինելով հանձին յուրում իմաստնացի։

Ողջ լերուք 'ի սեր և 'ի պարծանս ազգիս ամեն։

Թիվ 3

Ամենապատիվ սրբազան Հայրիկ և ազգապաշտպան անդամք ազգային ժողովոյ

Բագրևանդ գավառ, որ աշխարհաշեն մեծին Վաղարշակ, հայրենասեր Բ Արտաշեսի մեծահաղթ արքային Տրդատ և հորն հավատոյ սրբոյ Լուսավորչին սիրելի հանդիսացավ, որ այնչափ երևելի շինվածովք և բազմամարդությամբ երևելի էր և Հայաստանի կեդրոն եղած էր, որ 1 միլիոն հայոց մկրտությամբ մեր երանելի նախահարց մկրտության ավազան դարձեր էր, որով ջուրք ապունք Եփրատա զԲրիստոս և զՀայաստան 'ի միասին փառավորեին։

Այժմ նախնի քաղաքական և կրոնական շքեղությանց զուրկ և թափուր մնալով՝ վաղեմի գեղեցկությանց հակապատկերն հանդիման կբերե մեր հայեցողությանց, զորս ակամա կամոք ստիպված եմք համառոտակի աստանոր նկարագրել։

Բագրևանդա գավառի մեջ, բաց 'ի յուր բնական և աշխարհագրական գծագրությանց գիրքեն ամեն ինչ կերպարանափոխ եղած է։ Բագրևանդա և Վաղարշակերտու դաշտեր Հայաստանի հացավետ և արգավանդ դաշտերեն են, որք շրջապատ լերանց մեջ հարթահատակ երկիր ունենալով միշտ աչաց հաճելի տեսարան կընծայեն. 'ի Մուրատ գետ յուր վտակներով Բագրևանդա դաշտի արևելքեն դեպի արևմտյան հարավ խաղալով արոտից մեծագույն մասն ջրարբի կկացուցանե և պղտղարեր։ Սերմանելի սերմանք են ցորյան, գարի, հաճար, ոսպն, ոլոռն, կտավատ, գետնախնձոր, որ նոր սկսած են։

Բագրևանդա լերինք, որք բոլորաձև շրջանակ մի կձևացնեն դաշտի շրջապատ յուրյանց բարձր և խոնարհ տիրյուքն, յուրյանց խոտավետ և ծաղկավետ հովիտներով և բլուրներով խիստ անվանի են 'ի մենջ լերանց և հովտացն Հայաստանի, որք մեծագույն մասամբ Ալա տաղի կը կոչվի։ Դաշտին հյուսիսակողման մեջ 500 տան չափ գիլանցի քուրտեր կբնակին, բազմաթիվ ոչխարեղեն և տավարեղեն կը սնուցանեն և կը դարմանեն։ Հարավակողման լերանց մեջ 400 տուն սպիտկիի ցեղերեն և 250 տուն հայտարանցի ցեղերեն կբնակին, նույնպես ոչխարեղեն և տավարեղեն կը սնուցանեն։ Լերանց և հովտաց ամենագեղեցիկ տեղեր, պարարտ հովիտներ և հովտաձև դաշտեր, ընդհանրապես հիշյալ ցեղերու ձեռքն անցած է, բավական տեղեր թափու ըրած են և հետզհետե ընելու վրա են։ Դաշտի գյուղերուն մեծագույն մասը դարձյալ քուրտեր և տաճիկներ և պարսիկներ գրաված են։ Հիշյալ այլազգիք 4 տարի առաջն ըստ ճշմարիտ պատմության հայոց շատ տեսակ նեղություն կուտան եղեր մեր խղճալի ազգայնոց, սակայն Հայրիկի պատրիարքության և այս[ո]ր հանդարտությամբ և բարեկամությամբ կվարվին մերայնոց հետ, զի հայտնապես կխոսին եղեր թե իրենց մեջ և թե հայոց, թե ներկա պատրիարք մեր կողմերեն լինելով մեր բոլոր արարքները իբրև ականատես գիտե։ Եթե տերություն իմաց տա, անպատճառ զմեզ աքսոր խրկել կուտա և այլն։

Բուն Բագրևանդա և Ալաշկերտու դաշտ արևմուտքեն մինչև արևելք, այն է՝ Վաղարշակերտա ավանեն մինչև 'ի Պայազիտ, որ է Գոգովիտ գավառ՝ 18 ժամու ճանապարհ է երկայնություն, իսկ հյուսիսեն դեպ 'ի հարավ լայն տեղեր 7 ժամու ճանապարհ է լայնություն, իսկ նեղ տեղեր երեքեն պակաս են։ Հիշյալ դաշտաց արևելյան կողմն են Գոգովիտ և Մասյաց բարձունք, արևմտյան կողմն են Բասենու և Սուգավետ լերինք, հարավակողմն են Խնուս, Մանծկերտ և Սիփանա լերինք և ավելի մերձ Ծաղկավետ լերինք, որ 'ի տաճիկ բարբառ Ալա տաղի ասի։ Իսկ հյուսիսակողմն են Վանանդա, Շիրակա, Նախչվանու և Արարատյան գավառներ, ավելի մերձ Կապուտ լեռներ (որ Յոռոզլու տաղի ասի) և Վիշապաձոր, որ է 'ի մենջ լերնո Կապուտա։

Բագրևանդա դաշտի մեջի գյուղեր, որ քառասուն տարի առաջ գրեթե հայաբնակ էին, այժմ մեծ և փոքր հազիվ թե 30 գյուղի չափ կհաշվին, զի ինչպես Կարնո և երկու Բասենու նույնպես Բագրևանդա բնակիչներ 'ի ռուսաց Պասքևիչ զորապետի 'ի Հայաստան արշավելո միջոցին 'ի ռուսակողման Հայաստան գաղթելով յուրյանց հայրենի բնակարան, կալվածք, դաշտորայք և արտորայք օտարաց թողլով անդարձ կերպիվ գաղթեր են։ Այժմ գաղթականաց գյուղեր քուրտ և տաճիկ կբնակին, որոց հետ եթե զիլանցի քրտաց բնակած գյուղերն ևս թե հաշիվ բերվի ամբողջ թիվ 400 գյուղի կհասնի, որք ընդ իշխանության Պայազիտու բդեշխին։ Հիշյալ ընդարձակ երկրի ամբողջ սահմանաց մեջ հազիվ 30 գյուղ հայ բնակիչ կան, որոց 10-են մին հազիվ թե բուն Բագրևանդա գավառին հին բնակիչներեն են։ Քանզի այժմյան հայ բնակչաց մեծագույն մասն բուն Մշո գավառի գաղթականներեն են, որք յուրյանց երկրի բարբարոս քրտաց հարստահարությանց չկրնալով դիմանալ, Մշո դաշտեն, երկու Պուլանըխեն, Վարդոյեն, Խնուսեն և Մանծկերտեն եկած, ավերակ մնացյալ գյուղերու մեջ բնակություն հաստատեր են, իսկ փոքրագույն մասը Վասպուրականի Բզնունյաց, Քաջբերունյաց և Առբերանի գավառներեն գաղթական եկած են։ Բագրևանդ ռուսաց սահմանակից լինելով, գրեթե միշտ հարստահարությանց

տեսակներ նվազ եղած են, ուստի բռնությանց երեսեն փոքր-ինչ դյուրություն գտնալով փափաքողք թե հայտնի և թե գաղտնի 'ի Բագրևանդ դիմելով արդարև դյուրություն վայելած են։

Երկրի մեծագույն մասը Տարոնո գավառներեն գալով լեզվի գործածության, վարուց, բարուց և սովորությունից կիրառության կողմանե գրեթե մշեցվոցմե բնավ չեն զանազանիր և տարբերվիր, որովհետև Այրարատա բնակչաց հետ հարաբերություն ունին բագրևանդցիք, ուստի քանի մը բառեր Երևանու բառերեն լեզվի մեջ սպրդած են։

Հատուկ հրամանագիր հանեցինք Պայազտու բդեշխեն, որպեսզի պաշլիներ ետ տրվին, և հարսանիք առանց նվագարանի լինի։ Բդեշխ անմիջապես հրամանագիր տվավ, վասին մի տահուլ զարնելու աղագավ 8 հոգի իրար սպաներ էին և բդեշխ սպանելոց օգնության համար մեզմե 4 օր առաջ Վաղարշակերտ ավան խրկած էր (որո պատմություն հետո պիտի գրեմ)։ Մեք մեր կողմանե մեր բոլոր ճիգ 'ի գործ դրինք հիշյալ աղգավնաս սովորություն արգելելու և քանի որ ներկա էինք, ոչ ոք չհամարձակեցավ հակառակել մեր հրամանագրին և կարգադրության, սակայն մեր հեռանալեն զկնի բնավ վստահություն չունիմ, թե այն աղգօգուտ կարգադրությունք հաստատուն պահվին ժողովրդոց մեջ, քանզի մեր անվստահություն ոչ թե միայն կտարածի ժողովրդոց վրա, այլ մանավանդ կղերաց վրա, զի թեպետ մեք 'ի առաջնորդաց, 'ի վանահարց և 'ի քահանայից երդմնագիր առնելով խստիվ պատվիրած եմք պաշլիս առնողաց և տվողաց ոչ նշան օրհնեն, ոչ պսակի հրաման տան և ոչ պսակ դնեն, սակայն մեր կղերի կամ այն է, որ յուրյանց ապականությամբ չպիտի կրնան յուրյանց խոստման և երդման վրա հաստատ կենալ կամ այն է՝ յուրյանց շահու համար չի պիտի դիմանան, մանավանդ քահանայք, որոց շատեր աղջիկ ունին տալո, կաշխատին քակել, որպեսզի շատ դրամներ պահանջին և ավելի դիտելո և զարմանալո կետն այս է, որ քահանայք ժողովրդինեն կրկնապատիկ պաշլիս կառնին և «շատ մի ընդուներ» ասելով, թե քահանայի այն և օծյալի դուստր է, շատ կարժե և այլն։

Ահա այս են սոցին նման շատ անբացատրելի պատճառավ է, որ ստեպ-ստեպ գրելով թախանձեցի զվարչութենեդ, որ շարունակ սաստիկ հրամաններ ու կոնդակներ խրկե գավառաց առաջնորդաց, վանահարց, քահանայից և առհասարակ ժողովրդոց և զարմանալով կը զարմանամ, թե ինչպե՞ս մեր այսչափ անգամի գրությունք դեռ ուշադրություն չառավ և պատասխան մի արժանի չարար զմեզ, թե արդյո՞ք մեր

դիտողություն իրավացի է, թե ոչ։ Ես այսուհետև անպարտ եմ առաջի աստծո և առաջի աղգին։

Վաղարշակերտեն սկսյալ մինչև Կաշի գյուղ 11 գյուղեր անձամբ այցելություն առնելով սահմանագրություն գործադրեցինք (այն է՝ 1 Վաղարշակերտ ավան, 2 Ամատ, 3 Խաչլու, 4 Կատապիյ, 5 Ղարաքիլիսե, 6 Խանճլու, 7 Խրտր, 8 Մանակասար, 9 Թիփ կռան, 10 Ջերո, 11 Կաղի գյուղ, իսկ մնացյալ 19 գյուղեր մեր օգնական տեր Եսայի և տեր Ստեփան քահանայք մեր հրամանավ գործադրեցին, որք նոր տարվոյս հունվար 1 ամսաթիվ նամակավ Պայազտու և Բագրևանդա մյուս գյուղերու սահմանադրության գործադրելոյն տեղեկագիր մեզ հաղորդելով՝ ինքյանք նոյն ամսո 3-ին դեպ 'ի Կարսա դեմ գնացեր էին, տեղույն թերի մնացյալ գյուղեր լրացնելու։

Թերևս կարծվի, թե առանց դժվարության կգործադրվի սահմանադրություն այսպիսի գավառաց մեջ, սակայն այնչափ դժվարություն ընդդեմ մեր կելնեին զորս և ես կդժվարիմ վարչությանդ զեկուցանել, առաջին դժվարություն էր, ո՛չ վիճակիս առաջնորդ մեզ գործակից չեղավ և ո՛չ յուր կողմանե մարդ խրկեց ժողովուրդ հորդորելո, ուստի ժողովուրդ զանազան կասկածի երթալով մանավանդ աղգահամարի մասին զանազան տեսակ ձայներ կբարձրացուցաներ, թե մի՞ գուցե սահմանադրության պատրվակով աղգահամար առնելով զորք գրեմք և զորք հավաքիմք, ուստի շատ գյուղեր անհնար կլիներ աղգահամար առնիլ, վասնորո կստիպվեինք միայն գյուղի տանց թիվն արձանագրիլ, գյուղ կար, ուր տասն անգամ մարդ կը խրկեինք գյուղացիք քվեության ժողովելո, հաղիվ թե մարդիկներեն երդում առնելով կուգային։ Քանի գյուղերու մեջ հարկ եղավ արքունի պահակներով մարդիկ եկեղեցին հավաքելու։

Բագրևանդա առաջնորդ Հովհաննես վարդապետ և որ սուրբ Հովհաննու հոյակապ վանից վանահայրն է և ինքն աշխարհային իրողությունից մեջ բավական հաջողակ, քաղաքականության մասին ըստ դրից և ըստ պահանջման երկրին դիտե քանի մը գործեր ճարտարել, երկրի այլազգիք թե վանքի հնության և մեծության և թե ռուսաց սահմանագլխոյն մերձավորության պատճառավ փոքր-ինչ կակնածին առաջնորդեն, ուստի հայեր մեծագույն մասամբ գոհ են առաջնորդեն քաղաքական և արտաքին մասին, սակայն ներքին կրոնական թերությունք քան մի ականատես պատմության մերովք կստուգվի։

Վաղարշակերտ (որ այժմ ասի Թոփրագ-գալե) 12 ժամ հեռի սուրբ Հովհաննու վանքեն Բագրևանդա դաշտի արևմտյան լերանց ստորոտ

բարձրավանդակ ընդարձակ բլրակի մի վերա ունի յուր դիրք, որով իբրև զվարթահայաց տեսարան մի կհայի դաշտի արևելյան, հյուսիսային և հարավային կողմանց ընդարձակության վերա։ Բերդ Վաղարշակերտիս արևմտակողմ կից շինվածոց տանց լեռնակարկառ հողակույտի մը պես 'ի վեր բարձրացած և (որո վասն 'ի տաճկաց կոչեցավ Թուփրագ Գալե) վաղեմի ավերակներեն քանի մը կիսավեր պարիսպներ են, 'ի զոր ուրիշ հնության նշմարանք չկան, Վաղարշակա արքունի արվեստավոր ապարանից տեղեր, այժմ գյուղական կամ շինական անարվեստ տանց խառնիխուռն շինվածքներ կկենան, հազարամյա փոփոխություն, թշնամյաց հարձակմունք, անընդհատ ավարառություն և սասանմունք Արշակունի թագավորաց շինության և հնության նշխարքն անգամ թողած չեն։

Սա ազդեցություն բանեցնելով առաջնորդաց վրա, իշխանություն առած է շրջակա 10 գյուղի պսակի հրաման և կնիք տալ, բավական է, որ գյուղացիք կաշառոք ինչ դիմեն 'ի դրունս սույն անխիղճ բռնավորին, սակայն ամեն տեսակ ապօրինավոր ամուսնությունից բացարձակ հրաման կստանան և զի քահանայք սույն բռնավորեն ավելի կերկնչին, քան թե աստուծեմե կամ առաջնորդեն, ուստի առանց կարող լինելու ընդդիմակաց լինիլ հրամանի նորա ապօրինի պսակներ կընին և սակավք ոմանք 'ի քահանայից եթե օրինապահության պատճառավ մերժիմն նորա հրաման, այլազգայաց մատնելով դարձյալ բռնությամբ պսակիլ կուտա։ Ինքն այժմ 80-ամյա ծերունի մի է, երկու անգամ այրիացեալ, երկու անգամին ևս յուր մոտավոր ազգականներեն կույս օրիորդներ 'ի կնության բերած է, յուր տանեն բաժանյալ երկու-երեք գերդաստան սորա օրինակին հետևելով առհասարակ ամենքն ևս երկու-երեք ճյուղերով ամուսին առած են, սա ինքն մի աշխարհի քար գայթակղության եղած է, եկեղեցվո հատենի և ժողովոց մեջ սաստիկ կշտամբելով պատվիրեցի, որ այլևս կրոնական խնդրոց ձեռնամուխ չի լինի։

Վիճակին առաջնորդ Հովհաննես վարդապետ կամ Պետրոս աղայի վնասակար ազդեցություններն երկնչելով կամ ներքուստ այս մարդուն կամակից և խորհրդակից լինելով, երկրի թե հոգևոր և թե մարմնավոր իշխանություն նմա հանձներ և 'ի շահ և դյուրություն անձին, երկրին բոլոր մարդիկ գրեթե երեսե ձգելով միայն հիշյալ մարդուն հանձնատուր եղեր է և նորա խորհուրդեն և խոսքեն չհեռանալով ոչ կասստե և ոչ կհանդիմանե զնա և գործս նորա, ուստի նա համարձակելով կգործե մարդկայնության և խղճի օրինաց դեմ։

Բագրևանդա բնակիչք հիշյալ իշխանեն սաստիկ դժգոհություն

կհայտնեն, սակայն երբեք չեն համարձակիր հայտնապես բողոքել նորա դեմ կամ խոսիլ, յուր վնասակար ազդեցությամբ և մատնողությամբ շատ երևելի գերդաստաններ կործանելով գյուղե հեռացուցած է։

Վաղարշակերտի 200 տուն թուրք բնակիչք մեր 100 տուն բնակչաց զանազան տեսակ նեղություն կպատճառին, մանավանդ Մահմատ բաշայի գերդաստան։ Մեր 'ի Վաղարշակերտ մտնալեն 12 օր առաջ հիշյալ մեռած Մահմատ բաշայի որդոցմե, Ապտուլլահ պեյ, Սուլեյման պեյ, Թահիր պեյ տեղվույն գայմագամ չերքեզ Օմար պեյի ապարանք ցորեկյան միջոցին կոխելով զգայմագամ Օմար պեյին, նորա եղբայր Հյուսեյին պեյ գայմագամի դուստր և երկու ևս չերքեզ պահակներ սպաներ էին։ Մահմատ բաշայի տղայքներեն Սուլեյման և Թահիր պեյեր կռվո մեջ անմիջապես սպանվեր էին, իսկ Ապտուլլահ պեյ, որ կռվոյն սկզբնապատճառ և նախարձակն էր, ծանր վերքեր ընդունելով 18 օրեն զկնի մեռավ։

Թեպետ Մահմատ բաշայի որդիք, նամանավանդ Ապտուլլահ պեյ հառաջմանե ոխացած էր չերքեզ Օմար պեյի դեմ, որ հզոր զորությամբ և արդարությամբ երկիր կառավարելով հարստահարելոց իրավունք կպաշտպաներ բռնակալաց բռնություն և ավազակաց ավազակություն իսպառ բնաջինջ ընելով, բոլոր զրկելոց, նամանավանդ մեր ազգայնոցս սիրելի և մեծ ուրիշի եղած, որ որք զմահ նորա զգալով կփափաքեր 'ի նշան երախտագիտության երթալ կոթող կանգնիլ նորա գերեզմանի վրա և երեք տարի զիրենք հայրաբար կառավարած էր, վասն այսր ամենայն բարերարությունից չերքեզին չկարացյալ ժուժկալիլ Ապտուլլահ պեյին միջոցներ առնուլ զվրեժ 'ի նմանե, զի արդարությունն չերքեզ Օմար պեյին հանապազօր հանդիմանություն, որ անիրավությունից, բռնությունից, հափշտակությունից տոհմից և բուն իսկ անձանց յուրյանց։

Պտե անուն անձ մի, որ ինքնագլուխ և հրամանավ Պետրոս աղային Վաղարշակերտի եկեղեցվույն երեսփոխան եղած և որ Պետրոս աղայի մոտավոր ազգական էր և երկար ժամանակ տեղվոյն մեռած Մահմատ բաշայի տան մեջ քսությամբ սպասավորություն կընե եղեր, սորա երիտասարդ որդին Պետրոս աղայի թոռ, որո ազգական և ինքն, յուրյան կնության ուզելով կկամի հարսանիք առնիլ տահուլով, հայր կընդդիմանա նվագարան բերելու, սակայն որդվույն չդիմանալով ընծայուր Ապտուլլահ պեյին կդիմե հրաման խնդրելու, հիշյալ պեյ հիշեցնելով Պտեին, թե յուր հայր մեռած է, յուրյանք սուգ մեծ ունին, ուստի հրաման չտար նվագարանի, Պտեն կհամոզվի, ըստ որում իրեն ևս կպատ-

կաներ յուր մեռած տիրոջ սուգ պահել, սակայն Պտեի որդին · կդիմե չերքեզին և հրաման կընդունի դահուլով հարսանիք առնելո, Ապտուլլահ պեյ տահուլի ձայն լսելուն պես մարդիկ կխրկե նվագարաններ ջարդել կուտա, Պտեի որդին Պետրոս աղային դիմելով դիպաց եղելություն կպատմե։ Պետրոս աղան կթելադրե յուր թոռներուն բողոքագիր մը մատուցանե գայմագամին, բողոք կտրվի, գայմագամ ժողովներ կգումարե և ժողովքով կորոշվի դահուլ ջարդողներ բանտարկվին և Խաչլուսեն նորեն նվագարան բերվին։ Ժողովականներեն ոմանք զԱպտուլլահ պեյին համոզելով նորա մարդիկ կբերեն կբանտարկեն։ Գայմագամ կհրամայե յուր եղբոր Հյուսեյին պեյին, որ քանի մը պահակով երթա հարսանյաց տուն նվագարաններ զարնել տա։ Այս միջոցին Ապտուլլահ պեյ յուր երկու եղբայրց հետ զինյալ չերքեզի ապարանք երթալով կիմացունե իրեն, թե յուր հայր մեռնելոյն աղագավ պետք չէր նվագարան զարնել և թե յուր մարդիկ պետք է արձակել, չերքեզ կպատասխանե՝ ամեն մարդ յուր հոր մահվան սուգ պահելո է, ամենայն երկրացիք պարտք չունին ձեր հոր սուգ պահելո։ Ապտուլլահ պեյ, որ արդեն դեշ դիտավորությամբ գնացեր էր, իսկույն զենքով կհարձակի գայմագամին վրա և մեկ-երկու հարված կուտա։ Չերքեզ ևս որչափ անպատրաստ զենք գտնալով նորա վրա՝ կհարձակի և կռվելով ապարանա դուռ կիջնին, այս միջոցին լուր տված էին չերքեզի եղբոր Հյուսեյին պեյին, թե եղբորդ վրա հարձակվեցան, նա պահակներով կփութա, երկու կողմանե սաստկապես կխաղմսին 'ի վերա միմյանց։ 3 վայրկինի մեջ Օմար պեյ և Ապտուլլահ պեյ ծանրապես կվիրավորվին և վերոհիշյալ չերքեզի եղբայր և Ապտուլլահ պեյի երկու եղբայր անմիջապես կմեռնին, իսկ Օմար պեյ 6 օրեն զկնի և Ապտուլլահ պեյ 18 օրեն զկնի կմեռնին։

Վաղարշակերտու երկրի շրջակա քուրտ ցեղեր՝ զիլանցիք, հայտարանցիք և սպերցիք, որ Մահմատ բաշայի տուն ինքյանց ամենահարգելի և մեծարելի գլուխ և գերդաստան մի կհամարին, այս լսելով դունտեր և գումարտակներ գումարելով անմիջապես կհասնին 'ի Վաղարշակերտ, որպեսզի մնացյալ չերքեզներ և բոլոր հայեր սրե անցունելով Մահմատ փաշայի որդվոց արյան վրեժ լուծին, մանավանդ ավելի զայրացած և գրգռված էին ընդդեմ հայոց, ըստ որում լսեր էին, թե մեկ դահուլի աղագավ է եղեր կորուստ սիրելյաց յուրյանց, սակայն զորաց հարյուրապետ և քանի մի բարեսեր այլազգիք բաղում դժվարությամբ հուզյալ գումարտակաց դեմն առնելով զհայեր կպաշտպանեն, մինչև որ Կարինեն և Պայազիտեն զորքեր հասնելով գումարտակներ կցրվին։

Ըստ որում չերքեզներ լսելով, թե յուրյանց գլխավոր Օմար պեյ մերձ 'ի մահ վիրավորված և նորին եղբայր ծանր վերքեր առնելով մեռած է, 200 հոգի գունդ կազմելով կը հասնին 'ի Բասեն, որ գան Մահմատ փաշայի մնացյալ որդիք սպանանելով վրեժ լուծին, սակայն Պայազիտու բդեշխ զորք խրկելով Բասենու մեջ նոցա չերքեզաց հարձակումն արգիլած էր։

Հիշյալ մահագուժ դիպվածին և աղմկալից շփոթությանց՝ լուր Կաղզվան ավանի մեջ մեզ հասնելով վայրկյան մի մեր հաստատության խորհուրդ հուզման ալիքներով խռովեց, սակայն դարձյալ անմիջապես որոշեցինք Վաղարշակերտ մերազնեից օգնություն փութալ, ուստի տեսյալ առավոտ 12 ժամու անդնդախոր և լեռնակարկառ ճանապարհով փութացինք 'ի Բագրևանդ գավառ, թեև Կաղզվանու բովանդակ հայք բոլոր զորությամբ կհամոզեին և ընդդեմ կկենային մեր կամաց՝ բնավ չդիմել 'ի Վաղարշակերտ և կամավ աղմկալից շփոթությունից մեջ չդիմել, զի մի ասեն 'ի խուռն անդ մեռանիցիս 'ի ձեռաց զայրացյալ մարաց կամ չերքեզաց, սակայն մեք լավ համարելով մեռանիլ ընդ այն ժողովրդյան, քան թե՛ հեշտ ճանապարհավ երթալ և որոնիլ զհանգիստ անձին, ուստի ասված վստահացյալ փութացինք մեր եղբարց օգնություն և երբ անակնկալ կերպիվ Բագրևանդա Ահմատ գյուղ մուտ գործեցինք, գյուղացիք մի կողմանե սաստիկ կզարմանային մեր այնպիսի ժամանակին մեջ 'ի Վաղարշակերտ այցելիլ, մի կողմանե ուրախությամբ կցնծային, վասնզի ամենեքյան երկյուղիվ պաշարված կսարսափեին, ուստի մեր ներկայություն բոլորովին բոլոր երկյուղներեն անկասկած կլինեին, ինչպես որ արդարև եղան, քանզի մեր գալստյան լուր տարածվելով քրտաց և չերքեզաց մեջ կարծիլ տվին ամենեցուն, թե՛ մեք կայսերական հրամանավ և պատրիարքարանի պաշտպանությամբ քննիչ և այցելու գալով չարերուն պատուհաս անմիջապես կընտրիմք, ուստի ամենայն պետք և բռնավորք աշխարհին և ամենայն հրոսակք և գումարտակաց յուրյանց տեղիս երթալով այլևս չի համարձակվեցան ձայն սպառնալյացն արձակիլ։ Վաղարշակերտու մեջ Պայազիտու մյութասարիֆ և զորաց փաշան տեսնալով հայոց պաշտպանության մասին որչափ բան պետք էր խոսիլ, խոսեցանք և հաստատ կերպիվ խոսք ուղեցին, որ հայոց պաշտպանության մասին բնավ բանի մը չխնայեն։ Դեռ մենք հոն եղած միջոցին մեռած գայմագամի ժողովական անդամք, ընդ որս և Պետրոս աղայն 'ի Պայազիտ քննության խնդարկելո, սույն աղմկալից միջոցին վիճակային առաջնորդ փոխանակ յուր վհատյալ հոտին օգնություն հասնելո, առ ահի վանքին մեջ փակվեր մնացեր

էր և Պետրոսի պես խարույկ արկյալ ձեռն ոյր մինչև տեսցե ցկատարվածն հայոց և հորժամ հետ ավուրց զինք վանուց մեջ տեսնալով մեղադրեցինք, թե ի՞նչու երբ Պայազիտու բդեշխ վանքեն անցանելով դեպ 'Վաղարշակերտ կը փութար պաշտպանել զհայեր, նա իսկույն իսկ պատասխանի և ասե, թե «թշնամիներ շատ ունեի վախցա դան զիս սպանին» և այլն։

Վիճակին առաջնորդ այսպիսի սոսկալի դիպաց միջոցին օգնություն հասնելո արիություն, գյուղերու մեջ դպրոց բանալո եռանդ և վիճակի բարեկարգության հսկելո փույթ բնավ չունի։ Վաղարշակերտի մեջ մի դպրոցի շենք կար կանգուն, զոր մեր հանդիպած միջոցին զորաց համար խոհարան հատկացուցած էին, թեպետ բդեշխին բողոքելով զորքեր մեջեն ուրիշ տեղ փոխադրել տվինք, սակայն [չկարողացանք]* վարժապետ մեջ դնելո, զի տեղացիք երկու անգամ վարժապետ բերելով նստեցուցած էին, սակայն վարժապետի 8 ամսական չտալույն աղագավ, ոչ ոք չէր վստահեր հանձնառու լինիլ պաշտոնին։

Առաջնորդի և վանքի ապիկար մեկ-երկու վարժապետաց կողմանե վիճակային ժողովրդոց կրոնական, բարոյական և համազգային կրթություն և դաստիարակություն երբեք խնամարկություն չէ եղեր։ Եկեղեցական կարգեր և արարողություն աղավաղյալ կտեսնվի, զի բավական ժամանակ և հետե այս խղճալի վիճակին, ոչ առաջնորդի կողմանե քարոզիչ խրատիչ և այցելու եղած է և ոչ եկեղեցական օրինաց և կարգաց ուղղիչ և բարեկարգիչ։ Առաջնորդ 'ի Պայազիտ և 'ի Թոփրագալե քաղաքական գործոց մասին կերթա, առաջնորդի կողմանե մի քահանա կամ մի վարդապետ վիճակ կշրջագայի վանքին հատկացյալ արդյունքն հավաքելո, առաջնորդ և յուր միաբանք գոնե նվերներ հավաքելո միջոցին եկեղեցի մտնալով օրհնություն տան ժողովրդյան և մխիթարեն, այլ ընդհակառակն ո՛չ փիլոն և ոչ վեղար կկրեն իրանց հետ և ոչ բնավ երբեք եկեղեցին տաք կկոխեն և ոչ կաղոթեն։

Մահաբերելո է, թե երբ ժողովուրդ մի այսպիսի անփույթ հովվաց հսկողության ներքև կյանք կվարե, ուր կխեղդի նոցա կրոնական և բարոյական կենաց վախճան, արդարև այս գավառի ժողովրդյան ներքին կյանք ամենացավալի է, զի հովվաց թուլամոլորութենեն քրիստոնեական ջերմեռանդն զգացումներե սառուցյալք, ազգայնություն հոգիեն բնավին զուրկ և անտեղյակ բնավորություն և սովորություն չասեմ ըստ բոլորին, այլ ըստ մասին քրտացյալք, եկեղեցյաց շինվածոց ձևեր հարդանոցի կնմանի, շարականի և երգեցողության եղանակք խանդարյալք, քահանայք ծույլ և պղերգ, ժողովուրդ եկեղեցին հաճախելո բարեպաշտություն մոռնալով՝ եթե տարիներով աղոթելո չերթա բնավ չխճահարիր։

Կայապեկ, Յոնճալու, Խրտր, Քյուփկան և Ջերո գեղեր գյուղացիք եկեղեցին ժողովեցի, քարոզ տվի և խաչ հանելո կրթություն ըրի, զի մեն մի գյուղի մեջ (քահանայից պատիվ պահելո համար կասեմ բաց 'ի նոցանե) ժողովրդականաց մեջ մի ուղիղ երես խաչակնքող չկար։ Ժողովուրդ ազիոզորմ կերպիվ կաղաղակեր, երբ այսպիսի փոքր [կրթությանց մասին կմեղադրեի, թե հայր սրբազան, ե՞րբ զմեզ ուսուցիք, մենք չուսանք, ե՞րբ զմեզ քարոզեցիք, մեք ունկնդրություն չարինք, աստված մեր վարդապետաց տուն քակե (թե որ արդեն քանդած չէ) երբ քեզի պես օր մը եկեղեցին մտան, քարոզ տվին, ահա օրհնյալ է աստված, որ այսքան տարի է՝ մեք քարոզ չէինք գիտեր ինչ է, այսօր լսելով իմացանք, հայր սրբազան հոգվույդ մեռնիմ, զմեզ մի մեղադրեր, մեր վրա մի բարկանար, ներե մեզ, մեք ռամիկ ենք, գրելկարդալ չեմք գիտեր, մեղավոր և անարժան ենք, պարտական լինին մեր վարդապետք և քահանայք, մեզմե խո միշտ խաչօրհնյա կուզին, մեզ խաչ հանել չեն սովորեցնիլ, վարժատուն, վարժապետ չեմք տեսներ, գրոց մենե խապար չունիմք, մեր մեղք ձեր վիզ լինի, թե զմեզ կարդացուցեր [են], տեսեք, թե մենք էլ ձեզմե աղեկ մեր երես խաչակնքեցինք, թե ոչ...։

Ո՜հ։ Անկարեկից ժողովրդինեն այսպիսի շատ տեսակ ձայներ կըլինի և վշտանալո 'ի սիրտ և 'ի հոգի չէի կրնար իրավունք չտալ ժողովրդյան, որ լավություն և կրթություն ընդունելո ամեն տեսակ գեղեցիկ ձիրքեր ունին, ժողովուրդ մի, որ յուր գործունեությամբ և բավականությամբ կարե մեն մի գյուղի մեջ վարժոցներ ունենալ, սակայն գլուխ և մշտատև խրախուսիչներ կպակասի, ասոր աղագավ երկու գյուղի մեջ կաթոլիկ վարդապետք մնալով դպրոց բանալու վերա են, առաջնորդի իսկ թույլտվությամբ բողոքականք մեծ համարձակություն գտած են վիճակին մեջ, ամեն մարդոց և մինչև քահանայից ևս թե ձրի և թե դրամով գրքեր տարածելով բազմաց հավատո միամտություն խախտեր են, այս գավառին մեջ, մեր բուն եկեղեցական և ազգային գրյանք թե երեք պատիկ սուղ են և թե խիստ սակավ գտնվելոյն կամա-ակամա ժողովուրդ ստիպված են բողոքականաց գրյանք առնուլ և խմորվիլ, մինչև սույն դյուրին և ամենակարևոր կետին ևս փույթ չէ ունեցեր վիճակի առաջնորդ, այն եկեղեցական գրյանք բերել վիճակին մեջ։

* Բացթողումը հեղինակինն է (Հ. Պ.)։

Արժան կհամարիմ քանի գյուղի եկեղեցյաց քահանայից և եկեղեցական գրյանց համառոտ նկարագրություն աստանօր ներկայացնիլ հայրենասեր վարչության, որ տեղի Հայաստանի շատ կողմերու եկեղեցյաց այժմյան կառավարության վրա գաղափար ունին և մասնավորապես Հովհաննես վարդապետի անհոգության չափն առնու։

Կայապեկ գյուղ Վաղարշակերտեն 2 ժամ հեռի տեղ 'ի հարևելք Բագրևանդա բարեբեր դաշտի մեջ, հարդանոցի ձևվիվ և չափով եկեղեցի մը ունին, որո երկարություն 12 ոտք և լայնություն 8 ոտք, ձեռք առաստաղ հասածի չափ բարձրություն, գրեթե գետնին հավասար լինելով, գյուղի անասունք տանյաց վրա ել և էջ առնելով և նստելով առաստաղ շատ տեղ բլած և ծայծակ լինելով հողեր կույտ-կույտ տեղված էին եկեղեցվո հատակ, գյուղիս քահանայն, որ ձեռնադրութենեն առաջ երկու ոտոց կաղ մինչև ցայսօր և հոգով ևս երկու ոտաց [կաղ է] 6 ամիս* եկեղեցվո դուռ բացած և ժամերգություն ըրած չէր, որո անմիջապես փիլոն տունեն հանելով հետս տարի մինչև սուրբ Հովհաննես վանք՝ առաջնորդին ցույց տալո և յուր ծույլ քահանայի ընթացք հանդիմանելո աղագավ։

Սույն Կայապեկի բնակիչք ամենք 'ի միասին հարստությամբ ճոխացած են, մի հարուստ գերդաստան կա տեղս, որ կարող է առանձին մի հոյակապ եկեղեցի շինել, թե գյուղի կաղ քահանայն և թե ամբողջ գյուղացիք յուրյանց եկեղեցվո անուն չգիտեին հառաջմանե, ուստի մեր ստեպ անուն հարցանելո միջոցին, անունի մի ևս չկրնալով հարմարացնել ապա իրրև ամոթահար խոստովանեցան, թե չգիտեն եկեղեցվո անուն ինչ է։ Առաջնորդ հիշյալ գյուղին մեջ բարեկամներ ունի և Վաղարշակերտ երթալով և անտի վերադառնալով շատ գիշերներ սույն գյուղի մեջ կանցունե, թե զիարդ ապա զեկեղեցին չի նորոգվիր և դպրոց չշինվիր, ապաքեն լռության խելամուտ լինելո եք, սա միայն ակներև տեսնվեցավ, որ սույն գյուղի ժողովուրդ քրիստոնեութենե և աստվածապաշտութենե սառած ոչ եկեղեցին շինել կփափագին և ոչ եկեղեցին մտնալ կախորժին։

Զերո գյուղ 10-ը ժամու հեռու 'ի Վաղարշակերտեն և 4 ժամու մերձ սուրբ Հովհաննես վանից, զառ 'ի կող դարավանդի մի վերա ունի, յուր դիրք 20 տուն հայ ընտանիք և 3 տուն քուրտ կբնակին։ Հայք մի փայտաշեն անարվեստ և անզարդ եկեղեցի ունին, որո առաստաղ քանի տեղե ծայկծախվելով տանյաց հողեր շարունակ 'ի վայր կհոսին, թրոչուններ սեղան եկեղեցվո հատուկ ծերտերով նկարեր էին, ըստ վկայության գյուղի տեր Միքայել անուն քահանային, լի օրեր 100-ամյա պառավ կանայք և մի ծերունի մարդ եկեղեցի կմտնան, 'ի կյուրակիս գրեթե հիշյալ պառավունք և ծերունին եկեղեցի կմտնան։ Տեղոյս մարդկանց վրա քրիստոնեության և հայության անուն միայն մնացեր է, զի քրտաց բնավորության պես բնավորություն և եղտոց կրոնքի պես կրոնք մի կնշմարվի գյուղիս բնակչաց վերա։ Խեղճ քահանայն իմանալով, թե գյուղ մտած միջոցին անմիջապես եկեղեցին աչքե անցունելո կերթամ, զիս հեռվանց տեսնելով եկեղեցին ավելու աճապարած էր աղթիվս հաղիվ եկեղեցվո դուռ հասուցեր էր և փայտե խոշոր ավել, որ ցախավել կոչիմք, մարդու մը երկարությամբ դռան քով դրած էր, երբ եկեղեցին մտնալով ամեն կողմ դիտեցի աղթիվս և ավել տեսնալով դարձա զքահանայն հանդիմանեցի, թե մեք եպիսկոպոսքս ձեզ ավելի աստիճան տալով կպատվիրեմ մի, որ դուք մաքուր ավելով եկեղեցին ավլեք, իսկ դուք որ այժմ ցախավելով կավլեք։ Եթե ես այսօր աստիճան տալո լինեի, իմ ձեռքս և աստիճանավորին ձեռք սույն այս ցախավե՞լը պիտի տայիք, այսպես անհոգ մարդիկ, աստված ձեզ նոր քրիստոնեության հոգի պարգևե ըսելով հորդորեցինք զքահանայն և զգյուղացիս, որ եկեղեցվո պայծառության հոգ տանին և բարեպաշտության հոգվով վարվին։

Յոնճալու գյուղ 6 ժամու հեռի Վաղարշակերտեն, դաշտի հարավային կողմ Եփրատին մերձ ընդարձակ դաշտահովտի մեջ, 30 տուն հայ բնակիչ ունի, մի փայտաշեն եկեղեցի ունին, բայց երբեք եկեղեցի չի նմանաներ, ամիսներով ժողովուրդ եկեղեցի չի մտնալով սարդի ոտայններ առաստաղ և պատեր հյուսած էին, եկեղեցվո մեջ բնավ պատկեր չկար, եկեղեցիք առհասարակ փոխան մեղրամոմի ձեթ կվառին, փոխանակ կանթեղի բոլոր ճրագներ և հաստ պատրույգներ դնելով սեղան ձեթի տուն դարձեր է և եկեղեցին սև մրերով ներկված է, սույն գյուղի եկեղեցվո գրկակալի վերա մի Նարեկեն 'ի շատ բան մը չտեսա և եկեղեցվո անուն միայն տեր Հընան կրցավ տալ, թե Աստվածածին և հիշյալ ծերունի քահանային աչք, ինչպես վեր հիշեցինք, վտանգված էր, գպրոց չունին, մեր գալ լսելով առ ահի 6 տղա հանձնած էին Գրիգոր անուն տիրացուի մը կարդացնել, որպեսզի եթե դպրոցի վրա բան հարցունեինք՝ ցույց տան մեզ տղայք, այս ձև առժամանակյա պատրաստի ուրիշ քանի մի գյուղերու մեջ ևս տեսնվեցավ, որո պատճառն այժմ կբացատրիմք։

Ըստ որում վիճակիս առաջնորդ Հովհաննես վարդապետի բարե-

* Բացթողումը հեղինակինն է (Հ. Պ.)։

գամներ Կարնո քաղաքեն լուր տված էին, թե այցելուն ամենեն շատ դպրոցաց վրա յուր խորին ուշադրություն դարձնելով խիստ մանրակրկիտ հարցումներ կընե դպրոցաց մասին, ուստի Հովհաննես վարդապետն դեռ մեր Բասենու և Վանանդա կողմեր եղած միջոցին Առաքել վարդապետն և վանքի տեր Գևորգ կարծեցյալ ուսումնական քահանայն տագնապավ և շտապով գյուղեր խրկեր և սաստիկ հրամաններ արձակելով, որ անմիջապես դպրոցներ բանան, տղայք ժողովեն, գոնե յուրաքանչյուր գյուղի մեջ 20-են սկսյալ մինչև 4 տղայք կարդացնիլ սկսին, թե քահանայից և թե առ ձեռն գտնված տիրացվոց ձեռոք, իրավ, քանի մի գեղեր առաջնորդի հրամանին անսալով այսպիսի առժամանակյա պատրաստություն տեսած էին, սակայն մեք հորդորեցինք և համոզեցինք, թե այսպիսավ մեր աչք չեք կրնար հրապուրիլ, այլ պետք է, որ հաստատուն կերպիվ դպրոցներ շինեք և հատուկ վարժապետներ բերեք ձեր տղայք կրթելու։ Վասն զի Վաղարշակերտի բոլոր գյուղացիք ունին բավականություն թե փառավոր եկեղեցի և թե օրինավոր դպրոցներ շինել և թե ուսումնական վարժապետ բերել և վարձք վճարել։

Վերոհիշյալ Յոնճալու գյուղ պարսից կարավանի ճանապարհի վերա կենալով տասնի չափ խաներ ունին, բավական հարստության տեր են, եթե առաջնորդ փույթ տանի, կարող են թե դպրոց և թե եկեղեցին պայծառ և փառավոր կերպիվ շինել։

Ղարաքիլիսա գյուղ հինգ ժամավ հեռի Վաղարշակերտեն, դաշտի հարավային կող Եփրատա հյուսիսային եզերք՝ 70 տուն հայ բնակիչ ունի և 6 տուն տաճիկ, մի փայտաշեն անզարդ եկեղեցի ունի, մի քահանա, անուն տեր Սահակ, Քաջբերունյաց գավառեն, այր ծեր և պարզամիտ (հողեր թափու բրած են հայեր, սույն գյուղի մեջ կնստի Նահիայի գայմագամ)։ Եկեղեցին 8 խանութ կալված ունի, մեն մի խանութեն 240 ղուրուշ վարձք կստանա, տարեկան գումար 1800 ղուրուշ, 150 ղուրուշ ևս պսակներեն և մկրտությունից։ 300 ղուրուշ մոմի և խունկի ծախք կերթա, իսկ 1750 ղուրուշ տարեկան կը հավելնա։ Մշո Ալիշանա գյուղեն Աստվածատուր անունով տիրացու մի գյուղացվոց մեկի ախոռի մեջ վեց տղայի հասարակ ընթերցմունք տալով վարժապետություն կընե, սորա տարեկան վարձքն է 500 դրամ, 4 սոմար ցորյան, որ 200 ղուրուշ դրամի վերածելով ամբողջ տարեկան կընե 900 ղուրուշ։ Վարժապետեն պահանջեցի ինձ ներկայացնել, նա 7—8 տղայք բերելով ասաց, թեև ամբողջ ինձ 16 տղա հանձնեցին, սակայն քանիք դպրոց չէին եկած, որ բերեի։ Եվ ապա առանձին գալով խոսեցավ, թե գյուղացիք ձեր գալ լսելով, ինձ առ ահի վարձք կապեցին և 5—6 տղա բերելով ինձ, ստիպեցին զիս, որ 16 տղա ցույց տամ ձեզ, սակայն 6 տղայեն ավելի առ իս դաս առնելու եկել չեն և այլն։

Մանկասար գյուղ Վաղարշակերտեն դեպ 'ի արևելք 8 ժամավ հեռի և 4 ու կես ժամ մերձ սուրբ Հովհաննու վանից, սուրբ Հարություն նվիրյալ, երկու քահանա՝ տեր Դանիել և տեր Զաքարիա, տեր Դանիել 500 ղուրուշ ամսականով 20 տղայոց հասարակ ընթերցմունք դաս կուտա, գյուղի եկեղեցի[ն] 200 ղուրուշ դրամ ունի, զոր հանձնած են տեր Դանիելին եկեղեցվո նորոգության համար։ Սույն և Ղարաքիլիսա գյուղի եկեղեցիներեն 'ի զատ ուրիշ գյուղի եկեղեցիք դրամ և դրամագլուխ չունին։ Սույն գյուղի քահանայից մոտ բողոքականաց քանի մի գրքյանք տեսա, զորս ախորժանոք կկարդար, վասնորո բավական խրատներ տվի իրեն, բողոքականաց ինչ նպատակավ Հայաստան գալն ծանուցի։

Խրտր գյուղ Վաղարշակերտեն 7 ժամավ հեռի և մեկ ժամավ բացակա Եփրատա եզերքեն, զառ 'ի կողմ մեծ թումպիմը վերա ունի յուր գիրք, դաշտահովիտ մի ունի յուր հարավակողմ, որո մեջեն վճիտ վտակ խաղալով կերթա կմիանա ընդ Եփրատ գետ, 12 տուն հայ բնակիչ ունի, փայտաշեն նոր եկեղեցի մը ունին, զոր գեղացիք առանց ճարտարապետի շիներ էին։ Գյուղացիք մեծապես ուրախ էին եկեղեցվո շինության վերա, սակայն քահանա չունենալով տխրության մեջ էին, Մշո Թիլ գյուղի տեր Առաքել յուր հայրենիք վերադարձավ, ուստի առաջնորդ[ի] և գյուղացվոց խնդրանոք հիշյալ գյուղացվոց մի օրինավոր քահանա ձեռնադրեցինք։

Կազի գյուղ Վաղարշակերտեն 1 ժամավ հեռի և չորս ժամու կես հեռի սուրբ Հովհաննու վանից։ Ըստ յոնճալաց պարսից կարավանի ճանապարհի վերա, ընդարձակ դաշտահովտի եզերք երկարատուր բլրակի բազկաց ներքո ունի յուր գեղեցիկ դիրք։ 20 տուն հայ ընտանիք կընակին աստ, մի փայտաշեն անզարդ եկեղեցի ունին, նման Զերոյի եկեղեցվույն, դպրոցի անուն լսած են, սակայն չունին. քահանայի պետք ունին, սակայն ունենալ չեն ցանկար, Մանկասարա տեր Դանիել կհովվվե։ Քրիստոնեության անվան սիրահար են, սակայն անունեն 'ի զատ քրիստոնեի գոնե արտաքին կերպարանք ևս չունին։ Բոլոր գեղացիք առ իս հավաքելով քրիստոնեության վրա հարցումներ ուղղեցի, սակայն մեր պարզ հարցմանց ոչ ոք բավական չեղավ պատասխանելու, հրավիրեցի զնոսա խաչակնքիլ զերեսս և ոչ մին չկարողացավ ուղիղ երես խաչակնքիլ, ուստի հրավիրեցի եկեղեցին, բավական աշխատու-

թյուն կրելով, հազիվ թե կարգավ երեսներ դեպ 'ի տեղան կանգնեցուցի, իսկ ես ինքս սեղանի առաջ կանգնելով սկսա խաչակնքելու կրկնություն տալ ժողովրդյան նախ՝ բավական խրատներ և հորդորներ կարդացի քրիստոնեության վրա և ապա՛ երկու մատս ճակատիս տանելով հրամայեցի, որ իմ օրինակիս հետևելով մատերնին ճակատի վրա դնեն, իսկ նոքա իբրև բնավին անծանոթ խաչակնքելու, որ ձեռք բերանին կտաներ, որ ձեռք ականջին կողմ կդարձուցաներ, որ ձեռք բնավ չէր կրնար տանիլ, որ բնավ հանուն հոր չէր կրնար ասել, վերջապես քսան անգամ կրկնեցի, հազիվ թե մեկ քանիս կրցան մատերնին ճակատնին դնել և որդվոց ասելով, դարձյալ մեծ դժվարությամբ կրցանք մատունք սրտի վրա դնել տալ, զի որն մատունք ճակատն քթին կբերեր, որ բերնին, որ հառաջ կտաներ և որ ձախ, ամեն նման էր և հոգվույն սրբբո ասիլն, զի երբ ես հոգվոյն ասեի նոքա, որ աջակողմ մատունք կբերեր, որ կուրծքի վրա կտաներ և որ ապշած շվարած անասունի պես երես կնայեր, 40 անգամ կրկնելով կրկնեցի, մինչև քանի հոգվո ուղիղ հաչ հանիլ տվի, իսկ ես այն միջոցին ոչ այն էր, որ ծիծաղեի և ոչ այն էր, որ զայրանայի, վասնզի տեսարան հույժ ցավալի էր, մարդկանց կոպիտ շարժմունք ծիծաղելի, իսկ քահանայից անհոգություն զայրանալու առիթ, ուստի լի ցասմամբ խոսքս ուղղեցի առ դասս քահանայից, որք անտարբերությամբ եկեղեցու մեջ կեցած միայն կծիծաղեին ժողովրդյան շարժմանց վրա։ Ժողովուրդն անմեղ է, աստված սոցա արյան հավուրն դատաստանի ձեզմե պիտի պահանջե, մշակ եք անիրավության և հովիվք հայոց զկաթն կթեք շատն առնուք և զհոտն Քրիստոսի անփույթ առնեք, պարտական եք դուք որդվոց ժողովրդյան, զի նոցա երեխայք ավազանի մեջ մկրտելով, չեք կարող ձեր անձն աստծո պարտականութենեն ազատիլ, զի ոչ թե միայն կպարտիք խաչակնքիլն ուսուցանիլ ձեր ձեռոք մկրտյալ տղայոց, այլ հավատո բովանդակ դավանություն և գիտություն պարտիք անթերի ուսուցանիլ որդվոց ժողովրդյան։

Ոչ թե միայն անդանոր Կազի գյուղի եկեղեցվո մեջ ներկա եղև զքահանայից խոսեցա այսպես, այլուր ուրեք հանդիպեցա և այցելեցի զայս և առավել քան զայսոսիկ բանս խոսեցա առ քահանայս մեր, որոց անգիտություն և անհոգություն ժողովուրդ վայրենացեր և խոպանացեր է ըստ մարգարեի Եսայու։

Վերոհիշատակյալ գյուղերին և քանի մի ևս գյուղերու այցելութենեն զկնի, որո ստորագրություն երկայն լինելույն աղագավ չիտաք աստանոր, երբ հուղի անկած դեպ 'ի արևելք սուրբ Հովհաննու վանք

կերթայինք, ճանապարհի վերա շինված չորս գյուղի պարսիկ բնակչաց գլխավորներեն տասնի չափ ձիավորք մեզ դիմավորելու եկան և մի ժամու ճանապարհ հետ մեզ ուղեկից լինելով, մեծավ թախանձանոք մեզմե օգնություն կխնդրեին, իբրև թե յուրյանց գեղեր ճանապարհի վրա գալով երբեք, մանավանդ զորքեր և պահակներ զանազան նեղություն կհասցնեն իրենց, դու քննիչ եկած ես, հայոց վիճակ քննելով անոնց լավություն պիտի ընես, կաղաչեմք, որ վիճակ քննելով մեզ ևս այցելություն առնիս, զի մեք ևս ձեր մեծության ներքարն եմք, այն և ձեր ծառայն եմք, երեք անգամ հրամայեցի շնորհակալությամբ հանդերձ, որ ետ դառնան տեղերնին, սակայն նոքա սամարացվոյն[88] պես աղաղակելով մեր հետ կուգային, ապա հետո ձիաներեն իջանելով եկան մեզ հույժ արտաքո խոնարհություն մատուցին և թախանձեցին, որ խոսք տամք իրենց օգնություն ընելու և յուրյանց զրկանաց դարման տանելու, սակայն մեք պարսից խորամանկության 'ի վաղուց անտի տեղյակ լինելով և լրաց ևս ուսանելով թե սոքա գողակից են գողաց և թե Պարսկաստանի կողմանե որքան գողուն բերվի, սոքա 'ի թաքստյան կպահին և շատ անգամ ինքյանք Տաճկաստանի սահմաններեն գողություն ընելով կտանին 'ի Պարսկաստան կվաճառեն, ուստի ձին կայնեցնելով բավական խրատներ խոսեցա իրենց՝ ասելով. եթե դուք բարի մարդիկ լինիք, ոչ թե թագավոր ձեզ վրա գթությամբ կհայի, այլ աստված ևս ձեր բարեգործության փոխարեն ձեզ բարիք կը հատուցանե, ոչ թե ձեր բարիք տեսնելով կառավարության մարդիկ ձեզ բարեկամ կը լինին և նեղություն չեն պատճառեր, այլ բոլոր այս երկրի բնակիչք թե քրիստոնյայք և թե մահմատականք ձեզ բարեկամ կլինին, իսկ եթե դուք վատ և վնասակար մարդիկ լինիք, թագավորին աչքեն կելլեք և այսպես ատելի կդառնաք, և բոլոր մարդիկ ձեզ թշնամի կդառնան, երթայք խաղաղությամբ, ձեր դրացիներեն ձեր լավության համար պիտի հարցանեմ, եթե բարեբախտաբար ձեր մասին բարի վկայություն տվին, ձեռքես եկած ամեն տեսակ լավություն ձեզմե չի պիտոր զլանամ, իսկ եթե բարի վկայություն չընդունեցի ձեզ համար, նորեն ես ինքս ձեզ դատախազ կլինիմ, շատ աղեկ, շատ աղեկ ասելով տեղերնին դարձան։

Պարսից դիմավորելեն փոքր-ինչ ետք, վանքի վանահայր Հովհաննես վարդապետ երկու ժամու չափ ճանապարհ մեզ դիմավորելու եկած էր վանքի երկու միաբանոք և քանի մի հայազգի քաջ ձիավորոք, մեզ մերձեցած միջոցին ձիաներեն վար իջան և մեր ողջունեն հետ հեծնալու հրաման ընդունելով 'ի ձի աշտանակեցան։ Խեղճ վարդապետ ողջունեն 'ի զատ ուրիշ այլ ինչ բան չլսեց մեր բերանեն, վասնզի վիճակի

միջի կրոնական սառնությունք և զանցառությունք տեսնալով սիրտս արտաքո կարգի հուզյալ՝ չուզեցի մտերմական բան մի խոսիլ, մինչև հասանք վանք։ Դպրոցի ժառանգավորք և գյուղի տղայք երգով մերձ 'ի դրունս վանուց դիմավորեցին մեզի։ Վանուց մեջ մի գիշեր հանգիստ առնելով կոչեցի զմեր նախածանոթ Հովհաննես վարդապետ՝ առաջնորդ Բագրևանդա և վանահայրն սուրբ Հովհաննու վանից, միբստմիջե նկարագրեցի առաջի նորա վիճակին կրոնական, բարոյական բազմատեսակ և անդարմանելի թերությունք և որչափ մեղադրություն և հանդիմանություն պետք էր մեղադրեցի և հանդիմանեցի։

Սուրբ Հովհաննու հռչակավոր վանք 12 ժամավ հեռի է 'ի Վաղարշակերտեն ուղղակի դեպ 'ի արևելք և Կոգովիտ գավառեն, այն է Պայազիտեն 9 ժամավ հեռի ուղղակի դեպ 'ի արևմուտ անվանի Նպատ լեռան հյուսիսային ստորոտ և Խերատա հարավային եզերք, Գագուանա ավերակաց մի ձիարշավ դեպ հարավակողմ գոգավոր զառի կողի մի վերա ունի մեծանիստ դիրք։

Տաճարի ընդարձակ մեծություն Հայաստանի բոլոր հռչակավոր տաճարներեն և եկեղեցիներեն մեծ և հոյակապ է, դրսի կողմանե երկարություն 52 մեծ քայլ է, իսկ լայնություն՝ 32։ Տանյաց բարձրություն լայնության չափով 32 քայլ է, իսկ գմբեթի բարձրություն երկարության չափով 52 քայլ է, նախկին գմբեթն խոնարհած լինելով, նորեն խոնարհագույն գմբեթ մի առաջնույն տեղ շինած են։

Տաճարի տանյաց վրա կարի քանի պատերազմի համար պարիսպներ կան, որք զտանիս եկեղեցվոյն անմատչելի բերդի մը նմանեցուցեր են։ Եկեղեցվո միջեն վերելաց ճանապարհ մի կա, որ հյուսիսային պատի միջեն դեպ 'ի տանիս կհանե։ Գմբեթ չորս հաստահեղույս սյունաց վրա հաստատված են, մի հույժ բարձրակամար սեղան ունի, իսկ հաջմե և հահեկե, այն է՝ աջակողմյան և ձախակողմյան դուռերու հանդեպ՝ մեծամեծ խորաններ, որո աջակողմյանի մեջ ժամարար կզգեստավորվի, իսկ ձախակողմյանի մեջ եկեղեցվո ծանրագին սպասներ կդրվին։

Տաճարի դրսի որմոց մի մարդաչափ բարձրության վրա եկեղեցվո շինության հիշատակարանի գրեր եղծված լինելով անվերծանելի են, ուստի թվական և շինողի անուն չստուգվիր, վանականք ավանդութենեն առնելով կխոսին, թե Հերակլ կայսր զխաչափայտ Պարսկաստանեն դարձնելո միջոցին շինած է և թե սպանյալ Սիմոն վարդապետն 'ի հին ձեռագրաց առնելով յուր պատմագրության մեջ արձանագրած է։

Սիմեոն վարդապետի ձեռագիր պատմություն, ինչպես բազմաց

հռչակված էր, թե շատ պիտանի և օգտակար տեղեկություն պարունակելեն զկնի ներկա դարուս հայոց հարյուրամյա պատմություն մեզ կավանդեր։ Մարկոս Աղաբեկյան[89] զայս գիտնալով քանի տարի առաջ Պողոս պատրիարքի[90] ձեռոք նամակ մի կուղղե առ Հովհաննես վարդապետն, թե անպատճառ Սիմեոն վարդապետի պատմություն խրկեք 'ի Պոլիս, զի Մարկոս էֆենտին հայոց պատմություն շինելո նյութ անկե առնելե զկնի վաղվաղակի առ ձեզ կդարձուցանեմք։ Հովհաննես վարդապետ ըստորում երկչոտ փութապես պատրիարքին կխրկե, զոր Մարկոս էֆենտիին կհանձնվի և ասկե անտարակույս Բերայի հրդեհին ճարակ կերթա մյուս ձեռագիր գրյանց հետ, որք աստի և անտի հավաքված էին։ Այս մասին շատ մեղադրեցի Հովհաննես վարդապետն, թե էր աղագավ բուն ձեռագիր խրկած է, չի կարող ընդօրինակությամբ պատմության պատճեն խրկել։ Բայց եթե հայոց թշվառ բախտին համար հրո ճարակ եղած չէ, դարձյալ բարեբախտ ենք, իսկ եթե հրո ճարակ գնաց, թշվառ ենք։

Վանքի բակ և պարիսպներ տաճարի մեծության չափով ընդարձակ են, հարավային կողմի պարիսպ կես քարով և կես աղյուսով ներկա Հովհաննես վարդապետ անցյալ ամարան նորոգած է։ 4—5 կանոնավոր սենյակ հազիվ կա, մնացյալ սենյակներ և շենքեր կիսավեր և խարխըլյալ են։ Վանքի մի սենյակ ժառանգավորաց դպրոցի հատկացուցած են, 13 ժառանգավոր ընդունակ աշակերտք հասարակ ընթերցմունք և քերականության առաջին մասն կուսանին։ Գյուղի մանր տղայք քսանի չափ խառն կնստին ժառանգավորաց հետ։ Ժառանգավորներեն շատեր վանքի մոտի գեղեն և վարդապետաց ազգականներեն են, իսկ հեռավոր գյուղերեն մեկ-երկու տղայք հազիվ կգտնվին։ Անմիջապես պարտք դրինք վանահոր վրա, որ կանոնավոր դպրոց մի շինելով ժառանգավորաց գեղի մանր տղայքներեն որոշ դաստիարակել տա զնոսա։

Սուրբ Հովհաննու վանից հաշիվ թեև մանրամասնաբար առնված է եկամտից և ծախուց աղբյուրներ և տեղեր, շարժական և անշարժ կալվածոց որքանություն, միաբանից, դպրոցի տղայոց, վարձավոր մշակաց, ծառայից և տնտեսաց համառոտ վիճակացույց հետևյալն է զոր վանահոր և միաբանից ստորագրությամբ վավերացյալ առեր եմք։

Վանքին տված վիճակացույցին ճիշտ պատճեն «երեք խորան սուրբ Հովհաննու վանուց, որ Ուչքիլիսե կմականվանի շարժական և անշարժ կայք սա հետևյալն է, որ կարճ ի կարճո համառոտած և հանդերձ յուր եկամտի և ծախուց։

Վանքս այս, որ բավական հռչակ ունի և իրոք ևս Հայաստանի

խիստ մեծ աթոռներուն կարգին համարված էր առաջներ, հիմա խիստ խոնարհ և աղքատ վիճակի մեջ և միայն մշակական արդյամբ և թեմական նվիրատվությամբ իր ապրուստ կը հայթայթե, այն ևս խիստ դժվարությամբ և տառապանոք, վասն զի իր տարեկան ծախք միշտ հառաջ կկանցնե յուր սովորական եկամտեն։

Վանքն ունի 55 Կարնո սոմար ցորենի տեղ և 40 սայլ խոտի տեղ ալ մարգագետին, ունի մեկ ձիթահան և մեկ ջրաղաց 3 աշքեն, իր ծախքը կհայթայթվի յուր անդաստանեն և յուր թեմական նվիրատվութենեն, կալվածքեն կուտա տարին միջին հաշվով 110 Կարնո սոմար ցորյան և 60 սոմար ալ պտղի ասացյալ նվերն կավելնա, որ բոլորն կընե 170 սոմար և 13 սոմարի չափ ալ ջրաղացքեն, կընե 183 սոմար, այս գումարին 75 սոմար ուտելու կերթա, 25 սոմարի չափ ալ ցանելու, 10 սոմար ալ մասնավոր պետքերու կմսխվի (գուցե վանահոր և վարդապետաց ազգականաց և տեր տիարքին կտրվի) և մնացյալն կվաճառվի վանուց սովորական ծախք վճարելու համար։

Տարին 40-ի չափ պսակ կրնա պատահիլ բոլոր թեմի մեջ և հորմեն եկած արդյունքն 650 ղուրուշ չանցներ երբեք (սույն պսակի նվազությունն, ինչպես բազմից պատճառներ գրեցի, դարձյալ կրկնելով տեղս կատեմ պաշլիի չար սովորության պատճառավ է, ուստի անմիջապես դարման տանելու է, ապա թե ոչ տարի տարվան վրա պսակներ կպակսին) ձիթահանքեն եկած ձեթն 600—700 հոխայի կը հասնի, հորմեն երբեմն 100—150 հոխա ծախելու կհատկանա, որտ հոխային երբեմն 4—5—7 և այս տարի մինչև տասն ղուրուշ կերթար, իսկ մնացյալն ուտելու, վառելու և գոմեշներաց օծելու կերթա։

Հոգեբաժին ասացյալ տուրքն, ննջեցյալի գլուխ ըստ կարյաց մեկ անասուն սահմանված է, որ առաջնները գոմեշ մատակ ալ տվողներ շատ կգտնվեին, բայց հիմա համենեն հարուստ եղ, կով և ըստ մեծի մասին ոչխար կուտան, շատեր կան, որ ավելի թուլահավատության, քան թե աղքատության պատճառավ չեն տար (տեղս ահն յուրյանց գրությամբ և ստորագրությամբ առաջնորդ հանդերձ միաբանոք կիսոստովանին, թե յուրյանց ժողովուրդ թուլահավատության մեջ ինկած են, որտ գլխավոր պատճառն ինքյանք են) որ հոգեբաժին ավելի տան գլխավորի համար կուտան, իսկ տան մյուս անդամաց համար մանավանդ երիտասարդ կարգե եղողներուն համար գրեթե սովորություն չէ հոգեբաժին հալ, այս մասին եկած անունաց թիվն տարին 10-ի հազիվ կհասնի, որ սովորաբար կըլլան կով, երինջ, ոչխար և այլն։

Վանուց անասուններ այս են իրենց տեսակներով՝ 10 գլուխ լծկան

գոմեշ, 16 մատակ, 10 հատ էգ և որձ երեք տարեկան գոմեշի ձագեր, 11 հատ լծկան եզ, 10 հատ ալ երեք տարեկան արջառ, 21 հատ կով, 15 երկու տարեկան երինջ, 8 հատ տարեկան հորթն և երկու ձագ, 75 հատ այծ և ոչխար և այլն։

Վանուց մեջ ընդամենը հին և նոր 30 ձեռք անկողին կան իրենց պարագաներով, 20 հատ թաղիք, 15 հատ կարպետ, 12 հատ քուրձ (կուվալ), 4 հատ դորգ (խալի) և 2 հատ ալ* 60 հոխայի չափ կշիռ ունեցող պղին[ձ]ք, 4 արոր, 1 գութան և այլ և այլ։

Վանքի ներս կան և կը գտնվին 208 հատոր տպյալ գրյանք և 7 հատոր ալ ձեռագիր գրյանք։

Անոթ և զգեստներ են 25 հատ զառ և հասարակ շուրջառ, 25 մետաքսյա և հասարակ շապիկ, 30 հատ ավետարան արծաթապատ, 3 գոտի արծաթյա, 3 գավազանք, 2 բուրվառք, 3 սկիհ, 3 կանթեղարծաթ, 6 սաղավարտք, 2 քշոց, 8 բորուտար, 4 հատ թաք եպիսկոպոսական և 15 հատ խալի։

Միաբանություն է 1 առաջնորդ, 3 վարդապետք, 1 քահանա, 1 վարժապետ, 13 ուսանող մանկունք և 4 սպասավորք։

Վարձավորք են 7 հոգի գործակալներս, 16 հոգի ալ դուրս և 6 հոգի ալ պառավ կանայք, որք են տնտես, կով կթող, զնդարար և հացեփ, 3 հոգի նախորդ, հորթարած և հովիվ, թվով 53 հոգի, որք վանից արդյամբ կապրին։

Վանուց ծախս միջին հաշվով տարին 15.000 ղուրուշի կհասնի և շինված եղած տարին 20.000 ղուրուշի կհասնի և այն 15.000 ղուրուշ գումար կհոգացվի 10.000 ցորենի հարդյունքով, ձեթ ծախելով և այլ պատահական եկամուտներով, իսկ շինված եղած տարին ժողովրդյան հատուկ օգնության դիմել հատկրցելուց։ Հիշյալ 15.000 ղուրուշ սովորական տեղերն ասոնք են 2500 ղուրուշ առաջնորդարանին վրա կըլլա, 3000 ղուրուշ վարժարանի, 3000 ղուրուշ ալ անկողնոց և այլն, 1000 ալ երկրագործական երեղենաց և մնացյալն ևս կերելյաց և ուրիշ դիպվածական պիտոյից վերաբերյալ, որոց ինչ տեսակ բան լինելն էր տարեկան միամասն տումարին նայելու է։

Ի ստորագրություն վերոգրյալ իրաց ստորագրեմք միաբան վանոցս

Հովհաննես վարդապետ	Մովսես վարդապետ	Առաքել վարդապետ
վանահայր Ուշքիլիսայու	լուսարար	միաբան
տեր Գեորգ Հովհաննիսյան	կնիք	կնիք

---

* Բացթողումը հեղինակինն է (Հ. Գ.)։

Վերոհիշյալ վանականաց ցույց տված վիճակացույցի միջի հաշվեկշիռ, որով եկամուտք ծախսուց դեմ դնելով կհավասարեցնե, եթե տնտեսագիտությամբ մատակարարվի, տարակույս չկա, որ տարին 7—8 հազար ղուրուշ կավելնա և 20 օրինավոր ժառանգավորաց կրթության առատապես կբավականանա, սակայն ինչպես հայտնի է, եկամուտի մեջ զեղչումներ արած են, իսկ ծախսուց մեջ բավական ավելորդություն, զոր ծանուցանիլ վարչության պարտք կհամարեմ։

Այսպիսի հռչակավոր վանորայք և աթոռ յուրյանց ծաղկյալ բարեպաշտությամբ, անընդհատ և ներդաշնակավոր ժամակարգությամբ յուրյանց սեփական վիճակյնոց թե եկեղեցականաց և թե աշխարհականաց բարենախանձ օրինակ են, սակայն ցավալի է ասել աստանոր այսպիսի առաքինությունից օրինակ տալո հանգամանք կպակսի սուրբ Հովհաննու հռչակավոր վանից մեջեն, վասնզի վանուցս վանականացս պղերգութենեն՝ ժամակարգություն և նույն ինքն ժամասացություն իսպառ աղավաղյալ է, զի հազիվ տարին քանի անգամ պատահի, որ ժամերգություն անդր, զի բարձումեն սկսվի, զի կամ օրհնութենե, և տարվույն մեծագույն ժամանակ հարցեն կսկսին և փառք 'ի բարձումեն[91] կվերջացնեն, ճաշու երեք ողորմիան 'ի բաց մերժելով, ճաշու գիրք և ավետարան ևս չեն ախորժիր ընթեռնուլ և երբեմն ևս ամբողջ ժամերգություն զանց ընելով տաճարի դուռ չեն բանար և կանթեղ չեն լուծանիր։ Վեց ամիսն անգամ հազիվ մի պատարագ կմատչի սեղանի վրա, վանահայր չգիտեմ թե ինչ պատճառի համար 4 տարի և հետե սուրբ պատարագ մատուցած չէր, այս տարի մի պատարագ մատուցած է, թերևս մեր այցելության սարսափեն։

Խաչգյուտի կիրակին[92] մեզ վիճակվեցավ սուրբ անմահ պատարագ մատուցանել շնորհաբաշխության համար, մարմնով, հոգով և մտոք ծերացյալ Մովսես վարդապետ բաժակի չունենալով վանահոր և մեզ ևս չիմացնելով ջուր կլեցունե ամանի, իսկ մնացած գինու մրուրներու վրա և իբրև բաժակի կը բերե մեզ, մեք որ 'ի ծննդենե ոչ լսած և ոչ տեսած էինք այսպիսի պատահար նամանավանդ վանուց հռչակավորութենեն անկասկած լինելով, երբ ճաշակելո ժամուն զսուրբ բաժակն ըմպեցինք, մի մատ մրուր մեր բերնի վրա մնաց, մատ մի ևս սկհի մեջ, նախ զվանահայրն կանչեցի 'ի սիանը և ապա ցնորամիտ լուսարարն, խեղճ վանահայրն շառագունելով կորագլուխ եղավ, իսկ լուսարարն իբր Զաքարյան պապանձվեցավ, իսկ մեք սաստիկ սրտմտությամբ մերժելով և հիշելով թե տերն մեր խաչի վրա շեղի և քացախ ըմպեց, ամենայն համբերությամբ զմրուրն մինչև ցվերջ ըմպեցինք և արբեցինք։

Ահա սույն մեկ դիպվածեն կրնա կրոնական պատկառելի ժողովն խելամուտ լինիլ և գաղափար ունենալ վանականաց պղերգության և անհոգության վերա։

22-ամյա շուշտակ ավագ սարկավագ մի կար վանքի մեջ՝ անապատականաց չափ ջերմեռանդ և կրոնասեր, որո մասին չափեն ավելի թախանձեց զմեզ վանահայրն ձեռնադրել, երկու պատճառի համար բնավ կամ չտվի, առաջին, որ միտք դրած էի բնավ վարդապետ չձեռնադրել և երկրորդ, որ հասարակ ընթերցմունքեն 'ի զատ արհեստական գիտություն չգիտեր, սակայն այս դեպքին վրա առավել սաստիկ կերպիվ սկսավ վանահայրն աղաչել, թե երբեք ժամասաց և լուսարարության պաշտոնի համար մարդ չունիմ բաց այս սարկավագեն, ուստի ակամա կամոք երեք օրեն զկնի ձեռնադրեցինք և լուսարարության պաշտոն անոր հանձնեցինք և պատվիրեցինք թե նորընծային և թե վանահոր և թե մյուս միաբանաց, որ ժամերգություն ըստ Հայաստանյայցս եկեղեցվո անթերի և շքեղությամբ կատարելով անխափան օրինակ լինին յուրյանց բանյուք գնացյուք և այլն։

Արդեն վանք չժամանած մինչդեռ քննության վիճակի գյուղեր սահմանադրություն կգործադրեինք, խառն համագումար ժողով մի գործադրելո նախագիծ պատրաստեր էինք, ուստի շրջաբերական մի ուղղելով համորեն գյուղորեից քահանայից, թաղականաց և երեսելի արանց 'ի ձեռն Եսայի քահանայի օգնականի մերո հրավիրեցինք 'ի ժողովս 'ի սուրբ Հովհաննու վանք, քանիք մեզ ընկերելով և շատեր ևս հետզհետե գալով 'ի վանք, թիվ եկելոց աշխարհականաց 55, իսկ քահանայից 180 երկու օր 'ի տաճարի սրբոյն Հովհաննու աստվածասիրության, բարեպաշտության, սիրո, միության և ազգասիրության վրա աղդու հորդորներ տալով հրավիրելոց, քանիցս կրկնելով կրկնեցինք, թե հայոց քրիստոնեություն մեծ խանձարուրք, քառասուն բյուր հայոց մկրտության ավազան Եփրատ և հայոց հրաշազարդ փառավորության օրորան աստ է 'ի Բագրեանդ, սակայն ցավոք և հեծությամբ սրտի տեսանիմ այսօր, թե քրիստոնեության և հայության արտաքին կերպարանքն անգամ հեռացած կերևի սույն այս աշխարհեն, իսկ ներքին կազմություն և կերպարանք իսպառ անհետացած է, հիշեցեք ձեր առաքինի նախնիք, որ յուրյանց մարմնավոր բոլոր պերճություն, փառավորություն, հարստություն և նույնիսկ թագավորություն քրիստոնեության զոհելեն զկնի յուրյանց պատվական և թանկագին արյուն իսկ չխնայեցին քրիստոնեության բարեպաշտության բոլորանվեր պատարագ մատուցանել Քրիստոսի աստծո, և առավել քան զայսոսիկ բանս հորդորականս և պիտա-

նիս և հոգեշահս և ազգօգուտ խոսեցանք հունկն աշխարհականաց և եկեղեցականաց զոր ոչ է ժամանակ հիշելոյ։ Իսկ ապա ըստ օրինի ժողով կազմելով հետ երկուց ավուրց ատյան բացինք հանդերձ կրկին ատենախոսությամբ և ամենեցուն ազատ հաճության կարգադրությունք սահմանեցինք և հանդերձ ամենեցուն ստորագրությամբ վավերացուցինք։

1. Որոշեցինք և սահմանեցինք վանքի 6 ժամ մերձավոր գյուղեր պսակի հրամանին վանքի վանահայր վիճակավոր առաջնորդեն առնվի անպատճառ, իսկ հեռավոր գյուղերու համար ամենուն հաճությամբ երկու քահանայք բարեկարգ հաստատեցինք, որ 'ի դիմաց առաջնորդին հետ երկար և օրինավոր քննություն պսակի հրամանագիր տալով կանոնավոր արձանագրություն բռնեն, իսկ մեղոք և կնճռալից խնդիրներ անմիջապես առաջնորդին յուրյանց վավերական գրով տեղեկագրեն և նորա որոշման սպասեն։ Վասնզի ինչպես Վաղարշակերտու Պետրոս աղայեն այնպես պսակի հրամանագիր տալո արտոնություն տրված էր գյուղերու ազդեցության տեր եղող մելիքաց և երեսփոխանաց. նոքա ճյուղահամար կընեին և հրամանագիր կուտային, ուստի անթյուրելի ապօրինավորությունք և անտեղությունք հառաջ կուտային 'ի վնաս եկեղեցվո և ազգության։

2. Երկու կողմեր դպրոցներ բանալո և բարեկարգելո երկու ուսումնական քահանա տեսուչ կարգեցինք, Վաղարշակերտի կողման դաշտի գյուղերեից վերա, ուսումնական տեր Հովհաննես քահանայն Վաղարշակերտի, ոռճիկ կարգեցինք հիշյալ քահանային իր տեսչության ներքև գտնված գյուղերեն քանի սոմար ցորյան, իսկ Բագրևանդա դաշտի կողմեն սկսյալ մինչև 'ի Կոգովիտ (այն է՝ Պայազիտու նահանգ) տեր Գեորգ Հովհաննիսյան և քանի մը սոմար ցորյան նմա ոռճիկ 'ի նույն գյուղերեն։

3. Վիճակ մի բանիբուն հոգեեռանդն և հայրենասեր քարոզիչի մը կարոտ լինելով ստիպմամբ առաջարկեցինք վանահոր, որ քարոզիչ մի գտնա յուր կողմանե շարունակ գյուղեր այցելելո և քարոզելո։ Սակայն առ 'ի չգոյե լավագունից և հմտագունից, որոշվեցավ, որ վանից միաբան Առաքել վարդապետ առ ժամանակյաց կերպիվ քարոզչության պաշտոն վարե, մինչև որ մի օրինավոր քարոզիչ ձեռք բերվի «Ե՜ 'ի բարձունս Բյուզանթեոնի բազմելով բանին կենաց սպասավորք հիշեցեք զհեքն Հայաստան, թողեք չափունս Վոսփորի, փութացեք հակունս և 'ի հափունս Եփրատա զի աստ 'ի ջուրսն Եփրատա մկրտեցան հարք

և հավք ձեր և 'ի հաղբյուրե աստի ըմպին ինքյանք և որդիք յուրյանց, եթե մոռասջիք դուք զԵփրատն մոռասցի զձեզ ազգ ձեր»։

4. Ըստ որում քահանայք յուրյանց եկամտի սակավության և անբավականության մասին տրտունջ և բողոք մատուցանեին առ մեզ, զի նախքան հիսուն տարի առաջ ինչ որ կվճարեր ժողովուրդն, նույն հին սահմանադրության վերա կենալով հիրավի քահանայից զրկանք կհասներ, ուստ[ի] համաձայնությամբ ժողովականաց որոշեցինք, որ պսակագրումի և ննջեցյալի տրոց վերա 2 ղուրուշ ավելնա, թեև Բագրևանդա քահանայք աղքատության մեջ վարժական գոլով թափառական մուրացկանության չեն դիմեր, սակայն արդարև նվազ է յուրյանց արդյունք մյուս վիճակաց բաղդատմամբ։

5. Սահմանեցինք, որ վիճակի քահանայացուք և վարժապետացուք անպատճառ վանքի ժառանգավորաց դպրոցի մեջ ուսումն և դաստիարակություն ստանալեն զկնի քահանայության և վարժապետության պաշտոնին վերակոչվին, ուստի նախ պարտավոր կացուցինք զվանահայրն, որ անպատճառ այն օրեն սկսյալ գյուղերեն 14 տարեկանեն վեր բարեկիրթ և ընդունակ պատանիք ժողովելով հանձնե մի ուղղամիտ և բանիբուն վարժապետի, քանզի տեղոյն վարժապետ համբակ լինելով չէր ձեռնահաս ըստ օրենի դաստիարակության պաշտոն կատարել, երկրորդ ժառանգավորաց դպրոցի օգտակարություն բացատրելով ժողովրդյան հորդորեցինք զնոսա, որ եթե առաջնորդ դպրոցի պիտոյից մասին իրենց դիմե, անմիջապես ձեռնադրության չզլանան, ամենեքյան հոժարությամբ ստոտառական պատասխան տվին։

6. Ստորագիր և խոստմնագիր պահանջեցինք 'ի քահանայից և ժողովրդոց գլխավորներեն, որպեսզի եկեղեցյաց պայծառության, դպրոցաց շինության ըստ ամենայնի հոգ տանին և պետք եղած օգնություն չզլանան երբեք։

7. Նույնպես վավերական ստորագրությամբ 'ի քահանայից և 'ի ժողովուրդանաց խոստմնագիր ընդունեցինք պաշլխի արգելման մասին, առաջնորդ ստորագրություն տվավ, որպեսզի պաշլխ տվողաց և առնողաց պսակի հրաման չտա, քահանայք ստորագրեցին, որ նոցա զավակաց պսակ չօրհնեն, ժողովուրդք ստորագրեցին, որ այսուհետև պաշլխ չտան և չառնուն։ Հետ այսոսիկ 'ի տաճարի անդ սուրբ Հովհաննես Մկրտիչ և սուրբ Լուսավորիչ առաջի աստծո վկա կոչելով պատվիրելով պատվիրեցինք, որ յուրյանց խոստման և ուխտին վերա հաստատ մնալով ոչ միայն 'ի աստծո օրհնություն ընդունին, այլ սրբոց այրյաց և աղքատաց օրհնություն և շնորհակալություն ժառանգին։

Վերոհիշյալ յոթն պատվերներ ավարտելեն զկնի մի քառորդի չափ օրհնություն և շնորհակալություն տալով ամենեցուն ժողովն արձակեցինք, ուստի ամենեքյան ուրախությամբ և շնորհակալությամբ գնացին յուրաքանչյուր տեղիս փառավորելով զաստված։

Իբրև ճշմարիտ տեղեկագիր կհայտարարեմ թե Կարնո, Բասենու, Կարսա և մյուս մեր շրջաց վիճակա առաջնորդներեն և վանահայրերեն ավելի Բագրևանդա առաջնորդ Հովհաննես վարդապետ վարչության բոլոր հրամանաց անսալեն զկնի, յուր արտաքին քաղաքավարական ընթացքով զմեզ մեծարանոք ընդունեց, ուստի վանքեն մեկնելուս միջոցին տկար անձամբ 4 ժամու ճանապարհ մեզ ուղեկից եղավ մինչև Յոնճալու գյուղ, գիշեր ընդ մեզ օթելով առավոտ տկարության աղագավ 'ի վանք վերադառնալով Առաքել վարդապետ մեզ ուղեկից հատկացուց մինչև Հայտարանից Պատր աղայի տուն և անտի մինչև 'ի Բաթնոց նահանգ։

Պատր աղա ասացյալ քուրտ 250 տուն հայտարանցի քրտաց գլխավորն է և Հովհաննես վարդապետի քիրվան, այսինքն՝ սանահայրն։ Պատր աղայն գոլով ավազակաց գլուխ, շատ վնասներ հասուցանե եղեր Բագրևանդա գյուղաբնակ հայոց, ուստի Հովհաննես վարդապետ շատ անգամ վրան բողոքելով և կառավարությունից դուռ դատերու մեջ քաշքշելով բավական հոգնեցուցած և սարսափեցուցած է։ Ուստի Պատր աղան խորհած է վարդապետի հետ բարեկամանալ և հրավիրեր է զնա գալ յուր որդվոց թլպատության կնքահայր լինիլ (անթլպատ քրդու տղայի գլուխ վարդապետի ծնկո վրա դնելով կթլպատին տղային զթլպատության և վարդապետն կլինի քիրիվա քրտուն, այն է՝ թլպատահայր), Հովհաննես վարդապետ կառաջարկե, եթե գողապետութենեն հրաժարելով թե 'ի հայտնի և թե 'ի ծածուկ այլևս վնաս չիտար հայոց՝ հանձնառու կլինի, Պատր աղան խոսք կուտա վարդապետի առաջարկություն անթերի ընդունել, ուստի վարդապետն նորա միակ որդուն թլպատահայրություն կզիջանի։

Հովհաննես վարդապետ արդեն մեզ համար առաջի օր յուր բարեկամի տուն լուր տված էր, թե մի գիշեր այցելուն ձեր տուն պիտի օթագայի։ Առավոտ ճաշին զկնի մեր օգնական տեր Եսայի և տեր Ստեփան արք հույժ մտերիմ ծառայություն ըրած են մեզ, թողուցինք Բագրևանդա մնացյալ թերի գործեր կարգադրելու և պետք եղած կոնդակ և հրահանգներ արդեն հանձներ էինք իրենց և բավական ցավակցությամբ բաժանյալք 'ի միմյանց, մեք Առաքել վարդապետով վաղարշակերտցի տեր Հովհաննեսով և չորս հայ ձիավորով հիշյալ Պատր աղայի տուն գնացինք։ Եղբայր մի քառորդի ճանապարհ մեզ դիմավորելու խրկեց, ռամազանի 15 օրին հյուր եղանք քյուրտերուն, քանզի Յոնճալու հայոց գյուղեն մինչև 'ի Բաթնոց 14 ժամու միջոց բնավ հայոց գյուղ չկա։

Պատր աղան արտաքո կարգի հրահանգներ կմատուցաներ մեզ, մեր թև մտնալով տարավ մեզ մետաքսյա բազմոցներու վրա նստեցուց, ձեռք կուրծքին դնելով կանգնեցավ մեր առաջ, հինգ անգամ հրամայեցինք, հազիվ թե նստիլ հանձն առավ նստավ, որովհետև ժամը վեցն էր, ինքն վեցն անգամ մինչև երեկո մեզ հաց բերել աղաչեց, սակայն քաղաքավարության դեմ չմեղանչելու համար կշտությունն պատճառելով, խոսք տվինք իրեն, որ երեկո ժամ 12-քին 'ի միասին ընթրենք, բայց քանիցս յուր ծխամուրճ յուր ձեռոք ամենայն թախանձանոք տվավ մեզ քաշիլ, քանի անգամ որ մեզ ծխամուրճ կբերեր, մինչև քանի անգամ չհրամայեցինք չէր նստեր, ինքն 55 տարվո* ... հսկայաձև անձ մը էր, 3 կին առնելով կանայք ողջ էին, սակայն բոլոր ծնած որդիք մեռեր էին, մի երկու տարվե կեսուն զավակ մի ուներ, որ Հովհաննես վարդապետի սանն էր, կհուսամ և կհավատամ ասեր, թե այս վարդապետի սան և մյուս ասկե ետք ծնած սաներ նորա սրբության աղոթյուք ողջ պիտի մնան, զի որչափ մեծամեծ քուրտեր կար սան ըրի որդիք մեռան, իսկ հիմա վարդապետի սաներ իշալլահ չեն մեռնիր։ Ինքն կխոստովաներ, թե հափշտակողներու, գողերու առաջին է և թե շատ վնասներ տված է թե հայոց և թե քուրտաց աղքատաց, բայց հիմա կըսեր Հովհաննես վարդապետն իմ թև կապեր է, վասնզի միշտ խրատ կուտա, թե այլաց ինչք չհափշտակես և չուտես և ես նորա հրամանով կապված լինելով հիմա ինչ որ ինծի հրամայե, այնպես կընթանամ։

Հինգ գյուղ ունի յուր ձեռաց ներքև, որոց մեջ յուր մշակներ և ծառաներ դրած է, սոյն քրտաց և մյուս այլ քրտաց գյուղերու մեջեր եկեղեցվո տեղեր կան և արդեն խաչվիմներ և գերեզմանաքարեր ոչ թե 'ի մոտս, այլ 'ի հեռաստանե կնշմարվին, այնպիսի սքանչելի և հիանալի վայրեր էին հիշյալ Պատր աղայի գեղեր, որոց նկարագրություն երբեք սիրտս չախորժիր ընել, այնչափ շրջագայաց վայրաց մեջ գրեթե այսպիսի դրախտավայր տեղիք չէի տեսեր, վերջի աշունն էր մեր տեսած միջոց, սակայն սքանչելի տեսարան մի կընծայեր աչաց, զոր պատմել անհնարին է, մանավանդ երբ նա ինքն Պատր աղան կպատմեր, թե հառաջուն այս գյուղեր և տեղեր հայոց ժողովուրդ կբնակեր, այլևս սիրտս 'ի հիս կենդանի չէր մնար, մտախոհ կլինեի 'ի ներքս 'ի

* Բացթողումը հեղինակինն է (Հ. Պ.)։

հիս թե որ անտանելի և դանդաղեմ հարստահարությունք վարած պիտի լինեին մեր ժողովուրդ սույն եղեմական վայրերեն և 'ի խորոց սրտե կհառաչեի....։

Երեկոյան ընթրիքին 'ի միասին բազմեցաք, հինգ գյուղ և քսան հազար ոսկի ունեցող մարդո մի սեղան, երբ արտաքո կարգի պարզության մեջ տեսա, զարմացա, խաշեն և փիլավեն և պանրեն 'ի զատ ուրիշ կերակուր չկար, Պատր աղայն յուր սեղանի վրա կպարծենար, թե տարին մի անգամ այսպես կերակուր հազիվ կեփվի յուր տան մեջ, նամանավանդ 'ի պատիվ մեզ կերակուր յուր ծառաուհյաց ձեռոք չէր եփել տված, այլ յուր պատվավոր եղբոր կին եփեր էր, հացն առանց աղի էր, ինքյանք իրրև 'ի սովո ազատյալ երկու ձեռոք, խաշն, փիլավն, պանիր իրարու խառնելով կուտին, իմ սիրտս ներքուստ խառնել սկսելով իրրև հագեցյալ ետ քաշվեցա։

Առավոտ ուզեց մի նժույգ ընծայել մեզ, սակայն ծանուցինք իրեն, թե պատրիարքեն պատվեր եղած է մեզ ոչ ոքե ընծա չընդունել, ուստի ներս քաշել տալով իրրև Հովհաննես վարդապետ սանին ընծայեցինք, երեք ձիավոր դրավ հետ մեզ ուղեկից մինչև 'ի Բաթնոց, սույն ձիավորաց երեք ...* և նոցա ծանրագին բեռներ Քաջբերունյաց կողմի հայտարանցվոց էլ աղասի Թամոն բռնի հափշտակած էին, Բաթնոց հասնելով կոչեցինք զԹամոն և բազում սպառնալիս տալով Պատր աղայի մարդոց եղներ և գոյք առինք անոնց հանձնեցին[ք] և ուրախությամբ ետ դարձուցինք։

Հիշյալ Թամոն Քաջբերունյաց կողմի հայտարանցվոց չորս հարյուր տան գլխավորի որդին՝ 30 տարվո կրակոտ երիտասարդ մի էր, հորմե բոլոր երկրի քուրտեր և հայեր կսարսափեին, քանիցս կանչելով խրատներ տվի իրեն, որ այսուհետև այլևս մարդոց վնաս չհասցնե, ապա ոչ Մշո քրտաց պես արքունի հրամանավ աքսոր կերթա, ինքն զմեղս լինելով Մշո քրտեր վնասակար կվճռեր, իսկ ինքն և յուրյանց աշիրաթ անմեղ կհրապարակեր, բայց պատասխանեցինք, թե ձեր վնասներ անոնցմե ավելի բազմապատիկ է, զոր մեք և պատրիարք երկրացի լինելով միբստմիոջե գիտեմք, սակայն հայրենակցության պատճառ պատրիարք ձեզ խնայելով չբողոքեր Բարձր Դուռ, բայց ասկե զկնի ձեր վնասակար գիրքերեն կամա չհրաժարիք, անմիջապես ձեզ վերա պատրիարքն պիտի բողոքե և դուք ձեր արժանավոր հատուցումն ստանայք։ Եվ ես ահա եկած եմ ձեր գործած գործեր մանրամասնաբար գրի առնուլ և բարեխնամ տերության իմացնել, սույն խոսքերու վրա սկսավ

* Բացթողումը հեղինակինն է (Հ. Պ.)։

մեղմանալ և աղաչել, որ յուր վրա գանգատ չգրեմք և խոստացավ այսուհետև բնավ մեկի մը վնաս չի տա, կուզեք ասաց ապահովության համար ձեզ խոստմնագիր տամ, բայց մեք ասացինք ձեր բախտի վրա խոսք տալ բավական է։

Բաթնոց Հարք գավառի մի մեծ և հռչակավոր մասն է, արևմտյան կողմանե ունի Մանազկետ և Տիատին, արևելքեն Քաջբերունիք, հարավեն Բզնունիք և Սիփանա լեռներ, հյուսիսեն Վաղարշակերտու դաշտ, Ծաղկե լեռներ և Սուլեյման գմբեթ, երկիր առաջին կարգի բարեբեր, չորս գյուղ հայ բնակիչ կա, 3 գյուղ Երեք Խորան սուրբ Հովհաննու վանից թեմ են, իսկ 1 Սքանչելագործ վանից, խեղճ հայս քրտաց բազմության մեջ իրրև փոքրիկ կղզի մի կենալով հարաժամ կհարստահարվին, չորս անգամ բռնավորաց երեսեն այլ և այլ կողմեր գաղթական գնացած են, սակայն երկրի բերրիություն և յուրյանց նախնյաց գերեզմանաց և հիշատակաց համար դարձեր դարձյալ շինություն հաստատեր են։

Կրոնական մխիթարութենե խսպառ զուրկ մնալով վայրենացեր են, չորս գյուղ մի ծերունի քահանա ունին, 6 ամիսն անգամ ժամասացություն չեն լսեր, հիշյալ ծերունի տեր Հովհաննես Բաթնոց գյուղ կբնակի և ինչ կրոնքի ծառայելն ինքն ևս չգիտեր, խնուսցի մի երիտասարդ բողոքական յուր անուն ասպնջականելով յուր որդվույն և քանի անձանց բողոքականության պատճառ եղած էր, բողոքական գյուղեն արտաքսելեն զկնի, քահանայն Ուչքիլիսայի վանք աքսորի խրկեցինք։ Պապե անունով 65 տարվո անձ մի յուր օրինավոր կին թողելով խաբեությամբ կույս աղջիկ մը նորեն կնության բերած էր, սույն մարդ քուրտ գայմազամի ձեռոք հիշյալ քահանայի հետ խրկեցինք 'ի սուրբ Հովհաննու վանք, սակայն Առաքել վարդապետի թելադրությամբ Բաթնոցեն 4 ժամ ճանապարհեն փախուստ տվավ Սպետկցի ապստամբ քրտերու մեջ, գողմա կամ այս մասին սաստիկ հանդիմանելով երաշխավորություն ընդունեցինք, զի երբ Պապին յուր տուն վերադառնա, անմիջապես ձերբակալելով խրկե որոշված տեղը։

Երեք օր Բաթնոցի գյուղեր մնալով հոգեպես մխիթարեցինք զիրենք, մեկ-երկու քահանա խնդրեցին մեզմե, սակայն քահանա չգտանք որ խրկեինք, ընթերցող և տիրացու չունին, որ ձեռնադրեինք, Հովհաննես վարդապետին նամակ մի գրեցինք, որ անմիջապես մեկ-երկու քահանա գտնա և խրկե 'ի Բաթնոց։

Բավական հնություններ կային հիշյալ գավառին մեջ, բայց գործիք չունեինք ընդօրինակելու, տասն կանգնավ բարձրությամբ

խաչվեմեր կան, Բելո գերեզման Բաթնոց գյուղեն կես ժամ հեռու բարձր սարավանդակի վրա է և ուրիշ այլ հսկայից գերեզմանաց մեջ։

Մեկ քանի պատճառի համար մեր սույն տեղեկագրությունք մեր բուն բաղձանաց համեմատ չհորինվեցավ, նախ որ մեզի հետ օրինավոր գրագիր և քարտուղար չգտնվելու աղագավ, շատ հարկավոր բաներ զանց կընեինք գրելո, զի դատեր դատաստաններ տեսնալ, քարող և խրատ տալ, քաղաքական և կրոնական գործեր կարգադրել մինակ իմ անձիս վրա ծանրանալեն զկնի, բոլոր նամակագրություն, պայմանագրություն մինչև իսկ գուե գրել իմ պաշտոնիս վրա խիստ ծանրացեր էին, ուստի սուրբ Հովհաննու վանքեն մինչև 'ի Բաթնոց և աստի մինչև 'ի Բզնունյաց գավառ 20 ավուր միջոց աչքս իսպառ անկարող եղավ գրի վրա նայելով և ուրիշ մեկ օրինավոր գրագիր ևս չունեի, որ բաղձանս համեմատ ամեն իրաց պարագայք տեղ 'ի տեղ գրել տայի, վարչութենեն քանիցս գրագիր խնդրեցի և գոնե գրագրի մի ամսական հատկացնել, որպեսզի օրինավոր գրագիր մի գտնալով հետներնիս շրջեցուցանեինք, սակայն տակավին մեր խնդիր լսելի չեղավ, իմ բաղձանքս բոլոր վանորեից հողային կալվածոց խարթան[93] հանել տալ, որ ներկայի և ապագայի համար ամենամեծ օգուտներ ուներ, իմ բաղձանքս էր բոլոր գյուղեր անձամբ անցանիլ և յուրաքանչյուր գավառի մեջ գոնե երեք ամիս մնալով կրոնական և սահմանադրական բոլոր գործեր անթերի տնօրինել, իմ բաղձանքս որ վատնիչ և անօգուտ վանահայրեր պաշտոնե ձգել և տեղերնին հավատարիմներ կարգել, վասնզի բարոյական խրատներ որչափ ազդու լինին, շուտով կը մոռացվին, սակայն գործնական կարգադրություն խոր տպավորելով շատերու սրտի մեջ, երկար միջոց զանոնք ուղղության մեջ կը պահե։

Վերջապես, եթե ազգային վարչություն ինձմե ազգօգուտ գործեր կպահանջե, անմիջապես մի բանիբուն և հայրենասեր վարդապետ ինձ օգնական խրկե և մի քաջահմուտ գրագիր ինձ քարտուղար հատկացնե, հայնժամ կրնամ վստահությամբ ասել, թե այնպիսի բարոյական և գործնական կարգադրությունք կրնամք հառաջ բերել ազգի մեջ, որ վարչություն տասը տարի նամակ գրելով չկարողանա կարգադրել, զի այլ է աչոք տեսնալ և անմիջապես կարգադրել և այլ է ընդ այլոց լսելով նամակներ գրել։

Վարչություն 'ի հառաջնորդաց ժողովրդյան վիճակացույց ազգահամար խնդրած էր կարի ստիպմամբ, սակայն առաջնորդք կամ այն է՝ որ բնավ հոժարություն չունին, կամ այն է՝ բավականություն չունին այդ հրաման անթերի 'ի գլուխ հանել և կամ վերի վերո զանցառակի

բան մը գրելով կխրկեն ազգային վարչություն, սակայն եթե վարչության կողմանե հատկացյալ մարդիկ գրելո լինին, ան շուտ նորա բաղձանաց համեմատ կհորինին ամեն բան։ Մնամ միշտ հայրենյաց անձնվեր սպասավոր

1873 ապրիլ 1 Երեմիա եպիսկոպոս այցելու

'ի Վանս Վարագ Հայաստանյաց

Թիվ 4

Ամենապատիվ սրբազան Հայրիկ և արժանընտիր անդամք վանական խորհրդո

Թերևս Կարսա երկրի վրա տված երկար տեղեկագիր կարդացիք և հաջորդաբար օր մի ևս Բասենու և Վաղարշակերտի վրա պատմածներ պիտի լսեք։

Խոսելո և գործելո ազատություն Պոլսո մեջ կա, սակայն խոսողներ բազումք են, իսկ գործողք սակավք, բյուրավորք կրկնաբանին դպրոց, ուսումն և դաստիարակություն պետք է մեր ազգին, սակայն 1 հոգի չկա, որ ելնե գավառաց մեջ մարդ մի դաստիարակե և ասե. ահա այսպես պիտի հայեր դաստիարակվին. պատմություն և օրվան փորձեր ցույց կուտան մեզ, թե մեծամեծ և հառաջադեմ ազգաց մեջ մին կխոսի, բյուրավորք կը գործեն, իսկ մեր մեջ բյուրավորք կխոսին մեկ չի գործեր։

Շատեր աղաղակեցին, թե հայն հայրենյաց մեջ հայրենի հատուկ դաստիարակության դաստիարակելո է, սակայն այս արդարացի աղաղակ և ոչ մեկի սրտի մեջ արձագանք գտավ։ Ամեն ասեմ ձեզ 'ի Գաղղիա, 'ի Գերմանիա, 'ի Ամերիգա և 'ի Բրիտանիա դաստիարակյալ մանկունք հայրենի գավառաց մեջ չպիտի հանձնառու լինին վարժապետության պաշտոն վարել, զի գավառացիք թե ամսականի կողմանե, թե դյուրակեցության կողմանե չպիտի կարեն գոհ ընել այց մեծ աշխարհաց մեծ բարձրագույն ուսումն առած մարդիկ և ինքյանք ևս չպիտի ժուժկալին այն կռեհիկ մարդկանց մեջ իբրև ընկերական մարդ կենցաղավարիլ։

Ի Պոլիս ուսումն առած մարդիկ, մինչդեռ պատիվ և շահ ունին Պոլսո մեջ, երբեք չպիտի զիջանին գավառաց մեջ դաստիարակության պաշտոն վարել, ով պիտի սովորեցնե դոցա անձնվիրություն և անձնազոհություն թերակիրթներ, շատ և պատիվ չունեցողներ պիտի հոժարին

գավառներ երթալ, սակայն այդ տեսակ մարդիկներեն ինչ պիտի հուսացվի և ոչինչ, լավ է ազգային մանկունք ռամկական նախապաշարման մեջ պահել, քան թե նոցա հոռի և վնասակար դաստիարակություն տալով ազգի ապագայն վտանգի մատնիլ։ Թարգմանիչք Հայաստանեն խրկվեցան և 'ի Հայաստան վերադառնալով այլևս Հայաստանեն չհեռացան, սակայն այժմ Հայաստանեն խրկվածներ 'ի Հայաստան չեն վերադառնար, եթե դառնան վաղվաղակի կհեռանան, զի մեր աղքատ երկրի մանկունք երբ հացիվ լիանան, Հայրենիք կմոռանան և 'ի նմանե փութով կհեռանան, եթե հայրենյաց ծոցի մեջ կրթվին յուրյանց աղքատացյալ մորն Հայաստանի և յուրյանց հեռացյալ հայրենյաց խնամք կտանին իբրև որդի հարազատ։

'Ի Վասպուրական, 'ի Կարին, 'ի Խարբերդ, 'ի Սեբաստիա, 'ի Տարոն թե քաղաքաց մեջ և թե վանորեից մեջ ազգային ուսումնարաններ բանալը է, ուր են հայոց բազմություն։ Ամեն երևելի ազգեր յուրյանց ժողովուրդ հայրենյաց ծոցի մեջ կրթելը փույթ ունեցեր է և հաջողություն գտնալեն 'ի զատ, հայրենիք բարոյապես և նյութապես փրկեր է, ուստի փորձյալն կրկին փորձել անմտություն է։

Վանորեից մեջ ասացինք, սակայն նկատելը է թե վանորայք այժմ մեծի հարստահարության ենթակա եղած են, գուցե 'ի վերջո քար քարի վրա չմնալով քայքայվի, տերություն 'ի վաղուց անտի ոչխարի և տասանորդական տուրք շնորհած էր վանորեից, սակայն քանի տարի և հետե անիրավ վարձակալք բարեխնամ տերության կամաց հակառակ վանքերեն կպահանջին կառնին, ոչ թե հօգուտ տերության գանձուն, այլ հօգուտ յուրյանց։ Անցյալ տարի լսեցինք թե կառավարությունից գործակալաց հրահանգին մեջ հատուկ որոշակի գրած էր, թե վանքերու ոչխարք թվին և հաշվետումարին մեջ արձանագրվին, բայց դրամ չառնին, այս հրահանգին համաձայն Երզնկայի առաջնորդ Գրիգորիս վարդապետ, որ այժմ 'ի Պոլիս է, հարցեք հատուկ անորմե, Հասան Գալայի վանահայր Տիմոթեոս վարդապետ, Ուշքիլիսայի առաջնորդ Հովհաննես վարդապետ ոչխարի տուրք տված չէին, սակայն Վասպուրականի բոլոր վանքերեն առած էին ևս կառնին, ևս քանի տեղեր հարց[ուց]ի, որ տաճկաց կեքիներ[94] չեն առնուր, ոչխարի տուրք նաև տասանորդական տուրքն ևս սակայն մեր վանքերեն կառնվի, այս մասին քանից կառավարչաց խոսեցա, սակայն նոքա պատեպատ խոսքերով ուղիղն չպատասխանեցին։

Կցավիմ, որ պատրիարքն մեզ արտոնություն տված չէ, գոնե կառավարության առաջ մեր եկեղեցյաց և վանորեից իրավունք պաշտ-

պանեինք ըստ իրավանց տերությենն, մի՞թե միայն այս տուրքերով վանքեր կհարստահարվին և ավերմանց ենթակա կլինին, ո՛չ։ Շատ վանքերու սահմանաց դրացի այլազգիք քուրտ և տաճիկք, զանազան միջոցներով վանորեից սահմաններ և հողեր բռնի կամ խորամանկությամբ կհափշտակեն և յուրացուցանեն, ինչպես այժմ կտեսնվի Բզնունյաց գավառի մեջ Պկուց վանքի ամբողջ հողն արծկեցի մի տաճիկ յուրացուցած է, Սքանչելագործա վանահայր, Արծկե ժողովուրդ քանիցս այս հափշտակության մասին բողոքած են, տեղական կառավարություն ձևաբանության տակ ձգելով թույլատրել է, որ տաճիկ վանքի հողին տիրապետեր է։

Արճեշո Արծվագիր վանքի քով քրտեր տուն շինելով հողերու մեծ մասին տիրեր են, վանահայր տեր Սողոմոնն քանիցս բողոքեր է լսելի չէ եղեր, մեք իսկ հիշյալ երկու վանքի հողի մասին Վանա Բդեշխին բողոքեցինք և հրամանագիր առինք հողեր վանքին դարձնելու, սակայն գավառաց գայմագամներ գործ դրեցին, ձևաբանության դարձվածքի մեջ դնելով, վերջնական գործադրություն անտես արարին։ Կտուց անապատին, Ջարհան սուրբ նշանին և այլ շատ վանքերու հողեր հափշտակեր են և հետզհետե հափշտակելու վրա էին, այսպիսի հափշտակությունից շատ անգամ տեղական կառավարությունք աչք կգոցեն և եթե ոտք խիստ պնդելը և իրավունք պահանջելը միջամուխ լինիս, հրովարտակ և կալվածագիր կխնդրեն, հայտնի է, թե հրովարտակ միայն քանի գլխավոր վանքեր ունին, իսկ փոքր մասնավոր վանքեր յուրյանց հրովարտակ և կալվածագիր կորսնցուցած են, զի այնչափ գողության և ավարառության ենթակա եղած են Հայաստանի բոլոր վանքեր, որոց ոչ հրովարտակ մնացեր է և ոչ կալվածագիր, եթե հրովարտակ խնդրեն չգտնան, չգիտեմ թե քանի տարիեն զկնի, ինչ կերպիվ պիտի վարվին վանորեից հետ, մտածեցեք և մակաբերեցեք, ահա այս մասին հարմար էր, որ բողոքելով բողոքեցի և մի խարթա գծող գրագիր խնդրեցի վարչությենեն, բայց վարչություն ամենահարկավոր խնդիր անտես արաց քանի չնչին ղուրուշի համար, սակայն հետո 100.000 ղուրուշեն ավելի տուժելեն զկնի պիտի մեր առաջարկության հետևի, սակայն անօգուտ տեղ դարձյալ կրկնապատիկ պիտի դրամ վատնե և մարդ խրկե։

Բացահայտ կերպիվ խոսելով մեծ ջանք և նեղամտություն կա վանորեից հողեր հափշտակելը, քանզի մեր շրջագայյալ գավառաց մեջ, չկա վանք մի, որո հողը ամբողջ մնացեր է, ամեն մեկեն թե շատ և թե քիչ կրճատվեր է, արդեն մտադիր [եմ] վանորեից վրա մի ընդարձակ

ընդհանուր տեղեկություն հաղորդել վանորեից խորհրդին, որոց մեջ պիտի տեսնա ազգ վանքերու քայքայման պատճառներ։

Իհարկե ազգայինք՝ թե կղերականք և թե ժողովրդականք կփափագին 'ի միասին, որ վանորեից նյութական վիճակ ըստ արժանվույն ապահովության ներքև առնվի, որով բարոյական վիճակ առավել ևս ծաղկի և բարգավաճի։

Եթե ազգային վարչություն իմ առաջարկություն իբրև հայոց ազգի և Հայաստանի սրտի խորերեն բղխած առաջարկություն կընդունի, թող փութա օր առաջ մի քաջ խարթա գծող հայրենասեր ուսումնական մի խրկել, ապա եթե կփափագի վանորեից խանգարման, բնավ թող շաշխատի, ահա ինքնըստինքյան հիմնահատակ կլինի և կանհետանա, ինչպես շատ երևելի և մասնավոր վանքերու ավերակներ և անուններ մնացեր են, զորոց անուվանս հառաջելով և ողբալով կկարդամք։

Վանորեից խորհուրդ վանքերու համար հատուկ ծրագիր խրկած է գործադրելո, շատ տեղեր առանց գործադրելո պիտի մնան, եթե վարչության այցելուաց ոտք չհանդիպի։ Այս մասին դարձյալ պիտի տեղեկություն հաղորդեմք վարչության։ Ողջ լերուք։

1873 մայիս 6 Երեմիա եպիսկոպոս
Ի Վարագ

Ամենապատիվ ս. Հայրիկ և արդարախոհ անդամք կրկին ժողովոց.

Ապրիլ 30, թիվ 722, մի պաշտոնական գրություն ընդունեցի 'ի Վան խառն ժողովո կողմանե ուղղյալ, որ 'ի պաշտոնե կծանուցաներ մեզ թե այցելուաց դավառաց մեջ դադարեցուցանելո մտոք մայիս մեկեն ամսական տալ կվերջացներ։

Վարչական խառն ժողով ձեռնահաս է յուրմե կարգյալ պաշտոնավարք 'ի պաշտամանե ազգին դադարեցուցանել և ամսական թոշակն վերջ տալ, սակայն այցելություն պաշտոնի թե կարևորություն և թե փափկություն ըստինքյան կպահանջեր, որ վարչություն գոնե հեռատեսություն և խորագիտության խորհրդով 2 ամիս առաջ զիջաներ իբրև յուր վարչական մեկ ճյուղին հետ այցելուաց հետ խորհրդակցել և ապա օրինավոր որոշումն տալ, քանզի այդպիսի հանկարծական դադարումն թե վարչության ազդեցություն և պատիվ, թե այցելուաց ազգայնոց և թե օտարազգաց առաջ կնվաստացնե և զանազան անհաճո տարաձայնության տեղի կուտա, որում երբեք չէին սպասեր անձնվեր այցելուք։

Թերևս ստուգապես ազգային գանձուն նեղ վիճակ չէր ներեր այն

փոքրիկ գումար վճարել այցելուաց, կրնար առաջարկել նոցա, որ ձրի յուրյանց պաշտոն շարունակել, եթե արդարև այցելության պաշտոն կարևորություն ունի հառաջի վարչության, արդեն ես ինքնին քանիցս խնդրեցի սուրբ պատրիարքեն, որ եթե ամսականով մեզ մի դրագիր և օգնական չի պիտոր հատկացնե և խրկե, թող բարեհաճի այն աննշան ամսական կտրել և մեր պաշտոն ձրի հրատարակել, որ ավելի ազդեցություն և պատիվ կբերեր մեր պաշտոնին, քանզի բնավ չէր հավատար, թե այնպիսի փոքրիկ ամսականով այսպիսի ծանր և փափուկ դժվարին պաշտոն եպիսկոպոս մի հանձնառու կլինի կատարել։

Այցելության անուն սոսկ մեծ սարսափ ազդած էր այս կողմի հայ ազգի և օտարազգի բնակչաց վրա, պաշտոնավորք իսկ զգուշանային անձանց և գործոց յուրյանց և ստեպ կհարցանեին, թե այս գավառեն երբ ուրիշ գավառ կերթա[ս], ազգային և օտարազգի մեղապարտ և կասկածելի անձինք արդեն հայտնապես դժգոհ էին քննչության սոսկ անունեն, այժմ այսպիսյանց բաղձանք կպսակվի, ցնծության աղաղակներ կարձակեն, մինչդեռ զրկյալք և հարստահարյալք կխռովին և կթախծին։

Այո՛ պետք է, որ այս աշխարհի մարդիկ հավաստի լինին, թե վարչության կողմանե կան կարգյալ մարդիկ, որք ամեն տեսակ դիպաց մասին ստույգ և հավատարիմ տեղեկություն կհաղորդեն վարչության, պետք է որ այս աշխարհաց վնասակար մարդիկ ակնածությամբ զգուշանան, թե վարչության կողմանե 'ի մոտո դիտող կա յուրյանց գաղտնի և հայտնի գործոց վերա։

Վարչություն զմեզ պաշտոնավարութենե դադարեցուցանելով թերևս մեծ բարերարություն ըրած լինի մեզ անձնական տկարութենե ազատելով, միանգամայն մեր անձն վայրենի և լեռնակուտակ ճանապարհաց դժնդակութենե, արևակեզ և ցրտասառույց հակառակ ազդեցութենեն, փարախաց աղտեղի և հոտած կացութենեն, լվերու, ոջիլներու, ճանճերու կոտամահ տառապանքներեն, վայրագ աղաղակաց սարսափեն և ահեն, մանավանդ սրտամաշ և աղիողորմ տեսարաններեն, զրկվելոց և հարստահարելոց դառնակսկիծ հեծություններեն։ Ապաքեն վասն այսորիկ անձնական փորձովս և խղճովս կվկայեմ առաջի աստծո և մարդկան, թե բնավին աննպաստ և վնասակար էր ազգի թե ներկային և թե ապագային այսպիսի աճապարանոք այցելությանց պաշտոն դադարեցուցանել գավառաց միջեն, քանզի եթե կային այցելուաց մեջեն անբավական և անհարմար մարդիկ, վարչություն ձեռնահաս էր առավել հարմար և զորավոր մարդիկ 'ի նույն պաշտոն կարգել և առա-

քիլ, բայց երբ խսպառ դադարեցնելու փորձ կփորձեմ, ոչ միայն մեր միամյա աշխատությունք ապարդյուն կհանեմ, այլ կամավ կթույլատրեմ, որ ամեն տեսակ անկարգությունք հայրենյաց մեջ առաջինեն հարյուրապատիկ ավելի 'ի գործ դրվին մոլի և անագորույն մարդկանց ձեռոք։

Ամերիգա Պորտ[95] ընկերություն բավական չհամարելով բողոքականություն հաստատուն պահել և տարածել նոր աշխարհի մեջ, այլ 40 տարի հետե անհուն գանձերով, գրքերով և մեծածախ թոշակներով հրապուրիչ քարոզիչներ կխրկե հին աշխարհի ամեն կողմեր և հատկապես արևելքի մեջ հայեր որսալու մասին անբավ գումարներ կվատնե։

Հավատո տարածման ընկերություն[96] բավական չհամարելով պապականություն հաստատ պահել պապական ժողովրդոց մեջ դարերով առաջ սկսյալ անբավ գանձերով և մեծ թոշակներով հին և նոր աշխարհաց ամեն կողմեր որսորդներ կխրկե Պետրոսի ուռկանավ և 400 տարի հետե հայեր ամբողջ որսալու մասին մեծագումար դրամներ կվատնե մինչև ցայսօր ժամանակի։

Իսկ հայոց այժմյան վարչություն ասկե մի տարի առաջ խիստ աննշան թոշակով 3 մարդիկ առաքելական կամ այցելության ազատ պաշտոնին, ո՛չ թե այլոց նման օտար աշխարհաց և ազգաց մեջ, այլ յուր անտերունչ և անայցելու ժողովրդյան մեջ կխրկե ավետարանիչ, մխիթարիչ և քաջալերիչ և ոչխարազգեստ գայլերեն զգուշացնել, բայց տակավին տարին չլրացուցած կաճապարե այցելուաց պաշտոն դադարեցնել և ասպարեզ դարձյալ ըստ առաջնույն բողոքականաց և պապականաց թող տալով։

Խան ժողովի պարտքն էր մասնավորապես մեր տեղեկագրությունք ուշի-ուշով աչքե անցանել և բոլոր կետեր խստագույնս շոշափել և ըստ այնմ նոր ուժգնություն տալ այցելուաց, գործել հօգուտ եկեղեցվո և հայրենյաց, որուն ահնդիտ կսպասեինք, կարդացեք մեր 'ի վերո Կարսա, Բասենու, Վաղարշակերտի տեղեկագրությունք, տեսեք Կարսա վիճակ այցելու և քարոզիչ չտեսնալով ուղիղ խաչ հանել երեսն անգամ մոռացեր է, Բասեն քարոզիչ և այցելու չունենալով ժողովրդյան կես մասն բողոքականության խմորով խմորյալ է, Վաղարշակերտի առաջնորդ յուր երկու վարդապետոք եկեղեցի չմտնալով և քարոզ չտալով, զի ինքյանք իսկ բողոքականության հակամետելով վիճակի հայեր անկրոնության խորխորատն իջուցած են և այլն։

Չկարծվի բնավ, թե առաջնորդ և վանահայրք վարչության տպյալ և անտիպ հրահանգներ պիտի գործադրվին վիճակաց մեջ, զի մեք

լիազոր իշխանությամբ հազիվ թե քանի տեղեր գործադրեցինք և փորձով նկատեցինք, թե առաջնորդք և վանահայրք ոչ թե կդժկամակին հրահանգներ գործադրելու, այլ ներքուստ բոլոր զորությամբ կհակառակին, որ երբեք չգործադրվի։ Ուստի ես ոչ միայն կառաջարկեմ, այլ կպնդեմ թե վարչության կողմանե այցելության պաշտոն ավելի ազդու կերպիվ շարունակել հարկ է Հայաստանի գավառաց մեջ, զի այժմ էջմիածնա և Երուսաղեմա նվիրակներ չկան եկեղեցականության ժողովրդյան և դպրոցաց վերա, այժմ շատ ազգերի թոշակավոր որսորդք կշրջին մեր գավառներ, ուստի մեք ևս առավել ձեռահաս մարդիկ այցելության խրկելու եմք գավառներ, եթե մեծ վնաս և կոբուստ չեմք ուզեր հայության և մեր քրիստոնեության։

Մենք արդեն 'ի սեր հայրենյաց մինչդեռ մի աննշան թոշակով անձնուրացաբար մահ հանձն առած հարստահարյալ աշխարհաց մեջ կշրջագայեինք երկու օգնականով, երկու սպասավորով և երկու ձիով, տիվ և գիշեր հանգիստ չգտնալով և կսպասեինք, թե վարչություն զթալով, օր մի վարչություն մեր տառապանք ճանաչելով մեր թոշակ կհավելու և մեզ մի օգնական գրագիր կխրկե, վերջապես խառնաժողով իբր 'ի պատասխանի մեր ակնկալության վերոհիշյալ դադարման նամակ կխրկե՝ առանց զոհունակություն մի ցույց տալու։

Արդ եթե անձնական տկարություն ինձ ներեր ապաքեն վարչությունեն ակնկալություն չունենալով պիտի բոլոր Հայաստանի վիճակներ ձրի իմ պաշտոնս կատարեի, սակայն նկատեցի, թե եթե ձրի ևս շարունակեմ, դարձյալ շնորհակալություն չպիտոր լսեմ, ուստի առ այժմ լռեցի՝ սպասելով, գուցե վարչություն առավել արժանավորներ կխրկե հայրենյաց այցելություն և գուցե նոցա փափկության և արժանավորության 1000—2000 ղուրուշ ևս թոշակ կորոշե։

Մեք 'ի սրտե կփափագիմք և ուրախ կլինիմք լեզվագետ, մեծիմաստ, քաջաքարող, հայրենի փառաց նախանձախնդիր եկեղեցականներ տեսնալ Հայաստանի գավառաց մեջ, մեք կխոստանամք իբրև երկրորդական և երրորդական օգնական լինիլ այնպիսի արժանավոր կղերաց, ոչ միայն բարձրաստիճան եպիսկոպոսաց, այլև վարդապետաց, միայն թե հանձնառու լինին և բարեհաճին Պոլսեն այս կողմեր գալ, թերևս ես ինձի բաժին ընկած ամսական ևս այնպիսի հայրենասիրաց նվիրեմ աննախանձաբար։

Մնամ միշտ անձնվեր հայրենյացս։ Նվաստ Երեմիա եպիսկոպոս
1873 հուլիս 10։
'Ի Վարագ

Ամենապատիվ սրբազան Հայրիկ

Մեր պաշտոնի դադարման պաշտոնական գրությունն ընդունելով խառնաժողովին պատասխան գրած եմ, հանդերձ կարևոր դիտողությամբ, կաղաչեմ, որ թույլ տաք հրամայեք ժողովի ներկայությամբ կարդացնել, որպեսզի լուսավորի դուցա միտք մանավանդ մեր կրոնական եղբարց, որք գողցես թե կամովին հայոց եկեղեցին և կրոն բառնալ կուզեն Հայաստան աշխարհեն։

Մայիս 10 ամսաթիվ գրությունիդ ստանալով կպատասխանեմ։ Տնտեսական խորհուրդ 5000 ղուրուշի հաշիվ մի ներկայացնելով մեր ամսականներ առած կհամարի։ Մեր ընդհանուրի ճիշտ հաշիվ 5000 ղուրուշ չէ, այլ հետևյալն է։

1000 ղուրուշ	Կանխիկ կեդրոնական սնդուկեն հուլիս և օգոստոս ամսականաց փոխարեն։
1000 ղուրուշ	Կարսա վիճակի 1873 ամի մուխարաչից Ռշտունի եպիսկոպոսեն։
1500 ղուրուշ	Կարնո վիճակի 1872 ամի մուխարայից Հարություն եպիսկոպոսեն։
0500 —»—	Ուշքիլիսայու վանքի 1873 ամի մուխարայից Հովհաննես վարդապետեն։
0420 —»—	Բաբերդու վիճակի 1872 ամի մուխարայից Գրիգորիս վարդապետեն։
0500 —»—	Հասան Գալայի վանքի 1873 ամի մուխարաչից Տիմոթեոս վարդապետեն։

———————

4920

Ահա վերոգրյալ գումարեն հայտնի կլինի, թե 5000-են 80 ղուրուշ պակաս կմնա, թող զայս, հապա մեր մյուս ծախքեր ո՞ւր կմնան, արդեն վեցն ամսո ծախսուց ցուցակ խրկած եմ Ձեր սրբազանության, կխնդրեմ, որ ներկայացնեք տնտեսական խորհուրդին, որպեսզի հավաստի լինին, թե այդ գումար հաղիվ թե մեկ ճանապարհածախս կպատասխանե, որոց գումարն է հետևյալն։

11530 ղուրուշ տասն և մեկ հազար հինգ հարյուր երեսուն ղուրուշ։
1602 ղուրուշ 1873 հունվար 1-են մինչև ապրիլ 3 եղած ծախքերն։
13132 Սույն գումարեն 4920 ղուրուշ հանելով կմնա մեր պահանջ վարչությենեն 8212 ղուրուշ, զոր պարտի հատուցանել զմեզ ազգասիրաբար։

1873 Հունվար 1-են մինչև ապրիլի վերջ ծախուց մանրահաշիվն է։

			հունվար
25	ղուրուշ	սպասավոր Գրիգորի ոտնաման։	4
15	—»—	երկու փակետ նամակ պատրիարքարան վարդապետ եղբոր ձեռամբ։	10
13	—»—	6 դրամաց փակետ մի դարձյալ խաչատուրի ձեռամբ։	18
53	—»—	Սպասավոր Գրիգորի մեջքի շալ մի։	26
60	—»—	Հարդ, գարի, առաջնորդարանի մեջ։	24
166			
			փետրվար
30	—»—	Գարի ձիանց համար Վանա առաջնորդարանի մեջ։	5
25	—»—	Գրիգորի ժամացույց շինելու։	20
			մարտ
12	—»—	Հեռագիր 'ի Կարս տեր Ստեփանի։	12
			ապրիլի
35	—»—	Երկու փակետ փոշտայի նամակ* ձեռամբ։	3
4	—»—	Հիշեցյալ գումար։	4 —»—
16	—»—	Կտուց անապատ երթալու։	11 —»—
20	—»—	Էիմ —»— —»—	13 —»—
36	ղուրուշ	Ձիանց նալվածք։	18 ապրիլի
580	—»—	Երեք շալ զգեստի համար։	
356	—»—	Երեք կարողչեք/ըստ որում զգեստներս	20 —»—
130	—»—	Ձիու նոր համետ (ճանապարհի մեջ մաշեցան և դարձյալ ճանապարհի ելնելու համար (պատրաստեցի)։	20 —»—
150	—»—	սպասավոր Գրիգորին 6 ձեռք ճերմակեղեն։	23 —»—
1560			

* Անընթեռնելի հապավում (Հ. Գ.)։

12	—»—	Հեռագիր մեր օգնական Եսային՝ խնուսեն գալու համար, որպեսզի ճանապարհ ելիմք։	1 մայիս
30	—»—	Մեր օգնական տեր Ստեփանին տվի, որ եկած օր զմեզ ի Կարս տանելու Ռշտունիի կողոպուտին համար։	6 մայիս
1602		Բաց 'ի այս գումարեն մեր օգնականաց 4 ամսական։	
2000		Զորս հարյուր ղուրուշեն կընե 1600 ղուրուշ,	
3602		ամսական ևս սպասավոր Գրիգորին կընե 400 ղուրուշ,	

որո գումար ընդ վերոյն։ Արդ թե մեր օգնականներ և թե մեր սպասավոր ամսականներ ինձմե անպատճառ կպահանջեն, եթե կեդրոնական սնդուկ պիտի զրկե մեր օգնականներ և սպասավոր, ըսել է, թե զմեզ տուգանաց պիտի դատապարտե, որուն բնավ չեմք սպասեր վարչութենեն։

Խորհուրդ կհարցնեք, թե արդյոք մեր Վասպուրականի մեջ, այն է՝ Աղբակու գավառ կամ Աղթամարա գավառներ այցելություն առնիլ ազգին այժմ հարկավոր է, թե ուրիշ հեռավոր գավառներ։ Արդեն քանիցս գրած էի, թե այս մերձավոր գավառներ այցելությանս խիստ կարոտություն ունին, որովհետև հայոց հարստահարության կեդրոնեն, սակայն դեռ մեր պատասխան չընդունած կհեռագրեք, որ անմիջապես 'ի Բաղեշ քաղաք երթամք և կխոստանաք պաշտոնական գրեր վասն մեզ հասցունել։

Նախ Հայրիկ մեր պաշտոնեն այսպես արագ և անպատիվ կերպիվ դադարման մասին վերջին ծայր վշտանալով՝ երբեք այլևս չեմ ուզեր, ազգի որևիցե պաշտոն վարել, երկրորդ վշտացած եմ, վարչություն զմեզ մի գրագիրի արժեք ևս չտալով միայն ամիս 500 ղուրուշ տալով մյուս ծախքեր ճանաչելու կդժկամակի, ուստի լավ է այսուհետև խսպառ լռիլ առանձնանալ և վարչության պաշտոնականութենեն վանորեից սենյակներ։

Եթե վարչություն զմեր պաշտոն անպատիվ կերպիվ չվերջացներ, արդեն բոլոր պատրաստություն տեսնալով անմիջապես ճանապարհ ելնելու վրա էի և եթե մի օր ևս նամակ ձեռքս չհասներ, Աղթամարա վիճակ գնացեր էի, սակայն երբ հիվանդության մեջ այն նամակ ստացա, հիվանդություն ավելի ծանրացավ, և ես մտախոհ եղա, թե երբեք պատրիարքարանի բախտ մեր բախտին հետ չի պիտոր հաշտվի, քանզի 'ի Բաղեշ, 'ի Մուշ, 'ի Խարբերդ, 'ի Սեբաստիա սաստիկ հարվածներ տա-

լով կյանքս և առողջությունս վտանգի մեջ ձգեց և ահա 20 օր է, որ դարձյալ հիվանդության մեջ կտառապիմ, եթե կներեք ինձ Վարագ մնալ, գուցե փոքր-ինչ ժամանակ հիվանդությունս դարմանեմ, իսկ եթե չեք հաճեր Ձեր վանքին մեջ մնալ, խույս կուտամ ուրիշ կողմեր, ես Կարմրորա վանք խնդրեցի, չկամեցաք, Բարդուղիմեոսի վանք խընդրեցի, բնավ չպատասխանեցիք։ Ես արդեն Բաղեշ 7 տարի կենալով բնավ փափագ չունիմ այն աշխարհ և այն աշխարհի մարդիկ տեսնալ և մինչև անգամ իբրև ճանապարհորդ չեմ ուզեր այն քաղաքեն անցնիլ, պի դոցա ժլատություն, կոշտություն և անքաղաքավարություն դիտեմ։ Ես իմ բաժին աշխատությունն հոն աշխատած եմ, ուրիշ մեկ խրկեցեք թող երթա, մանավանդ տեղվույդ պոլ-պոլ ջարդողներ թող երթան և համոզին։

Եվ ահա աչոք կըտեսնամ, որ Գրիգորիս վարդապետն[97] 2000 ղուրուշ ամսական կստանա յուր ծախուց համար, թող զայն, որ դեռ եպիսկոպոս չեղած ընծայացուներեն դրամ կառնե և Աղթամարա եպիսկոպոսին ձեռնադրել կուտա, միթե մեք մի վարդապետի չափ արժեք չունինք ազգի առաջ, 10 ամիս Սեբաստիա կացի երկու եղբարոքս, 2 ձիով և սպասավորով 20.000 ղուրուշ ծախք ընելով, վարչության բողոքեցի երբեք չլսեց, 3 տարի Մուշ կեցա, ծախքեր ըրի և այժմ 1650 ղուրուշ կպահանջեմ Մշո վանքեն ոչ պատրիարք, ոչ վանահայր և ոչ միաբանք մեր իրավունք չեն վճարեր, 2000 ղուրուշ Բաղիշո վանքեն կպահանջեմ, մինչև Բաբերդ երթալով և ղորք բերելով և ծախք ընելով տակավին չվճարեցին, 'ի Խարբերդ 4000 ղուրուշ զրյանքս գրավ մնացեր է Միսաքյան Սենեքերիմի քով, ուրիշները իրենց իրավունքներե ավելի կառնին և կուտեն և կմարսեն, իսկ մեք մեր բուն իրավունքեն կզրկվինք և ոչ ոք է, որ մեզ օգնական լինելով մեր իրավունքները առնե և մեզ հատուցանե, հիմա տնտեսական խորհուրդն ևս 10212 ղուրուշ չուզիլ վճարիլ։ Ներեցեք, Հայրիկ, արդեն մեր տարեկան հաշիվ թե ձեր սրբազնության մեկ ամսականին կհավասարի, թող հարսնիքներ և մյուսներ և այլն և այլն։ Խորեն եպիսկոպոս 5000 կպահանջեր Թեքիրտաղու, Ներսես եպիսկոպոս յուր ամսականներ կանխիկ կպահանջեր, ապա թե ոչ, չէր երթար։

Այս ամեն աչքի առաջ ունենալով միթե ծայրահեղ հիմարություն չէ դարձյալ պաշտոնի հանձնառու լինիլ, ծախուց բեռան տակ մնալ և անպատվությամբ պաշտոնազուրկ մնալ, ուստի եթե Ձեր սրբազնություն կըբարեհաճի կամ Կարմրորա վանք և կամ Բարդուղիմեոսի վանք հանձնել ինձ՝ հատուկ պատրիարքական կոնդակավ և հրամարտակավ

քարի, իսկ եթե ոչ, կաղաչեմ կալ դիս հրաժարյալ, եթե ոչ, կաղաչեմ, որ այդ առաջնորդական ընդհանուր ցանկեն ևս իմ անունս դուրս հանեք և միայն փափագողաց և ծարավյաց անուն դնեք։

Ողջ լերուք 'ի գլուխն Քրիստոսի Ն. Երեմիա եպիսկոպոս

1873 հունիս 16 'ի Վարագ։

Ամենապատիվ սրբազան Հայրիկ և Աստվածասեր անդամք կրկին ժողովս ազգային վարչության։

Հուլիս 11 ամսաթիվ, 115 թվահամարով Ձեր սրբազնութենեն պաշտոնական գրություն մի ընդունեցի, որով կծանուցանեք, թե մեր մի քանի վիճակագրական տեղեկությունք հետզհետե 'ի պատրիարքարան հասած են և թե մեր հետաքրքրական տեղեկությունք վարչության ուշադրութենեն չպիտի վրիպին և թե մեր աշխատությունք շնորհակալության արժանի կհամարեք։

'Ի փոխարեն շնորհակալացն տասնապատիկ շնորհակալիս կփոխարինեք վարչությանդ, որ փութա անմիջական դարմանի կարոտ եղած խնդիրներ գործնականապես արդյունավորել հօգուտ եկեղեցվո և հայրենյաց, որում ոչ միայն Երեմիա եպիսկոպոս կփափագի 'ի սրտե, այլ բոլոր բարեկարգություն փափաքող հայրենասեր հայք։

Վասն շնորհակալիացդ կպարտիմ շորս այլ ևս տեղեկագրություն հետզհետե հաղորդել վարչությանդ Ա, Կարնո վիճակի, Բ, Վասպուրականի, Գ, Վանորեից, Դ, Աղթամարա վիճակաց վերա։

Վերջին, որ առաջիններեն ավելի հետաքրքրական նյութ կպարունակե, որ հարստահարությամբ և անկարգությամբ ավելի անկերպարան վիճակի մեջ է, փութանակի վարչությանդ հաղորդելո մեծ կարևորություն ունի։ Թեպետ վարչությունս յուր դանձուն նեղ վիճակի նկատմամբ մեր ամսական կվերջացներ, սակայն, ինչպես քանիցս առաջարկեր էի ձրի պաշտոն շարունակելո, զայն արդյամբք կատարելո չդանդաղեցա։

Հունիս 27-են սկսյալ մինչև օգոստոսի 27 ամբողջ երկու ամիս Աղթամարա վիճակի վանքեր և գյուղեր այցելելով ստորագրեցինք և սահմանադրություն գործադրեցինք։ Նախ Աղթամարա կեդրոնատեղին տնօրեն ժողով, քաղաքական և կրոնական առժամանակյա խորհուրդներ կազմելով 'ի Բելու, 'ի Նոր գյուղ, 'ի Մոխրաբերդ, 'ի Փախներ թաղականներ հաստատեցինք և արդեն այսպես հետզհետե մնացյալ գյուղերու մեջ գործադրելեն զկնի երեսփոխանական ժողով կազմելո պիտի ձեռնարկեինք։

Այսպես ազգօգուտ կարգադրությունից բաց 'ի տեղապահ Հակոբ եպիսկոպոսեն, թե վանքի բոլոր միաբանք և թե վիճակային ժողովուրդ

գոհ և շնորհակալ էին, որք 'ի սրտե կփափագեին օր առաջ ամբողջ վիճակի մեջ սահմանադրության գործադրություն տեսնալ, սակայն տեղապահ սրբազան Հակոբ եպիսկոպոս, առ որ վարչությունից քանիցս հրահանգ և ստիպողական հրամաններ խրկած էր անմիջապես սահմանադրություն գործադրել, որ ոչ գործադրել կուզեր և ոչ երբեք գործադրելո եղանակ գիտեր, առաջին գործադրության օրեն սկսյալ ջանաց պանազան արգելքներ հնարել, երբեմն տարաձայնիլ տվավ ժողովրդյան մեջ, թե սահմանադրություն ընդունողք 75 ղուրուշ պիտի վճարեն հիվանդանոցին, երբեմն ժողովակ կազմելով քանի մարդկանց բերանով ըսել տվավ, թե մեր տեղապահին կրպատկանի վիճակի մեջ սահմանադրություն գործադրել։ Այսպիսավ, վախն 'ի վախ մեր գործադրություն քնդմիջելով, թույլ չտվավ արագ-արագ գործ հառաջ տանիլ։

Երբ մեր երեք կտոր նամակներ «Հայրենիք» լրագրի 156 թվույն մեջ հրապարակյալ տեսավ, համարձակություն առնելով մարդիկ խրրկեց գյուղեր պատվիրելով, որ սահմանադրության գործադրություն չընդունին յուրյանց մեջ։

Քանիցս ազդարարեցի եպիսկոպոսին, թե դու փոխանակ անձամբ գործադրելո, երբ այսպիսի արգելք կհարուցանեք սահմանադրության դեմ, ձեր բուն պաշտոնի, ազգային վարչության հրամանաց հակառակելով ծանր պատասխանատվությանց կենթարկվիք, սակայն առ այս պատասխանեց նա, թե շատ վիճակներ կան ցարդ չգործադրված, Աղթամարա վիճակին ևս չգործադրվի այժմ... եթե վարչություն կրկին մեզ հրամայե գործադրելո և Հակոբ եպիսկոպոսին պատվեր առաքիլ, որ արգելք չինելո, պատրաստիմք երթալ գործադրել։

Գալով մեր երեք նամակի գողությունից և հրատարակությունից բողոքելով՝ կհայտարարեմ կեդրոնական ազգային իշխանության, թե՝ վարչության իսկ կպատկանի «Հայրենիքի» խմբագրեն պահանջել թե սրբազան պատրիարքին և թե կրոնական և քաղաքական կեկին ժողովաց պատիվ. ըստ որում առ վարչություն ուղղյալ նամակներ տակավին 'ի պատրիարքարան չհասած գաղտնի գողացեր և հայտնի հրապարակեր են գրպարտիչ հավելվածով մի, երբեք չի պատասխաներ ոչ մեր պաշտոնական նամակին և ոչ մեր մտերմականին։ Եթե ազգային վարչություն սակավ ինչ անփույթ լինի սույն տարօրինակ գողեր դատաստանի ենթարկելե և տերության օրինաց համաձայն պատժելե, ո՞վ արդյոք կվստահի վարչության թղթակցել այսուհետև շարունակ փորձանքի չհանդիպելո համար, թե պաշտոնական և թե մտերմական բոլոր գրությունք ուղղակի լրագրոս խրկելու է, լրագրի միջոցավ պատա-

խան ընդունելու է (լավ, ուրեմն պատրիարքարանի սնդուկ դրագրաց այնչափ ամսական տալե ազատ կլինի), մի՞թե 'ի սկզբանե աշխարհի՝ հար ո՞մ ազգաց և լեզվաց մեջ այսպիսի օրենք մի երևցեր է, եթե կա, դուք և մեք այդ օրինացն համաձայն պարտիմք ներել, իսկ եթե անկարելի է որևիցե ազգաց այսպիսի արտաքո մտաց մարդկան օրենքն ընդունիլ, պարտական կլինիմք ընդունիլ այդպիսի գողության գործ մարդկային բնական օրինաց սահմանին մեջ, դոքա ոչ միայն բանականության առաջ կդատապարտվին, այլև աստվածային օրինաց ատյան իսկ դատապարտյալ են, որ ասե մի գողանար։

Ի վերջո եթե դուք, որ ազգային դատավորական աթոռ կնստիք և դատելու իրավունք ունենալով ներելու ավելի կհոժարիք, քան թե դատելու, ես արդեն իսկ անհատ մի գոլով ոչ միայն կներեմ, այլև կաղոթեմ առ հայրն ասելով, «Հայր թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»։

Ողջ լերուք

1873 օգոստոս 21 Մնամ միշտ ձեզ աղոթող
Վարագ, 'ի Վան Ն. Երեմիա եպիսկոպոս

Տեղեկագիր չորրորդ

Ամենապատիվ սրբազան Հայրիկ և ազգապաշտպան ատենակալ անդամք ազգային վարչության։

Գլուխ Ա

Թեպետ ոմանք մահվան երկյուղ մեր առաջ դնելով կահացուցանեին զմեզ այցելության պաշտոնիվ շրջագայել Աղթամարա վիճակի մեջ և ոմանք ևս կհավելուին, թե դժվարին է քեզ 'ի վիճակի անտի ողջանդամ հետս դառնալ, բայց սակայն հուշ ածելով թե քաղցր և վայելուչ է վասն հայրենյաց մեռանիլ, մանավանդ հուսալով աստված կենդանին, որ քանիցս զմեզ երկյուղալի վիճակաց և ճանապարհորդությունից մեջ պահպանելով զերծուցց ընտանի և ոչ ընտանի որսողներեն։

Ուստի, հուլիս 27 առանց պահակի և օգնականի Աղթամարա վանից վիճակին այցելության դիմեցինք, նախ Կոնկա սուրբ Աստվածածնի վանքեն սկսելով վանորեից ստորագրություն, հողային կալվածոց որքանություն, եկամտից և ծախուց որքանությունք 'ի գիր դրոշմեցինք, ուշի-ուշով նկատեցի և տեղեկացա, թե Աղթամարա վիճակի բոլոր վանորեից մեջ ոչ շարժական և ոչ անշարժ, ոչ եկամտից և ոչ ծախուց տումար կա, քանզի դարավոր ժամանակե մինչև ցայսօր ոչ որ 'ի վանահարց անտի հաշիվ պահանջեր է և ոչ պատվիրեր է օրինավոր ծախուց և եկամտից տումար ունենալ և տարին մեկ անգամ անպատճառ օրինավոր հաշիվ տալ։

Աղթամարա վիճակի մեջ գտնված շեն և անշեն վանորեից թիվ։ Այժմյան կացություն և անբարեկարգություն։ Վանահարց անվանք և պարապմունք։

Ռշտունյաց գավառի վանքեր։

1 Աղթամարա սուրբ Խաչի վանք, որո տեղեկությունք ընդարձակ լինելուն աղագավ այժմ կթողու։

2 Կարմրավորա Աստվածածնի վանք, որո վանահայրն է Մուրատ անունով աշխարհական մի, 1 միաբան ծերունի՝ Ստեփան վարդապետ։ Վանք ունի անտառներ, հողեր, անտառներեն և եկամտեն ավելցած կես տեղապահ Հակոբ եպիսկոպոսին և կես Մուրատի՝ ըստ վկայության Մոխրաբերդ գյուղացվոց, որ հիշյալ վանքին որմն է։

3 Տավապետա սուրբ Հարությունի վանք, վանահայր՝ տեր Մխիթար, որ Շատվան գյուղի մեջ նստելով՝ վանքի հողեր ձրի կմշակե և յուր տուն կհարստացնե։

4 Խարբերդու սուրբ Հովհաննու վանք, բավական ժամանակ աշխարհական մարդիկ նստելով հարստացեր, այժմ յոթն տոնի բաժանվելով վանքի սեփական հողեր վրանին բաժանելով կաշխատին թափուր ընել և հողեր իրենց սեփականել, Աղթամարա տեղապահ սույն հափշտակությունից վերա աչք գոցեր և ընդդեմ այնոցիկ, որք սույն աղգային կալվածոց գողությունից դեմ կբողոքեն, ականջներ խցեր է։

5 Շախուտու սուրբ Աստվածածնի վանք, եկեղեցին ողջ է, մեջ բնակիչ և վանահայր չկա, հողեր հափշտակողաց ձեռք մնացեր է և Աղթամարա կողմանե մեջ շինության և բնակության հաստատելու փույթ չկա։

6 Պաղա սուրբ Թումասի վանք, տաճար ողջ է, մեջ բնակիչ և վանահայր չկա, վերնոյն պես հողեր անհոգության զոհ եղած են։

7 Արծվաբեր Աստվածածնի վանք, տաճար կանգուն է, մեջ բնակիչ և վանահայր չկա...։

8 Սուրբ Աստվածածնի վանք Առտեր կղզու մեջ, տաճար կանգուն, մեջն անբնակ։

9 Հելու քաղաքան խորան սուրբ Աստվածածնի վանք, շենք հո-

ցակապ և Երևանի, վանահայր չունենալով՝ 5 տուն հայ բնակիչք յուրյանց գյուղի եկեղեցի դարձուցեր են։

10 Դըշողա սուրբ Աստվածածնի վանք, տաճար կանգուն, մեջ բնակիչ և վանահայր չկա, հողեր...։

Ոստանա և Հայոց Զորո վանքեր

11 Զարհան սուրբ Աստվածածնի և կամ սուրբ Նշանի վանք, վանահայր՝ տեր Սարգիս և յուր որդին՝ տեր Մարտիրոս, 30 տարի առաջ Ոստանա քրտեր այս վանքի հողերեն 124 չափի տեղ հափշտակեր է, վանահայր տեր Սարգիս առաջին տարիներ բողոքեր է առ կառավարություն, այս տարի ևս բողոքեց և շատ աշխատեցավ, սակայն կառավարություն ոնց չուզեց վանքի սեփականության իրավունք ճանաչել և վերադարձնել, մեք ևս այս մասին բդեշխին բողոքեցինք իբրև վանքան կալվածոց վերադիտող և պաշտպան, թեև խոստացավ վանքը իրավունք ճանաչել, սակայն գործով ընդհակառակն վարվեցավ, շատ անգամ փորձով տեսնվեցավ, որ կառավարություն երբեք չուզեր վանքի հողային կալվածներ պաշտպանել, եթե հափշտակող հայազգի լինի, կամ օտարազգի, միշտ անոնց անիրավություն պաշտպանելով կուզե վանորեից հողեր կորզվին և ժողովրդոց ձեռք մնան, այս կետ Աղթամարա մասնավոր վանորեից վերա նկատելո չէ, այլ ընդհանուր Հայաստանի վանորեից վերա իմանալով փութալու է դարման տանիլ և առաջքն առնուլ, ապա թե ոչ հետզհետե վանորեից հողեր ազգի սեփականութենեն կհափշտակվին և օտարոց ձեռք կմատնվին։ Քանիցս այս նյութի վերա գրեցի, այժմ կրկին և կրկին կհիշեցուցանեմ ազգախնամ վարչությանդ և հույժ թախանձանոք և ստիպմամբ դարման կխնդրեմ ազգի լրության կողմանե։

Հիշյալ վանքի եկեղեցվո դրան առաջն է մեր մեղրաբան Եղիշե սուրբ վարդապետի գերեզման, անշուք և անմահարձան, ո՜հ նա, որ մեր անմահ նահատակց վերա անմահ և անեղծ հիշատակոց մահարձան կանգնեց, տակավին 1500 տարվան միջոցին մի խաչվեմի և մի մահարձանի արժանի եղած չէ այնչափ հայ իշխաններե և նախարարներե, ո՜հ, միթե այսչափ է՞ հայոց երախտագիտություն առ յուրսն։

12 Բերդաձորո սուրբ Աստվածածնի վանք, որ այժմ կոչի Սպիտակ վանք, արքունական և հոյակապ շինվածքով, 'ի հնում երևելի ուսումնարան, աթոռ արքեպիսկոպոսոց և բնակարան բազմաթիվ միաբանից, իսկ այժմ բնակարան մի ծերունի տեր Բարսեղի, որո միաբանք են

յուր երեցկին, հարսներ և թոռներ և ժամասաց դպիրք և տիրացուք ճնճղուկներ և ծիծեռնակներ են, ցավալի է ասել, թե Աղթամար չունի արժանավոր միաբան մի, որ վանահայր հաստատվի հիշյալ վանքին, թեև մեր ներկայությամբ բազմիցս բողոքեցին միաբան վարդապետք, թե այդ վանք եպիսկոպոսի և վարդապետի արժանավոր տեղ է, քան թե մի զառամյալ տգետ քահանայի։

13 Անգղա սուրբ Աստվածածնի վանք, որո դիրքն է աննման և հողային կալվածքն ընդարձակ, ինչպես մատենից հիշատակարան կավանդե բնակարան եպիսկոպոսաց և բազմաթիվ վարդապետաց, այժմ մի մանուկ կաղ՝ տեր Մովսես, որ նոր ձեռնադրված և վանահայր կարգված է տեղապահ Հակոբ եպիսկոպոսեն։ Հիշյալ քահանային հարցի, թե քանի քիլայի սերմամուտ հող ունի վանք, իբրև պորդ՝ ձևանալով պատասխանեց, թե 18 քիլայի, քահանայի եղբորեն հարցի, ասաց 40 քիլայի, Անգղա քահանայից հարցի, նոքա պատասխանեցին, թե 60 քիլայի։ Սույն տեր Մովսեսի նման շատ քահանա և աշխարհական վանահարք բնավ չեն ուզեր ստուգապես վանորեից հողային կալվածքեր ցույց տալ և զրով նշանակել նոցա որչափություն արժողություն, նախ կկասկածեն, չէ թե շատ ցույց տան, դուցե ձեռքերնեն առնվի, երկրորդ՝ մտադիր են վանքի հողեր ծածուկ յուրյանց վերա թափու ընել տալ, ինչպես շատեր ըրած են, արդեն հիշեցի վեր, թե կառավարություն կը թույլատրե այսպես առնել, ուստի հույժ վտանգավոր է աշխարհիկ քահանայից և աշխարհականաց ձեռք թողուլ վանքեր, ահա այս մասին էր, որքանիցս ցավոք սրտի առաջարկեցի վարչության, որ մի խարթա գծող խրկե Հայաստանի վանորեից հողերու ճիշտ խարթան հանելու և պատրիարքարանի մեջ պահելու։ Հիշյալ վանահոր եղբարք իրարմե բաժանվելով վանքի հողեր իբրև յուրյանց հայրենի կալված բաժներ են մեջներնին, ըստ որում յուրյանց հավ և հայր նույն վանից մեջ նստեր են, սույն վանքի վանահայր ձմեռն ամբողջ գյուղի մեջ կնստի, որ քառորդ վանքեն հեռու է, իսկ ամարսն հաց գյուղի մեջ կնփեն և վանքի մեջ կուտեն, արդեն 6 ամիս եկեղեցվո դուռ գոց կմնա, իսկ ամարսն չգիտեմ, թե ամիս քանի անգամ ժամասացություն կկատարի տաճարի մեջ, կարծեմ ավելորդ է հիշել, թե շատ վանքերու նման, այս գեղեցկավայր վանքի միաբանք են 5 մշակք, քանի ոչխարք, քանի գոմեշք, եզինք, կովք, էշք և ավանակք։

14 Խոսպա սուրբ Աստվածածնի վանք, տաճար կանգուն է, բայց բնակիչ և վանահայր չունի, պետք է սույն վանքի և ամենայն ավիրակ

վանորեից համար վարչություն հարցանե, որմե որ պետք է հարցանել, թե ուր և ոք հողեր որո ձեռքն է մնացեր։

15 Հերեմերու սուրբ Աստվածածնի վանք. վանահայր ռես Գեորգ՝ ձեռամբ Հակոբ եպիսկոպոսեն հաստատյալ, երբ վարչություն կնկատե, թե վանք այսինչ ռեսի և այսինչ աշխարհականի հանձնված է, պետք է խելամտե, թե այդ աշխարհականք, ճարտար ճարպիկ գործոց, երկրի մեջ բավական ձայն ունեցող մարդիկ լինելով վանահայրության պաշտոնին կարժանանան, որպեսզի Խաչատուր և Հակոբ եպիսկոպոսից արարմանց դեմ չբողոքեն, Աղթամարա վանքի վերա ուշադրություն դարձնելով բարեկարգություն չխնդրեն և հաշիվ չպահանջեն։ Ինչպես Նոր գյուղի սուրբ Գեորգա վանք վանեցի Բաղդասարին, Մոխրաբերդի Կարմրորա Աստվածածնի վանք ռես Մուրադին, Կոնկա վանք արտամետցի ռես Հովհաննեսին, նմանապես ուրիշ վանքեր ուրիշ աշխարհականաց։ Հակոբ եպիսկոպոսի քաղաքականություն այս մասին մեծ է, քան ղզերմանացի պարոն Պիզմարքին[99]։ Մարտիրոս վարդապետ Երկար միջոց վանահայրության պաշտոնիվ հիշյալ ճախ վանք յուր խոհականությամբ կառավարելով Հայոց Զորո համակրություն առ ինքն գտած էր, սակայն յուր բնաձիր արդարասիրությամբ Խաչատուր և Հակոբ եպիսկոպոսց հանդուգն կամակատարությունից դեմ բողոքող լինելով, որով յուրյանց հայր Կաթուղին 'ի գերեզման մահու գահավիժեցին, ուստի ամբաստանություն հարուցելով նորա դեմ վանքեն զրկեցին, որո վասն խեղճ սրտի ցավեն երկար անկողնո ծառայելով քանի ամիս առաջ Աղթամարա մեջ յուր մահկանացուն կնքեց։ Այսպես, Խաչատուրի և Հակոբի հակառակորդք թե վանահայր էին՝ վանահայրությենե, թե ռես էին՝ ռեսությենե ընկան և հալածվեցան, ինչպես Աղթամարա միաբան Հովսեփ եպիսկոպոս Խաչատուրի և Հակոբի դեմ բողոքելո համար լուսարարության պաշտոնեն բռնի հանվեցավ Խիզանցի Հակոբ եպիսկոպոսի ձեռոք։

16 Խեքա սուրբ Աբրահամու վանք։ Հիշյալ սուրբ Աբրահամ մեր երանելի սուրբ Ղևոնդյանց աշակերտն է, որո հրեշտակային վարք սուրբ Եղիշեն կնկարագրե 'ի պատմություն անդ։ Վանահայր այժմ տեր Պետրոս քահանայն է։

17 Սուրբ Գեորգա վանք, որո վանահայր հիշյալ քահանայն է։

18 Խրրբխու սուրբ Աստվածածնի վանք, վանահայր տեր Գեորգ։

19 Բերդակու սուրբ Աստվածածնի վանք, տաճար և վանքն ավերակ, հողերն անծանոթ։

20 Կոնկա սուրբ աստվածածնի վանք՝ վանահայր ռես Հովհաննես, որ ճարպիկ լինելով՝ վանք կառավարե առանց միաբանի, երբ ուխտավոր երթա վանք, Արտամետ կամ Ջվստան գյուղի քահանայից մին բերելով ժամ ընել կուտա, իսկ երբ ուխտավոր չգտնվի՝ տաճարի դուռ գոց կմնա։ Սույն վանահայր արտամետցի գոլով երբեմն յուր գյուղացի խիստ տաճիկներ վանքի արտերեն կխնդրեն ցանելո, խեղճ առ ահի կպարտավորվի տալու։ Մեր դիտողություն անսալեն զկնի ինքն իսկ վկայեց, թե այս արտորեից քանիս տաճկաց առանց վարձուց տալն վտանգավոր է, բայց խոստովանեցավ, թե առ ահի պարտավորված է տալու։ Այս վանք Վանա քաղաքեն 2 ժամ հաղիվ հեռի [է]։

Շատախու վանորայք։

21 Կորատերա սուրբ Աստվածածնի վանք, վանահայր՝ ռես Աբգար։ Հիշյալ վանքի մեջն է Գրիգոր Նարեկացվո հոր Խոսրով եպիսկոպոսի գերեզման։

22 Կոռա վանք, վանահոր անուն Աղթամարա միաբանք չէին գիտեր, ուստի անհայտ մնաց։

Խիզան նահանգի վանորայք։

23 Խիզնա սուրբ Խաչ, վանահայր՝ Աղթամարա միաբան երիտասարդ Սահակ վարդապետ, որ Խիզնո նահանգի մեջ փոխ առաջնորդության պաշտոն կվարե, սա տեղոյն շեխ Ճալալեդին և կառավարություն ձեռքն առնելով իբրև բարբարոս կհարստահարե և կկեղեքե զխղճալի հայեր, որ չեն համարձակիր բողոք բառնալ նորա դեմ, վասնզի Աղթամարա տեղապահ նորա հզոր պաշտպանն է։ Հիշյալ վարդապետ գիտությենե զուրկ է, սակայն 'ի ձի աշտանակել, զենք գործադրել և լավ պճնազարդել գիտե։

24 Գամաղիելի սուրբ Եղիայի վանք, վանահայր՝ Սարգիս վարդապետ, սույն վանք բավական եկամուտ ունի։

25 Երեք Խորան սուրբ Աստվածածնի վանք, վանահայր՝ ռես Մարտիրոս։

26 Ուրանից սուրբ Աստվածածնի վանք, վանահայր՝ ոզմեցի Կարապետ վարդապետ, որ բավական վարդապետության շուք և պատիվ ունի։

Կեցանի մեջ։

27 Սմպոնա սուրբ Աստվածածնի վանք, վանահայր՝ տեր Կարապետ։

'Ի Կառկառ

28 Երաշխավոր սուրբ Աստվածածնի վանք, վանահայր՝ աշխարհական։

29. Խնձորուտա սուրբ Աստվածածնի վանք, վանահայր՝ տեր Վարդան։

Մոդաց նահանգի վանորայք։

30 Ամենափրկիչ, վանահայր՝ տեր Հովհաննես, սույն վանք մոդաց մեջ հռչակ և բաղում ուխտավոր ունի։

31 Սուրբ Կարապետի վանք, վանահայր՝ տեր Հակոբ, հողեր քրտեր թափու ըրած են յուրյանց վերա։

32 Նանից սուրբ Մինասա վանք, վանահայր՝ տեր Սարգիս։

33 Կոճղոնց սուրբ Աստվածածնի վանք, վանահայր՝ տեր Թումաս։

34 Բավա Նարեկացվո վանք, վանահայր՝ ռես Մուրատ։

35 Սուրբ Զորավարա վանք, որո մեջ է պատմական սուրբ Եղիշե վարդապետի գլուխ։

36 Գնիկոնից սուրբ Աստվածածնի վանք, տաճար կանգուն, մեջ բնակիչ և վանահայր չկա։

37 Ակնդաշտա սուրբ Աստվածածնի վանք, որ է տնտես Ռուսինոսի վանք, տաճար վանք և շինվածք շեն է, մեջն անբնակ։

38 Սարի սուրբ Գեորգա անվանի և հռչակավոր վանք, վանահայր մոդացի մը՝ Դավիթ։ Հիշյալ վանք տարին 20.000 ղուրուշիվ մուխթայով Աղթամար կծախե աշխարհականաց, որք ամեն կողմեր աշխարհական նվիրակներ խրկելով 80.000 ղուրուշեն ավելի դրամ կհավաքեն ազգեն։ Հիշյալ մուխթայի գումար Վանա առաջնորդ Գաբրիել եպիսկոպոսի ժամանակ վանեցիք կառնեին և Վասպուրականի դպրոցաց վերա ծախք կընեին, սակայն այժմյան պատրիարք սրբազան Հայրիկի ձեռոք Աղթամարա կողմն անցավ, որպեսզի այս գումարով մի երևելի կղերական դպրոց հաստատվեր Աղթամարա վանքի մեջ, երկու տարի հաղիվ կա, որ Հակոբ եպիսկոպոս մի դպրոց բացեր է, 15 որբ տղայք

միայն հասարակ ընթերցմունք կուսանին։ Վարժապետի վարձք տարին 1000 ղուրուշ է ամբողջ դպրոցի ծախք 3000 ղուրուշի կհասնի և բնավ աշակերտ հառաջ բերելու կարգավորություն և օրինավորություն չունի, զոր 'ի կարգին պիտի բացատրեմք։ Վարչության կպատկանի յուր աղդու հրամանով հարկ դնել Աղթամարա միաբանության վրա, որ հիշյալ վանքի ամբողջ գումարով ճոխ երևելի ուսումնարան մի հաստատեն Աղթամարա վանքի մեջ և տնօրինություն հանձնել մի ուսումնական և հայրենասեր վարդապետի և հատուկ հրահանգով և հրամանագրով խրրկել 'ի կարգադրություն և հսկողություն վարժարանի, զի Աղթամարա միաբանք բնավ բավականություն չունին դպրոց կառավարելու և աշակերտ հառաջ բերելու։

39 Ապարանից սուրբ Խաչի վանք, որ 'ի նախնում երևելի եպիսկոպոսարան էր, զոր Նարեկացին հատուկ ճառիվ կներբողե նորա շենք և բարեկարգություն։ Քանի տարիե հետե քուրտ Տեվրիշ պիլոծ և բնակած է հիշյալ վանքի մեջ, այժմ քուրտն Աբրահամ անունով աշխարհական մի յուր կողմանե նստեցուցեր է վանքի մեջ, իբրև պահապան։ Հողեր և կալվածներ Տեվրիշ պեյի ձեռքն է։ Վանքն ունի մի ճոխ կղթորի ծառաստան, որ տարին առնվազ կրնա 5—6 հազար ղուրուշ եկամուտ կբերե, սակայն ավաղ, որ դարձյալ քրտեր տիրապետեր են ծառաստանին եկամուտն իրենց սեփականելով։

Սպարկերտու վանորայք

40 Սկավառսկո սուրբ Գեորգա վանք, վանահայր՝ տեր Հովհաննես։

41 Բազմենից սուրբ Աստվածածնի վանք, վանահայր՝ տեր Կարապետ։

Վերոհիշատակյալ 41 վանորեից մեջեն 7 ավերակ և անբնակ են, իսկ 34 շեն են այժմ, ունին վանահայր 'ի վարդապետ, 'ի քահանայե և հաշխարհականե, ինչպես որ 'ի վեր անդր մի ըստ միոջե հանկանե և հանվանե գրվեցավ մասնավոր բացատրությամբ հանդերձ, որք պետք և բնավ չվրիպին վարչության սուր ուշադրութենեն։

Այսչափ վանորեից վանահարք ազգային հառաջադիմության առաջ ուրիշ նշանակություն չունին, բայց միայն ազգային հնությանց մի-մի թոշակավոր պահապաններ, զի վանորեից բոլոր շարժական և անշարժ կալվածներ իբրև վարձք տրված է իրենց, զորս ըստ հաճույից կտնօրինեն վանահարք, զի ոչ հաշվետումար ունին և ոչ հաշիվ տալ, եթե վան-

քի եկամտից ավելանա յուրյանց անձնականին, կսեփականեն, իսկ եթե անձնական պարտք ունենան, վանքի վրա կփոխադրեն և հանուն վանքին մուրհակներ կուտան, մանավանդ աշխարհական վանահարք։

Այսքան վանորեից մեջ ոչ միաբան կա, ոչ դպրոց և ոչ դպիր, ոչ իրենք կատարյալ ընթերցմունք գիտեն և ոչ ուրիշին սորվեցնելո եռանդ և փափագ։ Թեմական ժողովրդեն նվերքներ կժողվեն և քնավ բարոյական փոխարինություն մի չեն կարող առնել, ոչ խրատ գիտեն տալ, ոչ քարոզչությամբ բավական զժողովուրդն քաջալերել և մխիթարել, վանորայք այժմյան վանահարց իբրև մի-մի առանձին ագարակ վաճառված են, իրենք կվարեն, կվաստակին և ընտանյոք հանդերձ կվայելեն կշտապինդ։

Վանորեից խորհրդոց խրկած հրահանգներ երբեք վերոհիշյալ վանահարց առաջ նշանակություն մի չունին և ոչ բավական են գործադրել և իրենց բնակած վանքեր կանոնավորել։

Աղթամարա կաթողիկոսության իշխանություն երբեք փույթ ունեցած չէ ոչ միայն յուր իրավասության ներքև գտնված գոնե քանի վանքեր կանոնավորել, այլ իսկ յուր աչքի առաջ ունեցած Աղթամարա մեջ օրինավորություն և կանոնավորություն հաստատել մինչև հայսօր ժամանակի, նույնպես հիշյալ աթոռի միաբանություն, ոչ փույթ, ոչ եռանդ, ոչ իմաստություն և ոչ այնչափ հայրենասիրություն ունեցեր է վանքեր կանոնավորել և ազգի օգտակար ծառայության ներքև դնել։

Գլուխ Բ

Ապաքեն այժմ հարկ կլինի Աղթամարա միաբանության ներկա թիվ, նոցա վարք, բարք, ընթացք և պարապմունք հակիրճ բանիվ նկարագրել, որպեսզի ազգային վարչության հասու լինի և թե սոքա քանի ամաց հետև ինչ հանճարով կկառավարեին զժողովուրդն և Աղթամարա բուն վանքն։

1 Խաչատուր եպիսկոպոս[100], որ է անվավեր կաթողիկոս Աղթամարա, որո վարուց և բարուց նկարագիր ամենագետ ծածկագետին հայտնի լինելով՝ միամիտ ժողովուրդ չգայթակղեցուցանելո համար պետք չէ հրապարակել ազգայնոց առաջ, թեև ինքն անխղճորեն յուր հոր թերևս բնավ չգործած հանցանքներ առաջի ազգայնոց և օտարազգոց հրապարակ հանել հանդգնեցավ 'ի գայթակղության պարզամտաց։ Տա, որ այժմ իբրև կալանավոր կնստի պատրիարքարանի մեջ և շարունակ կբողոքե ժողովրդյան հարստահարողաց դեմ, երբեմն ինքն օտարազգի

հարստահարիչներեն ավելի կբռնանար ժողովրդյան վերա և ծայրահեղ անդթությամբ կկեղեքեր զգյուղացիս։ 'Ի կենդանության նահատակյալ Պյուլպյուլ Պետրոս կաթողիկոսին, տա ինքն 7—8 տարի Ռշտունյաց, Հայոց Ջորո գյուղերու մեջ վարձակալություն ընելով անհագ տղրուկի պես ժողովրդյան արյուն կծծեր և ագահելով կհարստանար օր ըստ օրի, այս մասին խեղճ նահատակյալ Պետրոս կաթողիկոս բաղում անգամ առանձին և հրապարակավ կհամոզեր զինքն և կհանդիմաներ, թե «ես զքեզ եպիսկոպոս ձեռնադրեցի մյուլթազիմ[101] չձեռնադրեցի, բավական է, որ դու քուրտերեն ավելի իմ խեղճ ժողովուրդ կեղեքես», սակայն նա Վանա դրամատեր վարձակալ իշխաններ յուր բաժանորդ և պաշտպան ունենալով, բնավ չէր անսար յուր կաթողիկոսի հայրագութ խրատաց, ուստի խեղճ վայ տալով յուր անձին կգոչեր առ երես Խաչատուրին, թե զղջացեր եմ ձեռս քո գլուխ դնելու և եպիսկոպոս օծելու, խեղճ նահատակյալն, երբ հայրական պարզությամբ իբրև Հովհաննես[102] կխրատեր այս նոր Հերովդես[103], չէր գիտեր, թե նա իբրև Հերովդէս ոխացյալ նորա գլուխ և աթոռն կկոնդրեր։

Տակավին մեկ չի հարցաներ, թե սուրբ Լուսավորչեն սկսյալ մինչև ցայսօր ո՞ր վարդապետ, ո՞ր եպիսկոպոս թող տալով յուր բուն կոչումն վարձակալությամբ պարապած է, նախանձահույզ մաքսավորներ մեղավոր կհամարեին, իսկ Հիսուս Քրիստոս շնորհական օրինաց նախանձահույզն չվանյա խարազանավ զգնողս և զվաճառողս աստծո տաճարեն արտաքս կմերժեր, իսկ մեք զայն աստծո տաճարի մեջ առաջին բարձրագահ աթոռի վերա բազմեցնել կնկրտիմք։

Մեկ չկա ազգի մեջ, որ հարցանե, թե այդ եկեղեցական յուր վարձակալության օրեր, որ գյուղեր սուրհանդակի պես կշրջագայեր, արդյոք օր մի վեղարով փիլոնով եկեղեցի մտած քարոզ և խրատ խոսած է՞ ժողովրդին, օր մի գյուղերու մեջ դպրոց հաստատելո խորհուրդ հղացեր է՞, օր մի ժողովրդյան նյութական և բարոյական կյանքն ապահովելո փույթ և եռանդ ունեցեր է՞. եթե նույն թեմի ժողովրդյան հարցանեք, ոչ պիտի պատասխանե, եթե երկյուղի կասկածն յուր սրտի մեջ չունենա։

Սակայն Խաչատուր եպիսկոպոս ըստ ասելույն Մովսեսի գիրացավ, ստորացավ, լայնացավ հարստությամբ, եթող զխիղճ, մոռացավ զտեր աստված և զսիրելին յուր զՊյուլպյուլ կաթողիկոսն և իբրև անդրանիկն Ռուբեն եվ հանկոչին հոր յուրո Հակոբա։

Հույժ հարկավոր էր աստանոր Խաչատուրի նենգության խորհուրդներ և Պյուլպյուլ կաթողիկոսի սպանության պարագաներ մանրապատում առնել և զոր լուաք հանկանե քարոզել 'ի վերա տանեաց, սակայն

թե Նարեկա վանից վանահայր արժանապատիվ Հովսեփ վարդապետ և թե այլք փոքր ի շատե արդեն գրած և ազգային վարչության հաղորդած են, եթե ոմանք 'ի մարդկանե զԽաչատուր եպիսկոպոսն արդարացուցանեն առաջի մարդկան, ինչպես արդարացուցին Կարնո Հարություն արքեպիսկոպոսն և Վասպուրականի հանգուցյալ առաջնորդ Իգնատիոս եպիսկոպոսն[104], սակայն ասված գիտե զխորհուրդս զգործ և զապիրատությունս Խաչատուրի։ Թող տա երդմամբ և վկայուք հաստատե, թե բնավ յուր հոր Պյուլպյուլ կաթողիկոսի սպանության ո՛չ խորհրդակից և ոչ կամակից է եղեր։ Թող համարձակի ասված և հրեշտակներ երկինքեն վկա կոչել և ստիպել, թե Դեվրիշ անուն քուրտ յուր սպասավոր չէ և Դեվրիշ պեյի որդի Կուլիխանի հետ սպանության ոճիր գործելույն ներկա և գործակից չէ եղեր, եթե այս դժպատիհ դեպք տեսնող մարդիկ մի ավուր մեջ մեռանին, թերևս հնար լիներ ուրանալ այսպես հայտնի ճշմարտություն առաջի աստծո և մարդկան, սակայն դեռ բազմաթիվ մարդիկ կենդան են և կվկայեն։

Պահ մի ընդունենք, թե Խաչատուր եպիսկոպոսի սրտեն և մտքեն անգամ անցած չէ այնպիսի հայրասպանության խորհուրդ և բոլորով սրտիվ հավատամք նորա այս մասին անմեղության, սակայն երբ բոլոր ժողովուրդ Աղթամարա, արք և կանայք միաբարբառ կվկայեն այսպես, թե զի եթե Խաչատուր եպիսկոպոս կաթողիկոս չձեռնադրվեր, բնավ ոչ ոք չէր համարձակեր Պետրոս կաթողիկոսին մերձենալ և սպանանել, եթե նա ամիսներով առանձին միայնակ լերանց գլուխ, ձորոց խորերու մեջ շրջագայեր այս վկայություն, ոչ միայն Խաչատուրի թշնամիք, այլ առավել նորա սիրելիք և բարեկամք հրապարակավ կխոստովանին և այս վկայություն քան զամենայն վկայությունս ճշմարիտ է և անկեղծ, քանզի ամենայն բռնավորք աշխարհին կպատկառեին և կսարսռեին Պետրոս կաթողիկոսեն, բայց երբ տեսան, թե նա յուր հարազատ և ձեռնասուն անարժան որդիքներեն մերժվեցավ, աթոռեն զահավեժ եղավ, որք իբրև անգութ թշնամի յուրյանց հոր կորուստ և մահ կխնդրեին, եթե կամակից և խորհրդակից ևս չլիներին, անտարակույս երկար միջոց չի պիտի կենդանի մնար խեղճ նահատակյալն, զի երբ տեսին թշնամիք, թե անագորույն ընտանիք «'ի խաչ հան զդա» կաղաղակեն, այլևս տարակույս չկար, թե կոտորյան պահակներ համարձակ ձեռք նորա արյան մեջ պիտի շաղաղեին։

Խաչատուր և Հակոբ եպիսկոպոսներ կեղծյալ պատճառանս շարունակ բողոքեցին Շատախու, Մոգաց հարստահարիչ քրդոց դեմ, բողոքեցին շեխ Ճալալեանին դեմ, բողոքեցին Նեխոյի և այլ մարդիկ սպանողաց դեմ, թե Վանա Բդեշխի ատյան և թե բարձր դրան ատյաններ, բայց այս յոթն տարվան միջոցին երբեք չբողոքեցին Դեվրիշ պեյի որդի Կուլիխանի և յուրյանց սպասավոր Դեվրիշի դեմ, ոչ Վանա Բդեշխի ատյան և ոչ բարձր դռան ատյան, թե նոքա զմեր հայր 'ի զուր տարապարտուց սպանեցին, զի եթե բողոքեին և զԿուլիխան իբրև մահապարտ 'ի բանդ դատապարտեին, անշուշտ սա հայտնի համարձակ պիտի հայտներ հատենի կառավարության, թե սոցա թելադրությամբ և խորհրդով սպանեցի զՊյուլպյուլն, ուստի երբեք տեր չկանգնեցան յուրյանց հոր և ազգի մեկ նահատակյալ կաթողիկոսի մը, երբեք նորա արյան վրեժ չպահանջեցին, այլ ընդհակառակ, սերտ մտերմություն և բարեկամություն պահեցին յուրյանց հոր սպանող Կուլիխանի հետ և զայն պատվեցին և մեծարեցին մինչև ցայսօր ժամանակի, ահա մարդիկ, որ ուլ մի հափշտակողաց դեմ բողոք հարուցին, իսկ կաթողիկոս մի սպանողի դեմ խսպառ լռեցին, միթե մի ուլո չափ արժեք չուներ յուրյանց ձեռնադրող հայր։

Պյուլպյուլ կաթողիկոս ազգային վարչության որոշմամբ և կոնդակավ բարձրագույն դրան հրովարտակով և թեմական ժողովրդոց ընտրությամբ և հաճությամբ օծյալ էր կաթողիկոս տան Աղթամարա, իսկ Խաչատուր ոչ ազգային վարչության հավանություն և ոչ բարձր դռան հրովարտակ և ոչ թեմական ժողովրդոց ընտրությամբ և հաճությամբ, այդ դավաճան ազգային իշխանության և բարձր դռան հրովարտակ և ժողովրդյան ընտրություն ոտնահարող և այսչափ աղետից պատճառ եղող անձ մի պիտի հաջորդի այս իննհատասաներորդ դարու մեջ շլացուցանել ազգայնոց ամենուն աչք և միտք և կաթողիկոս բազմիլ Աղթամարա աթոռի վերա, եթե այս հաջողի, բոլոր կենդանի կաթողիկոսաց կյանք միշտ վտանգի ենթակա պիտի լինի, զի Խաչատուրի պես փառասերներ պակաս չլինելով կղերական դասուց մեջմեն պիտի ջանան զկաթողիկոս զպատրիարքս և զառաջնորդս եկեղեցվո կամ սպանանել տալ, կամ թունավորել և կամ կուսակից գտնելով աթոռե անտի զահավեժ առնել և ինքյանք բազմել՝ օրինակ ունելով առաջի աչաց և առաջի աղջին զԽաչատուր եպիսկոպոսն, զգործս զարարս և զհաջողություն նորա։

Ներկա սահմանադրություն ազգային՝ թե եկեղեցական և թե աշխարհական դասուց վերա պարտականություն կդնե «Հայաստանյայց եկեղեցվո դավանությունն ու ավանդությունքը անարատ պահել» Խաչատուր եպիսկոպոսի գործ, որ է յուր հոր կենդանության առանց հաճութենե և ընտրութենե համորեն ազգի ձեռնադրել, հակառակ է Հա-

յաստանյայց եկեղեցվո դավանության և ավանդության։ Զի Աղթամարա աթոռակալք Դավիթ Թոռնիկ[105] ինքնընտիր կաթողիկոսեն սկսյալ մինչև ներկա Խաչատուր եպիսկոպոս բաց 'ի սակավուց շատեր կամ աշխարհական իշխանաց ձեռոք կամ կաշառոք կամ քրտաց բռնավորական միջոցներով կաթողիկոսացած են, որոց կաթողիկոսություն ընդունզվյուք է ցարդ ըստ ազգային ստույգ պատմության և ավանդության*։

759 տարի առաջ յամի տեառն 1114 'ի թուին հայոց սեավ լեռան Գրիգորիս կաթողիկոսի նախագահությամբ ժողով կը գումարվի երկու հազար հինգհարյուր անձանց, որք բանիվ և գրով ցավագին անիծյուք և նզովյուք կմերժեն զԴավիթ Թոռնիկն 'ի եկեղեցվո և 'ի կաթողիկոսությունե հետո սուրբ Ներսես Շնորհալին զնույն նզովք և անեծքն կրկին երկրորդելով կհաստատե 'ի վերա Դավթի 'ի վերա հաջորդաց և նմանյայց նորին։

Արդյոք այժմյան ժողովներ միթե կարեն 2500 սրբոց եպիսկոպոսաց, վարդապետաց, վանահարց, քահանայից և կրոնավորաց նզովք անեծք և վճիռն բառնալ և նոր կաթողիկոս հաստատել Աղթամարա մեջ, որք միշտ աշխարհական իշխանաց միջոցավ կաշառոք, ով չգիտե, թե հետին դարուս մեջ շատեր քրտաց ձեռոք և կաշառատվությամբ բարձրացան 'ի աթոռ։ Եթե Հայաստանյայց եկեղեցվո դավանություն և անվանդություն անարատ և անխախտ կուզեք պահել բանիվ և սրտեամբ, ահա ժամանակ հասած է Աղթամարա միջեն այդ անուն և նզովք բառնալ, զի շնորհիվ Օսմանյան կայսրության բռնության իշխանաց և մարաց բարձրյալ է ի միջոց և չկա այլևս պատճառ պատճառանաց զայն վերստին հաստատելու։ Աղթամարա դարավոր հաջորդություն, զոր ոմանք չգիտնալով նվիրագործյալ համարեցին, այդ հաջորդություն միշտ հակառակ մեր սուրբ հայրապետաց, եպիսկոպոսաց, վարդապետաց և ժողովրդյան կամաց աշխարհական իշխանաց միջոցավ եղավ։ Եվ եթե ոմանք ապագային օգտակար կհամարեն հաջորդություն շարունակվի, կուզեն պարզամիտներ խաբել, զի ապագայի մեջ եթե ազգ կաթողիկոսի կարոտություն ունենա, ուր կամենա հոն նոր կաթողիկոս կրնա դնել, ինչպես պատահած է։

Արդեն Աղթամարա կաթողիկոսության վերջին զանգակն հնչած է, նախ որ սա էջմիածնա աթոռեն 5 ավուր միջոցավ հազիվ թե հեռի է, երկրորդ, որ 4782 տուն հազիվ թե հայ ժողովուրդ ունի Աղթամարա

* Այս մասից մի քանի էջ հանված է, որը բերված է Մ. Չամչյանից և վերաբերում է 1113—1114 թթ. Աղթամարաի կաթողիկոսության հրապարակ գալու պատմությանը (Հ. Պ.)։

տուն, սույն անձուկ միջոցի մեջ երկու կաթողիկոս և այսչափ փոքրաթիվ ժողովրդյան առանձին կաթողիկոս հաստատել ազգի ոչ ավանդապահության, ոչ իմաստության, ոչ լուսավորության և ոչ պատվոյն կվայելե, աղետալի միջոցին Կարնո, Վանա, Տարոնո, Խարբերդու, Սեբաստիո 4782-են ավելի մինչ 10—12 հազար ժողովուրդ կպարունակե, ամենուն առանձին-առանձին կաթողիկոս հաստատել պետք կլինի։

Ժամանակավ 'ի Թավաբլուր, 'ի Կոնի, 'ի Մարաշ, 'ի Սեբաստիա, 'ի Բերա աշխարհական իշխանաց կամահաճ ձեռնադրությամբ կաթողիկոսք նստած են, բայց ուր են արդյոք այսօր նոցա ինքնընտիր և տեղական կաթողիկոսների հաջորդինք, ազգի անիշխանության և խառնաշփոթության միջոցին միևնույն ժամանակի մեջ 6 կաթողիկոսներ կային ազգի մեջ և ազգի պառակտելով իրարու դեմ հատուցեր էին, ուր են այժմ նոցա թիվ և հաջորդությունք։ Երբ ազգայինք հիշյալ ինքնընտիր և բազմաթիվ կաթողիկոսաց ժամանակակից պատմությունք կընթեռնու վայ և եղուկ կկարդա նույն ժամանակի կաթողիկոսաց, իշխանաց և ժողովրդոց։

Թող բոլոր զայսոսիկ ազգային պատմիչք 'ի մի բերան էջմիածնա կաթողիկոսաց հաջորդությունք և Սսո կաթողիկոսաց հաջորդական աթոռակալք միայն հիշելով Աղթամարա կաթողիկոսաց շարք և հաջորդությունք 'ի կարգո անհարազատից դասելով իսպառ արտաքո կմերժեն և անարժան կհամարեն պատմական հիշատակության։

Ի դեպ է աստանոր հիշատակել, թե ոչ միայն Գրիգոր և Ներսես Պահլավունի սուրբ կաթողիկոսաց և ոչ միայն 2500 հարց սրբոց անեծքն և նզովք հաջորդաբար և հավաքաբար կժողվին Խաչատուր եպիսկոպոսի վերա, այս Պետրոս Պյուլպյուլ կաթողիկոսի անեծք և նզովք կկուտակին 'ի գլուխ նորա, քանզի, ինչպես ականատես և ականջալուր վկաներեն ստուգեցինք, Պյուլպյուլ երկար և ցավագին անեծք և նզովք կարդացեր է Խաչատուրին, որ հանդգներ է յուր կենդանությամբ կաթողիկոս ձեռնադրվել։ Պետրոս կաթողիկոս լսելով, թե առանց յուր կամաց և հաճության Խաչատուր Վարագա սուրբ շաբաթ օր պիտի ձեռնադրվի, փոքր նավակ բերելով կաճապարե 'ի կղզին երթալ։ Խաչատուր, Հակոբ, Եղիազար և Սարգիս եպիսկոպոսք դրսի տուն պատրաստի լինելով նավակ ուրիշ կողմ կփախցունեն. խեղճ Պյուլպյուլն կտիպվի մի ասպարեզ հեռի այգիի գլուխ մեծ նավին մոտ երթալ, կհասնի և հիվանդ գոլով, մահտեսի նավավարի շալակն ելնելով նավի սանդուղի վրայեն դեպ 'ի նավ կտարվի, որպեսզի ներս երթա և արդեն Խաչատուրի հայրադավ խորհուրդ։ Հիշյալ չորս եպիսկոպոսք, անմիջա-

պես հանեն հասնելով նավավար մահտեսի Աբրահամին սաստիկ հայհոյանք կսպառնան և կհրամայեն, որ խեղճ կաթողիկոս դուրս բերե և ավազի վրա ձգե, նավավար առ ահի կդարձունե և ավազի վերա կձգե կիսամեռ, վասնզի տեսնալով, թե յուրմե ձեռնադրյալ շորս եպիսկոպոսք ոչ միայն կարգելուն ներս երթալ, այլ կանարգեն, կանգոսեն և բանս հայհոյանոց կտեղան յուրյանց անկարեկից հոր վերա, կթալկանա և կիսամեռ կլինի. հիշյալ շորս անգութ կղերք, թող տալով զյարյանց ձեռնադրող հայր ավազի վերա, ինքյանք և յուրայինք քանի անձինք նավ մտնալով 'ի ներքս կփութան և մյուս օր զեպիսկոպոսուն կաթողիկոս կօծեն, խեղճ երկու օր երկու գիշեր ավազի վերա կմնա, որպեսզի ներսեն հայելով և տեսնալով կարեկից լինին եպիսկոպոսունք և աթոռ իր կենդանութենե չհափշտակեն, բայց ի զուր։

Երկրորդ օր խեղճի սրտի կսկիծեն կսկսի բերնեն և քթեն գունդագունդ արյուն հոսել, այս միջոցին կհայի դեպ 'ի երկինք և դեպ Աղթամարա կղզին և ցավագին կերպիվ նզովք և անեծք կկարդա Խաչատուրին և նորա կամակից եպիսկոպոսաց, թե «դու զիս որ իմ կենդանությամբ աթոռես զրկեցիր զրկյալ լինիս քո աստիճանեն և չվայելես այդ աթոռ»։ Նահատակյալ կաթողիկոսին առընթեր կացյալ Փշավանից տեր Խաչատուր և նորա սպասավորք ականջալուր են և կվկայեին այսմ բանի։ Երեք շաբաթ հաղիվ կանցանի, Ղազար, Սարգիս եպիսկոպոսաց, Ավետիք վարդապետի լեզուներ բերաններու մեջ կուռնեա, թղաչափ կկախվի և հոգիեն երեք ավուր մեջ հիշյալներ անբարբառ և անշունչ ընկնելով 'ի գերեզման կտանի, Խաչատուր աթոռեն կզրկվի, Խիզանցին փողտանկի պատիժ կընդունի, Հուստանո մահտեսի Հովհաննես և ուրիշ քանի աշխարհական մարդիկ կմեռանին ետ ոչ բաղում ավուրց։

Գալով 'ի կարգ պատմության կաթողիկոս երկու օր ավազի վրա մնալով, յուր մտերմաց բուռն թախանձանքեն ստիպյալ հետե 'ի Փշավանք կերթա, դրամի և այլ պատրաստություն կտեսնար առավոտ Վանա քաղաքն երթալու և բողոք հասցնելո ազգային վարչության, գիշեր Դեվրիշ պեյի որդին Կուլիխան և Խաչատուրի սպասավոր Դեվրիշ երկու գնդակ գնելով հրացանի մեջ կսպանանեն զկաթողիկոսն։

Աղթամարա միջի մարդիկներե մին, որո անուն Գրիգոր կը կոչի, պարագա մի կհայտնե, որ զարմանք և սարսափ կբերե մարդուս։ Դեվրիշ պեյ շորս եպիսկոպոսաց հետ ներս մտած էր, 3 օր շարունակ ալեկոծություն եղավ այն գիշեր, որ կաթողիկոս սպաներ էին, Խաչատուր և յուր խորհրդակիցք խորհեցան 'ի միասին թե նավ խրկելու եմք, որ սպանյալ կաթողիկոսի մարմին բերե, գիշերույն թաղեմք և

համբավեմք, թե յուր մահամբ մեռած է, երեք անգամ այս խորհրդյամբ նավ 'ի ծովն հանեն, բայց սաստիկ ալեկոծության աղագավ չկրցան նավել։ Երեք օր ոչ ներսեն դուրս և ոչ դուրսեն ներս նավ նավակ և մարդ եկած չէր, ուստի՞ գիտեին, թե կաթողիկոս այն գիշեր սպանված է, մարգարե էին, մարգարեն չի խորհիր սպանելույն մարմին բերել թաղել և համբավել աշխարհի, թե հիվանդ էր նա և յուր մահվամբ մեռավ, ով լսեց և տեսավ այսչափ ժամանակի մեջ, թե բարձրաստիճան եկեղեցականիմ՝ մարմին գիշերույն թաղվի և մարդ չտեսնա, ահա այս նենգություն Խաչատուրի և յուրայնոցն հայտնի կլինի։

Նահատակյալ կաթողիկոսի սպանման լուր Խաչատուր լսելով, անմիջապես նորա սենյակ կբռնե կկողոպտե դրամներ և այլ կահկարասիք, հետո դուրս նավելով ուրախությամբ և կաթողիկոսական շքով կդիմե 'ի Փշավանք և հրամայե, որ փշավանցի Հակոբ վարդապետ Խշտանգին, սպանելույն եղբորորդի Խաչատուրն կոչելով սպառնալյոք կհամոզե, որ քրտաց սպանության սճիր գոցելո համար ինքն ասե, թե իմ հորեղբայրս ես՝ սպանեցի, սպանելույն սպասավոր, որ տեսած էր անճրագործներ և ճանչեր զանոնք հանկանե հանվանե և որ այժմ կենդանի և Անգղա Աստվածածնի վանք հովիվ է և Խաչատուրի սպանության կամակից և խորհրդակից լինելն կստուգե և կվկայե, ինչպես վկայեց մեր և Հովսեփ եպիսկոպոսի ներկայությամբ, զսա սաստիկ գանակոծել կուտա Դեվրիշ պեյի ձեռոք, որ կաթողիկոս սպանողի՝ Կուլիխանի հայրն է, կստիպե ասել, թե կաթողիկոսի եղբորորդին սպանեց, խեղճ քուրտ կաղաղակե, թե նա անպարտ է, սպանության սճիր այլք գործեցին, բայց Խաչատուր բոլոր զորությամբ և խորամանկությամբ կջանա կաշխատի և կսպառնա, որ բնավ Կուլիխանի և յուր սպասավոր Դեվրիշի անուն չի տան։

Մինչդեռ ինքն սպանողք կճանաչե հանկանե և հանվանե կջանա անպարտ մարդիկ իբրև ոճրագործ ցույց տալ աշխարհի, կաթողիկոսի եղբորորդին հարվածոց ներքև կիսամահ ընելով նորա դրամներ կպահանջե, կաթողիկոսի եղբոր կին տեսնալով, թե յուր որդին մահվանե ազատելիք չունի, սպանելոյն բոլոր դրամներ կգտնա կբերե կհանձնե Խաչատուրին (որո գումարն ըստ վկայության սպանյալի մտերմոց 100.000 ղուրուշի կհասնի), զորս խոշտանգանոք և բռնությամբ ձեռք կբերե, ըստ վկայությամբ Նարեկա Հովսեփ վարդապետին 300.000, իսկ Աղթամարա կղզի միջի սենեկեն կհանե և քանի վարդապետաց և իշխանաց ձեռոք արկղի մեջ դնել և կնքել կուտա և քանի օրեն գինի

սնուցվի տակի տախտակներ փրցունելով դրամներ դուրս կհանեի և մեկ քարտիցա[106] լեցունելով դրամներ ամբողջ կյուրացնեի։

Ըստ վկայության հավատարիմ գյուղացվոց ոմանց՝ 100.000 ղուրուշ դրամ, որ նահատակյալն փոխանակ է եղեր գյուղական կարոտ ժողովրդոց, զորս դարձյալ Խաչատուր եպիսկոպոս Վանա առաջնորդարանի մեջ նստած միջոցին հավաքեր և յուրացուցեր է, որոց ամբողջ գումարն կընե 500.000 ղուրուշ։

Ապա սպանելույն մարմին դուրս հանել տալով ձգել կուտա աղբյուրի վերա և կհրամայե, որ տանին գյուղի գերեզմանատուն իբրև աշխարհական թաղեն։ Աղթամարա միաբան Մխիթար վարդապետ, որ վաթք հետո պիտի գրեմք, հոն հանդիպելով իբրև խաչահան հրեաներեն ավելի կատաղությամբ սպանելույն մարմին կանարգե, կհայհոյե և թուք արձակելով նահատակելույն մարմնո վերա՝ անզգամության հեղինակ կլինի։ Հոն ներկա եղող տաճիկներ և քրտեր տեսնելով, թե Խաչատուր խիզանցի Հակոբ եպիսկոպոս և Մխիթար վարդապետ առակ նշավակի կընեն հանգուցելույն մարմին, անգոսնելոն կասին՝ ամոթ ձեզ, ամոթ, վերցուցեք ձեր կաթողիկոսի մարմին և պատվով թաղել տվեք. այլազգաց այս գովելի խոսքեն նահատակելույն բարեկամք և մտերիմք համարձակություն առնելով կխնդրեն, որ ներս տարվի մարմին և պատվով 'ի շարս կաթողիկոսաց թաղվի։ Խաչատուր ակամա կամոք կհրամայե ներս տանել, բայց պատվիրելով կպատվիրե, որ քահանայական օծումն և թաղումն չի տան, ուստի ներսի լուսարար Հովսեփ եպիսկոպոս միայնակ անշուք կերպիվ կթաղե։

Հետո Խաչատուր Աղթամարա դրսի տուն կբազմի, քանի օրեն զկնի Պետրոս կաթողիկոս սպանող Կուլիխան համարձակությամբ գուկա կմտնա Խաչատուր եպիսկոպոսի սենյակ, սա յուր կամակատար մտերիմն տեսնելով կհրամայե, որ սենեկի մարդիկ դուրս ելնին, բոլոր մարդիկ կհեռանան, սակայն մի հետաքրքիր մարդ, սենեկի դրան վերա ունկն գնելով, երկուքի միջի խոսակցություն մտիկ կընե։ Կհարցանե Խաչատուր, թե պեր նե տեսնեմ, թե ինչ հաջողակ եղանակավ և ինչ պատեհ միջոցի մեջ սպանեցիք այդ անպիտան մարդ, Կուլիխան կպատասխանե, թե ձեր բախտ հաջողցուց մեզ, որ շատ հնարագետ կերպիվ զնա մեկ հրացանի հարվածով զայն ձեր թշնամին սպանեցինք։ Խաչատուր սաստիկ կուրախանա, կգովե նորա մտերմություն և հավատարմություն և 'ի նշան շնորհակալության և ուրախութենե Կուլիխանի երես կհամբուրե և կասե, թե բնավ կասկած չընես, ես մինչև ցմահ զքեզ կպաշտպանեմ, կաշխատիմ և բոլոր դրամներս կվատնեմ, որ բնավ

քո ոճրագործություն մեկիմ չհայտնվի, արդեն քո հայր վարձատրեցի, զքեզ ես մեծի վարձատրության և պաշտոնի կարժանացնեմ և այսպես, 3—4 ժամ իրարու հետ ուրախանալով, խոսակցելով եղեռնագործն կկանգնի և յուր տեղ կերթա։

Քան օրեն զկնի Խաչատուր և խիզանցի Հակոբ եպիսկոպոս քաղաք կտարվին, կառավարության ատենի մեջ կհարցաքննվին, ասա Հակոբ եպիսկոպոս փոխանակ բողոքելո յուր հոր սպանողաց դեմ, կսկսի նահատակյալ կաթողիկոսի վարուց դեմ սաստիկ և անհավատալի ամբաստանությամբ բողոքել և զայն մահու արժանի կցուցնե օտարազգաց առաջ, առանց ամաչելո և պատկառելո կխոսի, թե սպանյալն ոչ միայն հայոց, այլև տաճկաց և քրտաց կանայք և աղջկունք, յուր մոլեգին կրից զոհ կըներ և մեր խրատին չէր անսար, մեր օրենք այսպիսի եկեղեցական մահվան արժանի կդատե։ Մինթե դուք մահու արժանի չեք համարեր այսպիսի մարդ մի։ Այն ժամանակի դենպետ կպատասխանի Հակոբ եպիսկոպոսին, թե եթե դուք գիտեիք այդպես լինել, դարձյալ պետք չէր, որ այսպիսի կերպիվ սպանել տայիք, այլ պետք էր ներս տանեիք, ծածուկ թունավորելով ձեր խայտառակություն ձեր մեջ ծածկեիք, այժմ դուք բոլորովին հանցավոր եք և սպանության խորհրդակից...։ Արդեն այս մասին Հովսեփ վարդապետ վանահայր Նարեկա վանից տեղեկագրած[107] է, ուստի հարկ չկա երկարորեն գրել։

Ապտուլահ փաշան ետ երկար և մանրամասն քննության երկիցս կտեղեկագրե բարձր դուռ, թե Պետրոս կաթողիկոսի սպանումն Խաչատուրի և յուրայնոց թելադրությամբ կատարված է, ուստի կկալանավորե 'ի առաջնորդարան Վանա, մինչդեռ ազգային վարչություն իրաց եղելություն հետզհետ բողոքարկու մարդկանց հանրագրություններին ստուգելով, զԽաչատուրն համագումարի մեջ անվավեր կվճռե և կհրատարակե և հետո 'ի Պոլիս կտանե արժանավոր պատիժ տնօրինելո, սակայն նա յուր արեգակնային բազմաթիվ փոքրիկ բոլորակներով, բազմաթիվ մեծամեծ մարդիկ 'ի սառն վրեժխնդրութենեն կփոխանակի 'ի մեղմ պաշտպանություն անձին յուր և գործոց և պատվով կբազմի ազգային պատրիարքարանի մեջ և պետք եղած հայտնի և դաղտնի պաշտպանություն կվայելի մինչև ցայսօր ժամանակի և մինչև կրկին կաթողիկոս հաստատվելո կետին կմերձենա դարուս կարծեցյալ լուսավորության շնորհիվ, որ փոխանակ Արգոսի[108] աչոք հայելո Խաչատուրի անարդարանալի գործոց վերա, կամավ կուզե կուրանալ, չտեսնալ նորա գործեր և դարուս ազգային պատմության մեջ սև բծերով յուր արժանապատվություն սպանանել ապագա սերնդոց առջև։

Երբ ազգիմ՝ մեջ օրենք, իրավունք, արդարություն և դատաստանք ճշտիվ 'ի գործ չեն դրվիր, երբ ազգի մը մեջ անձնական շահեր ընդհանուր ազգային շահերեն գերադաս կհամարվին, երբ կարեկցության և գթության պատրվակավ մեղապարտներ կպաշտպանվին, տարակույս չկա, թե Խաչատուրի նման ծանր հանցավորներ որևիցե եղանակավ կարդարանան գանձյուք, որո գումարոց որքանություն ըստ վկայության, ականատես և արժանահավատ անձանց վկայությամբ, հայտնի կլինի հետագա հաշվեցուցակեն, զորս Խաչատուր եպիսկոպոս առատորեն բաշխած է արժանավորաց և անարժանից, որպեսզի սոքոք զինքն սպանման կամակցությենեն անպատիժ կացուցանեն և անիրավ մամոնայով[109] պաշտպանելով զնա յուր ինքնընթեր կաթողիկոսության մեջ հաստատեն և ճշմարտություն ծածկելով երևան չհանեն։

50000 ղուրուշ Կարնո գերպայծառ Հարություն արքեպիսկոպոսին և հետի ոպասավորաց, որ հանգուցյալ նախկին Պողոս պատրիարքի հրամանավ 1864 թվականին քննիչ՝ խրկված Աղթամար՝ սպանության պարագաներ քննել և տեղեկագրել ազգային վարչության։ Այսքան ոսկո երկար շղթաներ նորա աջ բազուկ կաշկանդեց, ուստի ձախովն փութաց սպանելուն վարք ըստ ամբաստանության Խաչատուրին և Հակոբին երկարորեն գրել և վարչություն առաքել, ցուցանելով, թե սպանյալն ըստ յուր ապիրատության պատուհասակոծ [է] եղեր, ինչ եղանակավ որ եղած է իբրև թե այդպիսի մարդ մի արդարության 'ի գործ դրած են, քան թե անարդարության, ինչպես իշխանք աշխարհի ծանր հանցավորներ մահվան կդատապարտեն։ Հարություն և Իգնատիոս եպիսկոպոսց տեղեկագիր սոյն եղրակացություն առաջ բերելեն բնավ տարբերություն չունին։

50.000 ղուրուշ հանգուցյալ Պողոս պատրիարքին Վանա վաճառականաց ձեռոք, հիշյալ երանելի ծերունին նախ իբրև արդարասեր դատավոր մի բողոքելով համագումարի մեջ զԽաչատուր եպիսկոպոսն անվավեր վճռել տուլ[ավ], իսկ հետ գումարն ընդունելո ջանաց եպիսկոպոսն և ընդհանուր ժողովո մեջ զայն պաշտպանել և արդարացուցանել, սակայն չհաջողեցավ։

40.000 ղուրուշ Վանա նախկին առաջնորդ Իգնատիոս եպիսկոպոսին Խաչատուրի ձեռոք, զի Իգնատիոս Վանա քանի երևելյաց հետ թա Խաչատուրի կաթողիկոսանալուն խորհրդակից էր և թե Հարություն եպիսկոպոսի հետ քննիչ կարգված լինելով, զայն արդարացնելո ջանացեր էր և թե Վանա առաջնորդարանի մեջ նորա պահապան և պաշտպան էր սոյն հյուրընկալության միջոցին 'ի վարձ յուրո պաշտպանության ընդունեց վերոհիշյալ գումարն, որով յուր պարտքեր վճարեց։

40.000 Իսահակյան Մարտիրոս պեյ փոք դրամի անունով Խաչատուրեն ընդունեց 'ի Կարին գնաց Խաչատուրին հաջողություն ձեռք բերելո, խեղճ պեյ կաթվածահար մեռավ և դրամներ մեջ խաղալով այլևս տիրոջ չվերադարձավ։

30.000 ղուրուշ Գալբբ պեյին և Հագի էֆենտիին Խաչատուրի և Հակոբի ձեռոք, երբ հիշյալ պեյեր պաշտոնապես 'ի Փշավանք գնացին՝ Պետրոսի անպարտ սպանման պարագայք քննելո և Խաչատուրի կամակից լինել երևան հանելո, հիշյալ պատվավոր այլազգիք հիշյալ գումար յուրյանց իբրև վարձք համարելով արդարություն գոնե կիսով չափ գրեցին և բերին Վանա կառավարության ատյան թե առանց Խաչատուր եպիսկոպոսի կամակցության կարելի չէ, որպեսզի ոճրագործ մի 'ի գլուխ հանել նորա օծմանեն երեք օր զկնի։

90.000 ղուրուշ բախվանցի մահտեսի Պետրոսի ձեռոք հասած է Խաչատուր եպիսկոպոսի կողմանե, որպեսզի յուր աշխատության վարձք հիշյալ գումարեն հանելով, մյուսն ավելի կտորներ գործակատար մարդկանց բաժանե և հորդորե զիրենք, որ զԽաչատուրն պաշտպանեն և արդարացուցանեն ազգային ժողովոց մեջ։ Հիշյալ մահտեսի Պետրոս 9 տարի անվավեր կաթողիկոսին թե փոխանորդություն, թե փաստաբանություն թե գործակատարություն և թե պաշտպանություն ընելով, 'ի հարկե մեծի վարձուց արժանավոր է։

8000 ղուրուշ Խաչատուրի կողմանե Վանա բդեշխին կըտրվի, որպեսզի իրեն քանօր հրաման տա առաջնորդարանի արգելանեն ելնել, Աղթամար երթալ և վերադառնալ։ Հրաման ընդունելով կերթա 3 ամիս աթոռ կկենա Աղթամարա միաբաններեն և գյուղացիներեն ոմանք կստուգեն, թե այս եռամսյա սուղ միջոցին Խաչատուր իբրև կաթողիկոս 50.000 ղուրուշ դրամ հավաքեր է խեղճ քահանաներեն, չհասնելերեն և նվերի անունով զժողովուրդն կեղեքելեն։

90.000 ղուրուշ Խաչատուր եպիսկոպոս իբրև բաժանորդ Վանա Շարան և Կալոյան Գևորգ պեյերուն տալով Ոշտունյաց Նոր գեղի մեջ խան մի շիներ է, այժմ խան ամբողջ երկու իշխանաց ձեռն է, Աղթամարա միաբանք այժմ կվկայեն, թե զի թե Խաչատուր կաթողիկոս վերահաստատվի իշխանաց պաշտպանությամբ, խան ամբողջ անոնց կմնա, իսկ եթե չհաստատվի, 'ի հարկե յուր դրամներ կպահանջե և այլն։

30.000 ղուրուշ արդեն Պոլիս տարաձայնություն մի կար, թե այսչափ գումար տրված է քեսատար Հարությունին, որ առաջ իբրև խիստ

արդարասեր ոք Պետրոսի սպանության վրեժխնդիր լինելով կբողոքեր ստեպ առ վարչություն և խնդրեր, որ փութով զԽաչատուր եպիսկոպոսն պատուհասեն, սակայն, ընդհակառակն, բարեկամ և պաշտպան դարձավ։

1200 ղուրուշ տասն հատ հարյուրանոց ոսկի և մեկ թոփ կաշի Խաչատուր եպիսկոպոսի գործակատարաց ձեռք խաս գյուղի տեր Երեմիային կխրկվի, տարող անձն տեսնալով, թե կաշառք կերևի, քահանայն հոգին պիտի կորուսանե, յուր երիտասարդ հոգին կորուսանելով 10 ոսկին դրպան կդնե և մի թոփ կաշին տեր պապային կհանձնե, իբր մեծ գործակատար կասկածի երթալով նամակավ մի կհարցանե տեր պապային, թե արդյոք խրկվածն ամբողջ ձեռք հասած է, թե ոչ, նա կպատասխանե արդարությամբ, թե միթե կարելի է ինձ մի թոփ կաշիով սուտ խոսել և մեղապարտ անձ մի պաշտպանել, հայնժամ կիմանան, թե տարող 10 ոսկին դրպան դրեր է։

100.000 ղուրուշ այս գումար Խաչատուրի ձեռք այլևայլ ծանոթ և անծանոթ մարդկանց տրված է, 1000-ով, 10.000-ով, 20.000-ով, որոց անուն ինքն լավապես կճանաչե և թե ինչ նպատակավ տրված է, նա ինքն քաջ գիտե։ Այս գումարի մեջ չեն լրագրաց, խմբագրաց և այլ զանազան փաստաբանաց տված ոսկիներ, որոց հաշիվն, եթե ազգային արդարադատ ատյան ուզե, կրնա իրմեն պահանջել և բոլոր մանրամասն մախանաց հասու լինիլ։

529200 ղուրուշ (հինգ հարյուր քսան և ինն հազար երկու հարյուր ղուրուշ)։

Այսպես ահա կույր փառասիրությամբ մոլյալ հոգիք ոչ միայն յուրյանց հոգիք կկորուսանեն, այլ և բազում անմեղաց հոգիք անիրավ մամոնայիվ 'ի կորուստ հավիտենից կառաքեն, զի ասե ոմն 'ի սրբոց «Կաշառն ոչ միայն ավողաց հոգիսն, այլ առողաց հոգիսն ևս կորուսանե»։

Խաչատուրի փառասիրությամբ զոհվեցավ Պետրոս կաթողիկոսի կյանք, նորա փառասիրության զոհեցան այսքան անձանց արդարությունք, արդյո՞ք քանի-քանի անձինք չարչարվելով մահացան, քանի-քանի սրտեր վշտացան, քանի-քանի հավատավոր անձինք թերի հավատացան, որչափ դրամական կորուստ վանուցն Աղթամարա, որչափ գայթակղություն և խռովություն պարզամիտ և միամիտ ժողովրդյան մեջ, որչափ տաղտուկ, ձանձրույթ, շփոթ և վեճ ազգային կառավարության մեջ, այս և քան զայս առավել եղև և կլինի տակավին, ոչ այլ ինչ իրաց համար, այլ միայն, զի Խաչատուր եպիսկոպոս յուր հոր կենդանությամբ, առանց ազգի հաճության և ընտրության հանդգնեցավ ինքզինք կաթողիկոս ձեռնադրել ապալ քանի տպետ և անհեռատես եպիսկոպոսաց ձեռք և լինիլ քար գայթակղության և առիթ կորստյան բազմաց, եթե նա զանազան հնարյուք փութա վերոգրյալ ծանր-ծանր հանցանքնեթ յուր անձեն քերել, միթե ինքնընտիր հանդգնություն փոքր հանցանք է օրինավորության արդարության և ազգային պատմության առաջ, քանի պատիկ սորա հանցանք Սսո Նիկողայոսեն[110] ծանրագույն է, է՞ր վասն նա պատժվեցավ և աքսորի դատապարտվեցավ, է՞ր վասն այս մարդ տակավին անպատիժ մնաց, խղճիս ձայնեն բռնադատյալ կհամարձակիմ ասել, եթե վարչություն այս մարդ արդարացուցանե այս դարուս մեջ, իրեն դեմ ոչ միայն նահատակյալ Պյուլպյուլ կաթողիկոսի ոսկորներ և արյուն պիտի բողոքեն, այլ Նիկողայոս եպիսկոպոսի դատապարտություն իրենց դատախազ պիտի կենա թե այս աշխարհիս մեջ և թե հանդերձյալ կենաց մեջ։

2. Հետ Խաչատուր եպիսկոպոսեն երկրորդ է խիզանցի Հակոբ եպիսկոպոս, որ այժմ Աղթամարա տեղապահության պաշտոն կվարե։ Սա երբեմն կրոնավորական սքեմի ներքև յուր խորամանկություն ծածկելով, Լիմ սուրբ անապատեն Աղթամար գնաց, կեղծավորելով Պյուլպյուլեն եպիսկոպոս ձեռնադրվեցավ, հետո յուր բարերար հայրն անգոսնելով Խաչատուր եպիսկոպոսին հարեցավ, հորդոր կամակից և խորհրդակից ելավ նմա, Պյուլպյուլն գահավեժ առնելով հանդգնեցավ առանց ազգի գիտության ձեռք Խաչատուրի վերա դնել և օծել, Պետրոս կաթողիկոս բարոյապես և անձնապես կարսնելը մասին գործակից գտնվեցավ Խաչատուրին, Վանա կառավարության ատենի մեջ գնահատակյալն մժղնության ամենածանր հանցանոք ամբաստանեց զապօրինի և զանազորույն գործս Խաչատուրին պաշտպանեց, 'ի Պոլիս դիմեց մի վարդապետով և բազում դրամով զՊոլոս պատրիարքն կաշառեց և բերան փոխեց, Աղթամարա ժողովուրդն, որք լի զայրացմամբ Խաչատուրեն Պետրոսի անպարտ արյուն կխնդրեին և բողոքեին այլևայլ միջոցներով, անհիմն ստախոսությամբ նոցա բերան այլ ոմն լեզու դնելով զԽաչատուրն պաշտպանելը հնարք գտավ։ Խոսեցավ առ ժողովուրդն, թե եթե դուք զԽաչատուրն վավերացնել չտաք, ազգ Խաչատուրի ծանր հանցանք պատճառ բռնելով Աղթամարա կաթողիկոսություն իրապառ պիտի բառնա, այս կերպիվ բավական մարդիկ յուր կողմ որսալով՝ սկսավ այլ և այլ տեղեր շրջելով նահատակելուն վերա անպատմելի բծավորությունք դնելով նորա մարմին գերեզմանի և հոգին գժոխոց արժանավոր քարոզեց և տակավին այսօր զնոյն կքարոզե ամե-

նուն, ապա հաջողեցավ տեղապահության պաշտոն առնուլ և վերադառնալ 'ի Աղթամար։

Ահա այժմ յոթն տարի է, որ իբրև ներքին խորհրդական և հլու կամակատար Խաչատուր եպիսկոպոսին, պաշտոն կվարե և բոլոր ներքին և արտաքին զորությամբ կաշխատի զԽաչատուրն զերծուցանել 'ի դատապարտութենե, այս մասին զտիվ և զգիշեր անդադար կտքնի, ամեն օր նորանոր ստեր հորինելով կտարածե ժողովրդյան մեջ, որոց շատերու կնիք յուր քով 'ի պատրաստի ունելով ուզած միջոցին հանրագրություն կշինե, կխրկե վարչություն, քանզի շատեր վկայեցին, թե յուրյանց կնիք Հակոբ եպիսկոպոսի քովն է, ժողովեր և այս քանի տարի է, որ ուզած կերպիվ կգործածե, նարեկցի Պեյլոն երդմամբ հաստատեց՝ անգամ կնիք փորագրել տված եմ, յոթն կնիք Հակոբ եպիսկոպոս ուզելով տարեր և հետ չէ դարձուցեր։ Այսպես, Մոգաց, Շատախու, Հայոց Ձորս և Ռշտունյաց գավառի տանուտերաց և շատ հասարակ ժողովրդոց կնիք այժմ Աղթամարա Հակոբ եպիսկոպոսի կրպանի մեջ է, ուզե՝ շաբաթ յոթ անգամ հանրագրություն կրնա խրկել առ վարչություն։

Աղթամարա ժողովուրդն այս և ասոր նման ծայրահեղ պարզամտություն ուշադրություն առնելո է, խեղճեր ոչ կնիք գործածելո կերպ գիտեն և ոչ կրնան զուշակել, թե ինչ վտանգավոր է կնիքներ այդպես խարդախ և խորամանկ մարդկանց ձեռք հանձնել տարիներով և երբեք չհարցանել, թե յուրյանց անունով և կնիքով ինչ ազգավնաս գործեր հառաջ կմղվին, թե Հակոբ եպիսկոպոս և թե սորա նման մարդիկ շատ անգամ գավառաց մեջ հարյուրավոր անձանց անունով կնիքներ փորագրել կուտան և քովերնին կպահեն և երբ ուզեն, հանրագրություն կհորինեն, կխրկեն 'ի Պոլիս՝ զվարչություն խաբելո, հրաշագործ Մկրտիչ եպիսկոպոս[111], Խարբերդու Պետրոս եպիսկոպոս, Ուչքիլիսայի Հովհաննես վարդապետ այս միջոց 'ի գործ դնելով շատ շինծու հանրագրությունք խրկած են 'ի պատրիարքարան յուրյանց պաշտպանության և անձնագովության համար։

Բաց 'ի հոգևորականաց, կան տակավին շատ բռնակալ իշխանավորք, որք մինչև այսօր կեղծ և շինծու կնիքներով հանրագրությունք պատրաստելով կխրկեն առ վարչություն, ուստի կառաջարկեմ, որ 'ի գավառաց հղված հանրագրությունից վերա լավ ուշադրություն դարձուցեն և մեկեն 'ի մեկ հավատալու և կարևորություն տալու չեն, քանզի տակավին մեր ժողովրդյան խիստ մեծագույն մասն ոչ միայն սնոտի երկյուղներով պաշարված է, այլ տակավին հետին ռամկության մեջ լինելով յուրյան ստորագրության հարդ և պատիվ չի ճանաչեր, բավական է, որ մի ազդեցության տեր թե հոգևորական և թե աշխարհական մարդ կամենա և հրամայե, այլևս ոչ կամքն, ոչ կնիք, կնոջ պատիվն իրեն չէ, այլ իբրև մեքենա կխորհի շարժողին և հրամայողին առաջ, վասնզի դեռ ազատ կամքով կամենալո, խոսելո և գործելո զորություն և ազատություն չունի։

Իբրև ակամա կստիպվիմ հիշատակել տեղս, թե գավառացի հայերեն ոմանք տաճկերեն դպրության, տերության օրինաց անտեղյակ գոլով բաղմկոս այնպիսի մազմաթաներ[112] կկնքեն, որ թե տերության և թե մեր բուն ազգայնոց և ազգության վնասակար է, այսպիսյաց մեջ գտնված են և դուցե այսօր գտնվին ոմանք, որ հիմարաբար յուրյանց կնիք հանձնեն այլազգյաց կնքել, ինչ որ նոցա կամքն է...։ Աղթամարա վիճակի հայերեն շատեր ոչ միայն տաճկերեն դպրության, այլ լեզուն խոսելո ևս անտեղյակ են, ուստի ժողովքի մեջ նստելով երբեմն կամավ երբեմն ակամա կսխալին, այսպիսի դիպաց կհանդիպին ուրիշ ռամիկ գավառաց հայեր, թեև մայրաքաղաքաց ժողովականք բոլորովին անբասիր չեն այսպիսի վրիպմանաց...։

Խաչատուրի արբանյակ խիղանցին արդեն ժողովրդյան տգիտություն և ռամկություն օժանդակ առնելով այն սոսկալի ոճրագործությունն մեծ զեր խաղացին ազգի մեջ, ուստի երկուքն 'ի միասին մասնավոր բաղձանք ունին զժողովուրդն կուրության և տգիտության մեջ պահելո, որպեսզի միշտ յուրյանց կամաց և կրից ծառայեցնեն և յուրյանց ազգավնաս արարք նոցա տեսութենեն ծածկելով ծածկեն։

Ազգային վարչութենեն ստեպ-ստեպ հրահանգներ կխրկվին առ խիղանցին՝ Աղթամարա վիճակի մեջ սահմանադրություն գործադրել և դպրոցաց թիվ խրկել, սակայն նա 'ի բնե սահմանադրության հակառակ երբեք չի հոժարիր գործադրությունն ձեռնարկել, նա դպրոց չունի հաստատած վիճակի մեջ, որո թիվն հաղորդե կեդրոնին։ Ապրիլ ամսո մեջ հիշյալ խիղանցի եպիսկոպոս Վանա առաջնորդարան տեսնալով՝ ստիպեցինք զինքն, որ ազգային հրահանգներ փութա գործադրել, որպեսզի մեք չստիպվինք երթալ այդ վիճակ սահմանադրություն գործադրել, սակայն ինքն հայտնեց, թե առանց մեր երթալուն ինքնին ոչ գործադրելո եղանակ գիտե և ոչ ձեռնարկելո միջոց, զայս ասելով հրավիրեց զմեզ երթալո և խոստացավ վիճակի մեջ սահմանադրություն գործադրելո միջոցին մեզ անձամբ ընկերանալ և օժանդակել։ Հուլիս ամսո սկիզբներ հազիվ հիվանդությունե ապաքինություն գտնալով մտանք Աղթամարա վիճակ, քանի վանիք ստորագրելով, հրահանգներ տալով և հաշիվներ առնելով հուլիս ամսո 5 հասանք Աղթամարա դրսի տուն 'ի

Սկսվանք, աստանոր անկեղծությամբ մեղադրեցինք զհիշյալ տեղապահն՝ ասելով առ նա, զի եթե դուք վարչության հրահանգներ և հրամաններ ցարդ գործադրեիք, զմեզ դժվարին գործե մը և ճանապարհորդութենե մը ազատ կկացուցանեիք։

Բռնի 3 օր դրսի տուն կենալով պարապեցանք միաբան վարդապետներեն, Զարհան սուրբ Նշանի վանահայր տեր Սարգիս քահանայեն, իբրև եկող գավառացի հայերեն և նույնիսկ Հակոբ եպիսկոպոսեն հայոց հարստահարիչ բռնավորաց մանրամասն տեղեկություն հավաքել և գրի առնուլ, զորոց անուանս և զգործս հետո 'ի կարգին կստորագրիմք։

Մինչդեռ մեք այսպես երեք օր առանց վանքի բարեկարգության և սահմանադրության գործադրության ձեռնամուխ լինելո ամենայն ուրախությամբ կենակցեցինք, ներսեն հուլիս 8-են հանկարծ լուր բերին Հակոբ եպիսկոպոսին, թե լուսարար Մամբրե վարդապետ, ըստ սովորության ծով լվացված միջոցին, քիչ 'ի խորն երթալով և լողալ չգիտնալով խեղդվեր է։ Հակոբ եպիսկոպոս մեր նստած սենյակ մտնալով հրամայեց, որ Հովսեփ եպիսկոպոս, Հակոբ, Ղազար, Խորեն և Պողոս վարդապետք և տիրացուք դուրս ելնին, զի գաղտնի բան ունիմ խոսելո Երեմիա եպիսկոպոսին, նոցա սենյակեն մեկնելեն զկնի, մերձեցավ հունկն իմ և ասե, Մամբրե վարդապետ ծով լողացած միջոցին խորն երթալով և արդեն լող չգիտնալուն համար խեղդվեր է, ինչպե՞ս ընենք. պատասխանեցի, թե պետք է անմիջապես կառավարության իմաց տալով քննիչ խնդրեք, լավ մի քննելեն զկնի, ապա թաղեք։ Նա ընդդիմացավ քննիչ բերելո պատճառելով, թե ծախքի կորստություն կունենա և դրամ կերթա, ուստի ասե՝ ես կհրամայեմ, որ երթան ծածուկ թաղեն, հետո կհամբավեմք, թե յուր մահվամբ մեռավ։ Այսպես խոսելուն համար սաստիկ կշտամբեցի զինքն՝ ասելով, թե դուք արդեն ձեր անվավեր կաթողիկոսով ծանր ամբաստանության ներքև եք Պյուլպյուլի սպանման մասին, կառավարություն արդեն ձեզ վերա կասկած ունի, դուք ծածուկ թաղելուն պես ձեր թշնամիք գործին ուրիշ կերպարանք տալով կրկին զձեզ իբրև մարդասպան եղեռնագործության ատյան կոչելով կդատապարտեն, ուստի անպատճառ կառավարության իմաց տալով քննիչ բերելո եք։ Եպիսկոպոս իբրև ակամայից բռնադատյալ նրստավ նամակ մի գրեց խանի մեջ նստող մեկ-երկու հայ վաճառականաց, թե այսպիսի դիպված մի պատահած է ներս, ծածուկ գայմագամին իմաց տվեք, բայց թող չտաք քննիչ խրկելո և մեզ ծախուց դուռ բռնալո, երբ գրած նամակ մեզ կարդաց և սպասավոր կոչեց թուղթ խան

խրկելո, կրկին ազդարարեցինք իրեն, թե այդ կերպ ավելի կասկած կհարուցանե ձեր վերա (այսինքն՝ իմացնելն և մարդ խրկելո արգել տալն) և ստիպեցինք զինքն, որ անպատճառ վարդապետ մի երթա, բերանացի դիպվածն գայմագամին պատմե և քննիչ մի առնելով հետ բերե, ապա զիջավ, կանչեց զՂազար վարդապետն, պատվիրեց, որ երթա գայմագամին գործ պատմե, սակայն քննիչ չբերե։ Դարձյալ մեք վարդապետին համոզեցինք, որ անպատճառ մարդ բերե քննելու։ Գնաց Ղազար վարդապետն հուլիս 8 երեկոյան ժամ տասին գայմագամի ատենադպիր, իբրև քննիչ հետ բերավ։

Տեղապահն իհարց ցՂազար վարդապետն թե՝ ո՞չ ապաքեն ասացի քեզ մարդ չբերել, ընդե՞ր բերիր, նա պատասխանեց, թե ձեր հրամանին համեմատ առաջարկեցի մարդ չխրկելո, սակայն գայմագամն պնդեց, թե տերության օրենք կպահանջե այդպիսի դիպվածական մահվամբ մեռածներ անպատճառ քննել և կեղրոնական կառավարության տեղեկություն տալ։

Երեկո Հակոբ եպիսկոպոս, քննիչ էֆենտին և միաբան վարդապետք պատրաստվեցան նավել 'ի ներս, եպիսկոպոսն և միաբանք 'ի մի բերան հանդերձ քննիչ էֆենտիով խնդրեցին մեզմե, որ մեք ևս իբրև քննիչ երթամք 'ի ներս, սակայն քանիցս հրաժարեցանք ներս երթալո, բայց հետո նոցա խիստ թախանձանքեն ստիպյալ ապա զիջանք վասն երկու պատճառի երթալ ա. որ 'ի ծննդենե Աղթամարա տաճար չէինք տեսեր, տեսնալ և ստորագրել, երկրորդ, որ Հակոբ եպիսկոպոս այն միջոցին սաստիկ թշնամի զոլով աթանանցի Մխիթար վարդապետին կուզեր զայն արատավորել, թե Մամբրեն նորա անզգամությանց և բամբասանաց չդիմանալով, զինքն ծովուն մեջ խեղդեր է, երբ սույն անաստված և անխիղճ խոսք դրսի տան մեջ հիշյալ եպիսկոպոսեն լսեցի, սաստիկ հանդիմանեցի զինքն, թե դու հայտնապես աստծո դեմ, խղճի դեմ և մարդկության դեմ կմեղանչես, երբ բազմաթիվ վկաներե լսեցիր և ստուգապես գիտես, թե Մամբրեն ուրախ զվարթ, ըստ բժշկաց պատվիրելուն և ըստ սովորության ծովն լվացվելո երթալով, պատահարար խեղդվեր է....։

Հուլիսի 8 գիշեր ժամ վեցին հաջողակ հողմ գտնալով Աղթամարա ներս մտանք, հասած միջոցեն մինչև առավոտ քննիչն սկսավ թե հրապարակավ և թե առանձին-առանձին մեն մի միաբաններեն հարցաքննություն առնել, ամենք միատեսակ և միաբերան վկայեցին, թե նա հիվանդություն ունենալով բժիշկներեն խորհուրդ ընդունած էր ամեն օր վասն առողջության ծովու մեջ լվացվել, արդեն 15 օր առաջ սկսյալ

ամեն օր սովորաբար կերթար կղզիի հյուսիսային կողմ ջրի հորի քով, ծովու մեջ լվացվիլ, որ ամենեն ապահով լվացվելու տեղն է, զի անկե ավելի ծով մտնալու ապահով տեղ բնավ չկա կղզիի մեջ, այն խեղդվելու օրն, որ է հուլիսի 8, կերթա հացի փուռ, հացեփողին կխոսի, թե երթամք 'ի միասին լողանամք, նա կպատասխանե, թե արդեն հաց եփելին չի ավարտեր, ուստի ինքն կերթա ծովուն եղերք, զգեստներ կհանե ծով կմտնա լվացվել, տեղ խիստ խոր և գահավեժ և լպրծուն քարերով լիք լինելով՝ խեղճի ոտք կսահի դեպ 'ի խորն և կընկղմի, ջրի երես կելնի, կաշխատի դեպ եղերք գալ և ազատիլ, բայց լող չգիտնալուն համար կրկին կընկղմի ջրի տակ և կսուզանի։

Մամբրե վարդապետի խորթ եղբայր նույն ծովեղերք գիտող բարձրավանդակ քարի մի վերա նստելով կկարդա եղեր, կտեսնա թե եղբոր ծովեղերն իջնալն, կտեսնա նորա զգեստ հանել և ջուր մտնալ և կտեսնա նորա առաջին ընկղմիլն, վեր ելնելն և ազատության համար աշխատիլն, բայց խեղճն իբրև ապուշն կկարծե, թե վարդապետն ջրի մեջ ուրախացած ձեռքերն արտաքո կարգի կշարժե, ուստի բնավ փույթ չըներ օգնության դիմել, երբ կրկին գրքե վրայեն աչք այն կողմ կդարձնե և եղբայր ոչ ջրի մեջ և ոչ եղերք չի տեսնա, իսկույն կփութա լվացվելու տեղ և կտեսնա զեղբոր մարմին ջրի ներքև, սաստիկ կսկիծեն կմոռնա յուր քաջ լողվորություն, որով անմիջապես կրնար ազատել զեղբայրն, սակայն հոն սակավ ինչ լալով և տնտնալով ապա իբր ուշաբերյալ կդիմե դեպ 'ի վանք՝ եղբոր անցքն իմացնելու, Մխիթար վարդապետն իմանալուն պես քանի մարդիկ կառնե կերթա և սաստիկ հայհոյանոք հաղիվ կհաջողի Մամբրեի եղբայր և ուրիշ լողորդ մի ջրի մեջ մտցունիլ և մարմին դուրս հանել։ Հանելեն զկնի կբերեն մերձակա ծառի ճյուղեն ոտքեն գլխիվայր կկախեն, ոտքին բավական ծեծ կուտան և կաշխատին, արդեն կես ժամ վրա անցանելով ապարդյուն կլինի Մխիթար վարդապետի հնարք և աշխատություն, եթե այս տեսակ կախելն և ծեծելն հնարք ազատության կրնա ըսվիլ երբեք։

Քննիչ էֆենտին յուր գործ ավարտելեն զկնի, երիցս հարցի իրմե ծանուցանել հրապարակավ յուր քննության արդյունք և ապա երթալ, նա պատասխանեց, թե ես մանրամասնաբար քննեցի թե Մամբրեի եղբորեն և թե բոլոր միաբաններեն, որ նա ըստ բժշկաց հրահանգին սովորակի ծով լողանալու երթալով խեղդված է, և ինչպես մեք վեր պարզեցինք, նա նույն պատմություն արդեն բոլորեն լսելով կրկնեց, Հակոբ եպիսկոպոս դրամի մասին մեր կարծիքն առնելով՝ Մամբրեի դրամեն 1 ոսկի տվավ քննիչին, որ հուլիս 9-ին մեկնեցավ կղզիեն։

Ապա միաբանք կարծիք հայտնեցին, թե արդյոք պետք է քահանայաթաղ տալ, թե ոչ, իսկույն պատասխանեց Հակոբ եպիսկոպոս, թե ըստ որում նա պատահաբար 'ի ծովն ընկղմած լինելով երբեք հուսահատությամբ զինքն ծով ձգած չէ. հետևաբար, քահանայաթաղի արժանի է, գնացեք պատվով քահանայաթաղ կատարելով օծեցեք և 'ի հանդիստ գերեզմանի ամփոփեցեք, ըստ հրամանի տեղապահին թաղման հանդես շքեղությամբ կատարվեցավ, սակայն միաբաններեն ոմանք հայտնեցին խիզանցին, թե դուք որ կհրամայեք 'ի ծով ընկղմելույն մարմին քահանայաթաղով ամփոփել 'ի շիրիմս սուրբ հարց, ապա ընդե՞ր միաբանելով ընդ Խաչատուր եպիսկոպոսին կհրամայեիք ձեր ձեռնադրող Պյուլպյուլ Պետրոս կաթողիկոսի մարմին քահանայաթաղի երբեք արժանի չընելով 'ի գերեզմանս աշխարհականաց թաղել, մինչդեռ նա արյան մեջ նահատակված էր և կաթողիկոս գոլով հայրապետաց աթոռ կբազմեր, ընդե՞ր նորա մարմին առանց շքեղ հանդեսի, առանց պատարագի և առանց օրինավոր քահանայաթաղի ամփոփել տվիք։ Առ այս իրավացի առարկության ամոթահար լռութենեն 'ի զատ տեղապահ բնավ պատասխան չտվավ հարցնողաց։

Թաղմանեն զկնի Հակոբ եպիսկոպոս և բոլոր միաբանք Հովսեփ եպիսկոպոսի սենյակ գումարվելով նոր լուսարարի ընտրություն առաջարկեցին։ Պատմության ճշմարտություն կստիպե զիս հայտնել աշխարհի, թե միաբանության կես արտաքո կարգի և չափեն ավելի ուրախացեր էին Մամբրե վարդապետի մահվան վերա և չկրնալով յուրյանց ուրախություն ծածկել, կաղաղակեին՝ ո՞վ այսպես անքննելի և արագ դատաստանին, ինչպե՞ս արագ և արդար դատաստանավ դատեցիր սույն գոռող ամբարտավան, որ ոչ աստծո երկնչեր և ոչ 'ի մարդկանե կամաչեր, որ շատերու քար դայթակղություն եղած էր և շատերու բարոյական մահվան իսկ պատճառ։ Մեք քանիցս սաստեցինք և հանդիմանեցինք զուրախացողս, որ առանց ուրախության իբրև կարեկից եղբայր նորա հոգվո փրկության համար աղոթեն, բայց նոքա կհավելուին, թե սրբազան դուք ոչ զնա կճանաչեիք, ոչ նորա անբարի գործքեր գիտեք, ուստի չեմք կարող մեր սիրտ թաղուցանել և այսպիսի հատուկ հրաշագործություն չպատմել։

Հովսեփ եպիսկոպոսի բարեկամք թե 'ի դրսի տուն և թե Աղթամարա ներս նորա ազատության վերա զարմացած աստվածային հրաշք կանվանեին՝ ասելով, խիստ բարեբախտ էիր, որ Երեմիա եպիսկոպոսի հետ դրսի տուն գտնվեցար Մամբրեի խեղդված միջոցին, վասնզի Հակոբ եպիսկոպոս քեզ ոխերիմ թշնամի գոլով անշուշտ պիտի հրատա-

բակեր և սուտ վկաներով հաստատեր, թե Հովսեփ եպիսկոպոսի ձեռքեն լուսարարություն հափշտակելուն համար ձեռքով ջրի մեջ խեղդեց, զայս և Հովսեփ եպիսկոպոս ասեր, զի եթե մեք նախախնամության տնօրինմամբ դուրս չլինեինք, և Երեմիա եպիսկոպոս հոն ներկա չլիներ, անտարակույս այդ անաստված և անխիղճ մարդ զմեզ պիտի զրպարտելով զրպարտեր գոհություն արարչին, որ զմեզ ազատեց նորա խարդախ խորամանկութենեն, որ սովոր է ամեն օր անմեղ մարդիկ զրպարտել։

Հակոբ եպիսկոպոս և յուրայինք միայն տրտում էին և կմտածեին անմեղ մի զրպարտել և չէին գիտեր զո զրպարտին, զի Մամբրեն յուրյանց կամակատար գործիք էր Աղթամարա ներս, սիրելի և մտերիմ Խաչատուրին և Հակոբին ներսի գործոց և լուսարարության մեջ, թե ազդեցություն կար թե հին և թե նոր շատ գաղտնիքներ կար, նորա մահվամբ հետզհետե գաղտնիքներ հրապարակ կելնեին և միաբանաց մեջ մեկ չկար նորա հավասար մեքենայությունից մի ծայր բռնող և խարդախ խորհրդոց Հակոբի և Խաչատուրին խորհրդապահ, ուստի Հակոբ հանձն յուր կխռովեր և կտարակուսեր մեկ մի լուսարար կարգել նորա տեղ և եկեղեցվո բալանին և գանձն հանձնել։

Մինչդեռ մեք ընդ Հակոբ եպիսկոպոսին և Հովսեփ եպիսկոպոսի սենյակ նստեր թեյ կխմեինք, ամբողջ միաբան վարդապետք ներս մտնալով նոր լուսարարի ընտրություն առաջարկեցին և խոսքն առ մեզ ուղղելով խոսեցան, թե մեք կտեսնամք, թե դուք քանի օրեն աստ վանքս գտնվելով և վանքիս ներքին և արտաքին անբարեկարգություն տեսնալով մեզ միայն լոկ խոսքով կառաջարկես, թե դուք զձեզ և զձեր վանքն ձեր ձեռքով պետք է որ բարեկարգեք, դուք ոչ միայն պաշտոնի և եպիսկոպոսության կողմանե պարտիք վանքս բարեկարգության մեջ դնել, այլ իբրև մեզ հայրենակից և եղբայրակից պետք է որ ոչ միայն ցավիք և վշտանաք մեր վիճակի և կացության վերա, այլ գործնական հայրենասիրությամբ ձեռնարկեք մեր սրբազան հարց հետ Աղթամարա տուն և վիճակ բարեկարգել։ Խիստ իրավացի էր այս առաջարկություն և տրտունջ առ մեզ ուղղյալ, ուստի ստիպեցինք զբոլոր միաբանություն, որ անմիջապես լուսարարի ընտրություն կատարվի, որ բարեկարգության առաջին քայլ կհամարվեր։

Որովհետև երկու կուսակցության մեծագույն մասի վստահություն կարկառցի Հակոբ վարդապետի վրա էր, ուստի նախ առաջարկվեցավ անոր լուսարարի պաշտոն, նա անբավականությամբ խոստովանելով, չընդունեց, թեև բոլոր միաբանք սատիկ կստիպեին և կհորդորեին

ընդունել, ապա Պողոս վարդապետին, ապա Մխիթար վարդապետին, ապա կարգավ փշավանցի Հակոբ վարդապետին, ապա Խորեն և Պողոս վարդապետաց և ապա Հովսեփ եպիսկոպոսին, ամենքն ևս չհոժարեցան ընդունել, մինչդեռ քանիս կստիպեին զՀովսեփ եպիսկոպոս ընդունել տալ լուսարարություն, զոր երկար միջոց կատարելով գողություն, արձանագիր էր։ Խորեն վարդապետ դիտողություն հայտնեց, թե մեք երկուքս այդ պաշտոն վարելով մեր շրջան լրացուցեր եմք, ուստի նա ևս իսպառ հրաժարեցավ և տեսնելով միաբանաց, թե փշավանցի Հակոբ վարդապետ փոքր-ինչ հոժարություն կցուցնե, ամենքն 'ի մ'սին սկսան զայն հորդորել, ուստի ամենեցուն հաճությամբ եկեղեցվ բանալին պապոնիշով[113] մի հանձնվեցավ անոր։ Հիշյալ վարդապետին Հակոբ եպիսկոպոս թեև արտաքուստ հաճություն ցուցուցավ, բայց ներքուստ տհաճ էր նորա այնպիսի պաշտոնի հասնել, քանզի վստահ չէր նորա առ ինքն մտերմության վերա, զի զնա 'ի զուր 'ի բանտ և աքսոր մատնած գոլով կխեթար 'ի նմանե։

Հետզհետ ասորիկ իբրև երկրորդ բարեկարգություն առաջարկեցինք վարչության առ տեղապահն ուղղյալ հրահանգ գործադրելով տնօրեն ժողով կազմել, սույն առաջարկության վերա միաբանք խորհելո միջոց խնդրելով բաց 'ի տեղապահեն, բոլորեքյան Հովսեփ եպիսկոպոսի սենեկեն ուրեշ սենյակ գնացին, յուրյանց ներքին բարեկարգության վրա խորհելով Մխիթար վարդապետ պատգամավոր խրկելով ծանուցին, թե մեք շրջանով ներս մնալ և կարգավորիլ կխնդրեմք, քանզի վանքի առաջին բարեկարգություն խանգարվելով վարդապետներեն ոչ ոք հոժարություն չունի ներս նստել և կարգ վարել, մինչդեռ տեղապահ և ուրիշներ շարունակ դուրս նստելով զանազան խորտիկներով կպարուրվին, իսկ ոմանք ներս մնալով անկերակուր և անմխիթար արտամաշ կլինին։

Պատասխանեցինք, թե այդ նորակերպ բարեկարգություն ձեր տեղապահին և ձեզ կպատկանի մասնավորապես, եթե նա և դուք հաճություն ունիք մեք արգելիչ խնդրո չեմք լիներ։ Պատգամաբեր Մխիթար վարդապետ տեղապահեն յուրյանց առաջարկություն հաճությամբ ընդունելով միաբանց հաղորդեց և ընդ նոսա 'ի ներքս եկավ բազմեցավ։

Տեղապահի և միաբանաց որոշումն արձանագրվելեն հետո, ապա միաբանք խնդրեցին տնօրեն ժողովի կազմության ձեռնարկել, ըստ վանական խորհրդոց հրահանգին ընդհանուր միաբանաց քվեով նախ հինգ հոգի ընտրվեցավ, որոց միջեն կարկառցի Հակոբ վարդապետ զրոմ հրաժարական տվավ, իսկ Խորեն վարդապետ վասն հայտնի հանցանաց ինչ արդեն վեղար չունենալով տակավին ապաշխարանց շրջանի մեջ

գոլով ընտրելո ցանկեն հանվեցավ, իսկ Հովսեփ եպիսկոպոսի, Ղազար և Մխիթար վարդապետաց ընտրություն հանդերձ տեղեկագրությամբ խրկվեցավ առ ազգային վարչություն։

Տեղապահ սրբազան տնօրեն ժողովո անդամք ընդ նոսին գրեթե ամբողջ միաբանք հետն առնելով նախ ծովակուր լուսարար Մամբրե վարդապետի սենյակ բացավ, եկեղեցվո վերաբերյալ մոմ, շուշփա խունկ և այլն նոր լուսարարին հանձնեց, իսկ նորա կահկարասիք ում կամեցավ անոնց բաժանեց և սենյակ Ղազար վարդապետին հանձնեց, որ ներս սենյակ չուներ։

Տեղապահ Հովսեփ եպիսկոպոս և տնօրեն ժողովն եկեղեցին իջնալով եկեղեցական սպասներ մեր ներկայությամբ նոր լուսարարին հանձնեցին գիրով և ցուցակով, որոց մի պատճեն առնելով քովս պահեցի առ ազգային վարչության խրկելու, երբ կամի ինձմե խնդրել։

Հետևյալ առավոտ տաճարի վերնատան մեջ անխնամ ձգված ձեռագիր մատենից ցանկ և ցուցակ շինելո զբաղեցա և սաստիկ դժվարությամբ մատյաններ մեկիկ-մեկիկ բանալով ձեռքերս և երեսս փոշոտեցան և մրոտեցան, քաղցած լինելով զփոշի և զմոխիր իբրև զհաց կերի և երիկամունք իմ այլայլունեցան և սիրտ խռովեցավ։ Ես տեսնալով, թե ազգային հնությունք փոշիներով ծածկվելով ցեցերու ապավեն դարձեր են, վանքի միաբանք տգիտության խավարով մոլորված, մի գրասեր և մատենասեր չունենալով 'ի միջի աննման ձեռագիրներ իբրև անպիտան բարձիթողի ըրած են։ Հետո վանքի միաբանաց թիվ, կացություն, տաճարի և կղզիի ստորագրություն առնելով, մի գիշեր ու կես և մի ցորեկ ու կես հաղիվ ներս մնալով եպիսկոպոսոք և քանի վարդապետոք հանդերձ մեկնեցանք դարձյալ 'ի դրսի տուն։

Աստանոր հորբերտու մելիք Գրիգոր և ուրիշ պատվավոր գյուղացիք հաճախելով տրտունջ կբառնային տեղապահ Հակոբ եպիսկոպոսի դեմ, թե ոչ սահմանադրություն կգործադրե մեր սրբազան և ոչ մեզ համար մի քաղաքական և կրոնական ժողով կկազմե, որ մեք 'ի միասին ժողովելով մեր ազգի գործոց վերա կամ տեղեկություն ունենամք կամ խորհիմք կամ միաբանությամբ մեկ գործ մի տեսնամք։ Մեր եպիսկոպոս միապետաբար թե քաղաքական և թե կրոնական բոլոր գործեր ըստ քմաց և ըստ հաճոյից վարելով մեր ազգայնոց մեծագույն մասն վշտացուցեր և պաղեցուցեր է իրմե, գուցե օր մի միաբանությամբ տեղս գալով մեծ հեղափոխությամբ զայն պաշտոնեն վար անանեմք և այլն։

Ուստի, իբրև բարեկամ առաջարկեցինք և ստիպեցինք զտեղապահն, որ գոնե վասն ապահովության անձին փութա մի առժամանակյա քաղաքական և կրոնական ժողով կազմել և ժողովրդյան տրրտունջ և աղաղակ 'ի միջոց բառնալ, թեև խիզանցին 'ի բնե միապետական ծնած կատե բարեկարգություն և սահմանադրություն, ի ստիպմանե մեր և ժողովրդյան, զիջավ մեր առաջարկությունն ակամայից ընդունել, ուստի վարդավառի երեքշաբթի օր մերձակա գյուղերեն քանի խելահաս քահանայք և տանուտերք հրավիրելով բազում հարցափորձությամբ և քննությամբ մի առժամանակյա կրոնական և քաղաքական ժողովներ կազմեցինք, մինչև ընտրություն երեսփոխանական ժողովին։

Հետո ժողովականներ հրավիրեցան, մեք իբրև վարժարանաց դիվաններ կազմել տվինք, ատյան բանալո և գոցելո, որոշումներ արձանագրելո և այլն, սորվեցուցինք կրոնականք և ժողովուրդն այս նոր բարեկարգության վերա ուրախություն և գոհունակություն հայտնելով մեզմե շնորհակալ եղան, բաց 'ի տեղապահեն, որ բարեկարգությունն իրեն բանին չգալով ժողովներ ցրվելո հատակագիծ կպատրաստեր բանիվ և գործով, քանզի ժողովոց հաստատության շարունակություն վանքի և վիճակի բարեկարգություն յուր ապօրինավոր միապետության չափավորություն և թերևս կործանումն առաջ բերեր, զի խելահաս թեմականք և ժողովականք սկսան վանքի ելից և մտից վերա դիտողություն հայտնել և հաշիվ պահանջել տեղապահեն, որ բնավ չէր կարծեր, թե ժողովուրդն այսպես արագ արթնանալով կուզե թե վանքին և թե տեղապահի ներքին և արտաքին գործոց վերա ուշադրություն դարձնել և հսկել, ուստի սկսավ խորամանկությամբ ժողովրդյան առաջադիմության առաջ խոչ և խութ հարուցանել[114], հնարյուք մի զմեզ Աղթամարա վիճակեն հեռացուցանել, նախ բանիվ սկսավ ստեպ-ստեպ խոսել, թե քրտաց մեջ շատ թշնամի ունիմ, ահա 5-ով, տասնով և քսանով գիշեր և ցորեկ եռևես կշրջին զիս սպանանելո, բայց գուցե հանկարծ գալով փոխանակ զիս սպանանելո Երեմիա եպիսկոպոսն սպանեն, կերկնչիմ գուցե ազգն մեր օձիքեն բռնե և ասե, թե Պյուլպյուլի պես դուք սպանեցիք և այլն, 'ի պատասխանի նորա մեք միշտ կրկնեցինք, թե սրբազան բնավ մի երկնչեր, զքեզ ոչ ոք չի սպաներ, այլ թե դուք զմեզ սպանելո փորձ կփորձեք կամ մեզ սնոտի երկյուղ տալով կամիք հեռացուցանել, որպեսզի ըստ քմաց և ըստ հաճոյից միապետաբար կառավարեք, այդ լոլոներ ես գիտեմ, այսինքն դուք չեք կարող այդ ձևարանությամբ զմեզ խաբել, մեք օտարական երկչողներեն չեմք, մեք բուն հայաստանցի և վասպուրականցի եմք, թեև չեք ուզեր, որ մեք սահ-

մանադրություն գործադրեմք, վիճակ բարեկարգեմք, դուք գործեցեք վասնզի ազգի լրության ձեզմե այս կպահանջե, սակայն նա դարձյալ թե մեր երեսին և թե շատերուն անդադար կխոսեր, թե քուրտեր պիտի գան կամ զիս կամ Երեմիա եպիսկոպոսն սպանեն, չգիտեմ ինչ ընելս։ Քանիցս հրավիրեցինք զինքն, որ հաճի մեզ հետ գալ վիճակի գյուղերու մեջ սահմանադրություն գործադրել, Մոգաց, Շատախու, Կառկառու հարստահարյալ վիճակներ երթալ և այն ողորմելի ժողովրդյան այցելություն ընել, սակայն միշտ պատասխանեց, թե քրտեր երկուքս ևս կսպանին, և թե մինակ երթալո լինիս, անպատճառ զքեզ ողջ չեն թողուր և այլն։

Տեղապահի այս տեսակ չկամություն և ընդդիմություն տեսնալով, առաջարկեցինք տնօրեն ժողովին, որ մեզ մի օգնական վարդապետ հատկացնեն։ Ժողով որոշեց Խորեն վարդապետ և Հովսեփ եպիսկոպոս, զոր հետս առնելով գնացինք 'ի Բելու 'ի Նոր գյուղ, 'ի Մոխրաբերդ, 'ի Փախներ գյուղորայիս, ըստ օրենի թաղական խորհուրդներ կազմեցինք և վարժարաններ հաստատեցինք։

Տեսնալով Խիզանցին, թե ժողովուրդն վարչության հրաման ամենայն սիրով կընդունի և կհարգե և մեծ դյուրություն և հաջողություն կա մեր ձեռք սահմանադրություն բոլոր թեմերու մեջ գործադրել և վարժարաններ հաստատել, ուստի անդուսպ վրեժխնդրության բոցով բորբոքյալ սահմանադրության հառաջադիմություն ձեռնարկեց տապալել այսպես։ Նախ, անհիմն տարաձայնություն մի հանել տվավ բոլոր թեմի գյուղերու մեջ, թե վարչություն խրկած է զԵրեմիա եպիսկոպոս, սահմանադրություն գործադրել կուտա և ով որ որ յուր անուն ցանկի մեջ գրել տալով քվե տա հետո փրկչի հիվանդանոցի համար կպարտավորի տարին 75 դրամ վճարել, ուստի ժողովրդենին ոմանք գիտությամբ և ոմանք անգիտությամբ սկսան մեզմե հարցուփորձ ընել, թե արդարև սահմանադրության գործադրելեն զկնի 75 դուրուշ պիտի պահանջեմք հիվանդանոցի համար, խիստ համոզակիր բանյուք հարցանողաց տարակույս փարատելով ապահովություն տվինք, որ բնավ դրամ վճարելու մասին չկասկածին և ծանուցինք ամենուն, թե այս տարաձայնություն Հակոբ եպիսկոպոսի թյուր և խորամանկ խորհուրդեն առաջ գալով կուգե, որ սահմանադրության գործադրություն այս հնարյուքս խափանելով ժողովուրդն կուրության մեջ պահել և միապետաբար կըրկին բռնանալ ժողովրդյան իրավանց վերա և ուզածին պես կեղեքել։ Հետո իմանալով, թե սույն անտեղի տարաձայնություն հերքելով բավական չէ զժողովուրդն 'ի հոտն հանել, աճապարեց 'ի ձեռն արբանեկաց

յուրոց բանիվ և գրով լուր առաքել առ ժողովուրդն Հայոց Զորո, Ռշտունյաց, Մոգաց, Շատախու, փոթանակի եկայք ժողովեցարուք 'ի Ախվանք, ես հրաժարական գրած եմ վարչութենե, Երեմիա եպիսկոպոս զիս տեղապահութենես կմերժե, պետք է որ դուք ձեր վանքին տերություն ընեք և այլն։

Ուստի, օգոստոսի 7-ի Հայոց Զորո, 'ի Ռշտունյաց և Մոգաց Հակոբ եպիսկոպոսի կուսակիցներեն հազիվ թե քսանի չափ աշխարհական մարդիկ և 4 քահանա եկան հավաքեցան 'ի Ախվանք։

Մեք Նարեկա վանք լսելով, թե Հակոբ եպիսկոպոս մեծ դավադրություն մի կպատրաստե մեզ համար և թե յուր բնաձիր ստախոս զրպարտությամբ շատ չարախոսությամբ զժողովուրդն պիտի գրգռե, փութացինք Ախվանք քննել և իմանալ զխորհուրդս, զգործս և զբանս եպիսկոպոսին և դեմ հանդիման խոսել ժողովրդյան զօգտակարութենե սահմանադրության և զգործադրութենե նորա։ Օգոստոսի 7 սուրբ Աստվածածնի պահոց երեքշաբթի օր ժամ շորսին ընդ Հովսեփ եպիսկոպոսին հասանք 'ի Ախվանք, ուր որ Հակոբ եպիսկոպոս զժողովյալսն շուրջ զյուր և ակումբ բոլորած մանվածո և խորամանկ բանյուք կհուզեր նոսա ընդդեմ սահմանադրության և ընդդեմ մեր։ Ուստի նորա խոսքն ընդմիջելով, սկսանք ազգու կերպիվ սահմանադրության օգտակարության և գործադրութենե հառաջ եկած բարեկարգություն միրստմիջե բացատրել ժողովելոցն, որք իբրև 'ի քնո սթափելով և աչք բանալով 'ի միաբերան աղաղակեցին, թե մեք ամենեքյանքս սահմանադրություն կսիրեմք և անմիջապես նորա գործադրություն կխնդրեմք, հերիք անկարգության մեջ մնամք, հերիք է, որ մեր որդիք տգիտության մեջ մնան, այսչափ ժամանակ սահմանադրություն գործադրելո և դպրոց բանալո առաջարկություն ըրած չէր, շնորհակալ ենք Երեմիա եպիսկոպոսեն, որ այս գործին համար մեծ աշխատություն հանձն առած է և եկած է մեր մեջ և սկսան մի զկնի միո զմեզ հրավիրել յուրյանց գյուղեր՝ խընդրելով, որ անպատճառ յուրյանց գյուղն ևս հանդիպելով սահմանադրություն գործադրեմք և դպրոցի շինության և հաստատության աշխատիմք։

Խեղճ Հակոբ եպիսկոպոս իբրև կայծակնահար շփոթեցավ և շվարեցավ տեսնալով, թե յուր ազգավնաս և որոգայթավոր հատակագիծ հանկարծ ազգօգուտ նպատակի փոխվեցավ, բայց գիտնալով ժողովրդյան դյուրափոփոխ բնավորություն և գիտնալով յուր բազմահնար խաբեական ձեռնարկություն 'ի հանկանե երկու անձանց խոսելով նոցա բերանով առաջարկել տվավ, թե ափսոս է, որ Երեմիա եպիսկոպոս գյուղերու մեջ շրջելով չարշարվի և նեղվի, գործ թող մեր Հակոբ սրբազա-

նին հանձնե և գործադրության եղանակ սորվեցունե և ինքն երթա ուրիշ գավառներ և երբ որ մեր Հակոբ սրբազան վարչության հրաման չգործադրե, հետո թող դա, անկե համար պահանջե և այլն։

Պատասխանեցինք՝ շատ բարի, մեք արդեն ապրիլի մեջ զինքն 'ի Վան տեսնալով խնդրեցինք, որ ինքն անձամբ գործադրե և մեզ կրկին աշխատության դուռ չբանա, բայց տեսնալով, թե բնավ հոժարություն չունի գործադրել, անձամբ եկանք, թող դա 'ի միասին գործադրենք, բայց Հակոբ եպիսկոպոս պատասխանեց, թե մինչև մեկ կանգուն ձյուն չբռնե հողի երես, ես գյուղեր սահմանադրություն գործադրելո չի պիտի ելնիմ։ Առ այս պատասխանեց մահտեսի Հովհաննես, թե սրբազան, հանցանք քո է, ես Պոլսեն գալով պատրիարքարանեն և վարչութենեն ինձ հանձնած թե սահմանադրություն և թե վանական խորհրդոց հրահանգներ ձեռքս բերի, քեզ հանձնեցի և բազում աղերս մատուցանելով խնդրեցի, որ անմիջապես ձեռնարկեք գործադրություն, ընդե՞ր մինչև այսօր հապաղեցիր, որ Երեմիա եպիսկոպոս եկավ սկսեց գործադրել և դու հիմա կըսես, թե մինչև ձյուն չգա, գեղեր չեմ ելներ, այդ չգործադրելո հայտնի ապացույց է, մեք այժմ քեզմե գործադրություն կխընդրեմք, զի ձյուն գալեն զկնի ուրիշ պատճառ մի ես մեջ բերելով դարձյալ կհետաձգես և այլն։

Խիզանցին տեսնալով, թե յուր լարած որոգայթի մեջ ինքն ըմբռնեցավ, ակնարկելով ժողովրդյան և սենեկեն արտաքս ելնելով 'ի այգին գնաց և անդ կոչելով զժողովուրդն մի նոր ձախողակի հրահանգ տալով դպրոցի մեջ ժողովեց զնոսա, ուր ապա 'ի ձեռն պատգամավորաց հրավիրեց զմեզ, որպեսզի յուր նոր հրահանգին համեմատ ժողովուրդն մեզ հետ խոսեցնել մահտեսի Հովհաննես իբրև 'ի դիմաց ժողովելոցն կառաջարկեր մեզ այս, մեք սահմանադրություն կընդունինք, սակայն պետք է, որ դու մի հանրագրություն հեռագրես, ստորագրես և մեզ ստորագրել տաս, խրկենք Հայրիկին և վարչության, որ մեր Խաչատուր եպիսկոպոս վավերացնեն խրկեն, ապա թե ոչ մեք սահմանադրություն չեմք ընդուներ և այլն։ Պատասխանեցինք՝ մեք հանրագրություն գրելո և ստորագրելո պաշտոն չունիմք, մեր պաշտոն է քարոզել սահմանադրություն գործադրել և դպրոց չեղած տեղեր դպրոց բանալ, վարչության մեզ համար դծած շրջանակեն դուրս ուրիշ որևիցե գործի իրավունք չունիմք, եթե դուք հանրագրություն պատճառելով սահմանադրություն խափանել կխորհիք, հույժ կսխալիք, զի դուք Հակոբ եպիսկոպոսի թելադրությամբ և ձեռքով այնչափ հանրագրություն խրկած եք 'ի պատրիարքարան, որ երկու համալ հազիվ թե կվերցունե, Խաչա-

տուր եպիսկոպոսի գործ բնավ հանրագրության կարոտություն չունի, քանզի մասնաժողով նորա գործեր քննության առած է՝ առանց հանրագրությունից կարևորություն տալո, ձեր ուղելո լոկ թուղթեր դայն չեն կարող արդարացուցանել, մանավանդ երբ որ սահմանադրություն չգործադրեք և օրինավոր ժողովով հանրագրություն չխրկեք։ Վարչություն բնավ այդպես խաժամուժ ամբոխի խնդրագրություն իսպառ կմերժե, երբ լսե, թե դուք յուր հրամաններ և հրահանգներ կմերժեք, հավիտյան ձեր ձայնին չի լսեր, եթե օրինավոր ես լինի, ուր մնաց, որ դուք մեղապարտ անձի մը աղատության աղերսանք պիտի մատուցանեք առ նա և այլն։

Սույն առարկությունից ժողովուրդն համոզվելով, հավանություն տվավ և դարձյալ սահմանադրության գործադրություն առաջարկեց մեզ և ստիպեց զՀակոբ եպիսկոպոսն, որ նա ևս ընկերանա մեզ։ Հակոբ եպիսկոպոս դարձյալ պատասխանեց, թե մինչև ձյուն չիդա, չեմ կարող, կրկին դուրս ելներ ժողովուրդն և ուրիշ մի խարդախ հրահանգ տալով խրկեց ներս, որք եկան խոսեցան, թե մեք աղքատ ժողովուրդ գոլով սահմանադրություն չեմք կարող ընդունել, վասնզի 75 ղուրուշ չունիմք վճարելո հիվանդանոցին, այս կետին սահմանադրություն բանալով ցցուցինք, թե այդ գումար միայն պոլսեցի աղգայնոց համար է, որք երեսփոխան կընտրեն և այլն։ Դուք աղատ եք այս տուրքեն։ Դարձյալ հարցուցի Հակոբ եպիսկոպոսին, թե երբ դուք ևս համոզված եք, թե 75 ղուրուշ միայն պոլսեցիք պիտի վճարեն, ոչ թե գավառացի հայեր, ուրեմն համոզեցեք այս մարդիկ, թե ինքյանք աղատ են 75 ղուրուշ վճարելեն, բայց նա իսպառ լռեց, որովհետև ինքն իսկ խորհուրդ տված և խաբած էր զժողովուրդն, ուստի դարձա և սաստիկ կերպիվ կշտամբեցի զինքն, թե դուք վարչութենեն կարգյալ պաշտոնական անձի մը գոլով սույն խղճալի մարդիկ գործե հանելով առ մեզ ժողովեցիք և քանի-քանի անգամ զանազան աղգավնաս խորհուրդներ տվիր և տեսնալով, թե մեկ ալ չհաջողեցավ վերջին փորձ փորձելո համար հիմա կըսես, թե 75 պիտի վճարե ընտրողն, և չես համոզեր այս մարդիկ, թե այդ տուրք ձեզ համար չէ, դու արդեն բարեկարգության և սահմանադրության թշնամի գոլով երբեք չես ուզեր, որ վիճակի մեջ գործադրվի, զի ոչ դու կգործադրես և այսպիսի նենգապատիր հնարքներով կտաս թույլ, որ մեք գործադրեմք...։

Ապա բերան բացավ և յուր սրտի ներքին նենգավորություն հայտնելով ասաց՝ դեռ Մշո, Բաղիշո և ուրիշ տեղեր չէ գործադրվեր, թող Աղթամարա վիճակի մեջ ևս չգործադրվի, ժողովյալներ, որ արդեն տե-

զապահի չկամության վերա կասկածել սկսած էին, վերի պարզ պատասխան, որ այլևս մեկնության չէր կարոտեր, լսելով հայտ հանդիման վերահասու եղավ, թե նա ընավ չի կամեր ազգի բարեկարգություն և սահմանադրության գործադրության, վասնորո արհամարհեցին զբանս և խորհուրդս նորա և ելին արտաքս 'ի սենեկեն։ Սույն անցք տևեց ի 4 ժամե ավուրց մինչև երեկոյան ժամ 12։

'Ի մթան քանիցս փորձ փորձել և զժողովյալսն մեր դեմ հարուցանել, բայց յուր խորամանկության բոլոր զենքեր ընկան փշրեցան աստծո արդարության առաջ, զի ժողովուրդն այլև սոյն հեղհեղուկ և վնասախորհուրդ հովվի օտար ձայնին չլսելով երես դարձուց և 'ի քուն ի մուտ։

Առավոտ ծագեցավ, ժողովյալքն, առանց հաց ուտելու առանց եպիսկոպոսի աչն առնելու, լի ցասմամբ և բարկությամբ մեկնեցան Ախվանքեն՝ անարգելով զնա և զխորհուրդ նորա, թե զմեզ խաբելով բերավ, Երեմիա եպիսկոպոսի առաջ ինքն խայտառակվեցավ և զմեզ ողիկ[115] ձգեց, մեզ ոչ օրինավոր կերակուր պատրաստեց, ոչ անկողին ի տվավ հանգիստ քուն մտնալու, ուխտեցին, որ այլևս ոչ նորա ձայնին անսան և ոչ վանք ոտք կոխեն, մեկնելեն առաջ ներողություն խընդրելով մեզմե աղաչեցին, որ զկնի վերափոխման Աստվածածնի երթամ յուրյանց գեղեր և սահմանադրություն գործադրեմ։

Քանի օրեն զկնի ժողովյալներեն քանիս Նարեկա վանք առ մեզ գալով հայտնեցին, թե Հակոբ եպիսկոպոս զմեզ ժողված էր յուր կույր կրից գործիք ընելու, քանի անգամ, որ զմեզ դուրս հանավ, խիստ իպերելի խորհուրդներ[116] տվավ, թե պետք է սաստիկ հարձակում ընեք Երեմիա եպիսկոպոսի վերա, անարգանոք հայհոյանք և դատափետ ընելով վանքեն և վիճակեն արտաքս վարեք, բայց ժողովյալքն, որքան Հակոբ եպիսկոպոսի կուսակիցներեն էին, մերժելով մերժեցին նորա վատ խորհուրդ, կկշտամբեին զինքն, թե նա ոչ աթոռին և ազգին վնաս մի տված չէ, այլ բյուր անգամ ձեզ աղեկ լինելով կջանա վանքի և վիճակի մեջ բարեկարգություն հաստատել, մեք ոչ թե զնա կանարգեմք և կանպատվեմք, այլ շնորհակալությամբ հանդերձ զայն կմեծարեմք։

Բոլոր խորախորհուրդ և արդարադատ մարդկանց և վարչության իսկ ուշ ցավոք հանդերձ կհրավիրեմ հետագա անցից վերա, որ դարձյալ տեղի ունեցավ օգոստոս 7 ժամ 7 միջոցներ, հորժամ ժողովրդյան հրավիրանոք վարժարանի մեջ կխոսակցեինք, Մխիթար վարդապետ յուր տվավ Հակոբ եպիսկոպոսին, թե Տեվրիշ պեյի որդի Կուլիխան քանի հոգվով պարտեզ իջանալով կամի զքեզ տեսանել և խոսել, թե

արդյոք ինչ կհրամայեք, պահ մի մտածելեն զկնի պատասխանեց՝ գնա ասա, թող վեր չի գա, մինչև որ ես գամ զինքն տեսնամ և պետքն եղածն խոսիմ իրեն, թե ինչ պետք է ընել։

Քիչ մի հետո ասե՝ դուք խոսեցեք, ես հարկավոր խոսելիք ունիմ, կերթամ կխոսիմ և կվերադառնամ առ ձեզ։ Գնաց և քառորդեմ՝ ետ եկավ։ Ժողովյալներեն շատեր, չգիտնալով եպիսկոպոսի ներքին խորհուրդ, հարցին, թե այսօր այդ քուրտ ինչ գործի համար եկած է ասա, եպիսկոպոս կիծությամբ պատասխանեց, թե գայմակամն իմացեր է, որ մեք այսօր այստեղ մեծ ժողով ունիմք, այս մարդ յուր կողմանե խրկած է, որ անկարգություն մի չպատահի և այլն, սակայն գիտցողներ քմծիծաղ եղան, քանզի գիտեին, թե քուրտն Հակոբ եպիսկոպոսի ներքին թելադրությամբ եկած էր, ոչ թե անկարգության առաջն առնելու, այլ նոր և տարօրինակ անկարգություն 'ի գործ դնելու, քանզի Հակոբ եպիսկոպոս արդեն գիտնալով, թե Աղթամարա ժողովուրդն իրմեն դրժգոհ լինելով չի պիտոր զիջանի անկարգությամբ զմեզ արտաքսել վանքեն և վիճակեն, արյունռուշտ քուրտ բերած էր, որ զինու զորությամբ և բռնությամբ զմեզ հեռացներ, սակայն իմանալով, թե յուր կուսակից ժողովուրդն իսկ բնավ հաճություն չունի այս գործին, ուստի մինչև ժամ տասին սպասել տալով պարտեզի մեջ, ապա անձամբ գնաց և ետ խրկեց զԿուլիխան։

Տեվրիշ պեյ անվանի խան Մահմուդի եղբայրն է, այս Տեվրիշ պեյ 'ի վաղուց Խաչատուրի և Խիզանցիի մտերիմ բարեկամ և մեծամեծ գործոց գործակատարն է այս այն Տեվրիշ պեյ է, որ Հակոբ և Խաչատուր ներս տարին և նորա պաշտպանությամբ և զորությամբ զԽաչատուրն կաթողիկոս օծեցին, այս այն Տեվրիշ պեյն է, որ մինչդեռ ինքն 'ի ներքս Աղթամարա կղզին զԽաչատուրն կպաշտպաներ, նորա որդին Կուլիխան զՊյուլպյուլն Փշավանից մեջ յուր ձեռոք կսպաներ, ահա սա այն հայրապետասպան Կուլիխանն էր, որ դարձյալ Հակոբ եպիսկոպոսի հրավիրանոք եկած էր զմեզ կամ արտաքսելու կամ սպանանելու, քանզի Հակոբ հառաջագույն իբրև նախագուշակ կխոսեր, թե կվախիմ, թե գուցե քրտեր գալով զԵրեմիա եպիսկոպոսն սպանանեն, հետո ասեն, թե Հակոբ եպիսկոպոսի թելադրությամբ գործվեցավ ոճիրն։

Ասացի, թե Խաչատուրի և Հակոբի մեծամեծ գործոց գործակատարն են հայր և որդին, զի մեք, երբ հուլիս հինգ ոտք նոր կոխեցինք 'ի Ախվանք, իմացանք, թե Շատախու քրտեր Աղթամարա ոչխար տա-

բեր են ...իսկույն* եպիսկոպոս իմաց տալով կանչեց առ ինքն ի Ախվանք և խրկեց ոչխար ետ բերելու, գնաց Տեվրիշ պեյ, իբրև թե ոչխար գտավ և վերադարձավ. Հակոբ եպիսկոպոս հետ անկե շնորհակալ լինելու և վարձատրելու առ մեզ ուղղելով խոսքն ասաց. այս մեր սիրելի պեյ ի սկզբանե շատ հավատարիմ է մեզ և վանքին, ամեն ժամանակ այսպես նեղ միջոցին մեզ կհասնին և անձնվիրաբար մեզ համար կաշխատին և եթե հարկ լինի, արյուն իսկ չեն խնայեր մեզ համար, հետո հազարկերպ շնորհակալությամբ քուրտն ճանապարհի դրավ, պատվիրելով, թե երբ հրամանս քեզ հասնի, անմիջապես առ իս դաս, քուրտն ևս քո հրաման գլխուս վերա, երբ և ինչ հրաման խրկես, անմիջապես կհասնեմ քեզ...։

Այս ցավալի գործողությունից վերա տարակույս չգիտեմ. զարմանալ պետք է, թե սարսափիլ և զարհուրիլ իսպառ։ Հակոբ եպիսկոպոս տասն անգամ Պյուլպյուլի սպանություն մեր ներկայությամբ պատմելով, պնդելով կաղնդեր և կհաստատեր, թե Տեվրիշ պեյի որդի Կուլիխան իր իսկ ձեռոք սպանեց զՊետրոս կաթողիկոսն, այս ստուգապես գիտենալեն զկնի, արդյոք ինչ կնշանակե, որ ինքն եպիսկոպոս զոլով հայրասպան քուրտի հետ այսչափ ընտանեկան մտերմություն և հարաբերություն կունենա, ինչ սրտիվ և խղճով կխոսակցի անոց հետ և 'ի միասին հաց կճաշակե, ինչ հանդուգն համարձակությամբ դարձյալ ետ այսքան սրտաբեկությանց և գայթակղությանց զանոնք գործի կհրավիրե և համարձակություն կուտա վանքի և ազգի գործոց միջամուխ լինել, ո՜չ ապաքեն պարտ էին թե Խաչատուր և թե Խիզանցին բողոքելով բողոքել Կուլիխանի դեմ և հոր արյուն և վրեժ պահանջել, ինչ կնշանակե այս մտերմություն և լռություն, Անակ թեև Լուսավորչի հայր, երբ մեր կռապաշտ խոսրով թագավորն սպանեց, ոչ ապաքեն մինչև հավիտյան հայոց ազգեն նզովյուք և հայհոյանոք կդատապարտվի, եթե կենդանի լիներ, արդյոք մեք կհաճեինք անոր հետ մտերմություն և ընտանեություն առնել, ապա երբ այլազգի մի մեր հավատացյալ հայրապետ կսպանանե, էր վասն անկե ձեռնադրված եպիսկոպոս յուր հայր սպանողի հետ այսչափ սիրելաբար կվարվի։

Արդյոք վայրկյան մի կրնամք չերկմտիլ և կասկածի չերթալ, թե արդարև, եթե Խաչատուրի և Խիզանցիի ձեռք և խորհուրդ Կուլիխանի հետ չլիներ, նա զՊյուլպյուլն սպանելեն զկնի այդպես համարձակ և մտերիմ կերպիվ Աղթամարա տուն ելումուտ չէր կարող ընել։ Հայոց ժողովուրդ արդյոք ինչ կսպասես հիշյալ հին դրությամբ և հին բարբարոսությամբ տոգորված մարդիկներեն դոքա այսչափ միջոց ժամանակ խրատվեցան, բայց չզգաստացան, սոքա աքսորի դատապարտեցան, սակայն յուրյանց սովորական մարդադավությենեն չհրաժարեցան։

Զի դարձյալ զուտ ազգային գործոց մեջ ոճրագործեր քրտեր կխառնեն Պետրոսի ղերծումն և սպանումն այս քրտաց ձեռոք, Խաչատուրի ձեռնադրություն այս քրտաց ձեռոք, զմեզ արտաքսելու խորհուրդ այս քրտաց ձեռոք։ Իսկ մեք թեև Վանա բդեշխեն պույրուլթու առած էինք հետերնիս զապթիա առնուլ, սակայն այն հրամանագիր գայմակամին անգամ ցույց չտվինք, հարձակման երևույթներ հայտնապես տեսանք, բայց երբեք կառավարությենեն պաշտպանություն չխնդրեցինք, մի խեղճ փոքրավորով Աղթամարա վիճակ և վանքն գնացեր էինք, հույս ոչ թե քրտի վերա, այլ աստծո վերա դրած էինք, պաշտպանություն օտարներե չէինք սպասեր բնավ, այլ ազգային վարչությենեն, զորմե ստիպված եմք հրապարակավ ասել, թե շատ անգամ յուր հավատարիմներեն զլացավ յուր պաշտպանություն, իսկ ոչ հավատարմաց զայն չափեն ավելի շռայլեց։ Զի եթե Խաչատուրն իբրև ինքնընտիր կմերժվի և կաքսորվի, ընդե՞ր զայն ձեռնադրող խիզանցի Հակոբ եպիսկոպոս կպաշտպանվի և տեղապահ կհաստատվի։ Ընդե՞ր զնիկողայոս ձեռնադրող Հարություն եպիսկոպոս աքսորի կդատապարտվի և հավատքեն կվրիպի, իսկ Խիզանցին վարչությենեն բոլոր ուժովն կպաշտպանվի, կաղաչեմ մի ըստ աչս դատեք, այլ ուղիղ դատաստան արարեք։

Թերևս ազգային վարչություն 'ի հակամայից բռնադատյալ այս կերպիվ և այսքան միջոց պաշտպանել ձևացույց զհանցավորներ մինչև մի պայմանյալ ժամանակակետ, որ մեզ իբրև գաղտնիք անբացատրելի կմնա և մնաց։ Բայց ինչ ասեմք այն մեր համազգային պարզամտաց ոմանց, որք տակավին զԽաչատուրն պաշտպանել կուզեն և վերահաստատության համար կաշխատին։ Կմնա մեզ Խորենացուն կսկծալի ողբն 'ի բերան առնուլ և ասել թե՝ ողբամ զքեզ Հայոց աշխարհ, ողբամ զքեզ Հայոց պարզամիտ ժողովուրդ, որ ոչ միայն օտարներեն խաբվելով կորուսիր զքո մեծություն և զհարստություն, այլ հայու կերպարանոք կերպարանյալ մարդկանց խաբվելով և շահամոլներեն դրդվելով տակավին կփափագիս և գուն կգործես զԽաչատուր եպիսկոպոս Աղթամար խրկել, որ դա ոճրագործ և հարստահարիչ քրտաց հետ միանա և անդադար զհայոց խեղճ մնացորդ նոցա ձեռոք ահրնկեց ընե, նեղե, գոփե և կճղեքե, մինչև նոցա աղաղակ առ աստված հասի։ Քանզի փորձյալն կրկին փորձել հիմարություն է։

* Բացթողումը հեղինակինն է (Հ. Պ.)։

Վերափոխման տոնեն առաջ քանիցս հրավիրեցի զԽիզանցին, որ գա 'ի միասին երթալո 'ի Հայոց Զոր և ըստ բաղձանաց ժողովրդյան, սահմանադրություն գործադրել և դպրոցներ բանալ, սակայն նա առանց մեզ իմացնելու երկու վարդապետով ոչ թե զկնի վերափոխման տոնին, այլ սույն տոնի օր աճապարեց գնաց 'ի Անգղա սուրբ Աստվածածնի վանք, ուր ժողոված էին բազմություն ուխտավորաց, ընդ որս նորին հրավիրանաց համաձայն եկած էին հիսունի չափ զինյալ շատախցիք, որ ըստ ասության Հակոբ եպիսկոպոսին պիտի դիմեին 'ի Նարեկա վանք զմեզ գանակոծելո, բայց ինքն աղաչեր և հորդորել է, որ այս չար խորհուրդեն ետ կենան, բայց հետո իրեն ասության հակառակ ստուգելով իմացանք, որ Հակոբ եպիսկոպոս զնոսա երկու շաբաթ հառաջ հրավիրած էր գալ 'ի Աղթամար, որպեսզի գանակոծության պաշտոն նոցա ձեռոք կատարել տար, սակայն շատախցիք մի տարի առաջ մեծ զիան[117] կրելով Հակոբ եպիսկոպոսի երեսեն, ուխտած էին այլևս Աղթամարա վանքն ոտք չկոխել, ուստի լուր տված էին իրեն, թե մեք Աղթամար ոտք չեք կոխեր, սակայն ուխտի աղագավ Անգղա Աստվածածին կժողովինք, եթե կամիս եկ անդր և տեսցուք զմիմյանս։

Հակոբ եպիսկոպոս լուր տարածեց, թե կերթա Հայոց Զոր՝ քաղաքական և կրոնական ժողով կազմելո, բայց այսու կուզեր զմեզ և ժողովուրդն խաբել։ Բայց նորա դիտավորություն էր հետևյալ քանի կետեր 'ի գլուխ հանել։ Նախ զի ինչ 'ի վեր անդր պատմեցինք, ըստ որում Հայոց Զորո ժողովուրդն սաստիկ ցավելով և երես դարձուցելով իրմեն եկած էին 'ի վանք Անգղա ժողովելով զնոսա սրտերնին առնուլ և յուր համարումն նոցա առաջ շտկել, երկրորդ՝ զնոսա և շատախցիներ որչափ հնար է մեր դեմ գրգռել և երրորդ հարստահարությունք պատճառ բերելով երկու կերպ հանրագրություն պատրաստել և խրկել։

Իբրև միջանկյալ պետք է ծանուցանել, թե Անգղա Աստվածածնի տոնին ամեն տարի ծայրահեղ անբարոյականության դեպքեր պատահելեն զկնի, քանի մարդիկ քրտաց և տաճկաց ձեռոք կվիրավորվին, զի Արտամետու տաճիկներ հոն հավաքվելով հայտնապես հայոց կանայք կքաշեն անտառաց մեջ, կտանին յուրյանց կատաղի կիրք հագեցնելո, անցյալ տարի կին մի քաշելո միջոցին փախներցի կտրիճ երիտասարդ մի դեմ դնելով տաճիկներ կհարձակին կվիրավորեն զայն, որ հետ ամսո միո կմեռանի։ Այս տարի ևս արտամետցիք շատախցվոց գլխավորին մի սրո հարված կուտան սպանելո, երբ վանքեն դուրս բազմության հետ նստած կուտեն և կըմպեն եղեր։ Կոճապաշին կաղաղակե, թե զիս սպանեցին, ուստի շատախցիք սուր մերկացուցած կհարձակին

քրտաց և տաճկաց վերա, մեկ-երկուք սաստիկ կհարվածեն և կը վիրավորեն։ Հակոբ եպիսկոպոս այս ահռելի շփոթության առաջքն չկրնալով առնուլ, թող կուտա զհայերն և այլազգիք արյունուռշտ պատերազմի սեջ և ինքն ձի հեծած խույս կուտա Անգղա վանքն։ Կառավարությունեն եկած քանի պահակներ զիրենք տաճկաց վերա ձգելով հաղիվ թե վիրավորյալներ հայոց ձեռքեն կազատեն։ Հայոց այսչափ զայրացմամբ հարձակումն երկու պատճառ ուներ. ա., զի երկու օր առաջ արտամետցիք մի երիտասարդ շատախցի սպանած էին դիմաց լեռան մեջ, որ Արտամետու մերձ է, բ., զի յուրյանց ազգապետին սրո հարված տված էին։

Արտամետու տաճիկ, որ հայոց սրով վիրավորվեցավ, սրիկայից զորագլուխ լինելով ամեն տարի վանքի տոնախմբության բազմապիսի չարություն կգործե, սա վիրավորված կդիմե դեպ 'ի քաղաք բողոքել բդեշխին, բայց ճանապարհին պատրիարքարանի նախկին Իսախճի[118] Հովսեփ պատահելով, ճանաչելով և զտաճիկն իրազեկ լինելով պատահմանց կխրատե զտաճիկ, որ բողոքելո չերթա (քանզի ասե, եթե բողոքես, դարձյալ դու ինքդ հանցավոր պիտի լինիս, վասնզի բդեշխ զքեզ պիտի հանդիմանե ասելով, թե դու տաճիկ գոլով ինչ ունիս հայոց տոնական հանդիսի մեջ և այլն) ուստի չարաշարագործն տուն կդառնա և մինչև ցայսօր անկողնո կծառայե և ըստ ասության բազմաց, առած վերքերեն պիտի մեռանի, վասնորո տաճկի ազգականներ բդեշխին բողոքելով զշատախցիք դատելո բերին 'ի Վան։

Հակոբ եպիսկոպոս, իբրև տեղապահ հատուկ շրջաբերականով փոխանակ այսպես ազգավնաս և բարոյականություն եղծիչ տոնն արգելելու, զշատախցիսն կհրավիրե, նոցա և տաճկաց վիրավորության պատճառ կլինի, ըստ որում շատախցիք անպատճառ Արտամետու սարի ճանապարհեն անցուդարձ պիտի ընեն դեպ 'ի Վանա քաղաք, ուստի սաստիկ երկյուղիվ պաշարված, առանց բազում ընկերաց չեն կարող անցուդարձ առնել, զի արտամետցիք կսպառնան վրեժ պահանջել շատախցիներ[են] և ո՛ գիտե, թե քանի հոգի փոխանակ միայն պիտի վիրավորեն և սպանանեն։

Բայց Հակոբ եպիսկոպոս Անգղա մեջ զշատախցիսն և զՀայոց Զորո ժողովուրդն հավաքելով շատախցիի մեկին սպանումն և մյուսին վիրավորումն և այլ հին և նոր հարստահարության դեպքեր 'ի մեջ բերելով և համոզելով հանրագրություն մի ստորագրել կուտա առ վարչություն, որպես թե Աղթամար կաթողիկոս չլինելույն աղագավ այսպիսի դեպքեր պակաս չեն, ուստի աղերսագիր մի ևս վասն Խաչատուրն

եպիսկոպոսի վերադարձին համար ստորագրել կուտա և կխրկե 'ի պատրիարքարան և առանց սահմանադրություն գործադրելու կվերադառնա 'ի Աղթամար, խոստանալով ժողովրդին, թե քանի օրեն զկնի պիտի գամ գործադրեմ և այլն։

Իսկ մեք վերափոխման տոնին Նարեկա վանք լինելով, երբ Անգղա վանքի ցավալի անկարգություն լսեցինք և հավաստի լինելով, թե Հակոբ եպիսկոպոս զսահմանադրություն չի պիտի գործադրե և մեր դեմ որոգայթներ կպատրաստե և ոչ տա թույլ գործադրել, եթե հաջողիմք գործադրելու, անշուշտ պիտի խափանե, ուստի բոլոր պատասխանատվություն յուր վերա ձգելով՝ վերադարձանք 'ի Վան։

Թե մեր Աղթամարա վիճակ գտնված միջոցին և թե մեր մեկնելեն հետո Հայոց Ազգ ժողովուրդն քանիցս կհրավիրե զՀակոբ եպիսկոպոսն երթալ քվեով ժողովներ ընտրել, բայց նա հիվանդություն և զանազան գործեր պատճառ բերելով կդանդաղի երթալ, ուստի ժողովրդյան ճարահատ եղյալ գիր կգրեն և զՀովսեփ եպիսկոպոս կխնդրեն երթալ և գործադրել։ Տեղապահին պատճառաբանություն վերջացած՝ ակամա կամոք կխրկե զՀովսեփ եպիսկոպոսն, որ գնալով 'ի Անգղա վանք զՀայոց Ազգ ժողովուրդն կրհավաքե և քվեով միառժամանակյա քաղաքական ժողով կկազմե, ընտրյալ ժողովականք նախագահի պետք ունենալով դաղտնի քվեով զՀովսեփ եպիսկոպոս նախագահ կընտրեն, որ շաբաթ անգամ Անգղա վանքն երթալով՝ նախագահե ժողովն։ Թե ժողովականք և թե ժողովուրդն հանրագրությամբ իմաց կուտան տեղապահին ժողովույն ընտրության և զՀովսեփ եպիսկոպոսի նախագահության պաշտոն և կխնդրեն, որ անպատճառ շաբաթ անգամ զՀովսեփ եպիսկոպոսն խրկե ժողովին նախագահելու։

Բայց տեղապահ, սաստիկ զայրացած, ժողովի կազմության և Հովսեփ եպիսկոպոսի նախագահի ընտրության մասին նամակ մի կգրե առ ժողովականս, թե ես ոչ բնավ Հովսեփ եպիսկոպոսի նախագահություն կընդունեմ և ոչ ես ձեզ կնախագահեմ, ժողովականք զայս խիստ պատասխան լսելով ցիրուցան լինելով, այլևս ժողով չեն կազմեր, լուր խրկելով տեղապահին, թե որովհետև դու զմեր ընդունած նախագահ չընդունեցիր, ուստի մեք ևս բնավ ժողով չեմք կազմեր։

Հովսեփ եպիսկոպոս տխրությամբ Աղթամար կդառնա և [կ]տեսնա, որ Հակոբ եպիսկոպոս մեր հաստատած և կարգավորաց թե վանքի տնօրեն ժողովն, թե վիճակի համար կրոնական և քաղաքական ժողովներ ցրվելով՝ հետքն անգամ չի թողուցեր և դարձյալ ըստ առաջնույն սկսեր է միապետությամբ և ըստ քմաց գործել։

Հակոբ եպիսկոպոս Աղթամարա տեղապահն՝ բնությամբ խորամանկ, նենգավոր, ոխակալ և քինախնդրության կիրք շաղախյալ, բնավ մեկին չուզեր ներողամիտ լինել, երբ մեկն խղճիվ և արդարությամբ վարյալ՝ նորա գործոց և շահուն դեմ մի ճշմարիտ բան խոսի, այս սխտով է, որ շարունակ կը հալածե զՀովսեփ եպիսկոպոս, որ հեզ, խոնարհ և արդարասեր բարուքն ժողովրդյան սիրելի և իրեն անարդար գործոց անբարբառ հանդիմանիչ եղեր է, ուստի ոչ թե միայն զայն չի սիրեր, այլ թե հորժամ զայն կորուսանել կխորհի և եթե ժողովրդյան միջեն Հովսեփին պաշտպաններ պակասեին, որ նա միշտ կաշխատի պակասեցունել, մինչև ցարդ հոգով և մարմնով կորուսած էր զայն, ամենատեսակ չարիք և անարգություն կհասուցանե խեղճին, ինչպես որ ականատես եղանք, և այս օրերս նամակավ մի կծանուցանե մեղ Հովսեփ եպիսկոպոս, թե այս անխիղճ մարդ զանազան դարաններ պատրաստելով կորուսանել կսպառնա զիս և այլն։

Բերան սուտ խոսելու և լեզուն սուտ երդվելու մեջ այնչափ վարժեցուցած է, որո նման այլազգեաց մեջ հազիվ ուրեք կգտանի, ուստի գիտե ստախոսությամբ և սուտ երդմամբ մարդիկ զրպարտել, երբ իրեն զրպարտություն պետք լինի, գիտե անմեղ մարդիկ մատնել, երբ յուր գործեր առաջ մղելու մասին մատնություն պետք լինի, գիտե լավ մի կեղծավորիլ, երբ կեղծավորությամբ մարդ որսալ պետք լինի։ Գիտե 'ի ծածուկ և հայտնի կաշառք առնուլ, երբ կողոպտել հարկ լինի, գիտե ըստ ամենայնի անգետ ձևանալ, երբ անգիտություն հարկավոր լինի։ Վերջապես, Ռոտենի դպրոցեն[119] ելած մի աշակերտ կրնա համարվել և ոչ այլ ինչ։

'Ի Պոլիս Խաչատուր եպիսկոպոսին անհիմն և անտեղի զրպարտությամբ լուր կհաղորդե, թե լուսարար Մամբրե վարդապետ հուսահատութենեն և Երեմիա եպիսկոպոսի երկյուղեն զինքն 'ի ծովն կընկղմե, կզարմանամ, թե այս եպիսկոպոս ինչպես առանց ամաչելու և պատկառանց այսպիսի անհիմն և հույժ ձախորդ սուտ համբավի մի հեղինակ կլինի։ Արդեն, ինչպես վեր գրեցինք, ամսաթվով և օրագրով, թե մեր Աղթամարա դրսի տուն հասնելեն զկնի, երեք օր հետո պատահեցավ այդ դիպվածն։ Մամբրե վարդապետ, որ տակավին չէր իմացեր Երեմիա եպիսկոպոսի հասնիլն 'ի դրսի տուն Աղթամարա, սորա ապացույցն է, զի Աղթամարա նավակներ հեռի տեղեր փայտ բերելու խրկված լինելով, դրսեն և ներսեն երթևեկյալք արգելված էին և դիպված պատահելույն լուր ներսի վարդապետք քաղաքացի Հեվսան ձեռք երկու փայտյա սանդուխներ իրարու հետ գամելով և կապել տալով և 'ի ծովն

հանելով խրկած էին դուրս՝ Հակոբ եպիսկոպոսին գուժ բերելո, թե վարդապետն լողալո միջոցին ծովն ընկղմեցավ։

Այս պատմություն թող այժմ և հավիտյանս վկա լինի Հակոբ եպիսկոպոսի ստախոսության և մոլեգին զրպարտության, որ առանց ամաչելո կհանդգնի յուր հատկանիշ ստախոսությամբ աշխարհի հրապարակն ելնել, թող ամաչե Խաչատուր եպիսկոպոս յուր գործակից Հակոբ եպիսկոպոսի ստախոսության այսպես խայտառակելուն վերա։ Բայց չի պիտոր ամաչին, քանզի այդ զրպարտություն ընելով հաջողեցան նաև վարչության խաբել և հեռագրել տալ մեզ, որ Աղթամարա վիճակեն հեռանամք, որպեսզի իրենց ապիրատ գաղտնյաց շմտանամ և չտեղեկագրեմ վարչության, այս նպատակի համար Խաչատուր զվարչություն իրեն գործիք ըրավ և հեռագրեց, սակայն չկարողացավ գաղտնրյաց դռներ մեր դեմ գոցել, զի ահա փոքր 'ի շատե նոցա բանից գործոց և գաղտնյաց գաղտնիք ստուգապես ծանոթանալով տեղեկագրեցի ազգային վարչություն և նորին ուշադրություն հրավիրեցինք 'ի նույն։ Որ եթե տակավին ունկն մատուցանելով ամբաստանութենե ներքև ընկած մը չուզե հավատալ մեր խրկած տեղեկագրությանց, կարե մի անաչառ և անկողմնակալ մարդ մի խրկել Աղթամարա վիճակն և զամենայն ինչ ստուգել, բայց մարդն այն կպարտավորի ծպտյալ կերպարանք իբրև անծանոթ գալ, ապա եթե հայտնի գալու լինի 'ի հեռագայ[թ]ից Խիզանցիին և ահե Խաչատուրին շատեր չի պիտի համարձակին զամենայն իրս ստուգապես պատմել։

Հետևապես, մեզ հարկ կլինի ոչ իբրև քննիչ կամ այցելու, այլ իբր ազգային անհատ մի դիտողություն հայտնել Խաչատուրի և Խիզանցի[ի] գործոց վերա, որ վարչություն թույլատրված է և կամ լավ ևս ասել հանձնած է նոցա, զԽաչատուրն իբրև անվավեր արգելած է պատրիարքարանի մեջ, սակայն նորա անուն Աղթամարա թեմի մեջ իբրև վավերացյալ կաթողիկոս կհիշատակվի 'ի պատարագի։ Աքսոր է նա, բայց 'ի պատրիարքարանե կիշ[խ]ե բոլոր թեմի վերա, այնպես որ եթե Աղթամարա մեջ նստած լիներ, այնչափ չէր կարող խառնվիլ վիճակի գործին և ոչ գործ տեսնալ։ Նա շարունակ թե Հակոբ եպիսկոպոսեն իբրև յուր իսկ տեղապահի, թե միաբանց և թե թեմականոց կաթողիկոս ստորագրությամբ նամակներ կգրե, հրահանգներ և պատվերներ կարձակե։ Վանքի և վիճակի բոլոր գրությունք իբրև Աղթամարա կաթողիկոս առ նա կուղղվին, վարչության բոլոր պաշտոնական գրությունք ձեր ձեռոք խրկվին 'ի վիճակն և 'ի վանքն։ Տեղապահն պաշտոնական գրությունից մի օրինակ պատրիարքին և մի օրինակ

Խաչատուրին կխրկե 'ի գործադրություն։ Խաչատուր իբրև կաթողիկոս և վիճակի բոլոր խնդիրներ ինքն վարչության կառաջարկե, կատարել կուտա և կխրկե։ Հորոց կհետևի, թե Խաչատուրն 'ի վաղուց անտի վավերացյալ և հաստատյալ է 'ի պատրիարքարանեն և վարչութենեն, իսկ նորա անվավերականություն և աքսորումն մի երևակայական կեղծիք է, որ առ աչս քանի անգետ ժողովրդյան հաղիվ նշանակություն ունի, իսկ առաջի պատրիարքարանի և վարչության երբեք չունի այն նշանակություն, քանզի Խաչատուր բոլոր կաթողիկոսական հատկանիշ և գործառնություն ունի, բաց 'ի անձնապես Աղթամարա քարին մեջ նստելո, որումն միայն Խաչատուրին կմնա ճանապարհ ելնել և գալ բազմել 'ի արյունաշաղախ աթոռ Պյուլպյուլի հոր յուրո և չլինել բեռ ազգային պատրիարքարանի։

Խաչատուր և Խիզանցի Հակոբ եպիսկոպոս թեպետ մինչև ցայժմ միաբան խորհրդով գործեցին, կգործեն, սակայն իշխանասիրության մեջ կատարբերին իրարմե, զի թեպետ Խիզանցին քան զամենայն մարդ ավելի սատար և օգնական և ձեռնատու եղած է Խաչատուր եպիսկոպոսին կաթողիկոսություն հաջողցնել, սակայն այժմ ներքնապես կուզե, որ ազգ զԽաչատուրն իսպառ անվավեր համարելով, զինքն նստուցանե աթոռ Պյուլպյուլին։ Խիզանցի Հակոբ եպիսկոպոսի այս տեսակ խորհրդյան իրազեկ լինելով Խաչատուր շարունակ հրահանգ և աղերսանաց գիր կուղղե, որ զանազան հնարյուք և պատճառաբանությամբ հանրագրություն անպակաս խրկե վարչություն վասն հաստատության և վերադարձի յուրո։ Ուստի այս անգամ, ինչպես վեր հիշեցի, սպանությունք և հարստահարությունք պատճառ բերվելով, հանրագրությունք խրկվեցան առ ազգային ընդհանուր ժողովն։

Բայց եթե մանրախույզ դիտողությամբ կամի ոք վերահասու լինել սպանությունից և հարստահարությունից վիճակին Աղթամարա, պիտի տեսնա, թե նույն ինքն Խաչատուր եպիսկոպոս և Խիզանցին բացին զդուռսն սպանությունից և հարստահարությունից խղճալի ժողովրդյան։ Ամենայն ոք գիտեր և կճանաչեր թե Պյուլպյուլ Պետրոս կաթողիկոսն՝ յուր խրոխտ և անվեհեր բնությամբ և իշխանությամբ, սարսափ ձգած էր բոլոր բռնակալ և հարստահարիչ քրտաց վերա, որ ահե Պյուլպյուլին չէին կարող խլրտել և հարստահարել զժողովուրդն, բայց երբ Խաչատուրի և Խիզանցիի ձեռոք 'ի պատվույն ընկեցավ ժողովրդյան պաշտպան և պարիսպն ամրութենե և մատնեցավ 'յուրոցն 'ի ձեռն Կուլիխանին 'ի սպանումն, այնժամ ապա համարձակություն գտան գողյալ և թագուցյալ հարստահարիչք և ձեռսն արկին ոչ միայն կեղեքել և հարրս-

տահարել զվիճակային ժողովուրդն Աղթամարա, այլ սպանանել զոմանս, ինչպես հետ սպանման Պետրոսի կաթողիկոսի սպանին զներսն և ուրիշ պիտանացու մարդիկ։

Զի ըստ տեառն բանի, եթե ընդ փայտ դալար զայս առնեին, ընդ չորն, զինչ արասցին, եթե կաթողիկոսն կսպանեն և կմարսեն, ապա հասարակ ժողովուրդն ուր կմա։ Եթե այժմ տասն տեսակ հարստահարություն և սպանումն կա, երբ Խաչատուր եպիսկոպոս արձակվի գա, անտարակույս կրկնապատիկ պիտի լինի, զի բոլոր քրտեր հավաստի եղած են, թե Պյուլպյուլի սպանումն Խաչատուրի և Հակոբի թելադրությամբ եղած է, ուստի երբ նոցա անպատիժ արձակումն տեսնան, քաջալերություն և վստահություն առնելով կրկնապատիկ պիտի ծանրացուցանեն զաղետս ժողովրդյան, քանզի այժմ զԽաչատուրին իբրև աքսորյալ և պատքապարտ տեսնալով, սակավիկ ինչ կակնածեն կառավարութենեն և պատրիարքարանի բողոքներեն, բայց երբ նա արձակի, պիտի մտածեն, թե որչափ ծանր հանցավոր լինի, կրնա արդարանալ, առ որ վստահացյալ և համարձակություն գտյալ պիտի գործեն առանց կասկածի և երկյուղի։ Ահա զոքա են հարստահարությունից սկզբնապատճառ և իրենք են, որ զայն պատրվակելով կբողոքեն առ վարչություն, որպես թե եթե Խաչատուր վերադառնա գա, հարստահարությունք կթեթևանա, բայց ընդհակառակն առավել պիտի ծանրանա։

3. Հետ տեղապահ Խիզանցի Հակոբ եպիսկոպոսեն, երրորդ միաբան է Աղթամարա Հովսեփ եպիսկոպոս, որ բաց 'ի քերականական արհեստից ունի բավական հմտություն աստվածային սուրբ գրոց, զի է ընթերցասեր, աղոթասեր, չունի լեզվի ճարտարություն, սակայն յուր բարոյական առաքինությամբ պատկառելի և ակնածելի է հաշ ամենեցուն, ունի սրտին մեջ հայրենասիրության և ազգասիրության եռանդ, զայն Աղթամարա միաբաններեն ոչ ոք չունի, բարուքն է հեզ, խոնարհ, ժուժկալ, համբերող, արդարասեր, ընկերասեր և եղբայրասեր, գովելի է հյուրասիրության և ողորմածության մեջ, 'ի մանկական տեսց սնյալ է առ ոտս առաքինի և ճգնավոր հորեղբոր իմո Հովսեփ վարդապետ, որո անուն կկրե և նմանող լինել կցանկանա միշտ և հանապազ։ Սա յուր հորեղբոր նման 13 տարի Աղթամարա տաճարի մեջ լուսարարության պաշտոն վարելով փառավորած էր զվանքն և զտաճարն, սակայն Խաչատուր և Հակոբ եպիսկոպոսոց անիրավ գործոց դեմ միշտ բողոքող լինելով, Հակոբա ձեռամբ բռնի լուսարարության պաշտոնեն ընկեցավ տարագրեցավ և բազում վիշտս և նեղություն կրեց երեսաց երկոցունց և հանապազոր կկրե տակավին և կհամբերե և հորժամ նոցա

անիրավ գործոց համար կբողոքե 'ի պատրիարքարան և կհուսա, թե արդարադատ վարչություն յուր բողոքմանց ձայնին կանսա և կլսե։

4. Որ հետին մնացորդն է հին միաբանութենե, կոչի շփոթի տոպրակ Մխիթար վարդապետ, յոթն երեսելի մականվամբ զարդարված է այս մարդ, վասնզի յոթն և յոթանասնեկի յոթն տեսակ գործեր ունի, է սա անհատ ընչասեր, շահամոլ, կեղեքիչ, հափշտակող, մուրացկանության արվեստի մեջ քան զամենայն հաջողակ, տղրուկի պես ժողովրդյան արյուն ծծող, վասն ագահության երբեք նոր չի հագնիր, այլ միշտ հնոտի և աղտեղի զգեստներ կհագնի, մորուքն շաբաթ անգամ ջրով և ամիսն անգամ հաղիվ թե սապոնով կլվանա։ է սաստիկ կրոնասեր, շատախոս, վայրահաչ, հայհոյիչ, զրպարտիչ, ինքնահավան, կամակոր և սաստիկ պինդ երես, ժողովարարության մեջ առաջին կարգի հաջողություն ունի, 'ի քաղաք, 'ի գյուղ և 'ի տունս մտնելո միջոցին նախ մեղմաբար և օրհնությամբ և գովությունե զտուրս և զողորմությունս կխնդրե, երբ զլանան ի տալն, աղաղակ անեծք կտեղա ժողովրդյան գլխին, մինչև ակամա ստիպվին տալ և հեռացուցանել հինքյանց։

Սա մեր Աղթամար գտնված միջոցին սաստիկ կբողոքեր Հակոբ եպիսկոպոսի գործոց դեմ, թե վանքին հաշիվ չի տար միապետաբար կգործե, հափշտակություն, անիրավություն կրնե, վանքի հարստություն յուր ծոց ժողովեր կուտե, վանքի անկարգության և ավերման պատճառ սա է և այլ բազում ինչ ասեր և բողոքեր ոչ թե Հակոբ եպիսկոպոսի ետևեն, այլ բազում անգամ հայտ հանդիման նորա երեսին, ուստի Հակոբ եպիսկոպոս սորա հանդուգն բողոքման չափ դնելո համար, նորա ոտից զանազան թակարդներ լարելով սորվեցուց մշակաց, որ լավ մի տփոց տան Մխիթար վարդապետին և վանքեն արտաքս վարեն, զոր իմացյալ Մխիթար, թե Հակոբ եպիսկոպոս դարանակալ եղեր է զինքն կործանելո և մերժելո, գնաց ակամա միաբանեցավ ընդ նմա և եղև կամակատար գործոց նորա։ Մխիթար վարդապետ չունի ուսումն և բնավ իսկ չգիտե ստորագրություն դնել, բայց յուր բնական շատախոսությամբ ռամկաց համար քանի խոսք կրնա ընել իբրև քարող և ատենաբանություն, մոռցա գրել, թե յուր սաստիկ կռվասիրության համար հարյուր անգամ գանակոծ եղեր է և դարձյալ գանակոծ լինելե երկյուղ չունի։

5. Փշավանցի Հակոբ վարդապետ, ձայն հաջողակ շարական երգելո և ժամերգության մեջ հաջողակ, հասարակ ընթերցման միայն տեղյակ, բավական քաղաքավար և ընկերասեր, խորհելո մեջ միջակ,

խոսելու մեջ ճարտար, վարուց մեջ անփառասեր, ընթերցասիրության մեջ ծույլ, միաբանութենե հաճությամբ ընտրեցավ լուսարար։ Սա սպանյալ Պյուլպյուլ Պետրոս կաթողիկոսին մտերիմ լինելով, Խաչատուր և Հակոբ եպիսկոպոսաց ձեռոք սաստիկ գանակոծ եղև և 'ի բանտ մատնեցավ, ապա Խաչատուրի և Հակոբի հայրադավության դեմ սաստիկ բողոքելույն աղագավ Խաչատուր եպիսկոպոսի և Վանա Պողոս վարդապետի ձեռոք ընդ Հովհաննես վարդապետի, որ այժմ Երուսաղեմ է, աքսոր խրկվեցավ 'ի Կտուց անապատ, որպեսզի խրատվելով այլևս չբողոքե, բայց նա անվեհեր և արդարասեր գոլով, մինչև ցայսօր և հավիտյան կբողոքի ընդդեմ Խաչատուրին և Հակոբին։

6. Կարկառեցի մյուս Հակոբ վարդապետ, առաջն աշխարհիկ քահանա ժողովրդյան, հետ մահվան ամուսնույն գնաց 'ի Լիմ և միաբանյալ անդ 'ի Հակոբ եպիսկոպոսի Թոփուզյան առնու վեղար կրոնավորության, ապա ետ ամաց ինչ գա 'ի Աղթամար։ Սա ուսմանե և գրագրութենե(ե) բնավին զուրկ, արտաքին երևույթով խոհական և ծանրագլուխ, իսկ մտաց սրութենե և լեզվի ճարտարութենե իսպառ մեկուսի, ազգային անցից և պատմությունից անտեղյակ, բարուքն ժուժակ և բարեսեր։

7. Ղազար վարդապետ Մոգացի 'ի քահանայութենե եկյալ 'ի վարդապետություն, մարդավարի և գործունյա, հեզաբարո և հյուրասեր, ունի կերպարանս քաղաքավարի և մարդասերի, Մոգաց գավառի մեջ դպրոց հաստատեց, իբրև տեսուչ հոն տեղի ազգայնոց ըստ բավականին պաշտպանություն ըրավ, ուստի տեղույն գայմակամ դժգոհելով բողոքեց Վանա բդեշխին, վարդապետի դինեմոլություն և վարք պատճառ բռնելով 'ի ձեռն Վանա բդեշխին և 'ի ձեռն Վանա հայ իշխանաց, ոմանց հեռացնել տվավ Մոգաց գավառեն, մինչդեռ տեղույն ազգայնոց մեծ մասն գոհ էին վարդապետեն, բաց 'ի սակավուց, որք խիստ դժգոհ էին նորա չափազանց արբեցութենեն, որում, եթե կարենար հաղթել, պիտանի վարդապետ մի կրնար համարվիլ, բայց ափսոս, որ իսպառ հաղթահարված [չ]է արբեցութենե։

8. Գրիգոր վարդապետ մոխրաբերդցի, լեզվավ թոթովախոս, բերանով անիծաբան, մտոք տղայամիտ, բարուքն երկչոտ և հուսահատ, քաղաքավարութենե շատ հեռի, մարդկութենե և ազգության գործերեն անտեղյակ և անհոգ, քերականության փոքր-ինչ տեղյակ, բավական աղոթասեր և եկեղեցասեր։

9. Խորեն վարդապետ, հասարակ ընթերցման միայն տեղյակ, դատելու մեջ միջակ, խոսելու մեջ երգիծաբան և զկծեցուցիչ, մշակական

գործոց մեջ բավական հաջողակ, բարուքն ինքնահավան և երկդիմի, մի տարի առաջ Հակոբ եպիսկոպոս հեռատեսություն չունենալո աղագավ զհիշյալ երիտասարդ վարդապետ դրսի տուն մշակաց վերա վերակացու կկարգե, խեղճ վարդապետ փորձության մեջ իյնալով մի կնոջ հետ նախ գաղտնի հարաբերություն կունենա, ապա սատանայեն խաբվելով կհամարձակի զկինն առնացի կերպարանոք դրսի տուն բերել և բազմաց գայթակղության տեղի տալ, ուստի Հովսեփ եպիսկոպոս և այլք 'ի միաբանից կբողոքեն առ վարչություն, սրբազան պատրիարք այս մասին մի հանդիմանական գիր կուղղե տեղապահին, որ ակամա կստիպվի վարդապետի վեղարն առնուլ և ընդ ապաշխարության միակել զնա, մեր Աղթամար երթալո և մինչև վերադարձին դեռ առանց վեղարի կշրջեր հիշյալ Խորեն վարդապետ։

10. Պողոս վարդապետ, այրի տնտես մի, որբ զավակ գոլով, մանկական հասակի մեջ 'ի շնորհս երեսաց և վաստակոց պառավ տնտեսին վարդապետ կձեռնադրվի Հակոբ եպիսկոպոսի հրամանավ, ինչպես որ Մամբրեն, Խորեն և Գրիգոր դեռ պատանյակ գոլով Խաչատուր եպիսկոպոսեն ոչ միայն վարդապետ կձեռնադրվին, այլ առանց ուսման և աստվածային գրոց հմտության ծայրագույն իշխանություն ևս կընդունին, ի ծաղր առնել սուրբ եկեղեցվո արարողության և ավանդության, քանզի որ տղա գոլով տակավին ուսանելո և խրատ ընդունելո կկարոտին հառաջ կմատուցվին, զայլ ուսուցանել և խրատել, որո բնավ բավականություն չունեին և չունին ցարդ։

Հիշյալ Պողոս վարդապետ մարդավարութենե և քաղաքավարութենե իսպառ զուրկ է, ընթերցումն և ուսումն սորվելո կարոտ, պարապություն և վայրահաչություն սիրող, ժամու և աղոթքի ծույլ, առանց դատելո խոսող և շարունակ տրտնջացող։ Հակոբ եպիսկոպոս Խորեն վարդապետի փորձեն տակավին չխրատվելով այս պատանի երիտասարդ փոխանակ Խորեն վերակացու էր հաստատեր մշակաց վերա, ուստի մեք խորհուրդ տվինք Հակոբ եպիսկոպոսին, որ այլևս ոչ երիտասարդ և ոչ հասակավոր վարդապետներեն վերակացու չհաստատե մշակաց վերա, այլ աշխարհական հավատարիմ և ձեռնահաս անձ մի, զի գործ վերակացուին է շարունակ հայհոյել զմշակներ, ծեծել և բռնի աշխատացուցանել և այլ ինչ-ինչ գործոց պատաչել և պարապիլ, որք քնավ վարդապետության վայելուչ չեն, սակայն նա դարձյալ յուր կամք հառաջ տարավ։

11. Հովսեփ սարկավագ, հասակավ պարթև և տարիք 50, սա Պյուլպյուլի ձեռնասուն սարկավագ լինելով, նորա անագորույն սպանողաց

դեմ բողոք կհարուցանե նախ Աղթամարա վիճակի մեջ, ապա սրտի կսկիծին չդիմանալով կդիմե 'ի Պոլիս 'ի պատրիարքարան և ազգային ատյաններու մեջ յուր հոգևոր հոր անպարտ սպանման համար կբողոքե Խաչատուր և Հակոբ եպիսկոպոսց վերա, սաստիկ կդանդատի, թե նոքա են պատճառ Պյուլպյուլի կործանման և սպանման։ Ուստի երբ կվերադառնա 'ի Աղթամար, Հակոբ եպիսկոպոս ոչ միայն ընդ ակամբ կհայի սարկավագ Հովսեփին, այլ կուզե իսպառ տարագիր առնել վասն արդարացի բողոքին, մեք տեսանք, որ սարկավագն վերջի անարգության մեջ ձգելով իբրև աշխարհական գործավորի մի կաշխատեցուներ պարտեզի, կալի և այլ մշակական գործոց մեջ։ Միաբաններեն շատեր կդավեին Հովսեփ սարկավագի վիճակի վերա, կառաջարկեին տեղապահին, որ խնայե անոր, հիշե նորա 30 տարվան հավատարիմ աշխատություն, ձեռնադրե զնա 'ի վարդապետ և կմեղադրեին զնա, թե ընդե՞ր պատանիք և երիտասարդք կձեռնադրեք և այս խեղճ կդրկեք։ բայց նա զանազան պատճառներ հոտելով բնավ չէր լսեր։ Բոլոր միաբանք Հովսեփի վարուց ուղղության, բարուց ժուժկալության, ընթերցանության և եկեղեցասիրության համար կը վկայեին, սակայն նա ոխակալությամբ պատժել կամելով զնա՝ թող կուտար զնա երեսի վերա, մինչև որ հուսահատի և երթա կորնչի, բայց սարկավագն բնական հեզ և համբերող լինելով, տակավին կհամբերեր։

Վերափոխման տոնին մեք Նարեկա վանք հանդիպելով Մշո սուրբ Կարապետի տնօրեն ժողովո հանձնարարական վկայականով երկու ընծայացուք մեզ եկան 'ի քահանա ձեռնադրվելու։ Նարեկա վանից առաջնորդ Հովսեփ վարդապետ այն միջոցին վարչեցեն [հ]ուղվելով կպատրաստվեր 'ի Պոլիս գնալու և բնավ յուր հռչակավոր վանքի մեջ միաբան վարդապետ չունենալով, խնդրեց մեզմե զՀովսեփ սարկավագն վարդապետ ձեռնադրել, փոխանորդության գործեր անոր հանձնել և երթալ 'ի Պոլիս, բայց մեք չուզեցինք բնավ ձեռնադրելու հավանություն տալ՝ զանազան պատճառներ մեջ բերելով, բայց Հովսեփ վարդապետ, Նարեկա գյուղի քահանայք և ժողովուրդք երկար ժամս սկսան սաստիկ աղաչել և ստիպել զմեզ, թե վանքիս ավերման պատճառ մի լինիր, մեր առաջնորդ Հովսեփ վարդապետ կերթա, մարդ մի չկա վանքս կառավարող և այլ բազում աղերսական և հորդորական բանս խոսեին, չորս անգամ խեղճ Հովսեփ սարկավագ բերին մեր առաջ ձեռնադրության պահպանիչ առնելու, չորս անգամ մերժեցինք, բայց հետո նոցա իսպառ թախանձանաց տված աղերսագրույն ակամա զիջանելով և ձեռագիր առնելով, որ Հովսեփ սարկավագ Նարեկա մեջ մշտնջենավոր միաբան մնա, ապա ձեռնադրել հոժարեցա, հետ ձեռնադրության 'ի Աղթամարա միաբանից Հովսեփ եպիսկոպոս և լուսարար Հակոբ վարդապետ և այլ միաբանք Հովսեփ աբեղային ուրախակցության եկին և բոլոր միաբանք ուրախացան Հովսեփի ձեռնադրության վերա, որ վեղար և որ հողաթափ և որ այլ զգեստ խրկելով։ Բայց միայն Հակոբ եպիսկոպոս տրտմած էր, զի կուզեր վասն բողոքին զխեղճ սարկավագն հուսահատության մեջ կորուսանել։ Հովսեփ աբեղայն Աղթամարա նախկին կաթողիկոսաց և եպիսկոպոսաց մոտավոր ազգական գոլով 'ի տղայութենե 15 տարի Նարեկա վանքի մեջ միաբան լինելով լուսարարություն կընե, վանքին և Նարեկացիին սուրբ գերեզմանին, հետո Պյուլպյուլ կաթողիկոս օծվելուն պես անոր կերթա կծառայե և հավատարիմ սարկավագ կլինի, հետո նորա սպանման համար սաստիկ բողոքներ կընե, հետո 'ի պատճառս բողոքման սաստիկ հալածանք և նեղություն կրկրե և հետ 15 տարուց սարկավագության 'ի 50 ամի կատարյալ հասակի մեջ հանկարծ բախտավորելով աբեղա կձեռնադրվի, ինչպես երբեմն 40 տարվո աղջիկներ հանկարծ նոր հարս կլինին, ահա այս է համառոտ պատմություն 50 տարուց նորընծա Հովսեփ աբեղային։

12. Հովսեփ եպիսկոպոսի սարկավագ Ստեփանոս, որ է 'ի Ալուր գեղջե, հասակավ երիտասարդ է Ստեփանոս սարկավագ, սակայն ուսմամբ, կրթությամբ և քաղաքավարությենե կատարյալ է, քերականության արհեստի, նամակագրության և երաժշտության մեջ բավական հաջողակ, որո հառաջադիմության և կրթության պատճառ նույն ինքն Հովսեփ եպիսկոպոսն է, սարկավագս այս բարուքն իբրև վարդապետն յուր հեզ, խոնարհ, առաքինի և եղբայրասեր է, բայց ազգասիրության մեջ տակավին վարժություն չունի։

Աղթամարա միաբանաց համառոտ վարքագրությենեն հայտնի կլինի, թե սոքա բնավ հմտություն և բավականություն չունին զվանքն բարեկարգելու և զվիճակային ժողովուրդն կառավարելու, հայրենիք, ազգություն, հայրենասիրության գաղափար տեղի ունեցած չէ սոցա սրտի մեջ, վասնզի օրինակի ուսուցչի հանդիպած չեն, ցավալի և շփոթ վացության մեջ կհարատևին, անբարոյականություն և չափեն ավելի ինքնասիրություն տիրած է մեջ՛ընին, ժողովրդյան հոգևոր և մարմնավոր կորստյան անփույթ լինելով, միայն յուրյանց անձին շահ և օգուտ կմտածեն, բազում անգամ կրկնելով խոսեցա իրենց, թե պետք է որ յուրյանց գաղափար և հին դրություն փոխելով անձին կրթության և

ժողովրդյան հառաջադիմության ըստ ամենայնի հոգ տանին, բայց ես խոսեցա և ես լսեցի։ Բաղում անգամ հիշեցի միաբանության, թե զի թե ազգ ձեր այս վիճակին տեղեկանա, բնավ երբեք ձեզ կաթողիկոս չի տար։ Վասնզի դուք բնավ կաթողիկոս ունենալո ոչ հատկություն ունիք և ոչ արժանավորություն, ոմանք 'ի միաբանից, որ կաթողիկոս կենդրեին, ոչ այլ ինչ է յուրյանց նպատակ, բայց եթե եպիսկոպոս լինելն, հանուն կաթողիկոսի և 'ի ձեռն ազդեցության նորա ինչս բազումս ժողովել 'ի ժողովրդենեն և հարստանալ, քանզի ասեն՝ այժմ չեմք կարող բռնի և ստիպմամբ ինչս հավաքել, վերոհիշյալ 11 միաբաններեն, ըստ որում Հովսեփ սարկավագ միաբանեցավ Նարեկա վանից, երկուքն, այն է՝ տեղապահ Հակոբ եպիսկոպոս 'ի վերեն երեսս կուզե խաչատուր եպիսկոպոսի վերադարձն, քանզի կկասկածի, որ եթե անոր վերադարձ չհաջողի, ինքն հետ նորա ձեռնադրող և կամակից նորքսն ամբաստանության հետև իյնա, մյուսն շփոթի տոպրակ մականվանյալ Մխիթար վարդապետ կցանկա խաչատուրի հաջողություն, զի ունի ինչս բազումս, որով կհուսա, թե կարե ձեռնադրվել եպիսկոպոս, հիշյալ երկուքն հորաժամ կգրգռեն զհանդարտ ժողովուրդն Աղթամարա, հանրագրություն ստորագրել կուտան և կխրկեն։ Ղազարոս Կարկառցի Հակոբ, Խարեն և Պողոս վարդապետք անտարբեր են, երբեմն մեկ կողմն և երբեմն մյուս կողմն կհակին։ Հովսեփ եպիսկոպոս, յուր սարկավագ Ստեփանոս և փշավանցի Հակոբ վարդապետ ոչ զխաչատուրն և ոչ Հակոբ եպիսկոպոսի հաջողություն կխնդրեն, այլ սուրիշ մեկ արժանավորի հաջողություն։ Վերջապես, եթե Աղթամարա միաբանք հորժամ չհորդորեն և չգրգռեն զթեմական ժողովուրդն, թե պետք է, որ դուք Աղթամարա մեջ կաթողիկոսություն հաստատ պահեք, ժողովուրդն երբեք ջանադրություն չունի վերստին կաթողիկոս վերահաստատել 'ի Աղթամար, այլ շատերեն լսեցի, որք ասեին՝ ազգին մի կաթողիկոս բավական է և ահա սուրբ Էջմիածին 5 ավուր ճանապարհ հազիվ թե հեռի է մեզմե, թող մեզ պաշտպանություն ընե վեհափառ Գեորգ կաթողիկոս, բավական է մեզ։ Բայց 'ի հնուց անտի հիշյալ միաբանք սովոր են ասել, թե ազգի հարազատ աթոռն Աղթամարա աթոռն է, թե Էջմիածնա մեռոն ձեթեն իազիէ[120], մեր մեռոն 12 տեսակ սուրբ և ընտիր ծաղիկներե է և առանց կրակի եփ կելնի, այս և այս տեսակ շատ մը ռամկական և պատրողական առասպել բանյուք կխաբեն զպարզամիտ ժողովուրդն, ասել և գրել կուտան, թե մեք Աղթամարա մեջ կաթողիկոս կուզեմք և այլն։

Նախքան խաչատուր եպիսկոպոսի Աղթամար մտնալն տեղույն միաբանք գոնե այժմյան պես գիտություն և կրթություն չունին, այլ Լիմ և Կտուց անապատա միաբանաց նման զովելի վարք և ընթաց ունին և մասամբ իվք ճգնավոր կհամարվին, բայց եթե խաչատուր ոտք կդնե 'ի Աղթամար, բնական և անբնական անբարոյականություն մուտ կգտնե ողորմելի միաբանության մեջ, որո նախասկիզբն և օրինակ կլինի նախ խաչատուր և 'ի նմանե կուսանին այլք։

Անբարոյականության նոր ճարակ տալու առիթ կլինի ապա Խիզանցի Հակոբ եպիսկոպոս, որ ուզելով ժառանգավորաց դպրոց հաստատել, քանի որք անհայր և անմայր մանկունք ժողովելով ներսի կղզին կբնակեցուցանե, որով քանի անփորձ երիտասարդ վարժապետք անբարոյականության մեջ իյնալով կբամբասվին ժողովրդյան մեջ, ուստի Հովսեփ եպիսկոպոս և քանի ողջախոհ միաբանք բողոք բառնալով կստիպեն տեղապահն, որ դպրոց դրսի տուն հաստատե և նորս տեսյալ, թե գայթակղություն օրըստօրե կսաստկանա հակամայիցս, կստիպվի դպրոց 'ի դրսի տուն փոխադրել, զի գայթակղության ոչ բարի համբավ տարածված էր 'ի Մոգս, 'ի Շատախ, 'ի Ռշտունիս և 'ի Հայոց Ձոր և մինչև անգամ այլազգյաց մեջ։ Այս մասին մեղադրեցինք զՀակոբ եպիսկոպոս, թե ոչ ապաքեն դուք տեղյակ էիք փորձությունից սատանայի, ընդե՞ր ներսի կողմ ժողովեցիք այդ որք մանկունք, բամբասանաց և գայթակղության տեղի տվիք ձեր երիտասարդ վարդապետաց։ 23 հոդվածե բաղկացյալ մի կանոնադրություն պատրաստեցինք վասն ժառանգավորաց դպրոցի բարեկարգության և հանձնեցինք տեղապահին 'ի գործադրություն։ Հոդվածին մեկ կարգելույր երբեք դպրոց ներսի կղզին չտանել և մյուսն խստիվ կարգելո 16 տարեկանե վար տղայք ընդունել 'ի վարժարան, զի մի լիցին քար գայթակղության կուսակրոն վարդապետաց և այլն։

Աղթամարա վանքն հայոց գավառներեն միայն ինն գավառ թեմ ունի, որք են՝ Ա. Ռշտունյաց գավառի հայոց գյուղորեից մի մասն։ Բ. Հայոց Ձորս գավառի հայոց ամբողջ գյուղորայք։ Գ. Մոգաց գավառի հայոց ամբողջ գյուղորայք։ Դ. Շատախու գավառի հայոց ամբողջ գյուղորայք։ Ե. Կորդվաց (այն է՝ Կարկառու) գավառի հայոց ամբողջ գյուղորայք։ Զ. Կեցնա գավառի հայոց գյուղորեից մի մասն։ Է. Սպարկերտու հայոց գյուղորեից մի մասն։ Ը. Հիզնա գավառի հայոց գյուղորեից ամբողջն։ Թ. Կորճեից գավառի միջի հայոց գյուղորեից մի մասն։ Ժ. Նորեն Կորդվաց լեռներու մեջ հինգ հարյուր տան չափ թափառական

հայք, որոց գյուղորեից անուն և բնակության վայր հաստատ կերպիվ որոշված չէ տակավին։ Հիշյալ ինն գավառաց մեջ ըստ հավանական հաշվո 4782 տուն հայ ընտանիք կբնակին։ Ինն գավառաց մեջ թե որչափ տունք 'ի մարաց ազգեն կբնակին գլխավոր հարստահարչաց անուն, բռնությունից որքանություն և կերպեր սույն Գ. գլխո մեջ համառոտիվ պիտի բովանդակեմք 'ի տեղեկություն ազգային վարչության։

Ա. Ռշտունյաց գավառ արդեն կից է Աղթամարա գրսի տան (որ է՝ Ախվանք), որո հարավոյն կողմն է, Ռշտունյաց դաշտի կես մաս Աղթամարա առաջ, իսկ մնացյալ կեսույն երկարություն է չորս ժամ և լայնություն մի ժամ, դաշտ բովանդակ ջրարբի և առաջին կարգի բարեբեր։ Գավառի դիրքն և տեսքն հույժ սքանչելի և ախորժելի։ Հայոց գյուղորայքն են՝ Ա. Փշավանք, տունք հայոց 'ի նմա 25։ Բ. Բատականց, տունք՝ 30։ Գ. Բախվանց տունք 15։ Դ. Քարադաշտ տունք 10։ Ե. Բողանիս 10։ Զ. Հարբերդ 20։ Է. Նոր գյուղ 50։ Ը. Մոխրաբերդ 40։ Իսկ Նարեկա վանք, որ սուրբ էջմիածնա դեմ է այժմ, նորա գյուղորայք Ռշտունյաց մեջ են, Ա. Նարեկ 40 տուն։ Բ. Փախներ 30 տուն։ Գ. Վերին Սորին 8 տուն։ Նույնպես սուրբ Թումայի Առաքելո վանք, որ սուրբ էջմիածնա կվերաբերի թեմին են։ Ա. Գանձակ 20 տուն։ Բ. Վառենց 15 տուն։ Գ. Թիմար 20 տուն։ Դ. Շատվան 12։ Նույնպես սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի վանք, որ սուրբ էջմիածնա թեմն է, գյուղորայք են։ Ա. Ընծակ 13։ Բ. Բելու 100։ Գ. Նանկանց 12։ Դ. Յաղուն 14։ Ե. Առանց գյուղ 10։ Միայն Աղթամարա թեմի ամբողջ տունք 200 տունք են, 'ի բաց առյալ երեք վանքի թեմերին։

Սույն գավառի մեջ 100 տան չափ թե քուրտ և թե տաճիկ բնակիչ կա, գլխավոր քուրտ գավառիս անվանի խան Մահմուտի եղբայր Դեվրիշ պեյն է և յուր որդին Կուլիխան։ Գավառիս քրտաց հարստահարություն այնչափ սաստիկ չէ, ըստ որում Վանա կառավարություն մերձակա լինելով թույլ չտար, որ հարստահարություն սաստկացունեն։

Բ. Հայոց Զորո գավառ, Աղթամարա ճիշտ արևելյան կողմն չորս ժամավ հեռի է վանքեն։ Հայոց Զոր մի գեղեցկատեսիլ դաշտահովիտ է, որ արևմտյան կողմանե Արտոսր լեռնեն, Ոստանո ավանեն և ծովու եզերքեն կերարձագի դեպ 'ի արևելք, երկարություն 6 և լայնություն երկու ժամ է։ Բոլոր արտորայք բերրի և ջրարբի, Անգղա գետ[121] և Շամիրամա առուն[122] այս դաշտահովտեն կանցանի և մեծ մասն կոռոգանի։ Կորտուաց լեռանց շղթայք թե Ռշտունյաց և թե այս գավառի հարավակողմն են, որք գեղեցիկ և հոտավետ հովիտներ ունին։ Հայոց Զոր

Վանա քաղաքեն երեք ժամ հեռի նորա հարավակողմն է։ 35 հայոց գյուղ կբովանդակե յուր մեջ, որք են։ Ա. Հաբսնոց տունք հայոց 'ի նմա 35։ Բ. Յորակոնց 10։ Գ. Թրքաշեն 10։ Դ. Մարգս 10։ Ե. Սպիտակ վանից թաղ 8։ Զ. Բլրենց 30։ Է. Քերծ 40։ Ը. Կրգրլբաշ 10։ Թ. Յիրջ 8։ Ժ. Խոսպ 15։ Ժա. Վերին Բժնկերտ 10։ Ժբ. Կղզի 20։ Ժգ. Խառնորտկներ 6։ Ժդ. Հանկշտոնց 20։ Ժե. Յիրեմերու 20։ Ժզ. Յորտինց 15։ Ժէ. Խեժ 10։ Ժը. Հընդստան 20։ ԺԹ. Նոր գեղ 40։ Ի. Աստվածաշեն 20։ Իա. Ոչխարենց 8։ Իբ. Բերդակ 30։ Իգ. Հավալոն 50։ Իդ. Սևակրակ 5։ Իե. Գիլպալասան 2։ Իզ. Արտամետ 100։ Իէ. Սուրբ Վարդան 10։ Իը. Խուռզոմ 20։ ԻԹ. Քեռշկ 10։ Լ. Իշխանեզոմ 20։ Լա. Մաշկակտակ 40։ Լբ. Յոնգզ 50։ Լգ. Քարավանց 4։ Լդ. Դեմ 70։ Լե. Մուլք 6։ Ընդ ամենայն տունք հայոց 780։

Թե Հայոց Զորո սահմանագլուխք և թե մեջ տեղեր 650 տուն այլազգիք կբնակին, 300 տուն տաճիկ կբնակին Արտամետ ավանի մեջ և զանազան տեսակ բարոյական և նյութական վնաս կհասուցանեն Արտամետու հայոց հարյուր տուն բնակչաց, հայք զոգ թե կես գերի կհամարվին այլազգյաց։ Հայոց մեծագույն մասն նոցա ծանր ասկոսի ներքև ճնշված և հարստահարված են։ 50 տուն քուրտ ազգեն կբնակին Հայոց Զորո գյուղերու մեջ, սակավաթիվ լինելով սակավ նեղություն կուտան հայոց։ 300 տուն քուրտ կբնակին Ոստանո գեղեցիկ ավանի մեջ, որ երբեմն շահաստան էր Արծրունի անհարազատ թագավորաց։ Տեղույս քրտեր սաստիկ կրոնամոլ և հայատյաց լինելով, երբեք ընտանեաբար և մտերմաբար չեն վարվիր հայոց հետ, ունին քանի թեքիներ և 60-են ավելի ֆեխներու խումբ մի, որք շատ անգամ ավազակությամբ կապրին և եկեղեցի կողոպտող Հիզնա ֆախիններուն կամակից և ընկերակից են, սոքա են, որ զքրտեր կգրգռեն հայոց դեմ ատելությամբ և խստությամբ վարվելով հարստահարել։

Գ. Շատախու նահանգ Աղթամարեն 8 ժամ հեռի դեպ արևելյան հարավ և Վանեն 12 ժամ դեպ 'ի ուղղակի հարավ, Տիգրիս գետի եզերք, Կորդուաց լեռանց մեջ, խոր ձորակի մեջ, ունի յուր դիրք։ Հովիտ գետի ընթացքի հետ կձգվի արևմուտքեն դեպ 'ի արևելք։ 36 հայոց գյուղեր կպարունակե յուր մեջ, որք են՝

Ա. Շատախու թաղ 150 հայոց տուն։ Բ. Շատախու Ագարակներ (այն է՝ մաղրաներ) 10 տուն։ Գ. Արուսկե 4։ Դ. Պաշկ 7։ Ե. Ոգիս 6։ Զ. Յառինզոն 8։ Է. Վախրով 10։ Ը. Յագրուս 5։ Թ. Քրմենց 4։ Ժ. Պաղոյեանց Մզրեն 3։ Ժա. Պասպոր 6։ Ժբ. Ծիծանց 11։ Ժգ. Ճնուկ 6։ Ժդ.

Ցանինց 7։ Ժե. Կազպի 30։ Ժզ. Սագ 5։ Ժէ. Կաճետ 70։ Ժը. Խումար 8։ ԺԹ. Արտողցվոց գեղ 3։ Ի. Սարկիտ 6։ Իա. Արմիշատ 12։ Իբ. Թողվանց 5։ Իգ. Ցիգի 10։ Իդ. Ծուզ 5։ Իե. Բոլս 6։ Իզ. Ցաշկանց 4։ Իէ. Սբվտկի 20։ Իը. Շահրուր 7։ ԻԹ. Մուսկավեն 6։ Լ. Նառ 3։ Լա. Վերին Դարենց 6։ Լբ. Ներքին Դարենց 4։ Լգ. Ցառեզ 10։ Լդ. Կահնամիրոն 4։ Լե. Շիտան 20։ Լզ. Կաշաչիզ 20։ Ընդ ամենայն տունք հայոց 501։

Շուրջ երեսուն տարի է, որ Շատախու հայեր չկրնալով դիմանալ սաստիկ բռնության և հարստահարության, հետզհետե գաղթեցին աստ-անդ, մի մասն 'ի Վանա քաղաքն և մեծ մասն Վանա գյուղեր և հեռավոր տեղեր և մինչև 'ի Ռուսաստան։

Շատախու ամբողջ հայեր մի բնաձիր սքանչելի ազնվություն և սրամտություն ունին, որ գոգ թե հաղիվ ուրեք գտանի, բոլոր բարեպաշտ և ընկերության մեջ հավատարիմ ջանասեր և աշխատասեր թե արք և թե մանավանդ կանայք յուրյանց լեռնամեջ վայրեր շատ կսքրեն և անկե բաժանվել մահ կհամարեն, շալ գործելո մեջ բավական ուշիմություն և հառաջադիմություն ունին։ Ընդարձակ հող չունենալով մեծագույն մասամբ շալ կգործեն և կվաճառեն, իսկ կանայք շատ լավ պրտի մանած կմանեն։

Շատախու թաղի մեջ միայն մասնավոր դպրոց մի ունին, ուր 30-[է] չափ տղայք հասարակ ընթերցմունք կուսանեն։ Եթե Շատախու տղայք կարգավորյալ դպրոցի մեջ կրթվին, մեծագույն մասամբ Դավիթ Անհաղթ փիլիսոփա կդառնան։

Շատախցիք քրտաց մեջ խառն լինելով հայոց բառերու ամբողջություն և լեզվի կանոնավորություն ձիգածոեր են, ուստի բաց 'ի Վասպուրականի հայերեն, ուրիշ տեղի հայեր խիստ դժվարությամբ կհասկանան նոցա լեզվի ծամածուռ արտահայտություն և խոսակցություն, հայոց բառերու զորս մասն քրտերեն առած են, երեք մասի բառերն խեղաթյուրելով կրճատած և այլափոխած են։ Տարակույս չկա, թե դրպրոց և ուսումն միայն կարե սոցա բառեր և խոսակցություն կանոնավորել, զտել և մաքրել։ Որչափ արտասանությունք ծամածուռ է, սակայն, այնուամենայնիվ, առաջին աստիճանի արագախոս և ճարտարաբան են։

Վարուց կողմանե կրնան մաքրակենցաղ ասվիլ, զի ընտանյաց բարոյականություն պահպանելո մեծ փույթ ունին, բարուց կողմանե սիրելի հատկություն ունին, կամքերնին անհողդողդ և անվեհեր։ Եթե կառավարություն ուժ տա իրենց, կարող են զինուք զիրենք պաշտպանել հարստահարչաց դեմ, զի զենք գործածելո մեջ բավական քաջություն և վարժություն ունին։ Ցավալին այն է, որ այս պատվական ժողովուրդ ուսումնարան և ուսյալ եկեղեցական չունին, որ զիրենք քաջալերեն և մխիթարեն, ժողովուրդն առհասարակ մեծ պատիվ կընծայե եկեղեցականաց, ժողովարար կդերք մեծ գոհունակությամբ կվերադառնան այս գավառեն, առատ նվեր կուտան Աղթամարա վանքին։

Շատախու նահանգի մեջ հաղիվ 200 տուն քուրտ կան, որոց բռնավոր աղայք սոքա են։ Ա. Մահմուտ աղա։ Բ. Ալի։ Գ. Օսման աղա։ Դ. Հասան աղա։ Ե. Ավատ, սա Թողվանց գյուղ հափշտակելով 7 տուն հայեր բռնի դուրս հանեց և գյուղի հողեր հափշտակելով յուրացուց։ Զ. Աշկուպ աղա։ Է. Գուլմահմուտ աղա, որ անցյալ տարի իբրև ավազակապետ լեռներ քաշվելով շատախցի հայոց 20 հատ ջորի հափշտակեց և պարսից մեջ տանելով ծախեց։ Ը. Մուստաֆա և նորա եղբայր Հասան աղայք։ Թ. Շարաֆ աղա։ Ժ. Ապտրահման աղա։

Վերոհիշյալ Մահմուտ աղայն և յուրայինք զմահտեսի Մանուկն սպանեցին, մահտեսի Սարգսի աչք հրացանով հանեցին։ Մահմուտ և Ալի աղայք Կաճետու և Կազպի գյուղերու հողեր յուրացուցին, սոքա ծածուկ դրամ կառնուն հայերեն, գող ունին և գողություն ընել կուտան, հայոց կանաց վերա բռնաբարություն կընեն, հիշյալ պեյեր անուն տալով Ալի անուն քուրտի մի ձեռոք զՀարությունի որդի Կարիպ 25 տարվո երիտասարդն սպանել տվին։ Ցազրվան գյուղի մեջ Պաշոյի 13 տարվո կույս աղջիկ բռնաբարեցին, բայց երբ վերահաս եղան, թե հայք յուրյանց բռնաբարության գործն իմացան, զաղջիկն խեղդելով, հրատարակեցին, թե աղջկան ծնողքն սպանած են։ Վերոհիշյալ բռնավոր պեյեր սովորություն ըրած են հայոց դեղեր վառել տալ, երբոր հայոցմենե ուզած բան չհաջողին առնուլ։ Մնացյալ 200 տուն քուրտեր իրենց աղաներուն հետևելով՝ ամեն տեսակ բռնություն կբանեցնեն հայոց վերա, վասնզի քրտեր զենք ունին, իսկ հայեր չեն կարող զենք բանեցնել, բռնավոր ապստամբաց վկայություն կառավարության առյան կընդունվի, իսկ հայոց՝ ոչ։

Թե Շատախու քուրտ աղաներ և թե ուրիշ կողմի բռնավորներ, մի մասնավոր վրեժխնդրության հոգի ունին այն հարուստ հայընտիր երեվելի հայեր սպանելո և գոգ թե այս քսան տարվան միջոցին Մարաստանի կողմեր բնակյալ ազգասեր և ազգապաշտպան հայերու վերջ հասուցին, որո տուն ավար առին, որո ինչք հափշտակեցին, որո անձն

սպանեցին։ Բայց ազգավնաս և մասնիչ հայոց բնավ չուզեցին վնաս հասցունել, զանոնք իրենցմե համարելով։

Շատախցի հայք շատ անգամ յուրյանց հարստահարողաց դեմ բողոքեցին, բայց փոխանակ հարստահարութիւն թեթևցնելու, ավելի ծանրացավ ձեռք բռնավորաց նոցա թիկանց վերա, ուստի այժմ ոչ թե մասամբ իվիք անձնատուր լինելով բռնավորաց, այլևս չեն համարձակիր հայտնապես բողոքել նոցա դեմ, զի մահ և կորուստ սպառնացած են բողոքողաց, ինչպես որ քանի երևելի հայ բողոքարկուք սպանեցին, որով սարսափ բազմաց սրտի մեջ սաստկացուցին։

Դ. Մոգաց գավառ Աղթամարեն 7 ժամ հեռի ճիշտ դեպ 'ի հարավակողմն և Վանեն 16 ժամ հեռի, փոքր-ինչ շեղված դեպի հարավային արևմուտք։ Տիգրիս[ի] մի ճյուղի վերա Կորդվաց բարձր լերանց ծործորներու մեջ ունի յուր վայելուչ դիրք։ Երկիր ընդարձակ դաշտեր և հողեր չունի, փոքրիկ արտեր ունին լերանց կողքերու վերա, որք վեցկիով և փայտատով կմշակեն, Մոգաց մեղր գովելի է ամեն տեղ։

Հայոց գեղերեն այժմ 48 գյուղ կպարունակե յուր մեջ, որք են։ Ա. Թառ, հայոց տունք 20։ Բ. Պուրանդ 6։ Գ. Պոլենց 30։ Դ. Կինկոն 35։ Ե. Սուն 25։ Զ. Շանժիկ 4։ Է. Փեսավանք 3։ Ը. Գոմեր 25։ Թ. Կիտրիս 25։ Ժ. Յակրվան 15։ Ժա. Ցիր 3։ Ժբ. Թազս 4։ Ժգ. Պրանուկ 5։ Ժդ. Սեպ 20։ Ժե. Սպկանց 15։ Ժզ. Կուճոզս 10։ Ժէ. Տսմանց 15։ Ժը Ծառտանց 5։ Ժթ. Մազնի 2։ Ի. Թառամազ 3։ Իա. Ամիս 25։ Իբ. Խրիպ 20։ Իգ. Թառարիս 20։ Իդ. Ծափանց 10։ Իե. Հառնանց 20։ Իզ. Կայթանց 25։ Իէ. Լորյանց 15։ Իը. Հոնենց 26։ Իթ. Հասկնճառս 13։ Լ. Շեն 8։ Լա. Փեստատեղ 6։ Լբ. Անապատ 5։ Լգ. Խացաբլուր 10։ Լդ. Յաղմշառս 3։ Լե. Յաղին 30։ Լզ. Նորովանս 10։ Լէ. Կասր 6։ Լը. Հորիճանց 18։ Լթ. Կառկիճանց 20։ Խ. Հառինճ 15։ Խա. Տեմկառ 10։ Խբ. Քաղաքի թաղի 25։ Խգ. Աբրահամենց թաղ 30։ Խդ. Անծողանց թաղ 11։ Խե. Դաշտի թաղ 25։ Խզ. Լճան 10։ Խէ. Մատականց 7։ Խը. Խալենց 6։ Ընդ ամենայն տունք հայոց 696։

Մոգաց գավառի մարդկանց վերա մի բնական ազնվություն կփայլի, յուրյանց իշխանական կերպարանք և գեղեցկություն հայտնապես կապացուցանե, թե սոքա են թոռունք այն արևելյան մոգուց, որք այս գավառեն տեսին զաստղն մանկացյալ աստված որդվոյն և գնացին երկրագունել նմա։ Կպահեն մոգվոց և յուրյանց հայրենի բոլոր ավանդություններ։ Կսիրեն մեծություն և իշխանություն, հույժ մարդասեր և բարեբարո մարդիք են. անվանց մեջ ամենեն ավելի Մելիք և Մելքոն

անուններ կդնեն տղայոց վերա, մանավանդ հարուստներ և ազնվականներ։ Սուր միտք, սուր դատողություն և բնական տրամաբանություն ունին յուրյանց պերճ և վեհանձն խոսակցության մեջ, ուսման արտաքո կարգի հետամուտ և փափագող են, սոցա լեզուն շատախցվոց լեզուեն ավելի մաքուր է, թե սոքա և թե շատախցիք 12—14 և 15 տարուց տղայք կպսակեն, պարկեշտություն հույժ սիրելույն աղագավ։

22 տարի առաջ Վանա առաջնորդ հանգուցյալ Գաբրիել եպիսկոպոս փութաջան խնամով մի դպրոց բացավ մոգաց մեջ, այդ ազնիվ և սրամիտ ժողովուրդ դաստիարակելու և տեր Դավիթ քահանա մի 'ի նույն գավառեն վարդապետ հաստատեց և Փութկի սուրբ Գևորգ վանքի 30.000 զուրուշեն ամսական կապեց վարժապետին։ Հետ ննջման Գաբրիել եպիսկոպոսի, դպրոց երեսի վրա մնաց, վասնզի Աղթամարա միաբանք այլևս փույթ չտարին։ 3 տարի առաջ մոգացի Ղազար վարդապետ կրկին դպրոց վերահաստատեց, բայց վարդապետ, ինչպես երկրորդ գլխո մեջ բացատրեցինք, Աղթամար դառնալեն զկնի իսպառ խանգարեցավ դպրոց։

Աղթամարցիք ազգ խաբելով Փութկիի մուխթան յուրացուցին, որ Երուսաղեմի սուրբ Հակոբա վանքի դպրոցի նման մի ուսումնարան բանալով վիճակին ուսումնական քահանա և վարժապետ հասուցանեին, սակայն 18 տարի մուխթան առնելեն հետո տեղապահ Հակոբ եպիսկոպոս 2 տարի առաջ մի դպրոց բացավ Աղթամարա մեջ, քանի որք և անպիտան տղայք ժողովելով յուր միաբանության անբարոյականության պատճառ եղավ և ասկե մի ամիս առաջ վարժապետ Նշան արտաքսվորեց և տղայք ցրվեց։

Ուստի, եթե ազգային վարչություն գավառացի ազգայնոց բարեբարություն կուզե առնել, պետք [է], որ Փութկիի 20.000 զուրուշ եկամուտով թե մոգաց, թե Կարկառու և թե Սպարկերտու հույժ աղքատ և հարստահարյալ գավառաց մեջ 10 հատ դպրոց բանալ տա, ապա թե ոչ այնքան գումար դրամ հումպետս կվատնվի Աղթամարու տեղապահի և միաբանաց ձեռք, որք այսքան տարի յուրյանց վանքեն և երկու տարվան դպրոցեն ոչ մի քահանայացու և ոչ մի վարժապետացու կրցան հասցունել և ոչ այսուհետև կարող են հասցունել։

Մոգաց գավառի մեջ 300 տուն քուրտ կա, որոց բռնակալ և հարբստահարիչ պեյերու անունք են։ Ա. Ավտալ պեյ, որ Փութկի սուրբ Գևորգի աշխարհական վանահայր երևելի Զեթոն սպանեց։ Բ. Շիթի պեյ։ Գ.

Սուլեյման պեյ։ Դ. Շարաֆ պեյ։ Ե. Թառամ աղա։ Զ. Ամր աղա։ Է. Հզեր աղա։

Մոգաց պեյեր և աղայք թե հայտնի և թե 'ի ծածուկ զհայեր կսպանեն և սպանել կուտան, պեյեր յուրյանց ագարակներ և արտեր բռնի և առանց ինչ վարձուց հայոց վարել, ցանել և քաղել կուտան։ Պեյեր զհամարյուն մեր հայ եղբայրք իբրև ստրուկ ճորտ համարելով ոչ միայն ամեն տեսակ ծառական գործոց մեջ ձրի կաշխատեցուցանեն, այլ յուրյանց բռնավորական կամքն ուղած միջոցին որչափ դրամ կամենան 'ի նոցանե կառնին։ Հայոց ձեռն եղած բոլոր արտորայք յուրյանց համարելով իճարոց[123] կառնին։ Հայոց ձեռն եղած վաղեմի հողեր բռնի և խորամանկ հնարիւյանք յուրյանց վերա թափի ընել կուտան՝ հայոց պարկեշտ կանայք կբռնաբարեն։

Հիշյալ բռնակալ և բարբարոս պեյեր հայեր իբրև անասուն համարելով դրամով յուրյանց մեջ իրարու կծախեն, սոյն գերեվաճառուրյուն ոչ միայն Թենզիմաթեն առաջ հայտնապես 'ի գործ կդնեին, այլև մինչև 1873 ներկա թվականս դեռ սոյն գերեվաճառուրյուն կշարունակեն՝ ընդդեմ մարդկային օրինաց և իրավանց, ընդդեմ տերուրյան կամաց և արտոնուրյանց։

Պեյեր զմոգացի հայոց վերա սոսկալի բարբարոսուրյուն և բռնուրյուն 'ի գործ դնելով այնչափ սաստիկ երկյուղիվ պաշարված են, ուստի այսչափ անհնարին հարստահարուրյունից դեմ բնավ երբեք չեն համարձակիր հատյան կառավարուրյան բողոքել, վրեժ կամ գթուրյուն հայցել, չեն համարձակիր հայեր մինչև անգամ խոստովանաբար յուրյանց ցավ հայտնել, զի կկասկածին գուցե պեյերու ականջ հասնելով փոխանակ ցավին թեթևանալո յուրյանց կյանքեն և քաղցր արևեն զրրկվին։

Հայոց այսչափ աղետից վերա այնչափ չեմ զարմացեր, այլ զարմանալով կտարակուսիմ, թե ինչպես մինչև ցարդ 'ի Մոգս տերուրյան կողմանե պաշտոն վարող գայմակամներ աչոք իսկ տեսնալով այսչափ բազմադեմի հարստահարուրյունք հայոց վերա, մանավանդ գերեվաճառուրյուն, տակավին չեն ուղած բողոքել Վանա բդեշխաց, Կարնո բարձր կուսակալաց և նույնիսկ օգոստոսափառ տերուրյան։

Այս միայն ակնհայտնի կերևի այժմ, թե 'ի Մոգս պաշտոնավոր գայմակամներեն ոմանք պեյերեն կվախնան, ոմանք կկաշառվին, ոմանք հարստահարուրյունից մասին գաղտնի կընկերանան բարբարոսաց, ոմանք ևս զքրիստոնյայս 'ի սրտե ատելով կթույլատրեն պեյերուն և

քրտերուն, որ զամենայն ինչ հայտնի գործեն, որպեսզի հայեր Հայաստանեն հետզհետե բնաջինջ լինին և կորնչին երթան։

Արդեն թե Մոգաց և թե Շատախու նահանգի հայոց մեծ մասն 25 տարվան միջոցին չկրնալով դիմանալ այսպիսի հարստահարուրյանց, թողին յուրյանց հայրենի բնակուրյուն և գայթակղեցին այլ և այլ գավառս, մի մասն 'ի Վանա քաղաք և 'ի գյուղորայս և մի մասն մինչև 'ի Ռուսաստան։ Այս գավառաց մեջ անձին պատվո և ընչից ապահովուրյուն չկա, ով որ ասե կա, նա հայտնապես տերուրյուն և ազգ կխարե, ով որ ասե կա տերուրյան, ազգին թշնամի է, ով որ ծածկե, չհայտնե տերուրյան և ազգին անհավատարիմ է, ով որ հայտնե տերուրյան և ազգին հավատարիմ լինելով մեծ ծառայուրյուն կմատուցանե, ուրեմն պետք է, որ հայտնենք տերուրյան և ազգին։

Ե. Հիզնա գավառ, որ Աղթամարա հարավային արևմուտք 4 ավուր միջոց հեռի է 'ի նմանե, 5 ավուր ճանապարհ հեռի Վանեն դեպ արևմրտյան հարավ, 8 ժամ հեռի Բաղեշ քաղաքեն դեպ 'ի արևելք։ Հայոց գյուղեր Հիզնա լեռնաշատակի, լերանց ստորոտ և հովիտներու մեջ շինված են, երկիր գիներեր և արդավանդ է, բոլոր հայեր երկրագործուրյամբ կպարապին։

Հիզնա գավառ այժմ հայաբնակ 42 գյուղ ունի յուր մեջ, որք են։ Ա. Խարխոց և տունք հայոց որ 'ի նմա 30։ Բ. Խակիս 25։ Գ. Խածուս 10։ Դ. Պախուր 20։ Ե. Կատինուկ 20։ Զ. Վերին Պախուր 20։ Է. Ներքին Պախուր 18։ Ը. Համ 8։ Թ. Պռոշենց 20։ Ժ. Մանտոյանց 8։ Ժա. Փասր 6։ Ժբ. Պեսոյանց 6։ Ժգ. Անապատ 15։ Ժդ. Եղոնց 10։ Ժե. Նորշեն 20։ Ժզ. Տի 50։ Ժէ. սբ. Խաչո գյուղ 30։ Ժը. Լի 20։ Ժթ. Հոռ ճոք 15։ Ի. Տարոնց 15։ Իա. Բրոնց 20։ Իբ. Խուփ 18։ Իգ. Խսպան 7։ Իդ. Հեգու 20։ Իե. Միջա 2։ Իզ. Ներքին Կարասու 20։ Իէ. Վերին Կարասու 30։ Իը. Ուրանց 50։ Իթ. Ընժան 6։ Լ. Կութ 30։ Լա. Ըստուս 10։ Լբ. Խաչուկ 10։ Լգ. Հիզան 13։ Լդ. Միջին Թաղ 10։ Լե. Փալասոր 10։ Լզ. Բերդակ 10։ Լէ. Փաստ 100։ Լը. Սորի 50։ Լթ. Կապան 15։ Խ. Կաքուանիս 15։ Խա. Խարխեր 80։ Խբ. Շեն 50։ Ընդ ամենայն տունք 926։

Հիզնա գավառի հայեր երկար միջոց առան(ց) խնամաց և պաշտպանուրյան մնալով հայկական ձիրքեր և հատկուրյունք մոռցած են, քրտաց ձեռքի ներքև ճնշվելով և նոցա հետ ընդմիշտ կենակցելով, մասամբ իվք նոցա վարք, բարք և բնավորուրյուն իբրև եկամուտ ընդունած են, սաստիկ նախանձ և անմիաբան են, իրար չքաշելով ստրուկի

կերպարանք առած են, բավական ուշիմ և աշխատասեր մարդիկ են, սակայն խարդախ և խաբեբա են։ Ուման ընդունակ կերևին, սակայն ուսումնասիրութենե շատ հեռի են։

Այս գավառի 42 գյուղի մեջ ոչ դպրոց կա և ոչ դպրոցի գաղափար դեռ ծնած է, սուրբ Խաչ անունով մի երևելի վանք ունին։ Այժմյան վանահայր, Աղթամարա միաբան 22 տարու երիտասարդ վարդապետ, ուսմանե բնավին զուրկ, երբեք ուսուցանելու և քարոզելու բավականություն չունի, սաստիկ պճնասեր և գինեմոլ է։ Արտաքո կարգի կկեղեքե զժողովուրդն, որք քանիցս բողոքներ բարձին տեղապահ Խիզանցի Հակոբ եպիսկոպոսին, սակայն նա յուր հայրենակցաց ձայնին չլսելով թող տավ, որ այդ ցոփակյաց վարդապետ տեղապահի հայրենիք կեղեքե, որ յուր 7-ամյա տեղապահական իշխանությամբ գոնե մի դպրոց չբացավ յուր հայրենյաց գավառի մեջ, որ թերևս հասարակ ընթերցմունք սորվեին մանկունք։

Հիզնա գավառի մեջ բարոյականություն և մարդավարություն այնչափ հարգ և պատիվ չունի, եկեղեցականք տգիտությամբ վարակած բավական չեն զժողովուրդն հոգևորապես մխիթարել և կառավարել։

Հիզնա գավառի մեջ 1500 տան չափ քուրտ բնակիչ կա, որոց գլխավորք են անվանի շեխ Ճալալետին և յուր եղբայրք, որք այժ[մ] կբնակին Խիզնա Պեյաթի մեջ, ուր Մուրադ անունով հայում՝ տուն բռնի հափշտակելով բնակած է մեջ։ Սոքա վերջին ծայր կրոնամոլ լինելով հայության և քրիստոնեության անհաշտ թշնամի են։ Երեք թեքե ունի յուր իշխանության ներքո, որոց մեջ 300-են ավելի ֆախիք կբնակին։ Շեխ ըստ յուրյանց նախնյաց հնավանդ սովորությանց կուսուցանե աշակերտելոցն ընթերցմունք, յուրյանց կրոնից պաշտպանության տարածումն և բերանացի ավանդական շատ տեսակ պատվերներ, այն է՝ հայոց վերա բռնանալ, ինչք կողոպտել, եկեղեցիք և վանորայք ավար հարկանել, սրբության սպասներ փշրել, խորտակել, քրիստոնյայք յուրյանց կրոնքին հրավիրել կամ բռնի հավատքեն մերկացնել, ամենայն ինչ կերպ վնաս հասուցանել քրիստոնեից և մեղք չհամարել, քրիստոնեից հետ ընտանեբար և բարեկամաբար երբեք չկենցաղավարել։ Վերոգրյալ պատվերներ նախ շեխ շատ անգամ անձամբ 'ի գործ դնելով գործնական օրինակ կլինի աշակերտելոց։

Շեխ զհայեր և աղքատ քուրտեր կեղեքելով մեծ հարստություն ձեռք բերած՝ 300 աշակերտք ինքն կկերակրե, թող զայս 1000-են ավելի աշակերտ ունի, Խիզնա գավառեն մինչև Ոստանա գավառ և Մարաստանի կես սահմանաց ֆախիք նորա իրավասության ներքև են, ամենուն պատվեր և պատվո աստիճաններ կուտա, զոր ինքյանք թորիք անվանեն, ֆախիք շեխի հրամանեն դուրս երբեք գործիմ՝ չեն ձեռնարկեր, ուստի նորա հրամանով զանազան գավառներ կերթան, թե հայանի և թե գաղտնի գողություն կընեն, ով որ հաջողի հայոց վանք կամ եկեղեցի կողոպտել, շեխեն մեծ պատիվ և աստիճան կընդունի իբրև աստծո հաճոյակատար կամացն աստծո, իսկ որք ծույլ են ավազակության մեջ, անպատիվ կլինին առաջի շեխին։

Թե Խիզնա և թե Մարաստանի շատ քրտեր հիշյալ շեխ Ճալալետին իբրև մարգարե և իբրև յուրյանց մարգարեի հաջորդ կընդունեն, ուստի արտաքո կարգի կպատվեն և կմեծարեն զայն։ Հիզնա երկրի մեջ որշափ հարուստ հայ կար, սպանել տավ և ինչքեր հափշտակեց, 30-են ավելի հայոց գեղունի կանայք և օրիորդ բռնի հափշտակել տալով մահմետական դարձուց, սա Մշո սուրբ Հովհաննու հարուստ վանք, նույնպես Հոգվոց վանք կողոպտել տավ, սա անդադար յուր բռնությունք 'ի գործ կդնե՝ առանց պետութենեն ակնածելու։

Հիշյալ շեխի վերա թե հիզանցի հայք, թե ազգային պատրիարքարան սաստիկ կերպիվ քանիցս բողոքեցին, սակայն երբեք ըստ արժանվույն մի պատուհաս չկրեց գոնե վասն զգաստության, ամեն ժամանակ Հիզնա հայք բողոքեցին, թե շեխ հայոց վերջ բերավ, բայց տակավին նոցա բողոք լսելի չեղավ։ Ուստի շատ հայք հավատքե եղան, շատեր աղքատացան և շատեր երկիր թող տալով ուրիշ կողմեր գաղթական գնացին, իսկ շատեր դեռ համբերելով կսպասեն աստծո օգնության և տերության պաշտպանության և ազգի հզոր բարերարության, քանզի հայք իբրև զազգն Իսրայելի գերի եղած են այս նոր փարավոնի ձեռք։

Զ. Կեցան Աղթամարեն 2 օր հեռի դեպ 'ի արևմտյան հարավ տեղված, 3 օր հեռի դեպ արևմտյան հարավ, Բաղեշեն 2 օր հեռի դեպ 'ի արևելք Կորդուաց լերանց ծործորոց մեջ ունի յուր դիրք, ուր առաջ հայոց մեծ բազմություն կբնակեր, բայց հարստահարութենեն մաշվելով սպառվելով այժմ քան[ի] գյուղ հայք մնացեր են, որք են։

Ա. Սպոն, ուր այժմ 10 տուն հայք կբնակին։ Բ. Կանճառս 15։ Գ. Ռուպուս 10։ Դ. Քարվակ 6։ Ընդամեն տունք հայոց 41։

Կեցնա գյուղորեից 15 քրտաբնակ են, որոց մեջ այժմ 300 տան չափ բռնավոր քուրտեր կբնակին, որոց գլխավորք են Կեցնա պեյի գերդաստանի պայազատք, որք վաղուց 'ի վեր իբրև ինքնընտիր գավառին

գավառատեր էին և ինքնակամ կիշ[խ]ին գավառի վերա։ Հիշյալ գերդաստանն այժմ մնացյալք են։ Ա. Մահմատ պեյ։ Բ. Համիտ պեյ։ Գ. Շեխի պեյ։ Սոքա յուրյանց հարց և հավուց նման Կեցնա հայոց վերա սաստիկ և սոսկալի բռնություն բանեցնելով միշտ հարստահարեցին. որով հայոց շատ գյուղեր ավերակ և անմարդաբնակ դարձուցին, զի հայերեն զոմանս կողոպտեցին, զոմանս հալածեցին, զոմանս սպանեցին։ 25 տարիեն սկսյալ մինչև ցայսօր հայեր շատ անգամ պեյերու բռնությունից դեմ թե 'ի Բաղեշ, թե 'ի Մուշ, թե 'ի Կարին և թե 'ի Պոլիս բողոքեցին կառավարության, սակայն կառավարություն իբրև թե չհավատալով բողոքարկուից թող տալով զպեյեր նախնի բարբարոսությունից մեջ, որով Սմպոն գյուղ, որ հառաջն 30 տուն էր, այժմ ունի 10 տուն հայ։ Սորվանք, որ քանի տարի առաջ 10 տուն էր, այժմ 1 տուն հայ չունի յուր մեջ, Բերդակ 7 տուն էր, այժմ Կեցնա շեխու ազարակ է դարձեր։ Պեթամ գյուղ 7 տուն հայ ուներ, շեխ 7 տուն մեկեն հալածելով բռնի հողերուն տիրեց։

Փարածա նահանգի մեջ 12 հայաբնակ գյուղորայք կային, Մահմատ պեյ միջի բոլոր հայեր հալածեց, սպառեց և քրտեր բերելով 12 գյուղի մեջ բնակեցուց։

Է. Սպարկերտ Աղթամարեն 2 օր հեռի դեպ արևմտյան հարավ Վանեն 3 օր հեռի դարձյալ արևմտյան հարավ Կորդուաց լերանց մեջ ունի յուր դիրք։ 20 կամ 22 հայաբնակ գյուղորայք կպարունակե յուր մեջ, որք են՝ ա. Ճաջվան տունք հայոց 30։ Բ. Սեքար 15։ Գ. Հողանդ 20։ Դ. Վերին Հուրուք 25։ Ե. Վերին Կուտեանց 35։ Զ. Ներքին Կուտեանց 25։ Է. Բաղինց 25։ Ը. Լրզվան 15։ Թ. Դաշտ 10։ Ժ. Տոսու 24։ Ժա. Տայաս 10։ Ժբ. Կեղիս 25։ Ժգ. Տանծիս 15։ Ժդ. Ներքին Հուրուք 30։ Ժե. Տրվաշուս 8։ Ժզ. Գուճ 8։ Ժէ. Մատ 15։ Ժը. Առընճիկ 30։ ԺԹ. Սորի 20։ Բբատ 30, ընդամեն 415։

Սպարկերտու նահանգի մեջ 8 գյուղի մեջ 200 տուն քուրտ կբնակին, որոց մեջ գլխավոր բռնավորք են։ Ա. Ավտի պեյ։ Բ. Նորին եղբայր Խուշրուտ պեյ, որ հայու մի կին բռնի հավատքեն հանելով յուրացուցեր է։ Գ. Մահմուտ պեյ։ Հիշյալ պեյեր յուրյանց արբանյակ քրտերով հանդերձ ծայրահեղ բարբարոսությամբ հայոց վերա բռնանալով ճորտ և գերի դարձուցեր են զանոնք։ Հայոց ձեռք եղած հողերեն բռնի իճարա կառնին, որպեսզի եթքեն օրինոք սեփականին, ինչպես այս տարի հայոց հողեր յուրյանց վրա թափի ընել տվին։ Զհայեր տարին 'ի բուն իբրև ճորտ ձրի կաշխատցնեն, արտեր վարել, ցանել, քաղել կուտան,

ոչխար և տավար արածելու, փայտ կտրելու բերելու, տուն շինելու մեջ հայեր կբանեցնեն։ Պեյեր և քրտեր ձմերան միջոցին յուրյանց տավարելենք հայոց ձրի պահել կուտան, երբ յուրյանց բարբարոսական կամքն հաճի հայերեն ոչխար, տավար, ցորյան և այլ նպարներ կհափիշտակեն կառնին։ Սպարկերտ Հիզնա նման Սղերտու բդեշխության և Տիգրանակերտի կուսակալության ներքև լինելով և նոցա իշխանութենեն հեռու լեռնաբնակ քրտաց մեջ մնալով շարաշար նեղություն կկրեն և երբեք պաշտպանություն և անդորրություն չեն վայելեր, թե տերության, թե պատրիարքարանեն և թե Աղթամարա իշխանությունից մենե առանց կարեկցության և այցելությենե մնացեր են։ Աղթամարցիք վանքի սեփական եկամուտ բերելեն 'ի զատ, բնավ նյութական և բարոյական ձեռնադրություն մի չէ կարող առնի Սպարկերտու խղճալի ժողովրդյան, որ գոգ թե հրաշյուք հայություն և քրիստոնեություն կպահեն յուրյանց մեջ, որովհետև ոչ քննիչ, ոչ իմաստուն, ոչ առաջնորդ և ոչ վարժապետ ունին։

Ը. Կորդուաց գավառ, որ այժմ ասի Կարկառ, Աղթամարեն 4 ժամ հեռի դեպ հարավակողմն և Վանեն 14 ժամ հեռի, դեպ արևմտյան շեղված, Կորդուաց լերանց խոխոմներու մեջ ունի յուր դիրք։ 19 հայաբնակ գյուղորայք ունի, որք են։ Ա. Յաղթ 15 տուն։ Բ. Կիճի 12։ Գ. Յարթենց 8։ Դ. Մուլք 4։ Ե. Մճկոնց 10։ Զ. Տափ 4։ Է. Խրարտինց 25։ Ը. Ծոկու 17։ Թ. Ծախող 6։ Ժ. Թրիզ 18։ Ժա. Ծկոր 15։ Ժբ. Եղեգիս 40։ Ժգ. Հոգուձու 6։ Ժդ. Հաչս 8։ Ժե. Խնձորուտ 13։ Ժզ. Հարբենց 15։ Ժէ. Բերկրի 10։ Ժը. Յավշու 20։ ԺԹ. Թացու 30։ Ընդ ամենայն տունք հայոց 276։

Կորդուաց միջի քուրտ աղայք։ Ա. Ազպաշեր։ Բ. Ալի աղա։ Գ. Ծուկուռա շեխ մոլա Մահմուտ։ Դ. քոչար Ալկանցի և Տոտանցի քյուրտեր, որք բազմապիսի և շարաշար վնաս և նեղություն կհասուցանեն հայոց, որք այս քրտաց ձեռաց ներքև նեղվելով մարդկութենե կերպարանքե ելած են։ Ինչ տեսակ հարստահարությամբ, որ կնեղվին Սպարկերտու հայք, սոքա ևս նույն տեսակ նեղություն կկրեն յուրյանց մերձակա քուրտերեն։

Կորդուաց հայք ընդարձակ դաշտ և արոտայք չունենալով փայտագով փոքրիկ արտեր կհերկեն, որք լերանց կողքերու վերա իբրև ածու հատկացուցեր են, ցանած սերմունք կորեկ, կըլկըլ և դարի է, հետին ազքատության մեջ կտառապին տեղույս հայք, բայց նույն Կորդուաց

լերանց գեղեցիկ հովիտներ սիրելով, չեն ուզեր հեռանալ, երթալ ուրիշ ընդարձակ երկիրներ, ուր ընդարձակ դաշտորայք կան։

Թ. Կորճեից գավառ, այժմ ասի Պոհտան, Աղթամարա հարավային արևմուտ 6 ավուր ճանապարհ հեռի 'ի նմանե և 3 ավուր ճանապարհ հեռի Բաղիշեն գեպ 'ի նոր հարավակողմ։ Կորճեից մեջ այժմ 13 հայաբնակ գյուղորայք կան, որք են։ Ա. Ոզիմ 200։ Բ. Յակուկ 40։ Գ. Հավելանց 20։ Դ. Խասխեր 25։ Ե. Յեղաթ 40։ Զ. Ռապանակ 20։ Է. Մաշուկ 30։ Ը. Պոնիջան 10։ Թ. Դաշտոկ 25։ Ժ. Տրհ 300։ Ժա. Տերկոշ 200։ Ժբ. Մլեանց 7։ Ժգ. Մալոկ 30։ Ընդամեն տունք հայոց 947։

Կորճեից հայեր հայոց նախնական քաջութիւն պահելով շատ տարիներ զենքով զիրենք պաշտպանեցին քրտաց դեմ, մինչ զի քրտեր սաստիկ կվախենային այս դյուցազնական հայերեն, որոց մին 10 քրտաց կդիմակալեր։ Պոհտնից պեյեր և քրտեր շատ ժամանակ խուռն բազմութեամբ հարձակեցան ոզմեցվոց և տհեցվոց վերա, բայց միշտ սպանյալ վիրավոր բազում թող տալով ամոթալից կորագլուխ եղան։ Բայց երկու տարի առաջ ավելի բազմութեամբ հարձակելով տհեցվոց վերա շատ վնաս հասուցին, ուստի 500 տունեն 200 հարյուր տուն հայք ստիպվեցան գաղթական գնալ այդ քաջութեան վայրերեն։

Այս գավառի մարդիկ բնավ հայերեն լեզու չգիտեն, բոլոր մարաց լեզվով կխոսակցին, քահանայք միայն քիչ կարդալ սորվելով հազիվ եկեղեցվո մեջ խեղաթյուր լեզվով ժամերգություն կընեն, քահանայք քաց 'ի կարդալեն եկեղեցվո մեջն անգամ իրարու հետ քրտերեն կխոսին, ինչպես Կ. Պոլսի քահանայք և վարդապետք քանի տարի առաջներ տաճկերեն կխոսակցեին։

Այս եռանդուն, աշխույժ և քաջակորով ժողովուրդ ոչ այցելու, ոչ ուսուցիչ և ոչ վարդապետ ունի, այս գավառ Տիգրանակերտին մերձ լինելով բողոքական քարոզիչք շատ քրտերեն ավետարան տարածեր են նոցա մեջ և քիչ ժամանակի մեջ գուցե մեծագույն մասն 'ի բողոքականություն դարձուցանեն, արդեն այս տարի Աղթամարա թեմի ինն գավառի մեջ բողոքական գրածախներ մուտ գտանելով շատ խմորեցուցիչ գրյանքն տարածեցին և կպատրաստվին այն մութ գավառներ քարոզիչներ խրկել, այս կետ կրոնական ժողովի ուշադրություն կհանձնըվի, զի մինչդեռ մեք կդանդաղեմք մեր ժողովրդյան դոնե հայրենի լեզուն և պարզ քրիստոնեական մի դաս տալ, բողոքականք ավետարան, աստվածաշունչ, արտաքին գիտությունք և բողոքական վարդապետություն մեկեն կը սորվեցնեն ժողովրդյան, ուստի ժողովուրդն

մեզ իբրև վարձկան թող տալով նոցա ետևեն կերթա, նոցա ձայնին կլսե և կհամբուրե այն աջ, որ իրեն բարերարություն կընե, անցավ էն ժամանակ, որ միայն գովելով ժողովրդյան բարեպաշտություն, շողոքորթենք զիրենք ասելով. աստված օրհնե ձեր բարեպաշտություն, դուք ձեր նախնյաց ինչ որ տեսած եք, անոր վերա հաստատ կացեք։ Այս պարզ, համառոտ և անգոհացուցիչ վարդապետություն այլևս զորություն չունի ժողովուրդն նախնյաց բարեպաշտության մեջ պահելու։ Ժողովուրդն սաստիկ ծարավի է ուսման և գիտության, չեմք համարձակիլ ասել նոցա՝ ժողովո՛ւրդ, տգետ կացեք, ռամիկ կացեք, պտղին և այլ տուրքեր տվեք և մեզ սիրեցեք։ Ժողովուրդ քաղցյալ է, նյութական հաց տալով, մեզմե բարոյական հաց կխնդրե, զի ոչ միայն հացիվ կեցցե մարդ և այլն։

Ահա Աղթամարա ինն գավառաց և այնպես Կորճեից 13 գյուղի ժողովուրդ, սոցա հետ 'ի միասին հինգ հարյուր տան չափ վրանաբնակ թափառական հայեր, որ Շատախու կողմի Կորդուաց լերանց մեջ աստանդական կշրջին և հայերեն մոռցած են։ Սոքա ամենեքյան մարաց խիստ և անգութ ազգի բազմության մեջ կբնակին, ինն տարի փտած կաթողիկոսական խնդրով զբաղելով, ոչ հովիվ, ոչ առաջնորդ, ոչ այցելու, ոչ ուսուցիչ և ոչ օգնականության ձեռք կարկառեցեր այս ժողովրդյանն, կարծեցիր, թե քարի մեջ նստած անշարժ կաթողիկոս մի երբ հաստատվի, ամեն բան անորով կկարգավորվի, ամեն ասեմ քեզ Աղթամարա վիճակ կաթողիկոսով, որ մի հաստատ վանահորե ավելի ազդեցություն չունի, բնավ չի բարեկարգվիր։

Ահա Խաչատուր ոչ թե իբրև եպիսկոպոս Պոլսեն ամեն սուք տված է տեղապահ Հակոբ եպիսկոպոսին, վարչություն յուր բոլոր զորությամբ կպաշտպանե զնա, արդ հարցուցեք, թե մինչև ցարդ այս անկարեկից թեմականաց համար ինչ բարի բան խորհեցան, ինչ բարեկարգություն հառաջ բերին, քանի տեղ դպրոց հաստատեցին, քանի քարոզիչ, ուսուցիչ և վարժապետ խրկեցին վիճակներ։

Մեք Աղթամարա վիճակայնոց խեղճություն վաղուց ի վեր գիտեին[ք], բայց այցելության գնացած միջոցին վերոգրյալ բոլոր կետեր ուշի-ուշով նկատեցինք։ Ուստի քանիցս առաջարկեցինք տեղապահին, որ Երուսաղեմա պատրիարքի դրության հետևելով յուրաքանչյուր գավառի համար մի-մի բանիբուն վարդապետ իբրև տեսուչ խրկե, որք փոյթ ունենան զեկեղեցին և եկեղեցականներ ուղղել, ժողովուրդն հրահանգել նախնական քրիստոնեության մեջ, դպրոցներ բանալ և եթե

վարժապետի սով կրեն, ինքյանք վարժապետք լինին, վարեն վարժապետության պաշտոն, ինչպես մեր լուսավորիչ քրմերու որդվոց նախ ինքն եղավ վարժապետ։ Բայց տեղապահ մեր իսկ աչաց առաջ ավելի սիրեց մշակոց վերա կանգնիլ ցորյան քաղել տալ, կալի և այլ երկրագործական գործոց վերա մտածել և պարապել, քան թե ժողովրդյան բարեկեցության համար։ Երբ վանքի վարդապետներեն և վիճակի քահանաներեն կրոնական ժողով կազմեցինք Աղթամարա դրսի տուն երկրորդ նստին Զարհան սուրբ Նշանի վանահայր և փշավանից տեր Խաչատուր, որք անդամ էին ժողովին, բողոքեցին, թե մեր բոլոր վիճակուց մեջ ամառ 6 ամիս քահանայք եկեղեցվո դուռ գոցելով երկրագործությամբ և այլ զբաղմանց կպարապին։ Ուստի մեք հրահանգ տալով պահանջեցինք, որ անմիջապես տեղապահ մի ազգու շրջաբերական խրկե բոլոր թեմի քահանայից, որ այսուհետև թե ամառ, թե ձմեռ անխափան առավոտ և երեկո Հայաստանյայց սուրբ եկեղեցվո ժամերգություն անխափան կատարվի։ Բոլոր ժողովն ընդունելով արձանագրեցին շրջաբերական գրելու, սակայն մեք ոտք Աղթամարեն քաշելուն պես, ոչ թե շրջաբերական չգրեց, այլ կրոնական ժողովն հիմնովին տապալեց։ Կեդրոնական կրոնական ժողովն թող մտածե այս կետին վերա և դարմանի ձեռնարկե, քանզի տեղապահ եթե շրջաբերական գրելը լինի, 'ի հարկե ընդունելություն և աղդեցություն չունենար, պիտի պատվիրե, թե պետք չէ քահանայք երկրագործությամբ և այլ գործոց պարապելով եկեղեցվո դուռ գոց պահեն, բայց քահանայք առ եպիսկոպոսն երթևեկելով պիտի տեսնան, թե նա քան զամեն ավելի միջամուխ եղած է արտաքին գործոց մեջ և անփույթ եղած է յուր հովվության և այցելության պաշտոն հառաջ վարելու։

Մեր սահմանադրական ազգ կուխտե Հայաստանյայց ավանդությունք և դավանությունք անխախտ պահել. մի՞թե Աղթամարա կաթողիկոսություն այս ավանդության և դավանության մեջն է, թե նորա հակառակն է, իբրև բացառություն ասեք, թե Սիս ժամանակավ Լուսավորչի հաջորդներ տեղակալեցին, և երբ կրկին կաթողիկոսական հաջորդությամբ 'ի սուրբ էջմիածին փոխադրվեցավ, հետո մի երկու աթոռոց դահակալաց միաբանության դաշինքով հաստատվեցավ մի միաբանություն և մի հաջորդություն շարունակվի երկուց աթոռոց մեջ, բայց ոչ ապաքեն Աղթամար բազմող Թոռնիկ Պահլավունի կաթողիկոս իբրև ապստամբ մերժվեցավ և ընդ նղովյուք փակվեցավ։ Մի այլ Պահլավունի կաթողիկոս հարեավ, 2200 արանց սրբոց ժողով դումարեց, Աղթամարա նղովք բարձավ, դաշինք հաստատեց ոչ երբեք։ Ուրեմն այդ աթոռոս կաթողիկոսության հաջորդության վավերականություն ծնած օրեն մերժված և հերքված է, կրկին հաստատողք և վավերացնողք ոչ ապաքեն Թոռնկան համախորհուրդ կհամարվին, ո՞չ ապաքեն էջմիածին ուխտյալ եպիսկոպոսք ուխտագնաց կհամարվին, երբ նորա վերահաստատության մասին կաշխատին։ Ես, իբրև էջմիածնա եպիսկոպոս, կբողոքեմ և կպահանջեմ, որ մայր աթոռս եպիսկոպոսունք բնավ միջամուխ չլինին կրկին Աղթամարա մեջ կաթողիկոս, մանավանդ այնպիսի ամբաստանյալ անձ մի, որ յուր աշխարհածանոթ հանցանոք արժանի չէ եպիսկոպոսության, ուր թողումք կաթողիկոսության*։

* * *

Բագրևանդա դաշտ արևմուտքեն դեպ 'ի արևելք 7 ժամու երկարություն է, իսկ հյուսիսեն մինչև հարավ 3 ժամ ճանապարհի չափ լայնություն, դաշտին արևելյան կողմանե Գոգովիտ, Պայազիտ և Մասյաց բարձունքն են, արևմտյան կողմանե Բասենք, Սուգավետ լերինք և Երասխ գետ Քոսա տաղի, հարավային կողմանե Խնուս, Մանզկերտ և Սիփանա և Աղավիտ լերինք, որ Ալա տաղի ասի։ Հյուսիսային կողմանե Կարս, Շիրակավան, Կաղզվան, Կապուտ և Քոռոզլի լերինք։

Բագրևանդա դաշտ Հայաստանի արգավանդ և հացավետ դաշտերեն է, դաշտ հարդահատակ հորիզոնաձև գեղեցիկ տեսարան ունի, դաշտի որ կողմեն հայես, միշտ աչաց հաճելի է, բարձր ու խոնարհ լեռներ կամարաձև դաշտին շուրջ պատած են, դաշտի հողեր մեծադույն մասամբ ջրարբի են, սերմանելիք սերմն են ցորյան, գարի, հաճար, ոսբն, ոլոռն, կտավատ, բանճար, կաղամբ, մեղրապոպ շատ համեղ է։

Բագրևանդա լեռներ, բլուրներ և հովիտներ խիստ ծաղկավետ և խոտավետ են, հյուսիսային լերանց մեջ 500 տան չափ զիլանցի քրտեր կբնակին, ոչխար և տավարեղեն կբուծանին և կդարմանեն և շատեր հարստությամբ ճոխացած են։ Բագրևանդա հայոց ասկե երեք տարի առաջ շատ նեղություն կուտային, սակայն ըստ պատմության սոցա Հայրիկի պատրիարքութենեն և այսր դադարել են նեղություն տալեն։

---

* Ձեռագիրն այստեղ ավարտվում է (Հ. Պ.)։

Բագրևանդա դաշտի մեջ 20 գյուղ հայոց է։ Սույն գավառի հայ բնակիչք Պասքևիչի ժամանակ գաղթել են 'ի Ռուսաստան՝ թողլով յուրյանց հայրենի բնակարան, արգավանդ արտորայք և եկեղեցիք։ Այժմ գաղթականաց գյուղեր քրտեր և տաճիկներ կբնակին, որ եթե զիլանցի քրտեր ևս 'ի հաշիվ առնվի չորս հարյուր գյուղի կհասնի, որ Պայազիտու կառավարչի իշխանության ներքև են, իսկ այսչափ ընդարձակ երկրի մեջ հազիվ թե 30 գյուղ հայ բնակիչ մնացյալ է։

Սուրբ Հովհաննու հռչակավոր վանք (որ Ուչքիլիսա ասի) սույն դաշտի մեջն։ Եփրատի մի ճյուղ, որ Արածանի ասի, այս դաշտեն կանցանի 'ի Մանածկերտ, 'ի Հացյաց գավառ և 'ի Մշո դաշտ։

Ամատ գյուղ Բագրևանդ դաշտի հյուսիսային կողմն իյնալով հյուսիսային լերանց ստորոտ ունի յուր դիրք և հայի դաշտի ընդարձակության վերա 60 տուն բնակիչ ունի, մի փայտաշեն եկեղեցի, երկու քահանա, տեր Սարգիս, տեր Հարություն, դպրոց չկա գյուղի մեջ, բայց տեր Հարությունն ձմեռն 30 չափ տղայք կկարդացունե։ Սահմանադրություն գործադրելով 6 հոգի թաղական ընտրվեցան։ Սույն գյուղ առաջին եղավ մեր իջևանին, երբ Խաչվանք գյուղեն Ալաշկերտու վիճակ ուղևորեցանք։

Խաչու գյուղ կես ժամ հեռի 'ի հին Վաղարշակերտեն և երկու ժամ հեռի 'ի Համատ գյուղե Բագրևանդու արևմտյան հյուսիսային լերանց ստորոտ ձորակիմ՝ բերան ունի գեղազվարճ դիրք։ 50 տուն հայ բնակիչ ունի և 4 տուն քուրտ։ Մի փայտաշեն եկեղեցի՝ սուրբ Աստվածածնա նվիրյալ, մի քահանա՝ տեր Մելքիսեթ։ Դպրոց չկա գյուղի մեջ, Գեվորգ անունով տիրացու մի-երկու ձմեռ 20 չափ տղա կարդացուցած է, սակայն այս ձմերան համար կմտածեն եղեր։ Գյուղի հողեր ընդարձակ են և արգավանդ, դեռ թափու բրած չեն։ Սահմանադրություն գործադրելով 6 հոգի թաղական խորհուրդ ընտրվեցավ, հորդորեցինք զգյուղացիսն, որ հաստատուն դպրոց հաստատեն, գյուղացիք խոստացան։

Խրտր գյուղ 7 ժամ հեռի 'ի Վաղարշակերտեն և մի ժամ հեռի Եփրատա եղերքեն զառիկող մեծ թումպի մ'կողի վրա ունի յուր դիրք, հովիտ մի ունի յուր հարավային կողմ, որ միջեն Եփրատա մի ճյուղ գետակ կը խաղա, 12 տուն հայ բնակիչ ունի, Մշո Թիլ գյուղեն տեր Առաքել անունով քահանա մի ունին, որ յուր հայրենիք վերադառնալու պատրաստ եղած էր, գյուղացվոց խնդրանոք հորդորեցինք զինք, որ գյուղի մեջ մնալով այն փոքրիկ գյուղ հովվե։ Եկեղեցի մի ունին փայտաշեն, զոր գյուղացիք առանց վարդապետի յուրյանց ձեռոք անարվեստ կերպիվ շինած են։ Նկատելու է, թե Բագրևանդի եկեղեցյաց մեծ մասն այսպես գյուղացիք անարվեստ կերպիվ իբրև մարագ և հարդանոց շինած են։

Մանկասար գյուղ 8 ժամ հեռի 'ի Վաղարշակերտեն և չորս ժամ ու կես մերձ սուրբ Հովհաննու վանից, հարթահատակ դաշտի մեջ ունի յուր դիրք։ Մի փայտաշեն եկեղեցի ունին՝ սուրբ Հարությունի անվամբ, երկու քահանա՝ տեր Դանիել և տեր Զաքարիա, դպրոց չունին, տեր Առաքել 20 տղայի 500 դուրուշ վարձքով հասարակ ընթերցմունք դաս կուտա։ Սույն գյուղի մեջ սահմանադրություն գործադրելով հինգ հոգի թաղական խորհրդո անդամ ընտրվեցան։

Քեփուկոան գյուղ Բագրևանդա հյուսիսային լերանց ստորոտ, ընդարձակ հովտի մի արևմտյան կողմ, ունի յուր գեղեցիկ դիրք, հովտի միջեն գով և առողջարար գետակ մի անցանելով կերթա Եփրատին մեջ։ Ջրի անուն քրտերեն Հավթոսնի ջուր[124]՝ յոթն ակներե բղխելո աղագավ։ 15 տուն հայ ընտանիք կա սույն գյուղի մեջ, 3 տուն քուրտ բնակիչ կա։ Զիլանցի քրտեր նեղություն կուտան սույն գյուղացվոց, վրաններ սոցա սահմաններու մեջ կզար[ն]ին գարնանե մինչև վերջի աշնան, մի փայտաշեն փոքրիկ եկեղեցի ունին՝ անուն սուրբ Գևորգ, եկեղեցվո մեջ մի Արապյան սոձեռն շարականեն 'ի զատ, ոչ հայսմավուրք, ոչ ճաշոց, ոչ շարական, ոչ տոնացույց և ոչ ավետարան կա։ Այսպիսի մ[ա]տենաղուրկ բավական եկեղեցիք կան սույն Բագրևանդի վիճակի մեջ, սակայն հիշել ցավ, թե տաղտկություն կբերե։ Այս գյուղ քահանա չունին, այս կողմի քահանայից խղճալի վիճակ, Կայապեի քահանան երկու ոտքեն կաղ է, Կարաքիլիսայի քահանայն ծեր և արտաքո կարգի պարզամիտ և տղայամիտ, Յոնճալուա քահանայի աչք վատացած, Խտրա տեր Առաքել յուր հայրենիք 'ի Մուշ գնացել է։ Միայն Մանկասար երկու օրինավոր քահանա կա, երկուք ևս Բագրևանդա վիճակեն չեն, զի տեր Դանիել վանեցի է, իսկ տեր Զաքարիան՝ մշեցի։

Քեփուկոան գյուղեն կես ժամ հեռի լերան ստորոտ Բաղկա բերդի ավերակներ կտեսնվի, որ Վաղարշակա ժամանակի ամրությունից մնացորդ կերևի։ Բերդի կիսակործան պարիսպներ դեռ կնշմարվին, բերդի ստորոտ քանի հազար տուն ավերակաց տեղիք կան, սույն գյուղի ձորակեն վեր դարձյալ մի ավերակ բերդ կա՝ Հողեբերդ անունով։ 'Ի հնումն Հայաստանի քաղաքներ, գյուղաքաղաքներ, ավաններ և մեծ գյուղեր անպատճառ բերդ, ամրություն և պատերազմելո ամուր շենքեր և արշավանաց երեսեն պատսպարվելո շենքեր եղել է, այժմյան դիրքերեն,

շենքերեն և ավերակներեն հայտնի է, իսկ այն բերդորեից շենքեր և ավերակներ, որք դեռ կանգուն կան, մեծեր, երևելիներ և անառիկներ են, որք դարավոր ժամանակաց ժանյաց բռնութենեն զերծանելով դեռ հայկազանց քաջագործությունից և հաստատությունից անբարբառ վկայք են, մինչև 'ի մերս ժամանակ։

Զերո գյուղ տասն ժամ հեռի 'ի Վաղարշակերտեն և չորս ժամ մերձ սուրբ Հովհաննու վանից զառիկող դարավանդի վրա ունի յուր դիրք, 20 տուն հայ ընտանիք կա, 3 տուն քուրա։ Մի փայտաշեն եկեղեցի՝ անզարդ, անպաճույճ և բեմ քարն դրված է սեղանի վրա, եկեղեցվո առաստաղ քանի տեղ ծակված լինելով հողեր շարունակ 'ի վայր կհոսին, թռչուններ սեղանի վրա եկեղեցվո հատակ ծերտերով նկարել են։ Ըստ վկայության գյուղի տեր Միքայել քահանային, լի օրեր երկու հարյուրամյա պառավ կանայք և մի ծերունի եկեղեցի կմտնան։ Կիրակի գրեթե հիշյալ ծերունի և պառավունք եկեղեցի կմտնան։ Քրիստոնեության և հայության անուն մնացած է մարդկանց վրա, քրտաց բնավորություն և եղտաց կրոնքի նման կրոնք մի կնշմարվի բնակչաց վրա։ Եկեղեցվո անուն սուրբ Հարություն է, բայց աստվածապաշտություն և Քրիստոսի փառավորություն մեռած է մեջ։ Մի քահանա ունին՝ անուն տեր Միքայել, դպրոց չունին, քահանայն քանի տղայոց սաղմոս դաս կուտա։ Սույն գյուղի սահմանադրություն գործադրելով՝ 5 անձինք ընտրվեցան։

1872 'ի նոյեմբեր 23 մուտ գործեցինք 'ի Վան պատրիարքական փոխանորդ Աղվանյան Գրիգորիս վարդապետ հանդերձ վարդապետոք, քահանայուք և երեսնի չափ իշխանավորոք մինչև 'ի Ավանց գյուղն դիմավորեցին մեզ, երդեցիկ մանկունք ճանապարհի վրա 'ի բարի ողջույն մեզ երգեցին։ Իշանք առաջնորդարան, ուր երկու-երեք օր մեր հայրենակիցք խուռն բազմությամբ եկին, մեր գալուստ շնորհավորեցին, քանի օրեն զկնի եկեղեցյաց այցելություն առնելով, մեր այցելության պաշտոնի կոնդակ կարդացինք և սկսանք քարոզությամբ մխիթարել զժողովուրդն։

Եկեղեցյաց և դպրոցաց վիճակ քննելով և ստորագրելով պատշաճավոր հրահանգներ և խրատներ տվինք վարժապետաց և աշակերտաց, երկու կուսակցությունից մարդիկ հույժ սիրեցին և պատվելով տուներ հրավիրեցին, թե եկեղեցիոց մեջ, թե առանձն միշտ սեր և միություն քարոզեցինք, հայրենասիրական մատեաններեն դպրոցաց և աղնվականաց ընծայելով հորդորեցինք, որ հայրենասիրությամբ և ազգասիրությամբ առաքինան, շատ պիտանի և օգտակար խրատներ տվինք Գրիգորիս վարդապետին, որ եթե ըմբռնելու լիներ, յուր ապագային շատ պիտանի կլիներ, սակայն նա հետևելով երիտասարդաց խրատին, իբրև Սողոմոնի որդին հետո զրկվեցավ իշխանութենեն, որո անչափ տենչանոք սիրահարյալ էր։

Ղուռապաշա սուրբ Խաչի վանքի տաճարի երկայնություն 25 ոտք, իսկ լայնություն 22 ոտք, մեկ սեղան, սեղանի երկու կողմեր փոք[ր] խորան, տաճարի ձև խաչաձև է, գեղեցկաձև սպիտակ քարերե շինված, զմբեթ մի ունի։ Տաճարի առաջ փայտաշեն դարպաս մի կա, որո երկարություն 26 ոտք և լայնք 41։ Վանքի բոլորք և շրջապատ պարիսպ 223 մարդաքայլ է, երկու բակ ունի՝ ներսի և դրսի, վանքի դրսի բակի մեծ դուռ կհայի դեպ 'ի արևելք, որ բանուկ դուռն է, իսկ ներսի բակի փոքր դուռ կհայի դեպ 'ի հյուսիս Վանա Այգեստանա վերա, արևելյան քարընկեց մի հեռի մի համեղաջուր աղբյուր կա, վերան քարուկիր գեղեցիկ կամար մի կա, աղբեր առաջ մեծ ավազան մի կա, որո մեջ աղբեր ջուր հավաքելով աղբեր առաջի մարդաղետին կլցրե։ Ինն սենյակ կա ներքին բակի մեջ՝ 5 ավերակ, իսկ 4 շեն, մի տնտես տուն և մի մառան, դրսի բակի մեջ մի վերնահարկ սենյակ և մի ևս ներքնահարկ, 2 փարախ և մի մարագ, մի ևս գոմ և մի ևս գառանց տեղ։

Վանա քաղաքեն մի ժամ ու կես հեռավորություն ունի, 20 բոպե Ղուռապաշ գեղեն, Կուսանաց լերան միջավայրի վերա է, վանքի դիրք կհայի Վանա Այգեստանա վերա։ 15 քիլայի ջրարբի և 15 քիլայի ևս ոստին հող ունի, վանքի խաշինք Ղուռապաշա հողերու մեջ արածելը կերթա, 4—5 բարդ խոտատեղ և մի ևս այգիի տեղ, որ կորնկան կցանվի։

Խաշինք վանքին 85 հատ ոչխար, գոմեշ 4, 2 որձ, 2 մատակ, 4 եզ, 1 կով, 9 հատ 1—2—3 տարեկան հորթեր, ընդամենն 103 տնասուն, 1 ավանակ։

Վանահայր ղուռապաշցի տեր Խաչատուր, 2 պառավ տնտես, 1 նոպատոր[125], 3 մշակ, 1 հովիվ, 1 գառնարած ընդամենը 9 հոգի, որ վանքին հաց կուտեն։

Վանք ունի մի փոխ գութան[126] և 2 վեցկի։ Տարին 20 քիլա թե ցորյանեն և տարեկանեն և թե գարիեն արդյունք գուկա, 1000 զուրուշ դրամական արդյունք, գեղեն 4 անփոխ գութան 20 վեցկի կբերու, կես ձիթահան գեղի մեջ։

Ծախք 12 քիլա հաց կերթա, 2000 ղուրուշ գրամական ծախք նոպատորի, հովվի մշակաց և տնտեսաց։

Վանքի սահմանաց համար մի ձեռագիր ավետարանի կող այսպես գրված կար. «Ի թուականութեան հայոց ՉԼԶ (=1487), այս է վանից սինօր կնկուղով արտի ձոր և սասման խաչ և քարաշար և Կուռանաց սար, ձորէ 'ի ձոր մինչև 'ի խաչի սրատ, ճանապարհիս մինչև Պուրունով արտ, այս բանիս վկա ես տեր Խաչատուր, ռես Թաւնօ։ Եւ եղև մեծ հակառակութիւն այս բանիս, մեք գեղով վկայ, և այս բանիս որ հակառակ կայցե Յուդայի և Կայենի առցե ամեն»։

1873 ապրիլ 13 'ի սուրբ Գրիգորի վանք.

Սուրբ Գրիգորի Սալնո անապատ կոչեցյալ մենաստան 3 ժամ[illegible] հեռի 'ի Վան քաղաքե դեպ 'ի հարևելս կույս Վարագա լերան հյուսիսակողմն, վերան երկու փեղկ բացված, ձորձորաց մեջ ունի յուր հաստատություն, սույն մեծագույն ձորակի հյուսիսեն դեպ 'ի հարավ ելկայնյալ կղզիաձև դարավանդի վերա Գեղեի բլրակի տափաց վերա շինված է Սալնո անապատի սուրբ Գրիգորի վանք։

Արտաքին պարսպի շրջապատ 250 քայլ է, պարիսպներ սև որձաքար քարերե շինված է, ներսի կողմ երկու բակի բաժանված, վանքի արտաքին հարավային դուռ կհայի դեպ հյուսիս, արտաքին բակի մեջ կա ոչխարի գոմ, անասնոց փարախ մի։

Ներքին բակի մեջ կա երկու կոփածո քարերե կառուցյալ տաճարներ՝ 'ի հին ժամանակաց շինյալ, արձանագրություններ կան, սակայն անվերծանելիք են։ Սուրբ Գրիգորի տաճար քառակուսի խաչաձև շինված է՝ 25 ոտք երկարություն և 23 ոտք լայնություն, գմբեթ այնչափ բարձր չէ, շինվածքի քարեր սպիտակ են։

Սուրբ Կարապետի տաճար սուրբ Գրիգորի տաճարի հյուսիսակողմն է, երկարություն.... և* լայնություն սորա շենք և գմբեթ ավելի բարձր է մյուս շենքեն, կավանդվի, թե սուրբ Լուսավորչի քով գավազան և հոդաթափ հիշյալ սուրբ Կարապետի մեջ է։

Ներսի բակի մեջ երկու հարկերու մեջ կա տասն սենյակ, գրեթե ամբողջ խարխուլ և խարխտյալ և վերանորոգության կարոտ, տեր Մեսրոպյան Եղիշե վարդապետ 5 տարի վանահայրության պաշտոնի մեջ արտաքին դրան նորոգութեն[ե] 'ի զատ բնավ շենք մի շինած չէ վանքի մեջ, յուր թուլությամբ, անգործությամբ և զեխ արբեցությամբ

* Բացթողումը հեղինակինն է (Հ. Պ.)։

10.000 ղուրուշ պարտ թողուցեր է վանքի վերա, եկեղեցվո ավետարաններու վերա տաս խաչերն անդամ քակելով քթախոտի և ծխախոտի տուփ շինել է տվեր, վանքի բարձերու միջի բուրդեր հաներ տարեր, տեղեր խոտ է լեցուցեր և ինչ որ Թատեոս վարդապետի օրով իրեն հանձնեցավ, վերմակ, քուրձ, ոչխար և այլն, տասեն մին թողուցած չէ, ուստի վանահայրութենեն արտաքս մերժվելով յուր նախկին տեղ՝ 'ի Կռուց անապատ, ապաշխարելո խրկվեցավ Վանա առաջնորդական իշխանութենեն։

Վանքես դեպ 'ի արևմտակողմ քառորդ ժամու ճանապարհ զառիվեր սարավանդի վերա քարաշեն մատուռ մի կա, լուսավորչի աղոթատեղի անվանյալ, ավանդություն կա 'ի հնուց, թե սուրբ Լուսավորիչ սոյն աղոթատեղեն օր յոթն անդամ Գալիլեա[127] կելներ և կիջներ, յուր հոր Անակա մեղաց թողություն խնդրելու։ Հիշյալ աղոթատեղեն մինչև 'ի Խանար առ եղերս ջրոյն Սալնապատու գեղեցիկ անտառ մի կա, որ ասկե 30 տարի առաջ խիտ առ խիտ ծառաստանոք քաղցրաղվարճ տեսարան մի կընծայեր տեսողաց, սակայն Վանա Պողոս վարդապետ, Թատեոս և Եղիշե վանահարք ծառեր հետզհետե կտրելով, ցանցառացեր են։

Վերին Վարագա հյուսիսային սարավանդներեն աղբերականց ջուրք զատ 'ի վայր իջյալ և միացյալք գան անցանեն վանքի հարավային և արևմտյան կողմերեն և երթան անկանին 'ի գետն Ջորավանից և ամարսն ոռոգանե շուրջորայս Ջրվանդաց գյուղին, ջուրս այս կոչի Սառնապատի ջուրք։ Թեթևութենեն, բարեհամութենեն և սառնորակութենեն կողմանե հույժ անվանի է Վասպուրականի մեջ։ Վանքին մերձ և հեռու կողմեր և աղոթատեղին մեր(ձ) բավական սառնորակ աղբյուրք կան, որոց ջուրք Սառնապատի ջրին մեջ դիզվելով, կմիանան։

Այժմյան նոր վանահայր է Շապաղյան շնորհազարդ Հակոբ վարդապետ, վանք միաբան չունի, կա մի մշակ, մի գառնարած, մի տնտես՝ երկու որդվք։

Որովհետև վանքի շրջապատ վայրեր հույժ սքանչելի են թե սառնորակ ջրերով, թե ուռենի ծառաստանոք, ուստի Վանա զվարճասեր մարդիկ գարնան միջոցին խումբ-խումբ կհաճախեն հիշյալ վանք և այսպիսի ուխտավորներեն տարին 1000—1500—2000 ղուրուշ արդյունք կգոյանա։

Վանքն 11 գյուղ թեմ ունի 1. Կողբանց 2. Ջորովանք 3. Լամզկերտ 4. Գարման 5. Նապատ 6. Ֆառուղ 7. Պախիշեկ 8. Ոսկիբակ 9. Սևան

10. Լիմ 11. Ղորանց։ Սույն վերոհիշյալ գեղեր դպրոց չունի[ն]։ Գեղերու քահանայից, եկեղեցյաց անուններ և ազգահամար վանահայր Հակոբ վարդապետ գրելուն մեզ պիտի հանձնե։

Վանքի արդյունք հիշյալ 11 գեղերեն, տարի եթե տալոլին 10 քիլա ցորյան, յուրաքանչյուր տուն 1 նուկի յուղ, գարուն ժամանակի մեջ բոլոր գյուղերու մի ավուր կաթ, գութան և վիցի ունեցողք անխափան տարի մի o[ր] վանքին կբանին։ Վանքի բոլոր թե ցորեն, թե գարի և թե այլ սերմունք գյուղերու մարդիկ կհնձեն։

Ննջեցելոց համար հոգեբաժին յուրաքանչյուր ոք յուր կարողության համեմատ կուտա, գոմեշ, մատակ, եզ, կով և ոչխար, երբեմն ևս կողոպուտ[128] ևս կուտան։ Գեղերու վերոհիշյալ բոլոր արդյունք դրամի վերածելով 8000, 9000 և մինչև 10000 ղուրուշ կհասնի։ Վանքի հողային կալվածք 40 կտոր արտորայք կան, տարին միջին հաշվով 10 քիլա արդյունք գուկա, և եթե մշակվին և երկրագործության հոդ տարվի, մինչև քսան քիլայի կհասնի արդյանց աշխատության պտուղ, 3 կտոր խոտատեղի կա։

Վանքի դրամական ծախքեր, 700 վանքի պահապանին, 3 մշակաց 1000 ղուրուշ, գառնարած տնտես 5 հարյուր ղուրուշ, ամբողջ՝ 2000 ղուրուշ։

Վանքի խաչինք՝ 2 գոմեշ, 1 ձագ, 2 եզ, 1 կով, երկու սատկելո մոտ ձի, 1 չորացած ավանակ, 18 հատ ոչխար, 9 հատ, ամիսներով, շնորհիվ Եղիշե վարդապետին, քաղցյալ մնացած խղճալի շներ, խեղճ ամեն բան ծախեր կերեր է, հեռի յուր սուրբ վարդապետութենեն միայն շներ չէ ծախեր, բայց ղանոնք այլ սովով սպանել ուզեր է։

1873 ապրիլ 15 'ի սուրբ Կարմրորա Աստվածածնի վանք.

Կարմրորա սուրբ Աստվածածնի վանք ժամ ու կես հեռի Վանա քաղաքեն, մի ժամ Վարագա վանքեն դեպ 'ի հյուսիս և մի ժամ հեռի դեպ հարավային արևմուտք, Վարագա լերան արևմտյան կողմի երեսի միջասահմանի բարձրության վերա ունի յուր դիրք։

Վանքս յուր տեսարանի կողմանե Վասպուրականի բոլոր վանորեից առաջին է, ծով, քաղաք և Այգեստան վանո վանքիս տեսարանին առաջ ներկա են, վանքես հատուկ կերպիվ կտեսնվի Աղթամարա և Կտուց անապատի կղզիներ, կտեսնվի Արտոսա, Եղերովա և Շատախու, Մոքսկա, Սիփանա և սուրբ Սահակա բարձրաբերձ լեռներ։

Վանքի շրջապատ պարիսպ 235 քայլ է, երկու բակի բաժանված է, երկու դուռ ունի, ներսի և դրսի բակերեն կբացվի դեպ 'ի արևմուտք,

դրսի բակի մեջ է ընդարձակ խաշանց փարախ, փարախի դրան կից կա մի սենյակ և մի ևս ուրիշ սենյակ, իսկ ներսի բակի մեջ թե վերի և թե վարի սենյակներ 6 հատ են, չորս հանգուցյալ Իգնատիոս եպիսկոպոս նորոգած է։

Տաճարի դարպասի դուռ կբացվի ներսի բակի մեջ, տաճար խիստ գեղեցիկ է, լայնություն քառասուն ոտք է, իսկ երկարություն 25 ոտք, երեք սեղան ունի, երկու քառակուսի սյուն կա տաճարի մեջ, 4 գմբեթ բարձրացած է տաճարի միջի սյանց և սեղանաց միջի սյուներու վերա, դրսի կողմանե շատ գեղեցիկ կերևի գմբեթի ձև, որ սպիտակ մալթայի քարերով շինված է։

Դարպաս կնմանի տաճարի ձևին, լայնություն դարպասին է 35 ոտք, իսկ երկարություն 30 ոտք, երկու քառակուսի սյուն կա մեջ, սակայն վրան գմբեթ չունի, տաճարի և դարպասի տանիքներ նորոգության պետք ունին, զի երկար ժամանակ առանց ձեփի մնալով անձրևաց ջուրք 'ի ներքս կկաթին։

Կարմրորա վանքեն արևելքեն է Վերին Վարագ և Գալիլեա հարավակողմ կիյնա վարի Վարագ, հյուսիս Սալնապատի սուրբ Գրիգորի վանք, արևմուտք Վանա քաղաքի բերդ և Այգեստան։

Եկեղեցական սպասք են վանքիս 3 բոլորակ արծաթյա խաչ, 1 սաղաֆյա խաչ, 1 երկար արծաթի խաչ, 2 արծաթի պատկերի վերա խաչեր, 1 ձեռաց արծաթի խաչ, 1 ևս թուճե ձեռաց խաչ։ 2 քղոց մին արծաթեն և մյուսն թուճե, մի արծաթի սկիհ, 1 մասն տուփ արծաթի, մի արծաթի մեռոն թափ։ 3 շուրջառ, մին մետաքսյա, իսկ մնացելույն մի Պասմա մին Տամասկո[սի], 10 հատ ժամու շապիկ, 1 ժամարարի սաղավարտ, 1 գակաս, 3 փորուրսն, 3 զույգ թևնոց, 1 ժամարար ջրտի պղնձյա, 4 սկիհի ծածկոց արծաթելա բանվածք, 6 սեղանի գոգնոց, 19 հատ ջուշփա, 4 վարագույր՝ 2 նոր, 2 հին։ 1 ձեռագիր արծաթապատ ավետարան, 3 տպյալ ավետարան, որոց վերա կան երկերկու խաչեր, 2 ճաշոց, 1 հայսմավուրք, 2 էջով Նարեկ, 1 աստվածաշունչ, 1 ձեռաց մաշոց, 1 ձեռաց սաղմոս, 2 շարական, մի ատենի ժամագիրք, 1 ոսկիփոր ճառընտիր, 2 ձեռագիր հին ավետարան, 1 ձեռագիր հին ժամագիրք, մեկ ձեռագիր պատկերազարդ ճաշու գիրք։

Իսկ պղ(ն)ձեղենք, 2 մեծ պղինձ, 2 փոքր, 2 տապակ, 1 եատհոլ, 5 ափսե, 2 լանկոռի, 2 իպրիզ սական, 1 կերակուրի լական, 1 կացին, 3 փայտատ, 3 բահ, 1 ուրագ, 8 երկաթե շամի, 1 կութանի շղթա, 2

խոփ, 5 վեցկու խոփ և սայլի զանձիլ, 1 սայլ, մի գութան յուր սարքն, 5 վեցկի։

Տավարեղենք մի կամ 2 արջառ, 4 հատ գոմեշ, 2 նորահաս ձագ, 4 հատ մատակ, 12 ցլիկ, 2 հատ փոքր ձագ։ 5 հատ եզ, 5 հատ կով, 3 երինջ, 2 որթ, 3 ձի, 10 ոչխար՝ 4 ծնած, 6 սերջ, մի թուճե բուրվառ։

Վանքի հողեր՝ թե ոստին և ջրարբի, 40 քիլայի հող կա, 30 քիլայի հող ջրարբի է, 10 անջրդի։ Արևելքի կողմի սահման է Աղլիցի և քեղով աղբեր, Շուշանից կողմանե սահման է ճանապարհ, որ երթա 'ի Սղկա գյուղ, հյուսիսային կողմանե սահման է Սղկայու լճեր, խոքանդր ձոր և Սեյրան առուն։ Արևմուտքեն սահման կհասնի մինչև Ուրբաթ առուն։ Սահմանեն դուրս 4 արտ կա, 1 Շուշանից սահմանի մեջն է և 3 Սղկայու սահմանի մեջ։ 2 մարգագետին վանքի քովեր։ 1 այգի և 1 ջրտեղաց վանքին մերձ։ 'Ի Խառակոնիս կա վանքին արտեր, 2 ջրմուտ[129], 1 արտ Փապատկա ճանապարհի վերա, հիշյալ արտեր վեց քիլա սերմ կառնին։

8 քիլա վանքի սահմանի մեջ այս տարի ցանված է, իսկ[ի] 15 չափ[130] ցանված է տարեկան 5 չափ, 5 չափ ևս գարի, 1 չափ կանճտակ, 1 կոտ սոպ, չափ ու կես կտավատ։

Վանք վանահայր չունի, այժմ Վանա առաջնորդի վերա հատկացյալ է, մի միաբան վարդապետ կա Լիմ անապատի վարդապետներեն՝ Աստվածատուր վարդապետ։ Մի վերակացու՝ Հարությունն անունով, 1 տիրացու՝ Հովհաննես, 2 մշակ, 5 հոտաղ, 2 տնտես։

Տարին 40 քիլա հաց գուկա վանքի հողերեն, 2 գյուղ թեմ ունի, թեմերեն տարին 22 չափ պտղի կբերվի։ Հոգեբաժին կուտան, կով, երինջ, ոչխար, այծ, թաղիք, չուլ, 2 գեղեն 10 լիտր պանիր, 3 լիտր յուղ, 2 գյուղ 20 գութան, գութնի գլուխ 20 ղուրուշ դրամ կառնվի, 2 գյուղ տան գլուխ 1 սարակ[131] ղուպարա[132] կուտան։

Վանքին տարին 15 քիլա հաց կերթա, 10 քիլայեն ավելի սերմ կցանվի, 2500 ղուրուշի չափ դրամական ծախք կերթա մշակաց։ 2500 պարտք ունի վանք, այս օրին սկսյալ վանք հաց կգնե ուտելու, վանքի տնտեսականություն անկանոնության մեջ է։ Վանքն ունի 5 վերմակ, 4 բազմոց, 8 թաղիք, 5 կարպետ, 5 բարձ, 15 քուրջ, 10 խսիր։

1873, ապրիլ 21 'ի դրսի տուն Կտուց սուրբ անապատին։

Կտուց սուրբ անապատի դրսի տուն 4 ժամավ հեռի 'ի Վան քաղաքեն, Արեգին լերան սպառվածքի արևմտյան հյուսիսային կողմ ծովեզերյա տեղի մը ունի յուր դիրք։ Կտուց անապատի վերակացուն

Բարսեղ վարդապետ կկառավարե այժմ դրսի տուն, որ անապատի երկրագործության վայրն է։ Մի փայտաշեն եկեղեցի կա, երկարություն 35 և լայնություն 24 ոտք և մի ևս քարաշեն տաճար, երկայնություն 10 և լայնություն 10 ոտք, եկեղեցին փայտաշեն է, անուն սուրբ Աստվածածին։

Վարի հարկ կա՝ յոթն խրճիթներ և մի ևս վերնահարկ սենյակ՝ բավական հարմար շինված։ 4 հատ փարախ կա խաշանց, 1 մարագ, 1 տնտեսատուն, 1 մառան, 4 սենյակ կա պանրեղեն-կաթեղեն պահելու տեղիք։ 20 քիլայի հող կա դրսի տան մերձակա, բոլորն անջրդի է։ Մալագասմ գյուղի տաճիկներ 200 գութանի տեղ[133] հողի բռնությամբ տիրած են և թափու ընելով յուրացրած են։ Խաշինք դրսի տան 300 հատ ոչխար, 15 հատ գոմեշ, 13 հատ եզ, 10 հատ կով, 8 հատ մատակ, 5 հատ մանր ձագեր, 2 ձի, 6 հատ ավանակ, 10 հատ շուն։ Մշակք կատարյալ հասակավ և փոքր հասակավ ընդամեն 20 հոգի, 4 մոնթ, 5 պառավ կանայք։

Տարին 7—8—10 քիլա սերմ կցանվի դրսի տան արտերու մեջ, տարին 40—50 և 60 քիլա ցորյան գուկա դրսի տան արտերեն։

Կտուց անապատն ունի ամենազարդ այգի մը, միջի ծառեր են թեղի, պարտի և ուռնի, այգիի դուրս և ներս մի քիլա սերմի տեղ կբռնե, տարին 40—50 բարդ խոտ կբերե։ Այս այգին խիտ ծառաստանոք իբրև մի գեղեցիկ անտառ ձևացեր է։

Աննավանք ունի մի ջրաղաց՝ երեք աչքե լավ շինված, տարին 20—30—40 քիլա վարձք կբերե։ Աննավանք կա մի մարգագետին։ 2000 ղուրուշ տարին քարի, երկաթի և առու հանելու ծախք կերթա ջրաղացի մասին։ Մալագասմա տաճիկք կբռնանան ջրաղացին, վերակացու Բարսեղ վարդապետ ծեծեր էին անցյալ տարի ջաղցի մեջ։ Մամերտ գյուղի մեջ ունի մի ձիթահան, տարին 10 լիտր ձեթ կբերե։ Ունի մի այգի Ավանուց գյուղի մեջ, 15—20 բարդ խոտ կբերե, կա այգիի մեջ մրգեղենաց ծառեր, պարտի ուռի և այլն։

Դրսի տան մշակաց, տնտեսաց և վարձավոր ծառայից 5880 ղուրուշ տարեկան վարձքեր են և 4000 ղուրուշ զգեստուց։ Կտուց անապատ ունի 1խավինց, 2 Աննավանք, 3 Ճռաշեն, 4 Մարմետ, 5 Եկմալ, 6 Ամենաշատ։ Ալուր, Դոնաշեն 2 գյուղ Ալրու վանիցն է։ Հիշյալ գյուղերեն կըստանան պսակադրամ, հոգեբաժին և տան գլուխ մի մարդ արտեր հնձելու։

Ալրու վանք Կտուց անապատի հսկողության ներքևն է վաղուց հետ,

վանահայր Կտուց անապատի միաբաններեն կնստի, ունի 1 այգի։ Անապատա խանութներ, 1 հացի փուռ Թա[վ]բիզու դուռ, 2 տուն նույն դուռ և 30-ի չափ խանութ, 120 հազար ղուրուշի չափ վարձք կբերե տարին։

Թե հանդուցյալ Հարություն եպիսկոպոսի, թե Կարապետ Պապազյանի դրամներեն հարյուր հիսուն հազար ղուրուշ հանձնված է Պողոս վարդապետին, 50.000 ղուրուշ կառնե և Պոլիս երթալո միջոցին աստին-անտին կփչացնե, շատ կաշառք կուտա։ Ասկե հինգ տարի առաջ միաբանություն ստեպ բողոքելով առ վարչություն, թե անապատին մեծամեծ վնասներ կհասուցանե, թե յուր հափշտակությամբ և թե յուր շռայլությամբ, վասնզի քաղաքի տաճիկ պեյեր կբերե եղեր անապատի դրբսի տոն խնճույքներ կկազմե, մեծածախ սեղաններ կպատրաստե, 2—3—4—5 օր նոցա հետ կուտե և հարբենա և զենկի[134] բերելով կխաղցունե և կլրբանա քուրտեր և այլ զանազան տաճիկներ բերելով անապատի հարստություն նոցա կշռայլե։ Այս ամեն միաբանություն մանրամասնաբար քանիցս վարչության բողոքելով Պողոս պատրիարք դայն անապատի վանահայրութենեն կդադրեցուցանե։

Միաբանք 18 տարվա հաշիվներ կպահանջեն Պողոսեն, ուստի նա յուր կուսակիցներով հանդերձ, փոխանակ հաշիվ տալո, կբարկանա միաբանից և մինչև անդամ կծեծե Պողոս զբողոքող վարդապետ, որ վանքի վնասուն և հաշվույն տեղյակ գոլով մեծագումար դրամ կպահանջե անորմե։ Նա փոխանակ օրինավոր տումարավ հաշիվ տալո յուր խարդախ կուսակցաց ձեռոք, մի հաշվետումար կպատրաստե և բռնի կերպիվ միաբանից կնքել տալով կխրկե վարչություն, որ միաբանության ստորագրություն տեսնալով, այլևս չուզեր մանրամասն հաշիվ պահանջել Պողոսեն, որ հարյուր հազարեն ավելի դրամ յուր կոկորդ լեցնելով հարստացեր, որով պատրիարքի հրամանին չի հնազանդիր։

1873 ապրիլ 22 'ի ներս Կտուց սուրբ անապատին։ Կտուց սուրբ անապատի կղզին Վասպուրականի Գնունյաց գավառի կողմեն արևելից դեպի արևմուտք իբրև երկար կտուց մի երկարցած է Բզնունյաց ծովու մեջ, դրսե կղզին անվանյալն ճիշտ թերակղզի է, իսկ ներսեն կղզին ցամաքեն անջատյալ ճիշտ կղզի է, ասկե 30 տարի առաջ դրսի թերակղզուն մի 15 կանգուն լայն ճանապարհով կից էր, սակայն հիշյալ թվականին և այսր բոլորովին ցամաքեն մի քառորդ ճանապարհ նավակի անջատյալ է։

30 տարի առաջ մի ժամու ճանապարհ էր կղզիի շրջապատ, սակայն այսօր մեք իսկ չափելով գտանք երեք քառորդի ճանապարհ, զի

ծովն միշտ հետզհետե բարձրանալով կղզիի եզերքներեն ուտելով կփոքրացնե դիրքն։

Կտուցա կղզին թեև տեսքով փոքր է, սակայն տեսարանի կողմանե աննման գեղեցկություն ունի, զի Բզնունյաց ծովու գրեթե միջաբաքի մեջ իյնալով, Վասպուրականի բոլոր անվանի մեծամեծ լեռներ և լերանց գոտիներ և ծովամերձ անվանի մեծ գավառներ կդիտե իբրև գեղեցիկ տեսարան մի, կղզին արևելից կողմանե Կհայի և կտեսանե Վարագա և սուրբ Սահակա բարձր լեռներ, Վանա բերդ և քաղաք և Գնունյաց գավառ մինչև Առբերանք։ Արևմուտքեն Կհայի և կտեսանի Սիփանա բարձր լեռ, Նեբրովթ և Գրգուռ լեռներ, Բզնունյաց գավառ, Խլաթ և Տուրուբերանի ծովամերձ մեծ մասն։

Հարավային կողմանե Կհայի և կտեսանե Ոստանա բարձր լեռներ, Մոկաց և Կորճեից գոտևոր ամենագեղեցիկ լերինք, Նարեկա վանք, Աղթամարա և Արտեր կղզիներ, Ոստանա և Արտամետա ավաններ և այգիներ, Հայոց Ձոր, ըՌշտունյաց, Կարկառու և Կեցնա գավառներ։ Հյուսիսեն կտեսանե Ծաղկե լեռներ (որ Ալա տաղի ասի), ամբողջ Բաջբերունյաց գավառ, նույնպես արդեն Կհայի և տեսանե Բզնունյաց բոլոր տարածություն բաց 'ի փոքր ծոցեր, որ Առբերանի կողմ կիյնա։

Նույնպես վերոհիշյալ բոլոր լեռներեն և գավառներեն կտեսնվի և կնշմարվի ծովու իբրև կեդրոնի մեջ Կտուց սուրբ անապատի կղզին, որո դիրք եռանկյունաձև է, միջի քարեր և փոքրիկ լեռներ սպիտակ քարեն, հողն սևագույն և կարմրագույն, գարնան առատ բոլ բուսոցանե 40—50 բարդի չափ քաղելով անասնոց կուտան, ատաշոյի[135], սինձ, սունկ, սուրբ Թումայի ծաղիկ և այլ տեսակ խոտեր ևս կբուսին, որովք գարնան իբրև դրախտ կձևանա ամբողջ կղզին, կա կղզի[ի]ն մեջ քաղցր և դառն նշենի ծառեր։

Վանքի շինությանց հաստատություն կղզիի հյուսիսային արևելակողմ փոքր բերդի չափ բարձր քարի մի ստորոտ ծովու ափանց երկու քարընկեց մերձ ունի յուր շենքեր։

Եկեղեցվո հաստատությունք են մի սքանչելակերտ գեղեցկահարմար տաճար, անուն սուրբ Աստվածածնի նվիրյալ մի դարպաս, մի ավանդատուն, մի զանգակատուն եկեղեցվո դրան վերա։

Սուրբ տաճարի ներսի կողմանե չափելով գմբեթի բարձրություն է 35 ոտք, կամարաց 27, տաճարի դիրք քառակուսի լինելով թե երկարություն և թե լայնություն 29 ոտք են։ Տաճարի մեծ սեղան սուրբ Աստվածածնի նվիրյալ է, ճարտարարվեստ խաչկալ մի կա տաճարի ավագ

սեղան, երկու փոքր խորաններ կան սեղանի աջ և ահյակ կողմեր, աջակողմյան խորան սուրբ Կարապետի անվամբ է, որո գերեզման և մասունք սուրբ Կարապետի խորանին մեջ է, ահյակ կողմի խորան սուրբ Ստեփանոսի անվամբ է։ Տաճարի մեջ հարավային և հյուսիսային որմոց քով հասարակ դրան չափ մերձ երկու քառակուսի սյուներ կան, գմբեթ հիշյալ սյունաց և սեղանի կամարի վերա բարձրացած է, տաճարի մեծ դուռ կբացվի 4 բացվի դարպասի մեջ, որո միջեն երեք քարե սանդուխով կելնին 'ի տաճարն, որո քարեր մութ կարմրագույն են։

Դարպասի շենք ճիշտ քառակուսի է, երկարություն և լայնություն հավասար 40 ոտք է, իսկ բարձրություն 28 ոտք, չորս քառակուսի սյուներ կան դարպասի մեջ, տաճարի դուռ դարպասեն հայելով գեղեցիկ քանդակներ և կերտվածներ ունի, երկու դուռերու մեջ սեղաններ կան, որոց խաչկալք քարյա լինելով գմբեթաձև քանդակյալք և հորինյալք են, միաբանք սուրբ անապատիս հիշյալ դարպասի մեջ կկատարեն յուրյանց բոլոր սաղմոսերգությունք և ժամասացությունք և գիշերապաշտոնք և հսկմունք, իսկ սուրբ պատարագ կմատուցանեն տաճարի մեջ և դպիրք ևս տաճարի մեջ կառնին դպրություն սուրբ պատարագին։

Դարպասի աջակողմյան դուռի մեջ բացված է ավանդատան դուռ, որ սուրբ Հրեշտակապետի անվամբ է, ավանդատան երկարություն 19 ոտք է, լայնություն 15 ոտք, իսկ բարձրություն դարձյալ 15 ոտք, իբրև եկեղեցի սեղան ունի, հորո վերա երբեմն պատարագ կմատչի։ Ըստ նախնյաց սովորության, միշտ պատարագիչ հիշյալ ավանդատան մեջ կզգեստավորվի, թե առաջնորդ և թե եպիսկոպոս լինի ժամարար։ Ամեն շաբաթ և կիրակի անխափան կպատարագեն կուսակրոն կրոնավորք և անապատի բոլոր կարգադրությունք ըստ առաջնույն անթերի կկատարեն միաբան եղբայրությունք։

Վարդապետաց, սարկավագաց, դպրոց և մահտեսաց սենյակք եկեղեցվո շրջապատ շինված է, բացի արևելյան կողմանե տաճարին։ Շինվածք հինգ թաղի բաժանված է, հինգ թաղի մեջ կա 62 սենյակ, յուրաքանչյուր սենյակի մեջ մի ևս սենյակ կա, որք կընեն 124 սենյակք։ Կա մի սեղանատուն՝ 4 մառանավ, մի տնտեսատուն՝ մի շտեմարանով և հացի փռով, կա երկու մարագ, 1 փարախ և մի փայտի տուն, 1 հացու և 1 ցախի տուն։

Կտուց սուրբ անապատի ներսի ամբողջ միաբանություն 33 հոգի

են։ 12 վարդապետք, 4 ավագ սարկավագ, 2 ուրարակիր[136], 5 դպիր, 11 մահտեսի։

1. Շատախցի Հակոբ վարդապետ առաջնորդ կամ վանահայր 50
2. 'Ի Կորճեից Բարսեղ վարդապետ վերակացու 60
3. 'Ի Ալուր գեղջե Գրիգոր վարդապետ լուսարար, որ 70 վարդապետ թաղած է, ինքն այժմ 80-ամյա է, բայց խիստ քաջառողջ, բայց է միականի
4. 'Ի Վան քաղաքե Գևորգ վարդապետ տեր Բարսեղյան 65
5. 'Ի Մոգաց գավառե Անդրեաս վարդապետ 100
6. 'Ի Մոգաց Եղիազար —»— 38
7. 'Ի Վան քաղաքե Եղիշե վարդապետ Մեսրոպյան 30
8. 'Ի Վան քաղաքե Գրիգոր —»— 35
9. 'Ի Պաֆրայե Կարապետ —»— 40
10. 'Ի Կեսարիայե Հովհաննես —»— 35
11. 'Ի Սյունյաց գավառե Մկրտիչ —»— 35
12. 'Ի Տարոնո գավառե Ավետիս —»— 36
13. 'Ի Վանա Աբրահամ սարկավագ 40
14. 'Ի Պարտիզակե Մարտիրոս —»— 40
15. 'Ի Կարնո Հովհաննես —»— 30
16. 'Ի Վանա Կարապետ —»— 28
17. 'Ի Ռշտունյաց Հոհան ուրարակիր 30
18. 'Ի Մոկաց Պաղտասար —»— 30
19. 'Ի Վանա Աբրահամ դպիր 50
20. 'Ի Կորճեից Մարտիրոս —»— 70
21. 'Ի Ալուր գեղե մահտեսի Կարապետ —»— 35
22. 'Ի Հայրորտա Մելքոն —»— 28
23. 'Ի Վանա մահտեսի Պաղտասար —»— 35
24. 'Ի Վանա Հովհաննես —»— 30
25. 'Ի Կորճեից Մահտեսի Մանուկ 90
26. 'Ի Վանա մահտեսի Հարություն 85
27. 'Ի Նարեկա մահտեսի Մարտիրոս 65
28. 'Ի Մոգաց մահտեսի Մխիթար 50
29. 'Ի Վանա մահտեսի Գրիգոր 40
30. 'Ի Վանա մահտեսի Խաչատուր 40
31. 'Ի Այրարատա մահտեսի Հովհաննես 42

32. 'Ի Մոգաց մահտեսի Գասպար 35
33. 'Ի Մոգաց մահտեսի Մխիթար 45

Վանահայր վերոհիշյալ միաբանաց տարին մեկ-մեկ ոռնաման, երկու տարին անգամ մեկ-մեկ վերարկու և մեկ-մեկ բաճկոն կուտա, շապիկ և վարտիք խնդրողաց կտրվի, տարին զգեստի 4000—5000 ղուրուշ կերթա։

Անապատի կերակուր պարզ է, միս, գինի և օղի չկա, օր մի անգամ կերակուր կեփվի, տարվան մեծ մասն պահոք կանցունեն։

Կուսաց անապատի ոչ դրսի տուն և ոչ ներսի կղզի[ի] մեջ ժառանգավորաց դպրոց չկա, միաբանաց վերա հարկ դրինք անպատճառ դրպրոց բանալ, զի անապատի եկամուտ կբավե մի դպրոց ունենալ։ 22000 ղուրուշ Վանա միջի խանութներեն, 4000 Պոլսո, Թաղրտաղի և Ատրնայի խանութներեն և 3000 ղուրուշ ևս Տփխիսո խանութներեն գուկա, 19.000 ղուրուշ, 2000 ղուրուշ պսակադրումե, հոդաբաժինե և ողորմութենե կգոյանա 21.000 ղուրուշ։

Վանքիս վանահայր և վերակացուն օրինավոր տնտեսականություն չգիտնալով, չեն կրնար կառավարել զվանքն և զմիաբանություն։

Վանքի վանահայր Շատախու կողմեր ժողովարարության երթալով եկեղեցվոց զգեստուց և գրյանց բալանիքներ հետ տարեր էր, ուստի նոցա հաշիվ շառնվեցավ։ 6 տարի առաջ մի անգամ ձեռագիր գրյանց ցուցակ շինված է, 250 հատոր ձեռագիր կա եղեր, սակայն այժմ այնչափ մնացած չէ։ Վանականք ձեռագիր գրյանց արժեք չգիտնալով, ոչ օրինավոր թանդարան շինած են և օրինավոր պահպանության կերպ գիտեն։ Ասկե 30 տարի առաջ վերոհիշյալ լուսարար Գրիգոր վարդապետ, որ այժմ դեռ կենդանի է, ուսումնամենյուք գոլով 400 հատոր հին ձեռագիր գրյանք գերեզմանի մեջ թաղեր է, ևս անձամբ իրմե հարցուցի այս մասին, նա պատասխանեց, թե գրյանք անխնամ մնալով ձյունի և անձրևի ներքև թուղթեր իրարու թափված էին, հարցուցի, թե ինչ ձեռագիր էին, խեղճ ողորմելին դժբախտաբար անուններ չէր գիտեր բնավ, ահա քեզ երկրորդ Լենկ Թեմուր, բայց կարծեմ թե տգետ, անհոգ և անընթերցասեր վանականներեն ավելի շատ գրյանք վնասված են, քան թե Լենկ Թեմուրի ձեռոք, զի ճիշտ այսպիսի պատահար մի ևս Լիմ անապատի և Սևանա անապատի մեջ տեղի ունեցած է։ Լիմ անապատ 40 տարի առաջ սակավի չափ հին ձեռագրեր դարձյալ հողի ներքև թաղած են, իսկ Սևան անապատ, ինչպես Շահխաթունյան Հովհաննես

եպիսկոպոս ստորագրություն Հայաստանի մեջ կգրե, լսելով, թե Ղուկաս կաթողիկոս այցելության կերթա անապատին, փութացեր էր բոլոր ձեռագիրներ նավակով ծով լեցուցեր են, կասկածելով, թե կաթողիկոս գալով և փոշոտած տեսնալով զգրյանս՝ կպատուհասե զվանահայրն և զմիաբանություն։

1840 թվականին խան Մահմուտի եղբայր Միրսևպին պեյ նավակով գալով 'ի կղզին Կուսաց, սուրբ անապատի վանահայր Սիմեոն վարդապետ սրախողխող կսպանանե և անապատի բոլոր եկեղեցական առնթներ, զգեստներ, ամբողջ պղնձեղեն կկողոպտե կտանի և ոչ ոք կարող կլինի հափշտակված ինչքերեն մաղ մի ետ դարձունել։

Սուրբ անապատիս մեջ խիստ առաքինի եպիսկոպոսք և վարդապետք առաքինացած են թե ճգնությամբ, թե իմաստությամբ, թե մեծագործությամբ և թե շինարարությամբ, սակայն ոչ մեկեն գրավոր հիշատակարան կա, միայն ավանդությամբ փոքր-ինչ ժամանակ նոցա առաքինություն կպատմվի և հետո սակավ առ սակավ կմոռացվի։

Ասկե քանի տարի առաջ հայոց ազգ երկու անապատներ յուր երկու աչքի պես սիրով առատորեն նվերներ կհանձներ նվիրակաց և ամեն երկրի մեջ գանձապետ հաստատելով, ողորմություն կհավաքեր և կխրկեր, բայց մեր ազգ օրըստօրե բարեպաշտութենե սառելով և հոգևորացն անփույթ լինելով անապատաց այլևս ըստ նախնյաց բարեպաշտության չեն նայեր։ Ուստի այն բարեպաշտությունից ժամանակին 60—70 վարդապետք կային մեն-մի անապատաց մեջ, այժմ ահա փոխան 60-ի և 70-ի՝ հազիվ թե 11 վարդապետ կա։

Բոլոր ազգի վանորեից վարդապետներեն անապատի վարդապետներ առավել սրբակրոն, քաղաքավար, առաքինությունից նախանձավոր են, երանի թե ազգի վարդապետարան անապատին լինե, այն է՝ բոլոր ժառանգավոր կուսակրոն վարդապետք անապատաց մեջ կուսակրոնության և վարդապետության ուսումն առնելով Հայաստանի վիճակաց մեջ վանահայրության և առաջնորդության պաշտոն վարեին, հայնժամ այլևս այժմուս պես ժողովուրդն յուր կղզիներեն գոհ լինելով, այլևս չէր ախորժեր բամբասել յուր հովիվներ։ Անապատի մեջ սակավապետություն, ժուժկալություն և շարքաշություն գործնական կերպիվ ուսանելով՝ ժողովրդյան վերա ծանր բեռ չէին լիներ։ Սակայն մեր վարդապետներեն շատեր շռայլության և թուլամորթության մեջ վարժվելով 'ի փոքրավորութենե կամ մայրաքաղաքաց մեջ վարդապետ դառնալով թե բամբասանաց առարկա կլինին, թե քիչ դրամով չեն բավականա-

նար և կամ թե բնավ փոքր պաշտոններու չեն զիջաներ երբեք։

Կտուց անապատի տաճարի թվական է ՌՃԲ (=1653), Երեմիա վարդապետի ձեռամբ շինված է, իսկ դարպասի հայոց թիվն է ՌՄԾԱ (=1802), որ դրան ներսի կողմ դրոշմվելով ունի այսպիսի ոտանավոր մի։

Շնորհօք սրբոյ Կարապետին
եղև շինեալ դարպաս սորին
զանգակատուն 'ի միասին
ձեռօք ջանիւք տեսչի սմին
Տեր Կարապետ Զդնազդեցին
եւ լծակցաւ երկրորդ դեռին
Տեր Սիմեօն սրբասիրին
աշխատողացն 'ի միասին
և տեր Պետրոս վարդապետին
Տեր Յովհաննէս բարեբերին
ընդ ըղազարու ճգնակրին
Արդեամբ ընչից Հայոց ազգին
յոր աղօթեք տուք զողորմին։

73 ապրիլ 24 'ի էջմիածին վանքն Բաղենից։

Բաղենից էջմիածնի վանք 7 ժամու հեռի քաղաքեն Վանա դեպ 'ի հյուսիս սուրբ Սահակա լերան արևմտյան ստորոտ փոքր-ինչ զառիվայր և ծովափանց մերձ ունի յուր ցանկալի դիրք։ Վանքս երեք ժամ Կտուցեն դեպ արևելյան հյուսիս և Լիմ անապատեն 3 ժամ դեպ 'ի հարավային արևմուտք կիյնա, ուստի հյուսիսեն կտեսնա Ծաղկե լերինք և Քաջբերունյաց գավառ, արևմուտքեն հայի և տեսանե Սիփանա, Ներբովթա և Գրգուռ լեռներ և Խլաթա և Բղնունյաց գավառներ, հարավեն Ոստանա և Գորտված լեռներ և Կորճեից գավառ, իսկ արևելից մերձ անելով գլեռան սուրբ Սահակ կտեսանե զգավառն Գնունյաց, որ է հանդեպ արևելից վանուցս։

Վանքս չէ պարսպապատ, շենքեր անկանոն շինված, տաճար շենքերաց մեջ իյնալով դրսեն չերևիր, տաճար մատուռի ձևով փոքր և նսեմ է, որո երկարություն 11 և լայնություն 15 ոտք է, փայտաշեն դարպաս մի ունի առաջ՝ երկու տաճարի քանակությամբ։

Վանքիս վանահայր է այժմ Սեդրակյան Ավետիս վարդապետ՝ Լիմ

անապատի կողմեն տրված, սա ալեոք ծաղկեաց 60-ամյա պատկառելի ծերունի մի է, որ 25 ամ հիշյալ վանուց մեջ գործակատար լինելով սենյակներ նորոգեց, մի երկուհակ շերամատուն շինեց, նույնպես ջրաղաց և փարախ նորոգեց, թթենի և ծառաստաններ տնկեց, երկրագործություն ծաղկեցուց, Ավետիք վարդապետս համեղաձայն երաժիշտ, որո ձայն և եղանակ բոլոր Վասպուրականի մեջ հռչակված լինելով, սորա ձայնի նման ձայն այժմ Հայաստան չկա։ Սա 3 ամիս առաջ կաթված հանդիպելով՝ չկարեր 'ի վերա ոտից կանգնել, իսկ այժմ փոքր-ինչ ապաքինություն գտնելով, փայտի ապաստանելով ելանե և մտանե ի սենյակ՝ կաղնիկաղն քայլելով։

Վանքն արդեն Լիմ անապատի ագարակն է այժմ, ունի Վանա 40 քիլայի հող, մեծ մասամբ սոտին և 15 քիլայի չափ տեղ ջրարբի, հող հույժ բարեբեր է և բերրի, ագարակ կիսովի տրված է արճիշեցի Ատիին, տարին 10 քիլայի չափ սերմ կցանվի, ուստի երբեմն 80—100 և մինչև 150 քիլա արդյունք գուկա, կեսն անապատին է, կեսն՝ մարապային։

Ունի մի մարգագետին, որմե 20 բարդ խոտ կբերե, ունի մի խաղողի այգի, որ տարին 500 լիտր շիրա կբերե, զորո կեսն ըռուտ եփելով կխրկեն անապատի ներս, իսկ կեսն կմնա քացախի և բաժկի[137]։

Կա մի անտառ և թթենի, բոլորտիք ցանկապատ, թե այգին, թե թթենին, և թե անտառ հույժ սքանչելի տեսարան մի կընծայեն վանից բոլորտիք, որո նման վայելուչ վանք և վայր Վասպուրականի մեջ գրեթե չկա։

Լիմ անապատ ունի այս վանքի մեջ մեկ գութան՝ յուր սարոք, 10 գոմեշ, 10 եզ և 100 ոչխար, որք Լիմ անապատին են։ Վանքս միաբան և տիրացու չունի, երբեմն անապատի տիրացուք օգափոխության համար հոս գուկա[ն]։

Վանքիս ամբողջ եկամուտն Լիմ անապատ կերթա։

73 ապրիլի 24 'ի սուրբ Սահակա վանքն։

Սուրբ Սահակ Պարթևի Հայրապետի վանք, որ ասի Երերինա սուրբ Սահակ 8 ժամու հեռի Վանա քաղաքեն դեպ 'ի հյուսիս նույն վանքի անունով կոչված լերան, այն է՝ սուրբ Սահակա սարի հյուսիսային կողմի բարձրության վերա, փոքր-ինչ լերան կատարին վայր բերդանման սեպացյալ սպիտակ ապառաժ քարի վերա ունի յուր վսեմ դիրք։

Վանքի պարիսպներ քառակուսի կես քարե կես աղյուսե շինված է, աղյուսներ անձրևեն և ձյուներեն մաշած և խարխլած են։ Տաճարի շինվածք գահավեժ քարի մը կատարի վերա է, փոքր է տաճարի դիրք,

սակայն խիստ ամրակառույց է որմաց բարձրության մասին, լայնություն տաճարին 15 ոտք է, երկարություն 13, գմբեթ թրծյալ աղյուսով շինված է, տաճարն ունի յուր մեջ մի սեղան, երկու փոքր մատուռներ, տաճարի ձախակողմ կա տեր Հուսկան[ի] գերեզման։

Դարպասի շինվածք տաճարեն ընդարձակ է, երկարություն և լայնություն հավասար 23 ոտք են, 2 սեղան ունի մեջ դարպաս, տաճարի հատակ չորս աստիճան բարձր է դարպասեն։ Դարպասի դրան վերա կա այսպիսի հիշատակարանք.

«Շինեցաւ դարպաս 'ի հիմանց հանդերձ խցներօք աշխատութեամբ վանեցի Կարապետ մեղապարտ վարդապետիս, որ 'ի թուականին ՌՄԻԲ (=1773) եկի 'ի յանապատս սրբոյն 'ի Սահակայ և շինեցի զայս 'ի յիշատակ ինձ և օրհնեալ ազգիս հայոց և ծնողացս 'ի թիւ ՌՄԼԷ (=1788), արդ յիշեցէք 'ի Քրիստոս զԱբրահամ եպիսկոպոսն, որ իզ (=36) տարի եկաց ընդ հոգևոր հորն իւրոց Կարապետ կաթողիկոսին էր գործակատար, 'ի շինումն դարպասիս հանդերձ 'ի Քրիստոս»։

Խցներ և սենյակք ամբողջ քայքայյալ են, 1 տնտեստուն, 2 ավերակ սենյակ, երկու փարախ, վանքի բակ աղբյուսներով լեցված կոյանոց դարձեր է։

Վանքի մեջ ոչ վարդապետ և ոչ քահանա կա, այլ Երերին գյուղեն Խերապետի գերդաստան, որք են՝ 4 այր, 3 կին, որք վանքի մեջ իբրև պահապան նստելով՝ երկրագործություն կընեն, բայց երբեք վանքի շինության հոգ տարած չեն։

Վանք 40 գութան հող ունի, ասել է՝ 5 քիլայի սերմամուտ, վանքի միջի բոլոր տավարեղենք մարապային է, վանքին սեփական բան չկա, տասանորդ կվճարեն Լիմ անապատին[138]։

Եկեղեցյաց մեջ այժմ կա մի ժամարարի հնամաշ զգեստ, որ Լիմ անապատեն բերված է, 6 հատ խաչ, երեք սեղանի պատկերի վերա երեքն ձեռքի, մի ևս մասունքով խաչ։ Կա մի ձեռագիր արծաթապատ ավետարան, մի հին ճաշոց և մի ձեռագիր կեղամաշ հայսմավուրք։

Վանքի հարավայի(ն) կողմի գերեզմանատան մեջ կա Կարապետ վանեցի կոմքասմենց Կարապետ կաթողիկոսին, որո տապանագիրն է.

«Տապանս այս է սակաւախոր,
Առ ինքն ունի կալանաւոր
Կարապետ շքեղաւոր,
և Հայրապետ պսակաւոր,

Տանս Հայոց աշխատաւոր,
եկեղեցաշէն արդիւնաւոր,
Որ նուաճեաց զթեմն բոլոր,
զբազումս արար սրտակոտոր,
Ահա այժմ կա աստի 'ի խոր,
Յանուր մահու կալանաւոր,
Աւաղ յունայն փառ անցաւոր,
Որպես փոխի կա փութաւոր,
Երեկ հզօր պերճ փառաւոր,
Այսօր մոխի[ր] անարգաւոր,
Ահա վախճան աղետաւոր,
Որ տայ աշխար[հ]ս այս ուղցաւոր։

Թվին ՌՄՕԲ (=1803)-ին փոխեցաւ առ աստուած»։ Ուրիշ տապանագիր մի անդ.

«Այս է տապան Շիրվանեան արհիեպիսկոպոսին ի զ (=90) տարի ծառ(այ)եաց հոգևոր հօր (այն է՝ Կարապետ կաթողիկոսին թիւն ՌՄԼԵ (=1786)»։

Կա գերեզմանատան մեջ քանի վարդապետաց գերեզմանք։

1873 'ի ապրիլ 25 'ի դրսի տուն Լիմ սուրբ անապատի։

Լիմ սուրբ անապատի դրսի տուն ասացյալ տեղին Վանա 9 ժամու հեռի դեպ 'ի ճիշտ հյուսիսային կողմ Նորավանից լերան ստորոտ ծովափեն մի մղոնաչափ դեպ 'ի հարավ զառիկողի վերա ունի յուր դիրք, որ հյուսիսեն կհայի Լիմ անապատի կղզույն և Քաջբերունյաց գավառի վերա, նույնպես հյուսիսեն կտեսանե բոլոր Ծաղկե լեռներ և արևմուտքեն կտեսանե Սիփանա լերան բարձունք, արևելքեն կտեսանե Առբերանի լեռներ և գավառն, հարավային կողմն կիյնա Գնունյաց գավառն, սակայն չի տեսանիր։

Դրսի տուն չունի պարիսպներ, ուստի շենքեր խառնիխուռն շինված են, փայտաշեն եկեղեցի մի կա՝ սուրբ Ստեփանոսի անվամբ, երկարություն 10, իսկ լայնություն 20։ 6 հատ նսեմ խրճիթներ կան, 1 վարժատուն երկահարկ, 8—9 տարի կանոնավոր ժառանգավորաց աշակերտք ուսմունք սորվեցան մեջ, բայց այժմ վարժապետ չլինելույն աղագավ 7 աշակերտք մնացած են առանց դասասանության։ Կա 1 տնտեստուն, 1 մառան, 2 փարախ, մին ձիանց և մին խաշանց, մի կանոնավոր մեծ

ցորենի շտեմարան կա, 2 սենյակ յուղի և պանրի, 2 բակ խաշանց համար։

Դրսի տան այժմյան վերակացուն է Թադեոս վարդապետ, 7 մոնթ[139] անունով տիրացուք, 2 միաբան՝ Սարգիս և Պետրոս, 3 պառավ կանայք, 7 մշակ, 7 խոտաղ, 4 ևս ներսի տան մշակներ։ Թե մեծ և թե փոքր և թե ներսի մշակաց ներկա տարուս դրամական վարձուց ամբողջություն է 6750 զուրուշ, բոլոր մշակաց զգեստուց ծախքեր 5548, որոց ամբողջ գումարն կընե 12298 զուրուշ։

Լիմ սուրբ անապատի դրսի տան տավարեղենք 10 լծկան գոմեշ, 18 մատակ, 30 հատ ձագ գոմեշի 1—2—3 տարեկան, 13 եզ, 16 կով, 13 հատ 1—2 տարեկան հորթեր, 3 ավանակ, 4 ձի, 1 քուռակ, ամբողջ 98 հատ։

Դրսի տան հողային սերմանելի արտորայք 14 քիլայի սերմամուտ կա։ Ատեր գյուղի սահմանի մեջ ունի վանք, 2 կտոր արտ կա, Կտսկի արտ կառնե 9 չափ սերմ, իսկ Որուտոց արտ կառնե 4 չափ։ Մի մարգագետին 2000—2500—3000 խուրձ խոտ կբերե։ Բերդի սահմանի մեջ կա այգի տեղ, ինն գութանի տեղ հող, նույն սահմանի մեջ Մկրի արտ կա 3 չափ սերմի տեղ։

Դրսի տան հողեր հասարակ հողեր լինելով բարեբեր չեն, խիստ դժվարին աշխատությամբ կմշակվի և կհնձվի, դրսի տուն ճանապարհորդք պակաս չեն, օր 4—5—6—7—8—10 և մինչև 12 հոգի կպատահին և ձրի հաց կուտեն կերթան, առանց մի դրամ վճարելու։ Դրսի տան օդ այնչափ առողջարար չէ, խոնավ է օդն, մի աղբյուր ունի, ջուր ծանրահամ է։ Ջրաղաց մի կա աղբյուրի ներքև, որ գարնան միջոցին 20 օր հաղիվ կբանի, իսկ ամառ և ձմեռ աղբյուրի ջուր լճի մեջ ժողովելով՝ երբեմն կթողվի։

Ատեր գյուղի մեջ կա երկու ջրաղաց, 1 նորաշեն ձիթահան և 1 ավերակ ձիթահանի տեղ վանքին սեփական։

1873, ապրիլ 27 'ի Լիմ սուրբ անապատն։

Լիմ սուրբ անապատի կղզին, 10 ժամավ հեռի է Վան քաղաքե ուղղակի դեպ 'ի հյուսիսակողմ ծովու դրսի ափունքեն, 1 ժամ հեռի ծովու մեջ ունի յուր դիրք։

Կղզիի ձև արևելքեն դեպ արևմուտք ուղղակի երկայնյալ սրածայր հավկթաձև է, արևելյան ծայրի անուն Բաղածեր է՝ դեպ 'ի բաղ երկայնանալուն աղագավ, արևմտյան ծայրի անուն Բետածեր է՝ հոն բերդ լինելուն աղագավ, տակավին մինչև ցայսօր բերդի մի մեծ աշտարակի

ավերածին մնացորդ կմնա, իսկ ամբողջություն ծովու ջուր քանդելով կործաներ է յուր մեջ։ Ըստ պատմութենե ծերունյաց 250 տարի առաջ Արճեշին ուղղակի ճանապարհ հիշյալ բերդի քովեն անցած է 'ի Խժիշկ գյուղ և անտի ուղղակի 'ի Վան գնացած է։ Եվ Առբերանի Բերկրի գետ, որ է՝ Պանտիմահի[140], հիշյալ բերդեն կես մղոն հեռի անցանելով, կերթա եղեր ծով, այժմ գետի կամուրջ նավավարք կտեսնան ծովու ջուրի մեջ։ Ծով 250 տարվան միջոցին, հիշյալ հին կամուրջեն մինչև այժմեան կամուրջ Պանտիմահու գետեն 3 ժամու ճանապարհ առաջ անցած է։ Հիշյալ թվականին Կողին շատ մեծ ընդարձակ եղած է, մինչև որ մեջ գյուղի բնակություն և երկրագործություն եղած է, զի այժմ գեղի գերեզմանի բնակություն կա կղզիի մեջ և հիշյալ թվականեն առաջ, որ ժամանակ հայտնի չէ և չկա գրավոր հիշատակություն, սակայն բնական դիրքեն հայտնի կերևի, թե կղզին ցամաքի հետ հաղորդակցություն ունենալով թերակղզի եղած է, բայց ապա հետզհետե ծովն բարձրանալով և հառաջ անցանելով ցամաքեն բաժանելով կղզեցուցած է։

Կղզիի այժմյան շրջապատ ճիշտ երկու ժամու ճանապարհի մեջ 10 քիլայի սերմանելու հող կա, որ մեծ մասն հանգուցյալ Գևորգ ճղնավոր յուր արտաքո կարգի աշխատությամբ մաքրե փոքր և մեծամեծ քարեր և հողեր սերմանելու վիճակին հասուցած է, կղզին հատակ ամբողջ քար է և երեսի մեծ մասն սև որձաքարովք լեցված է, բավական անուշ նուշի ծառեր կան աստ և անդ։ Երեք խաղողի այգի կա ներսի կղզին, մին հյուսիսային արևելյան կողմ ծովու ափանց մերձ երկրորդն արևվելյան կողմ, բարձր դիրքի վերա, երրորդն վանքի շինության մերձ։

Կղզիի մեջ կբուսնի բոզ և այլ և այլ խոտեղենք, որք հնձելով անասնոց համար կպահին։

Կղզին արևելքեն կհայի Առբերանի գավառի վերա և տեսանե Ծրրտաշեն գյուղ։ Արևմուտքեն կտեսնվի Սիփան, Նեբրովթ, Գրգուռ լեռներ և Բղնունյաց գավառ, հյուսիսեն կտեսանի Ծաղկե լեռներ, Արճեշ քաղաքի ավերակներ ծովու մեջ և բոլոր Քաջբերունյաց գավառ, հարավային կտեսանի Գնունյաց գավառի մի մասն։

Լիմ սուրբ անապատի տաճարի և խրճիթներու շենքեր կղզույն հարավային կողմ Բաղածայրի և Բերածայրի միջաբաժին մեջտեղ ծովու ափունքեն 3 քարընկես հեռի զառիկող վայրի վերա ունի յուր դիրք։

Սեղեկաց տարածություն ցիրուցան, անկանոն շինված, նսեմ և խոնավ խրճիթներ են, 54 սենյակ են, որք տաճարի հյուսիսային, հարավային և արևելյան կողմեր Հայաստանի գյուղերու տանց պես շինված,

3 կանոնավոր սենյակ կա բոլոր խրճիթաց մեջ, 1 Ավետիք վարդապետին, 2 Գաբրիել եպիսկոպոսին և Նարեկա վանահայր Հակոբ եպիսկոպոսին։ Մի ևս հին առաջնորդարան այժմ ուխտավորաց համար հատկացած է։

Եկեղեցվո արևմտյան կողմն սեղանատուն, որ 100 հոգի կառնե, 5 մառան կա, որո դուռ կբացվի սեղանատան մեջ, 1 խոհարան, որոց հացի փուռ և քարուկիր ալյուրի շտեմարան, խոհանոցի մեջ կա մի մեծ թոնիր, շաբաթ մի անգամ կվառեն, բոլոր միաբանության թե վարդապետ, թե սարկավագ, թե տիրացու և թե մշակք, բաց 'ի վանահորեն, օջիլ կթոթվին, լվացարան չկա վանքի մեջ, միաբանք ամիսն անգամ յուրյանց շորեղենք ծովու պաղ ջրի մեջ կլվանան, որ է անտանելի ողորմելի տեսարան։

Կա մի ձիու ջրաղաց, մի ընդարձակ ցորենի շտեմարան, 1 կաթ մածունի տուն, 2 ընդարձակ փարախներ, մի մարագ, 1 ցորենի խանութ, 1 քարուկիր ջրամբար, որո մեջ ձյուն կհավաքեն և ամառան տաք միջոցին ձյան ջուր կխմեն, որ խիստ վնասակար են կենաց և առողջության։ 3 ջրի խոր կան, որոց ջուրք շատ անուշ չեն։ Մատենադարան չկա հատուկ, գրքեր ասա-անդ ցիրուցան և քիչ մի ևս առաջնորդի սենյակի մեջ ժողոված են։

Լիմ սուրբ անապատի ամբողջ միաբանությունք են 14 վարդապետ, 2 ավագ սարկավագ, 2 ուրարակիր հմանավ, 8 դպիր, 7 մահտեսի։

'Ի Վան քաղաքե Թոփուզյան Հակոբ եպիսկոպոս վանահայր 73
1. 'Ի Վան քաղաքե Սեդրակյան Ավետիս վարդապետ 60
2. 'Ի Վան քաղաքե վերակացու Թադեոս վարդապետ 55
3. 'Ի Վան քաղաքե Անանիա վարդապետ 45
4. 'Ի Վան քաղաքե Բարդուղիմեոս վարդապետ 45
5. 'Ի Վան քաղաքե Գաբրիել վարդապետ 40
6. 'Ի Վան քաղաքե Եղիշե վարդապետ 46
7. 'Ի Հացյաց գավառե Մելքոն վարդապետ 75
8. 'Ի Պոլսո Խաս գյուղե Հովհաննես վարդապետ 82
9. 'Ի Պայազտու Գոգովիտ գավառե Գալուստ վարդապետ 75
10. 'Ի Տարոնո աշխարհե Կարապետ վարդապետ 43
11. 'Ի Երերին գեղջե Աթանաս վարդապետ 40
12. 'Ի Նորավանց գեղջե Գրիգոր վարդապետ 31
13. 'Ի Խժիշկ գեղջե Աբրահամ վարդապետ 28

15. 'Ի Բզնունյաց գավառե Պետրոս ավագ սարկավագ 25
16. 'Ի Վանա Քաղաքե Հակոբ սարկավագ 25
17. 'Ի Կղլար քաղաքե Ռուսիո մահտեսի Հակոբ ուրարակիր 60
18. 'Ի Երևան քաղաքե Մանուկ ուրարակիր 22
19. 'Ի Պոնտոս քաղաքե Կարապետ դպիր 23
20. 'Ի Վան քաղաքե Առաքել դպիր 34
21. 'Ի Վան քաղաքե Գազպար դպիր 22
22. 'Ի Վան քաղաքե Ավետիս դպիր 18
23. 'Ի Հակն քաղաքե Նիկողայոս դպիր 22
24. 'Ի Երևան քաղաքե Հարություն դպիր 24
25. 'Ի Հացյաց գավառե Գրիգոր դպիր 28
26. 'Ի Հացյաց գավառե Մուրատ դպիր 30
27. 'Ի Վան քաղաքե մահտեսի Նահապետ 90
28. 'Ի Վաղարշակերտե մահտեսի Մեսրոպ 40
29. 'Ի Նորաշեն գեղջե մահտեսի Եղազար 65
30. 'Ի Շատախու մահտեսի Ավետիս 60
31. 'Ի Խիզան գավառե մահտեսի Խաչատուր 45
32. 'Ի Երերին գեղջե մահտեսի Ղազար (խելագար) 65

Լիմ սուրբ անապատի տաճար Աղթամարա Զաքարի կաթողիկոսի մեծագործությամբ շինված է, որո հիշատակարան դարպասի աջակողմյան սեղանի ներքև դրված քարի վերա արձանագրված է այսպես ('Ի թուականս հայկազեան տումարի (ՉԾԴ=1305) յաշխարհակալութեան յազգին նեստորաց Աւջաթու սուլթանոյն ես նուաստ տէր Զաքարիա վերադիտող Աղթամարայ շինեցի 'ի հիմանց զսուրբ տաճարս և զքուէրսն և զաշխատաւորսն և զերախտաւորսն Քրիստոս Աստուած ողորմեսցի, յիշողացդ և յիշեցօղս. ամեն սրբոյն Գեորգայ զօրաւարին, որք հանդիպիք յիշեցէք 'ի Քրիստոս, ընդ նմին ծնողս մեր և զեղբարս)։

Տաճարի ճարտարապետություն աննման գեղեցկությամբ հորինելով տեսողաց զմայլումն կբերե, սպիտակ մալթայի քարերով հիմնված է, ներսի կողմեն չափելով բաց ի սեղանեն 26 ոտք երկարություն է, իսկ լայնություն 28 ոտք, 29 ոտք տաճարի կամարաց բարձրություն է, նույնչափ բարձրություն ունի գմբեթի բարձրությունն, որ սեղանի և մյուս երեք կամարաց վերա բարձրացեր է դեպ 'ի վեր։

Տաճար ունի մի մեծ սեղան, որ հանուն սուրբ Աստվածածնի նվիր-

ցալ է, սեղանի աջ և ահյակ եռահարկ չորս խորաններ կան, աջակողմյան վարի խորան սուրբ Գեորգա զորավարի անվամբ է, ուր դրան առաջ կա սուրբ Գեորգա հրաշալի գերեզման, որո անվամբ կկոչվի Լիմ սուրբ անապատի կրոնաստան, ահյակ կողմի խոր[ա]ն սուրբ Մինասի անվամբ։ Աջ կողմի վերի խորան սուրբ Լուսավորչի անվամբ է, իսկ ահյակ կողման սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի անվամբ, տաճարի դրան լայնություն, որ կբացվի դարպասե լայնություն 6 1/2 ոտք է։ Դարպասի երկարություն 44 ու կես ոտք է, 46 ու կես լայնություն։ Կամարաց բարձրություն 27 ոտք է, 35 կամարի միջացոց բարձրություն է։ Դարպաս չորս քառակուսի սյունաց վերա շինված է, քարեր կղզիի սև քարերեն է, դարպասի աջակողմյան դուռի մեջ կբացվի ավանդատուն, որո մեջ պատարագիչ կղգեստավորի, ավանդատան երկարություն 18, 16 ու կես լայնություն, 17 կամարաց միջի և 14 կամարաց բարձրություն է։

Զանկատան (զանգակատուն—Հ. Պ.) ներքին կողի լայնություն 48 ոտք, 21 ոտք երկարություն, 18 ոտք կամարի միջի բարձրություն է։ Զանկատան ամբողջ բարձրություն վարեն մինչև գմբեթի ծայր 54 ոտք է։ Զանկատան միջի կամարո բարձրություն 14 ոտք է, կամարաց լայնություն և երկարություն հավասար 14 ոտք։

Տաճարի դեմիս կողմեն 19 ոտք հեռի հյուսիսային կողմ փոքրիկ մատուր մի կա, որո մեջ կա հանդուցյալ հռչակավոր Գեորգ ճգնավորի գերեզման, որո պատմություն ես ինքս անապատ միաբանած միջոցին գրած ունիմ։

Ավանդատան և դարպասի թիվ և արձանագիր։

(Շինեցաւ աւանդատունս սուրբ ընդ դարպասին ձեռամբ Յովհաննես վարդապետ Մոկացին որ(ք) հանդիպիք սիրով տուք զո(զո)ռմին 'ի թվ ՌԵԺԵ (=1766)։

Հին փայտակերտ ժամատան յիշատակագիր, որ ավանդատան վրա է, սա ցույց կուտա, թե հին ժամանակին որչափ եպիսկոպոս և երևելի միաբանք եղած են Լիմ սուրբ անապատի մեջ։

Շինեցաւ ժամատունս թիւ ՌԼԱ (=1582) ձեռամբ տէր Յովհաննես եպիսկոպոսի, տէր Զաքարիա եպիսկոպոս, տէր Կարապետ եպիսկոպոս, տէր Դավիթ վարդապետ, տէր Գրիգորն, տէր Սարքիս, տէր Հայրապետն և միաբան[ք] սուրբ ուխտիս տէր Ստեփաննոս, տէր Պետրոսն, տէր Մելքիսեթ, տէր Պետրոս յիշեցեք 'ի Քրիստոս։

Լիմ սուրբ անապատի խանութներ։

	վարձ
3 հատ Շեխի շուկան	1035
1 Հաջ չարուխչնոց	300
2 կաղանճնոց	215
1 Թահմիզի մեջ սրջանոց[141]	150
7 փոսրնոցի մեջ	1380
2 Սոնթնոցի մեջ	600
1 Խալազնոց	150
2 Սկրչնոց	25
4 Թարվիզու դուռ ներս	420
2 դրան դուրս	200
1 Սրջարան	450
3 բաղնիքի դուռ	240
1 Սղերտու խանի դուռ	160
1 խանութ Արարուց դուռ	000
1/2	000
31 1/2	90
	10
Կաղճնո վանքեն իճարո կառնվի 1 միխանա[142]	5610
Հայկավանից մեջ	3000
'Ի Պոլիս Կալֆա ամիրայի խանութեն	800
Սուրբ եկեղեցվո զգեստք և սպասք։	4000
	13410

9 հատ սկիհ։
8 հատ զիարիշի մասունքով խաչ, որոցմեն է կենաց սուրբ խա[չ]։
3 Թափորին մեծ խաչ։
30 Անդաստանի ձեռաց մեծ և փոքր խաչեր։
5 առաջնորդարան ձեռաց խաչ, 2 մասունքով։
22 հատ սեղան[ի] խաչեր։
1 հատ արծաթապատ սուրբ Գեորգա պատիտ և եռաճաճող[143]։
2 արծաթյա պատկեր 1 Հիսուսի, 2 Աստվածածնի։
3 արծաթյա բուրվառ։
1 պղնձյա —»—։

4 արծաթյա քշոց, 2 մեծ, 2 փոքր։
5 արծաթապատ մեծ և փորձ թե ձեռագիր և թե տիպ արծաթապատ ավետարան։
16 արծաթապատ ավետարան մեծ և փոքր թե ձեռագիր և թե տիպ։
1 արծաթապատ ավետարան։
2 արծաթյա աղավնի։
5 արծաթապատ սաղավարտ, 2 լակաս[144] ունի, 2 չունի։
3 հատ տփխոց, հասարակ սև սաղավարտ։
2 սաղավարտ, մին արծաթաթելիվ հունված և մյուսն իստհվան։
4 եպիսկոպոսական թագ, արծաթապատ։
2 աղանագործ եպիսկոպոսական թագ։
1 իստիֆան...* թագ։
9 հին անգործածելի թագեր։
2 ամբողջական քաթեա գավազան։
1 գլուխն միայն արծաթյա գավազան։
1 մարմոտոնյա գլուխ գավազան[145]։
1 սեղանի արծաթյա գոգնոց։
7 գավազան ոսկորյա իպինոս[146] և փայտյա։
2 արծաթյա տապանակ[147] ուխտի։
4 հատ ատենի ավետարան։
1 նոր արծաթապատ ավետարան։
1 ատենի արծաթապատ ավետարան։
30 ձեռագիր ավետարան, որոց ոմանց վերա կան խաչեր։
2 մասնատուփ։

զգեստք

5 հատ առաջնորդական զառ առաջի կարգի շուրջառներ։
10 հատ զառ միջակ զառ շուրջառ։
8 հատ հասարակ զառ շուրջառ։
10 հատ մաշված զառ շուրջառ։
3 հատ պասմա[148]...։
2 հատ սև թավիշե շուրջառ։
5 հատ սկիհի բանված լավ ծածկոց։
10 հատ թե ասեղնագործ և թե մետաքսյա ծածկոց։
6 հատ սեղանի հին նոր գոգնոցներ։

* Բացթողոմը հեղինակինն է (Հ. Պ.)։

4 գերեզմանի զառ ծածկոց։
11 լավ ուրար[149]։
10 հասարակ ուրար։
3 հատ կապորոշի շապիկ[150]։
5 հատ զառ հին և նոր շապիկներ։
13 հատ տիպեթ եսխներ զառ[151] շապիկներ։
13 հատ սպիտակ կտավե շապիկ եսխներ զառ[152]։
40 հատ հին և նոր մետաքսյա և պասմա շապիկներ։
20 սպիտակ կտավե հասարակ շապիկներ։
14 ժամարարի գոտի արծաթյա։
4 սատաֆեն գոտի բոլորտիք արծաթ։
10 ժամարարի հասարակ փորուրար։
7 լավ զառ փորուրար։
10 զույգ լավ և հասարակ թևնոցներ։
1 զառ եմիֆորոն։
10 ժամարարի լավ և հասարակ շապիկ։
10 լավ ասղնագործ ժամարարի ձեռնոցներ։
20 հասարակ ձեռնոցներ։
1 մեծ գորգ տաճարի համար, երկու կողմերով։
1 մեծ ատենի գորգ։
3 առաջնորդական մեծ խաչիք։
6 հասարակ խաչիք։
8 իոն խաչիք։
7 կարպետ հին և նոր։
40 պատկեր հին նոր, լուսագույն և հասարակ պատկերներ։
1 մեծ պատկերազարդ վարագույր։
5 հասարակ վարագույր։
3 խաչկալ 1 տաճարի սեղանին և 2 դրսի սեղանոց։
4 հատ եկեղեցվո մեծ և փոքր լական։
1 ժամարարի խրրեզ լական[153]։
2 լվացման իպրեզ։
15 նշխարքի տիպ մեծ և փոքր։

1873 ապրիլ 30 'ի Խժիշկ գյուղն։

Սույն գեղի հարավային կողմ մի քառորդ ժամ հեռու դեպ հարավ ավերակ վանք մի կա եղեր Աստվածածին անվամբ, կթվի, թե 100 տա-

ջի առաջ ավերակ դարձեր է, հողեր Ամկու բերդի[154] տաճիկ[ք] հափշտակելով մինչև անցյալ տարի կվարեն եղեր։ Խժշկցի տեր Հակոբ[ի] որդին Կարապետ անցյալ տարի 5000 ղուրուշ դրամ տալով, թեև մեծ մասն ավերակ վանքի հողեր առած է, սակայն ինքն ամուրի մնալով, եթե մեռնելու լինի առանց կտակի, հարքունիս պիտի դրավվին հողեր։ Հիշյալ Կարապետ տոկոսով դրամ կուտա գեղացվոց։ Լիմ անապատի միաբանք կհորդորեն, որ նույն հող վանքի վերա դարձունե, իսկ մե[ք] հորդորեցինք, որ գեղի դպրոցին սեփականե, սակայն համառ մեկն լինելով տակավին մտածել կպատճառե։

Ապրիլ 30 Ալուրի վանք սուրբ Աստվածածին։

Ալրո վանք Ալուր գյուղեն կից նորա արևմտյան կողմ հարթահատակ տեղի մ՝ վերա ունի յուր գեղեցիկ դիրք, պարիսպ չունի, շենքեր խառն 'ի խուռն։ Մեջ երկու սենյակ, 1 առաջնորդարան 1 վարժարանի համար հատկացած ողորմելի շենք։ 1 ննտեստուն և մառան, 1 փարախ և մի մարագ։ Տաճար[ի] դարպասի երկարություն 27 և լայնություն 21 ոտք է, իսկ տաճարի 18 երկարություն, լայնություն 16 ոտք։

Պաֆրացի Կարապետ վարդապետ իբրև վանահայր նստած է մեջև այժմ, ձմեռ գյուղի տղայոց վարժապետություն կընե, իսկ ամառ հողագործությամբ կպարապի։

Վանքի խաշինք, թե կով, թե եզ, թե գոմեշ, թե ձի և այլն բոլոր քսան հատ են։ 3 հատ շուն կա, բայց քաղցյալ։ 20 ոչխար կա, միաբան չլինելույն աղագավ 4 հատ կատունք կվարեն միաբանության պաշտոն։

Հողային կալվածք։

42 կտոր բարեբեր արտեր կան, ջրարբի են հողեր, սակայն ջուր չհասներ, հիշյալ արտերեն քանիս ալուրցիք կվարեն կցանեն առանց իճարայի և յուրացնելո միտք ունին։ 42 կտոր արտեր Վանա 20 քիլա սերմ կառնե։ 1 խաղողի այգի ունի, 1 փոքր խոտատեղի ունի, որ 3 քարդ խոտ կբերե։

Մի արծաթապատ նարեկ կա, 2 ձեռաց խաչ, 1 սեղանի խաչ, 1 մաշված սաղավարտ և 1 մաշած գոկաս և 1 մաշած շուրջառ։

Հիշյալ վանք դպրոց հաստատելո շատ հարմարություն ունի, վանք այժմ Կտուց անապատի ադարակն է, դրսի տուն այնչափ հարմարություն չունի ժառանգավորաց դպրոց բանալո, սակայն այս վանք, թե տեսարանի և թե օդի առողջությամբ և թե գյուղացվոց տղայք կարդացնելո մեծ կարևորություն ունի։

1873 մայիս 7

Մայր մենաստանա Վարագա սուրբ Նշանի վանք Վանա քաղաքեն և բերդեն 2 ժամ դեպ արևելյան հարավակողմ Վարագա անվանի լերան բարձրության միջաբաժնի վերա զառիկող տափատեղի մ՝ վերա ունի յուր ամենավայելուչ դիրքն։ Վանք արևելքեն և հյուսիսեն կհայի Վարագա լերան բարձանց վերա, արևմուտքեն կհայի և կտեսանե Աղթամարա Առտերա կղզիներ և ծովու մի մասն, Ներբովթա և Գրգուռն լեռներ և Վանա Այգեստանաց մի մասն։ Հարավային կտեսանե Արտոս, Կորճեից և Եղերով կոչեցյալ լերանց բարձունք և գոտիներ։

Վանք[ի] հողեր խիստ ընդարձակ են, 500 Վանա չափի տեղ սերմամուտ հող ունի, կես ջրարբի և կեսն անջրդի, Վարագա լերան կեսն Տախմանից և Պատոլո լերանց հյուսիսային կողմեր մինչև լերանց գագաթ, որ վանքեն հարավային կողմ կիյնա։ Վանքի ընդարձակ սահման 7 ավերակ գյուղից անունով կհիշատակվի, որք Արծրունիք վանքին տված էին 'ի կալված հավիտենական, սակայն Սենեքերիմա գաղթականության միջոցին գեղեր ավերակ մնալով՝ հողեր արքայն վանքին նվիրած է։ Հայոց պատմություն կգրե, թե Սենեքերիմ արքայն Արծրունյաց Վասպուրական երկիր հուն[ա]ց տալով և փոխարեն Սեբաստիայն առնելով, վանքեր և վանքի կալվածներ շտվավ հունաց, Վարագա վանք արդեն Սենեքերիմա սիրելի վայրն լինելով, 26 գյուղ թեմ շնորհելեն զկնի, հաստատուն հրովարտակավ և երկարավ վերոհիշյալ ավերակ գյուղեր վանքին կալված տված է, որո անունք են 1 պղնձե քաղաք, որո սահման վանքին արևմտյան կողմ լինելով, կհասնի մինչև Կուռապաշ գյուղին մերձ, հողեր ամբողջ ջրարբի են։ Ձթորվան ավեր գյուղի հին անուն մոռցված լինելով և որովհետև գյուղի ավերակեն հին թունիրներ դուրս կելնե, ուստի անուն Թորվան ավեր է կոչվեր, վանքին արևմտյան կողմ և պղնձե քաղաքին արևելակողմ է, որո արտեր դարձյալ ջրարբի են։ 3 ավեր Շուշանց կամ Կավլի գյուխ, վանքի բուն դիրքին մերձավայր հարավ և արևմտակողման անուն է, որ վանքի դիրքն և շրջապատն ևս մեջն կառնու։

4 Տախմանց, որ ավերակ վանքի տեղ է եղեր, այժմ միայն վանքի ավերակաց հիման քարեր կերևին, վանքի հարավակողման հանդի-

պակաց լեռնավայրաց մեջեր ունի յուր բարեբեր անջրդի հողեր, որք բաց 'ի սեբմանելի տեղերեն ունի պարարտարոտ վայրեր ոչխարաց և խաշանց համար։

5 Մարգեր (չայիրներ) վանքին հարավային արևելք, Տախմանից Ճիշտ արևելք, սերմանելի արտեր չունի լեռնավայր գոլով, թե ամարան և թե ձմերան ոչխարաց արոտատեղի է։ 6 կասրիկ մարգերու հարավակողմ Տախմանից լերան Հայոց Զորո երեսի կողմ, հիշյալ Կարսիկ ավերակ գեղի ամբողջ սահման մյուս ավերակաց սահմանի նման վանքին կալված է եղեր, բռնակալք վանքի ձեռքեն հափշտակելով Նոր գեղի սահմանի հետ միացուցած [են], սույն հողերու հափշտակության թվական անորոշ է դեռ։

7 Եկմալ, որ վանքի արևմտյան հարավակողմ է, որն որ սղոզ թվականավ[155] քուրտ մի սուրբ Նշանի հրաշք տեսնալով, յուր մեռյալ որդվոց վերա կենդանության վերա, ամբողջ գյուղ և գյուղի բոլոր սահման վանքին կնվիրե, վանք երկար ժամանակ մինչև թափուի սահմանյալ ժամանակ կտիրեր Եկմալա հողին, թե նույն միջոցի վանահոր անհոգություններն և թե Կուռապաշա հայոց հափշտակասիրություններն, վանքի ձեռքեն կհափշտակվի զի կուռապաշցիք վանքի վանահարց և միաբանաց աղաչելով, երբեմն արտեր վարեր և տավարներ արածացուցեր են և ապա, երբ թափուն 'ի Վան գուկա, կառավարության առաջ գյուղացիք կբողոքեն, թե Եկմալա հողն յուրյանց գեղին է, իսկ կառավարություն ըստ որում միշտ կջանա գաղտնի քաղաքականությամբ վանքերու հողեր առնել և գյուղացվոց տալ, վանքի կողմանե եղած բողոքներուն չլսելով Եկմալա հողեր կդարձունե կուռապաշցոց վերա։

8 վարի Վարագա սահման է, վերին Վարագա ավերակ վանքի սահման, որ վարի Վարագեն ժամ մի հեռու է։

Վանքի պարսպի արևմտյան կողմ կա մի գեղեցիկ բնական անտառ և նորատունկ թթենի, անտառի ծառեր կաղամախի են, բարտի և ուռենի։ Հարավային կողմ կա տնկված մի արվեստական անտառ, ծառեր բարտի, հացի և ուռենի են։ Հյուսիսային կողմ մրգեղենաց և խաղողի այգի կա, փշյա ցանկով պատած պտղատու ծառեր են, ծիրանի, խընձորի, սալորի, ընկուզի կա այգիի մեջ, կաղամախի և բարտի շատ ծառեր, կաղամախի ծառոց ներքև կան մանուշակի ծաղիկներ, պարսպի արևելից կողմանե բլուր մի կա, որ կսվի Վարդավառի բլուր։ Վանքի արևելից կողմն է նաև Զորձորք Վարագա, որ ծայր կերկարի կերթա մինչև 'ի Վերին Վարագ, սույն Զորձոր բյուրազան ծաղկամբք կզարդարվի գարնան ժամանակի։ Վերին Վարագա լերանցամիջի և Ապարանջան աղբերաց ջուրք կխաղան խոխոնջալով ձորակի միջեն։ Ջուրի մեծ մասն լերան գառիկողի վերա բացված առվակե մը գուկա վանքի հյուսիսային և արևմտյան պարսպոց քովեն՝ քերելով նախ վանքի պարսպին մեր ջրաղաց կբռանեցնե և ապա կիջնա արտորեից վերա և կոռոգանե։

Ահա այսպես, Վարագա վանք յուր պարսպոք և տրյուք իբրև տաղավար մի 'ի մեջ ատենասարաս[156] դրախտոց բարձրանալով ամենահաճի տեսարան մի կընծայե տեսողացն։ Պարսպին թե մերձ և թե քիչ մի հեռի 10 աղբյուր կա, որոց ջուրք զով բարեհամ են։

Վանքի պարսպի շրջապատ դրսեն չափելով 550 քայլ է։ Պատեր կես քարե և կես աղյուսե շինված են գանազան ժամանակս։ Պարսպի ներս երեք բակի բաժանյալ է, առաջին եկեղեցվո բակ, որո մեջ է եկեղեցիք և առաջնորդարան և միաբանաց սենյակ, երկրորդ խաշանց բակ, որո մեջ կա այժմ մի մեծ փարախ և ոչխարաց դոմ, ձիանց ախոռն և մարագ և դռնապանի երկու սենյակ։ Երրորդ բակն է դպրոցի բակ, զոր իբրև պարսպին նոր հավելված շինեց վանահայր վանից Խրիմյան Մկրտիչ վարդապետ, որ է այժմ պատրիարք Կ. Պոլսո։ Դպրոց բակի արևմտյան կողմ շինած է բավական ընդարձակությամբ, որ 50 աշակերտ կառնե, դպրոցի քով կա տղայոց մի սեղանատուն և մի սենյակ փայտի և այլն։

Ներսի բակի մեջ 37 սենյակ, 19 սենյակ ներքին կողմն է, մին-մի սենյակ երկերկու սենյակ են միմյանց մեջ, 18 սենյակ վերո հարկ կա։ Առաջնորդարան երկու սենյակ վերին կողմն, 2 վարի կողմ, որոց մին տպարանի հատկացված է, որո մեջ այժմ «Արծիվ» և այլ դասատետր կտպվին։ Ներքին բակի մեջ կա մի հացի փուռ, 1 խոհարան, 1 ամտեստուն, 2 մառան։

Ներսի բակի մեջ կա 7 եկեղեցի 1. սուրբ Գեորգի, 2. տաճար սուրբ Աստվածածնի, 3. սուրբ Հովհաննես կամ 40 վարդապետաց եկեղեցի, 4. սուրբ Սոփիա կամ Բերով եկեղեցի, 5. սուրբ Սիոն, որ այժմ խոնարհյալ է, որո տեղն այժմ ցորենի շտեմարան շինված է, 6. սուրբ Նշան, 7. տաճարի մեջ է, որ կոչի սուրբ Խաչ։

ա. Սուրբ Գեորգ եկեղեցվո սուրբ Աստվածածնի տաճարի երկանք և լայն հավասար 34 ոտք է, բաց 'ի սեղանի միջոցեն գմբեթի բարձրություն տաճարի հատակեն մինչև վեղարի գագաթ 83 ոտք, սեղանի աջ և ահյակ 2 փոքր խորաններ կան։ Տաճարի դրան աջակողման քո-

վեն կմտնա սուրբ Խաչ եկեղեցին, որո շինություն տաճարի հիշատակարանի հետ անհայտ է։ Տաճարի պատեր անտաշ քարերով և գմբեթ թրծյալ աղյուսով շինված է։ Աղթամարա և Արծվաբեր վանուց տաճարաց նման անկյունաձև է։

Դարպաս, որ սուրբ Գեորգա անունով է, երկանք 45, լայնք 44 ոտք է, կամարաց բարձրություն 30, դարպասի գմբեթի բարձրություն հատակեն մինչև վեղարի գագաթ 69 ոտք։ 4 քառակուսի սյանց վերա շինված եկեղեցվո գեղեցիկ կամարներ և գմբեթ, դարպասի որմոց և սյունաց վերա թագավորաց և հայրապետաց պատկերք կան լոկ քարաց վերա տեղադրյալ, քարեր սրբատաշ և սպիտագույն են։

Դարպասի դրսի դրան վերայի արձանագիր է այս[157]։

'Ի Հայրապետութեան տեառն Փիլիպոս կաթողիկոսին,
և Յաբեթական թուականութեան ՌՂԷ ամին (=1648),
և յոբելեան ի և մին Խ. Է. ընդ նմին,
Կամոք տեառն բարերարին,
Զորութեամբ սուրբ Նշանին,
Գմբեթայարկ խորանք սորին
Դարպաս և պարիսպ ընդ նմին,
Շինեալ հաստատին,
Վերակացութեամբ տէր Կիրակոս վարդապետին,
Եւ իշխանօք Խաճայ Ամիրխանին,
Եւ Սարուխանին, Ռուհիջանին և Մարխասին,
Հաւասար ժողովրդեան
Եւ մեմար տիրատուրին
Յիշեա Քրիստոս յաւուր ահեղին ամեն։
«Դարձեալ 'ի մեր հայոց թուին
որ էր հասեալ մինչ 'ի շեմին
Խոճա Մինաս վանեցին
օրհնեալ որդիք եղբօր նորին
Առին կիրթան բոլորովին
Ետուն 'ի դուռն սուրբ Նշանին
Որոց Քրիստոս ողորմեսցի
Յաւուր մեծի դատաստանին ամեն»։

Սուրբ Հովհաննես և կամ Քառասուն վարդապետաց եկեղեցվո ներսի երկանք և լանք հավասար 34 ոտք են, կամարաց բարձրություն 27,

սույնչափ է գմբեթի բարձրություն, այն է՝ 54 ոտք։ Այս եկեղեցվո շինություն շատ հին է, սորա մեջ ոչ ժամերգություն կլինի և ոչ պատարագ, զի որմեր խարխլյալ լինելով, հանկարծ փլչելո երկյուղ կա։

Սուրբ Նշանի եկեղեցին Կարասեֆերյան Հակոբ աղայի[158] օրով շինված է, կարմրագույն քարերով, երկանք 37, լանք 28 և բարձր 22 ոտք, այժմ վանքի դրյանք և թանդարան սույն եկեղեցվո մեջ է, երբեմն ձմեռն սույն եկեղեցվո մեջ ժամասացություն է։

Սուրբ Սոփիա գեղեցիկ և գմբեթավոր եկեղեցին ասկե 26 շարժեն խոնարհեցավ, այժմ տեղ մի ընդարձակ շտեմարան շինված է ցորենի համար։

Վարագ մենաստան, որ 'ի նախնյաց անտի մայր մենաստանաց կկոչվի, բաց 'ի Աղթամարեն Վասպուրականի բոլոր վանորեից վերա իշխանություն ուներ։

Վարագա վանքի վանահայրություն Վանա առաջնորդության հետ միացյալ լինելով ասկե 30 տարի առաջ առաջնորդ շատ ժամանակ վանքի մեջ կնստեր, սակայն ասկե 17 տարի առաջ Խրիմյան վանքի մեջ դպրոց և տպարան բանալո համար Հակոբ պատրիարքի[159] հատուկ կոնդակով վանահայրություն Վանա առաջնորդարանեն զատելով, ինքն եղավ վանահայր և առաջնորդություն մնաց լուսահոգի Գաբրիել եպիսկոպոսի վերա։ Վանա իշխանք նախքան զբաժանումն, առաջնորդության կիշխեին վանքի վերա, իրենց հատուկ զբոսատեղի մ' ընելով, վանքի նյութական կարողություն կսպառեին։ Առաջնորդ, կախումն ունենալով իշխաններեն, չէր կրնար վանքի կործանման առաջքն առնուլ, սակայն երբ վանահայրություն բաժանվելով այժմյան պատրիարքի վերա մնաց, իշխանաց ազդեցություն վանքի վերայեն իսպառ անհետացավ, ուստի սկսան թշնամությամբ վարվել վանահոր դեմ, զանազան տեսակ արգելքներ հարուցին Խրիմյանի դեմ, տպարան գոցեցին, դպրոցին հակառակեցան, որպեսզի վանահայր արտաքս վարելով կբրկին առաջին դրության բերեին, սակայն յուրյանց բոլոր թե հայանի և թե գաղտնի մեքենայությունք խորտակեցան Խրիմյանի խորախորհուրդ հեռատեսության և գործունեության առաջ։ Դեռ մինչև ցայսօր կան իշխանաց մեջ, որք եթե պատեհ առիթ ունենան, վանքն առաջնորդության հետ միացնելով վանքի վերա ազդեցություն բանեցնել, բայց հույժ տկարացած են։

Այժմ վանքի մեջ դպրոց և տպարան կշարունակվի, տպարանի խմբագրություն Անանյանց պարոն Մանուելի[160] ձեռքն է, իսկ դասատվու-

թյան պաշտոն Կյուրեղ վարդապետ կկատարե առայժմ, մշակաբանու-թյան դասեն ուրիշ դասատվություն չկա վանքին մեջ, ուստամնական վարժապետի մը պետք կա, զոր պատրիարքարան միշտ կխորհի գրտնալ և խրկել, զի դպրոց խիստ անբարեկարգ է։

Դպրոց 14 աշակերտ ունի, որոց անուանք հետևյալքն են։

	տարիք	տարիք	դալու
1 Աստվածատուր Մելքոնյան շահպազեցի	22	11	
2 Պետրոս Մարտիրոսյան արտամետցի	24	2	
3 Սողոմոն Հայրապետյան սադմոնցի	12	4	
4 Գրիգոր Ներսիսյան մամ[ր]տանցի	21	3	
5 Գեորգ Ներսիսյան մոխրաբերտցի	17	12	
6 Դավիթ Դանիելյան էրեմերցի	21	2	
7 Գրիգոր Մանուկյան լիզկցի	12	2	1/2
8 Աշոտ Հովհաննիսյան շատախցի	18	1	1/2
9 Արսեն Ավետիսյան վանեցի	17	1	1/2
10 Աբրահամ Աղամյան վանեցի	15	8	ամիս
11 Մարտիրոս Հակոբյան վանեցի	11	1	1/2
12 Հովհաննես Կարապետյան խրժկեցի	10	17	ամիս
13 Աբրահամ	7	7	ամիս
14 Սահակ Այվազյան պոլսեցի	27		1/2

Վանքի վանահայր և միաբանք

1 Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյան, 'ի Վան քաղաքե, այժմյան պատրիարք Կ. Պոլսո, 17 տարի է, որ Վարագա վանից վանահայրության պաշտոն յուր վերա ունի։

	տարիք
	53
2 Մեսրոպ ծայրագույն վարդապետ Մոկացյան 'ի Վան քաղաքե	40
3 Մելքիսեթ ծայրագույն վարդապետ 'ի Նորավանց գյուղեն Վանա	56
4 Կյուրեղ ծայրագույն վարդապետ 'ի Վան քաղաքե	40
5 Հարությունն վարդապետ 'ի Գիմա գյուղե	43
6 Հուսիկ վարդապետ Գալփազճյան պոլսեցի	40
7 Դանիել վարդապետ աղեքսանդրապոլցի	30
8 Մեսրոպ վարդապետ Կռունկ մանկանվանյալ	65

Դպիր միաբանք

9 մահտեսի Գազպար վանեցի	30
10 Խաչատուր	30

Գործակատար միաբանք

11 Տապլո 'ի Սալմաստա մառնապետ	60
12 Մուրատ քաղաքացի Ներ անվանյալ դռնապան	75
13 մահտեսի Սարգիս վանեցի սենեկապետ	30
14 Ստեփան Հալաճյան կաթնակիր	40

Վարձկան գործակալ և մշակք և այլք։

Մահտես[ի] Շային ավանցի վերակացու արտաքին մշակական գործոց	40

	վարձք և հանդերձք
1 Մաճկալ Կարապետ	900
2 Վարդան	725
3 Ներսես ...	700
4 Նազար	700
5 Ազիզ	550
6 Մհեր	400
7 Ավետիս	400
	4375
8 Հովիվ Ավետիս	700
9 Փոխան հովիվ	700
10 Հովհաննես դառնարած	700
11 Կարապետ դիշերապահ	600
12 Մարտիրոս	600
13 Դավիթ ձիապան	750
14 Պողոս նախրորդ	500
15 որդկարած	200
16 աղաղատա պարտիզպան	600
17 Սարգիս պարտիզպանի օգնական	400
	10225

18 19 20 21	չորս կանայք կաթնակիթ	1200
22	Սարգիս հացագործ	450
23 24	խոհարար լվացարար 2 կանայք	430
		12325
25	Ալահվերտի գութանի հյուս	600
26	ջաղացպան	300
27 28 29 30	4 ջրկալք	2040
31	մեղուանցի և ծխախոտի դարմանող	600
32	մահտեսի Մարգար տպագրապետ	1200
33	պարոն Մանուել Անանյանց խմբագիր	2400
34	մահտեսի Շայեն վերակացու	800
		20765

Վարագա վանքի դրամական եկամուտներ միջին հաշվով առնված։

5000 ղուրուշ ցորյան ծախելուց
5000 ղուրուշ նշանտուքի դրամներեն
3000 ղուրուշ ոչխար և գառներեն
3000 ղուրուշ պանիրեն
3000 ղուրուշ յուղեն
3000 ղուրուշ ուխտավորներեն
2500 ղուրուշ Տփխիսո խանութներեն
2500 ղուրուշ գութանի փարայեն
1500 ղուրուշ խոտ ծախելեն
1000 ղուրուշ բուրդ ծախելեն
800 ղուրուշ Ավանուց այգիեն

30200

Հիշյալ եկամուտի հաշիվ միջին կերպիվ գրեցավ, վասնզի տարի կլինի, որ 10.000 ղուրուշ ցորյան կծախվի ինչպես անցյալ տարի, տարի կլինի, որ 5000 ղուրուշի ոչխար կծախվի, տարի կլինի ուրիշ ծախվելու բաներ ավելի կծախվին և կլինի, որ պակաս կծախվի մինչև ցայսօր փոխանորդ Մեսրոպ վարդապետ տակավին տնօրեն ժողով չհաստատեց, որք հաշվույն տեղյակ լինեին, պատրիարքեն հանդիմանական նամակ ընդունեց կազմելու, սակայն նա դարձյալ չուզեց ժողով կազմել, որո վասն յուր գործեր և հաշիվներ կասկածելի են։ Վասնզի, ինչպես եկամուտի և ծախուց գումարների համեմատութենեն կերևի, թե տարին 8—9—10 հազար ղուրուշի գումար մի կհավելանա, սակայն վանք պատրիարքի վանահայրական տեսչություն ներքև լինելուն միաբանք և այլք չեն համարձակիր հաշիվ պահանջելու, ուստի հաշիվներ վանահոր և նորա փոխանորդին մեջ բացատրված կմնա, իսկ միաբանց գրեթե անբացատրելի և թագուն։ Միաբաններեն ով որ վանքի ներքին և արտաքին կացության վերա դիտողություն ընե, կամ ուզե հաշիվներուն տեղեկանալ, փոխանորդ գիտե ինչ կերպ գրությամբ առ այն միաբան, որն որ կամ Պոլիս կկանչվի և կամ պատճառավ իվիք հեռավոր տեղեր գործի կխրկվի և կամ միաբանութենեն կմերժվի։

1873 մայիս 15 'ի Վերին Վարագ։

Վերին Վարագ անվանյալ ավերակ մենաստան Վարի Վարագեն ժամ ու կես հեռավորությամբ դեպ 'ի հյուսիսային արևելք, Վարագ լեռան կատարին մերձ, Գալիլեա կոչեցյալ քարակատարին ստորոտ մի ամենագեղեցիկ բարձրավանդակի վերա ունի յուր ամենազվարճալի և ծաղկավետ դիրք։

Ներսես Շինող հայրապետ Վարագա խաչի երևման միջոցին նորոգած է Վերին Վարագա երկու եկեղեցիք, զի ինչպես պատմություն կվկայե, նախքան ղերումն դարձյալ մենաստան էր կրոնավորաց։ Հանուն Վարագա սուրբ Նշանին խիստ փառավոր և գմբեթավոր, քրիստոնեութենե ջերմությամբ վառյալ Հայր Թոթիկ[161] և Հովել աշակերտ նախքան ղերևումի սուրբ խաչին, նույնպես զկնի երևման սուրբ Նշանին գրեթե ութն տար(ի) այդ սառնամանյաց մեջ քրիստոնեական դյուցազնությամբ ճգնելով հիացուցին աշխարհ ամենայն։ Զի սեպտեմբեր ամսեն մինչև մայիս ամսո վերջեր գրեթե խիստ դժվարին է Վերին Վարագ բնակիլ, ուստի այժմ օդույն սաստկության նայելով, ոմանք չեն ուզեր հավատալ, թե ձմերան միջոցին հոն կեցեր են ժուժկալել կրոնավորք,

այլ ասեն, թե միայն գարնանե մինչև աշուն Վարի Վարագեն իբրև ամարանոց հոն դիմած են իբրև զբոսավայր և այլն։

Եկեղեցիք և վանքի շինությունք տակավին 80 տարի չկա, որ քանդած են, ականատես ծերունիք մեզ կպատմեին, թե վանեցի բարբա-ր(ո)ս տաճիկ մի 60 տարի առաջ եկեղեցվո գմբեթներ վառոտով քանդելով թրծյալ աղյուսներ բերեր՝ Այգեստան բաղանիք շիներ է, որո մեջ հանկարծակի մեռնելով պատուհասեր է։

Եկեղեցվո որմեր դեռ կանգուն կկենան, 9 տարի առաջ այժմյան պատրիարք Մկրտիչ եպիսկոպոս հայրենասիրությամբ, եռանդով վառված եկեղեցվո մեջ բլած քարեր քիչ հավաքելով և սեղանի վերա շարժական վեմ դնելով, սուրբ պատարագ մատուցանել տվավ, ուր ներկա և հանդիսակատար եաք մեք անդանոր, այս լուր քանի օր առաջ Վանա քաղաք հռչակված լինելով բազմաթիվ ուխտավորք դիմեցին նախնյաց ավերակի մեջ մի անգամ ևս պատարագ տեսնալ, նախնական կրոնասիրությամբ, ջերմեռանդությամբ լեցված ամենեքյան սրտառուչ հառաչմամբ կարտասվեին և կողբային յուրյանց նախնյաց նվիրական մեծագործությունից խոնարհած եկեղեցվո վերա և ասեին՝ «իցե թե տեսցին աչք մեր նորոգյալ կրկին զվերահարգ եկեղեցյաց նախնյաց մերոց»։

Վանքին արևելյան աջ և ահյակ կողմեր սառորակ և քարեհամ աղբյուրներ կան, աղբերականց ակունք գիներբուկ և սուսան և այլ զարմանազան հոտավետ ծաղկամբք զարդարված են, վանքի արևելյան, արևմտյան և հարավային կողմեր ծաղկաստիւռ մարգագետիններով դրախտանման զարդարված է, երբ գարնան եղանակին զբոսասեր և ծաղկասեր վասպուրականցիք Վերին Վարագա ավերակաց ուխտի կդիմեն, մի կողմանե տխրագին դիմոք ավերակաց քարինք կհամբուրեն և մյուս կողմանե զվարթագին աչոք 'ի ծաղկավետ վայրսն հայելով ցնծալից եղանակավ կերգեն «'ի մէջ լերանց կառուցեալ» երգն[162], որ 'ի վերա Վերին Վարագա է հորինյալ։

Վերին Վարագա արևելյան իբրև ամենամեծ ամբարտակ կեցած է լերան բարձր կատարին և Գալիլեայի որբացյալ քարեր, Հռիփսիմե կուսի պարանոցի սուրբ խաչ սոյն Գալիլեայի սեպաձև կատարի վերա ամփոփված լինելույն աղագավ, քաջ երիտասարդք Վասպուրականի 'ի նշան սիրո սուրբ Նշանին ը(նդ) ապառաժուտ և զառիվեր ճանապարհ բարձրանալով կհամբուրեն զխաչքարն, հորում ամփոփյալ մնա

կենսատու ավագ սուրբ Նշանն Վարագա։ Հանդեպ արևյալ է նա այրն Թութիկ ճգնավորին։

'Ի հյուսիսային կողմն երկու ասպարեզ հեռի է Քրիստոսի աղբյուր, այս կողմի խորանդունդ ձորակի մեջ ժամ ու կես դեպի 'ի վայրն է Սալնապատի սուրբ Գրիգորի վանք։ Վերին Վարագ այս կողմեն կտեսանե բոլոր Քաջբերունյաց, Բերկրո և Գնունյաց գավառներ, հարավակողմն մի քառորդ զառիվայրն է Աղբայից ձոր, Արեղայից խցներ, մի ժամ 'ի վայր է ուրբաթ այր ավերակ եկեղեցին և Ապարանջան անվանի աղբյուր, այս կողմանե կտեսանե Կորդուաց լերանց գոտիք և Հայոց Ձորո մի մասն։

Արևմտյան կողմ է Կարմրավորո սուրբ Աստվածածնի վանք, քարափանց վերա երթալով 1 ժամ հեռի է Վերին Վարագեն, սակայն չտեսնվիր։ Այս կողմանե կտեսնվի, կտեսանե Վանա քաղաք՝ բերդովք և այգեստանոք, զծով, զԱղթամար, զԱռտեր և Կտուցո կղզիներ, միով բանիվ այսչափ ընդարձակ քաղցր և հաճելի է տեսարան Վերին Վարագա, որոց մեջ բարձրացող կկոչե ըստ Պետրոսի, թե որ ասցուք երիս հաղավարս և ասա բնակեսցուք[163]։

Այս տարի մայիս 15 օրեն, որ Վերին Վարագա ամենազվարճ ծաղկալից ավուրքն են, Վարագա միաբան եղբարց հետ վերացաք անդ և զի հիվանդագին լինելով իմ կամի առողջություն դտանել անդ, ուր մոռացյալ զհիվանդություն անզգուշաբար նստա 'ի մեջ ծաղկանց 'ի վերա դալար խոտո, որ ըմպի ջուր ցուրտ և հարա 'ի տապ հիվանդութենե, անկա ընդ հովանեավ որմույն եկեղեցվո խնդրեցի մեռանել անդ, ապա ստիպմամբ եղբարց իջի 'ի Ներքին Վարագ 'ի մահիճս տառապեցա ավուրս տաս և հինգ, բաց 'ի Մելքիսեթ վարդապետե, ոչ ոք խնամ կալավ վասն առողջության իմո, զի այժմ վասն մարմնապաշտության կրոնավորք ևս ոչ կամին հոգատարությամբ ծառայել հիվանդոց, զի մի և ինքյանք 'ի նույն ըմբռնեսցին, ավաղ ոչ հիշեն տերունական թե «Հիվանդ էի և ոչ տեսեք զիս։ Վասնորո աղաչեմ զքեզ տեր դու ինքնին խնամակալ լեր ինձ 'ի տկարութեան և 'ի ծերութեան իմում մի թողուր զիս, զի բաց 'ի քեն ոչ ոք ունիմ յոյս և ապաւէն 'ի ժամանակի նեղութեան, տկարութեան և ծերութեան իմում, տէր աղաչեմ զքեզ փրկես զիս յամենայն յորոգայթե հոգւոյ և մարմնոյ իմո, մի մատներ զիս 'ի ձեռս թշնամեաց իմոց, զի զքեզ ապաւեն ինձ արարի։

1873 հունիս 28 ի սուրբ Աստվածածնի վանք Կոնկու վանից։

Սույն վանք Վանա բերդի դեպ 'ի հարավային կողմ 2 ժամու հեռավորությամբ մի բլրակի վերա ունի յուր դիրք, մի քառորդ ճանապարհ հեռի արևելակողմն է Զվստան գյուղ և մի քառորդ հեռի 'ի արևմտակողմն է Արտամետ այգեզվարճ ավան, հարավային կողմն է մի փոքրիկ այգի, մերձ 'ի պարիսպ վանից, հյուսիսակողմն է մի ձիարշավ, հեռի առվակն Շամիրամա։

Վանքի պարիսպ 'ի հան կռածո սպիտակ քարանց է շինված, որո շրջապատ 18 քայլափոխ է, պարսպի ներսի կողմն մի փոքրիկ բակ, 1 փարախս, 1 մարագ, 1 տնտեսատուն, 2 մառան, 3 ավերակ վերնահարկ։

Տաճար-եկեղեցին պարսպի արևելյան հյուսիսային անկյուն շինված է, տաճար կոփածո քարամբք Լիմ անապատի տաճարի ձևով կառուցյալ է Դավիթ եպիսկոպոս, թվական հայտնի չէ։ Տաճարի երկանք և լայնք 18 ոտք է, իսկ բարձրություն 31 ոտք, սեղանի աջ և ահյակ երկհարկ փոքր խորաններ կան, արևմտյան կողմ միայն մի լուսամուտ ունի, հնամաշ մի խաչկալ կա սեղանի մեջ։ Բեմի վրայի սուրբ Աստվածածնի պատկեր բավական ճարտարվեստ է։

Վանքն ունի յուր շրջապատ քսան Վանա քիլայի[164] սերմամուտ հողեր, մեծ մասամբ անջրդի, ունի մի գութան յուր սարոքն, այն է՝ չորս գոմեշ, 8 եզ, 30 հատ կով, արջառ որթիկ և այլն 80 ոչխար։ Արտամետ և Զվստան գյուղեր վանքիս թեմերն են, սովորական արդյունք չեն տար՝ վանահայր աշխարհական լինելույն աղագաւ։

Վանահայր Արտամետ գյուղացի Հովհաննես անունով անձ մի է, որ զվանքն կկառավարե, բավական շինություն արած է վանքի մեջ, վանքն արդեն միաբան չունի բնավ, 2 տնտես, վանքի մշակք և գութնավորք, ընդամենն 8 հոգի։

1873 հուլիս 30 'ի Անգղա սուրբ Աստվածածնի վանք։

Սուրբ վանքս Վանա քաղաքի հարավակողմ չորս ժամավ հեռի է 'ի նմանե Անգղա գետին եզերք ամենազվարճալի դիրք մի ունի։ Վանքին արևելյան կողմն է Վերին Հայոց Ձոր, արևմտյան կողմ Աղթամարա ծով և մի քառորդ հեռի Անգղ գյուղ։ Հյուսիսային կողմն է Անգղա կամ Արտամետու սար, մի քառորդ հեռի հարավային կողմն է Կորդուաց լերանց գոտիք, դեպ 'ի արևմտյան հարավ Արտոսր լեռ և Ոստան, որք երկու ժամ հեռի են վանքեն։ Վանքի հարավային կողմեն մի քարընկեց հեռի ահագին շառանչմամբ կանցանե Անգղա գետն և մի վսեմ զվարճություն կընծայե վանից։

Վանքի պարսպի շրջապատ 245 քայլ է, հողե աղյուսով շինված։ Վանքի ներքին կողմ երկու բակի բաժանված է։ Առաջին մեծ բակի մեջ կա փոքրիկ պարտեզ մի, մի գոմ և մի փարախ։ Ներսի փոքր բակի մեջ կա մի տնտեսատուն, 3 խուց, վերին հարկ 7 սենյակներ, որք անկանոն շինված են, չունին օրինավոր դուռն և պատուհան և ոչ մեջ փռելո կարասիք։ Կա մի փոքրիկ պարտեզ։

Սուրբ Աստվածածնի եկեղեցին սույն ներքին բակի մեջն է, երկու տաճար ունի և մի փայտյա դարպաս։ Սուրբ Աստվածածնի տաճար դարպասի աջ կողմն է Կոփածո քարամբք և անհմուտ ճարտարությամբ շինված շինության թվականք չկան։ Այս տաճարի երկարություն սեղանի առաջեն չափելով 8 ոտք է, իսկ լայնություն 18 ոտք, նսեմ է, արևելյան կողմանե մի փոքրիկ լուսամուտ ունի։

Երկրորդ սուրբ Գեորգա տաճար, կռածո քարամբ շինված, դարձյալ երկարություն 8 ոտք է, իսկ լայնություն 15 ոտք, սույն տաճարի մեջ երկու փոքրիկ սեղաններ կան, աջակողմյան սեղան սուրբ Գեորգ, սուրբ Հովհաննես, սույն տաճարի մեջ է ձեթաբուխ հրաշալի վեմն, որ տաճարի ձախակողմյան որմին մեջ զետեղված է, քարի մեջ փոքր քառակուսի փորված մի կա, առաջին ժամանակներ քարին միջեն ձեթ կբղխեր, 2 թզափափ տախտակի դուռն մի կա վերա, ուխտավորք ձեթ յուրյանց վերքերուն վերա կքսեն և ժամանակավ հրաշաբուխ ձեթին բժշկություն շատ հռչակված էր, այժմ ձեթն այլևս ըստ առաջնույն չի բղխեր, այլ վանահայր կլեցունե, երբ պակասած տեսանի։

Դարպաս փայտակերտ է, երկարություն 38 ոտք և լայնություն 42, երկու տաճարաց դրանց միջոցի կա մի փոքր և անզարդ սեղան։ Եկեղեցական զգեստք և սպասք են, 1 արծաթյա սկիհ, 2 արծաթյա խաչ, մի սեղանի մեծ խաչ և մին ձեռաց, 1 պղնձյա բուրվառ, 7 պղնձե աշտանակ, մի ժամարարի զգեստ, թագ Գուկաս յուստուֆայե[165], գոտին պղնձյա, հին ուստուֆա շուրջառ, փորուրար և թևնոց։

Շատ անգամ կողոպտված է վանք, վերջին անգամին տասն տարի առաջ կողոպտված է։

Աստվածածնա վերափոխման օր վանքի տոնախմբության օր է, ավանդություն կա, թե վանքիս տեղ կռատուն եղած է, զոր Թադեոս առաքյալ քանդելով տեղն սուրբ Աստվածածնի տաճար հիմնարկելով հրաշյուք քարեն ձեթ բղխեցուցեր է, այս ավանդություն վանքի ձեռագիր կոնդակի մեջ երկարգված է։

Վանքի հողային կալված 50 Վանա քիլայի չափ սերմամուտ է,

ամենքն ջրարբի, արտորեից կէս գետի հայնկույսն և կէսն հայսկույս։ Վանքն ունի մի անփոխ գութան, որո տավարքն են 3 գոմէշ, 6 եզ։ 16 հատ նախրի տավար, 5 կով, 4 արջառ, 3 հեռնիկ, 4 երինջ, 1 ձի։ 50 հատ ոչխար, 30 գառն, մի ավերակ ջրաղաց, վանքի պարսպին մերձ խնձորի, ծիրանի, սալորի, ուռի, թեղի ծառաստաններ, որք վանքին շրջապատ իբրև անտառ կձևացունեն։

Վանքի այժմյան վանահայրն է տեր Գեորգ քահանայն 20-ամյա, որ այս տարի Խիզանցի Հակոբ եպիսկոպոսեն ձեռնադրված է, մշակք 3 գութնավորք, 1 հովիվ, 1 դառնարած, տնտես վանահոր մայր է։ Հիշյալ քահանայի տուն գեղի մեջն է, ձմեռ վանքին պահպան դնելով, կքաշվին Անդզ գյուղ, ամառ գուկան երկրագործությամբ կպարապին։

Տարին 50 քիլա ցորյան գուկա վանքին, տարին 1000 դրամական եկամուտ հաղիվ գուկա։ 3 գյուղ թեմ ունի վանք՝ Անդզ, Կղզաշ, Մաշկակտակ։ Գեղերեն գութան ունեցող գութան կուտան, տան գլուխ մի սարակ, կաթ, հոգեբաժին և կողոպուտ կուտան։ 2 պղինձ՝ մի մեծ, մի փոքր, 5 աթոր, 3 լենկեռի[166], 1 տապակ։

Վանք դրամ չունի, այլ 7000 դուրուշ ըստ ասույթի պարտք կա, սակայն պարտքեր վանքին չեն, այլ յուրյանց, զոր պարտին վճարել։ 1000 դրամ Շամիրամա առվի վերա կերթա, 400 զմուխաթա տան, վանքեն 20 քիլա կերթա, իսկ միայն վանքին 10 քիլա կբավականանա։

Վանքեր քահանայից և աշխարհականաց հանձնել թե ներկային և թե ապագային վնասակար է, զի ոմանք թեև վարդապետներեն լավ տնտեսություն կդեկավարեն, սակայն ոմանք վանքի արտեր կահկարասիք կյուրացուցանեն, ոմանք արտեր ուրիշներու կուտան, ոմանք յուրյանց վերա թափու կրնեն և ոմանք որդովք շատանալով այլևս վանքեն չհեռանալով վանքն գրեթե կյուրացուցանեն։ Այսպիսի վանահարք ազգի նյութական և բարոյական հարստություն բնավ նպատակավոր չեն, այլ միայն վանորեից հնությանց իբրև վարձկան պահապաններ են, ազգ վանքեր քահանայից և աշխարհական վանահարց ձեռք բնավ չէ կարող բարեկարգել։

1873 հուլիս 1 'ի Զարհան սուրբ Նշանի վանք։

Այս վանք Վանա քաղաքեն վեց ժամ հեռի դեպ 'ի հարավային արևմուտք Աղթամարեն և Նարեկա վանքեն 3 ժամ հեռի ճիշտ դեպ 'ի արևելք Արտոսր լերան ստորոտ զառիկողի մ' վերա Ոստանա այգեստանյաց մեջ ունի յուր վայելուչ դիրք։

Վանքի արևելակողմն է Հայոց Ձոր, Բերդաձորո Աստվածածնի վանք, որ է Սպիտակ վանք, այս կողմանե կտեսանե Վարագա լեռ և Հայոց Ձորո դաշտեր, լեռներ և գյուղեր։ Արևմտյան կողմանե են Գագկա բերդ, Ոստանա այգիք և Հիլու Աստվածածնի ձոր։ Հյուսիսային կողմանե Աղթամարա ծով ժամ ու կես հեռի վանքեն, այս կողմանե կտեսնվի Կտուց անապատ, սուրբ Սահակա լեռ և դեպ 'ի հյուսիսային արևմուտ կտեսնվի Սիփանա լեռ, Բզնունիք և Քաջբերունիք։ Հարավակողմ է Արտոսր լերան կատարք, որո գլխուն է Սիմեոն ճգնավորի աղոթատեղին։

Վանքի պարսպի շրջապատ է 218 քայլ, կես քարե և կես աղյուսե շինված, պարսպի ներս կա երեք բակ, առաջի բակին մեջ կա 1 տնտեսատուն, 1 փարախ և մի սենյակ, երկրորդ բակն տավարեղենաց մակատեղի, երրորդ բակի մեջ 10 սենյակ կրկնահարկ, վերի 5 հարկեր բլբված են։

Այս բակի մեջն է սուրբ Աստվածածնի տաճար, կոփածո քարամբ շինված խիստ վայելչությամբ 'ի թիվ հայոց ՌՃԻ (=1120), երկարություն 18, լայնություն 28 և բարձրություն 32 ոտք է, երեք սեղան ունի, քովի երկու փոքր սեղանաց ներքև տաղավարներ կան։

Երկու քառակուսի սեանց և միջի սեղանի կամարի վերա բարձրացած կա գմբեթ՝ Հայաստանի վեղարաձևով։ Տաճարի աջակողմն է սուրբ Գեորգա փոքրիկ տաճար, այս տաճարին ուխտի գուկան Ոստանա և այլ կողմի տաճիկներ։ Սոյն տաճարի դրան առաջ կա մի անշուք և անխաչաքար շիրիմ, այս այն երանելի վարդապետի գերեզման է, որ 1036 վկայեց գերեզմանաքարի վրա գրեց, թե «Մեծ է սերն աստծո քան զամենայն մեծութիւնս երկնաւորս, և այսպես աներկիւղ առնէ զմարդիկ, իբրև զանմարմին չորս հրեշտակաց», ինքն ինչպես հայոց քաջաց և առաքինյաց տապանագիր յուր ոսկեղենիկ մատենի մեջ գրած է, այնպես յուր փառավոր հիշատակ յուր մատենից մեջ միայն հռչակելի եղած է, մեղպես շատ եպիսկոպոս, վարդապետ, իշխան եկած տեսած է այս անշուք տապան, հառաչելով անցեր գնացեր է՝ առանց նորա վերա մի մարմարոնյա տապան, մի ոսկեդրոշ խաչվեմ և մի նորին արքունյա վայելուչ մատուռ կանգնելով զանց արարյալ հեռացեր է։ Տասներեք դար անցանելով տակավին Վարդանա հոգվով մեկ չերևեցավ Հայաստան աշխարհի մեջ, որ իբրև Վարդան կարեկից լինելով վայելուչ տապանաքար մի զետեղեր այն չնաշխարհիկ հայրենասիրի վերա, որ Հայաստանի եկեղեցվո վերակենդանության և նահատակության պատմու-

թյուն մեզ թողուց, ուր կենդանի ձայն ամեն վայրկյան հայ մանկտվույն սիրտ և հոգին դեպ 'ի ջերմ աստվածապաշտություն և 'ի եռանդուն հայրենասիրություն և վառե և կպատրաստե։

Քաջոց ամսո մեջ երանելի Եղիշեն Վարդանաց պատերազմի բանակի մեջ շրջելով վշտաբեկ հոգվով ուխտապահ նախարարաց առաքինություն և հետս կայելոց վատություն կատորագրեր, այսչափ ամաց 'ի վերա անցանելեն զկնի, ես Երեմիա եպիսկոպոս նորա տապանի վերա վշտաբեկ հոգվով զայսոսիկ գրեցի և մտոք ընդ նմա խորհելով ասացի, հանգիր հայր 'ի գերեզման խաղաղությամբ մի զարթեսցիս, մի՛ հայեսցիս, մի բարբառեսցիս, լռությամբ և տխրությամբ կաց 'ի անշուք դամբանի քում, զի տակավին արք վասականմանք երկփեղկին զժողովուրդն հայոց, մտոք և հոգւով դառնան 'ի կողմն պարսից, 'ի վերին երեսս ունին զքրիստոնեությիւն, վասն մարմնաւոր փառաց և շահուց գերազանց գտանին քան զհայր իւրեանց Վասակ, ուրանան զեկեղեցին զազգ և հայրենիս վասն նախանձու և ատելության, բանք պագությիւն և վարք առաքինեացն քոց ոչ բնավ ազդէն 'ի սիրտս նոցա, որք հղանան զցավս և ծնանին զանօրենությիւն, ուստի ննջեա հայր, մինչև հարիցին առաքինիք և կործանիցին վատք և ուրացողք։

Զարհան սուրբ Նշանի հրաշագործ սուրբ խաչ կա սույն վանից մեջ, ուստի վանից անուն Զարհան սուրբ Նշանի վանք կկոչվի, Վարագա խաչի տոնին Վանա, Հայոց Զորո և Ռշտունյաց կողմանե ուխտավորք կգիմեն 'ի վանքս։

Կա մի կենաց փայտ ևս, որո մասին գրված է, թե Հակոբ տեառնեղբոր պարանոցի խաչն է։

4 արծաթյա պատվանդանով խաչ, 2 խաչերով ավետարան տպագիր, 1 ձեռագիր տեր Հուսկան ավետարան բևեռով, մի խաչերով նարեկ, 1 հայսմավուրք, 1 ճաշոց, 2 շարական, 1 ատենի ժամագիրք, մի տոնացույց, 4 շուրջալ երկուք մետաքսյա, 2 պատմա[167]։ 1 չիթ վարագույր, 1 արծաթյա սկիհ, 20 հատ շուշփա, 1 թագ, 1 գուկաս շալե։ 1 պղնձե գոտի, 3 փորուրար, 4 թևնոց, մի սեղանի ասեղնագործյալ գոգնոց, 6 աշտանակ, 6 գորգ եկեղեցվո։

Հողային կալված այժմ վանքի ձեռք, 3 արտ մնացեր է Առվամիջու դաշտի մեջ, երեք արտի մեջ 38 Վանա չափ սերմ կառնե։ Վանքի տակ Առվամիջի դաշտ 124 չափի սերմամուտ բերրի հող ջրիպորներ[168], որք վանքին աղայություն ըրած են, ասկե 30 տարի առաջ բռնությամբ հափշտակած են, վանքի վանահարք, երբ պատեհ միջոց գտած են,

կառավարության բողոքեր են, այս տարի ևս վանահայր տեր Սարգիս բողոքեց այս հողերու մասին Գավաշու և Վանա կառավարության, Գավաշու գատին գայմակամով և ժողովքով իրավունք տվին, որ հող վանքին դառնա, սակայն Վանա բդեշխ ըստ յուր սովորության տաճկաց կողմ բռնելով՝ վանքի և վանահոր իրավանց վերա բռնացավ։ Ուստանա երևելի անձինք և կարդացող[ք] տաճկաց ամենայն ճշմարտությամբ վկայություն կուտան, թե 124 չափի տեղ Զարհան սուրբ Նշանի վանքին է։ Վանքի հյուսիսային կողմն, պարսպի շրջապատեն սկսյալ մինչև Արտոսր լեռան գլուխ, 20 քիլայի տեղ կա ոչխարի և տավարի արածելո տեղ և 50 կոր արտ կցանվի այս լեռնային հողերու մեջ, 2 մրգեղենաց այգի կա, 1 ևս վանքի շրջապատ ծիրանի ծառաստան և ջրաղաց մեկ աչքեն։ Թե ջրաղացեն, թե արտերեն 15 քիլա ցորյան գուկա, 500 ղուրուշ դրամական եկամուտ ուխտավորներեն։

Վանքն ունի 6 գյուղ թեմ, 1. սուրբ Վարդան 8, 2. Խուդում 30, 3. Քոշկ 10, 4. Թրքաշեն 11, 5. Քարադաշտ 8, 6. Հիլի 7, ընդամեն 74 տուն։ Գեղերու արդյունք հոգեբաժին, գութանի և մարդու զուպարա։

Վանք այժմ ոչ դրամ ունի և ոչ պարտք։

Խաշինք 50 ոչխար, 2 գոմեշ, 3 եզ, 3 կով, 1 գոմեշի ձագ, 2 ձի, 2 որթիկ։

Հայոց ՌՅԻԶ (=1877) վեց բարդոց ցորյան այրած են, ՌՅԺԸ (=1869) երեք բարդոց ևս այրած են, ՌՅԻԱ (=1872) 50 սայլ կորընկան խոտ այրել [են], ՌՅԻԼ (=1871) ութ եզ տարած են, ՌՅԻԴ (=1874) երկու ձի և մեկ գոմեշ սրով սպանած են, ՌՅԺԴ (=1865) 28 ոչխար, ՌՄԿ (=1811) վանքի 124 չափի սերմամուտ հող ջրարբի հափշտակեցին Ուստանի Ահմատ աղայի պարագայք, ՌՅԻԸ (=1879) 9 անդամ ջրաղաց կողո[պ]տեցին Սելիմ պեյի ձեռք, ՌՅԻԴ (=1874) շներ սպանեցին։

Բերդաձորո սուրբ Աստվածածնա վանք, որ կոչի սպիտակ վանք, 6 ժամ հեռի Վանա քաղաքեն, Արտոսր լերան ստորոտ Զարհան վանքեն և Ուստանեն մի ժամ դեպ 'ի արևելք բարձր բլուրիմ վերա ունի յուր դիրք։

Վանքի շրջապատ 13 քայլ, պարսպի ներս բակ չունի, շենքեր իրարու կից շինված են։ 1 փարախ, 1 մարագ, 1 տնտեստուն, 2 սենյակ, մեկ մառան։

Տաճարի երկարություն 62 ոտք, լայնություն՝ 36, 12 ոտք գմբեթի

բարձրություն, սեղանի խորաններ կան, տաճարի առաջ անշուք պարիսպ մի կա։

Այս խոյակապ տաճար 100 տարվո չափ ամայի մնացեր է, այլազգիք գոմ ընելով, մեջ կրակ վառելով սեացուցեր են, ՌՃՁԸ (=1666) Աղթամարա Ավետիս եպիսկոպոս տաճար մաքրելով միջի շինվածքներ նորոգեր, վանքին վանահայրություն ընելով, հոն վախճաներ և հոն թաղվեր է։ Ավետիս եպիսկոպոսին հաջորդեր են Մարգարե եպիսկոպոս, տեր Խաչատուր, Պետրոս եպիսկոպոս և այժմյան տեր Բարսեղ, որ յուր 3 որդովք և ընտանյոք զվանքն կկառավարե։

Հողային կալվածք, մի արտ ունի Ոստանա դաշտի մեջ, 4 քիլա սերմ կընդունի։ Կորաիկ արտ ջրարբի 4 քիլա, Մալա Պրահիմի արտ 2 քիլա, Ջաղցի դրան արտ 2 քիլա, 4 քիլայի հող ևս Աբանանից դաշտի մեջ։ Սոտին հողեր[169] 30 քիլայի լեռնային վայրեր, կաղնի անտառ մի այս սոտին հողի մեջ, 1 այգի կա բավական մեծությամբ ծիրան, տանձ, խնձոր, խաղող և ընկուզ կբերե։ Ունի 1 ջրաղաց և տանի ձիթխաց, վանքե մեկ ժամ հեռի կալի մեջ 3 տուն, 1 մարագ, 1 փարախ, 1 շտեմարան։

Վանքեն մի արտաչափ հեռի 12 տուն հայ կբնակին, վանքի հող կցանեն և խոտեր կհնձեն, 4 տուն և հնդեն մին տասանորդ կուտան վանքին։ Խաշինք, 3 գոմեշ, 5 եզ, 7 ոչխար, 5 կով, 3 աջառ, 4 որթ։

Թեմ, 1. Իշխանիգոմ տուն 30, 2. Խորականց 15, 3. Մարգո 8, 4. Բլրենց 35, 5. Աթանան 35։

1873 հուլիս 5 'ի սուրբ Խաչի վանս Աղթամարա։

Աղթամարա կղզին Վանա արևմտյան կողմ Աղթամարա ծովակին մեջ իբրև անառիկ բերդ մի բարձրանալով կապուտակ ջուրց վերա կնըշմարվի գրեթե ծովու չորեք կուսի եղերքներեն Վանա կողմի ափանց եղերքեն առագաստավոր նավի ճանապարհավ չորս ժամու, իսկ հյուսիսային եղերքեն, այն է՝ Ախվանից կողմանե, 1 ժամու ճանապարհավ հեռի 'ի ցամաքեն։

Կղզին ամբողջ սպիտակագույն ապառաժ քարե ձևանա փոքր մասն եկեղեցվո շրջապատներ հողերով ծածկված է ապառաժ։ Կղզիին շրջապատ հավանական է, թե երեք քառորդի ճանապարհ լինի, արդեն 'ի հին պատմութեանց և ավանդութեանց, մանավանդ Արծրունվո ստորագրութենեն հայտնի է, թե խիստ ընդարձակ է եղեր կղզույն շրջապատ, որ հարավային և արևելյան կողմեր քաղաք[ի] շինություն և այգիք

եղած է մինչև Ոստան Արծրունյաց քաղաք և ցամաք միայն դետույն և պարսպով բաժանված է եղեր կղզիեն։

Կղզույն արևմտյան կողմ բոլոր ապառաժ քար է, արևելյան կողմ դարձյալ ապառաժ է, կեդրոն կղզույն է Գագկաշեն հռչակավոր սուրբ Խաչի տաճար։

Տաճար երկու դուռ ունի, մին արևմտյան և մյուս հարավային, տաճարի երկարություն և լայնություն իբրև քառակուսի առնելով 46 ոտք է, գմբեթի կամարի մեջեն մինչև տաճարի հատակ 40 գրկաչափ է[170]։ Տաճարի շենք խաչաձև է, սեղանի երկու կողմեր երկհարկ խորաններ կան, 24 լուսամուտ ունի, տաճարի հարավային դրան ներսի կողմանե բաց վերնահարկ մի շինված է իբրև պատշգամբ, Գագիկ թագավորին եկեղեցվո մեջ պատվավոր վերնահարկ մի։ Սեղանի վերա կա հին գեղեցիկ խաչկալ մի, աջակողմ կա կաթողիկոսական աթոռ, վերան փայտյա կերտված գմբեթ մի։

Տաճարի հարավային դրան դիմաց ավանդատան դուռ բացված է հյուսիսակողմ, երեք ավանդատուն մեջեմեջ շինված է, ուր պատարագիչք կղզեստավորին։ Այս շենքեր այնչափ փառավոր չեն։

Տաճարի արևմտակողմն շինված է մի դարպաս՝ Թումա կաթողիկոսի ձեռամբ 'ի թիվ հայոց ՌՄ (=1751), դարպասի երկարություն և լայնություն 48 ոտք է, չորս սյան վերա է, 30 ոտք բարձրություն ունի, սակայն բոլորովին անշուք և երեսե ձգված։

Տաճարի ներսի որմոց վերա նկարված կտեսնվի շատ տեղագործյալ սրբոց պատկերներ, սակայն գույներ թափած և եղծված են։

Տաճարի դրսի չորեք կողմի որմոց վերա կիսարձանի նման քանդակված է սրբոց առաքելոց, մարգարեից, Քրիստոսի, Աստվածածնի և հրեշտակապետաց, Դանիելի, Երից մանկաց, Դավթի, Գողիաթի, Սամսոնի, Հովհաննու, Գագիկ թագավորի, Ադամա և այլնի, Սարգսի, Մինաս[ի], Գեորգա զորավորաց պատկերներ կան հոյժ հրաշակերտ կերպարանոք։

Բազմահույլ կենդանյաց քանդակներ կան նույնպես որմոց վերա, պատկերաց վերև մի շրջապատյալ քանդակյալ ողկուզաբեր գոտի կա՝ իր տևոք և ողկուզոք արտադրյալք, զանազան մարդկանց, կենդանյաց և թռչնաց կիսարձաններ կան այս գոտույն մեջ քանդակված։

Հսկա պատկերաց քանդակաց վերա կտեսանվի հին զգեստուց տարազներ, թագեր, վահաններ և զենքեր։ Այս տաճար Հայաստանի բոլոր տաճարաց մեջ այս սքանչելի քանդակաց կողմանե եղակի է, այս քան-

գակաղործ պատկերաց մեջ կտեսանվի ճարտարապետին հանճարեղություն և մեծագործ Արծրունի Գագիկ թագավորի կիրթ ճաշակ և հայկական փառաց պերճություն և Արծրունյաց հարստության ճոխություն։

Տաճարի հարավակողման դրան վերա շինված [է] մի զանգակատուն բավական շքեղությամբ՝ դարձյալ Թումա կաթողիկոսի ձեռամբ և Վանա խոճա Ախիճանի արդյամբք։ Հարավային կողմ կա 18 քայ[լ] հեռի մի հնաշեն սուրբ Ստեփանոսի տաճար, երկարություն 20, լայնություն 16, սակայն այս եկեղեցվույն հյուսիսային որմեր սկսած են խախտիլ և խոնարհիլ։

Տաճարի դրսի հարավային և արևելյան կողմեր կան կաթողիկոսաց և վարդապետաց գերեզմաններ և խաչարձաններ։ Կղզույն արևելյան կողմ կա մի քարաշեն սուրբ Սարգսի մատուռ և մի ևս Աստվածածնի մատուռ խոնարհած, կղզույն արևմտյան հարավակողմն մի ապառաժ քարի վերա, որ կղզույն մեծ ապառաժեն անջատյալ է, կա մի եկեղեցի՝ անուն սուրբ Գեորգ, նավակավ կարելի [է] երթալ տեսնալ։

Հակոբ եպիսկոպոս՝ տեղապահ տաճարի, հարավակողմ մի նորաշեն երկահարկ սենյակներ շինած է բավական հարմարությամբ, տակավին հիսուն վարպետք մեջ կբնակին, վերի և վարի հարկեր հանդերձ սեղանատամբ 32 սենյակ է, նոր շինած սենյակաց հանդեպ արևելյան կաթողիկոսի վեհերան հետ առնելով 16 անշուք և անհարմար սենյակք կան հինցած, մաշված և ավերակ դառնալու մոտեցած։ Հակոբ եպիսկոպոս ավելի գովության արժանի կլիներ, երբ այս կողմի սենյակք ևս մյուս կողման նման վերստին նորոգեր։ Կա 3 մառանց, 1 տնտեսատուն, 1 ցանոց։

Միաբանք Աղթամարա։

	տարիք
1 Հակոբ եպիսկոպոս տեղապահ Հիզանցի	50
2 Հովսեփ եպիսկոպոս 'ի Նարեկա գեղջե	36
3 Մխիթար վարդապետ 'ի Աթանանց գեղջե	50
4 Հակոբ վարդապետ 'ի Կարկառ Կարիշա գեղջե	55
5 Հակոբ վարդապետ 'ի Փշավանից	40
6 Ղազար վարդապետ 'ի Շատախու թաղեն	36
7 Գրիգոր վարդապետ 'ի Մոկաց	30
8 Պողոս վարդապետ 'ի Հիզանա	30

9 Խորեն վարդապետ Արգելյան 'ի Կեցանա	30
10 Հովսեփ սարկավագ 'ի Մոդաց Հազնո	70
11 Ստեփան սարկավագ 'ի Ալուր գեղջե	25
8 դպիր և գործակալք	
4 պառավ կանայք	
————————	
23	

Աղթամարա դրսի տուն, որ Ախվանք ասի, կղզույն արևմտյան կողմ ժամ ու կես անկե հեռի ծովեզերք ամենավայելուչ դիրք մի ունի։

Դրսի տուն պարիսպ չունի, այլ տան ձևով շինված է, 9 սենյակ կա, 1 տնտեսատուն, 2 մառան, 1 բռան տուն, 1 բուռ, 8 փարախ, 3 ջրաղաց, 1 ձիթահան՝ հանդերձ միջի փարախով, 1 շտեմարան, 2 մարագ, 2 գոմ Պատականց դյուղի մեջ։

Դրսի տուն կա փայտաշեն եկեղեցի, զոր շինած [է] սպանյալ Պյուլպյուլ Պետրոս կաթողիկոս, ուր երկարություն 30 ոտք և լայնություն 20 ոտք է։ Եկեղեցվույն կից կա 1 սենյակ։

Ախավանից հարավային և հյուսիսային կողմեր կա երկու դրախտանման այգիք, որոց մեջ կան ծիրանի, խնձորի, տանձի, ընկուզի, սալորի, սերկևիլի, ուռի, բարտի, կաղամախի ծառեր։

Պետրոս կաթողիկոս մի առու հանած է Փշավանից գետեն, որ գուկա երկու ջրաղաց կբանեցունե, արտեր և այգիներ կոռոգանե։

Վանքի ագրակի մեջ երկու փոխով գութան կբանի, որո աշխատավորք 14 հոգիե կբաղկանա։ 5 ջրկալ, 8 նավավարք, 2 ջրաղա(ց)պան, 2 հացեփ, 2 պառավ, 2 հովիվ, 1 գաճնարած, 2 ղողարար[171], 2 կավարար[172], 1 պահապան, 1 հյուսն, 1 ձիապան, 1 պարտիզպան, 1 մատաղպետ, 1 վարժապետ, դպրոցի 15 աշակերտք, որոց անվանք են հետևյալքն։

	տարիք
1 Պետրոս Անգղ գեղջն	15
2 Հակոբ Անգղ գեղջե նոր[ա] եղբայր	8
3 Պետրոս 'ի Պողանիս գեղջե	14
4 Սամուել 'ի Կառկառու Մլքա գեղջե	13
5 Վարդան 'ի կեցան 'ի Փրխուս գեղջե	14

6 Մուրատ 'ի Կեցան 'ի նոյն գեղջե 15
7 Սարգիս Ռշտունյաց Փշավանք գեղջե 14
8 Մանուկ 'ի Խիզանա 'ի Խակ գեղջե 14
9 Գրիգոր 'ի Շատախու 'ի Դարանց գեղջե 15
10 Հովսեփ 'ի Ռշտունյաց 'ի Բողանիս գեղջե 8
11 Ավետիս 'ի Ռշտունյաց 'ի Նարեկա 14
12 Մինաս 'ի Ռշտունյաց 'ի Ախվանից 16
13 Սարգիս 'ի Զվստան գեղջե 15
14 Համբարձում Ռշտունյաց 'ի Պատականից 9
15 Հակոբ 'ի Զարհան վանից 16

Վանքի հողային կալված, որք Ախվանից և ուրիշ գեղերու սահմաններու մեջ են, 30 Վանա քիլա սերմ կընդունեն։ Աղթամարա հողերու մեծ մասն ծովն առած է, շատեր բռնավոր քրտեր հափշտակած են իրենց բռնակալության միջոցին, որոց գլխավորն է Ֆաթահ պեյ։

Տավարեղենք, 360 ոչխար, հուլիսի մեկին 15 քուրտ Շատախու Ալի, Մուստաֆա, Կուլ Մահմատ Մահմուտ աղայից սպասավորք թեւադրությամբ նոցին վանքի ոչխարներեն 6 հատ բռնությամբ հափշտակեցին տարին Շատախու կողմեր։ 114 գառ, 20 ուլն, 15 գոմեշ, 3 ձագ շորս տարեկան, 3 ձագ երեք տարեկան, 3 նախրեկ երկու տարեկան, 22 եզ, 4 աջառ, 6 կոլիկ արջառ[173], 4 խիռնիկ[174], որ է նախրեկ հերվան, 16 գոմեշի մատակ, 15 կով, 5 էշ, 1 ջորի, 3 ձի, 6 սավա ձագ[175], 9 սավա որթիկ, 14 շուն։

Դրամական եկամուտ*։

1873 հուլիս 23 'ի Կարմրակա սուրբ Աստվածածնի վանք։

Այս վանք ժամ ու կես հեռի Աղթամարա Ախվանքեն դեպ 'ի արևմուտք ձորակի մեջ ունի յուր դիրք։ Հյուսիսային, հարավային և արևմտյան կողմեր բարձր սեպացյալ լեռներով շրջապատված է, արևելյան կողմ բաց է և կհայի Աղթամարա ծովակին վերա, վանքի շրջապատ լեռներ կանիփայտերով անտառներ[176] են, վանքեն որչափ լեռ կերևի բոլոր վանքի սեփական լեռ և անտառներ են։

Վանքի արևմտյան և արևելյան լերանց վերա բերդեր կան ավերակ, զորք Արծրունիք շինած են, բերդեր ավերակ, Գագիկ Արծրունին շինած է վանքի տաճարներ։

*Հեղինակը դրամական եկամտի մասին թվերը բաց է թողել (Հ. Պ.)։

Վանքի շրջապատ 200 քայլ է, պարիսպ սպիտակ որձաքար անտաշ քարամբ շինված է ասկե 30 տարի առաջ Աղթամարա միաբան Ստեփան վարդապետ նորոգեր է, միջին կողմ պարսպին երկու բակ կա ա. բակի մեջ 1 տնտեսատուն, 9 փարախ, կրկնահարկ 8 սենյակ կա անկանոն և անճաշակ շինված, ներսի երկրորդ բակի մեջ կա մի փոքրիկ պարտեզ և երկու տաճար։

Աստվածածնա տաճարի երկարություն 27 և լայնություն 22 ոտք է, բարձրություն բավական բարձր, այս տաճարի վերա գեղեցիկ գմբեթ կա, սպիտակ քարամբ շինված, տաճարի մեջ ոչ խաչկալ կա, ոչ զարդ և ոչ զարդարանք։

Այս տաճարին կից սուրբ Գեորգա անվամբ մի տաճար կա, երկարություն և [լայնություն] բաց 'ի սեղանեն, հավասար 14 ոտք են, առաստաղ կամարակապ է։

Եկեղեցվո մեջ ճաշոց, հայսմավուրք չկա, այլ մի շարական, մի ժամագիրք, մի տոնացույց և մի ավետարան, 5 սեղանի խաչ, 1 ձեռաց խաչ, 1 սկիհ, 1 բուրվառ պղնձի, 1 սաղավարտ, 2 շուրջառ, 5 կտավե շապիկ, 1 դավազան, մեկ մասունքով խաչ, որո անուն վարդապետ չգիտեր, 1 մասունքով խաչ ևս մնացեր է Երևան քաղաք։

Վանքի վանահայր Մոխրաբերդցի մահտեսի Մուրատն է, որ 8 տարի վանահայրություն կընե, մեջ մի ծերունի՝ Ստեփան վարդապետ, միաբան 70-ամյա, 1 հովիվ, 1 մշակ, 1 խոտաղ, 1 տնտես։ Անասունք 50 ոչխար, 30 գառ և ուլ, 4 եզ, 3 աջառ։ Ռշտունյաց քիլայով[177] 30 քիլայի սերմանելո հող ունի, 20 քիլայի հող ջրարբի Մոխրաբերդի սահմանի մեջ, իսկ տասն քիլայի հող վանքի սահմանի մեջ է, հողեր վանահայր չի մշակեր, այլ վարձով տված է Մոխրաբերդի հայոց։ Վանահայր վանքի անտառի փայտեր շարունակ կծախե և բնավ մարդ հաշիվ չգիտեր, Հակոբ եպիսկոպոս միայն գիտե։ Տուրսին մերձ կա մի ջրաղաց և մի ծառաստան պարտեզ, որո ծառք են թեղի, ընկուզի, ծիրանի, ուռի, կաղամախի։ Վանքի երկու բակեր ոչխարի և տավարի աղբերով լեցված է, աղտեղությամբ լի է սենյակներ և վանքի շրջապատ։

1873 հուլիս 26 'ի Կապուտակողա սուրբ Հակոբա վանք։

Այս վանք, ինչպես ձեռագիր մայր մաշտոցի մեջ հիշատակարանի մեջ գրված է, որ սույն վանքի մեջ է, կհիշատակե, թե հայոց թվականեն երեք հարյուր տարի առաջ շինված, Մանուճիր Ռշտունյաց իշխանի որդին 'ի Միջագետքն երթալով Հակոբ հայրապետի ճկույտն իբրև օրհնություն բերելով վանք կշինե և այն միջոցին 3ձ (=400) կրոնավոր

կրնակին վանքի մեջ. հետո ամայի կմնա, Ստեփանոս վարդապետ կվերանորոգե ՊՂԶ (=1547) հայոց թվականին և շատ արտորայք և կալվածք կգնե վանքին համար, այժմ նույն կալվածներ քուրտեր յուրացուցեր են բռնությամբ։

Սուրբ Հակոբա վանք Վան քաղաքեն 12, իսկ Նարեկա վանքեն 3 ժամ հեռի դեպ արևմուտք Ընծաքար լեռան արևելակողման ստորոտ Կապուտկողա բարձրահովիտին մեջ բարձր բլրակի վերա ունի յուր գեղեցկահայաց դիրք։ Վանքի պարիսպ անտաշ որձաքար սպիտակ քարամբ շինված է, որո արտաքին շրջապատ 300 քայլ է, ներսի սենեկոց, փարախաց և գոմոց շինվածք շատ անկանոն և անարվեստ շինված է. 1 սենյակ, 1 տնտեստուն, 2 մառան, 2 փարախ, 2 գոմ, 1 մարագ։

Սուրբ Հակոբա տաճար կրամած անտաշ քարամբք, իսկ գմբեթ թրծյալ աղյուսոք է շինված։ Տաճարի շինվածք խաչաձև է, երկարություն 30, իսկ լայնություն 28 ոտք է, սեղանի աջ և ահյակ երկու փոքր խորաններ կան, տաճարի դրան կողմ դարձյալ երկու խորաններ կան, աջակողմյան խորանի դուռ ներսեն է, իսկ ձախակողմյան դրսի կողմանե է, այս խորաններ երկհարկ իրարու վերա շինված է, տաճարի կամարաց բարձրություն 50 ոտք կա։

Տաճարի առաջ կա փայտաշեն մի դարպաս, որո երկարություն և լայնություն 30 ոտք է, դարպասի առաջ խառնիխուռն շենքեր կենալով տաճարի վսեմ տեսարան խափաներ է իսպառ, վանքի բակեր անառանոց աղբերու անմաքրությամբ տկեղացեր է։ Տաճարի ետև սուրբ Աստվածածնի մատուռ մի կա, կոփածո քարամբ կամարակապ շինված է, սակայն մեջ առանց եկեղեցական զարդուց և դուռ հարաժամ բաց է։

Վանքի հյուսիսային պարսպեն մի քարընկեց հեռի Երեք Մանկունք անվամբ տաճար մի կա կրամած քարամբ գեղեցիկ շինված, դուռ հարաժամ բաց և մեջ առանց եկեղեցական զարդուց, մեք երբ այցելություն գնացինք գեղեցիկ տաճարիս, վանքի շուներեն մին տաճարեն դուրս ելնելով հաչեց մեր վերա և անցավ, ոչխարի շներ ամառ այս զով տաճարի մեջ կերթան զովանալու։ Վանքի հարավային ձորակի մեջ կա մի տաճար՝ Հովհաննու ավետարանչի անվամբ կառուցյալ, դուռ բաց և մեջն ամայի։

Վանքի հարավային կողմ կա երկու պրակ[178] կամախի, 16 ընկուզի մեծ ծառեր, սուրբ Հովհաննու տաճարի քովի ընկուզենիքն հաստություն 40 ոտք է։ Վանքի հարավային, հյուսիսային և արևմտյան կողմի լեռներ վանքի բակի Ընձակու ձորեն և ջուրեն մինչև լերանց գլուխ վանքին է։

Վանքի հողային կալվածք։

12 սոտին արտ կա 2 արասի քիլա[179] սերմ կընդունի, 12 ջրարքի արտեր 2 քիլա սերմ կընդունին, 'ի Մոխրապերթ 4 արտ ջրարքի 5 քիլա սերմ կընդունին, Շատվան 2 արտ 1 1/2 սերմ կընդունի, 'ի Բելու 4 արտ 1 1/2 սերմամուտ, 'ի Ջլատ սոտին 1 1/2 կես սերմամուտ, 'ի Նանիկանց 1 սոտին արտ 1 չափ սերմամուտ, տասներեք քիլայի և մեկ չափի հող կա վանքին։ 4 բարդ բող և փայախ[180] քաղելու խոտատեղի ունի 'ի Բելու 3 կտոր խոտնոց կա, Բոզու բացախ[181] քաղելու տեղ կա, որ իճարայով տրված է։

Վանքի եկեղեցական զգեստներ։

1 սկիհ, 1 խաչ, 1 սուրբ Հակոբա աջն, 1 արծվաբեր ավետարան, 2 ձեռագիր մաշտոց, 1 ճաշոց, 2 ավետարան, 1 ժամագիրք, 1 շարական, 1 նարեկ։ 8 կտավե շապիկ, 1 շուրջառ, 1 սաղավարտ, 1 գակաս, 1 գավազան, 2 քշոց, 1 բուրվառ։

Չորս անգամ կողոպտած են վանք 40 տարվան մեջ, երկու անգամ Վարդան եպիսկոպոսի և 2 անգամ Աբրահամ վարդապետի օրով, եկեղեցական զգեստներ, մասունքներ և խաչեր տարած են։

Տավարեղենք։

3 գոմեշ, 5 եզ, 10 կով, 1 ձագ 3 որթիկ, 1 նոր ձագ 3 որթիկ, 2 էշ, 3 քուռակ, 1 ձի, 44 ոչխար այծ, 24 գառ, 7 ուլ, 5 շուն, 12 խավ, 2 աքաղաղ*։

Վանքս [ունի] 2 ջրաղաց և երկու ձիթահան, այժմ վանքն առաջուն հետ համեմատելով ավերման կերպարանք ունի և ոչ շինության։ Այժմյան վանահայր Նորգեղից Աբրահամ վարդապետն է միաբան և տիրացու չունի, 1 տնտես, 7 մշակ, 1 պահապան, այժմյան միաբանք փոխանակ սրբակրոն վարդապետաց՝ մշակներ, գոմեշներ, եզներ և ոչխարներ են։

Բելու գյուղ Ռշտունյաց գավառի Կապուտկողան լեռան հարավային կողմ ընդարձակ հովտի մը մեջ վայելուչ դիրք մի ունի, ունի մի եկեղեցի՝ սուրբ Շմավոն։ Տաճարի երկարություն 24, լայնություն 17

* Վանքում գտնվող ձեռագիր Մաշտոցի հիշատակարանը, որը արտագրել էր Ե. Տեկանցը, հանեցինք, նկատի ունենալով, որ վերաբերում է XV դարի կեսերին (Հ. Պ.)։

ոտք, իսկ դարպասի երկարություն 35, լայնություն 30 ոտք է, տաճար կրամած և կամարակապ է, իսկ դարպաս փայտաշեն նսեմ և անկանոն շինված։

Վեց քահանա կա, որոց անվանք են 1 տեր Մելքիսեթ՝ 90-ամյա, 2 տեր Վարդան՝ 70-ամյա, 3 տեր Հակոբ՝ 70-ամյա, 4 տեր Հովհաննես՝ 60 տարվո, 5 տեր Ավետիս՝ 40 տարվո, 6 տեր Խաչատուր՝ 50 տարվո։

88 տուն հայ բնակիչ կան գյուղի մեջ, բոլոր երկրագործ են։ Գյուղացվոց խիստ մեծագույն մասն սովոր են Պոլիս երթալ և մեծ մաս բեռնակրություն ընել։ Հաղիվ թե տասն հոգի դտանք, որ Պոլիս չէին գնացեր։ Տասն տուն հաղիվ կա առանց պարտուց, հաղար ոսկի պարտք կա գեղացվոց վերա, զոր Պոլիս երթալով և դառն աշխատությամբ կվճարեն։

Այս գեղի մեջ դպրոցի ընկերություն գրելով ստիպեցինք դպրոց հաստատելու, սահմանադրություն գործադրեցինք և սուրբ Հակոբա վանքին համար 3 անձինք հոգաբարձու հաստատելով վարդապետի և թեմականաց մեջ առժամանակյա մի խաղաղություն հաստատեցինք։

Բելու կըսվի այս գեղին, վասնզի գեղացիք ավանդությամբ կըսեն, թե Բելու մարմին գեղեն դեպ արևմտյան հարավային կողմի բլրակի վերա է թաղված, ուստի գեղի անուն Բելու կկոչվի, որ եթե ստուգաբանեմք, կրնա ըսվել, թե Բելու մարմին ունի։ Մի ժամ հեռի գեղեն դեպ 'ի հարավային արևմուտ կա մի Գաղց անունով ավերակ բերդ։ Գեղի գերեզմանատան մեջ կա մի մատուռ՝ սուրբ Աստվածածնի անվամբ, ննջեցյալք դնելու տեղ։

1873 հուլիս 28 սուրբ Նարեկա վանք։

Այս վանք ըՌշտունյաց գավառի մեջ բոլոր վանքերեն հնաշեն, երևելի և 'ի հնումն հռչակավոր մենաստան և ուսումնարան Հայաստանի։ Նարեկա վանք Վան քաղաքեն 8 ժամ հեռի դեպ 'ի արևմտյան հարավ, Եղերով լեռան հյուսիսային ստորոտ, ընդարձակ դաշտահովտի մը մեջ, մի բլրակի վերա ունի յուր վսեմ և վայելուչ դիրք, վանքի ճիշտ արևելյան կողմ է Ոստան և Արդոսո լեռ, արևմտյան կողմն է Փախներ գյուղ և Նարեկացվույն աղոթատեղին, հյուսիսակողմ է Աղթամարա վանք ծովն և Ախավանք, հարավակողմն է Եղերովա լեռներու գոտին, այն [է]՝ Կորդվաց լերինք։

Վանքի պարսպի շրջապատ կա Նարեկա գյուղ, որո մեջ 70 տուն հայ ընտանիք կբնակին, այս գեղ վանքի վսեմության, պայծառության և առանձնակեցության ամենամեծ տկեղություն տված է, գյուղացիք

յուրյանց խոռվասեր և հափշտակող բարյուք միշտ վանքի հարստության և հառաջադիմության վնասակար դիրք ունին, վանքի կալվածներ կհափշտակեն, արտորեից մեջ յուրյանց խաշինք և անասունք կկերակրեն, արածել կուտան։

Վանքի դրսի պարսպի շրջապատ 318 քայլ է, առաջին բակի մեջ կա մի դպրոց և երկու հարկերով 16 սենյակ։ Այս բակի մեջ է վանք[ի] զանգակատուն, դարպաս սուրբ Սանդխտո, սուրբ Աստվածածնի տաճարներ և Նարեկացվո գերեզմանի մատուռ։

Դարպասի բարձրություն 27, երկարություն 43, լայնություն 40 ոտք է, չորս քառակուսի սյունյաց վերա սրբատաշ մոխրագույն քա[ր]ամբ շինված է, 7 լուսամուտ ունի, մի սեղան, ատոր աջակողմն է սուրբ Սանդխտո տաճարի դուռ, իսկ ահյակ կողմն է սուրբ Աստվածածնի տաճարի դուռ, այս դռան առաջ է Անանիա եպիսկոպոսի Նարեկացվոյն քեռու գերեզման։

Սուրբ Սանդխտո տաճարի երկարություն 25 և լայնություն 28 ոտք է և բարձրություն 57 ոտք է, հատակեն մինչև գմբեթ։ Գեղեցիկ և բարձր կաթուղիկե մի կա այս տաճարի վերա։ Այս տաճարի սեղանի աջակողմ է սուրբ Նարեկացվույն մատրան դուռ, որո մեջ մտնալով և երկու փոքր դռնակ ևս անցանելով, սուրբ Սանդխտո տաճարի ետև շինված մատրան մեջ մտնալով Նարեկացվույն գերեզման կհամբուրեն և նորա աղոթքներեն մի երկու աղոթք մրմնջելով 'ի ասածո մեղաց թողություն և երկնից արքայություն կը խնդրեն, հրեշտակակրոն սուրբ վարդապետի գերեզման արևելքեն դեպի արևմուտք դրված չէ, այլ հյուսիսեն դեպ 'ի հարավ, որո պատճառն չգիտցվիր։ Մատրան դիրք քառակուսի լինելով երկարություն և լայնություն հավասար 11 ոտք է։

Սուրբ Աստվածածնի տաճարի բարձրություն հատակեն մինչև գմբեթ 57, երկարություն 24, լայնություն 21։ Սանդխտո կուսի տաճարի գմբեթի նման գեղեցիկ գմբեթ մի ունի այս տաճար։ Շարունակ ժամասացություն դարպասի մեջ կկատարվի և երբեմն տաճարոց և գերեզմանի մատրան մեջ պատարագ կմատչի։

Դարպասի դրան վերա կա մի գեղեցկաշեն և բարձրադիր զանգակատուն, որո ներսեն չափելով երկարություն 14 և լայնություն 15 ոտք է, իսկ բարձրություն 82 ոտք է, հատակեն մինչև գմբեթի ծայր, Աղթամարա Հարություն կաթողիկոս շիներ է զանգակատունս, հայոց թվին ՌՄԿԱ (=1231)։

Վանքի ներսի բակի մեջ 17 սենյակ կա, որո մեջն է վանահոր

առաջնորդարան, 1 տնտեսատուն և 1 մառան։ Պարսպի հյուսիսային դրսի կողմն է վանքի կաշատեղ[182], որո կից է երկու մարագներ։ Հարավային պարսպին մերձ է 1 ձիթահան, 1 փարախ, գոմ, վանքի արևելք մի ասպարեզ հեռի[183] 1 ջրաղաց կա, որ ասի պարտս ունի, ջրաղաց(ի) հյուսիսային կողմն նորաշեն ջրաղաց մի կա, զոր Նարեկո տարվույն գարնան շինած է Հովսեփ վարդապետ Ամբակումա ջրաղաց։

Վանքի այժմյան վանահայրն է Հովսեփ վարդապետ, որ վանքի դպրոց և սենյակներ շինեց և բավական կանոնավորեց։ Քանի տարի առաջ վանքի ժառանգավորաց դպրոց բավական հառաջադիմության մեջ էր։ Այժմ ամառան միջոցին 28 տղայք հասարակ ընթերցմունք և քերականության դաս կառնուն։ 20 տղա Նարեկա գյուղեն են, 8 հոգի մերձակա գավառներեն։

Նարեկա վանքի եկեղեցական զգեստներ, 4 իռիստիֆա շուրջառ, 2 Դամասկոս(ո), 1 փուլի, 1 պասմա հին, 2 եպիսկոպոսական թագ, մեկն մի կեսն իշլամա[184] **և կեսն արծաթապատ և մյուս իստիֆա։** 5 գակաս իստիֆա, մին արծաթի բեռոք, 3 տմիմիորսն, մին իստիֆա, մին թավիշե և մյուսն մետաքսյա, 3 փորուրախ, մին իստիֆա, մին ասեղնագործ և մյուսն պասմա, 2 թավիշե թեուրար։ Մյուսն իստիֆա, 4 զույգ բազման, 3 իստիֆա, 1 ջալե, 2 ժամարարի սպիտակ կտավե շապիկներ։ 1 եպիսկոպոսական արծաթի գոտի՝ վեցթևյան սրովբեաձև ձուլված, մյուսն հասարակ ժամարարի, 1 սաղավարտ՝ հանդերձ գուկասով իստիֆա, 2 փորուչնար[185], մին թավիշե, մյուսն մետաքսյա, 1 կարմիր ատլասե, 1 կապույտ ատլասե, 1 կարմիր ասեղնագործ և 1 կարմիր յուստուֆա, 1 կապույտ ասեղնագործ իստիֆա, 13 պասմա, 1 Տոմասկո գերեզման ծածկոց, 1 կարմիր մետաքսյա գեղեցիկ ծածկոց, 1 գեղին մետաքսյա։ 1 կարմիր շալե գերց, ասեղնագործ սիանտի գոգնոց[186], 1 մետաքսյա բոլորակ[187], 1 սպիտակ իստիֆա, 1 սև, կարմիր և սպիտակ մահուտի վերա ասեղնագործյալ նոր սեղանի գոգնոց, մեկ մութ կարմրադույն ատլասի վերա ասեղնագործյալ սփռոց, 1 ասեղնագործ հին, 9 հին ծաղիկ սփռոց, 1 պրդյա ասեղնագործ սփռոց, 3 փուլլի բոլորակ սկիհի ծածկոց[188], 11 հատ պասմա շապիկներ, 2 պասմա վարագույրներ, 2 արծաթե սկիհ, 1 արծաթե աղավնի, 1 զույգ արծաթի քշոց, 1 զույգ պղնձյա քշոց։ 1 կենաց փայտե ճաճանչավոր սուրբ խաչ՝ 6 շուշփայով և մի ծածկոցով պատատյալ, 2 ճաճանչավոր մատունքով խաչեր, 4 բոլորակ խաչեր՝ 1 սեղանի երկու երեսե, 1 մի երեսե

խաչեր, 2 սկիզոծ, 3 ձուլածու Քրիստոսով ձեռաց խաչեր, 14 պատկերի և ավետարանի մեկ-մեկ երեսե մանր խաչեր։

2 պղնձյա բուրվառ, 23 զույգ սեղանի մանր աշտանակներ, 2 հատ միջակ աշտանակ, 1 իպրիզ[189] և 3 լական ժամարարի։ 2 արծաթապատ յուղաբերեց ավետարան, 3 խաչերով ավետարան, երկուք գրկո, 4 գրկո առանց խաչի ավետարան, 1 գանձատուն, 1 ճառ, 1 տպված ճաշոց, 1 հայսմավուրք, 2 շարական, 3 ատենի ժամագիրք, 1 տոնացույց, 1 հայր մաշտոց, 4 արծաթապատ նարեկ, մեկն ժողովքի տարված, 1 ծնծտակ, 2 զանկ, 1 արծաթյա կանթեղ, 2 նշխարքի տիպ, 1 խմորի կոնք, 1 թուճե խնկանոց, 8 նարեկի վերա 23 շուշփա կա, 1 Աստվածածնի պատկեր դարպասի սեղանի վերա, 5 պատկեր Նարեկացվո գերեզմանի վերա կո, 4 առանց Նարեկացիի, 1 Աստվածածին Նարեկացիով, 1 Աստվածածնի պատկեր Անանիո գերեզմանի վերա, 2 սեղանի վերա չինի ծածկոց։

1873 օգոստոս 2 'ի Նոր գյուղ։

Այս գյուղ Ոստանա 4 ժամ հեռի դեպ 'ի արևմուտք ընդարձակ ձորակի բերան ունի յուր գեղեցիկ դիրք, 60 տուն հայ բնակիչ կա և 3 տուն քուրտ։ Գյուղացիք առհասարակ երկրագործությամբ կպարապին, 2 երկաթագործ խանութ կա։ Գյուղի քառորդ բնակիչ Մոկաց, Մամբրտանից և Տհո գավառներեն եկած են։

Երկու տար[ի] առաջ գյուղացիք դպրոց էին հաստատեր, երկպառակության աղագավ, երկու վարժապետ փոխելով առանց վարժապետի մնալով տղայք ցիր ու ցան եղած են, սաստիկ հորդոր դրին[ք] գյուղացվոց վերա, անմիջապես նոր վարժապետ բերել։

Եկեղեցին սուրբ Հովհաննու անվամբ է կառուցյալ, տաճարի 'ի վաղ ժամանակաց մեծամեծ քարամբ կրամած շինված, որո երկարություն է 20, լայնություն 19 ոտք է, իսկ դարպասն տարվույս մեջ 1873 ավարտված է, որո երկայնություն 50, լայնություն 32 ոտք է։

Այս գեղի մեջ 3 հոգի հարյուրամյա, 5 հոգի ութսունամյա էին։ Աստ սահմանադրություն գործադրելով 4 հոգ[ի] թաղական խորհրդոց անդամ ընտրվեցան։ Երկու քահանա՝ Հովհաննես 80-ամյա, իսկ մյուսներ խաչատուր 40 տարվո պանդխտյալ 'ի Պոլիս։

Նոր գեղա սուրբ Գեորգա վանք գեղեն մի քառորդ հեռի հյուսիսային ձորակի մեջ ունի յուր դիրք, տաճար փոքր, մեջ շենք չկա, ոչ սենյակ, ոչ տնտեսատուն։ Վանքի տուն Նոր գեղի մեջն է՝ 1 տնտեսատուն, 1

մառան, 1 մարագ, 1 փարախ, 1 ոչխարի գոմ։ 30 կտոր մեծ և փոքր արտեր կա Նոր գեղի սահմանի մեջ, 10 արասի քիլա սերմամուտ հողեր ունի, չորս ընկուզի ծառ, 30 ոչխար, 2 գոմեշ, 3 կով, 5 եզ, 1 սայլ, 1 գութան՝ յուր գործիքներով։

2 Սուրբ Գեորգա մասունքով խաչեր, տարին 200 խառն կառնի կառավարություն այս վանքեն, վանքի եկամուտ և ծախք հայտնի չէ, արտերեն ինչ եկամուտ գա՝ բոլոր ծախք կլինի, այժմ այս զարնանե սկսյալ վանցի Պաղդասարի ձեռքն է։

1873 օգոստոս 3 'ի Մոխրաբերդ գյուղ։

Այս գյուղ Ռշտունյաց գավառի մեջ, Ոստանա 4 ժամ հեռի դեպ 'ի արևմուտք Աղթամարա ծովուն եղերք Ծրտաքար լերան ստորոտ ունի յուր դիրք։ 52 հայ ընտանիք կա այս գյուղի մեջ, ամենքն առհասարակ երկրագործությամբ կպարապին։ Սույն Մոխրաբերդ գյուղ այն գյուղն է, որ մեջ Սահակ Ռշտունյաց եպիսկոպոս որմզդական կրակն ջուր ձգել տվավ և սպանեց։

Երկու եկեղեցի ունի՝ մին նորաշեն սուրբ Սարգիս, որ որմանք ամբողջ շինված և միայն առաստաղ մնացեր է, երկարություն 42 և լայնություն 33։ Երկրորդն է սուրբ Գեորգ՝ կրամած քարամբք շինված, որ երկանք 12 և լայնք 9 ոտք է։ Երկու քահանա կա՝ մին տեր Պետրոս և մյուսն տեր Զաքարիա, ընթերցանության մեջ շատ տկար, քաղաքավարության եղերքեն անգամ անցած չեն, քահանայք ոչ յուրյանց քահանայության պատիվ կճանաչին և ոչ քահանայութենեն, թե ինչ գիտեն։

Երեք տարի առաջ դպրոց ունեցած են, Աղթամարա Հարություն վարդապետ մականվամբ Կոռմալ կոչված վարժապետին լավ տիրոց տալով դպրոցի խանգարման պատճառ եղած է։ Այժմ դպրոց չունին, սահմանադրություն գործադրեցինք, հարկ դրեցին[ք] վարժարան հաստատելու։ Վերջի խանգարման պատճառն են երեք հոգի՝ տեր Պետրոս, Մխիթար Պաղոյան, ռես Հարություն Պողոսյան, Սահակ Մկակասյան տղայք Նոր գեղի դպրոց խրկելով 'ի միասին հակառակության դպրոց գոցելուն առիթ եղեր են։

1873 օգոստոս 4 'ի գյուղն Փախներ։

Այս գյուղ Ռշտունյաց գավառի մեջ Վանա քաղաքեն 9 ժամ հեռի և Ոստանեն 3 ժամ հեռի դեպ արևմուտք, նույնպես Նարեկա վանքեն մի քառորդ դեպ արևմուտ ընդարձակ գեղեցկահովտի մը մեջ ունի

դրախտանման դիրք, օդ և ջուր խիստ առողջարար, գեղի մեջ և շրջապատ կան զանազան մրգեղենաց ծառաստաններ, ընկուզի, ծիրանի, սալորի և այլն, կաղամախի, ուռի և բարտի։

Այս գյուղ աղքատ հարուստ 40 տուն հայ ընտանիք կբնակին, բոլոր երկրագործությամբ կպարապին, տան գլուխ մի մարդ 'ի Պոլիս պանդուխտ են, արտորայք գեղին չեն բավականանար։ Աստվածածին անվամբ մի փայտաշեն եկեղեցի ունին, երկարություն և լայնություն...* եկեղեցին ունի ժամարի զգեստ՝ յուր սարոք, սկիհ, սաղավարտ, 1 ղույդ քշոց պղնձյա, բուրվառ պղնձյա, երկու արծաթի խաչ, 2 շուրջառ պատմա, 10 կտավե շապիկ։ Կա մի ձեռագիր, մեծ և փոքր ավետարաններ, 400 ղուրուշ դրամ ունի եկեղեցին։

10 կտոր արտ կա։ եկեղեցվույն 1 Խանիլարան գլուխ, 1 Գեորգի արտի գլուխ, 1 կտոր Զորի բերան մեջ տեր Գազարի և մեջ վանքի արտին։ 1 Կարիպի արտի գլուխ Փլի բերան, 1 Հուսկի Մուրատի արտի գլուխ, 1 Կոընկու Լարի ճոթի տակ 1 սերի արտ, 2 սոտին արտ՝ յուր բրակով գեղի դիմաց, 1 դրախտի սոտին արտ 20 գավաշու չափով սեր[մ] կընդունի այս արտեր։ Եկեղեցվո արդյունք ավետարանին և պսակոչված դրամեն է, տարին 400 ղուրուշ կգոյանա։

Գեղի արևելյան կողմ, գերեզմանատան մեջ, սուրբ Ստեփանոսի անվան նվիրյալ փոքրիկ կրամած քարամբ եկեղեցի մի կա, որ երկանք²...** և լանք այսչափ, տարին մի անգամ հաղիվ պատարագ կլինի, ննջեցյալ մեջ կդրվին։

Երկու քահանա կա գեղի մեջ՝ տեր Ղազար 50 տարվո, տեր Խաչատուր 45 տարվո, գեղի տղայք երբեք չեն կարդացներ, միայն յուրյանց տան տղայք կկարդացնեն։

1874 հուլիսի 3 'ի Վանս նա[խ]կին Լուսավորչին մերո Բարդուղիմեոս Առաքելո։

Բարդուղիմեոս սուրբ Առաքելո վանք, երկու ավուրոք հեռի Վան քաղաքեն, Աղբակ գավառի մեջ, ինչպես կկարծվի հին Արևբանոս[190] քաղաքի արևելյան կողմ, մի հրվանդանանման բլրակի մը վերա ունի յուր վայելուչ դիրքն, վանքի արևելյան կողմն է ընդարձակ դաշտահովիտն, որ հյուսիսեն սկսելով կերկարի դեպ 'ի հարավակողմն, փոքր-ինչ դեպ արևմտյան հարավ շեղված։ Հովտի երկարություն 4—5 ժամու ճանապարհ կլինի, հովտիս մեջտեղեն գետակ մի կխաղա օձապտույտ մա-

* Բացթողումը հեղինակինն է (Հ. Պ.)։

** Բացթողումը հեղինակինն է (Հ. Պ.)։

նուածով, որ կանվանվի Աշկերտու գետ, որո ջուրք Սորատերա լեռներեն և հովիտներեն, որ վանքիս հյուսիսակողմ է, 2—3 ժամավ հեռի ժողովելով հովտին հետ կսկսին հյուսիսեն դեպ ի հարավ խաղալ։ Վանքի հյուսիսային արևմուտք երկայն և նեղ հովիտ մի կա, որո մեջ մեծ առվակ մի կխաղա, որո ջուրն սքանչելի համեղություն ունի, թե Աշկերտու գետակն և թե սույն մեծ առ[վ]ակ յուրյանց, սկսյալ լեռներեն և հովիտներեն սկսյալ, թե վանքի արտորեից և թե յուրյանց խաղացման հանդիպած հայաբնակ և քրտաբնակ գյուղացվոց արտորեից առատորեն ջուր կբաշխեն, գետակի մեջ կարմրախայտ և քանի տեսակ համեղ ձկունք կան, զոր գետեղերյա բնակիչք որսալով կճաշակեն։

Վանքի արևմտակողմն մի քարընկեց հազիվ հեռի է գյուղն, որ այժմ կանվանի Վանքի գյուղ, որի մեջ կբնակին այժմ 61 տուն և 36 տուն քուրտք, որք աղքատ գոլով այլ և այլ կողմերե 10—15 տարիե հետ զհետ եկած բնակած են և վանահայրերեն հող խնդրելով վար ու ցան ըրած են և այս տարի վանցի Տիլավորոզլի Թապուճք Հասան աղայի թելադրությամբ վանից հողեր, որ յուրյանց իբր ավանդ տրված էր, յուրյանց վերա թափու ընել կուզին, ինչպես որ 5 տուն քուրտ թափու ըրած են։

Հիշյալ մոլեռանդ և հայոց թշնամի Հասան աղան նույնպես հայերն ևս զանազան խորամանկ հնարյուք ստիպած է, թե վանքի հողեր, որք յուրյանց իբրև ավանդ հանձնած են նախկին վանահարք՝ թափու ընել, բայց նոքա թե բերանացի և թե գրով հրաժարվեր են թափու ընելու, ասելով համարձակ, թե վանքի սեփական հող մեք չեմք համարձակիր սեփականել մեզ, զի եթե համարձակիմք սուրբ Բարդուղիմեոս առաքյալն կպատժե զմեզ։

Հիշյալ գյուղի տուներ հին Արևբանոս քաղաքի ավերակաց վերա անկանոն և ցեբուցան կերպիվ շինված է, վանքի գյուղին կից արևմտյան բլրակի վերայի բերդ 15 տարի հազիվ թե ավերակ է դարձեր, բայց քաղաք մի դար առաջ յուր քաղաքական շքեղություն կորսված է։ Սույն գեղեն Խուտո անուն ծերունի մի, որ 140 տարի ապրելով և հինգ տարի առաջ, 1869 թվականին, հաստեացս առ աստված փոխվեր է, սա յուր մանկության ժամանակին քաղաքի շինություն՝ պարիսպներ, քաղաքի տուներ, շուկաներ տեսնելով կպատմե եղեր, ասկե 50 տարի առաջ վանքի վանահայր, ավերակաց տեղեր հարթելով, սերմանելու արտորայք կպատրաստե վանից։ Այժմ ավերակաց տեղեր հազիվ ուրեք

կնշմարվին, զի Հայաստանի ուրիշ հին քաղաքաց պես սև հողերու ներքև կծածկվի, 'ի ցավ սրտի հայրենասիրաց։

Գյուղի հարավային կողմ Ստեփանոս անուն եկեղեցվո ավերակ մի կա, որ քաղաքի եկեղեցյաց ավերակներին մնացորդ է։ Վանքի հարավային պարսպին կից ուռենյաց ծառաստանով զարդարված պարտեզ մի կա, որ վայելուչ տեսք մի կընծայե վանից տեսարանին։ Վանքի հյուսիսային պարսպին կից արտաչափ հեռի վանից ջրաղաց է, որ տարին երեսուն բեռ ցորյան եկամուտ կբերե։

Վանքի շրջապատ պարիսպ հասարակ քայլափոխով 500 քայլ է, պարսպաց բարձրություն միջակ է և հասարակ սպիտակ քարերով շինված, պարսպաց ձև քառակուսի չէ, այլ երկայնաձև, որ արևմուտքեն դեպ արևելք կերկարաձգեն։

Վանքի դրսի դուռն դեպ 'ի հյուսիս կհայի, ներսի կողմն երեք բակի բաժանված է, ա. բակի մեջ 5 սիսոռ, 3 ոչխարաց դոմ, 1 խոտատուն քարուկիր, բ. բակի մեջ 8 հատ վերնահարկ սենյակ, 1 շտեմարան, 1 տնտեսատուն, 1 մառան, գ. բակի մեջ է սուրբ առաքելույն տաճար և դարպասն։

Տաճար և դարպաս դրսի կողմանե միահավասար շենք և երեվույթ ունի, բայց ներսի կողմանե ըսված ձևույն, ըսված շինվածույն խիստ տարբեր երևույթ ունի։ Երկուքի շրջապատ դրսի կողմանե չափելով 140 հասարակ քայլ է, երկարություն երկու կողմեր 45-ական քայլ են, իսկ լայնություն երկու կողմեր, այն [է]՝ արևելյան և արևմտյան կողմեր, 25-ական քայլ են։ Սրբազան Առաքելո տաճարի ներքին կողմն քառակուսի է և կամարներ խաչաձև հանդեպ միմյանց։ Երկարություն և լայնություն միահավասար 46 ոտք են, զմբեթ խաչաձև չորից կամարաց վերա հրաշափառապես 'ի վեր բարձրացած է և տաճարի լայնության և երկարության չափ 46 ոտք բարձրություն ունի։ Կամարներ կիսո չափ, այն է՝ 23 ոտք հազիվ բարձրություն ունին, զի կամարաց վերո և մեջտեղունք ծածկապահ շինված է։

Սուրբ սեղանի վերա ըստ Ուշքիլիսայի սուրբ Հովհաննու վանից սեղանի քարեղեն խաչկալ մի կա՝ երեք զմբեթներով։ Սուրբ սեղանի աջ և ահյակ երկու գեղեցկաշեն մատուռներ կան, ահյակ մատրան մեջ, որ սուրբ առաքելո անվամբ սուրբ Բարդուղիմեոսի խորան կոչված, ամփոփված է նախկին սուրբ Լուսավորչին մերո մեծին Բարդուղիմեոս առաքելոյն սքանչելահրաշ քրիստոսամեծար աստվածամերձ սուրբ մարմին, հույժ գեղեցկանկար մարմարյա տապանաքար մի կա սուր-

քաղան առաքելո շիրիմի վերա և նորա նահատակության առաքելական պատկեր գերեզմանի վերի կողմն։

Աջակողմյան մատուռն, որ հազարապետի խորան կանվանվի, ամփոփված է հայոց Սանատրուկ թագավորի հայ հազարապետ նահատակի սուրբ մարմին, որ առաքելո քարոզությամբ Քրիստոսի հավատալով նահատակեցավ 'ի Սանատրուկ արքայե։ Տաճարի դուռն կբացվի դարպասի մեջ, այս դուռն մեծ է և բավական ճարտարապետությամբ շինված։

Դարպասի լայնություն տաճարի լայնության հավասար 46 ոտք է, իսկ լայնություն տաճարի դռնեն չափելով 40 ոտք է։ Դարպասի կամարներ տաճարի կամարներեն բարձր է, ձեղունի կեդրոնի վերա փոքրիկ գմբեթ կա՝ յոթն փոքրիկ սյունակնյաց վերա կառուցյալ։

Դարպասի դուռն տաճարի դուռնեն ավել ընդարձակ և գեղեցկաշեն է, սույն դրան բարձրության վերա, այն է՝ դրան ուղղության վեր, դարպասի տանիքի հավասարությենեն առնելով մի փոքրիկ գմբեթաձև զանգակատուն շինված է եղեր, ինչպես Կտուց անապատի դարպասի վերայի զանգակատուն, բայց գմբեթ խոնարհյալ լինելով միայն տեղ կնշմարվի։ Դարպասի հատակ մի աստիճան բարձր է տաճարի հատակեն, զի երկու աստիճանավ վեր ելանե տաճարի դռան վերա և երեք աստիճան տաճարի դռնեն վար կիջնա 'ի հատակն։ Դարպասի դռնեն դեպ 'ի դուրս ելած միջոցին 8 աստիճան կիջնա բակի մեջ։

Նախկին սուրբ Լուսավորչի առաքելական սուրբ մասունքներեն իրեն հրաշալի ծնոտ կա սուրբ Բարդուղիմեոս խորանի մեջ, իսկ առաքելական սուրբ աջն այժմ՝ 'ի Սալմաստ 'ի Հավթվան գյուղ'ի սուրբ Դեվորգ եկեղեցվո մեջ։ Բազմահրաշ առաքելական դամբարան և երկու հրաշալի սուրբ նշխարք ունին բազում սքանչելիս և բժշկությանս 'ի հիվանդս, 'ի նեղյալս, որք 'ի հեռավորաց և 'ի մերձավորաց հավատով աստվածապաշտության դիմեն առ նոսա։

Առաջին դարերու մեջ, երբ աստվածապաշտության և քրիստոսասիրության գարուն էր, Հայաստանի ամեն կողմերեն կդիմեին 'ի հուխտ առաքելական սուրբ գերեզմանին և սուրբ նշխարաց, բայց այժմ հայոց աղգիս աստվածապաշտություն և քրիստոսասիրություն նվազելով 'ի սակս բազմանալու անօրինության, միայն Աղբակու մերձակա ժողովուրդք Վարագա խաչի տոնին ուխտի գուկան բազմությամբ, բաղումք ոչ թե 'ի ջերմեռանդությենե ստիպյալ, այլ վասն մարմնական զբոսանաց և ուրախության, զի նվագելով և թպուկ հականելով կպարին, կուտեն և կըմպեն...։

Տարին քանի անգամ Հեր և Զարեանդ գավառե, այն է Սալմաստու հայ ժողովրդենեն ուխտավորք ըստ նախնի բարի սովորությունից ամենայն ջերմեռանդությամբ, պարկեշտությամբ և առատաձեռնությամբ ուխտի գալով կպատվեն և մեծարեն սուրբ Առաքելո դամբարան, որ ամենայն պատվո մեծարանս, սրբության և համբուրման արժանի է, զի ասէ տէր, որ զիս պաշտիցե պատուեսցե զնա հայրն իմ[191], սա է մին երկուտասանից անտի, որ աշակերտեցավ Հիսուսի և պաշտյաց զնա կենաց և մահու, ուստի պատվեցավ և փառավորեցավ 'ի հորեն ամենակալե, դարձյալ թե ուր ես եմ անդ և պաշտօնեայն իմ եղիցի[192], ահա սա է ճշմարիտ պաշտոնյան Քրիստոսի և առաքյալ նորա, սա է, որ հոգվով ընդ Քրիստոսի բազմյալ է ընդ աջմե հոր աստված և զի Քրիստոս յուր անհասանելի աստվածությամբ համենայն տեղիս է, մանավանդ ամենայն տեղիս ուր և կարդան զանուն նորա սրբությամբ, ուստի տերն փառաց և կապարիչ խնդրածոց Քրիստոս աստվածն մեր ընդ յուր ունելով զհոգի ճշմարիտ պաշտոնեին յուր սրբոյն Բարդուղիմեոսի ներկա է 'ի վերա դամբարանի նորա և կատարե զխնդրված ամենայն ջերմեռանդն աղոթավորաց և ուխտավորաց աղոթյուք և անդառնալի բարեխոսությամբ սրբոյն Բարդուղիմեոսի նախկին լուսավորչին Հայաստանյայցս աշխարհի։

Թե Հեր և Զարեանդ և թե Աղբակու ժողովուրդք յուրյանց մեծ երդումն Բարդուղիմեոսի անվամբ կերդնուն, ասելով՝ Բարդուղիմեոս վկա, կամ թե հաճախ, Բարդո՜ղիմեոս։ Այսպես, Տարոնո երկիր, մերձակո սիրելի սրբոց անվամբ կերդնուն, սրբի Կարապետ։ Երզնկացիք, Ներսես Հայրապետ, թորթանցիք, լուսավորիչ, վանեցիք՝ սուրբ Խաչ, սուրբ Նշան, ուրիշ կողմի հայք այսպես յուրյանց երկրի մերձակա սիրելի սրբոց անվամբ կերդնուն, խոյեցիք, ուրմեցիք, թարվիզցիք Թատեոս առաքելո անվամբ կերդնուն, երանի թե այս ստեպ հիշատակություն ճշմարտությամբ և ուղղությամբ սրտի լինելով սրբից սեր միշտ կենդանի և վառ պահեր հավատարիմ հավատացելոց սրտի մեջ, երանի թե անստի տեղ և ստությամբ վկա չկոչեին զաստված և զսուրբսն նորա, ա՜հ թե որչափ մեծ մեղք է աստված և նորա սրբոց սուրբ անվամբ զմարդիկ խաբել և զընկերն խարդախել, զի նա, որ կարգելու մինչ անգամ զգլուխն յուր չերդնուլ սուտ, երբ կներե յուր և յուր սրբոց անուն սուտ երդնուլ։

Բարդուղիմեոս սուրբ Առաքելու վանից վանահայրության պաշտոն, ինչպես սուրբ Թադեի վանից, սուրբ Էջմիածնա հայրապետեն կհասատվեր, և երբ օսմանցիք տիրեցին Աղբակու երկրին, բռնավոր քուրտեր նվաճելով Հակարու պարոն Նուրիլահ պեյ արտասահման տարին, վանք հանդերձ Աղբակու գավառով նվաճեցավ ընդ իշխանությամբ Օսմանյան պետութենե, ուստի Վանա առաջնորդ Գաբրիել սրբազան եպիսկոպոս և իշխանավորք 'ի ձեռն կուսակալացն Վանա բարձին հոգևոր և քաղաքական իրավասություն սուրբ Էջմիածնա գահակալացն վանքես և ոկսեցին թե կրոնապես և թե քաղաքականապես իշխել նախկին սուրբ Լուսավորչի վանից վերա մինչև ցայսօր և ըստ կամի և ըստ հաճության փոփոխել զվանահայրս՝ առանց նոր բարեկարգությունս և ուղղությունս հաստատելու սոյն մեծահռչակ վանից մեջ։

Գահակալք սուրբ լուսավորչաց Թատեի Բարդուղիմեո և սրբոյն Գրիգոր ճանաչելով զմեծ վաստակս և զերախտիս նախկին լուսավորչայն զվանս Թատեի և Բարդուղիմեո մասնավոր խնամոք իբրև հայրենի տուն պահպանեին և 'ի պատիվ առաքելական սուրբ շիրմաց յուրյանց կողմանե իբրև փոխանորդ արքեպիսկոպոսներ կնստեցուցանեին այս առաքելական աթոռներ։ Այժմ Թատեոս առաքելու արքեպիսկոպոսն 'ի Դավրեժ մայրաքաղաքն պարսից բազմի և իբրև փոխանորդ մի վարդապետ կխրկե ի Թատեոս առաքելու վանք, իսկ վանից թեմական իրավունք Թավրիժու եպիսկոպոսն հավաքելով կենն իրեն կը սեփականե, կենն 'ի էջմիածին կխրկե, իսկ վանքին այնչափ հասույթ կթողու, որ պակսի և ոչ ավելանա։ Ասկե տասներեք տարի առաջ Մատթեոս կաթողիկոսի օրով[193] սուրբ Էջմիածնա վերադառնալով սրբո Թադեոսի և Բարդուղիմեոսի առաքելու տոնին հանդերձ բազմությամբ ուխտավորաց հանդիպեցինք սուրբ Թադեի վանք, տեսանք տաճարի և եկեղեցվո դրռներ փակյալ, զի Փիլիպոս վարդապետ Դավրիժու եպիսկոպոսեն վանահայր կարգվելով, գյուղի քահանայի փիլոն վար առնելով եկեղեցվո դուռ գոցելով և ինքն գյուղերն երթալով վերջի անարգության և անպատվության մեջ թողած էր զվանքն, մեր սրտի կսկիծեն և մորմոքմանեն ստիպյալ գրեթե բռնի եկեղեցվո դուռ բացինք, լուսաբուխ և հրաշալի սուրբ գերեզման առաքելույն երթալով մեր ուխտ կատարեցինք և սրբոյն առաքելու տոն մեծահանդես շքեղությամբ կատարելով թե նույն շաբաթ և թե կիրակին պատարագ մատուցանել տալով հոգևորապես մխիթարեցանք, քանզի ուղեկից ունեինք չորս քահանայք, երկու վարդապետ, տասնեն ավելի համեղաձայն դպիրք, բայց հայնմ օրե և այսր

վշտանալով կվշտանամք վանքի ամայության վերա և թե զիարդ հայրապետք, եպիսկոպոսք, վարդապետք և քահանայք և հավատացյալ աշխարհիկ ժողովուրդք մոռացյալ են 'ի սրտե և ըստ ամենայնի բարձիթողի արարյալ են այն առաքելական սուրբ վանքն և աթոռն, որո անվամբ հանապազօր կպարծին և զանվան նորա իբրև նախկին լուսավորիչ հիշատակին 'ի աղոթս։

Այժմ Բարդուղիմեոս Առաքելու վանից վանահայրության պաշտոն կվարե Քաջբերունցի Եղիազար ծայրագույն վարդապետ, որ Դավրիժու վիճակավոր Սահակ եպիսկոպոսեն և իբրև նորին փոխանորդ 9 տարի Թադեոս առաքելու վանից վանահայրություն և 15 տարի է Բարդուղիմեոս առաքելու վանից վանահայրության մեջ է։

Եղիազար վարդապետ թեև ուսանողություն չունի և դպրոցական ուսման չի հանդիպելով միայն հասար[ակ] ընթերցմունք ձեռք բերած է, սակայն ինքն անձնյա է, քաջասիրտ, ժիր, գործունյա, ճարտարական ճարտարամիտ, խորագետ և կենցաղագիտության մեջ հառաջընթաց, տնտեսագիտության և ժրաջանության մեջ մեր եկեղեցականաց մեջ առաջին կրնա համարվիլ, սա ոչ թե իբրև վանահայր վանքի տընտեսական և բովանդակ երկրագործական մշակություն հառաջ վարելով բաղում արդյունս սերմանց կշտեմարանե վանքիս մեջ, այլ իբրև առաջնորդ Աղբակու գավառին եկեղեցվո հոգևոր բոլոր իրավասության հրամանահան է և ժողովրդյան բովանդակ քաղաքական գործեր կառավարության ժողովոց մեջ խոհական իմաստությամբ և զորությամբ կատարելով՝ հայոց իրավանց զորեղ պաշտպան և ախոյան է։ Եթե այսպիսի բնական ձիրք և հատկություն ունեցող անձինք 'ի մանկութենե ուսման և հայրենասիրության հրահանգվելով հառաջադիմեին, մեծ պատվար և ամուր պարիսպ կլինեին հայոց ազգին և աշխարհին։

Վանքի բոլոր հասույթ և եկամուտ սույն վանահոր ձեռքն է, որով թե կամենա 20 տղա կրթելու ժառանգավորաց դպրոց մի բանալ, հանցանք ոչ թե վանահոր է, այլ ազգային վարչության, որ չհարկադրեր այսպիսի վանահորք ազգօգուտ ձեռնարկությունից, այս մասին հետո պիտի գրեմք։

Վանքի միաբանք են՝ երկու ծերունի աղքատ և ախտավոր անձինք, չորս հասակավոր տղայք սպասավոր, վանահոր իբր միաբանք։ 4 տընտես ամառ և 2 ձմեռ, մի Պետրո[ս] անունով վերակացու, 11 մշակ։ Իսկ անասնեղենք 400 ոչխար, 24 գոմեշ, 12 կով, 8 հատ մատակ, 5 ձի։

Բարդուղիմեոս առաքելու թեմական վիճակ 'ի նախնյաց անտի հատ-

կացյալ Աղբակու երկրի հայոց գյուղեր, Հեր և Զարեանդ գավառի հայոց քաղաքներ և գյուղեր, Ջտամաթ, այն է՝ Ջուլամերկա հայոց գյուղեր։ 26 հայ գյուղ [կա] Աղբակ գավառի մեջ, 24 գյուղ 'ի Սալմաստ, 5 գյուղ Ջուլամերու մեջ, 2 գյուղ գավառի մեջ, Ուրմի գավառի մեջ 17 գյուղ։

ա. թեմ Աղբակ գավառ

Աղբակ գավառի գյուղորայքն են։ Ա. Պաշգալա, տունք հայոց 'ի նմա 80, եկեղեցին փայտաշեն՝ սուրբ Ստեփանոս, 2 քահանա՝ տեր Արիստակես, տեր Պողոս, կա 'ի նմա փոքրիկ դպրոց, 20 [ի] չափ աշակերտք հասարակ ընթերցմունք կուսանին։ Բ. Առակ գյուղ, տունք հայոց 40, եկեղեցին սուրբ Հովհաննես՝ սրբատաշ քարամբ գեղեցկաշեն, 1 քահանա՝ տեր Դանիել, որ 5—6 տղայոց հասարակ ընթերցմունք կուսուցանե, երբ ժամանակ ունենա։ Գ. Պաղ գյուղ, տունք հայոց 42, եկեղեցին՝ սուրբ Հովհաննես, սրբատաշ քարամբ և գեղեցկաշեն, 1 քահանա՝ տեր Տիմոթեոս հեղաբարո, որ 5—6 տղայոց հասարակ ընթերցմունք կուսուցանե։ Դ. Ցիրիսան, տունք հայոց 37, Աստվածածին եկեղեցի փայտաշեն, 1 քահանա՝ տեր Հակոբ, դասատու և դպրոց չունի։ Ե. Երբնկան, տունք 60, եկեղեցին՝ սուրբ Ստեփաննոս, սրբատաշ և գեղեցկաշեն, 1 քահանա՝ տեր Գրիգոր, որո որդին՝ տիրացու Աստվածատուր, միշտ կջանա հասարակ ընթերցմունք ուսուցանել դեղի տղայոց, բայց գյուղացիք ուսումնասեր չլինելով տղայք չեն հանձներ։ Զ. Վանքի գյուղ, տունք հայոց 61, գյուղի եկեղեցին որմեր փոքր-ինչ բարձրացուցեր են գյուղացիք, բայց գյուղի միջի քուրտեր արգելք լինելով չեն կրցեր ավարտել շինվածն, ուստի սուրբ Առաքելոց եկեղեցին կհաճախեն գյուղացիք՝ աղոթ և պաշտոն կատարելու։ Վանքի գյուղն ունի 2 քահանա՝ տեր Գեորգ, որ ըստ անուն յուրո է քաջ զինակիր և ձիավոր։ Տեր Հուսիկ, որ ընթերցման մեջ կաղ կարշավե։ Հիշյալ երկու քահանայից վիճակ գժբախտ է՝ վասն այրեցյալ լինելու։

Է. Հասփստան, տունք 31, եկեղեցին՝ սուրբ Հարություն, սրբատաշ և գեղեցկաշեն, քահանա և դպրոց չկա, վանքի գյուղի տեր Գեորգ կհովուե զժողովուրդն։ Ը. Խաչատոն, տունք 17, եկեղեցին սրբատաշ, քահանա և դպրոց չկա, Բաղա տեր Տիմոթեոս կհովուե զժողովուրդն։

Թ. Մալգավա, տունք 16։ Եկեղեցին սուրբ Խաչ, փայտակերտ, քահանա և դպրոց ոչ գոյ։ Պաշգալայու տեր Պողոսն կհովուե զժողովուրդն։ Ժ. Սորան տունք 8, եկեղեցի, դպրոց և քահանա ոչ գոյ, Պաշգալայու

տեր Արիստակես կհովուե զժողովուրդն։ Ժա. Փիս, տունք 13, եկեղեցին սուրբ Աստվածածին, փայտաշեն, քահանա և դպրոց ոչ գոյ, Առակու տեր Դանիել կհովուե զժողովուրդն։ Ժբ. Ալաս, տունք 15, եկեղեցին Թուխմանուկ, քահանա և դպրոց ոչ գոյ, դարձյալ տեր Դանիել կհովուե։ Ժգ. Աքնիս, տունք 2, եկեղեցի, Դպրոց և քահանա ոչ գոյ, դարձյալ տեր Դանիել կհովուե։ Ժդ. Լալկոր, տունք 5, քահանա, դպրոց և եկեղեցի ոչ գոյ, դարձյալ տեր Դանիել կհովուե։ Ժե. Պատկան տունք 6, եկեղեցի, քահանա և դպրոց ոչ գոյ, Պաղա տեր Տեմոթեոս հովուե։ Ժզ. Մժնկերտ, տունք 24, երկու եկեղեցի, սուրբ Աստվածածին և սուրբ Գեորգ սրբատաշ և գեղեցկաշեն, 1 քահանա՝ տեր Գարեգին, դպրոց և ուսուցիչ չկա, զի քահանայն ծերունի է և խղճալի։ Ժզ. Պապլասան, տունք 12, եկեղեցին՝ սուրբ Հովհաննես սրբատաշ, Մժնկերտու տեր Գարեգին կհովուե զժողովուրդն։ Ժէ. Փարս, տունք 9, եկեղեցին՝ սուրբ Խաչ փայտաշեն, դարձյալ տեր Գարեգին կհովուե զժողովուրդն։

Ժը. Զակավք, տունք 2, եկեղեցի և քահանա ոչ գոյ, դարձյալ տեր Գարեգին կհովուե։ Ժթ. Աշկերտ, տունք 6, եկեղեցին՝ սուրբ Աստվածածին փայտաշեն, քահանա ոչ գոյ, Երնկանու տեր Գրիգոր կհովուե զժողովուրդն։ Ի. Կարապուլի, տունք 14, եկեղեցի, դպրոց և քահանա ոչ գոյ, դարձյալ տեր Գրիգոր կհովուե։ Իա. Զուխ, տունք 11, եկեղեցին՝ սուրբ Հովհաննես փայտաշեն, քահանա ոչ գոյ, Երեսանա տեր Հակոբ կհովուե։ Իբ. Ալալիսն, տունք 4, եկեղեցի, քահանա ոչ գոյ, տեր Հակոբ կհովուե, հիշյալ Ալալիսն գյուղեն քիչ մի հեռի է Հակովիկ բաղմահատ նահատակի գերեզման, որո վերա շինված է սրբատաշ և գեղեցկաշեն եկեղեցի, զոր այլազգիք հափշտակելով մղկիթ են դարձուցեր։ Սուրբ վկայի գերեզմանին ուխտի կերթան հայք, ասորիք, տաճիկ, քուրտ և հրեայք։

Իգ. Ասուլան, տունք 3, եկեղեցի, քահանա ոչ գոյ, Պաշգալայու տեր Արիստակեսն կհովուե։ Իդ. Քելակոմ, տուն 4, եկեղեցի, քահանա ոչ գոյ, տեր Տիմոթեոս կհովուե։

Իե. Սորատեր գյուղ, սույն գյուղի արևելյան կողմ մի արտաշափ գյուղեն հեռի ընդարձակ դարավանդի վերա շինված է սուրբ Էջմիածին անվամբ վանքն, որո շինվածք Աղթամարա սուրբ Խաչի տաճարի ձևույն հար և նման է, բաց 'ի կաթուղիկեեն։ Սպիտակ և սրբատաշ քարամբ շինվելու աղագավ, ի քրտաց Սորատեր կոչված է։ Տաճարի մեծություն, բարձրություն, շքեղություն զմարդն 'ի հիացումն ածե, մի օր սույն տաճարի մեջ նստելով զարմացանք նորա մեծագործ շինվածոց վերա և

ողբացինք նորա ամայության և անտերության վերա, զի թեպետ տաճարն ողջանդամ կեցած է կանգուն, սակայն գավիթն և սենյակք ամենք խոնարհած ընկած են, քանի տարի առաջ բարբարոս քուրտեր նստած են եղեր մեջ վանքին։ Պաշկալեցի միրի Մարտիրոս աղան Հեքարու պարոնի ձեռամբ բռնավոր քուրտ որտաք վարեր է, 6 տարի առաջ տիգրանակերտցի ծերունի Գրիգոր վարդապետ տքնալով վանքի ամայության ինքներին գութ ածելով վանքի շքեղության վերա և իբրև վանահայր բազում տառապանք կրած է, վանքն նորեն պայծառացուցանել վանականոք և միաբանոք, սակայն մեռանելով փափագն անկատար է մնացեր։ Ըստ որում Սորատեր գյուղացիք ոչ եկեղեցի և ոչ քահանա ունին, ուստի յուրյանց եկեղեցապատկան պաշտամունք հիշյալ Էջմիածին տաճարի մեջ կկատարեն։ Մժնկերտու տեր Գարեգին երեք ժամ երթալով սորատերցվոց պսակ մրկություն կընե և ննջեցյալ կթաղե, տարի[ն] երկու-երեք պատարագ կընե գյուղացվոց և կվերադառնա յուր գյուղն։ Հիշյալ վանքի շրջապատ մեծ քաղաքի մի ավերակներ կնշմարվի և սորատերցի գյուղացիք ևս կստուգեն քաղաքի հնություն և մեծություն, բայց անուն չգիտեն, հնախոսության նայելով սույն ավերակ հայոց Հաղամակերտ քաղաքի ավերակն է։ Ծերունի մարդիկ տեսած են վանքի շքեղություն և հարստություն, տեսած են վանահայր վարդապետ և միաբանք։ Այս վանքն է ընդ իշխանությամբ Բարդուղիմեոս Առաքելո վանից վանահոր, 4 գյուղ թեմ ունի, որ արդյունքն կստանա Առաքելո վանից վանահայր։ Սալմաստա երկրեն սուրբ Խաչին բազմաթիվ ուխտավորք կդիմեն հիշյալ Էջմիածին վանք, նույնպես ամարան մյուս կիրակիք և 3—4 հազար ղուրուշի արդյունք կնվիրեն վանքին։ Արդյունք գյուղի երեսփոխանի և գյուղացվոց ձեռք կմնա իբրև հափշտակող մի։ Վանքի գյուղեն մի տիրացու ունին իբրև վարժապետ, որ 15 տղայի հասարակ ընթերցմունք կուսուցանե, հիշյալ տիրացուին դպրության աստիճան տալով պատվիրեցինք, որ ամեն օր տաճարի դուռ բանալով հանդերձ աշակերտոք ժամասացություն ընե, մինչև տեր այցելություն առնելով հայոց ազգին, կամ իմ քահանա շնորհե գյուղացվոց, կամ մի վանահայր՝ վանքին։

Խանճալիս գյուղի մեջ կա մի սրբատաշ վայելչաշեն եկեղեցի՝ սուրբ Սարգիս անվամբ, գյուղի հայ բնակիչք գաղթելով՝ գյուղն քրտաբնակ է եղեր, Վանա Թամուր օղլիք գյուղի հողեր թափու ընելով 20 տուն քուրտ բերեր բնակեցուցեր են, հոյակապ եկեղեցին մնացեր է քրտաց մեջ, որ անարգության և անպատվության առարկ է դարձեր քրտաց։

Աշտարակու սուրբ Աստվածածին, որ ձորակի մեջ լերան ստորոտ շինված է, մերձակա գյուղացիք բարբարոսաց բռնության չդիմանալով Առակ գյուղ գաղթեր են, սրբատաշ և գեղեցկաշեն տաճար մնացեր է ամայության մեջ, բայց այս Աստվածածին հրաշալի լինելով ինքն իրեն կպահպանե, զի այլազգիք քանիցս սաստիկ պատուհաս կբելով, ոչ նորա մերձակա ծառաստանեն փայտ կտրելո կհամարձակին, ոչ նորա անդաստանաց կարեն վնաս հասուցանել, վերափոխման սուրբ Աստվածածին ուխտավորաց բազմություն կհավաքվի հիշյալ սուրբ Աստվածածին ուխտ, արդյունքն մի աշխարհական կստանա, որ Առակա մեջ կբնակի, ըստ որում հիշյալ տաճար այդ աշխարհականի նախնիք շինած են։

Երնկանու սուրբ Աստվածածին, որ դարձյալ գեղեն հեռի վայելուչ վայրի մեջ շինված է, ունի սր[բ]ատաշ և գեղեցկաշեն տաճար, ուր դարձյալ վերափոխման աստվածածնի շաբաթ օր ուխտավորաց բազմություն կհամահավաքվի։ Սուրբ Աստվածածին, որ մերձակա գյուղն ավերակ լինելով, ինքն մնացած է բլրակիմ վերա, պաշկանանցիք հաճախ ուխտի կերթան սուրբ տաճարին, արդյունք Պաշկալայու քահանայք կստանան։

Բ. Թեմ Զուլամերկա՝ 5 գյուղորայք, որ վանքեն 14 ժամ հեռի է։ Ս. Միական, տունք հայոց 37, եկեղեցին՝ սուրբ Ստեփաննոս, քարաշեն և վայելուչ, 1 քահանա՝ տեր Նիկողայոս։ Բ. Խալիչան, տունք 15, եկեղեցի և քահանա ոչ գոյ, կհովուե դարձյալ տեր Նիկողայոս։ Գ. Սիրհան, տուն 2, եկեղեցի և քահանա ոչ գոյ և դարձյալ տեր Նիկողայոս կհովուե։ Դ. Խանս, տունք 4, եկեղեցի և քահանա ոչ գոյ, դարձյալ նույն քահանայն։ Ե. Քերուն, տունք 8, եկեղեցի և քահանա ոչ գոյ, դարձյալ տեր Նիկողայոս կհովուե։

Գ. Թեմ գավառ Կոչեցյալ Նահանգի 2 գյուղորայք ա. Տղա, տունք հայոց 80, եկեղեցին՝ սուրբ Հովհաննես, սրբատաշ և գեղեցկաշեն, քահանան՝ տեր Երեմիա, դպրոց և ուսուցանող ոչ գոյ։ բ. Գարբել, տունք 36, եկեղեցին՝ սուրբ Աստվածածին, սրբատաշ և վայելչաշեն, քահանա՝ տեր Թումա, դպրոց և ուսուցանող ոչ գոյ, հիշյալ գավառու երկու գյուղք, Մարասատանի մերձակա լինելով, քրտաց բազմաթիվ գյուղերեն շրջապատված են և տասն ժամավ հեռի են առաքելական վանքեն։

Գ. Թեմ Հեր և Զարևանդ, որ է՝ Սալմաստ 7 ժամ հեռի 'ի վանից դեպ 'ի արևելս։

Որմի

1 Կարապաղ, 2 Հաճալաէ, 3 Իքիաղաճ, 4 Պատլպու, 5 Իսղու, 6 Նախճբ-վան թափա, 7 Ռահվա, 8 Պապառու, 9 Տարպառու, 10 Թամանթար, 11 Ուշթափա, 5 գյուղի անուն մնաց, Ասմայի 12 Հալեան։ Սալմասու գյուղեր, 1 Սալմաստ, 2 Սավրի գյուղ, 3 Քապի, 4 Յախվերան, 5 Հին քաղաք, 6 Ճարա, 7 Հաճուվաճ, 8 Ղուաճակ, 9 Մահլան, 10 Սառնա, 11 Ուշա, 12 Հավթվան, 13 Պտիշկ, 14 Աղիս մայիլ, 15 Աղթախանց, 16 Կղլճա, 17 Շեյթանատա, 18 Քալաշան, 19 Կալասար, 20 Փայաճուկ, 21 Այան, 22 Վարդան, 23 Սորամերիկ, 24 Խոսրովա[1]։

[1] Այստեղ ձեռագիրն ընդհատվում է (Հ. Պ.)։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պոնտոս քաղաք, հնում այդպես են անվանել Տրապիզոնը. այդ վիլայեթը XIX դարի 80-ական թվականներին բաժանված էր 4 սանջակի՝ Տրապիզոնի, Լազիստանի, Գյումուշհանեի, Ջանիկի։ 1890-ական թվականներին Տրապիզոնն ուներ 8 հազար հայ բնակիչ։ Քաղաքում կային նաև զգալի թիվ կազմող մահմեդականացած հայեր։ XIX դարի վերջերին և XX-ի սկզբներին Տրապիզոնի նահանգում ապրում էին 120 հազար հայեր («Մշակ» № 128, 7 նոյեմբերի 1895 և № 247, 6 նոյեմբերի 1913)։

2. Պալլարյան Համազասպ—Կարինի գրագետ և աղքեցիկ բնակիչներից մեկը, որը 1876 թ. թուրքական սահմանադրության հռչակումից հետո երկու անգամ ընտրվեց պառլամենտի անդամ (Կարինից)։ Պալլարյանը հույն, հայ և մի քանի մահմեդական դեպուտատների հետ միասին պառլամենտի նիստերում քննադատում էր կառավարությանը՝ գավառներում կառավարական պաշտոնյաների և քուրդ վերնախավի կողմից ժողովրդի նկատմամբ բռնություններ գործադրելու, կաշառակերության, գեղծարարությունների և հարստահարությունների համար։ Դեպուտատների այդ խումբը պահանջում էր վերահսկողություն սահմանել երկրի ֆինանսների վրա, զսպել գեղծարար և կաշառակեր պաշտոնյաներին, ինչպես նաև քուրդ վերնախավին։

3. Կինեվիզյան Հարություն—Կարինի բնակիչ, որի մասին այլ տեղեկություններ չկարողացանք ձեռք բերել։

4. Սամսոն—նավահանգստային քաղաք Սև ծովի հարավային ափին։ 1878 թ. այնտեղ ապրում էին 760 հայեր, որոնք ունեին երկու վարժարան, ուր սովորում էին 56 տղա և 36 աղջիկ (Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, հ. 1, Կ. Պոլիս, 1884, էջ 5)։

5. Հակոբ եպիսկոպոս Ճգնավորյան Թոքատեցի, 1864—1880 թթ.—Թոքատի հոգևոր առաջնորդն էր, իսկ մինչ այդ ս. Աննայի վանքի վանահայրը։ Մ. Փորթուգալյանին համագործակցելու պատճառով հարձակումների է ենթարկվել տեղի աղաների կողմից։ 1873 թ. փետրվարին ստիպված հրաժարվել է հոգևոր պաշտոնից։ Երբ 1878 թ. Գ. Սրբվանձտյանցը այցելեց Թոքատ, գտավ, որ նա թերանում է իր պարտականությունների կատարման մեջ և գրեց. «...քաղ. եւ կրօնական ժողովներ անուանական, ուսումնական և տնտեսական խորհուրդ չկա, տումարներու եւ արձանագրութեանց երեսը չտեսանք, ընկերութիւնները լքեալ, վարժարանները փակեալ» (Թորոս աղբար, հ. 1, էջ 89)։

6. Փորթուգալյան Մկրտիչ (1848—1921)—ծնվել է Կոստանդնուպոլսում, որտեղ էլ ստացել է սկզբնական կրթությունը, ապա սովորել է Գում Գարուի վարժարանում։ 1869—72 թթ. Եվդոկիայում (Թոքատ) ուսուցիչ եղած տարիներին բախվել է տեղի հետամնաց տարրերի հետ և ստիպված վերադարձել Կոստանդնուպոլիս, ուր խմբագրել է «Ասիա» թերթը։ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից առաջ Վասպուրականի Ալյուր գյուղում հիմնել է դպրոց։ Պատերազմի ժամանակ փոխադրվել է Թիֆլիս, իսկ

նրա ավարտից հետո՝ Վան, որտեղ բաց է արել փարժապետանոց, ապա կեդրոնական վարժարանը։ 1885 թ. թուրքական իշխանությունների հալածանքի պատճառով հեռանում է Վանից և բնակվում Ֆրանսիայի Մարսել քաղաքում, ուր հրատարակում է «Արմենիա» թերթը։

7. Մյուսի միասդալին—թուրքական պաշտոնյա։

8. Ամասիա—քաղաք Թուրքիայում, որը XIX դարի վերջին ուներ 12 հազար հայ բնակիչ, որոնք հիմնականում առևտրականներ և արհեստավորներ էին։ Քաղաքում գործում էին մի շարք կրթական և մշակութային ընկերություններ։

9. Եվդոկիա (Թոքատ)—Ծերասոբայի (Սվազ) վիլայեթի 5 սանջակներից մեկի վարչական կենտրոնը։ Սանջակն ուներ 3 կազա (գավառ)՝ Արպա, Զիլէ, Նոր Կեսարիա կամ Նիքսար։ Քաղաքում լուսավորչական հայերի թիվը 1880-ական թվականներին հասնում էր 8819-ի, քրիստոնյա հույների և հայ կաթոլիկների ու բողոքականների թիվը՝ 2600-ի։ Թոքատի վարժարաններում 1880-ականներին սովորում էին 205 տղա և 15 աղջիկ (Դ. Սուվանճոյանց, Թորոս աղբար, հ. 1, էջ 96)։

10. Վրդանես, Վրթանես Տեկանց, Տեր Սարգսենց, Տեր Սարգսյանց (1850—1915)—Երեմիա Տեկանցի եղբայրը։ Ուներ վարդապետի աստիճան, ուսուցիչ էր Վարագի ժառանգավորաց վարժարանում, հմուտ՝ հայկական երաժշտությանը։ 20 տարի վարել է Վարագի վանքի վանահայրության պաշտոնը։ 1915 թ. եղեռնի օրերին զոհ գրաված թուրքական ջարդարարների սրին։

11. Արիստակես Տեկանց, Տեր Սարգսենց, Տեր Սարգսյանց (1849—1896)—Տեկանց Երեմիայի եղբայրը, գրող-բանահավաք։ Գրել և հրատարակել է «Պանդուխտ Վանցին» (Կ. Պոլիս, 1875) և «Հայերգ» (Թիֆլիս, 1883) գրքերը։ Նրա ձեռագիր ճանապարհորդական նոթերը («Այցելություն ի Հայաստան 1878 թ.») մենք հրատարակել ենք 1935 թ., նույն վերնագրով։

12. Զարշամպա—վայր, որն ընկած է Տրապիզոնից դեպի արևմուտք։

13. Ամբակումա հրեշտակ—Աստվածաշնչում նշված մարգարեներից մեկը։

14. Քիշառոն—Սև ծովի հարավային ափին ընկած փոքրիկ նավահանգիստ։

15. Կյումուշխանա կամ Գյումուշհանե—փոքրիկ քաղաք, որը գտնվում էր Տրապիզոնի վիլայեթում, համանուն գետակի ափին։ Այդտեղ կային արծաթի, կապարի, ոսկու և պղնձի հանքեր, որոնք շատ հին ժամանակներից մշակվում էին։ Քաղաքը հույների կողմից ստացել էր Արգիրո-կաստրոն (արծաթի քաղաք) անունը։

16. Երիտասյան միլլաթի—էրմանի միլլաթի (Թրք.), քրիստոնյա ժողովուրդ, հայ ժող[illegible]։

17. Ռայա (ռոիաթ)—Մերձավոր արևելքի և Բալկանյան մի շարք երկրների վրա իրենց տիրապետությունը հաստատելուց հետո թուրք քոչվորական ցեղերը իրենց հայտարարեցին աղնիվ ցեղ, իսկ հպատակ ազգերին՝ ռայա, որոնք իրավունք չունեին ձի հեծնելու, զենք կրելու, բանակին զինվորներ տալու, որի կապակցությամբ նրանք զինվորագրության փոխարեն հարկ էին վճարում, դատարաններում նրանց վկայությունները չէին ընդունվում, նրանք պարտավոր էին միայն աշխատել և հարկեր տալ պետությանը։

18. Բաբերդ, Բայբերդ, Բայբուրթ—Ճորոխ գետի ափին ընկած հայաշատ քաղաք։ XIX դարի վերջին ուներ 11 հազար հայ բնակիչ։

19. Ցղում ի ոտնա (բառ նե) կեավուրլար (Թրք.)—այս ինչ անհավատներ են։

20. Պեհիվզիր—այսինքն՝ ստամոքսի խանգարում։

21. Զաքեոս—այս անունն առաջին անգամ հիշվում է Աստվածաշնչի մեջ։ Զաքեոսը մաքսապետ էր և հարկահան։ Նրա մոտ ինչ-որ ափթով հյուր է եղել նաև Քրիստոսը։

22. Բյուրական կամ Բյուրակնյան—թուրքական տիրապետության հաստատումից հետո այդ լեռներն անվանեցին Բինգյոլ (հազար լիճ) լեռներ։

23. Կոր կամ Կոփ գյուղ—Մշո երկու Բալանըխների վարչական կենտրոնը։

24. Մահտեսիներ—այդպես էին անվանում Երուսաղեմ ուխտի գնացածներին։

25. Էֆենդի—հունական աղավաղված բառ, իսկականը աֆանդիկոս, նշանակում է մեծատուն, հարգված մարդ («Հին օրեր և այդ օրերուն հայ մեծատունները», գրեց Յ. Դ. Մրմրյան, Վենետիկ, 1901, էջ 11)։

26. Պուրթու կամ Բուրթուլթու (Թրք.)—գրավոր հրաման, կարգադրություն («Բարձրագույն դռնեն պատրիարքարանը պուրթուլթու եկավ...», տե՛ս «Հայաստան», Կ. Պոլիս, 13 նոյ., 1848)։

27. Երզնկա—քաղաք Արևմտյան Հայաստանում, Եփրատի ափին, համանուն սանջակի վարչական կենտրոնը։

28. Կարնո Կարապետ եպիսկոպոս—խոսքը Բարձր Հայքից 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայերի գաղթը կազմակերպող հունուտցի Բագրատունի Կարապետ եպիսկոպոսի մասին է։

29. Սոմարի հող—այսինքն՝ ովյալ հողամասում ինչքան սոմար սերմ էր ցանվում։ Մի սոմարը հավասար էր 16 քիլայի կամ 384 օխայի կամ 30 փթի, այլ տեղերում 15—16 փութ (տե՛ս Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում 1856—1914, Երևան, 1965, էջ 305—306)։

30. 12 կոտ սերմ—կոտը տարբեր տեղերում ուներ տարբեր տարողություն. օրինակ՝ Էրզրումի վիլայեթում 1 կոտը 37,5 փութ էր (տե՛ս Ա. Ս. Համբարյան, նշվ. աշխ., էջ 306)։

31. Բաբերդի (Բայբուրթ) անցք—նկատի ունի այդ օրերին Բաբերդում թուրքական իշխանությունների դեմ ուղղված հայերի մի ելույթը։

32. Իսլահաթ մեմուրի (is'a'a , Թրք.)—բարենորոգումներ իրականացնող պաշտոնյա։

33. Քղեցիները ոտքի ելան—այս էջի ընթերցումից երևում է, որ այդ օրերին Քղիի հայ բնակիչները, չտանելով իրենց տնտեսական և իրավական ծանր վիճակը, ընդվզել են թուրքական իշխանությունների դեմ, որը գլխավորել են երկու երիտասարդ վարդապետներ։ Կառավարությանը հաջողվել է շատ կարճ ժամանակում բանտարկությունների միջոցով մարել այդ ելույթը։

34. Տոմարակալ—հաշվապահ։

35. Թուլումպա(Թրք.)—պոմպ, որով ջուր էին մղում հրդեհը հանգցնելու համար։

36. Կավուր ազմիշ (ազմըշ) իտի, խանսրն (յանգրն) կյավուրուն մալի (Թրք.)—անհավատը կատաղել է, թող այրվի նրա ունեցվածքը։

37. Օ՛հ քանտրին (յանգրն) բյաֆիրին մալի (Թրք.)—օ՜խ, անհավատի ունեցվածքը այրվեց։

38. Ոտք և կանգուն—երկարության չափեր են։ Ոտքը հավասար է 32—33 սանտիմետրի (տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. 3, էջ 577), իսկ կանգունը «ըստ հասարակ առման՝ չափ միջոցի յարմնկանէ ցծայր

միջնամատին որշափափ է յուսոց ցարմունկն, այսինքն՝ երկու թզաչափ» («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա, էջ 1048)։

39. Պաշլըխ կամ տեմի—Թուրքերից և քրդերից հայերին փոխանցված սովորություն (բառացի նշանակում է գլխագին)։

40. Հոխա (Թրք.)—ծանրության չափ, հավասար է 1,283 կգ-ի (տե՛ս Турецко-русский словарь, М., 1977, стр. 685) կամ հոխան հավասար է 400 գրամի։

41. Մուխարա կամ Մուգաթա—այդպես էր կոչվում հոգևոր այն հարկը, որ գավառների հոգևոր թեմերը հավաքում էին եկեղեցիներից ու վանքերից և ուղարկում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարան, իսկ վերջինս տալիս էր Թուրքական պետությանը։

42. Մախթու—այդպես են անվանվել Թուրքական տեղական պաշտոնյաների այն ապօրինի հարկերը, որ նրանք դրել էին հայկական վանքերի և մենաստանների վրա։ Ն. Տեկանցի վկայությամբ Հասան-գալայի (Մազիսարոսի) վանքը տարեկան 500 դուրուշ մախթու էր վճարում տեղի Թուրք կառավարչին։

43. Կարմիր գլուխ—այդպես էին անվանում զղջաչներին։

44. Քեհյայք կամ համբայք—քեհյաներ էին անվանում գյուղերի կառավարիչներին կամ տանուտերերին, իսկ համբաներ՝ հարուստ և ազդեցիկ գյուղացիներին։

45. Վերաբերում—պատարագի ժամանակ բնծան խորանից հանդիսավոր կերպով բեմ բերելը՝ քահանային հանձնելը, կոչվում էր վերաբերում։

46. Պաշի քեշիշ (Թրք.)—ավագ քահանա։

47. Դալի Պապա մեղրի (մեղրը—Թրք.)—Դալի Բաբայի վերեզմանը։

48. Թաբան (Թրք.)—վերեզմանի վրա կառուցած սրբավայր։

49. Վախըֆ (վազրֆ—արաբ., Թրք.)—նշանակում է այն ունեցվածքը, որ տրված էր կամ նվիրված էր սրբավայրերին։ Այսպես, սուլթան Մուրադ Չորրորդի ֆերմանով Զեյթունը համարվում էր վազրֆ և պարտավոր էր տարեկան 15 հազար դահեկան հարկ վճարել Այա Սոֆիայի տաճարին՝ կանթեղների ձեթ ձեռք բերելու համար։

50. Գաբչիպաշի—Կատուքի պաշի (Թրք.)—դռնապանապետ։

51. Ֆակիրներ—Ֆախիներ (Թրք.)—կարգացողներ։

52. Շաֆի—այդպես էին անվանում մուսուլմանական սյունի կրոնին պատկանողներին։

53. Կափ քիլիսա, Կոշա քիլիսա, Եղեքիլիսա (7 եկեղեցի), Ուչքիլիսա, Ղարաքիլիսա, Այաքիլիսա, Կարակուտուբ—Թուրքական տիրապետության հաստատումից հետո հայկական եկեղեցիներին տրված անուններ։

54. Մաքտապի հարպիա (մաքտաբի հարբիյե—Թրք.)—զինվորական դպրոց։

55. Իլմիխաբար (ilmühaber—Թրք.)—վկայական, իրավաթուղթ։

56. Սիպահիներ (սիպահի-խպահի—պարս.)—բառացի նշանակում է հեծյալ զինվորներ։

57. Մալուլ-Թափու—հողօգտագործման ձևեր։ Թափու հողերը պետական համապատասխան փաստաթղթերի հիման վրա տրվում էր որևէ մեկին։ Մահլուլ հողեր էին անվանում լքված հողերը։

58. Գայիթ հանել (կայիթ անել—արաբ.)—արձանագրել, հաշվառման ենթարկել։

59. Հաճի պեկթաշներ (բեկթաշներ) մուսուլմանական աղանդավորական համայնքի ներկայացուցիչներ։

60. Չալապի (Թրք.)—ազնվականական տիտղոս, վաճառական, գրագետ, պատվավոր մարդ։

61. Ռեալիսիոն մը հանել—(ֆրանս. religion կամ religiane—Թրք.)—գծագրական բյուրո, այսինքն՝ գծագիր։

62. Գվայի Շարգիայի մեջ հրատարակել—հավանաբար նկատի ունի Կարինում 1866—1877 թթ. հրատարակվող Թուրքերեն թերթը («Էնվարը Շարգիե», «Ճառագայթ»)։

63. Ումեմն Զամիշ, ումեմն Արսեն, ումեմն Գարագաշ, ումեմն Փափազյան—նկատի ունի Միքայել Զամչյանի, Արսեն Բագրատունու, Անտոն Գարագաշյանի և Մեսրոպ Փափազյանի հայոց լեզվի քերականության դասագրքերը։

64. Խոջաշեն հողեր—պետական հողեր։

65. Թափու մեմուրի—վիլայեթների փաշաներին կից այս անունով մի գրասենյակ կար, որը վարում էր ժողովրդի կալվածական գործերը, գնահատում էր կալվածքները և միաժամանակ գրաղվում էր հողերը թափու անելով (որևէ մեկի վրա գրելով)։

66. Երկու կոտոց արյուն—իբրև թե լվերը մի գիշերվա ընթացքում ճանապարհորդներից երկու փոքրիկ կոտ արյուն են հանել։

67. Քղեցիները ազատվեցին բանտից—նկատի ունի այդ նույն օրերին Քղիում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ բանտից ազատվածներին։

68. Մյուֆթիշի հեքիմ (Թրք.)— գավառական քննիչ։

69. Տեքիոմի խորհուրդ—Թուրքական կուսակալին կից խորհուրդ։

70. Գաբու օղլան (Թրք.)—տղա թարգմանիչ։

71. Վահապետյան Հարությունը—ծնվել է 1819 թ. Եղիպտոսում։ Սովորել է և ավարտել Երուսաղեմի ժառանգավորաց, ապա Խսկյուտարի վարժարանները։ 1853—1857 թթ. պատրիարքական փոխանորդ էր։ 1857—1859 թթ. Խարբերդի առաջնորդն էր, իսկ 1859—1879 թթ.՝ Բարձր Հայքի (Կարին) առաջնորդը։ 1872 թ. սեպտեմբերի 19-ին Հ. Պալլարյանը Գ. Սրվանձտյանցին նրա մասին գրել է. «Գալով հայրենյաց՝ տիտուր է տեսարանն և ողբալի նկարագիրն, գեր. հայր Երեմեաս (Երեմիա Տեկանցը—Հ. Պ.) երեսփոխանական, քաղաքական, կրոնական և գրեթե ուսումնական ժողովներն կազմեց և գնաց։ Հարությունն եպիսկոպոս շատ երեմիաներու մորուքին խնդացեր, սաներ ու ճամբեր է» (Դիվան..., ժդ, էջ 257)։ Կարինում եղած տարիներին բացեց տղաների և աղջիկների նոր դպրոցներ, կառուցեց նոր առաջնորդարան։ 1885 թ. ընտրվեց Կոստանդնուպոլսի պատրիարք, 1888 թ.՝ Երուսաղեմի պատրիարք (տե՛ս «Բարձր Հայք», հ. Ա, գրեց Հակոբ Քոսեան, Վիեննա, 1925, էջ 139—141)։

72. Գաբուքահիյա (Kapıkahyası)—համայնքի ներկայացուցիչը Թուրքական կառավարության առջև։

73. (Ի) Ստիլամի օրենք (istiliäm Թրք.)— պաշտոնապես ծանոթություն ուղել, հարցում, տեղեկանք։

74. Թաղնիկ Գրիգորիս վարդապետ—Ալյաթճյան Գրիգորիս (1840—1899), հոգևոր-բական եպիսկոպոս, 1863 թ. Կ. Պոլսում հրատարակեց «Թաղնիկ Պեզասեան» 15-օրյա հանդեսը (տե՛ս Հայկ Տեր Ատամեանց, Բառարան հայ կենսագրության—1441—1904, Ա., Թիֆլիս, 1904, էջ 47)։

75. Կուլաղասիություն (կուլաղասի—Թրք.)—փոխհաղարապետ։ Այդպես էին անվանում նաև ոստիկանության գծով հատուկ հսկիչներին, որոնք սպասարկում էին շքաջանները (Մ. Խերանյան, Երկար-երկար ճանապարհ, Երևան, 1983, էջ 87)։

76. Արզ (Թրք.)—դիմում փոքրից մեծին։

77. Թենպելիթ (պարս.)—ձիու կաշվի բեռ։

78. Ջիզմա (տղամարդու երկարաճիտ կոշիկ) և կոնգուրա (կանացի բարձրակրունկ)։ Կարել են նաև Վանի կոշկակարները։

79. Ֆանիլա—ֆլանելե հագուստի տեսակ։

80. Կապայու շամակ (արաբ., պարս.)—հոգևորականի երկայն զգեստ, որը հագնում էին վերարկուի տակ՝ շապկի վրա։

81. (154)—Մի զամբարյի պելեթ—նկատի ունի թատրոնի տոմսը «կամարանուն»։

82. Ջիու զելան—կաշվից պատրաստված պարան (փորքաշ, թամբակալ), որի միջոցով թամբը ամրացնում էին ձիու վրա։

83. Սիճատե—փոքրիկ գորգ կամ կարպետ։

84. Մղրախ—նիզակ։

85. Այար (Թրք., քրդ.)—թամբ։

86. Ցափունճա (Թրք.)—այծենակաճ։

87. Բասենի Վարդիկ հոր կամ Վարդեհեր վանք։ Գտնվում է Կաղզվանից մոտ 20 կմ հարավ-արևմուտք, այդպես է կոչվել X դարի երկրորդ կեսին այստեղ պաշտոնավարող վանահայր, սսլերցի Վարդիկի անունով։ Վանքը գտնվում է հայաբնակ Ղարավանք գյուղի մոտ և ուխտատեղի էր (Գ. Ա.. Հակոբյան, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 112—114)։

88. Սամարա-Սամարացիք—հին բիբլիական քաղաք, որի անունով մի նահանգ կար Պաղեստինում, կառուցել է հրեա Արրահամ նահապետը։ Սամարացիները կամ շամրտացիք—Իսրայելի 10 ցեղերից մեկի մնացորդներից էին («Համառօտ նկարագիր վարուց Երեւելի արանց» ի Հ. Մինաս վարդապետ Բժշկեան Տրապիզոնցւոյ, Վենետիկ, 1850, էջ 762)։ Տեղեկություններ կան այն մասին, որ քաղաքը գրավել և քանդել է Սալմանասար 4-րդը, ապա ավերվել նրա որդի Սարգոնի կողմից։ Այս քաղաքում հին ժամանակներում ապրողները կոչվում էին սամարացիներ։ XIX դարի վերջին այն մի փոքր գյուղ էր (Энц. сл., 56. стр. 178, 190):

89. Աղաբեկյան Մարկոս (1830—1908)—ծնվել է Զմյուռնիայում, ավարտել է տեղի Մեսրոպյան, ապա Փարիզի Մուրատյան վարժարանը։ 1853 թ. Մ. Մամուրյանի հետ Զմյուռնիայում հիմնել է Աղաբեկյան վարժարանը։ 1859 թ. գնացել է Թիֆլիս և 1860 թ. հրատարակել «Կռունկ հայոց աշխարհին» պարբերականը։ 1866—1867 թթ. Կոստանդնուպոլսում հրատարակել է «Սիլն Ավարայրի» հանդեսը։ 1867 թ. որպես պետական քննիչ այցելել է Զեյթուն։ 1877 թ. պաշտոնավարել է Վանում, որպես նոր վիլայեթի փաշայի տեղակալ (տե՛ս ավելի մանրամասն Տեր Աստվածատրյանի բառարանը, էջ 63—65 կամ Մատենադարան ձեռ. № 4182, թ. 34, «Հոլիվ», № 33, 7 սեպտեմբերի, 1908 կամ Գ. Սեթեանյան, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 64)։

90. Թաքթաքյան Պողոս—Կոստանդնուպոլսի պատրիարք (1863—1869), որը կազմել է մի տոմարագիրք, որտեղ գրի էին առնված «ազգային դեպքերը և պատրիարքարանի գործառնություններն, ինչպես նաև պատրիարքական հաջորդության զավազանագիրքը», Ա. Այվազյան, Շար հայ կենսագրության, հ. 1, էջ 63։

91. Բարձումն ժամերգություն—նկատի ունի «Փա՛ռք ի բարձունս» օրհներգությունը («Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ. և երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն...» և այլն) տե՛ս ժամագիրք Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1902, էջ 206) կամ «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ և երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» («Բազմավեպ», մարտ, 1900, էջ 110)։

92. Խաչդյուտի կիրակի—Դոզդոթայում խաչը գտնվելու առթիվ եկեղեցական տոն։

93. Կալվածոց խարթան հանել տալ—Ե. Տեկանցը առաջարկում է վանքերի ունեցած կալվածքների քարտեզը կազմելու հարցը։

94. 225(2) Տաճկաց կեքիներ—ոչխարի հարկ հավաքողների մասին է խոսքը։

95. Ամերիգա (Ամերիկա) Պորտ ընկերություն—1810 թ. Բոստոնում հիմնված բողոքական միսիոներական ընկերություն («Օտար առաքելության ընկերություն», The American Board of Commissioners for foreign missions), որն անմիջապես հիմնեց իր ճյուղերը Բոմբեյում, Երուսաղեմում, Զմյուռնիայում, Կոստանդնուպոլսում։ Ընկերության նպատակը բողոքականության և այդ միջոցով նաև ամերիկյան ազդեցությունը տարածելն էր Բալկաններում՝ հույների և բուլղարների, իսկ արևելքում՝ հայերի և ասորիների մեջ։ Ընկերության գլխավոր ճյուղը կոչվում էր «Հայկական պորտ» (Armenian board)։ Ընկերությունը Կոստանդնուպոլսում հետագայում հիմնեց Ռոբերտ քոլեջը (Roberts College)։ Բողոքականների թիվը անցնում էր 10 հազարից, իսկ նրանց ազդեցության շառավիղը՝ 50 հազար մարդուց։ Ընկերության տարեկան ծախսը կազմում էր 1 մլն 700 հազար ռուբլի («Արձագանք», № 18, 24 մայիսի, 1887)։ Սկսած 1823 թ. ընկերությունը Մալթա կղզում ուներ իր տպարանը, որը 1833 թ. տեղափոխվեց Զմյուռնիա, իսկ հետո նրա կենտրոնը տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, որտեղ ուներ ամենամեծ տպարանը, ուր 6 լեզուներով տպագրվում էին կրոնական և գիտական բովանդակությամբ գրքեր («Արձագանք», № 36, 18 սեպտեմբերի, 1888)։

96. Հավատո տարածման ընկերություն—դեռևս 1623 թ. Հռոմի Գրիգոր XIV Պապը հիմնեց մի ընկերություն, որը կոչվում էր «Հավատո տարածման ս. ժողով», որը նպատակ ուներ Արևելքում տարածել կաթոլիկական ազդեցությունը։ Ընկերությունը հիմնեց իր տպարանը, ուր տպագրվում էին բազմալեզու գրքեր։ Ապա ստեղծվեց մի ճեմարան, որտեղ քարոզիչներ էին պատրաստվում Արևելքի համար։ Կաթոլիկների այս ձեռնարկությունը խիստ պաշտպանություն էր գտնում Ֆրանսիայի կողմից։ Հենց այս ժամանակից էլ սկսվեց պայքարը կաթոլիկների և լուսավորչականների միջև, որը տևեց դարեր։ Հավատո տարածման ժողովը, հայոց եկեղեցին հռոմեականի հետ միացնելու նպատակով, կանոններ մշակեց։ Նրանց երկար տարիների աշխատանքի արդյունքը եղավ այն, որ հազարավոր հայեր դարձան կաթոլիկներ։

97. Աղվանյան Գրիգորիս վարդապետ (1827—1893), ապա եպիսկոպոս, ծնվել է Վանում, ուր ստացել է իր սկզբնական կրթությունը, վարել է Մուշի հոգևոր առաջնորդի, Վանի առաջնորդական փոխանորդի պաշտոնները։ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կարսի հոգևոր առաջնորդն էր։

98. Ե. Տեկանցը նշում է, որ Կ. Պոլսի «Հայրենիք»-ի 1873 թ. 156-րդ համարում տպագրված են իր երեք նամակները, որոնք «տակավին ի պատրիարքարան չհասած դաղտնի կողացեր և հայտնի հրապարակեր են զրպարտիչ հավելվածով մի»։ Ցավոք, հայրենական գրապահոցներում մենք չկարողացանք գտնել այդ համարները, որը կպարզեր, թե ինչ զրպարտության մասին է խոսքը։

99. Պիզմարք-Բիսմարկ Օտտո-Էդուարդ Լեոպոլդ Շենհաուզեն (1815—1898), գերմանական պետական գործիչ, կանցլեր։

100. Խաչատուր Շիրոյան (1864—1895) Աղթամարի անօրինական «ընտրված» կաթողիկոսը, որը իր նախորդի՝ Պետրոս Պյուլպյուլյանի (1858—1864) կենդանության ժամանակ դրավեց նրա աթոռը և զարձավ կաթողիկոս, շատ չանցած քուրդ վիրնախապի միջոցով սպանել տալով իր նախորդին։ Կոստանդնուպոլսի պատրիարքարանից մի շարք հանձնաժողովներ ստուգեցին նրա գործը, և այդ հարցը մի քանի անգամ քննարկվեց Ազգային ժողովում, սակայն կաշառքի ուժով տարիների ձգձգումից հետո նա «արդարացավ», վերադարձավ Աղթամար և շուրջ 30 տարի նստեց կաթողիկոսական աթոռին։ Մահից տարիներ առաջ նրա շիրիմը պատրաստ էր և շիրմաքարի վրա չէր մոռացել գովեստի խոսքեր սել հայ ժողովրդի դահիճի՝ Աբդուլ Համիդի հասցեին։

101. Մյուլթազիմ—գյուղացիներից հարկ հավաքող կապալառու։

102. Իբրև Հովհաննես կիսրատեր—Հովհաննեսը Քրիստոսի աշակերտներից էր։

103. Հերովդես—Հրեաստանի 4 հերովդեսներից մեկը, որոնց մասին կան տվյալներ Աստվածաշնչում։

104. Վասպուրականի Իգնատիոս եպիսկոպոս—ակնարկում է Վասպուրականի Թոքմաջյան Իգնատիոս եպիսկոպոսին, որը 1860—1866 թթ. Վանի հոգևոր առաջնորդն էր։ 1860 թ. Մ. Խրիմյանը այդ եպիսկոպոսի, Գ. Սրվանձտյանցի և այլոց հետ այցելեց Երևան, Թիֆլիս, Ղարաբաղ, Նախիջևան և ծանոթացավ կովկասահայերի կյանքին։

105. Աղթամարի աթոռակալ Դավիթ Թոռնիկ։ 1113 թ. Աղթամարը բաժանվեց էջմիածնից՝ հիմք դնելով Աղթամարի կաթողիկոսությանը։ Աղթամարի այն ժամանակվա առաջնորդը՝ Դավիթ Թոռնիկյանը, իր հինգ համախոհ եպիսկոպոսների հետ միասին և նրանց ձեռքով «Զորավանքի եկեղեցւոյն մէջ ձեռնադրվեցաւ կաթողիկոս պատճառաբանելով թէ աթոռէ սա թագաւորացն Աւծրուենաց...» (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Գ գիրք, Պեյրութ, 1959, էջ 1351, ընդգծումները հեղինակինն են—Հ. Պ.)։ Այս կապակցությամբ Կիլիկիայի այն ժամանակվա կաթողիկոս Գրիգոր Պահլավունին հրավիրեց ժողով, որին մասնակցեցին 2500 հոգևորականներ։ Նրանք հայ եկեղեցին բաժանելու համար նզովեցին Դ. Թոռնիկյանին, սակայն կաթողիկոսությունը մնաց։

106. Քարտիցա—արկղ, որի մեջ թանկարժեք իրեր էին պահում։

107. Հովսեփ վարդապետի տեղեկագիրը—այն գրքույկը, որը հրատարակեց Կոստանդնուպոլսում Նարեկա վանքի վանահայր Հովսեփ վարդապետը՝ «Տեղեկագիր աղեռելի անցից և անկարգութեանց տանն Աղթամարայ, գրեալ Յովսեփ վարդապետի վանահոր Նարեկա վանից, Կ. Պոլիս, 1873»։

108. Արգոսի աշոք—այստեղ ակնարկում է խիստ հսկողության փաստը։

109. Մամոնայիվ պաշտպանել— ասվել է այն մարդկանց մասին, որոնք աստծուն հակադրվելով՝ պաշտպանում էին արծաթասերին, ընչաքաղցներին։ Հին աստրիները մամոնա անվանել են հարստության աստծուն։

110. Սսի Նիկողայոս կաթողիկոս—1865 թ. Կիլիկիայի Սսի Կիրակոս Բ. Աշտարակեցի կաթողիկոսը կնքեց իր մահկանացուն և աթոռը մնաց թափուր։ Հալեպի հոգևոր առաջնորդ Նիկողայոս եպիսկոպոս Կյուլիսերյանը 1866 թ. հունիսի 11-ին, առանց Կոստանդնուպոլսի պատրիարքարանի համաձայնության, իրեն հռչակեց Սսի կաթողիկոս (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Գ, Բ գիրք, Պեյրութ, 1961, էջ 4123—25)։ Շատ չանցած նա հրավիրվեց Կոստանդնուպոլիս և աքսորվեց Արմաշի վանքը։

111. Հրաշագործ Մկրտիչ եպիսկոպոս, հայտնի Տիգրանյան Մկրտիչ եպիսկոպոսը, որը մի զրամաշորթ և ընչաքաղց հոգևորական էր, որին Հ. Պարոնյանը իր «Ազգային ջոջեր»-ում ծաղրելով անվանում է «Հրաշագործ», իսկ Հակոբ պատրիարքն անվանում է «յոթն փորձանք» (Հ. Պարոնյան, Երկեր, Երևան, 1958, էջ 93—94)։

112. Մաղպաթա կամ մաղբաթա—արձանագրություն, որն ուղարկվում էր արքունիք։ Թուրքական ասոիճանավորները հայերին ծեծելու, սպառնալու և բանտ նետելու միջոցով ստիպում էին ստորագրել արձանագրություններ, որոնք ուղարկվում էին Բ. Դուռ, որոնց մեջ ասվում էր, թե հայերը իրենց վիճակից շատ գոհ են։

113. Պապանիշով (պահպանիշով) բանալին հանձնել—երբ եկեղեցու բանալին հանձնում էին մեկ ուրիշի, արարողությունը արվում էր պահպանիշ ասելով։

114. Խոշ և խութ հարուցանել—որևէ հարցի լուծմանը խոչընդոտել։

115. Պղիկ—կճուճի տեսակ։

116. Իպիրելի (պետք է լինի Իպրաէլի) խորհուրդներ—դատապարտելի, ամոթալի խորհուրդներ։

117. Ձիան կրել—վնաս կրել։

118. Իսախճի (յասախճի)—գենապան, բարապան։

119. Ռոտենի դպրոց—հավանաբար նկատի ունի rotenrot բառը, որը բաղմիմաստ է, սակայն այս դեպքում նշանակում է բարոյապես, սոցիալապես կամ քաղաքականապես փչացած, այլասերված անձ (տե՛ս The Oxford English Dictionary, vol. VIII 804, 809, Oxford, 1961)։

120. Էջմիածնա մեռոն ձեթեն իազիէ (իյազ-թրք.)—մեռոնի մասին գրածից պետք է հասկանալ, որ էջմիածնի մեռոնը, ըստ նրա, զեյթունի (ձիթենու) ձեթից ավելի լավն է և ուրիշ ոչինչ։

121. Անգեղա (խոշաբ) գետ—սկզբնավորվում է Վասպուրականի լեռներից, անցնում է Բաշկալի ավանի, ապա Անգղ գյուղի մոտով և թափվում է Վանա լիճը։

122. Շամիրամա առու—Ուրարտական պետության ժամանակներում կառուցված և Ասորեստանի Շամիրամ թագուհուն վերագրվող, իրականում Ուրարտուի թագավոր Մենուայի կառուցած ջրանցքը, որը սկզբնավորվում է Վասպուրականի լեռներից, հասնում է Արտամետ գյուղը, ապա մտնում Վանի Այգեստանը։

123. Ճարոց կամ Իճարա (արաբ.)—վարձակալում, իճարա կառնին, նշանակում է վարձի դիմաց զրամ կամ բերքի մասն առնելը։ Հողը տրված էր իճարայով, այսինքն՝ վարձակալությամբ։

124. Հավթոսնի ջուր (քրդ.)—Բագրևանդի Քեփուկան գյուղի մոտով անցնող գետակն այդպես էին անվանում քրդերը, որը նշանակում է յոթնակնանի աղբյուր։

125. Նոպատոր—վանքի մեջ աշխատող մարդ։

126. Անփոխ գութան և փոխ գութան—«Անփոխ գութանը աշխատեցվում էր չորս զույգ լծկանով, որոնցից առնվազն երկուսը պետք է լիներին ամենաուժեղ և միջին տարիքի առույգ գոմեշներ։ Գութանի աշխատավորը հինգ տղամարդ էր»։ «Սակայն արճակցի գութանատերերի մեծ մասն ուներ փոխով գութան», սրա տարբերությունը անփոխ գութանից այն էր, որ «չորս զույգ լծկանի փոխարեն ութ լուծ էր աշխատեցնում, այսինքն՝ 16 լծկան» և քանի որ լծկաններից 4 զույգը լծում էին կեսօրից հետո, այդ պատճառով էլ կոչվում էր փոխ գութան (տե՛ս Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 8, Ս. Մ. Ավագյան (Սերիեն), Արճակ, Երևան, 1978, էջ 23—24)։

127. Գալիլեա—Վարագա լեռը ուներ երկու կատար, որոնցից մեկը կոչվում էր Աստղկան բերդ, մյուսը՝ Գալիլեա։

128. Կողոպատ—այդպես էր կոչվում հոգևոր հարկերից մեկը, որը գանձվում էր հատկապես տարիքավոր ննջեցյալներից, որպես հոգեբաժին, մի եզ կամ մի ոչխար, իսկ եթե հանգուցյալի հարազատները նյութապես անկարող էին այն վճարելու, դրամ էին առնում (Ե. Լալայան, Վասպուրականի նշանավոր վանքերը, Ա պրակ, Թիֆլիս, 1912, էջ 89)։ Իգական սեռի ննջեցյալների հարազատներից որպես կողոպատ «երբեմն արծաթեղենք ալ կառնուն իբրև մեզաց գին, եթե հարուստ է՝ ոգեստին ալ կեռն» («Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս արևելյան Տաճկաստանի», մասն Գ, տեղագրեց Մ. Կ. Միրախորյան, Կ. Պոլիս, 1885, էջ 214)։

129. Ջրմուտ արտ—ջրի մուտք, այն տեղը, որտեղ ջուրը մտնում է առուն (Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 4, էջ 153), կարելի է ենթադրել, որ վերաբերում է երկու արտերին, որոնք գտնվել են ջրի մոտ։

130. Չափ—տարողության միավոր, ասենք մի չափ գարի, մի չափ ցորեն, Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում չափը տարբեր է եղել։

131. Սարակ—Վասպուրականի շատ շրջաններում և հատկապես Վան քաղաքում օրավարձով աշխատող մշակներին անվանում էին սարակներ, որոնց աշխատանքի դիմաց տանտերը օրական երեք անգամ սնում էր, իսկ բանջողի ժամանակ գինի և մի ղույզ լավաշ էր տալիս («Հայրենիք», Կ. Պոլիս, 30 ապրիլի, 1895)։ Արճակում սարակներ կային, որոնք օրավարձով գարի հնձող կանայք էին և օրական ստանում էին 1 ղուրուշ վարձ։ Կեսօրին նրանց արտատերը սնունդ էր տալիս (Սերիեն, Արճակ, էջ 26)։

132. Զուպարա կամ զուբարա (արաբ.)—տարապարհակ։ Զուբարաները շատ էին. կար գութանի զուբարա, որի ժամանակ գյուղի բոլոր գութան ունեցողները մի օր պետք է աշխատեին տվյալ վանքի կամ տանուտերի համար։ Ցորենի զուբարայի համաձայն գյուղի բոլոր տղամարդիկ մի օր պետք է հնձեին վանքի կամ տանուտերի արտերը։ Գարու զուբարայի համաձայն գյուղի բոլոր կանայք պետք է մի օր հնձեին մենաստանի կամ տանուտերի արտերը։ Այս աշխատանքների ժամանակ արտատերը պարտավոր էր հընձվորներին ապահովել ճաշով (Ե. Լալայան, Վասպուրականի նշանավոր վանքերը, Ա պրակ, Թիֆլիս, 1912, էջ 89)։

133. Գութնի տեղ—հողի չափ է։ Գութնի տեղ կամ գութանավար նշանակում է այնքան տարածություն, որ միջին հաշվով մի օրվա ընթացքում կարող է վարել գութանը։

134. Ձենկի (զենջի) (թրք.)—նշանակում է խափշիկ, եթովպացի կամ հնդիկ (տե՛ս «Համառոտ բառարան ի տաճկանէ ի հայ», Վիեննա, 1941, էջ 41)։ Ե. Տեկանցը այս մասում է այն կապակցությամբ, որ հայանի Պողոս Մելիքյանը Կարս անապատի դրսի տանը հավաքում էր Վանի թուրք և քուրդ մեծամեծներին, խնջույքներ էր սարքում և վատնում էր վանքի հարստությունը։ Այդ խնջույքների ժամանակ հրավիրում էր զենկիներ։

135. Ատաչս—բուսատեսակ։

136. Ուրարակիր—եկեղեցական ստորին աստիճանավոր։

137. Քացախի և բաժկի—բաժկի անվանում էին սիրը, որի մեջ լցնում էին քացախը (հին գինին) պատարագի ժամանակ (տե՛ս Հ. Բարսեղյան, Բացատրական բառարան, էջ 165)։

138. Տասնորդ կվճարեն Լիմ անապատին—այս վկայությունից պարզվում է, որ վանքերն ու անապատները իրենց հողերը տալիս էին ցանելու կիսաբարությամբ և ստանում էին տասանորդը։

139. Մոնթ—Այդպես էին անվանում վանքերի դպրոցներում սովորողներին։

140. Բանդի մահի (Բերբրի, Առեստ) գետ—սկզբնավորվում էր Ծաղկանց (Ալադաղ) լեռների Թանդուրեք լեռնակատարից և սրընթաց հոսքով թափվում էր Վանա լիճը։

141. Թահմիզի սրճանոց—սուրճ աղալու և հրամցնելու մի խանութ, որը գտնվում էր Վանի Թահմիզ կոչված վայրում։

142. Միխանա (մեյխանե—թրք.)—գինետուն։

143. Պատիտ և եռաճողող—եկեղեցական արարողության ժամանակ փոքրիկ զանգակներով գործածվող սպասք։

144. Լակաս, գակաս կամ վակաս—պատարագիչի զգեստի մի մասը՝ օձիքը։

145. Մարմոտանյա գլուխ գավազան—գավազանատեսակ։

146. Իպինոս (իպնոս)—սև սագաթ։

147. Տապանակ—արկղ, որտեղ պահվում էին եկեղեցական թանկարժեք իրեր։

148. Պասմա—եկեղեցական գույք (սավան)։

149. Ուրար—«ուսեն կամ ուսերեն վար ձգվելի, երկար ձեռվ հագուստի մաս մը»։ Ուրարը օգտագործում էին սարկավագները, քահանաները ունեին գոտի, շուրջառ ու սաղավարտ, եպիսկոպոսները՝ եմիփորոն ու խույր (Մ. Օրմանեան, Ծխական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 1957, էջ 119—120 և 170)։

150. Կապարոշի շապիկ—եկեղեցական զգեստ։

151. Եսխներ տիպեթ—եկեղեցական զգեստ։

152. Եսխներ զոռ—եկեղեցական զգեստ։

153. Իբրեզ (իբրիկ-արաբ.) լական—փոքրիկ ջրաման։

154. Ամկա (Ամիկ-Համոկ)—բերդ, Վասպուրականի հնագույն բերդերից մեկը, որը ընկած է Վան քաղաքից դեպի հյուսիս, Ամուկ գյուղի մոտ (տե՛ս Միքայել Հովհաննիսյան, «Հայաստանի բերդերը», Վենետիկ, 1970, էջ 286—291)։

155. Սղող թվականավ—պետք է հասկանալ կարճ ժամանակահատվածում։

156. Ատենասարաս—ասվում է Վարագա վանքի մասին, որպես մի վայրի, որն ընկած է դրախտի մեջտեղում։ Ատյան այս դեպքում նշանակում է մեջտեղը Մ. Օրմանեան, Ծխական բառարան, էջ 77)։

157. Այս վիմագիր արձանագրությունն առաջին անգամ վերծանվել և տպագրվել է «Արծուի Վասպուրական»-ում, այն կա նաև Ե. Տեկանցի, ապա ավելի ուշ Ե. Լալայանի մոտ (Ե. Լալայան, Վասպուրականի նշանավոր վանքերը, Թիֆլիս, 1912, էջ 47)։

158. Կարապետերյան Հակոբ—Վան քաղաքի վերնախավի ներկայացուցիչներից։

159. Կոստանդնուպոլսի Հակոբ պատրիարք—Սերոբյան Հակոբ (1839—1840 թթ. և 1848—1858 թթ.), վարել է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի պաշտոնը։

160. Անանյան Մանուել (1841—1909)—հայ հասարակական-քաղաքական գործիչ։ Ծնվել է Վանում, որտեղ էլ ստացել է սկզբնական կրթությունը, ապա սովորել է Վարագա ժառանգավորաց դպրոցում։ Գերմանիայում համալսարանական կրթություն

ստանալուց հետո վերադառնում է Վան։ Կնոջ հետ հիմնում է երկսեռ մանկապարտեզ, որի փակվելուց հետո դասավանդում է Երամյան վարժարանում։ Մ. Անանյանը շատ կարճ ժամանակ (1873—74 թթ.) խմբագրել է «Արծուի Վասպուրական»-ը։ Գործել է Թիֆլիսում և «Փորձ» ու «Արձագանք» լրագրերում «Մնո» ծածկանունով հրատարակել է հոդվածներ (Երվանդ Տեր Մկրտչյան, Գանձեր Վասպուրականի, հ. I, Պոսթոն, 1966, էջ 257—258)։

161. Թոթիկ Ճգնավոր—հին ժամանակներում Վարագա լեռան ճգնավոր (Գ. Շնորհեցի, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 56)։

162. Ե. Տեկանցը վկայում է, որ Վարագա վանքը ուխտագնացության գնալիս ժողովուրդը երգում էր. «Ի մէջ լերանց կառուցել» երգը։ Որքան պրպտեցինք, այդ երգը չկարողացանք գտնել։

163. Ըստ Պետրոսի «ասցուք երիս տաղավարս և ասա բնակեսցուք»։ Ե. Տեկանցը նկատի է ունեցել Աստվածաշնչի մեջ եղած հետևյալ կտորը. «Առէ Պետրոս ցՅիսուս, վարդապետ, բարւոք է մեզ ասա լինել, եւ արասցուք երիս տաղաւարս...» (Աստուածաշունչ, Մատեան հին եւ նոր կտակարանաց, ըստ հնագոյն թարգմանութեան նախնեաց մերոց, համեմատութեամբ եբրայական եւ յունական բնագրաց, Կոստանդնուպոլիս, 1895, Ղուկ. Թ. 33)։

164. Վանա քիլա—Վանում մի քիլան՝ ցորենաչափը, հավասար էր 74,4 կիլոգրամի («Հայկական սովետական հանրագիտարան», հ. 8, էջ 681)։

165. Ուստուֆչի դուկաս (դուկաս)—շուրջառի մի տեսակ։

166. Լենկեռի (Թրք.)—պղնձե աման կամ տապակ։

167. Պամայից շուրջալ—եկեղեցական ծաղկազարդ ղգեստ, որը կրում էին եկեղեցականները պատարագ մատուցելու և այլ արարողությունների ժամանակ։

168. Ջրիպորներ—այդպես էին անվանում Վասպուրականում ջրարբի հողերը։

169. Սոգին կամ սոտին, ոսոին հողեր—անջրդի հողեր։

170. 40 գրկաչափ—երկարության չափ «որ և ասի գիրկ. Չափ գրկաց մարդոյ» (տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, էջ 587)։

171. Ղոզարար—խոհարար։

172. Կավարար—բրուտագործ։

173. Կոլիկ արջառ—կարճ և գեր արջառ։

174. Խիոնիկ արջառ—նիհար արջառ։

175. Սավաձագ, սավա որթիկ—նիհար, փոքր հորթ։

176. Կանի փայտերով անտառներ—այդպես էին ասում վանեցիները կաղնու անտառին։

177. Ռշտունյաց քիլա—հացահատիկի չափ։

178. Պրակ—պուրակ, անտառ։

179. 1 արասի քիլա—սերմի չափ։

180. Փայախ—խոտատեսակ։

181. Բողու բացախ—խոտատեսակ։

182. Վանքի կաշատեղ—նկատի ունի այն սենյակը կամ վայրը, որտեղ պահվում էին թե՛ վանքի և թե՛ ուխտավորների մորթած անասունների կաշիները։

183. Մի ասպարեզ—երկարության չափ, հավասար է 100 քայլի («Հայկական սովետական հանրագիտարան», հ. 8, էջ 679)։

184. Իշլամա (Թրք.) թաղ—գործած։

185. Փորուչնար—եպիսկոպոսները արարողության ժամանակ առջևի կողմից կրում էին թանկագին կտորից կարված, հյուսված մի շոր։

186. Սիանտի գոգնոց—եկեղեցական զգեստատեսակ։

187. Մետաքսյա բոլորակ—սկիհի վրայի մետաքսյա ծածկոց։

188. Սկիհի ծածկոց—կտոր, որով ծածկում էին սկիհը։

189. Իպրիզ (իպրըզ—Թրք.) լական—ջրամանի տեսակ։

190. Արևբանոս քաղաք—ըստ հայ մատենագիրների տեղեկությունների, Աղբակի Բարդուղիմեոս առաքյալի վանքի մոտ այդպիսի մի քաղաք է եղել, որը կործանվել է և այլևս չի վերականգնվել (Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1905, Ա, էջ 286)։

191. «Զի ասէ տէր, որ զիս պաշտիցն պատուեսցի զնա հայրն իմ» (Հովհ. ժբ 26)։

192. «Թե ուր ես եմ անդ և պաշտօնեայն իմ եղիցի» (Հովհ. ժբ. 26)։

193. Էջմիածնի Մատթեոս Ա Կաթողիկոս Զուխաչյան Կոստանդնուպոլսեցի (1858—1865)—ծնվել է Կոստանդնուպոլսում, որտեղ էլ ստացել է իր կրթությունը։ Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք, 1859 թ. օգոստոսի 15-ին օծվեց Էջմիածնի կաթողիկոս։ Համարվել է «հմուտ աստվածաբան և քարոզիչ»։ Էջմիածնում ուշադրություն դարձրեց եկեղեցական դպրոցների վրա, հաստատեց Ներսիսյան դպրոցի կանոնադրությունը, կարգավորեց ձեռագրատունը և տպել տվեց ձեռագրերի ցուցակը։ Չնայած թույլատրեց Մ. Խրիմյանին շրջագայել Թիֆլիս և այլ շրջաններ, սակայն դեմ էր նրա հայրենասիրական քարոզներին։ Կոպտաբար նրան էջմիածին հրավիրեց, ապա պահանջելով իր կոնդակը՝ առաջարկեց թողնել Արևելյան Հայաստանի սահմանները։

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս Ա թագավոր 78, 79
Աբարդյան Գ. վրդ. 10
Աբդար վանահայր 173
Աբդուլ Համիդ 316
Աբովյան Խ. 7
Աբրահամ աշխարհական 175
Աբրահամ 272
Աբրահամ դպիր 251
Աբրահամ եպս. 256
Աբրահամ մահտեսի 182
Աբրահամ նահապետ (հրեական) 314
Աբրահամ սարկավագ 251
Աբրահամ վրդ. 291
Աբրահամ վրդ. 260
Աբրահամ քահանա 71
Ադամ (աստվ.) 285
Ադամյան Ա. 272
Ադամյան Վ. 122
Ադատյան Թ. 20
Ադարյան գերդաստան 41
Ադարյան Ս. աղա 38, 41
Ադիզ մաճկալ 273
Ադպաշեր աղա 233
Աթանաս վրդ. 260
Ալահվերտի հյուսն 274
Ալեքսան 41
Ալի աղա 233, 288
Ալի 255
Ալյաթճյան Գրիգորիս 97, 112, 313
Ախիճան խոճա 286
Ահմադ աղա 65, 283
Ահմատ 85
Աճիանճյան Ս. էֆենտի 122
Աղարեկյան Մ. 143, 314
Աղապապյան Խ. 30
Աղասի 7
Աղվանյան Գրիգորիս վրդ. 165, 240, 241, 315
Ամբակում հրեշտակ (աստվ.) 23, 310
Ամբակում քահանա 59
Ամր աղա 228
Այվազյան Ս. 272
Անակ 206, 243
Անանիա Նարեկացի 293, 295
Անանիա վրդ. 260
Անանյանց Մ. 271, 274, 319, 320
Անդրեաս վրդ. 251
Աշկուպ աղա 225
Ապտրահման աղա 225
Ապտուլլահ պեյ 131, 132, 185
Աջապահյան Կ. Բ կաթողիկոս 316
Առաքել դպիր 260
Առաքել վրդ. 138, 145, 148, 150, 153
Աստվածատուր իշխան 10
Աստվածատուր տիրացու 138, 304
Աստվածատուր վրդ. 246
Ավետիս մահտեսի 44
Ավետիս եպս. 284
Ավետիս հովիվ 273
Ավետիս մաճկալ 273
Ավետիս մահտեսի 261
Ավետիսյան Ա. 272
Ավետիք վրդ. 260
Ավտալ պեյ 227
Ավտի պեյ 232
Ավտո քուրտ 225

Ատոմ նախարար 71
Արգելյան Խ. վրդ. 287
Արծրունի (ք) 223, 267, 285
Արիստակես քահանա 304, 305
Արտաշես Բ 126
Աւջաթու սուլթան 261

— Բ —

Բագրատունի 78, 106, 119, 311
Բագրատունի Արսեն 77, 313
Բագրատունի Սմբատ 35
Բաղիշեցի Մարգար 105
Բաղդասար 172
Բաղդոյի Օհանես 8
Բարգուղիմեոս Առաքյալ (աստվ.) 297, 301
Բարգուղիմեոս վրդ. 260
Բարսեղ վրդ. վերակացու 246, 251
Բել (աստվ.)

— Գ —

Գաբրիել եպս. (Լիմ անապատ) 260
Գաբրիել եպս. (Վանա առաջնորդ) 174, 227, 271, 302
Գաբրիել վրդ. 260
Գագիկ թագավոր 78, 79, 285, 286, 288
Գազպար դպիր 260, 273
Գալբ պեյ 187
Գալուստ վրդ. 260
Գալուստյան Հ. տիրացու 60
Գալփագճյան Հուսիկ վրդ. 272
Գասպար մահտեսի 251
Գարագաշյան Ա. (Գարագաշ) 77, 313
Գարեգին քհն. 305, 306
Գեորգ վանահայր 172
Գեորգ քահանա 304
Գողիաթ (աստվ.) 285
Գոմեր 226
Գրիգոր դպիր 260
Գրիգոր եպս. 42, 43
Գրիգոր (խաչվերանցի) 122
Գրիգոր (Դարանց գյուղ) 288
Գրիգոր (Վան) 251
Գրիգոր Լուսավորիչ 206, 236, 242, 243
Գրիգոր Մագիստրոս 55, 56, 58
Գրիգոր մահտեսի 251
Գրիգոր մելիք 198
Գրիգոր Նարեկացի 173, 175, 219, 292, 293
Գրիգոր սպասավոր 110—112, 163, 164
Գրիգոր վրդ. լուսարար 251, 252
Գրիգոր տիրացու 83
Գրիգոր փոքրավոր 83, 91
Գրիգոր վրդ. (մոխրաբերդցի) 216, 217
Գրիգոր վրդ. (մոկացի) 286
Գրիգոր վրդ. (նորավանցի) 260
Գրիգոր վրդ. (տիգրանակերտցի) 306
Գրիգոր XIV Պապ 315
Գրիգոր քահանա 304, 305
Գրիգորիս կթղ. 180
Գրիգորիս վրդ. (Բաբերդ) 162
Գրիգորիս վրդ. (Մշո առաջնորդ) 45
Գրիգորիս վարժապետ 91
Գրիգորյան Համատար 60
Գուլմահմուտ աղա 225
Գեորգ աղա 106
Գեորգ կթղ. 220
Գեորգ վրդ. Տեր Բարսեղյան 251
Գեորգ տիրացու 238

— Դ —

Դանիել (աստվ.) 285
Դանիել վրդ. 272
Դանիել քահանա 304, 305
Դանիելյան Դավիթ 272
Դավիթ (աստվ.) 285
Դավիթ աղա 42
Դավիթ Անհաղթ 224
Դավիթ եպս. 278
Դավիթ ձիապան 273
Դավիթ մշեցի 23
Դավիթ վանահայր 174
Դավիթ քահանա 227
Դերիշ բեյ 19, 178, 179, 182, 183, 222

— Ե —

Եղիազար եպս. 181
Եղիազար մահտեսի 260
Եղիազար մոգացի 251
Եղիշե 34, 170, 172, 174, 282
Եղիշե վրդ. 260
Եղո քահիյա 64

Եղուպ չարագործ 53
Եսայի քահանա 47, 48, 147
Երեմիա եպս. 46, 93, 96, 99, 101, 104, 106, 121, 155, 158, 161, 166, 168, 188, 192, 195, 199—202, 204, 205, 211, 282
Երեմիա վրդ. 254
Երեմիա քահանա 307
Եփրեմ վրդ. 92, 95

— Զ —

Զաքարիա կթղ. 261
Զաքարիա քահանա 296
Զաքարյան Զաքար աղա 110
Զաքարյան Կարապետ 33
Զաքարյան Մարտիրոս 23, 24
Զաքարյան Սարգիս աղա 42, 52, 53
Զաքեոս (աստվ.) 28, 311

— Է —

Էնֆիաճյան գերդաստան 42
Էնֆիաճյան Սարգիս էֆենտի 48

— Թ —

Թադեոս առաքյալ 279, 301, 302
Թադեոս վրդ. (Ս. Ստեփանոս եկեղեցի) 258
Թաթուլ 67
Թամուր օղլիք (Թրքացած հայ ընտանիք Վանում) 306
Թաքթաքյան Պողոս 143, 186, 189, 248, 314
Թահիր պեյ 131
Թամո (Քաջբերունյաց տոհմից) 152
Թառամ աղա 228
Թոթիկ ճղնավոր 275, 277, 320
Թոմրուզ Աղասի 48
Թոռնիկյան Դավիթ (Դավիթ Թոռնիկ) 316
Թոփուզյան Հակոբ 9, 216, 260
Թորմաչյան Իգնատիոս եպս. 178, 186, 245, 316
Թումա կաթողիկոս 285, 286
Թումա քահանա 307
Թումաս 67

— Ի —

Իսա պեյ 83
Իսահակյան Մ. 187
Իսմայիլ փաշա 37
Իսրայելի աղդ 231

— Լ —

Լալայան Ե. 319
Լենկ Թեմուր 252

— Խ —

Խամեի Կարապետ 112
Խաչատուր դպիր 273
Խաչատուր եպս. (Պոլիս) 235
Խաչատուր կթղ. 14
Խաչատուր եպս. Շիրոյան 176—191, 195, 196, 202, 205, 206, 209, 211—213, 216—218, 220, 221, 316
Խաչատուր խան, ատենապետ 100
Խաչատուր մահտեսի (Խիզան գավառ) 260
Խաչատուր մահտեսի (Վան) 251
Խաչատուր փշվանցի 182, 236
Խաչատուր քահանա 295
Խաչոյան Աճեմ Գրիգոր աղա 109
Խարաճյան գերդաստան 41
Խարաճյան Դանիել 41
Խերապետի գերդաստան 256
Խոճա Մինաս 270
Խոսրով եպս. 173
Խոսրով Թադավոր 206
Խոսրովյան Հարություն 100
Խորեն եպս. 165
Խորեն վրդ. 192, 197, 200, 216, 217, 220
Խորենացի 207
Խրիմյան Մ. 9, 10, 14, 17, 18, 21, 23, 24, 35, 38, 42, 99, 93, 96, 97, 99, 101, 113, 120, 126, 127, 155, 158, 162, 164, 166, 168, 174, 202, 237, 269, 271, 272, 316, 321
Խուտո Ֆերունի 298
Խուրշուտ (Խուրշիտ, Խուշրուտ) պեյ 53, 98, 232
Խոճայ Ամիրխան 270

— Կ —

Կալոյան Գեորգ պեյ 187
Կալֆա ամիրա 263
Կամսարական Ատոմ 86
Կամսարական Իշխանք 85
Կամսարական Կ. 12
Կամսարական Հ. 86
Կայեն (աստվ.) 242
Կարապետ 251, 256
Կարապետ գիշերապահ 273
Կարապետ եպս. 43
Կարապետ դպիր 260
Կարապետ կթղ. 256
Կարապետ մահտեսի 251
Կարապետ մաճկալ 273
Կարապետ պատվելի ատենադպիր 100
Կարապետ պատվելի վարժապետ 33, 37
Կարապետ (Պաֆրա) 251
Կարապետ վրդ. ողմեցի 173
Կարապետյան Հովհաննես 272
Կարասեֆերյան Հ. 271, 319
Կարիպ 225
Կենճ աղա 123
Կինևիզյան Աղապապ 42
Կինևիզյան գերդաստան 42
Կինևիզյան Հ. 22, 24, 28, 30, 31, 42, 309
Կիրակոս վրդ. 270
Կյուլիսերյան Ն. կթղ. 189, 207, 316
Կյուրեղ վրդ. 272
Կոռամալ վարժապետ 296
Կուլիխան 178, 179, 182—184, 204—206, 213, 222
Կուլ Մահմատ Մահմուտ աղա 288
Կումանտոս փաշա 74

— Հ —

Հաղի էֆենտի 187
Հաղկերտ 104
Հալաճյան Ս. կաթնակիր 273
Հակոբ (Անգղ գյուղից) 287
Հակոբ եպս. 174, 181, 190, 192—197, 200—211, 214—220
Հակոբ եպս. (Թոքատեցի, ճղնավորյան) 22, 309
Հակոբ եպս. Խիզանցի 19, 172, 182, 184, 185, 189, 200, 205—207, 212—214, 221, 230, 280, 286
Հակոբ հայրապետ 289
Հակոբ (Զարհան վանք) 288
Հակոբ սարկավագ (Վան) 260
Հակոբ վրդ. (շատախցի) 251
Հակոբ վրդ. (Կարիշա գյուղ) 286
Հակոբ վրդ. (կարկառեցի) 216, 220
Հակոբ վրդ. (Ս. Կարապետի տաճար) 244
Հակոբ վրդ. (Փշվան) 183, 197, 215, 220, 286
Հակոբ եպս. տեղապահ 166, 167, 171, 172, 227
Հակոբ եպս. տեղապահ (Կարմրավորա Աստվածածնի վանք) 169, 172, 227, 235
Հակոբ տեառնեղբայր 282
Հակոբ ուրարակիր (Կղլար քաղաք) 260
Հակոբ քահանա (Ցիրիսան) 304
Հակոբյան Մարտիրոս 272
Հակովիկ նահատակ 305
Հաճի Ահմատ աղա 84
Հաճի Նուրի պեյ 65, 69
Հաճի Սուլեյման աղա 47, 97, 98
Համբարձում 288
Համիտ պեյ 232
Հայկ (առասպ.) 51
Հայտարանցի Պատր աղա 150—152
Հայրապետ 85
Հայրապետյան Ս. 272
Հասաթ պեյ 84
Հասան աղա (Տիլավորոզլի Թապուճի) 223, 298
Հասան փաշա 13
Հասրաթ փաշա 69
Հարություն աղա 26
Հարություն արքեպս. 45, 178, 186
Հարություն դպիր 260
Հարություն եպս. 32, 34, 41, 43, 46—48, 98, 122, 123, 186

Հարութիւն եպս. (Կարին) 162
Հարութիւն (խնուսցի) 97
Հարութիւն կթղ. 293
Հարութիւն մահտեսի 251
Հարութիւն վերակացու 246
Հարութիւն վրդ. (Աղթամար) 296
Հարութիւն (եվտոկիացի) 22
Հեվսան 211
Հերակլ կայսր 142
Հերովդես (աստվ.) 177, 316
Հղեր աղա 228
Հիսուս 35, 51, 54, 82, 87, 126, 140, 147, 166, 177, 256, 261—263, 270, 285, 295, 300, 301, 311, 316
Հյուսեյին պեյ 131, 132
Հոհան ուրարակիր 251
Հովել աշակերտ 275
Հովհան (աստվ.) 285
Հովհաննես (աստվ., Քրիստոսի աշակերտներից) 177, 316
Հովհաննես աղա 42, 45, 46
Հովհաննես արքեպս. 77
Հովհաննես գառնարած 273
Հովհաննես էֆենտի 73
Հովհաննես (Կեսարիա) 251
Հովհաննես (Վան) 251
Հովհաննես ռես 172
Հովհաննես վանահայր (Արտամետ) 278
Հովհաննես վանահայր (Կոնկա Ս. Աստվածածին վանք) 173
Հովհաննես վրդ. (Բաղրևանդի առաջնորդ) 129, 130, 136—138, 141—143, 150
Հովհաննես վրդ. (Խաս գյուղ) 260
Հովհաննես վրդ. (Ռաչքելիսեի վանք) 112, 145, 156, 162, 190
Հովհաննես (Կարին) 251
Հովհաննես մահտեսի (Այրարատ) 251
Հովհաննես մահտեսի (Հուստանո) 182, 202
Հովհաննես (ռուսիացի) 29
Հովհաննես տիրացու 246
Հովհաննես քահանա (Նոր Գեղ) 295
Հովհաննիսյան Աշոտ 272
Հովհաննիսյան Գևորգ 145, 148
Հովսեփ արեղա 219
Հովսեփ եպս. 195—198, 200, 201, 210, 211, 214, 217, 219, 221, 236
Հովսեփ եպս. (Աղթամարա միաբան) 172, 183, 192
Հովսեփ խախճի 209
Հովսեփ սարկավագ 217—220
Հովսեփ (Բողանիս) 288
Հովսեփ վրդ. (Նարեկա վանքի առաջնորդ) 178, 183, 218, 316
Հոտիլ Վարդան 71
Հռիփսիմե կույս 276
Հուսիկ վրդ. 92
Հուսիկ քահանա 304

— Ղ —

Ղզնաղդեցի Կարապետ 254

— Ղ —

Ղազար (Համզաքալակ) 85
Ղազար եպս. 182
Ղազար իշխան 10
Ղազար ճգնակիր 254
Ղազար մահտեսի (խելագար) 260
Ղազար վրդ. 192, 193, 198, 216, 220, 227
Ղուկաս աղա 38, 41
Ղուկաս կթղ. 253
Ղևոնդ քահանա 53

— Ճ —

Ճալալեդ(ա)ին շեյխ 173, 178, 230, 231
Ճելալ քուրտ 106

— Մ —

Մախսուտ աղա 65, 85
Մակակ ճգնավոր 43
Մակար վրդ. 44
Մակարյան Կ. 36
Մակարյան Հ. էֆենդի 37, 40
Մահմադ պեյ 60, 131—133, 205, 222, 225, 232, 253
Մահմուտ մոլա 233
Մամբրե դասատու (Կարս) 102
Մամբրե վարժապետ (բաղիշեցի) 77
Մամբրե վրդ. լուսարար 192—196, 198, 211, 217
Մամիկոնյան Շուշան 86
Մամիկոնյան Վարդան 86, 281
Մամուրյան Մ. 314
Մանասիր իշխան 289
Մանուկ աղա 32, 40
Մանուկ մահտեսի 251
Մանուկ ուրարակիր 260
Մանուկ քահանա 61
Մանուկյան Գրիգոր 272
Մատթեոս Ա կթղ. Զուխաջյան Կոստանդնուպոլսեցի 193, 321
Մատթեոս վրդ. 23
Մարգար տպագրապետ 274
Մարգարե եպս. 284
Մարկոս քահանա 71
Մարտիրոս աղա 306
Մարտիրոս գիշերապահ 273
Մարտիրոս մահտեսի 251
Մարտիրոս վանահայր 173
Մարտիրոս վրդ. 172
Մարտիրոս քհն. 81
Մարտիրոսյան Պ. 272
Մելիքյան Պ. 318
Մելք(ի)սեթ վրդ. 95, 272, 277
Մելքոն վրդ. 260
Մելքոնյան Ա. 272
Մենուա թագավոր 317
Մեսրոպ մահտեսի 260
Մեսրոպ վրդ. 272
Մեսրոպյան Եղիշե վրդ. 242, 243, 251
Մինաս ախվանցի 288
Մինաս զորավոր (աստվ.) 285
Մինասյան Հ. 24, 25
Միսաքյան Ս. 165
Միսոսվան քուրտ 92
Միրսևգին պեյ 253
Միքայել քահանա 240
Մխիթար մահտեսի 251
Մխիթար վրդ. (Աթանանց գյուղ) 286
Մխիթար վրդ. (Աղթամարա միաբան) 184, 193, 194, 197, 198, 204, 215, 220
Մկակասյան Ս. 296
Մկո 90
Մկրտիչյան Գևորգ աղա 42
Մհեր մաճկալ 273
Մոկացյան Մ. վրդ. 272, 275
Մովսես (աստվ.) 35
Մովսես պեյ 66, 119
Մովսես վրդ. լուսարար 145, 146
Մովսես քահանա 10
Մուստաֆա աղա 225, 288
Մուրադ IV սուլթան 312
Մուրատ վանահայր (Բավա Նարեկացվո վանք) 174
Մուրատ վանահայր (Կարմրավորա վանք) 169, 172
Մուրատ փրխուսցի 288

— Յ —

Յուդա (աստվ.) 242
Յուսուֆ պեյ 83

— Ն —

Նազար մաճկալ 273
Նազարեթ աղա 42
Նահապետ մահտեսի 260
Նատր շահ 82
Նեխո 178
Ներսես եպս. 165
Ներսես մաճկալ 273
Ներսես Շինող հայրապետ 275
Ներսես Շնորհալի 180
Ներսիսյան Գրիգոր 272
Ներսիսյան Գևորգ 272
Նիկողայոս դպիր 260
Նիկողայոս քահանա 307
Նշան վարժապետ 227
Նուրիլահ պեյ 302

— Շ —

Շահխաթունյան Հ. եպս. 252
Շահ-Արաս 62, 88
Շային վերակացու 273, 274
Շապաղյան Հ. 243
Շամիրամ թագուհի 317
Շարա 89

Շարան պեյ 41, 187
Շարաֆ պեյ 225, 228
Շաքար աղա 36, 42
Շաքիր պեյ 83, 84
Շեխի պեյ 232
Շիթի պեյ 227
Շիրվանյան արքեպս. 257

— Ո —

Ոսկան 90

— Չ —

Չամչյան Մ. (Չամիչ) 77, 180, 313
Չարենց Ե. 20
Չեթո վանահայր 227

— Պ —

Պալլարյան Ա. 32, 35, 36, 40
Պալլարյան Հ. 21, 22, 24—28, 30—32, 40, 309, 313
Պահլավունի Գրիգոր կթղ. 181, 316
Պահլավունի Թոռնիկ 236, 237
Պահլավունի Ներսես կթղ. 181
Պաղոյան Մ. 296
Պաշո գյուղացի 225
Պապազյան Կ. 248
Պասքևիչ 69, 71, 77, 113, 127, 238
Պարոնյան Հ. 317
Պեյլարյան Խ. 23
Պեյզոն 190
Պետրոս (աստվ.) 277, 320
Պետրոս աղա 18, 130—134, 148
Պետրոս եպս. 190
Պիզմարք-Բիսմարկ Օտտո Էդուարդ Լեոպոլդ Շենհաուզեն 172, 315
Պյուլպյուլ Պետրոս կթղ. 177—179, 181, 184, 185, 187—189, 192, 195, 199, 205—207, 213, 214, 216—219, 287, 316
Պողոս աշուղ 8
Պողոս աղա 41
Պողոս երեսփոխան 80
Պողոս նախարդ 273
Պողոս վրդ. 192, 197, 216, 217, 220
Պողոսյան Հարություն 296
Պոյաճյան Էլպեկ 122
Պոտաճյան Ալպեկ 122
Պոե երեսփոխան 131, 132

— Ռ —

Ռաշիդ պեյ 65
Ռշտունի 101—105, 112, 120
Ռշտունի եպս. 162, 164
Ռոբեր Ժյուլ, ֆրանսիական դեսպանության աշխատակից 10
Ռուբեն 177
Ռուհիջան 270

— Ս —

Սալմանասար IV 314
Սահակ գյուղացի 122
Սաղաթել 90
Սամի փաշա 46, 47, 73, 97
Սամսոն (աստվ.) 285
Սամուել 287
Սանատրուկ թագավոր 300
Սառաֆյան գերդաստան 42
Սարգիս աղա 32
Սարգիս հացագործ 273
Սարգիս պարտիզպանի օգնական 273
Սարգիս սենեկապետ 273
Սարգիս տիրացու 258
Սարգոն 314
Սաֆարյան Մինաս աղա 52
Սեդրակյան Ավետիս(ը) վրդ. 254, 255, 260
Սելիմ պեյ 24, 26, 28, 31, 283
Սեմերճյան Մ. 10
Սենեքերիմ արքա 267
Սերոբ դերձակ 109
Սերոբյան Հակոբ (Հակոբ պատրիարք) 277, 319
Սիմեոն ճգնավոր 281
Սիմեոն վրդ. (Կտուց անապատ) 253
Սիմեոն վրդ. (Ուչքիլիսայի առաջնորդ) 60
Սիֆտ պեյ 69
Սողոմոն 241
Ստեփան սարկավագ 287
Ստեփան վրդ. (Կարմրավորա վանք) 169
Ստեփան վրդ. (Կարմրակա վանք) 289
Ստեփանոս սարկավագ 219, 220
Սրվանձտյանց Գ. 309, 313, 316
Սուլեյման աղա (պեյ) 98, 131, 228

— Վ —

Վախթանկ թագավոր 79
Վաղարշակ Մեծ 126, 130, 239
Վասակ 282
Վարդան եպս. 291
Վարդան (Փրխուս գյուղ) 287
Վարդան մանկալ 273
Վարոս վրդ. 119
Վեհապետյան Հ. 93, 115, 121, 313

— Տ —

Տապլո մառնապետ 273
Տեվրիշ պեյ 175, 204—206
Տիգրան (Խաչատուր խանի որդին) 41
Տիգրանյան Մկրտիչ եպս. (Հրաշագործ Մկրտիչ) 190, 316
Տիմոթեոս Ծ վրդ. 56, 58
Տիմոթեոս վրդ. 112, 114—116, 120—123, 156, 162
Տիմոթեոս քհն. 304, 305
Տրդատ արքա 43, 63, 126
Տեկանց Ա. 5, 23, 310
Տեկանց Ե. 5—7, 9—21, 28, 292, 312, 313, 315, 318—320
Տեկանց Ս. 5
Տեկանց Վ. 23
Տեր Առաքել դասատու (Մանկասար) 239
Տեր Առաքել քհն. (Խաչավանք) 89
Տեր Առաքել քհն. (Խրտր գյուղ) 239
Տեր Ավետիս (Ս. Շմավոն) 292
Տեր Ավետիս (Տերնա) 72
Տեր Բարսեղ 170
Տեր Գևորգ քհն. 280
Տեր Գրիգոր քհն. 36, 37, 51
Տեր Գրիգոր քհն. տնօրեն 33
Տեր Գևորգ (Խրրրխ) 172
Տեր Գևորգ քհն. (Քերս) 87
Տեր Դանիել (Մանկասար) 139
Տեր Դանիել քհն. (Բուիկ) 85
Տեր Եսայի քհն. (կեսարացի) 63, 96—98
Տեր Եսայի (օդն. քհն.) 112, 129, 150, 164
Տեր Զաքարիա քհն. (Մանկասար) 139, 239
Տեր Դավիթ վրդ. 262
Տեր Զաքարիա եպս. 261
Տեր Կարապետ եպս. 262
Տեր Թումաս վանահայր 174
Տեր Իսրայել 57
Տեր Խաչատուր վանահայր 241, 242
Տեր Խաչատուր քհն. 87
Տեր Կարապետ վանահայր 175
Տեր Հակոբ վանահայր (Ս. Կարապետ վանք) 174
Տեր Համազասպ քհն. 32, 36—38, 46, 48, 51
Տեր Համազասպ քհն. (Կարին) 100
Տեր Հարություն (Ալիճահրակ) 62, 63
Տեր Հարություն (Ամատ գյուղ) 238
Տեր Հարություն եպս. (Կարին) 115
Տեր Հարություն վարժապետ 111
Տեր Հարություն քհն. (Ջորագյուղ) 120, 121
Տեր Հովհաննես բարեկարգ 103
Տեր Հովհաննես (Ղալաթիա) 109
Տեր Հովհաննես (Նախիջևան) 86, 90
Տեր Հովհաննես (Ս. Շմավոն) 292
Տեր Հովհաննես (Վաղարշակերտ) 148, 150, 151, 153
Տեր Հովհաննես վանահայր (Ամենափրկիչ վանք) 174
Տեր Հովհաննես վանահայր (Սկավառսկոս. Գևորգա վանք) 175
Տեր Հովհաննես (Քերս) 87
Տեր Հովհաննես քհն. (Կարս) 77
Տեր Հրնա քհն. (Ցոնճալու) 137
Տեր Հուսիկ 256
Տեր Ղազար քհն. (Տոսի) 64
Տեր Ղազար քհն. (Փախներ) 297
Տեր Ղազար քհն. (Ուչքիլիսա) 60

Տեր Ղուկաս քհն. 77
Տեր Մաթեոս 81
Տեր Մանուել (Սոյուղլու) 83
Տեր Մարտիրոս (Թարբանդ) 59, 60
Տեր Մարտիրոս (Զարհան ս. Նշանի վանք) 170
Տեր Մարտիրոս (Մղրախ) 63
Տեր Մարտիրոս քհն. (Կարաքիլիսա) 25
Տեր Մելիքսեթ (Լիմ անապատ) 262
Տեր Մելիքսեթ քհն. (Խաչլու գյուղ) 238
Տեր Մելիքսեթ (ս. Շմավոն) 292
Տեր Մեսրոպ քհն. (Կարին) 100
Տեր Մինաս 76
Տեր Միքայել քհն. (Համզաքալակ) 82
Տեր Միքայել (ս. Հովհաննես վանք) 137
Տեր Մխիթար վանահայր 169
Տեր Մկրտիչ քհն. (Կարին) 100
Տեր Մկրտիչ քհն. (Ներքին Քատիկք) 81
Տեր Ներսիսյան Խաչատուր խան էֆենտի 41
Տեր Զորափաթիլ քհն. 102
Տեր Պետրոս 172
Տեր Պողոս քհն. 122
Տեր Սահակ (Ղարաքիլիսա գյուղ) 138
Տեր Սահակ քհն. (Տոտի) 64
Տեր Սաղաթել քհն. (Կարս) 77
Տեր Սաղաթել քհն. (Շիրակավան) 102, 106, 111
Տեր Սամուել (Դալի Պապա) 63
Տեր Սամուել քհն. (Ղուլի գյուղ) 87
Տեր Սարգիս (Ամատ գյուղ) 238
Տեր Սարգիս Մովսեսյան (Պաշ) 66, 67
Տեր Սարգիս վանահայր (Զարհան ս. Նշան) 170, 192
Տեր Սարգիս քհն. (Ճաշ) 83
Տեր Սարգսյան Հայկ 5
Տեր Սարգսյան Հարություն 5
Տեր Սարգսյան Մ. 5
Տեր Սիմոն քհն. 64, 254
Տեր Սողոմոն (Արծվաղիր վանք) 157
Տեր Ստեփան (Շիրակավան) 109
Տեր Ստեփան (Թատրունե) 90
Տեր Ստեփան քհն. (Օրթաքատիկ գյուղ) 81
Տեր Ստեփան օգն. քհն. 112, 129, 150, 163, 164
Տեր Սուքիաս 62
Տեր Վարդան (Խնձորուտ) 174
Տեր Վարդան (Ս. Շմավոն) 292
Տեր Վարդան քհն. (Նախիջևան գյուղ) 86
Տէր Մխիթարյան 30
Տէր Պետրոս 262
Տէր Ստեփանոս 262

— Փ —

Փաստրմաճի Խաչատուր էֆենտի 44, 50, 51, 73, 74
Փաստրմաճյան Խ. 15, 36, 40
Փափազյան Մ. 77, 313
Փիլիպոս աղա (արապկիրցի) 36
Փիլիպոս կթղ. 270
Փիլիպոս վրդ. 302
Փիրղալեմյան Ղ. 13, 19
Փոխան հովիվ 273
Փորթուգալյան Մ. 22, 309

— Ք —

Քաջբերունցի Եղիազար վրդ. 303

— Օ —

Օմար պեյ 131—133
Օսման պեյ 69, 225
Օտյան էֆենտի 98

— Ֆ —

Ֆաթահ պեյ 288

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

— Ա —

Արանանից դաշտ 284
Արեղայից խցներ 277
Արրահամենց թաղ 226
Ագրակ գյուղ 62, 84, 92
Ազարիկ գյուղ 41
Աթանանց գյուղ 284, 286
Ալալիս գյուղ 305
Ալաճա գյուղ 84
Ալաշկերտ 16, 60, 67, 78, 82, 111
Ալաշկերտի դաշտ 127
Ալաս գյուղ 305
Ալաքիլիսա եկեղեցի 312
Ալաքիլիսա վանք (Բասեն) 66, 71, 119
Ալեքսանդրիա 10
Ալիճահրակ գյուղ 61—63, 120
Ալիշանա գյուղ 138
Ալյուր գյուղ (Ալուր) 219, 247, 251, 266, 287, 309
Ալվար գյուղ 122
Ախվանք 192, 201, 204—206, 222, 284, 287, 288, 292
Ախուրյան գետ 65, 76, 80, 83—85
Ականց գյուղ 112
Ակնդաշտա ս. Աստվածածնի վանք 174
Ահմատ (Ամատ) գյուղ (Բագրևանդ) 129, 133, 238
Աղաբեկյան վարժարան 314
Աղան գյուղ 58
Աղավիա լեռներ (Ալա տաղ) 237
Աղբակ գավառ 164, 297, 300—304, 321
Աղբալից ձոր 277
Աղ(ե)եքսանդրապոլ 11, 55, 67, 76, 77, 81, 119
Աղթախանց գյուղ 308
Աղթամար 14, 18, 19, 41, 105, 164—166, 168—171, 173, 174, 176, 178—182, 184, 186—191, 195—196, 203, 205—223, 226, 227, 229—237, 244, 249, 261, 271, 280, 284, 286—289, 293, 296, 305, 316
Աղթամարա ծովակ 278, 281, 284
Աղթամարա միաբանություն 175
Աղթամարա տաճար 193
Աղթամարա վանք 225, 270, 292
Աղթամար կղզի 182, 183, 267, 277, 284
Աղիս մայիլ գյուղ 305
Աղլից 246
Աղպուլախ լեռ 89
Աղջուր վանք (Բասեն) 119
Ամասիա 11, 22, 79, 309
Ամբակումա ջրաղաց 294
Ամենաշատ գյուղ 247
Ամենափրկիչ վանք 174
Ամերիգա 155
Ամիս գյուղ 226
Ամկու բերդ (Ամկա, Ամիկ-Համոկ) 263, 319
Ամպատ գյուղ 89
Այաղքատիկ գյուղ 80
Այան գյուղ 308
Այա Սոֆիա տաճար 312
Այգեստան 241, 244—245, 276, 317
Այրարատ 67, 128, 251
Անապատ գյուղ 226, 229
Անգեղա (Խոշաբ) գետ 222, 278, 317
Անգղ գյուղ 278, 280, 317
Անի 11, 76, 80, 83, 84, 107
Անիի մայր եկեղեցի 82
Անծողանց թաղ 226
Աննավանք 247, 309
Աշկերտ գետ 298
Աշկերտ գյուղ 305

Աշտարակ 11, 307
Աշտիշատ 20
Ապարանից ս. Խաչի վանք 19, 175
Ապարանջան աղբյուրներ 269, 277
Ապարան (ք) 11, 52
Առակ գյուղ 304, 305, 307
Առանց գյուղ 222
Առբերանի գավառ 127
Առբերանի լեռներ 257
Առբերանք 249, 259
Առընճիկ գյուղ 232
Առտեր կղզի 169, 249, 277
Ասորեստան 317
Ասպուզա գյուղ 52
Աստղկան բերդ 318
Աստվածածնի մատուռ 286
Աստվածածնի տաճար 289
Աստվածաշեն գյուղ 223
Ասուլան գյուղ 305
Ավանց գյուղ 240, 247, 274
Ատեր գյուղ 258
Ատրնա 252
Արաբկիր 5
Արագած լեռ 52
Արածանի գետ 238
Արարատյան գավառ 127
Արարատյան դաշտ 11
Արարուց դուռ 263
Արաքս տե՛ս Երասխ գետ
Արեգին լեռ 246
Արծկե գյուղ 111, 157
Արծվաբեր Աստվածածնի վանք 169, 270
Արծվագիր վանք 157
Արճակ 318
Արճեշ գավառ (Քաջբերունիք) 20, 157
Արճեշ քաղաք 259
Արմաշի վանք 316
Արմիշատ գյուղ 224
Արմտլու գյուղ 66, 67, 71, 120
Արշարունիք 85, 86
Արշունի ագարակ 44
Արպա գավառ 310
Արտամետ գյուղ 173, 208, 209, 223, 249, 278
Արտամետ սար 278
Արտաշատ 43
Արտկոն գյուղ 80
Արտողցվոց գյուղ
Արտոսր լեռ 222, 244, 267, 278, 280—283, 292
Արուսկե գյուղ 223
Արփաչայ 65
Արևբանոս քաղաք 297, 298, 321
Արևմտյան Հայաստան 311, 318
Աքնիս գյուղ 305

— Բ —

Բաբերդ (Բայբերդ, Բայբուրդ) 15, 25, 27, 28, 30, 35, 37, 46, 91, 95—97, 110, 112, 162, 165, 310
Բագրևանդ 109, 111, 119, 126, 128—130, 133, 142, 147, 149, 150, 239, 317
Բագրևանդի դաշտ 19, 127, 136, 148, 237
Բագրևանդի լեռներ (Ալա տաղի) 126
Բազինց գյուղ 232
Բազմենից ս. Աստվածածնի վանք 175
Բաթնոց գյուղ 111, 150—154
Բալկանյան երկրներ 310
Բալու գյուղ 11, 166, 200, 222, 291, 292 (Բելու գյուղ)
Բախվանց գյուղ 222
Բաղածեր (Բաղածայր) 258, 259
Բաղենից վանք 254
Բաղեշ 5, 9, 10, 14, 37, 45, 64, 96, 164, 165, 203, 229, 231, 232, 234
Բաղկա բերդ 239
Բայազետ 16
Բարդուղիմեոս ս. Առաքելո վանք 165, 297, 299, 302—304, 306, 321
Բաշագլուխ (Կարին) 38
Բաշկալե ավան 317
Բասեն 17, 18, 53, 55—57, 59, 61, 62, 64, 65, 68, 69, 71, 75, 78, 89, 98, 101, 111, 113—123, 133, 138, 140, 155, 160, 314
Բասեներ 16
Բասենի լեռներ 127, 237
Բավա Նարեկացվո վանք 174
Բարեշխ ապարանք 79
Բարձր Հայք 14, 17, 21—23, 90, 115, 311, 313
Բեյրութ 10
Բերա 9, 143, 181
Բերդակ գյուղ 223, 229, 232
Բերկրի գավառ 277
Բերկրի գետ (Առեստ, Պանտիմահի, Բանդի մահի) 259, 319
Բերկրի գյուղ 233
Բեր(ա)ածեր 258, 259
Բզնունյաց գավառ (Բզնունիք) 127, 153, 154, 157, 249, 254, 259, 260, 281
Բզնունյաց ծով 248, 249
Բիթլիս 19
Բինգյոլ տե՛ս Բյուրական
Բլրենց գյուղ 223, 284
Բյուզանդիոն 27, 148
Բոլս գյուղ 224
Բողանիս գյուղ 222
Բոմբեյ 315
Բոստոն 315
Բոնաշեն 20
Բրիտանիա 155
Բրոնց գյուղ 229
Բուիկ գյուղ 85, 87
Բուլանբիս (Պուլանբիս) 48, 62, 98, 127, 311
Բյուրական (Բուրակյան, Բյուրակնյան) լեռներ 30, 311

— Գ —

Գագկա բերդ 281
Գագկաշեն ս. Խաչի տաճար 285
Գագուանա 142
Գալիլեա 243, 245, 275, 276, 318
Գաղղիա 155
Գաղց բերդ 292
Գամաղիելի ս. Եղիայի վանք 173
Գանձակ գյուղ 222
Գավաշ 283
Գատի գյուղ 97
Գարբել գյուղ 307
Գեղ գյուղ 44
Գեղեի բլրակ 242
Գետոեհոն 63
Գերմանիա 155, 319
Գիլպալասան գյուղ 223
Գիմա գյուղ 272
Գլակա վանք 10
Գմբեթ եկեղեցի 76
Գյումուշհանե սանջակ 309, 310
Գնեկոնից ս. Աստվածածնի վանք 174
Գնունյաց գավառ 248, 249, 254, 257, 259, 277
Գոգովիտ (Կոգովիտ) գավառ 142, 237, 260
Գողգոթա լեռ 315
Գոմաձոր գյուղ 58, 59
Գոնի գյուղ 72
Գրգուռ լեռներ 249, 254, 259, 267
Գրիգոր Մագիստրոսի Յոթ վիրաց ս. Աստվածածնի տաճար 54
Գռեմ գյուղ 232
Գում Գարու 309

— Դ —

Դալի Պապա գյուղ (Տալիպապա) 63, 120
Դամասկոս 74, 294
Դաշտ գյուղ 232
Դաշտի թաղ 226
Դաշտոկ գյուղ 234
Դարանց գյուղ 288
Դարման գյուղ 288
Դարոն 61, 63—65
Դեմ գյուղ 223
Դոնաշեն գյուղ 247

— Ե —

Եաղան գյուղ 67
Եգիպտոս 313
Եղի քիլիսա (Սողանլու) 66
Եղիբիլիսա եկեղեցի 312
Եկմալ գյուղ 247, 268
Եկումի գյուղ 57

Եղան գյուղ 67, 116, 120, 121
Եղեգիս գյուղ 233
Եղերովա լեռներ 244, 267, 292
Եղնացի վանք (Բասեն) 119
Եղոնց գյուղ 229
Եստղան գյուղ 58
Երասխ գետ (Քոսա տաղի) 52, 57, 58, 61, 62, 67, 76, 85, 87—89, 113, 237
Երասխաձոր 119
Երամյան վարժարան 320
Երաշխավոր ս. Աստվածածնի վանք 174
Երերին գյուղ 256, 260
Երեք Խորան ս. Աստվածածնի վանք 173
Երեք մանկունք տաճար 290
Երզնկա 42, 89, 156, 311
Երիզ ավան 42
Երնկան 304, 305, 307
Երրորդություն եկեղեցի (Պիկար գյուղ) 84
Երուսաղեմ 9—11, 83, 161, 216, 235, 311, 313
Երուսաղեմի ս. Հակոբա վանք 227
Երևան 7, 11, 14, 128, 260, 289, 316
Եփրատ գետ 126, 137—139, 147—149, 239, 311
Եվդոկիա (Թոքատ) 22, 309, 310

— Զ —

Զակավք գյուղ 305
Զայգարա 37, 41
Զարևանդ գավառ 301, 304, 307
Զեյթուն 10, 312, 314
Զերո գյուղ 129, 135, 136, 139, 240
Զիլէ գավառ 310
Զմյուռնիա 10, 314, 315
Զրվանդաց գյուղ 243

— Է —

Էջմիածին 9, 11, 38, 89, 161, 180, 220, 222, 236, 237, 254, 302, 305, 306, 316, 317, 321

— Ը —

Ընժան գյուղ 229
Ընծակ գյուղ 222
Ընծաքար լեռ 290
Ընձակու ձոր 290
Ըստուս գյուղ 229

— Թ —

Թագս գյուղ 226
Թագրտաղ (Թեքիրտաղ) 165, 252
Թաթլու թումա (Վարդեհեր վանք) 119
Թահմիզ 263, 319
Թամանթար գյուղ 308
Թանդուրեք լեռնակատար 319
Թանիշման գյուղ 69
Թառ գյուղ 226
Թառամաղ գյուղ 226
Թառարիս գյուղ 226
Թավաբլուր 181
Թավրիզու (Թարվիզու) դուռ 248, 263
Թավրիժ (Դավրիժ) 302, 303
Թաուեոս առաքյալի վանք 302, 303
Թարբանդ գյուղ 59, 60
Թացու գյուղ (Կարկառ) 233
Թեմ գավառ 307
Թիլ գյուղ 139, 238
Թիմար գյուղ 222
Թիփ կռան գյուղ 129
Թիֆլիս 309, 316, 320, 321
Թողվանց գյուղ 224, 225
Թոտավերան գյուղ 59, 120, 121
Թրիզ գյուղ 233
Թրքաշեն գյուղ 223
Թուխմանուկ եկեղեցի 305
Թուղլի գյուղ 122

— Ի —

Իբաստ գյուղ 232
Իշխանիզոմ գյուղ 223, 284
Իսկյուտար 313
Իսղու գյուղ 308
Իքիաղաճ գյուղ 308

— Լ —

Լազիստան սանջակ 309
Լալկոր գյուղ 305
Լամզկերտ գյուղ 243
Լեստոթիս 110
Լրդվան գյուղ 232
Լի գյուղ 229
Լիմ անապատ 7, 9, 19, 112, 163, 189, 216, 221, 252, 254—262, 278, 319
Լիմ անապատի տաճար 262
Լիմ գյուղ 244
Լիմ կղզի 258
Լճան գյուղ 226
Լորյանց գյուղ 226

— Խ —

Խալենց գյուղ 226
Խալիչան գյուղ 307
Խախլար գյուղ 80
Խածուս գյուղ 229
Խակ գյուղ 288
Խակիս գյուղ 229
Խանար գյուղ 243
Խանճալիս գյուղ 306
Խանձլու գյուղ 129, 132
Խանս գյուղ 307
Խաչավանք գյուղ 88—90, 119, 120, 238
Խաչա Կատուկ 89
Խաչլու գյուղ 129, 238
Խաչո գյուղ 229
Խաչուկ գյուղ 229
Խառակոնիս գյուղ 246
Խառատոն գյուղ 304
Խառնորակներ գյուղ 223
Խաս գյուղ 45, 98, 188
Խասխեր գյուղ 234
Խավինց գյուղ 247
Խարբերդ 11, 89, 92, 156, 164, 165, 181, 313
Խարբերդի դաշտ 41
Խարխեր գյուղ 229
Խարխոց գյուղ 229
Խացաբլուր գյուղ 226
Խեժ գյուղ 223
Խերատ 142
Խեքա ս. Աբրահամու վանք 172
Խզոր գյուղ 129, 135, 139, 238, 239
Խրրխու ս. Աստվածածնի վանք 172
Խժիշկ գյուղ 259, 260, 265
Խիղան նահանգ 173, 260, 286 (Հիղան)
Խիղնա Պեյաթ գյուղ 230
Խլաթ 48, 249, 254
Խնձորուտ գյուղ 233
Խնձորուտա ս. Աստվածածնի վանք 174
Խնուս 47, 48, 96—98, 127, 164
Խնուսի լեռներ 127, 237
Խոսպ գյուղ 223
Խոսրովա գյուղ 308
Խորականց գյուղ 284
Խսպան գյուղ 229
Խրարտինց գյուղ 233
Խրիպ գյուղ 226
Խութ 20
Խումար գյուղ 224
Խուռդամ գյուղ 223, 283
Խուփ գյուղ 229

— Ծ —

Ծախոզ գյուղ 233
Ծաղկավետ լեռներ (Ծաղկանց, Ալադաղ) 71, 127, 153, 249, 254, 257, 259, 319
Ծաղկոցաձոր 83
Ծամնդավ 79
Ծառատանց գյուղ 226
Ծափանց գյուղ 226
Ծիծանց գյուղ 223
Ծկոր գյուղ 233
Ծոկու գյուղ 259
Ծրտաքար լեռ 296
Ծուղ գյուղ 224

— Կ —

Կաղպի գյուղ 224, 225
Կալասար գյուղ 308
Կաղզվան 67, 87, 88, 102, 111, 113, 119, 120, 133, 314
Կաղզվանի լեռներ 237
Կաղճնո վանք 263
Կահնամիրոն գյուղ 224
Կաճետ գյուղ 224, 225
Կայապեկ գյուղ 135, 136, 239
Կայթանց գյուղ 226

Կամուրջ գյուղ 122
Կանճառս գյուղ 231
Կաշի գյուղ 129, 139, 140
Կաչաչիդ գյուղ 224
Կապան գյուղ 229
Կապուտ լեռներ (Յոռոզլու տաղ) 127, 237
Կապուտկող լեռ 13, 290, 291
Կապուտկողա ս. Հակոբա վանք 289, 290, 292
Կաակիճանց գյուղ 226
Կասր գյուղ 226
Կատապիյ գյուղ 129
Կատինուկ գյուղ 229
Կատիշա գյուղ 286
Կարակուռութ եկեղեցի 66, 312
Կարապաղ գյուղ 308
Կարապուլի գյուղ 305
Կարավանք գյուղ 67
Կարասս գյուղ 44
Կարաքիլիսա գյուղ 65, 66, 111, 120, 129, 138, 139, 239
Կարին 10, 12, 15, 17, 22, 25, 27, 30, 32—37, 40—47, 50, 51, 53, 56, 67—70, 72, 74—76, 78, 89—91, 93, 95—101, 103, 110, 113—115, 118, 119, 122, 124, 127, 138, 144, 150, 156, 162, 166, 178, 181, 186, 228, 232, 251, 309, 311, 313
Կարկառ 174, 200, 227, 249, 286, 287
Կարճկան 13
Կարմիր վանք 57, 66, 119
Կարմրակա ս. Աստվածածնի վանք 288
Կարմրավորա ս. Աստվածածնի վանք 169, 277
Կարմրորա (Բարդուղիմեոս) ս. Աստվածածնի վանք 165, 172, 244, 245
Կարնո դաշտ 43
Կարս 11, 16, 17, 67, 68, 71—73, 75, 76, 78—83, 85, 87, 89, 96, 100—106, 108, 109, 111, 112, 114, 119, 122, 129, 150, 155, 160, 162—164, 315
Կարսի բերդ 77
Կարսի դաշտ 75
Կարսի լեռներ 237
Կարք գյուղ 66
Կափի վանք 119
Կափի քիլիսա 66, 312
Կաքուանիս գյուղ 229
Կեղիս գյուղ 232
Կեսարիա 251
Կեցան գավառ 174, 221, 231, 232, 249, 287, 288
Կզլար քաղաք 260
Կզլճու գյուղ 308
Կըզբլրաշ գյուղ 223
Կիլիկիա 9, 316
Կիճի գյուղ 233
Կինկոն գյուղ 226
Կիտրիս գյուղ 226
Կղզաշ գյուղ 280
Կղզի գյուղ 223
Կյավուր տաղի լեռներ 67
Կյումուշխանա Արդիրո-կաստրո տե՛ս Գյումուշհանե
Կոբա լեռ 30
Կոթագուռութա վանք (Բասեն) 119
Կողբա գավառ 85
Կողբանց գյուղ 243
Կոճղոնց ս. Աստվածածին վանք 174
Կոն (Գոնիա) 181
Կոշա քիլիսա (Սողանլու) 66
Կոշա վանք (Բասեն) 119
Կոշա քիլիսա եկեղեցի 312
Կոռա վանք 173
Կոստանդնուպոլիս 9—11, 14, 15, 18, 21
Կորակապան 89
Կորդվաց գավառ 221, 233
Կորդվաց լեռներ 221—223, 226, 231—233, 235, 254, 277, 292
Կորճեիից գավառ 221, 234, 235, 251, 254
Կորճեիից լեռներ 249, 267
Կոփ գյուղ (Կոր) 20, 31, 32, 311
Կռուա ձոր 89
Կտուց անապատ 19, 105, 157, 163, 216, 221, 243, 244, 246—248, 250—254, 266, 281, 300, 318
Կտուց կղզի 249, 277
Կութ գյուղ (Հիզնա) 229
Կուճողս գյուղ 226
Կուռանաց սար 242
Կուռապաշ գյուղ տե՛ս Ղուռապաշ գյուղ
Կուսանաց լեռ 241
Կփչախ 96

— Հ —

Հաբսնոց գյուղ 223
Հաղդամակերտ քաղաք 306
Հաղնո գյուղ 287
Հալեան գյուղ 308
Հալեպ 316
Հակարու (Հաքարու) 302, 303
Հակն քաղաք 260
Հաճալաէ գյուղ 308
Հաճուվաճ գյուղ 308
Համ գյուղ (Հիզնա) 229
Համագ գյուղ 89
Համատ գյուղ 90, 111
Համզաքալակ գյուղ 81, 82, 85
Հայաստան 6, 7, 17, 23, 26, 28, 31, 33, 35, 40, 44, 52, 54, 58, 72, 76, 86, 88—90, 101, 108, 109, 113, 117, 124, 126, 127, 136, 139, 142, 143, 147, 148, 155—158, 161, 162, 171, 236, 237, 239, 253, 255, 281, 285, 298, 300, 301
Հայկավան 263
Հայոց աշխարհ 207
Հայոց ձոր 170, 172, 177, 190, 201, 208—210, 221—223, 249, 268, 277, 281
Հայրորտա 251
Հանկշտոնց գյուղ 223
Հառինճ գյուղ 226
Հառնանց գյուղ 226
Հաչս գյուղ (Կարկառ) 233
Հաչք գյուղ 80, 81
Հասան-գալա (Մաղիստրոսի վանք) 11, 52—54, 57, 58, 67, 115—118, 162, 312
Հասկնճառս գյուղ 226
Հասփստան գյուղ 304
Հավալոն գյուղ 223
Հավթվան գյուղ 300, 308
Հարբերդ գյուղ 222
Հարք գավառ 153
Հարքիշ գյուղ 111
Հացյաց գավառ 238, 260
Հիլի գյուղ 283
Հին քաղաք 308
Հռիփսիմյանց վարժարան 33
Հրեաստան 316

— Ղ —

Ղթորվան գյուղ 267
Ղորագյուղ 59, 120—122
Ղորավանք գյուղ 243
Ղվստան գյուղ 173, 278, 288

— Ղ —

Ղալաթիա 109
Ղարաբաղ 316
Ղարավանք գյուղ 314
Ղարաքիլիսա գյուղ տե՛ս Կարաքիլիսա
Ղարաքիլիսա եկեղեցի 312
Ղորանց գյուղ 244
Ղուաճակ գյուղ 308
Ղուչի գյուղ 86, 87
Ղուռապաշ գյուղ 241, 267, 268
Ղուռապաշա ս. Խաչի վանք 241

— Ճ —

Ճաշ գյուղ 83, 84
Ճաջվան գյուղ 232
Ճարա գյուղ 308
Ճնուկ գյուղ 223
Ճորոխ գետ 310
Ճռաշեն գյուղ 247
Ճռասոն գյուղ 66

— Մ —

Մազնի գյուղ 226
Մաղարա գյուղ 32

Մալաղասմ գյուղ 247
Մալդավա գյուղ 304
Մալթա կղզի 315
Մալոկ գյուղ 234
Մահլան գյուղ 308
Մաղաշ բերդ 84
Մամերտ գյուղ (Մարմետ) 247
Մամրտան գավառ 295
Մանազկերտ (Մանծկերտ) 48, 153, 238
Մանզկերտ (Մանծկերտ) լեռներ 127, 237
Մանկասար գյուղ 129, 139, 239
Մանտոյանց գյուղ 229
Մաշկակտակ գյուղ 223, 280
Մաշուկ գյուղ 234
Մավրակ գյուղ 84, 85
Մատ գյուղ 232
Մատականց գյուղ 232
Մարաշ 181
Մարաստան 225, 230, 231, 307
Մարգեր գյուղ 268
Մարսել քաղաք 209
Մեծոփա վանք 20, 112
Մեղտի գյուղ 20
Մեսրոպյան վարժարան 314
Մերձավոր արևելք 310
Մծնկերտ գյուղ 305, 306
Միական գյուղ 307
Միջագետք 289
Միջա գյուղ 229
Միջալպին գյուղ 52
Մլեանց գյուղ 234
Մլքա գյուղ 287
Մնկոնց գյուղ 233
Մշո դաշտ 14, 127, 238
Մոզաց (Մոկս) նահանգ 174, 190, 200, 201, 216, 221, 226—229, 244, 249, 251, 295
Մոխրաբերդ 166, 169, 200, 222, 289, 291, 296
Մուլք գյուղ 223, 233
Մուշ 5, 10, 14, 16, 19, 62, 78, 80, 81, 96, 98, 100, 138, 139, 152, 164, 165, 203, 232, 239, 311, 315
Մուշ գավառ 127
Մուշ քաղաք 14
Մուսկավեն գյուղ 224
Մուրատ գետ 126
Մուրատյան վարժարան (Փարիզ) 314

— Յ —

Յախվերան գյուղ 308
Յաղին գյուղ 226
Յաղուն գյուղ 222
Յասվշու գյուղ 233
Յոթ կաթողիկե վանք 119
Յոնգղ գյուղ 223
Յոնճալու գյուղ 135, 137, 138, 140, 150, 151, 239
Յուղնոցի (Սողանլուի) վանք 66
Յուղվիրան գյուղ 59, 120

— Ն —

Նախիջևան (Նախչվան) 17, 81, 83—85, 87, 103, 105—108, 127, 316
Նանից ս. Մինասա վանք 174
Նանկանց գյուղ 222, 291
Նապատ գյուղ 243
Նաս գյուղ 224
Նարեկ գյուղ 218, 219, 222, 286, 288, 292, 294
Նարեկա վանք 178, 201, 204, 208, 218, 220, 222, 249, 251, 260, 280, 290, 292, 294, 296, 316
Նեմրութ լեռ 7, 249, 254, 259, 267
Ներսիսյան դպրոց 321
Ներքին Բասեն 66, 67
Ներքին Դարենց գյուղ 224
Ներքին Կարասու 229
Ներքին Կուտենց 232
Ներքին Հուրուք 232
Ներքին Պախուր 229
Ներքին Վարագ 19
Ներքին Քատիկք գյուղ 81
Նոր գյուղ 166, 187, 200, 232, 223, 268, 291, 296
Նոր գյուղի ս. Գևորգա վանք 19, 172, 295
Նորավանից լեռներ 257
Նորավանք գյուղ 226, 260, 272
Նորշեն գյուղ 229, 260
Նոր Կեսարիա (Նիքսար) 310
Նպատ լեռ 142

— Շ —

Շահրուր գյուղ 224
Շամիրամի առու 222, 278, 280, 317
Շանժիկ գյուղ 226
Շատախ 173, 178, 190, 200, 201, 205, 221, 223—225, 229, 235, 244, 252, 260, 286, 288
Շատախու ագարակներ 223
Շատախու թաղ գյուղ 223
Շատվանց գյուղ 169, 222, 291
Շարավան 78
Շեյթանատա գյուղ 308
Շեն գյուղ 226, 229
Շիրակի դաշտ 72, 80, 81
Շիրակավան 17, 82, 87, 90, 103, 105—109
Շիրակավանի լեռներ 237
Շիրմալի գյուղ 76
Շորակալ 78, 87
Շուշանց գյուղ 246, 267

— Ո —

Ոգիս գյուղ 223
Ողիմ գյուղ 234
Ոչխարենց գյուղ 223
Ոսկիբակ գյուղ 243
Ոստան 170, 222, 223, 230, 249, 278, 280, 281, 283, 285, 292, 295, 296
Ոստանա լեռներ 249, 254
Որմի գավառ 304, 308

— Չ —

Չախրպապա լեռներ 67
Չարհան ս. Աստվածածնի (ս. Նշանի) վանք 157, 170, 192, 236, 280, 282, 283, 288
Չարսակ գյուղ 69
Չարսանճախ 89
Չարշամպա 23, 310
Չերմալի գյուղ 72
Չիելի գյուղ 107
Չմշկածագ 5, 41, 92
Չուխ գյուղ 305

— Պ —

Պախիշեկ գյուղ 243
Պախուր գյուղ 229
Պահրի Ահմատ գյուղ (Պեհրի Ահմետ) 72, 76
Պաղ (Բաղ) գյուղ 169, 304, 305
Պաղեստին 314
Պաղոյեանց Մզրեն գյուղ 223
Պայազիտ 67, 127—129, 132—134, 142, 148
Պայրախտար գյուղ 80—82, 85
Պաշգալա 304, 305, 307
Պաշ գյուղ (Պաշգյուղ) 66, 120
Պաշկ գյուղ 223
Պապառու գյուղ 308
Պապլասան գյուղ 305
Պատականց գյուղ 287, 288
Պատժվան գյուղ 57
Պատլոու գյուղ 308
Պատկան գյուղ 305
Պատուր լեռ 267
Պասպոր գյուղ 223
Պարսկաստան 141, 142
Պարտիզակ 251
Պաֆրա 251
Պեթամ գյուղ 232
Պեշ քիլիսա եկեղեցի 84
Պետրոսյանց գյուղ 229
Պետրոս (ս. Ստեփանոս) եկեղեցի 258
Պերնա գյուղ 71, 72
Պիկար գյուղ 84
Պիշկ գյուղ 308
Պկուց վանք 157
Պոլենց գյուղ 226
Պոլիս 21, 22, 24, 25, 31, 40, 42, 45, 46, 79, 82, 91, 97, 100, 105, 109—113, 120, 124, 143, 155, 156, 161, 185, 187, 189, 190, 202, 211, 218, 232, 234, 235, 248, 252, 260, 263, 269, 272, 275, 292, 295, 297, 309, 312—316, 319, 321

Պողանիս գյուղ 287
Պոնիջան գյուղ 234
Պոնտոս 21—25, 89, 110, 260, 309, 310
Պոռշենց գյուղ 229
Պրանուկ 226
Պուրանդ գյուղ 226

— Ջ —

Ջանիկ սանջակ 309
Ջերմուկ (Կարնո) 32
Ջուաշեն գյուղ 64
Ջտամաթ (Ջուլամերկ) 304, 307

— Ռ —

Ռահվա գյուղ 308
Ռապանակ գյուղ 234
Ռշտունյաց գավառ 13, 169, 177, 190, 201, 221, 222, 249, 251, 288, 291, 292, 296
Ռշտունյաց գաշտ 222
Ռուպուս գյուղ 231
Ռուսաստան (Ռուսիա) 16, 43, 52, 69, 71, 78, 104, 105, 124, 224, 229, 238, 261
Ռուսինոսի վանք 174

— Ս —

Սաղ գյուղ 224
Սալմաստ 273, 300, 301, 306, 308
Սալնապատ գետակ 243
Սալնապատի ս. Գրիգորի վանք 242, 245, 277
Սամարա քաղաք 314
Սամսոն նավահանգիստ 11, 21, 22, 89, 309
Սառնա գյուղ 308
Սասուն 20
Սավրի գյուղ 308
Սարի ս. Գեորգա վանք 174
Սարկիս գյուղ 224
Սեբաստիա (Սվազ) 11, 89, 156, 164, 165, 181, 267, 310
Սեպ գյուղ 226
Սիս 181, 236, 316
Սիրհան գյուղ 307
Սիփանա լեռներ 7, 153, 237, 244, 249, 254, 257, 259, 281
Սկավառակո ս. Գեորգա վանք 175
Սղերտ 233
Սղկա գյուղ 246
Սմպոնա ս. Աստվածածնի վանք 174
Սյունյաց գավառ 251
Սողանլու 16, 59, 65, 66, 69, 71, 73, 76, 98, 123
Սոյուղլու գյուղ 82
Սովասուղի վանք (Սողանլու) 66
Սորամերիկ գյուղ 308
Սորան գյուղ 304
Սորատեր գյուղ 305
Սորատերա լեռներ 298
Սորի գյուղ 229, 232
Սորվանք գյուղ 232
Սպարկերտ 175, 221, 227, 232
Սպիտակ վանից թաղ գյուղ 223
Սպկանց գյուղ 226
Սպոն (Սմպոն) գյուղ 231, 232
Ստեփանոս Նախավկայի եկեղեցի 85
Սուգավետ լեռներ 53, 127
Սուն գյուղ 226
Սուպաթան գյուղ 80
Ս. Աստվածածին եկեղեցի (Ալիճահրակ) 62
Ս. Աստվածածին —»— (Անդղ) 279
Ս. Աստվածածին —»— (Աշկերտ) 305
Ս. Աստվածածին —»— (Աշտարակ) 307
Ս. Աստվածածին —»— (Արմտլու) 67
Ս. Աստվածածին —»— (Բաբերդ) 35
Ս. Աստվածածին —»—(Բուիկ) 85
Ս. Աստվածածին —»—(Գարբել) 307
Ս. Աստվածածին —»— (Դալի Պապա) 63
Ս. Աստվածածին —»—(Խաչլու) 238
Ս. Աստվածածին —»—(Կարին) 36
Ս. Աստվածածին —»— (Կարս) 77
Ս. Աստվածածին —»— (Կոնկա) 168, 278
Ս. Աստվածածին —»— (Համզաքալակ) 81

Ս. Աստվածածին —»— (Մժնկերտ) 305
Ս. Աստվածածին —»— (Յոնճալու) 137
Ս. Աստվածածին —»— (Պաշ) 66
Ս. Աստվածածին —»— (Սոյուղլու) 83
Ս. Աստվածածին —»— (Ցիրխան) 304
Ս. Աստվածածին —»— (Փախներ) 297
Ս. Աստվածածին —»— (Փիս գյուղ) 305
Ս. Աստվածածին —»— (Քերս) 87
Ս. Աստվածածին վանք (Ալուր) 266
Ս. Աստվածածին —»—(Անդղ) 171, 183, 208—210, 278
Ս. Աստվածածին —»— (Առաջեր կղզի) 169
Ս. Աստվածածին —»— (Բասեն) 53, 57
Ս. Աստվածածին —»— (Բերդակ) 172
Ս. Աստվածածին —»—(Դըշող) 170
Ս. Աստվածածին —»— (Խժիշկ) 265
Ս. Աստվածածին —»— (Խոսպ) 171
Ս. Աստվածածին —»— (Կորատեր) 173
Ս. Աստվածածին —»— (Հերեմեր) 172
Ս. Աստվածածին —»— (Շախուռ) 169
Ս. Աստվածածին (Սպիտակ վանք, Բերդաձոր) 170, 281, 283
Ս. Աստվածածին —»— (Ուբան) 173
Ս. Աստվածածին —»— (Քառասուն խորան, Հելու) 169
Ս. Աստվածածին տաճար (Լիմ անապատ) 261
Ս. Աստվածածին —»— (Կարին) 36
Ս. Աստվածածին —»— (Վարագա վանք) 269
Ս. Գեորգ եկեղեցի (Մոխրաբերդ) 296
Ս. Գեորգ եկեղեցի (Վարագա վանք) 269, 270
Ս. Գեորգ եկեղեցի (Մժնկերտ) 305
Ս. Գեորգ եկեղեցի (Սալմաստ, Հավթրվան) 300
Ս. Գեորգ եկեղեցի (Քեփուկուան գյուղ) 239
Ս. Զորավարա վանք 174
Ս. Թադեի վանք 302
Ս. Թումա Առաքելո վանք 222
Ս. Թումասի վանք (Պաղ) 169
Ս. Լուսավորչի վանք (Կարին) 42—44
Ս. Խաչ եկեղեցի (Մալդավա) 304
Ս. Խաչ եկեղեցի (Փարս գյուղ) 305
Ս. Խաչ վանք (Խիզան) 173, 230
Ս. Խաչ վանք (Աղթամար) 169, 284
Ս. Խաչ վանք (Բասեն) 118
Ս. Խաչ վանք (Սողանլու) 65, 66
Ս. Խաչ վանք (Վանի Ապարան) 19
Ս. Կարապետ վանք (Խիզան) 19
Ս. Կարապետ վանք (Մուշ) 10, 13, 14, 19, 20, 89, 218
Ս. Կարապետ վանք (Մոկս) 174
Ս. Հակոբ եկեղեցի (Տոսի) 64
Ս. Հակոբ եկեղեցի (Ուշքիլիսա) 60
Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի վանք 222
Ս. Հակոբ վանք (Կապուտկող) 19
Ս. Հարություն եկեղեցի (Ձերս գյուղ) 240
Ս. Հարություն —»— (Հասիստան) 304
Ս. Հարություն —»— (Մանկասար գյուղ) 239
Ս. Հարություն վանք (Տավապետ) 169
Ս. Հովհաննես եկեղեցի (Առակ գյուղ) 304
Ս. Հովհաննես —»— (Բաբերդ) 35
Ս. Հովհաննես —»— (Թեմ գավառ) 307
Ս. Հովհաննես եկեղեցի (Հաչք) 80
Ս. Հովհաննես —»— (Զուխ) 305
Ս. Հովհաննես —»— (Պաղ գյուղ) 304
Ս. Հովհաննես —»— (Պապլասան) 305
Ս. Հովհաննու եկեղեցի (Նոր գյուղ) 295
Ս. Հովհաննու վանք (Ուշքիլիսա) 129, 136, 139, 140, 142, 143, 146, 147, 153, 154, 238—240
Ս. Հովհաննու վանք (Մուշ) 231
Ս. Հրեշտակապետի եկեղեցի (Բաբերդ) 35
Ս. Շմավոն եկեղեցի 291
Ս. Ստեփան —»— (Միկան) 307
Ս. Ստեփանոս —»— (Լիմ) 257
Ս. Ստեփանոս —»— (Ղուլի գյուղ) 86

Ս. Ստեփանոս —»— (Վանքի գյուղ) 299
Ս. Ստեփանոս —»— (Փախներ) 297
Ս. Սահակա լեռ 244, 249, 254, 281
Ս. Սահակա վանք (Երերինա ս. Սահակ) 255
Ս. Սանդխատ տաճար 293
Ս. Սարգիս եկեղեցի (Բաբերդ) 35
Ս. Սարգիս —»— (Խանճալիս) 306
Ս. Սարգիս —»— (Մոխրաբերդ) 296
Ս. Սարգիս տաճար (Կարին) 44
Ս. Սոփիա կամ Բերով եկեղեցի (Վարագա վանք) 269, 271
Ս. Վարդան գյուղ 233, 283, 308
Սքանչելագործ վանք 153, 157
Սև ծով 22, 309, 310
Սևակրակ գյուղ 223
Սևան գյուղ 243
Սևանա անապատ 252
Սեքար գյուղ (Սպարկերտ) 232

— Վ —

Վախրով գյուղ 223
Վաղարշակերտ 18, 53, 89, 90, 111, 112, 126—134, 136—139, 142, 148, 155, 160, 238—240, 260
Վաղարշակերտի դաշտ 153
Վան 5, 8, 9, 11—13, 19, 21, 96, 101, 112, 118, 155, 157, 158, 168, 173, 174, 178, 179, 181, 182, 184, 185, 187, 189, 191, 202, 207, 209, 210, 216, 222—224, 227—229, 232, 233, 240—246, 251, 252, 254, 255, 257—260, 266—268, 271, 272, 278, 280, 282—284, 286, 288, 290, 292, 296, 297, 302, 306, 309, 314, 315, 317—320
Վանա բերդ 249, 278
Վանա լիճ 7, 317, 319
Վանանդ գավառ 79, 127, 138
Վանքի գյուղ 298, 304
Վառենց գյուղ 222
Վասպուրական (Նահանգ) 7, 9, 12—14, 16, 19—21, 104, 127, 156, 164, 166, 174, 178, 224, 243, 244, 248, 249, 255, 267, 271, 276, 309, 316—318, 320
Վարագ 5, 92, 101, 155, 158, 161, 165, 166, 168, 310
Վարագա ս. Նշանի վանք 8, 244, 269—272, 274, 275, 319, 320
Վարագա լեռ 244, 249, 267, 281, 318, 320
Վարդահեր (Վարդիկ հոր, Վարոս) վանք 67, 119, 314
Վարդի հեր գյուղ 88
Վարդո 127
Վարդովա գյուղ 80
Վարի Վարագ 275—277
Վերին Բասեն (Բասյան, Դարունք, Մաղակիտ) տե՛ս Հասան-Դալա 51, 53, 58
Վերին Բժնկերտ գյուղ 223
Վերին Դարենց գյուղ 224
Վերին Կարասու 229
Վերին Կուտենց 232
Վերին Հայոց ձոր 278
Վերին Հուրուք 232
Վերին Պախուր 229
Վերին Սորին 222
Վերին Վարագ 19, 243, 245, 268, 269, 275—277
Վիշապաձոր 67, 89, 119, 127
Վոսփոր 148

— Տ —

Տալաս գյուղ 232
Տալարիս գյուղ 20
Տախմանից լեռ 267, 268
Տախմանց գյուղ 267, 268
Տաճկաստան 73, 141
Տամանց գյուղ 266
Տանամեր գյուղ 66
Տանծիս գյուղ 232
Տարոն 10, 24, 40, 48, 67, 117, 128, 156, 181, 251, 260, 301
Տարոնի դաշտ 15
Տարոնց գյուղ 229
Տարպառու գյուղ 308
Տափ գյուղ 233
ՏԿՀ գավառ 234, 295
Տեմկաս գյուղ 226
Տերկոշ գյուղ 234
Տերնա գյուղ 71, 72
Տրվաշուս գյուղ 232
Տիտաին 153
Տիգրիս գետ 223, 226
Տիգրանակերտ 233, 234
Տի գյուղ 229
Տոսու գյուղ 232
Տոտի գյուղ 64
Տրապիզոն սանջակ 309
Տուրուբերան 249
Տփխիս 274

— Ց —

Ցագրվան գյուղ 225, 226
Ցագրուս գյուղ 223
Ցակրակ գյուղ 234
Ցաղթ գյուղ 233
Ցաղմշառս գյուղ 226
Ցառեղ գյուղ 224
Ցառինգոն գյուղ 223
Ցանինց գյուղ 224
Ցաշկանց գյուղ 224
Ցաբթենց գյուղ 233
Ցեղաթ գյուղ 234
Ցեղի գյուղ 224
Ցիր գյուղ 226
Ցիրեմերու գյուղ 223
Ցիրիսան գյուղ 304
Ցիրչ գյուղ 223
Ցորակոնց գյուղ 223
Ցորտինց գյուղ 223

— Ու —

Ուշա գյուղ 308
Ուլթափա գյուղ 308
Ուլբիլիսա վանք 60, 84, 112, 143, 153, 156, 162, 312
Ուրանց գյուղ 229
Ուրարտու 317
Ուրհա 55

— Փ —

Փալասոր գյուղ 229
Փախներ 166, 200, 222, 292, 296
Փայտաճուկ գյուղ 308
Փապատկ գյուղ 246
Փարիզ 314
Փարածա նահանգ 232
Փարս գյուղ 305
Փասր գյուղ 229
Փեսավանք գյուղ 226
Փետատեղ գյուղ 226
Փիս գյուղ 305
Փշավան գետ 287
Փշավան գյուղ 286—288
Փշավանք 182, 183, 187, 205, 222
Փոսի դարա գյուղ 69
Փորիկ գյուղ 65, 69
Փրխուս գյուղ 287
Փութկի ս. Գևորգ վանք 227

— Քաջբերունիք —

Քալաշան գյուղ 308
Քաղաքի թաղ գյուղ 226
Քաջբերունյաց գավառ (Քաջբերունիք) 127, 138, 152, 153, 249, 254, 257, 259, 277, 281
Քապի գյուղ 308
Քարադաշտ գյուղ 222, 283
Քարավանց գյուղ 223
Քարվակ գյուղ 231
Քելակոմ գյուղ 305
Քեռշկ գյուղ 223
Քեռոփիքյոյ 67
Քեռփի գյուղ 57
Քերծ գյուղ 223
Քերս գյուղ 87
Քերուն գյուղ 307
Քեփուկոան գյուղ 239, 317
Քիշառոն 23, 310
Քիուլու 68
Քիփ քիլիսա (Սողանլու) 66
Քղի 92, 93, 311, 313
Քյուլվերան գյուղ 80

Քյումիքիլի վանք 119
Քյուփկան գյուղ 135
Քոշկ գյուղ 283
Քոսա տաղ 237
Քրմենց գյուղ 223

— Եվ —

Եվրոպա 73

— Օ —

Օսմանյան կայսրություն (Օսմանյան Թուրքիա) 6, 122, 180, 302, 309
Օրթաքատիկ գյուղ 80, 81

— Ֆ —

Ֆառուղ գյուղ 243
Ֆրանսիա 309, 315

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեմիա Տեր Սարգսյանց (Տեր Սարգսենց-Տեկանց) 5
Իններորդ պատմութիւն պաշտօնի այցելութեան մերո սկսյալ 1872 հուլիս ամսո 21 - է մինչև 1872 (օգոստոս) ամսո 9 22
Նանոթագրություններ 309
Ցանկեր 322
Ռեձնանուններ 328
Տեղանուններ 331

ԵՐԵՄԻԱ ՏԵՎԿԱՆՑ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐ ՀԱՅՔ ԵՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ 1872—1873 ԹԹ.

Հրատ. խմբագիր Ա. Լ. Սահակյան
Նկարիչ Հ. Ն. Գործակալյան
Տեխ. խմբագիր Ա. Պ. Շահինյան
Սրբագրիչ Ն. Հ. Մկրտչյան

ИБ № 1708

Հանձնված է շարվածքի 15. 01. 1991 թ.։ Ստորագրված է տպագրության 11. 10. 1991 թ.։ Չափը 60×841/16։ Թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 20,0 մամ., տպագր. 21,5 մամուլ։ Ներկ. մամուլ 20,0։ Հրատ.-հաշվարկ 19,58 մամուլ։ Տպաքանակ 5000։ Հրատ. № 7937 Պատվեր № 32։ Գինը 10 ռ.։

ՀՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։

Издательство АН Армении, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։

Типография Издательства АН Армении, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна 24.